

1836

117

808.05
Ա-13

ՀՐԱՀԱՆԳ

ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ

կամ

ՃԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ·

№65

Յօրինեաց Միքայէլ Ա.րհի Եպիսկոպոս
Յակովբեան Սալլանթեանց Կոստանդնու-
պոլսեցի, Ա.պետ Կայսերութեան Ռուսաց.

9Կ
~~45044~~

՚ի պէտս աշակերտաց բարձու դասատան ազգային
Ճեմարանի Լազարեան Իշխանապետաց.

՚Ի ՄՈՍԿՈՎ·

՚ի տպագրատան յիշեալ Ճեմարանի.

1836. ՌՄՁԵ·

ԱԶՆՈՒԱՓԱՅԼ ԵՒ
ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԱՂԱՅ

ՊԵՏՐՈՍԻ

ԻՒՍՈՒՖԵԱՆՑ ԶՄԻՒՌՆԱՑԻՈՅ,
Ի ԹՐԷՍՏ ԲՆԱԿԵԼՈՅ,
Ի ՀՌՉԱԿ ԲԱԶՄԱԴԻՄԻ
ԲԱՐԵՐԱՐՈՒԹԵԱՆՑ ՆՈՐԱ ԱՌ
ԱԶԳ ՄԵՐ, ՋԵՐՄ ՍԻՐՈՎ

ՆՈՒԻՐԷ

ԶՎԱՍՏԱԿՍ ԶԱՅՍ
ՀԵՂԻՆԱԿ ՆՈՐԻՆ.

w 34

Առ Աշակերտս Ճեմարանին Լազարեանց .

'Ի ձեռս ձեր յածին հանապազօր՝ շնորհազա՛րդ որդեակք՝ ազգի ազգի հրահանգք ճարտասանութեան, 'ի լեզուս ռուսաց՝ լատինաց՝ գերմանացւոց՝ և գաղղիացւոց . ունիք և զերկուս հայկականս՝ զոր 'ի Վենետիկ տպագրեցին պատուելի հարքն Մխիթարեանք . Հայրն Ստեփան Ագոնց՝ յամին **1775** . և Հայրն Եփրեմ Սեթեան՝ յամին **1832** . և ահա երրորդս այս ընծայի ձեզ այժմ յինէն 'ի նուէր՝ նոյնպէս հայկական . եղանակ ճառելոյ դոցա զարուեստս՝ թէպէտ այլաձև է յիրերաց, սակայն նպատակ ամենեցուն մի և նոյն է . լուսաւորութիւն և յառաջադիմութիւն ձեր յուսմունս գիտութեանց . շահեցարո՛ւք ապա դուք յամենայնէ՝ յորմէ և իցէ . ամբարեցէ՛ք զբարի բարիսն 'ի շտեմարանս մտաց ձերոց, կատարելագործեցէ՛ք զձեզ կարևոր գիտութեամբք և առաքինութեամբք, լերո՛ւք արդիւնաբեր մշակք յեկեղեցւոջ և յազգի մերում, առաւել քան զամենայն ինչ՝ բորբոքեցարո՛ւք ճշմարիտ սիրով հայրենասիրութեան . մի՛ զսեպհական օգուտ ձեր միայն խնդրեսջիք մոլեկան անձնասիրութեամբ . այլ մանաւանդ եկեղեցւոյ և ազգի ձերում ծառայեցէ՛ք հարազատութեամբ . և որովհետև ցրուեալ զօրութիւնք՝ թուլակի ներգործեն, իսկ միաւորեալքն՝ սաստկութեամբ, յայդ սակս հարկ է ձեզ՝ հոգւով և սրտիւ միաբանել ընդ այլ ամենայն ուսումնասէրս մերազգիս, և համագումար ուժգնութեամբ մշակել զանդաստան եկեղեցւոյ և ազգի մերոյ . ցաւ սաստիկ է սրտի իմում տեսանել, զի ոչ սակաւ միայն են առ մեզ ուսումնասէր անձինք, այլ և որք են՝ անմիաբանութեամբ և ատելութեամբ բերին առ միմեանս, նախանձին ընդ փառս ընկերաց, և ջանան խափանել զյառաջադիմութիւն նոցա . ո՛չ այդպէս արժան է ձեզ ընթանալ՝ ո՛րդեակք, այլ զդորին հակառակն՝ յանձին բերել զխրատ սրբոյ Առաքելոյն, զընկերս լաւ համարել քան զանձինս, ջանալ նպաստել յաջողութեան նոցա, հոգւով և ճշմարտութեամբ միաբանել ընդ ամենեցուն, բոլորել զի մարմն բազմանդամ, և միահամուռ զօրութեամբ ներգործել 'ի լուսաւորութիւն ազգին. ապա 'ի բա՛ց թողէք՝ աղաչեմ զձեզ՝ զամենայն հակառակութիւն, գումարեցէ՛ք զջանս ձեր 'ի մի կենդրոն. զլոյս կարևոր գիտութեանց և գեղարուեստից աննախանձաբար տարածեցէ՛ք 'ի մէջ եկեղեցականաց և ժողովրդականաց մերոց. մի՛ լինիք քանքարաթագոյց ծառայք ըստ ոմանց անիրաւ մշակաց. այլ ըստ օրինակի իմաստուն եւրոպացւոց անաչառութեամբ լուսաւորեցէ՛ք զհոգիս ամենայն ընկերաց, թէ՛ կենդանի ձայնիւ դասատուութեամբ և թէ՛ տպագրութեամբ դիւրիմաց և յայտապատում մատենից. զոր և առանց [illegible] արծաթասիրութեան վաճառեցէ՛ք դիւրագնոյ. զի և աղքատք հաղորդեցին բարերարութեանց ձերոց։

Առ յաջողութեամբ 'ի գլուխ հանելոյ ձեզ զայդ ամենայն, միշտ վարեցարո՛ւք ձեռնտուութեամբ բարեպաշտ իշխանաց ազգին. որք 'ի սակս ազնուամիտ հայրենասիրութեան և ճոխութեան հարստութեան իւրեանց կարեն և կամին օգնական լինել ձեզ յամենայն բարի առաջադրութիւնս ձեր լուսաւորութեան ազգին. որպէս ակներև հաւաստեն մեզ զայդ՝ անհամար օրինակք ազգասիրական գործոց՝ թէ այժմ և թէ անցեալ գերագով իշխանաց մերոց, անմահական մեծագործութեամբք 'ի պատմութեան ազգին պայծառացելոց։

Յաղագս յօրինուածոյ մատենիս սակաւ ինչ ունիմ ծանուցանել ձեզ. կարգն՝ զոր կալայ յաւանդել զարուեստս՝ տարբեր է յայլոց հեղինակաց, և գէ՛թ ըստ իմում կարծեաց՝ յաջողագոյն քան զնոցայն. որպէս ունիք ճշմարտել 'ի փորձոյ անձանց ձերոց՝ 'ի յօրինուածս ճառից։ Զոճ բանից միշտ պարզախօս կալայ. զի ամենայն ումեք դիւրիմանալի լինիցի՝ ևս և առանց դասատուի. զօրինակս կանոնաց համառօտիւ 'ի մէջ բերի. և որպէս զի մի՛ կարի մեծասցի գիրք գրոյս՝ յոլով ուրեք զանցեալ միայն մատենից երջանիկ նախնեացն մերոց նշանակեցի, ըստ տպագրելոյն ՚ի Վենետիկ յարժանագոյն հարցն Մխիթարեանց. դիտելով եւ այդուիկ առիթ առ մերայնոց՝ ստանալ անձանց զմատեանսն զայնոսիկ, եւ անընդհատ պարապել յընթերցանութիւն նոցին. որով միայն մարթուն լինի նոցա ուսանել զմաքուր հայկաբանութիւն եւ զճշմարիտ ճարտարախօսութիւն։ ՚Ի պէտս սիրելի որդեկացդ յեւրոպական լեզուս վարժելոց՝ առ հայկական բառս ինչ յաւելի ուրեք ՚ի փակագծի զհամանշանակ այլազգականս, ուր զլատին, ուր զգաղղիացի, եւ ուր զիտալացի, որպէս զիարդ առժամն յիշեցի. զի ծանիջիք զճոխութիւն լեզուիս եւ զհամաձայնութիւն բանիցս ընդ օտարազգի ճարտարացն հնոց եւ նորոց։ ՚Ի նպաստ հոգւոր քարոզչաց մերոց ՚ի ներքս ածի ՚ի տեղիս տեղիս զկարճառօտ ծանօթութիւնս զեղանակէ յօրինելոյ զորբազան քարոզութիւնս աստուածային բանից. որոց յանչափս ծարաւին բարեպաշտ ժողովրդականքն մեր ամենայն ուրեք։ Ա՛մ էր ինչ եւս ՚ի վախճանի մատենիս յաւելուլ զնոր գլուխ յաղագս գրաբանութեան լեզուի մերոյ. այլ անընդհատ նեղութիւնք եւ վիշտք՝ որք գային զիս ՚ի կարգադրութենէ վերին նախախնամութեան, կարճեցին զգրիչ իմ առ ժամս. վասն որոյ զայսքանս՝ զոր ցաւալից անձամբ մարթացայ ՚ի լոյս ընծայել՝ ընկալարո՛ւք սիրով իբրու զառաջին պտուղ յայսմ սեռի. եւ դուք եւս գո՛ւն գործեցէք օր քան զօր ճոխացուցանել զգրաբանութիւնս մեր յօրինուածովք հարկաւոր մատենից, ՚ի փառս աստուածային մեծվայելչութեան, եւ ՚ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ եւ ազգի մերոյ ։

* * *

ՑԱՆԿ

Գլխոց, և մասանց նոցա.

ԳԼՈՒԽՔ. Երես.

Ա. Յաղագս ճարտասանութեան . . . . 9.
Բ. Յաղագս ճառի . . . . 17.
Գ. Յաղագս առարկայի ճառից . . . . 22.
Դ. Յաղագս նպատակի ճառից . . . . 91.
Յօդուած, ա̄. յաղագս ճանաչողական կարողութեան . . . . 96.
Յօդուած, բ̄. յաղագս զգածողական և բաղձողական կարողութեանց . . . 131.
Ե. Յաղագս նիւթոյ ճառից . . . . 146.
Պրակ, ա̄. յղ. ներքին նիւթոյ ճառից. 148.
Յօդ. ա̄. յաղագս բնաբանի . . . . 152.
Յօդ. բ̄. յաղագս վերաբանի . . . . 160.
Հատած. ա̄. յղ. մտավարժ վերաբանից. 161.
Հատած. բ̄. յղ. սրտազգած վերաբանից. 263.
Հատած. գ̄. յղ. կամագրգիռ վերաբանից. 268.
Յօդ. գ̄. յղ. յառաջաբանի և վերջաբանի. 281.
Յօդ. դ̄. յղ. յեղանակաց իմաստաբանուե̃ց. 286.
Պրակ. բ̄. յղ. արտաքին նիւթոյ ճառից. . 294.
Զ. Յաղագս կերպի ճառից . . . . 324.

ՀՐԱՀԱՆԳ
ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ
կամ
ՃԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ·

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։

Յաղագս Ճարտասանութեան ·

§ 1· Զինչութիւն և սահման ճարտասանութեան (Rhetorica)·

Ճարտասանութիւն ըստ կազմութեան ձայնին՝ ցուցանէ զներգործութիւն ճարտարութեան ասելոյ կամ խօսելոյ· իսկ ըստ նշանակութեան իմաստին՝ ցուցանէ զարհեստն ուղղութեան ճառելոյ զառարկայէ իմիքէ։ Արհեստիւ իմացեալ լինի աստ յաջողակութիւն և քաջավարժ կարողութիւն հոգւոյ՝ առ կերպաւորելոյ և ստեղծանելոյ ՚ի նախեղակ նիւթոյ զարարած ինչ մտաւորին կամ զնիւթականին։ Առ պայծառ իմանալոյ զինչութիւն արհեստիս և զյետագայ բանս՝ հարկ է ՚ի միտ առնուլ· թէ ՚ի խօսս ճարտասանից (որպէս և ամենայն մարդկան) հինգ ինչ են զանազանելի· զորս առ ՚ի չգոյէ ճիշդ բառից սոյնպիսիք նմանաբանութեամբք բացատրել, և են, 1 Առարկայ կամ էակ ինչ արտաքին՝ որ ազդէ և տպաւորէ զինքն ՚ի զգայարանս և ՚ի հոգի ճարտասանին, և ոչ թէ զսերմանս իւր փոխադրէ յարգանդ նորա· 2 Յղացումն ճարտասանին· կրելութիւն և ներգործութիւն՝ որով հոգի նորա սպասաւորութեամբ զգայարանաց ընդունի իբրու թէ յարգանդ իւր զսերմանս յառարկայէն, որովք և զոգցես յղանայ յինքեան· 3 Բան կամ իմաստ ներքին իբր սաղմն իմանալի, որ է նոյն սերմանք աճեցեալք հաստունացե՟լք և ոգեւորեալք, որք ը՟ կարողուե՟ց հոգւոյ բաժանին յերիս կարգս. 'ի մտաւորկ՟նս՝ առ որս վերածին դիտակք զգայութեանց, պատկերք երևկ՟յուե՟, նմանաբերուի՟ք, գլխ՟ք և իմաստք մտաց. 'ի սրտայինս՝ որ կոչին Զգածմունք. և 'ի կամայ՟կնս՝ որք անուանին Գործուի՟ք զորս հոգին 'ի մի զանգուած ձուլեալ՝ կերպաւորէ զբոլորամասն մարմին բանին. և սա եթէ ը՟արձակ իցէ՝ բազմամասն՝ բարեկարգ՝ յօդակապե՟լ և զմիոյ առրկ՟յէ՝ անուանի առ մեզ՝ Ճառ ներքին և մտաւոր. 4 Լեզուախօսուի՟, անցաւոր ներգործուի՟ Ճրտ՟անին՝ ը՟ որոյ հոգի ն՟ր միջնորդուբ՟ լեզուի և յօդաւոր ձայնի թանձրացց՟նէ և մարմնացց՟նէ զմտաց իւր, և որպէս թէ ծնանի զնա յաշխարհ. 5 Խօսք կամ Ճառ արտաքին, որ է մտացկ՟ն պտուղն 'ի լեզուախօսուէ՟ արտադրեալ. որ կամ անդէն առ ծնին հաղորդի և փոխադրի 'ի հոգիս ընկերաց, և կոչի խօսք կենդանի. և կամ գրով և մրով դրոշմի 'ի թղթի, և առանձինն անուանի Գրաբանութիւն (litteratura)։

§ 2. Արդ՝ ը՟ տուե՟լ ծանօթուե՟ցդ Ճրտ՟նուի՟ն՝ եթէ առցի ը՟հանրա՟պ՝ սահմանի, Արհեստ ուղղուբ՟ կերպաւորելոյ զներքին Ճառն զառրկ՟յէ իւիք, և արժանա՟պ հաղորդելոյ զնա ընկերաց՝ առ ազդուուբ՟ ներգործելոյ 'ի հոգիս ն՟ց. իսկ մասնական նշանակուբ՟ առեալ զայն ընդ համօզաբանուե՟ միայն, սահմանի, Արհեստ ուղիղ կերպաւորելոյ զներքին Ճառն զբարոյկ՟ն պաշտամանց, և ը՟ արժանւոյն հաղորդելոյ զնա ընկերաց առ շարժելոյ զկամս ն՟ց 'ի պաշտօնակատարուի՟։ Ուղիղ կամ ուղղուբ՟ ասեմք առ նշ՟նկելոյ զհամաձայնն արուեստի. ուր բարւոքն 'ի լատինէն առ մեզ փոխադրեալ՝ ինքնին անորոշ և տարտամ գոլով, ինչ ոչ բացորոշէ. թող՝ զի մարթ է ևս բարւոք ասել, բարւոք խօսել զբանն Ա՟յ։ Նոյնպէս հաղորդել ասացաք սեռօրէն, զի 'ի ներքս առցի թէ ձայնաւոր բացախօսուի՟ն, և թէ գրաբանուի՟ն. ը՟ որում քան զնա՝ սա յաճախեալ է այժմ, Ծուն՟դ յազգի մերում. յոր միտս և զընկերին ընտրեցաք, զի միով ձայնիւ ծանուսցուք թէ զունկնդիրն բացախօսութ՟ն, և թէ զընթերցողն գրաբանութ՟ն: Մնացեալ բառք սահմանացդ առաւել ևս լուսաբանեսցին 'ի յետագայդ: Ցասացեալոցդ իմացեալ լինի թէ վ՟ ե՞ր զարուեստս կոչեցաք ես՝ Ճառաբանութ՟ի. զի արարած և պտուղ մ՟ ոչ է լոկ խօսք կամ խօսել սովորկ՟ն. առ որ չպահանջի Ճրտ՟րութ՟ի բզմ՟. այլ ըստ ը՟ունելոյ ամ՟ հեղինակաց՝ է Ճառ կմ՟ Ճառաձև բան. յորում հրկ՟ւ պահանջին միութ՟ի առրկ՟յի և նպտ՟կի, բազմութ՟ի և պէսպիսութ՟ի մասանց, այլ և կարգ՝ կապ և միատարրութ՟ի դ՟յ, որք յայտ է թէ չունին տեղի յորևիցէ խօսս մ՟դկ՟ն:

Իսկ հրահանգն Ճարտասանութեան՝ է գումար կանոնաց՝ զեղանակն ստացութեան արուեստիս աւանդողայ. որ կամ կենդանի ձայնիւ աւանդի 'ի վրժ՟պտց առ աշակերտս, և կոչի Դասատուութ՟ի. և կամ 'ի մատեանս գրով դրոշմի. ոպ՟ս մեր յանձին կալեալ է առնել աստ ըստ մերոց տկար զօրութեանց:

§ 3. Ենթակայ՝ առարկայ և նպատակ Ճարտասանութեան.

Ենթակայ արհեստիս է ո՛ր և իցէ մ՟դ, բայց յաւէտ զարդարեալն կարևոր ձիրիւք. յորոց սակի են՝ կենդանանկար երևակայութ՟ի, հւտ՟րիմ յիշողութ՟ի, քաջառողջ դատողութ՟ի, նուրբ հանճար մտաց, աշխոյժք հոգւոյ, գեղազգածութ՟ի, բազմափորձ խոհականութ՟ի, և կարևոր գիտութ՟եց ժառանգութ՟ի, Ծուն՟դ քերթ՟նութ՟ն, հայկաբանութ՟ն, բանաստեղծութ՟ն, տրամաբանութ՟ն, հոգեճառութ՟ն, բարոյագիտութ՟ն, դեղագիտութ՟ն, օրէնսգիտութ՟ն, իմաստասիրութ՟ն, հանրկ՟ն և ազգական պատմութ՟ն, և այլոց բզ՟մց, կ՟դ՟ է՟ սրբութեան վարուց և ա՟ծ՟ային երկիւղածութեան. առանց որոց անմարթ է պարզերես Ճառաբանել:

Առարկայք՝ զորովք պատաղի Ճրտ՟ն կարողութ՟ին, են Արուեստաբանութ՟իք, դ՟ բանք՝ կմ՟ իմաստք ը՟ կանոնաց արհեստս կերպաւորեալք զէակաց և զհանգամանաց նց̅ • բժնին 'ի ներքին՝ որք առանձինն իմաստաբանուի̅ կոչին • և յարտաքին՝ զորս Պերճախօսուի̅ անուանեմք • ներքինք դժ̅ւ զատանին 'ի մտավարժս՝ 'ի սրտազգածս և 'ի կամաշարժս • զորոց բազում ինչ ստորև ։

Մերձաւոր նպատակ Ճարտասանուե̅ն է՝ Ճառ յօրինել, այն է՝ յառարկայ իւր մուծանել զկերպ Ճառական, կամ զմասունս առարկային իբրև զատաղձս ոմանս կանոնօք ը̅ իրեարս պատուաստեալ՝ կերպաւորել զարհեստակերտ արարած իւր, Ճառ անուանել • միջին նպտ̅կ է հաղորդել ընկերաց զՃառն, զի ոչ յիւր՝ այլ յայլոց պէտս Ճառէ նա • իսկ վերջին վախճան է ազդել և ներգործել 'ի հոգիս ընկերաց • իմա՛ կամ լուսաւորել միայն զմիտս նց̅, կամ զգածել զսիրտս, և կամ շարժել զկամս նոցա 'ի գործարարութիւն ։

§ 4 • Սեռք և ցեղք Ճարտասանուե̅ •

Ըստ պէսպիսուե̅ն առարկայից՝ արարածոց և նպատակաց բաժանի արհեստս յարձակաբանուի̅, 'ի քերթուի̅, և 'ի համոզաբանուի̅ • որոց խոյր և տարբերուի̅ հիմնի 'ի հինգ ինչ • և նախ՝ 'ի ներքին բանն՝ զոր հաղորդեն ընկերաց • զի արձակաբանն կմ̅ ըդ̅ նախնեաց շարագիրն (prosa) հաղորդէ նց̅ զՃանաչմունս և զիմաստս իւր միայն, քերթուին̅ (poësis) յաւելու յայն և զզգայողուի̅ս և զզգածմունս, իսկ համոզաբանն բաց 'ի դոցունց՝ նա և զգրգռուի̅ս կմ̅ զկորով և զթափ հոգւոյ իւրոյ • երկ̅դ՝ յառարկայն՝ զորմէ Ճառեն, որ յարձակախօսն է Ճշմարտուի̅ ինչ Ճանաչելի միայն • 'ի քերթողն՝ Ճշմարտուի̅ և յոլովակի լոկ Ճշմարտանմանուի̅ զմայլելի և զգածելի, իսկ 'ի համոզաբանն՝ Ճշմարտուի̅ արդեամբք գործադրելի • երր̅դ՝ 'ի գլխաւոր զղի̅ն՝ որ տիրէ հոգւոյ նց̅ • որ յարձակաբանն է Ճշմարտուի̅, 'ի քերթուե̅ն՝ գեղեցկուի̅, իսկ 'ի համոզը̅նուե̅ն՝ բարուի̅ • չրր̅դ՝ 'ի կարոզուի՟ս հոգւոյ ընկերաց՝ յորս սկզբնաբար դիտին ներգործել. զի արձակաբանն խօսի տիրապ՟ առ միտս ընկերաց, քերթողն ՚ի զգայուի՟ս և ՚ի սիրտս, իսկ համոզաբանն նա և ՚ի կամս նոցա. հնգեր՟դ ՚ի նպատակսն՝ յորս ձգել նկրտին զընկերս. ը՟ որում արձակաբանն դիտէ՝ զի ընկերն ծանիցէ ուսցի և իմասցի միայն՝ զոր թերևս ոչն գիտէր, քերթողն դուն գործէ՝ զի քաղցր կամ դառն զգածութի՟ք փարակեսցի ընկերն. իսկ համոզաբանն՝ զի բաց յայդցանէ նա և խրախոյս առեալ ժրասցի և ճեպեսցէ ընկերն ՚ի կատարումն ապսպարեալ պաշտամանն: Բաց ՚ի գլխաւորացդ գտանին և այլ պտ՟ճկն տարբերութի՟ք ը՟ արհեստդ, ո՟պի են արձակ կամ ոտնակապ տողել զխօսս, յոլով կ՟մ սակաւ փարել զձևս իմաստից և բառից, այլովք հանդերձ:

§ 5. Առ արձակաբանութի՟ն վերածին ա՟մ ճառք՝ յորս պ՟հնջի ներքին ուղղութի՟ իմաստից ը՟ տրմ՟բնութե՟, և արտաքին ուղղութի՟ խօսից՝ ը՟ քերկ՟նութե՟ միայն, ո՟պի են ճառք ա՟ծաբանից, իմաստասիրաց, և այլոց դոցին նմանեաց: Առ քերթութի՟ն վերածի անուանեալն տիրապ՟ Բանաստեղծութի՟, ևս և ճառք ներբողի՟նք, թատրոնի՟նք, և յորս առաւելապ՟ դիտի զգածութի՟ սրտի: Առ աղքատութե՟ բառից վարեմք զձայնդ՝ Համոզաբանութի՟ (oratio). և ը՟ նովաւ իմանամք զայնպիսի ճառս միայն՝ յորս հրահանգութի՟ մտաց և զգածութի՟ սրտի իբր լոկ միջոց ՚ի կիր ածեալ լինին, իսկ բուն նպատակ նր՟ է հզօրեղապ՟ շարժել զկամս և զձեռս ընկերաց ՚ի գործարարութի՟, դուն և գրգիռ արկանել ՚ի հոգիս նր՟, և առնել բանիւք՝ զի անգործ և չկամ ընկերն փոխեսցի ՚ի յօժարակամ և ՚ի գործօն. և որովհետև ճիշդ առարկայ այսպիսեաց են բարոյական ներգործութի՟ք կամ պաշտամունք եթ, ապա ըստ կրկին սեռից սր՟ հարկ լինի և զհամոզաբանութի՟ն բաժանել յեկեղեցական և ՚ի քաղաքական. առաջինն կոչի Քարոզութի՟ ա՟ծային բանից, որոյ է բարոյապէս բռնադատել զհաւատացե՟լս, զի արդեամբք կատարեսցեն զպաշտամունս արտաքին կրօնի, առ Ա՟ծ՝ առ անձինս և առ ընկերս վերաբերե՟լս. իսկ գործ եկ՟ղին է բորբոքել զկամս ընկերաց առ 'ի կտ՟րումն բարւո՟յն պշտմ՟ց նոցա ըստ քաղաքական կենաց. և զի ս՟ք վերստին զանազանին յայլևայլ դասս, որ՟պ 'ի գերդաստ՟նկն, յամուսնական, 'ի ծնողական, յորդուն՟կն, 'ի զինուոր՟կն, 'ի դատողական, յարհեստական, և յորս 'ի կարգի, ըստ դոցանէ մարթ է ասել՝ և քղ՟քկն համոզաբանութեան տրոհիլ 'ի դյ՟նօրինակ ցեղս. որպէս և եկղ՟ցկնն իսկ պէսպիսանայ ըստ այլևայլութ՟ առարկայից՝ նպատակաց՝ տեղեաց և ժմ՟կց: Մեր կէտ նպտ՟կի եղե՟լ է՝ նախ զհ՟նրկն կանոնս ամ՟ ցեղիցդ աւանդել յառաջակայդ հ՟րկախօսութ՟. և ապա 'ի վխճ՟նի զառանձնական ցեղս ոմանս վերագլխութ՟ իւ՟ց կրկին յառաջ բերել ըստ կարգի.:

§ 6. Հարկ և օգուտ ճարտասանութ՟.

Առ լիուլի ճանաչելոյ զհր՟կւորութ՟ արուեստիս՝ պարտ է բաղդատել զհամր մարդն ը՟ խօսողի, և յուշ ածել զխտիրն ը՟ մէջ երկոցունցդ. զի որ՟պ համրածինն զուրկ գոլով 'ի բրբ՟ոյ չմարթէ զկիրս և զկարիս իւր ծանուցանել այլոց, ը՟ունել զպէտս հոգւոյ և մարմնոյ, և կտրելագործել զինքն և զիւրսն ներքին և արտաքին բարութ՟ք, կամ նպաստել իւիք ընտանեաց և ընկերաց, իսկ բանախօսն դիւրութ՟ զօրէ 'ի գլուխ տանել զայդամ՟ միջնորդութ՟ բրբ՟ոյ. ը՟ դոցունց օրինակի այր անլեզու և անճրտսն հր՟կւ թափուր գտանի 'ի բազմապիսի հոգեկան մարմ՟նկն և կենցա՟ղկն բարեաց, իսկ ճշմ՟րտիւ ճարտասանն ժառանգելով զարուեստս՝ ժառանգէ ընդնմին զփականս ամենայն բարօրութ՟ց. եթէ զի ք՟ զայլոց ոմանց գիտութ՟ց՝ սր՟ նպաստիւք առաւելապ՟ մարթ լինի մեզ զգաղափարս և զիմաստս՝ մեր և այլոց մտաց՝ լուսաւորել՝ ճշմարտել և կտրելագործել, զգիտնական և զգործկ՟ն ճշմարտուի՟ս ամրապինդ կանգնել, և 'ի մոլորուե՟ց պաշտպանել, զստուի՟ս և զխաբէուի՟ս 'ի մէնջ և յայլոց փարատել, զուսմունս օգտակար գիտուե՟ց և արհեստից առ ամ՟ ոք տարածանել, քաղցր և օրինաւոր հեշտութեամբք զսիրտս վշտագնելոյ բերկրեց՟ցնել, զթմբրեալս 'ի բարեգործութիւնս՝ թափ և ճեպ արկեալ 'ի հոգիս նց՟ ժրաց՟ցնել, զմեր և զայլոց վարս բանաւոր մշակուբ՟ 'ի մոլորուե՟ց ը՟ կարի մաքրագործել, զէակս և զհանգամանս նց՟ քրքրել՝ զընդերս նոցա ճանաչել, զարարածս ԱՅ՟ կենդանատիպ նկարագրեալ՝ 'ի ծանօթուի՟ և 'ի փառաբանուի՟ արարչի նոցին զեղւարս շարժել, յատենի ուսագախումբ հանդիսի՟նց զկարևոր իրաց մա՟նւորաց՝ քաղաքաց՝ տէրուե՟ց՝ և եկեղեցեաց հմ՟րձկաձայն բացախօսուբ՟ ճառ արկանել, զմիտս և զհոգի ունկնդրաց կողմանէ 'ի կողմն, և նպատակէ 'ի նպատակ շրջշրջել, և զնա՟ իբրու 'ի վր՟ ձեռաց և բազկաց բարձեալ՝ ածել տանել և հանգուցանել՝ ուր մեզ հաճոյ թուիցի, զխեռուի՟ կնճռեալ մտաց հակառակորդաց իրաւացի փաստիւք յագեցուցանել, զծընկէց ապստամբուի՟ ապերասան կամաց՝ ընդ լծով օրինաց և օրինաւոր իշխանաց նուաճել, զարտասուս որբոց այրեաց և տնանկաց 'ի բռնաւորուէ՟ անօրինաց հարստահարելոց՝ յաչաց և յերեսաց սրբել, զլրբենի գոռոզացեալ չարագործուի՟ն իրաւացի պատժովք օրինաց ը՟ արժանեաց դտ՟պրտել, և այլովք ազգի ազգի հրապարակի՟ն պաշտամամբք անձին և այլոց բազմապատիկ բարեբաղդուե՟ց պտ՟ճռ կալ և տնօրէն· որոց ամ՟յն վկայ և երաշխաւոր են անհամար անձինք 'ի պ՟պ ազինս 'ի տեղիս և 'ի ժմ՟կս բարեհամբաւեն՟ք· որք սատարուբ՟ արհեստիս գերապանցեցին քան զամ՟ մդ՟կ ժմ՟կին, վերամբարձան 'ի բարձրագոյն կատար փառց՟՝ պատուոյ՝ համբաւոյ՝ հարստուե՟՝ և իշխանուե՟· և ոչ ինքեանք միայն անմահացան՝ այլ և զընկերս անմահացուցին· ոմանք յերկրի միայն, ծով ոմանք՝ և յերկինս անգամ․ որոց Ճիշտկք՝ օրինակք և պատմութիւնք լի են թէ յածային մատեանս, և թէ 'ի գրուածս սրբազան և արտաքին մատենագրաց․ ուր յանդրադարձ սակի՝ որք անլեզուք և անգրիչք ոչ անձանց և ոչ հայրենեաց զօրելով օգնել իւիք՝ յամենեցունց լքեալ թողլոյն յանկեան ուրեք անծանօթք, և տուայտանօք վճարեալ զցաւալի կեանս՝ տնչքութեամբ ելին յաշխարհէ եղեալք իբրև զչեղեալս։ Իսկ տեղիք և ժմկք 'ի կիր առնլոյ զճարտարաբանութիւն այնչափ են՝ որչափ առիթք խօսելոյ մերոյ ը̄ ընկերս․ այն է ասել՝ յամ՟ վայրի և յամ՟ վայրկենի, յեկղցւոջ, 'ի դերդաստանի, 'ի հրպրկի, 'ի դպրոցի, 'ի քաղաքի, 'ի բանակի, 'ի ժողովի, 'ի պալատի, 'ի մատենի, 'ի նամակի, յուրախութ՟, 'ի տրտմութ՟, 'ի յաջողս, 'ի ձախողս, յուսուցանելն, 'ի յորդորելն, 'ի հրամայելն, յաղաչելն, 'ի խնդրելն․ և ո՞ւր՝ ոչ, կամ ե՞րբ՝ ոչ․ զի որովհետև ամենայն մդկ առանց բացառութ՟ յօդիւ ինչ կապակցութեան առնչացեալ գտանին ը̄ այլս 'ի կենցաղումս, և զհոգ խնամոց ունին յայլս՝ որ յարդարուէ որ 'ի սիրոյ, կամ կարօտ գոն խնդրել և առնուլ յայլոց զօգնութի̄ մերթ վս̄ իւրեանց, և մերթ վս̄ ընկերաց, ապա և այդոցիկ աղագաւ անտրկյս պարտին լինել ճարտարախօսք․ զի մարթասցին բարեյաջող ելիւք 'ի կատար ածել զձեռնարկս՝ աջակցութեան ընկերաց կարօտաւորս։

Զհրահանգ արուեստիս մարթ էր մեզ՝ կա՛մ բաղադրլն, կա՛մ վերլուծական ոճով աւանդել․ բայց 'ի սակս ինչ ինչ հնգմնց նխդսելի թուեցաւ մեզ ոճդ վերջին, Մնւնդ ե՞րդ իմն յերկոցունց բարեխառնեալ․ ը̄ որոյ և առնումք 'ի լուսաբանել յայլևայլ գլուխս նախ զարարած սր̄ զճառն ընդհանրապ՟, և ապա զպէսպէս մասունս նորա ըստ կարգի։

* * *

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ·

Յաղագս Ճառի·

§ 7· Զինչութենէ և տեսակաց ճառի (Oratio, tractatus)·

Զճառն թէպէտ հանապազ 'ի լեզուի և 'ի գրչի ունէին նախնի ճարտասանք, բայց զօրինաւոր սահման նորին ոչ ուրեք՝ որչափ յիշեմք՝ աւանդեցին մեզ գրով· վս̃ որոյ ստիպեալ մեզէն կերպաւորել զայն ըստ կարի՝ հարկ համարիմք զթել բանիցս հանել 'ի ստուգաբանութէ̃ անուան նորին: Արդ ճառն զօրէն այլոց բազում բառից լեզուիս՝ նշանակէ իբր կրաւորական անցեալ ընդունելութի̃ ածական, զօրութեամբ ունելով զդայական իւր· իմա՛ փոխանակ ասելոյ՝ ներքին իմաստ արտաքուստ ճառեալ, ճառած (նոյնն ասէ և լատին ձայնն)· ըստ որոյ ոչ միայն ինքնին բաժանի 'ի ներքին և յարտաքին, այլ և սկզբնաբար զներքինն նշանակէ, և պատահաբար միայն՝ զբացախօսեալն· և որովհետև զներքին բանն առ որոշելոյ 'ի ձայնաւորէն՝ միշտ իմաստաբանութի̃ ունիմք անուանել, յայդմանէ և զսահման հանրական ճառին մարթ լինի մեզ այսպէս բոլորել· Ճառն է արուեստահիւս փունջ՝ զոր ճարտասանն կերպաւորէ յիմաստաբանութեանց անտի իւրոց զառարկայեն, և մարմնացուցեալ զայն բարբառով հաղորդէ ընկերաց՝ առ հզօրեղապէս ազդելոյ 'ի կարողութի̃ս հոգւոց նոցա: Ըստ դմանէ և սահման համոզաբանութե̃ առանձինն լինի այսպիսի ինչ· Համոզաբանութիւն է արուեստահիւս փունջ՝ զոր կերպաւորէ ճարտասանն յիմաստաբանութե̃ց անտի պաշտամանց, և մարմնացուցեալ զայն բարբառով հաղորդէ ընկերաց՝ առ շարժելոյ զկամս նոցա 'ի պաշտօնակատարութի̃: Զփունջն (systema) նախամեծար ընտրեցաք 'ի սեռ, զի գեղեցիկ բացատրէ զբազմութի̃, զպէսպիսութի̃, զկարգ, զկապ, և զզանգուած

94

մասանց նիւթոյն՝ 'ի մի մարմին բոլորաձոյլ. իսկ այլ բառք յայտ առնեն զյատկանիշս և զհանգամանս իրացն, յորս եթէ կայցեն ինչ մթութիւնք առ համբակս՝ լուսաբանեսցին 'ի յետագայսդ:

§ 8. Մասունք Ճառից.

Գլխաւոր և էական մասունք որ և իցէ ճառի՝ համարին երկու միայն. Նիւթ և Կերպ, որք 'ի միասին առեալ անուանին՝ պարունակեալք 'ի ճառին, իբրու ընդերք և փորոտիք նորա. բայց որովհետև նիւթն կամ արուեստաբանութիւնք՝ միշտ զառարկայէ ինչ կերպաւորին. և ճառն 'ի նպատակ կամ 'ի վախճան ինչ ուղղի, յայդմանէ յաւելեալ լինին և այլ երկու ամբողջարար և արտաքին մասունք, Առարկայ և Նպատակ. որով և համօրէն մասունք ճառի գլխաւորին 'ի չորս հանրականս. որք և վերստին բաժանին 'ի յոլով կամ 'ի սակաւ մանրամասունս, որպէս տեսցին ստորև: Իսկ կարգ բացատրութեան դոցա՝ ըստ խստութեան ուղիղ դատողութեան պահանջէ, զի 'ի յաջորդ գլուխդ խօսեսցուք նախ՝ զԱռարկայէ, առանց որոյ յետագայքն ծան անիմանալիք. երկրորդ՝ զՆպատակէ, որ լոյս բազում ցոլացուցանէ 'ի հետևեալսն. երրորդ զՆիւթոյ՝ զոր նախնիք անուամբ գլխոյ կամ տեղեաց ծանուցին. և հուսկ ապա զԿերպէ՝ 'ի նախնեաց տրամադրութեան անուանեալ. յորս և բովանդակին համօրէն կանոնք և ճոխութիւնք արուեստիս:

§ 9. Սեռք և ցեղք Ճառից.

Նախնիք զամենայն ճառս բաժանէին յերիս սեռս, կամ ըստ մերայնոց՝ 'ի հանդէսս. 'ի խորհրդական, 'ի բաղխոհական, և յատենական. զորս և ապա որոշէին յայլևայլ ցեղս, անուանեալս 'ի նոցունց, ներբող, պարսաւ, խրատ, յորդորակ, հաշտութիւն, մխիթարութիւն. ևն. սակայն ուղիղ կարգն պահանջէ զատանել վնոսա ըստ գլխաւոր մասանց և հանգամանաց նոցին․ վասն որոյ առ. մեզ

Նախ բաժանին ճառք ըստ առարկայից և ըստ հեղինակաց, յա̃ծաբանականս, յաստեղաբաշխականս, ՚ի բնազանցականս, ՚ի բարոյականս, ՚ի բժշկականս, ՚ի գեղագիտականս, յիմաստասիրականս, ՚ի չափաբերականս, յօրինագիտականս, և յայլ բազում դոյնպիսիս, ըստ ազգի ազգի գիտութեանց և արուեստից։

Երկրորդ՝ ըստ նպատակացն բաժանին, **1** ՚ի հրահանգականս՝ որք զմիտս միայն ունկնդրաց կատարելագործեն, որպիսի են ամենայն արձակաբանութիւնք, գիտութիւնք, և արհեստք․ **2** ՚ի սրտազգածս, և **3** ՚ի կամաշարժս, կամ ՚ի համոզականս։

Երրորդ՝ ըստ քանակութեան նիւթոյն բաժանին, յընդարձակս՝ որք ՚ի մատեանս բովանդակին, և սովորաբար հրահանգ կամ գիտութիւն կոչին (իմա՝ առարկայապէս)․ ՚ի միջասահմանս՝ ՚ի քանի մի թերթս թղթոյ ամփոփեալս․ և ՚ի համառօտս, որոց չիք բացորոշ կոպար տարածութեան։

Չորրորդ՝ ըստ որակուե̃ նիւթոյն բաժանին, **1** ՚ի վսեմականս, որք անքննելի խորհրդածութեամբ իմաստից շողշողեն, որպիսի են բանք աստուածային գրոց, և բազումք ՚ի յօրինուածոց նախնեաց մերոց, մանաւանդ ՚ի շարականն, ՚ի Նարեկն, և յայլ գիրս․ **2** ՚ի միջակս մեծայարգ իմաստիւք ճոխացեալս, և **3** ՚ի հասարակս՝ սովորական իմաստից վերբերիչս։ Այլով տեսութեամբ մարթ է զատանել զճառս ՚ի ճշմարտապատումս, ՚ի հաւանականս, ՚ի մոլորապատումս, յառասպելապատումս, են, ՚ի սակս նոյնպիսի որակութեան իմաստից ՚ի նոսին պարունակելոց։

Հինգերորդ՝ ըստ ներքին կերպաւորուե̃ն բաժանին ՚ի բարեկարգս և յանկարգս․ ըստ որում մասունք նիւթոյն ուղիղ կամ թիւր կարգաւ յօդակապին ընդ իրեարս․ նոյնպէս ըստ արտաքին կերպաւորուե̃ բարբաւոյն բաժանին 'ի խոլթնիմացս, 'ի միջակայինս, 'ի պալպլիմացս, և յայլ դոյնպիսիս, ըստ այլևայլ տեսութեանց և հանգամանաց ոճոյն:

Վեցերորդ՝ մարթ է բաժանել զճառս նա և ըստ տեղեաց և ըստ ժամանակաց՝ յորս 'ի կիր առնին կամ արտասանել լինին · ըստ որոց զանազանին ճառք, 1 Եկեղեցականք, առ որս վերածին քարոզք հաւատապատումք, բարոյականք և ծիսականք, կոնդակք հայրապետաց, սահմանադրութիւնք վճիռք և կանոնք ժողովոց, արձանականք (parentatio) և ամուսնականք յիկեղեցականաց բացախօսեալք, ներբողեանք 'ի պատիւ սրբոց, տօնաճառութիւնք, և այլ նմանք · 2 Դպրոցականք՝ որք 'ի համալսարանս և 'ի ճեմարանս 'ի գործ ածին, որպիսի են դասատուութիւնք (praelectio) վարժապետաց առ աշակերտս, բացախօսութիւնք (declamatio), վիճաբանութիւնք (disputatio), նախագրութիւնք (programma), նախապեկուցմունք (prolusio), հանդիսաբանութիւնք (oratio solennis), զորս 'ի տարեգլուխս հիմնադրութե և յայլ հանդէսս սովոր են արտասանել 'ի դպրոցս · գիտնական համախօսութիւնք (dialogus), և այլ դոյնպիսիք · 3 Պալատականք, որք յարքունիս և 'ի ժողովս թագաւորաց, պաշտօնէից, դեսպանաց, և այլոց արքունի իշխանաց 'ի գործ ածին · յորս վերածին և հրովարտակք, հրամանք, օրէնք, և պէսպէս պատուէրք թագաւորաց · 4 Բանակականք՝ ըստ որոց զօրագլուխք խրախոյս մատուցանեն զինուորաց · 5 Ատենականք, ամենայն ճառք՝ որք կամ 'ի դատաւորաց, կամ առ նոսա յօրինել լինին · ևս և որք տիրապէս առ դատարանս վերածին · զի առեալ առ մեզ ճշդիւ զդատողականն նշանակէ · 6 Քաղաքականք կամ կենցաղականք՝ ընդ որովք բովանդակին այլ ամենայն ցեղք ճառից առ քաղաքական կեանս վերաբերեալք · յորոց սակի են մանաւանդ նամակք, պատմութիւնք, վերտառութիւնք, տապանագիրք, և այլք բազումք · զորս յանձն առնեմք իմաստասիրել ուսանելեաց։ Յուշ ած և զնախայիշեալ բաժանումն Ճառի ընդհանրապէս առելոյ՝ յարձակաբանութիւն, 'ի բանաստեղծութիւն, և 'ի համոզաբանութիւն։

§ 10. Պարտաւորութիւնք Ճարտասանի, և ցեղք նորա.

Թէպէտ և հանրական պարտաւորութ̄ կամ պաշտօն Ճարտասանին մի միայն է, Ճառ յօրինել. բայց քան զի մասունք և պարագայք Ճառից յոլով են, յայնմանէ և պաշտամունք նորա 'բազմանան և զատանին յեօթն կարգս. յորոց Առաջինն է որոնել՝ գտանել և որոշել զգլխաւոր առարկայն. զորմէ ունիցի Ճառել. զատանել 'ի նմանէ զմասն՝ զոր ունիցի կարգել 'ի բնաբան. որոնել և գտանել զպէսպէս հանգամանս նորա. մտածել և մանր որոճալ զնոսա բաւական ժամանակաւ. առնուլ զնոսա իբրև զսերմանիս ինչ 'ի միտս 'ի սիրտս և 'ի կամս իւր. յղանալ նոքօք յերեսին կարողութ̄ոդ, և փոխել զնոսա 'ի մի սաղմն. Երկրորդ՝ բացորոշել զգլխաւոր նպատակն՝ զոր ցանկայ 'ի ձեռս բերել, արդեօք զմի՞տս միայն ունկնդրաց կամի լուսաւորել, թէ նա և զսիրտս նոցա զգածել, կամ 'բաց յայդցանէ նա և զկամս նոցա գրգռել 'ի գործարարութ̄. Երրորդ՝ զառարկայն և զնպատակն բաղդատել ընդ իրեարս, տեսանել թէ մի՞թէ իցէ զայնպիսի նպատակ ստանալ Ճառաբանութ̄ այնպիսի առարկայի. կամ քաջայարմա՞ր իցէ առարկայն առ դիտեալ նպատակն. այլ և բաղդատել զառարկայն ընդ ինքն և ընդ հմտութ̄ իւր, թէ ունիցի՞ ինքն բաւական զօրութ̄ 'ի միտս՝ 'ի սրտի և 'ի կամս առ պարզերեսութ̄ Ճառելոյ զայնմանէ. զի ոչ ամենայն ուսք բառնան զամենայն բեռինս. և ոչ ամենայն ընթացողք յասպարիզի առնուն զյաղթանակն. Չորրորդ՝ զննել և բացորոշել զամենայն հանգամանս ենթակայից նպատակին, իմա՛ ունկնդրաց և վերծանողաց. թէ ո՛րպիսի ոմանք իցեն 'ի միտս, 'ի գիտութիւնս, յարհեստս, ’ի սիրտս, ’ի կամս, յառաքինութիւնս, ’ի մոլութիւնս, ’ի հասակի, ’ի գերդաստանի, ’ի քաղաքի, ’ի դպրոցի, և յայլ զանազան վիճակս ըստ հոգւոյ՝ ըստ մարմնոյ և ըստ աշխարհի․ առ ’ի յարմարել նոցա զմիջոցս ստացուած նպատակին․ զի ոչ ամենայն հիւանդք միով դեղով դարմանին, և ոչ ամենայն ձկունք միով կարթիւ կարթին․ Հինգերորդ՝ ըստ բացորոշ որպիսութեանց առարկային՝ նպատակին և ունկնդրաց՝ յօրինել և յարմարել զմիջոցս նպատակին․ որք են վերաբանութիւնք ըստ երրեակ սեռից, և այլ մասունք նիւթոյն․ Վեցերորդ՝ զմասունս նիւթոյդ ընդ միմեանս կապակցել, ’ի մի զանգուած բոլորել, և կերպաւորել զամբողջ մարմին ճառին․ և Եօթներորդ՝ զայդ ամենայն մարմնացուցանել բարբառով և համապատշաճ պերճախօսութեամբ, և ըստ պատշաճի հաղորդել ունկնդրաց։ Ընդ դոքօք պարունակին և այլ երկրորդական պաշտամունք, զորս ունիմք յիշատակել ’ի յետագայսդ։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ․

Յաղագս առարկայի ճառից․

§ 11․ Զննութիւն և բաժանումն առարկայի ճառից․

Առարկայ անուանի ընդհանրապէս այն ինչ, որ առաջի մարդկային ներգործութեան կացեալ՝ առնու ’ի նմանէ զկերպաւորութիւն և զտարազ ինչ, կամ յիւր վերայ եղերէ զնա կերպապէս․ որպէս արձանն ասի առարկայ արհեստի ոսկերչութեան, զի ’ի նմանէ առնու զկերպ մատանելոյ. և Թուղթն ասի առարկայ տեսութեան աչաց, զի յիւր վերայ եզերէ զայն. արդ Ճառաբանութիւն եթէ առցի սեռօրէն՝ առարկայ նորա համարին ամենայն էակք և հանգամանք նոցա. ապա թէ առցի ցեղօրէն փոխանակ համոզաբանութեան, առարկայ նորա լինին միայն պաշտամունք՝ զորս Ճարտասանն ապսպարէ ունկնդրաց առ 'ի գործադրել. յօրինակի համար՝ եթէ առաջի կայցէ համոզաբանի շարժել զիշխան ոք առ 'ի տալ ողորմութիւն աղքատի, առարկայ բանից նորա լինի ողորմածութիւն կամ բառնալն զթշուառութեան աղքատին. որ է պաշտօն բարոյական. և որովհետև պաշտամունք անգամ՝ 'ի դասս մտաւոր էակաց վերածին, և մեզ կամք են՝ ոչ զմասնականն ևթ, այլ և զհանրական առարկայ Ճառից բացատրել համառօտիւ. յայդ սակս կարևոր դատիմք՝ նախ զէակաց հասարակաբանել ինչ աստանօր, ապա զպաշտամանց, և հուսկ յետոյ զհանգամանաց նոցա։

Արդ բառն էակ՝ առեալ լինի ըստ մեզ երկակի. բնազանցօրէն, և Ճարտասանօրէն. ըստ բնազանցութեան ցուցանէ զայն ամենայն, որ էացեալ է կամ ունի զէութիւն և զգոյութիւն. ըստ որմէ և զանուն գոյական. որում դիմադրի ոչինչն կամ զրկեալն 'ի գոյութէ և յանուանէ. բայց որովհետև պէսպէս են աստիճանք գոյանալոյ, յայն սակս և էակն ընդհանրապէս բաժանի

Նախ՝ յինքնագոյ, որ ոչ յայլմէ՝ այլ յանձնէ ունի զէութիւն, որպիսի է միայն արարիչ մեր Աստուած. և յայլագոյ՝ որ ոչ յինքենէ, այլ յայլմէ ունի զգոյութիւն, որպիսի են ամենայն արարածք. որք դարձեալ զատանին 'ի բնականս և 'ի մարդաշէնս. բնական կոչին էակք յԱստուծոյ միայն ստեղծեալք, որք բաժանին յաննիւթս և 'ի նիւթականս, յիմանալիս և 'ի զգալիս, 'ի կենդանիս և յանկենդանս, և յայլ յանհամար ցեղս. զորոց զգումարն կոչեմք՝ բնութիւն, տիեզերք, աշխարհ, ևն. իսկ մարդաշէն էակք 'ի մարդկանէ ունին զգայանալն · և բաժանին յերկուս · 'ի մտաւորականս՝ որպիսի են ամենայն գաղափարք, իմաստք, բանահիւսութիւնք, ճառք, և այլ էակք մտաց՝ զանազան անուամբ բացատրեալք · և յարհեստականս՝ որպիսի են ամենայն ձեւակերտք անհամար արհեստից, որք նախ 'ի միտս՝ և ապա արտաքոյ այնր ստանան զգոյութիւն · և դոքա ամենեքեան դարձեալ բաժանին յայլեայլ սեռս և 'ի ցեղս · զորոց մանրամասն և յերկար ճառել՝ ոչ մեզ, այլ բնախօսից՝ հոգեբանից և տրամաբանից անկ է · առ որս տեսցեն՝ որ կարօտին ։

§ **12** · Առ ճարտասանս՝ ամենայն ինչ որ 'ի քերականական նախադասութեան կոչի ենթակայ դիմաւոր բայից, մտածի իբր էակ · իսկ որ ինչ դնի իբր խնդիր բայից, անուանի Հանգամանք · որպէս յասելն» աշոտ է իմաստուն, սեւու՟ին է գոյն» ենթակայքդ համարին էակ · իսկ խնդիրքդ բայից՝ կոչին հանգամանք · և տարբերու՟ի դոցա յիրերաց յայտ է · զի էակն համարի իբր բոլոր ինչ բաղադրեալ · իսկ հանգամանքն իբր մասունք և անդամք նորա · կամ պարզ ևս ասել ընդ չափաբերից՝ էակն մտածի իբր քանակու՟ի ամբողջ, իսկ հանգամանք իբրու միութիւնք 'ի նմա պարունակեալք · որոյ յարաբերութին բացատրի ըստ եղանակի չափաբերական հաւասարու՟ե · վասն զի զոր ինչ առնէ չափաբերն յասելն 5=1+1+1+1+1 , զնոյն գործէ և ճարտասանն երբ ճառելով զէակէ իմիքէ , զ՛օգ զաշոտոյ՝ ասէ, աշոտն է կենդանի՝ մտաւոր՝ ազատակամ՝ առաքինի և իմաստուն · յորում որպէս տեսանի էակն աշոտ դնի իբր ամբողջական քանակու՟ի կամ մեծութիւն, իսկ հնգեակ հանգամանքդ՝ իբր նոյնչափ միութիւնք, որք համագումար առեալք՝ հաւասարին ընդ աշոտոյ միջնորդութեամբ էական բային · որ ունի զտեղի նշանիս = հաւասարու՟ե · թէպէտ և հաւասարութիւնդ ոչ է լիակատար յայդմ օրինակի · զի յաշոտն բազում այլ հանգամանք գտանին անհատականք ։

§ **13**· Իսկ անուամբ պաշտաման իմացեալ լինին բարոյական ներգործութիւնք և կրելութիւնք մարդկան, որք կացուցանեն զբուն առարկայ համօրէն ճառից· վասն զի դոքա պաշտամանց ենթ ունկնդրաց ճառեն այլևայլ տեսութեամբ· զանցեալսն ջատագովեն կամ ամբաստանեն առաջի դատաւորաց· մերթ ներբողեն և պարսաւեն առ 'ի խրախուսել զունկնդիրս 'ի նմանիլ կամ 'ի չնմանիլ նոցունց· իսկ զապագայս ապսպարեն հանդիսականաց 'ի ստանձնել կամ 'ի մերժել յանձանց: Զբաժանումն պաշտամանց 'ի պէսպէս ցեղս, և զայլ կարևոր ծանօթութիւնս՝ աւանդեալ է մեր համառօտիւ 'ի կրօնագիտութեան· իսկ զառաւելագոյն տեղեկութիւն խնդրել պարտ է 'ի բարոյագիտաց: Պաշտամունք ըստ որում են ներգործութիւնք՝ թէպէտ առ հանգամանս մարդոյ վերաբերին, բայց զի գոյական անուամբք բացատրին, և նորանոր հանգամանս առնուն յինքեանս, յայս սակս 'ի կարգ մտաւոր էակաց շարադասին առ 'ի մէնջ:

§ **14**· Երկրորդ բաժանին էակք և հանգամանք կամ առարկայք՝ ըստ կարողութեանց մարդկային հոգւոյ 'ի քառեակ կարգս· որք են, **1** զգալիք՝ որք ազդեն և տպաւորեն ինչ 'ի ներքին կամ յարտաքին զգայարանս մեր· որպիսի են ամենայն նիւթաւորք՝ քանակաւորք և ձևաւորք· **2** իմանալիք՝ որք ոչ անկանին ընդ զգայութեամբ, այլ մտօք միայն ըմբռնեալ լինին· որպիսի են ամենայն վերացեալք՝ անենթակայք և աննիւթք· **3** զգածելիք՝ որք զճաշակ գեղեցկութեան և քաղցրութեան իւրեանց ազդեն 'ի սիրտս մեր· և **4** գործադրելիք՝ զորս հոգի մեր կամի գոյաւորել և իրաւորել· որպիսի են ամենայն բարոյական պաշտամունք և ներգործութիւնք:

§ **15**· Երրորդ՝ որովհետև էակք իբր բոլորք կամ ամբողջք, և հանգամանք իբր մասունք նոցա մտածին, ըստ պէսպիսութեան քանակութեանց բաժանին 'ի վեց կարգս· այնք են, **1** էակ կամ բոլոր բաղադրական՝ տարածական և չափական, որ զմասունս 'ի միջի կամ

՚ի ծօրէ խորում կցեալ պարունակէ․ և չափեալ լինի ընդ երկայն, ընդ լայն և ընդ խոր․ որպէս մարմինն մարդոյ, քար, փայտ, ևն․ 2 բոլոր հանրական՝ որ զմասունս ՚ի ներքոյ իւր զատ և անկցորդս պարունակէ․ որպէս սեռն զցեղս, և ցեղն զանհատս․ մասունք սորա թուեալ լինին․ 3 բոլոր հաւաքական, որ զմասունս հուպ իւր և զատաբար պարունակէ․ որպէս կարկառ քարանց, դէզ ցորենոյ, անտառ, ատեան, եկեղեցի, և ամենայն էակք հաւաքական անուամբ նշանակեալք․ 4 բոլոր յաջորդական, որոյ մասունք մի զկնի միւսոյն տողադասին ուղղագիծ երկայնութ՟, որպիսի է ժամանակն և մասունք նորա․ 5 բոլոր աստիճանական՝ որոյ մասունք կամ ՚ի ստորէ ՚ի վեր ելանեն ըստ բարձրուե՟, կամ ՚ի վերուստ ՚ի վայր իջանեն ըստ խորուե՟ իբրու ընդ սանդուխս․ որպէս ջերմուի՟, ցրտուի՟, սէր․ 6 բոլոր գերազանցական՝ որոյ մասունք մտօք միայն զանազանին վասն պարզուե՟ նորա․ որպէս յԱստուած զանազանեմք զարդարուի՟, զբարուի՟, զմարդասիրուի՟․ և ՚ի հուոջ մարդոյ զանազանեմք զկարողուի՟ս․ և զայսս դարձեալ յայլայլ ցեղս։ ՚Ի վեցեակ բոլորոյ այսր՝ բաղադրականն է էակ թանձրացեալ և միահատ․ հաւաքականն երբեմն է էակ թանձրացեալ, բայց բազմաթիւ․ իսկ միացեալ չորքն են էակք վերացեալք՝ աննիւթք և մտօք իմանալիք։ Արդ է բաժանել զէակս նա և յայլ յոլով սեռս և ՚ի ցեղս ըստ այլեւայլ տեսակաց․ ոչ ըստ բանի տարակայ լինելոյ նոցա պէսպէս գիտուե՟ց և արհեստից (աստուածաբանուե՟, իմաստասիրուե՟, բնաբանուե՟, ևն), ըստ բանի նպատակն լինելոյ, և ըստ այլոյ այլի հայեցողուե՟ց․ զորովք զանց առնեմք առ չծանրաբեռնելոյ զուսանիլս։

§ 16․ Զինչութենէ, յատկութենէ և բաժանութ՟ հանգամանաց․

Հանգամանք (որք կոչին ևս՝ բացորոշուի՟ք, նիշք, նշանք, մակածութիւնք, ստորոգելիք (1), և այլ ինչ այսպիսի) են կերպք և էակութիւնք ինչ, որոց գլխաւոր զօրութիւն և պաշտօն է իբրու մասունք և սկզբնատարերք՝ բաղադրել և կերպաւորել զէակս. կամ առնել՝ զի բաղադրեալքն ՚ի նոցունց՝ լինիցին այս ինչ անհատ էակ. յօրինակի սակս՝ կենդանութիւն, բանականութիւն, բարոյականութիւն, առաքինութիւն, իմաստութիւն, հայրութիւն, և այլ դոյնպիսիք, կոչին հանգամանք, զի ընդ իրեարս միաբանեալք՝ կերպաւորեն զմարդութիւն կամ զմարդ ոմն անհատ. անուանին ևս բացորոշութիւնք, զի զոր կերպաւորեննն՝ ՚ի բաց որոշեալ զատանեն յայլ ամենայն էակաց, և անհատաւորեն յինքեան առանձինն: Յասացելոցդ քաջայայտ տեսանի՝ թէ պարզութիւն, կերպատութիւն, և հարկաւորութիւն, են երրեակ արմատական յատկութիւնք հանգամանաց, յորոց բղխեն և այլք բազումք. զորոց և անհամար դատողութիւնք կարծիք և վէճք են առ իմաստասէրս. և մեզ չէք հարկ մխել յանդունդս խնդրոյդ. վասն որոյ զբաղմօք յոյժ զանց արարեալ, յառաջ բերցուք աստանօր զայնս միայն՝ զորս պիտանաւորս դատիմք ճարտասանից. որոց՝ վասն զի գլխաւոր պաշտօն է ճառել զառարկայէ ինչ, ամենայնիւ հարկ է խելամուտ լինել հանգամանաց նորա. զի ճառել ոչ այլ ինչ է, բայց եթէ որոնել գտանել և արտայայտել զհանգամանս առարկային՝ զորմէ բանքն իցեն:

§ 17. Արդ պարզութիւն հանգամանաց եղեալ կայ յայսմ, զի ոչ է նա բաղադրեալ ՚ի զանազան մասանց. կամ գոնէ միտք մեր ոչ զօրէ զանազանել ՚ի նմա զմասունս. որպէս ՚ի սևութեան, ՚ի սպիտակութեան, ՚ի քաղցրութեան, ՚ի միութեան, ՚ի գոյն, և յայլ նմանս. սմա դիմադրի բաղադրութիւն, յորում կամ իրօք կամ գէթ մտօք զանազանին այլևայլ մասունք. ոչ 'ի բանականութե՟ մարդոյ զանազանելն ըմբռնել, համեմատել, դատել, հաւանել, և՟ն։ Պարզութի՟ն կոչի ևս միութի՟, զի ամենայն պարզ՝ մի է. և եթէ զօրէ նա ընկերանալ ընդ այլում և բաղադրել զբարդ ինչ, ընծայի նմա նա և մասնութիւն. սմին նման բաղադրութի՟ն կոչի ևս Բազմութի՟. այլ և Բոլորութի. զի ամենայն բաղադրեալ 'ի մասանց՝ հարկաւ է բոլոր ինչ. ըստ այսց տեսութե՟ց՝ հանգամանք բաժանին 'ի պարզս և 'ի բարդս. պարզք սակաւ են 'ի բնութե՟, իսկ բարդք՝ յոլով յոյժ. կամ գոնէ՝ յամենայն լեզուս սակաւ են անուանք զպարզս նշանակողք, և յոլով՝ որ զբարդս նշանակեն։ Բոլորութի՟ն անուանի ևս պարունակութի՟, պարփակութ՟, ամփոփութ՟ (intensio, complexus). զի զմասունս փակէ 'ի միջի, կամ որպէս թէ յարգանդի իւրում. յորում և մտածին սակաւութի կամ յոլովութի՟ մասանց, կարգ և կապ նոցա, փոքրութի, մեծութի՟, որչափութի, թիւ, գումար, կոյտ, և այլ այդպիսիք։ Մասունք զատաբար առեալք, և առ բոլոր իւրեանց բաղդատեալք՝ կոչին տիրապէս, պարունակեալք, նիշք, նշանք, յատկանիշք. զի զբոլորն իբրու յատուկ նշանօք և դրոշմիւք ոմամբք յայլմէ ամենայնէ որոշեն, և յինքեան անհատաւորեն։ Պարզութի և բաղադրութիւն հանգամանաց պէսպիսանայ ոչ միայն յիրս անդ, այլ և 'ի միտս մարդոյ. զի որչափ սրաթռիչ խորամուխ և թափանցանց իցէ միտք զննողի ուրուք, այնչափ առաւել գտանէ և զանազանէ զմասունս 'ի բաղադրեալն անդ. յորմէ յառաջ գայ և այն խտիր, զի զհանգամանս զոր անուսում՟ ոք պարզ համարի, նրբամիտ իմաստասէրն և հեռատես Ճարտասանն գտանէ յօրաբարդ. և զատուցեալ 'ի նմա զբազմութի՟ պարզից կամ մասանց, բացատրէ զնոսա որոշակի. յորմէ և յարդ բաղադրելոյն Ճանաչի. վասն զի գին կամ արժողութի որ և իցէ բոլորոյ՝ չափի և կշռի ըստ արժանեաց մասանց նորա։

---

(1) Determinationes, notae, characteres, criteria, praedicata, categoriae.

§ 18· Միտք մեր 'ի յառաջարկելն էակաց կամ հանգամանաց՝ նախ առաջին կարօտի գոնէ ընդ աղօտ ճանաչել զինչութ̄ի նոցա, և զանազանել զմին 'ի միւսոյն · ոպ̃ 'ի տեսանելն զզանազան գոյնս՝ կարօտ գոյ ճանաչել և խորհրդով ասել, այս է դեղին, այդ կարմիր, այն ծիրանի, միւսն կապոյտ · այս ներգործութ̄ի մտաց կոչի Գաղափարութ̄ի, գաղափարել · իսկ խորհել և զանազանել նորա զհանգամանս 'ի միմեանց, կոչի Ընտրողութ̄ի · Յետ այդորիկ միտքն շարժի 'ի քննել զհանգամանս առանձինն, տեսանել՝ պա՞րզ իցեն թէ բաղադրեալ · զորս եթէ գտանէ բազմամասնեայս՝ ստիպի քրքրել և իմանալ զո՞րն, զո՞րպէսն, և զո՞րքանն մասանց նոցա · զի որպէս ժամագործն ոչ զօրէ արդար գին հատանել ժամացուցի լոկով հարևանցիկ տեսութ̄ե, այլ առ չխաբելոյ զինքն և զայլս՝ կարօտ գոյ քայքայել զանիւս և զայլ մասնկունս նորա, և զիւրաքանչիւրսն առանձինն յարգել · նոյնպէս և միտքն առ լիակատար խելամտութ̄ի արժէից էակաց՝ 'ի բնական անյագութ̄է իւրմէ դրդեալ մանրախոյզ ուռճանօք կրկտել զմասունս նորա · և այդ անդամայնին ներգործութ̄ի հանրական անուամբ կոչի՝ վերլուծութ̄ի · որոյ ցեղք առ ճարտասանս համարին՝ լայնաբար խօսելով՝ եօթն · զորոց լիագոյն խօսեսցուք յիւրում վայրի:

Լեզու մարդկային 'ի թուարկելն զմասունս բաղադրելոյ իւրք՝ երրեակ եղանակաւ բացատրէ զայն · նախ՝ էական բայիւ, որպէս յայսմ, աշոտ է կենդանի, բանական, անձնիշխան, առաքինի, գիտուն, հարուստ, գեղեցիկ, հայր, եւ̄ն · երկրորդ՝ ներգործական բայիւ · ոպ̃, աշոտ ունի զկենդանութ̄ի, զբանականութ̄ի, զանձնիշխանութ̄ի, զառաքինութ̄ի, եւ̄ն · երրորդ՝ կրաւորական բայիւ, ոպ̃, յաշոտն գոն կամ պարունակին կենդանութ̄ի, բանականութ̄ի, հարստութ̄ի, հայրութ̄ի · յորս որպէս տեսանի՝ յառաջին և յերկրորդ եղանակն բոլորն դնի իբր ենթակայ, և մասունքն իբր խնդիրք բայի · իսկ յերլորդութիւն՝ մասունքն դնին իբր ենթակայ, և բոլորն իբր խնդիր բայի ։

§ 19. Որովհետև միտք մարդոյ 'ի քննելն զպարզութիւն կամ զբաղադրութիւն էակաց, ոչ միով՝ այլ պէսպէս աստիճանաւ սաստկանայ կամ թուլանայ, յայսմանէ ընծայի նմա նախ պայծառութիւն, եթէ կարասցէ զանազանել զիր յիրէ, կամ զհանգամանս 'ի հանգամանաց. որպէս զոսկին յարծաթոյ, կամ զհոտ վարդի 'ի հոտոյ մեխակի. զոր եթէ ոչ զօրեսցէ առնել՝ ընծայի նմա մթութիւն. երկրորդ՝ եթէ մարթասցի 'ի միում բոլորի կամ 'ի բաղադրելում բացայայտել զմասունսն, վերադրի նմա յստակատեսութիւն. ապա թէ ոչ՝ ասի ունել զշփոթութիւն. ըստ այսմ 'ի հարցանել քո զաշոտն, զինչ է գողութիւն, կամ քանի հանգամանք պահանջին առ իսկութիւն գողութեան, եթէ զօրեսցէ նա պատասխանել՝ թէ չորք այսոքիկ, 1 առնուլ զինչս, 2 զօտարի, 3 առանց գիտութեան և հաւանութեան տեառն, 4 դիտմամբ սեպհականելոյ զայն ինքեան կամ շահելոյ նովաւ, 'ի միտ առ ճանաչել նմա զգողութիւն, ոչ միայն պայծառ՝ այլ և յստակ. ապա թէ աւելի՝ պակաս՝ կամ օտար ինչ պապաջեսցէ, ցուցանէ ունել զճանաչումն մթին և շփոթ. այս որակութիւք տերապէս 'ի միտս ենթակայանան, և ոչ թէ յիրս կամ 'ի հանգամանս. բայց 'ի տրամաբանից ընծային երկրորդաբար նա և գաղափարաց մտաց ։

§ 20. Կերպաւորիչ յատկութիւն հանգամանաց եղեալ կայ յայսմ, զի կամ միայնակ կերպաւորեն զպարզ էակս, կամ ընդ այլոց ընկերացեալք՝ բաղադրեն զբարդ էակս. իսկ խտիր սորին 'ի վերոյգրելոյն յայսմ է. զի անդ հանգամանքն մտածին ինքն բաղադրեալ յայլոյ, իսկ աստանօր նոյն հանգամանք (թէ պարզ իցէ և թէ բաղադրեալ) մտածի իբր զայլս կերպաւորող. յօրինակի աղագս՝ մարդութիւն նախ՝ մտածի իբր բաղադրեալ 'ի կենդանութենէ, 'ի բանաւորութենէ և 'ի բարոյականութենէ. Ծ որոյ անուանի կերպաւորութիւն կրաւորական.

երկրորդ մտածի իբր կերպաւորիչ անհամար անհատից յադամայ մինչև ցայսօր, և ըստ այսմ անուանի՝ կերպատուութիւն:

Կերպաւորիչ զօրութիւն՝ ըստ քանակութեան էակացն, զորս գոյաւորէ, բաժանի յեզական և 'ի հանրական. եզական է՝ որ զմի անհատ էակ կերպաւորէ. որպէս է կերպն արևու, լուսնի, և այլոց միահատ էակաց. իսկ հանրական՝ որ զբազում անհատս կերպաւորէ. որպէս է մարդութիւն, ոչխարութիւն. և վերստին բաժանի 'ի մասնական և 'ի բոլորական. յորոց առաջինն դարձեալ զատանի 'ի սեռական և 'ի տարբերական. սեռականն զհանրական մասն տայ էակին, բայց ինքն միայնակ ոչ բոլորէ զնա. որպէս է կենդանութիւն նկատմամբ մարդոյ և այլոց անասնոց. սա յոյժ ընդհանուր է, և դնի իբր նիւթ՝ այլով իւիք բացորոշելի. և սովորաբար կոչի Սեռ, այն է՝ սեռական կամ հանրական հանգամանք: Տարբերականն 'ի վերայ գայ և միանայ ընդ սեռականին, և իբրու առանձին կերպ լրացուցանէ զնա. որպէս է մտաւոր բանականութիւն 'ի մարդն. սա հասարակօրէն անուանի Տարբերութիւն կամ Յատկութիւն: Բոլորական հանգամանք է՝ որ բաղադրի 'ի սեռէ և 'ի տարբերութենէ, որպէս է մարդութիւն. և 'ի նախնեաց կոչի՝ Տեսակ. այլ քան զի այս բառ համաձայն և շփոթ է, մեք վասն յստակութեան կոչեմք զայն Ցեղ. այն է ցեղական հանգամանք: Ընդհանրութիւն սեռի՝ տարբերութեան և ցեղի՝ պէսպէս աստիճանաւ ընդարձակի կամ ամփոփի. ըստ որոյ և բաժանին նոքա յայլևայլ կարգս և 'ի դասս. որոց նուրբ խտրութիւնք՝ քան զի անօգուտ են Ճարտասանից, զանց արարեալ զնոքօք՝ յաւելումք զայլ գիտելիս. եւ

1 Թէ՝ սեռ տարբերութիւն և ցեղ՝ բացատրին իբր մակածական, իսկ բաղադրեալքն դնին իբր ենթակայ. որպէս, արբեցութիւն է մոլութիւն. մարդն է մտաւոր. թեղօշն է ծառ:

2 Թէ սեռն նկատմամբ առ ցեղս իւր, և ցեղն նկատմամբ առ անհատս իւր՝ կոչին վերնակարգք, կերպատուք, մակածականք. այդմ հակառակ՝ ցեղք առ սեռս իւրեանց և անհատք առ ցեղս իւրեանց բաղդատեալք, անուանին ստորակարգք, կերպառուք, և ենթակայք. իսկ ցեղք միոյ սեռի, և անհատք միոյ ցեղի՝ առ միմեանս բաղդատեալք, կոչին շարակարգք. զի ՚ի միում շարի կարգին տողաբար։

3 Թէ սեռն վասն զի ընդհանրագոյն է քան զտարբերութ՟ն և սովաւ կոպարաւորի, յայն սակս նկատմամբ առ սա կոչի Նիւթ. իսկ սա նկատմամբ առ նա՝ կոչի Կերպ նորա. որպէս է բանականութ՟ն նկատմամբ առ կենդանութ՟ե մարդոյ. զնոյնն իմա և յայլ ամենայն էակս. զի ուր ուրեք ընդհանուրն չափաւորի մասնականաւ իւիք, նա նիւթ կոչի, և սա կերպ նորա։

4 Թէ յայսմ կերպատու յատկութ՟է հանգամանաց բղխեն այլ ևս չորք յատկութիւնք նոցա. որք են, անենթակայութ՟ե կամ վերացականութ՟ե, ենթակայաւորիչ զօրութ՟ե, ընդհանրութ՟ե նկատմամբ առ անհատ կերպացեալս (այս զօրութ՟ե պարզ ևս իմանի օրինակաւ կնքոյ, որ եթէ տպեալ լինիցի ՚ի հազարաւոր մասունս թղթոյ կամ մոմոյ, նմա ընծայի ընդհանրութ՟ե, իսկ նոցա անհատութ՟ե). և ծաւալականութ՟ե կամ տարածութ՟ե և հաղորդականութ՟ե (extensio , ambitus , sphaera):

5 Թէ որովհետև ընդհանուր էակք և հանգամանք շփոթակի ըմբռնին ՚ի մտաց, իսկ մասնականք՝ դիւրութ՟բ և պայծառութ՟բ, յայդ սակս Ճարտասանք հնարեալ են զվերլուծութիւն հանրական քանակութ՟ե. որոյ ցեղք կոչին առ նոսա, ձևացուցանել, նմանեցուցանել, բաղդատել, և այլք, զորոց ստորև։

§ **21**. Ըստ բանի հարկաւորութ՟ն հանգամանք բաժանին ՚ի դիպացականս, ՚ի հակասականս, և ՚ի փոփոխականս. դիպացական են՝ որ միշտ և հարկաւ պահանջին, և առանց նոցա անհնար է էակաց կերպաւորիլ և գոյաւորիլ· որպիսի են կենդանութիւն և բանականութիւն ՚ի մարդն, կամ երեք անկիւնք և երեք կողմունք ՚ի ձևն եռանկիւնի· սոքա կացուցանեն զինքնութիւն կամ զէութիւն իրին, մտածին յիրս անդ իբր արմատ և բուն (յորմէ՝ բնութիւն, բնական), կամ իբր հիմն և խարիսխ, յորոց շառաւիղեն և յորոց վերայ յենուն փոփոխականք· և բաժանին յերկուս, ՚ի սեռ, և ՚ի տարբերութիւն, յորոց բաղկանայ ցեղն։

Հակասական կոչին ամենայն հանգամանք՝ գոյացականաց դիմադրեալք, որք եղծանեն զէութիւն իրին· կամ որոց անկարելի է մտանել ՚ի բաղադրութիւն էակաց՝ առանց ապականելոյ զինքնութիւն նոցա· որպիսի են անկենդանութիւն և անբանութիւն նկատմամբ մարդոյ· և անանկիւն կամ բոլորածիր լինելն նկատմամբ քառանկեան· սոքա բաժանին ՚ի նոյնչափ կարգս, որչափ և գոյացականքն։

Փոփոխական հանգամանք՝ որք սեպհական անուամբ կոչին Ցեղանակք (յոմանց պատահմունք անուանեալք) են անհաստատ և դիւրափոխ կերպք ինչ՝ որք ոչ զէութիւն իրին կայուցանեն և ոչ միշտ միօրինակ պգածին զայն, այլ գան և գնան առանց ապականելոյ զինքնութիւն նորին· և բաժանին՝ լայնաբար խօսելով ՚ի վեց հանրական սեռս· զօրութիւն, որակութիւն, քանակութիւն, առընչութիւն, տեղի, և ժամանակ· զսոսա մեկնել ունիմք ՚ի յաջորդում· առ ժամս յաւելցուք և զայլ ծանօթութիւնս, զորս առաւել պիտանիս համարիմք մտառութեան ընթերցողաց։

§ 22· Հանգամանք ըստ գոյութեան մտածեալք՝ բաժանին ՚ի դրականս և ՚ի պակասականս· դրական կոչին՝ որք մտածին իբր արդեամբք գոյաւորք կամ իրականացեալք· որպէս կեանք, գիտութիւն, լոյս, հարստութիւն· իսկ պակասական կամ բացասական՝ երբ նշանակի անգոյութիւն կամ բացակայութիւն նոցա ըստ մասին կամ ըստ բոլորին· որպէս տկարութիւն, ախտաւորուն̄, ոգեսպառուն̄, և մօտ՝ համարին իբրու այլևայլ աստիճանք բացագոյուե̄ կենաց. նոյնպէս ստուեր, տաղօտ, մութ, խաւար, և մառախուղ, համարին պէսպէս աստիճանք պակասուե̄ լուսոյ. գոլմէ և գիտեա՝ թէ այդ բացակայուն̄ երբեմն արտայայտի այլածայն բառիւք, որպէս յօրինակդ և յայլ բազումս. իսկ այլ երբեմն՝ նոյն բառիւ դրականին զոյգ ընդ նախադաս մասնկայդ՝ ոչ, չ, ան, տ, ապ. ոպ̄, գիտութիւն... ոչ գիտուն̄, չգիտուն̄, տգիտուն̄, անգիտուն̄. որք առ իրեարս բաղդատեալք՝ անուանին, երկու հակասութիւնք, կամ հակասական բանք. և երբեմն համանգամայն ընծայեն ենթակայի իմիք. ոպ̄, արշակ կամ գիտուն է, կամ ոչ գիտուն։ Բայց ծանի՛ր՝ զի մասնդ բացասական մերթ նշանակէ զբացակայուն̄ դրականին, որպէս յօրինակիդ. և մերթ բաց յայնմանէ՝ լռելեայն ՚ի մէջ բերէ զայլ ինչ դրական անորոշ. որպէս յասելն. այս հանք կամ ոսկի է, կամ ոչ ոսկի. յետինդ եթէ ճշմարտեսցի՝ պարտի նշանակել զայլ ինչ մետաղ. զի որ ոսկի չէն՝ հարկաւ կամ արծաթ է, կամ պղինձ, կամ բլաղինա, կամ այլ ինչ այնպիսի։

§ 23. Դրական հանգամանք ընդ միմեանս բաղդատեալք՝ բաժանին ՚ի համաձայնս, որք մարթին խաղաղուե̄ ընկերանալ և բաղադրել զէակ կամ զհանգամանս. և ՚ի հակառակս՝ որք եղծանեն զիրեարս և ոչ զօրեն ՚ի միում ժամանակի ՚ի միում ենթակայի բնակել սիրով. ըստ այսմ իմաստուն̄, առաքինուն̄, գեղեցկութիւն, իբրու համաձայնք կարեն կերպաւորել զմարդ. իսկ սպիտակուն̄, դեղնուն̄, և կարմրուն̄, անմիաբան և հակառակ են միմեանց. զի որոյ մարթ է ասել, թէ աշոտ է իմաստուն և առաքինի և գեղեցիկ և հարուստ. բայց չէ հնարին է ասել, այս թուղթ է սպիտակ և դեղին և սեաւ, ըստ նոյն մասին. նոյնպէս ուղիղ է ասել, արիուն̄ է առաքինուն̄, արծիւն է թռչուն, արշակ է մտաւոր. զի դոքա են սեռ, տարբերութիւն, և ցեղ ենթակայից․ որով և հարկաւ համաձայնք նոցա։ Ներգործութիւն մտաց՝ որ դատանէ և վճռէ զհամաձայնութիւն կամ զհակառակութիւն երկուց հանգամանաց՝ կոչի Դատողութիւն․ իսկ վճիռն ’ի մտաց բացորոշեալ, անուանի իմաստ․ որ եթէ լեզուաւ արտայայտեսցի՝ կոչի Առասութիւն․ կորոյ այլուր։

§ 24․ ’Ի հանգամանաց ոմանք իմանալի կոչին, զի ոչ զգայարանօք՝ այլ մտօք միայն ծանուցեալ լինին, և յիմանալի էակս միայն գտանին, կամ զայնպիսիս կերպաւորեն․ ոպ՟ սրբութիւն, իմաստութիւն, իրաւունք, օրէնք․ և ոմանք՝ զգալի, զի նա և մարմնական զգայարանաց ազդեն, կամ թէ զնիւթական էակս կերպաւորեն․ ոպ՟ ջերմութիւն, ծանրութիւն, գեղեցկութիւն, սերտութիւն։ Դարձեալ ոմանք ներքին կոչին, զի ’ի ներքուստ կերպաւորեն զէակն․ որպիսի են ամենայն գոյացականք, որակութիւնք, և քանակութիւնք․ իսկ ոմանք՝ արտաքին, զի արտաքուստ միայն զգածեն զայն, որպիսի են ամենայն առնչութիւնք։ Նուս և ոմանք անուանին՝ աստուածաստեղծք կամ իրականք, զի գոն արդեամբք ’ի բնութեան իրաց․ ոպ՟, համ, հոտ, գոյն․ իսկ ոմանք՝ մտացստեղծք կամ գաղափարականք, զի միտքն ստեղծանէ և մակածէ ’ի վերայ էակաց․ որպիսի են բոլորութիւն, մասնութիւն, ընդհանրութիւն, անհատութիւն, լինել ենթակայ, առարկայ, նման, հակառակ, ևն․ որք յայդ սակս կոչին՝ Էակք մտաց կամ բանի։ Այլ և ոմանք կոչին Բացարձակք, զի ընծայեն էակաց առանձաբար նկատելոց․ ոպ՟, միութիւն, իսկութիւն, կատարելութիւն, ևն․ իսկ ոմանք՝ Առնչականք, զի նշանակեն զկապ և զկախումն էակաց զիրերաց․ ոպ՟, գոյութիւն, տարբերութիւն, ներգործութիւն, նշանակութիւն, ևն։

§ 25․ ’Ի հանգամանաց ոմանք կոչին նկարաւոր, ձևաւոր, տարածաւոր, զի յինքեանս բերեն զարտաքին կերպարանս ինչ, զտեղիս, զձևակերպութիւն, կամ զպատկեր․ որպիսի են մանաւանդ՝ որք զգացեալ լինին աչաց տեսութեամբ, ձեռաց շօշափմամբ, և երևակայութեան պատկերացուցուի՟ · այլ և գոյնք ձևք և տարածուի՟ք · իսկ ոմանք աննկարք կամ անկերպարանք · որպիսի են ըմբըռնեալքն մտօք , և զգացեալքն ականջօք , ռընգամբք և քմօք , ձայնք , համք , հոտք , ևն :

§ 26 · Թէպէտ և ամենայն հանգամանք ըստ էուե՟ իւրեանց անենթակայ կերպք են , սակայն որովհետև միտք մեր երբեմ՟ մտածէ զայնս իբր վերացեալս յենթակայէ , և երբեմ՟ իբր թանձրացեալս յենթակայի , յայդմանէ՝ ըստ առաջին տեսուե՟ն կոչին նոքա անենթակայք կամ վերացականք · իսկ ըստ երկրորդին՝ ենթակայաւորք կամ թանձրատարածք · որպէս իմաստուի՟ և իմաստուն , սպիտակուի՟ և սպիտակ :

§ 27 · Նոյն մի իր ըստ պէսպէս հայեցուածոցն առ այլևայլ եղերս՝ մարթի մերթ իբր էակ համարիլ և մերթ իբր հանգամանք · որպէս յասելն՝ արբեցուին է մոլուի՟, յետինս այս մտածի իբր հանգամանք արբեցուե՟ն · իսկ յասելն՝ մոլուին է պատճառ թշուառուե՟ց մարդկան , նոյն մոլուին մտածի իբր էակ , որում ընծայի պատճառելն զթշուառուի՟ իբր հանգամանք ինչ նորա · հիմ՟ խորուր՟դ այն է՝ զի էակն նկատի իբր ենթակայ և բոլոր , իսկ հանգամանք իբր մակածական և մասն · և յայտ է թէ նոյն մի ինչ՝ ըստ այլևայլ եղերաց մարթի երբեմ՟ իբր բոլոր և երբեմ՟ իբր մասն համարիլ · որպէս հոգի կամ մարմին մարդոյ՝ առանձինն տեսեալք՝ են բոլորք · իսկ նկատեալք առ անձն կենդանի մարդոյ , համարին մասունք :

§ 28 · Պարզուի՟ կամ բազմամասնուի՟ հանգամանաց և էակաց՝ ոչ միշտ իրական է , այլ յոլով ուրեք և մտաւորական · ըստ այսմ՝ յԱստուած՝ որ է ամենապարզ էուի՟, միտք մեր վասն տկարուե՟ն իւրոյ զանազանէ զիմաստուի՟, զբարուի՟, զկարողուի՟, զմարդասիրուի՟, և զայլ բազումս իբրու զայլևայլ մասունս · որք իրք չեն զանազանեալ · զնոյնն առնէ միտքն և յայլ բազում առարկայս :

§ 29. Հանգամանք յիրս անդ մտածեալք՝ են կերպաւորիչ մասունք նոցա. իսկ 'ի մտաց ծանուցեալք կամ թէ 'ի միտս տպաւորեալք՝ են մէն մի գաղափարք. յորոց եթէ երկուք կապեսցին ընդ միմեանս՝ կազմեն զիմաստ. և թէ երեք կամ աւելի ևս միաւորին ընդ միմեանս՝ կերպաւորեն զշարաբանութիւն. և 'ի սոցունց բաղադրութենէ կազմի ճառն: Գործեալ հանգամանք զճշմարտութիւն էակին բացատրողք՝ կոչին Փաստք նկատմամբ առ միտս մեր. հանգամանք զգեղեցկութիւն առարկային պարունակողք՝ կոչին Լուցկիք նկատմամբ առ սիրտս մեր. իսկ հանգամանք զբարութիւն առարկային բովանդակողք՝ կոչին Խթան նկատմամբ առ կամս մեր. և նկատմամբ այդց երից պաշտամանց իւրեանց՝ հանգամանք կոչին Տեղիք կամ շտեմարանք 'ի պէտս ճարտասանին, զի 'ի նոցունց հաւաքէ սա զամենայն նիւթս ճարտարաբանութեան իւրոյ:

'Ի պարզ հանգամանս 'ի գոյութեան և 'ի բացակայութեան նոցա պարտ է զանազանել զաստիճանս, կամ զքանակութիւն սաստկութեան և թուլութեան. որպէս թէ ելևէջից. ըստ այսմ սէր, բարեկամութիւն, առաքինութիւն, գիտութիւն, ուրախութիւն, տրտմութիւն, ջերմութիւն, առողջութիւն, գեղեցկութիւն, համ, հոտ, գոյնք, լոյս, խաւար, աղքատութիւն, հիւանդութիւն, մոլութիւն, և այլք բազումք, մերթ սաստկութեամբ և մերթ թուլակի որակաւորեն զենթակայս:

§ 30. Հանրական հանգամանք բոլոր անձամբ գոյանան կամ գտանին յենթակայս և 'ի ստորակայս իւրեանց. կամ այլով ոճով՝ հանգամանք որ պատշաճին և հակառակին սեռին կամ ցեղին, նոյնք հարկաւ համաձայնին և հակառակին նա և ցեղից և անհատից նոցա. որպէս պատշաճեալքն կենդանութեան գտանին և 'ի մարդն կամ յայլ կենդանիս. նոյնպէս պատշաճեալքն մարդոյ՝ գտանին յաշոտ և յայլ ամենայն անհատս. բայց ոչ այդպէս յաջողի և ներհական սորօք. զի հանգամանք որ գոն յանհատս և 'ի ցեղս՝ ոչ միշտ գտանին 'ի ցեղս կամ 'ի սեռս նոցա:

§ 31. Ըստ համարեալ պայդչափ հանրական տեղեկուի՟ս զհանգամանաց, կարեւոր դատեմք յառաջ բերել աստանօր համառօտ բացատրուբ՟ զոմանս 'ի գլխաւոր ցեղից նոցուն, որք դրեթէ յամենայն էակս գտանին շատ կամ սակաւ, եւ որոց կարօտ գոն Ճարտասանք 'ի յօրինուած վերաբանուեց՟. քան զի սոքին են իբրու գանձատունք, յորոց առնուն նոքա զամենայն նիւթս խորհելոյ եւ խօսելոյ։

§ 32. Զինչութիւն, էութիւն, բնութիւն (Essentia).

Ճարտասանն յառաջ քան զամենայն պարտի ցուցանել ունկնդրացն՝ թէ զի՛նչ է առարկայն՝ զորմէ խօսելոցն է. զի առանց այսր ամենայն ջանք եւ բանք նորա յօդս ցնդին. արդ՝ ասացաք 'ի վերոյ՝ թէ զինչուի՟ էակաց գոյանայ 'ի գոյացական հանգամանաց. որպէս՝ բաց յօրինակաց անդանօր եդելոց՝ զինչուի՟ առաքինուե՟ է լինել պատշաճ անձնիշխան ներգործուի՟ մարդկային՝ համաձայն աստուածային օրինաց. եւ էուի՟ մեղաց է՝ լինել նոյնպիսի ներգործուի՟ հակառակ օրինացն Աստուծոյ. էուի՟ դաշնադրուե՟ կամ ընկերուե՟ է անբռնադատ հաւանուի՟ դաշնադրաց առ համագումար զօրուբ՟ 'ի ձեռս բերելոյ զնպատակ ինչ։ Ուսուցանեն բնազանցագէտք, թէ էուի՟ք իրաց յերից բաղադրին. 'ի նիւթոյ, 'ի կերպէ, եւ 'ի յատկուէ՟. որոց գումարն բացայայտի գոյական անուամբ՝ զցեղ իւրն նշանակողիւ. որպէս, մարդ. առիւծ. քար։ Իսկ թէ ո՛յք իցեն գոյացական հանգամանք էակաց՝ ուսանել պարտ է յայնմ գիտուէ՟, առ որս վերածին նոքա. զի ոչ է Ճարտասանուե՟ ցուցանել զնոսա։

§ 33. Նիւթ, տարր, ատաղձ, նիւթաւորութիւն, աննիւթութիւն, (materia).

Կրկին մտօք առնուն Ճարտասանք զնիւթն. մի՝ փոխանակ թանձր շօշափելի եւ զգալի իրաց. որում գլխադրի աննիւթն կամ մտօք միայն իմանալին. միւս եւս՝ փոիմանակ որ և լիցէ մասանց՝ յորոց բաղադրի բոլոր ինչ զգալի՝ իմանալի կամ արհեստական • որպէս ասեմք թէ հնչմունք կամ ձայնք են նիւթ երգոյ • իմաստք նիւթ ճառից • տառք՝ բառից • բառք՝ խօսից • ոսկր և ջիլ՝ նիւթ մարմնոյ կենդանեաց, և՛ն։ Այլք կամ ՚ի նոյնատեսակ նիւթոյ բաղադրին, որպէս հօտ՝ յոչխարաց • ժողովուրդ՝ ՚ի մարդկանէ, կարկառ՝ ՚ի քարանց • կամ յայլատեսակաց, որպէս տուն՝ ՚ի քարանց և ՚ի փայտից • հաց՝ յալերէ և ՚ի ջրոյ։ Ճարտասանք՝ որք յօգուտ իւրեանց գիտեն շրջել զամենայն ինչ, զորս առ մտաց՝ աչաց՝ ձեռաց և ոտից իւրեանց գտանեն, ևս և զծնօտ իշոյ՝ զորէն Սամփսոնի, առիթ առնուն ինքեանց ՚ի խօսել ե՛ւ զնիւթաւորութե ե՛ւ զաննիւթաւորութե էակաց • ըստ այսմ Խորենացին (բ • 39 — 41) ըստ՝ նիւթոյն ստուերագրէ զշինուածս Երուանդայ, իսկ Եղիշէ (յեր • 49 • 50) զաննիւթութին Աստուծոյ նկարագրէ • զորս կարդամ առ նոսա։ ՚Ի գաղափար նիւթոյ հուպ են ըստ իմիք և ծանօթութիւնք ենթակայի և առարկայի։

§ 34 • Ենթակայ, ենթադրեալ (subjectum) • • • Հակադրական, հակադրեալ •

Ենթակայ կոչի ընդհանրապէս այն ինչ՝ որ ենթ և ՚ի ներքոյ այլոց դնի • կամ որ ստանձնէ և վերաբառնայ զայլ ինչ, յորմէ և սա նկատմամբ նորին կոչի՝ մակածական, մակադրական, զի դնի մակ և ՚ի վերայ նորա • ըստ այսմ խորհրդոյն ասի ենթակայ սեան ՚ի վերայ նորա կանգնելոյ • պատուանդանն՝ արձանի • միտքն՝ ենթակայ գիտութեց • կամքն՝ առաքինութեց • մարմինն՝ խօթութեց • ջուրն՝ ջերմութե • ըստ այդմ նմանութե ՚ի քերականութե՝ հիմնական անունն՝ յոր յարին դիմաւոր բայք, խնդիրք, ածականք և այլ սոյնպէս բառք, կոչի ենթակայ • իսկ խնդրեալք և բայք՝ ասին մակածականք • սոյին նմանութբ ՚ի սուրբ գիրս ասի՝ շնչաւոր մարդ ոչ ընդունի զհոգւոյն Աստուծոյ (ոչ լինի ենթակայ)։ Ապա զննեսցեն Ճարտասանք՝

զի թէ առարկայ իւրեանց իցէ ենթակայ, գտցեն զմտածականն. իսկ եթէ իցէ մտածական՝ գտցեն զենթական, և ըստ այնմ ճառեսցեն զայնցանէ առատուք՟։

§ 35. Առարկայ, առարկեալ, առաջարկեալ, (objectum).

Զզինչուի՟ սորա՝ քան զի վերագոյն մեկնեցաք, աստանօր գիտելի առնեմք նախ՝ թէ մի նոյն էակ մարթի այլ և այլ տեսուք՟ լինել նիւթ, ենթակայ, և առարկայ. որ պէս մարմինն՝ է նիւթ՝ որ ընդ հոգւոյ բաղադրէ զմարդ. նոյնն է ենթակայ ցաւոց՝ ջերմուե՟՝ ցրտութեան՝ գեղեցկուե՟. նկատի ևս իբր առարկայ՝ զորմէ ճառեն ախտաբանք և բնախօսք. երկրորդ՝ թէ քերականք զերեսին զդոսա բացայայտեն զանազան հոլովով. զի զնիւթն դնեն բացառականաւ, յորմէ բաղկանայ ինչ. զենթակայն ՚ի ներգոյականն, յորում ընկալեալ լինի մտածականն. իսկ զառարկայն պատմականաւ, զորմէ միտքն խորհի և լեզուն խօսի։

§ 36. Կերպ, կերպացուցիչ, (forma).

Զնուրբ զննուի՟ս սորին թողեալ ընթերցողաց տեսանել առ բնազանցագէտս՝ առ տեղեաւս ասեմք համառօտ, թէ անուամբս կերպ իմանամք նախ՝ զամենայն հանգամանս. որք ըստ ասացելոցս են ամենապարզ և անենթակայ էակուի՟ք. որոց պաշտօն է բաղադրել զէակս, ևս՝ կերպաւորել զնիւթն իւր. երկրորդ՝ զշաղկապուի՟ն կամ զզուգաւորուի՟ մասանց ընդ միմեանս՝ առ ՚ի կերպաւորել զմիուի՟ կամ զմի բոլոր, որ կոչի կերպարան, ձև. իբր արտադրեալ ինչ ՚ի զուգադրուե՟ անտի մասանց նիւթոյն. որպէս կերպ տան կամ աշտարակի՝ ծագեալ ՚ի կապակցուե՟ քարանց և փայտից ընդ իրեարս։ Սեռք և ցեղք կերպից այնչափ են, որչափ և հանգամանաց, ևս և բնական՝ մտաւոր և արհեստական էակաց։ Բաժանին ևս ՚ի պարզս՝ որպիսի են կերպք լուսոյ, ջերմուե՟, ծանրողուե՟, ձգողուե՟. և ՚ի բաղադրեալս, որղէս կերպ գոլուն (զորմէ տեսցուք 'ի վերոյ բաղկանալ 'ի չորից հանգամանաց) և նմանեաց . այլ և 'ի դիպուածականս և 'ի պատահականս ըստ բաժանման հանգամանաց . 'ի պատահականաց համարին են ևս զարդք՝ պաճուճանք՝ և պէսպէս պայմանք՝ յեկեղեցական և յաշխարհական իշխանութէ յաւելեալք 'ի ներգործութիս ինչ , որպէս յամուսնութիս , 'ի դաշինս , 'ի կտակս , յընկերութիս , եւն ։

§ 37 . Յատկութիւն , առանձնութիւն , յատկանիշ , խասը .
(proprietas) .

Զսմանէ չունիմք ինչ յաւելուլ 'ի նախագրեալսն , բայց զայս միայն . թէ ճարտասանք ոչ իմաստասիրական նրբութ՝ այլ ըստ լայնաշուրթն լեզուի իւրեանց յատկուն կոչեն զայն ամենայն հանգամանս՝ որք զայս առարկայ զատուցանեն և բացորոշեն յայլոց գլխոց և իցէ եղանակաւ , կամ որով և իցէ նշանաւ ինչ . ըստ այսմ ասեն նոքա՝ թէ սիրելն զմիմեանս է յատկանիշ աշակերտաց Քրիստոսի . երջանիկ առնել զմարդն է յատկուն առաքինութեց և գիտութեց . սպիտակութին է յատկուն ձեան , եւն ։

§ 38 . Անուն , կոչումն .

Սա թէպէտ պատահական հանգամանք ինչ է յէակս , բայց զի վերածի առ յատկանիշս նոցա , և զի ճարտասանք երբեմն առնուն զայն 'ի խօսել , յայդ սակս 'ի ներքս բերեմք . արդ անուանք էակաց սովորաբար երեք են . սեռական , ցեղական , և անհատական . որպէս զաշոտ ըստ սեռին կոչեմք՝ կենդանի , ըստ ցեղին մարդ , ըստ անհատին՝ աշոտ . նոյնպէս թռչուն , սոխակ , այս սոխակ . ծառ՝ խնձորենի՝ այս խնձորենի , եւն ։ Բաց յայսցանէ մարդիկ առնուն և զանուանս պաշտօնականս , որպիսի են բժիշկ , դատաւոր , քահանայ , կնքահայր , եւն ։ Սակաւուն բառից ամենայն ազգաց և լեզուաց առ 'ի բացատրել ճշդիւ զամենայն էակս և զհանգամանս նոցա՝ առիթ լինի բազմադիմի մոլորութեց 'ի խորհելն և 'ի խօսելն մեր, զորոց զցեղս և զդեղս ուսուցանեն տրամաբանք։ Կարդա՛ առ լամբրոնացւոյն յատենախօսութե՟ն զխորհրդածութի՟ս նորա զանուացս՝ մի կամ երկու բնութե՟ն ասելոյ 'ի Քրիստոս։

§ 39. Գոյութիւն, գոյաւորութիւն, իրականութիւն, գոլութիւն (existentia). անգոյութիւն, չէութիւն, բացառութիւն։

Գոյու՟ն էակին է վիճակն՝ յորում մտածի նա արդէն արտաքս ելեալ յոչնչէ՝ 'ի կարելութէ՟ և 'ի գոյաւորիչ պատճառաց իւրոց․ և արդեամբք եդեալ 'ի շարս բնական կամ արհեստական արարածոց․ վասն որոյ հարկ է ճարտասանին զննելն՝ թէ առարկայ իւր կամ դիմախօսին՝ գոյաւո՞ր ինչ իցէ, եթէ լոկ համարու՟մն՝ վարկած և կեղծիք անգոյ․ վասն զի բազում ինչ գոյաւոր կարծեցեալք առ նախնեօք՝ յետ ժամանակաց ցուցան լինել անգոյ․ որպէս և չգոյ համարեալքն՝ գտան գոյաւոր․ երկրորդ թէ առարկայն՝ զորմէ բանքն իցեն, որո՞վ ինչ և իբրու եղանակաւ ունիցի կամ մարթասցի ունել և չունել զգոյութիւն․ որպէս՝ թէ առաքինութիւնք, մոլութի՟ք, գիտութի՟ք, արհեստք, ընկերութի՟ք, և նմանք, որո՞վ ո՞րպէս ե՞րբ ու՞ր լինիցին գոյաւոր, անգոյ, վաւեր, անվաւեր, հարազատ, խորթ, ճշմարիտ, կեղծեալ, ևն։ Բայց որպէս էակք՝ նոյնպէս և գոյու՟ք նոցա կրկին են, իմանալի և զգալի․ որպէս՝ զգոյու՟ն հրոյ, ջրոյ և այլոց նիւթականաց զգայարանօք անգամ ճանաչեմք․ իսկ զգոյու՟ս հոգւոյ, մտաց, գիտութեց, առաքինութեց և այլոց աննիւթականաց մտօք իմանամք աներկբայ, առեալ փաստս 'ի ներգործութեց նոցա, 'ի կրելութեց, յարարչացն, յենթակայիցն, յեզերաց, և յորոց 'ի կարգի։ Առաջին վարկեանն գոյութ՟ էակին կամ ներգործութ՟, կոչի՝ Սկիզբն, ծագու՟մն, ծնունդ, հաւ, ելք․ վերջին վարկեանն կոչի՝ Վախճան, կատարած, մահ, կորուստ, սպառուած, ապականու՟թ․ իսկ միջին ժամանակն գոլոյ՝ յորում էակն կամ գործն մտածի գոյաւոր կայ ընդ ամենայն հանգամանաց իւրոց, անուանի Վիճակ նորա (status), տեւողութի̅, կեանք, գոլ, հանապազորդութիւն :

§ 40 · Եղանութիւն, ընէլութիւն (fieri) ·

Յետ գոյութե̅ էակաց՝ արժան է քննել զզօրութի̅ս նոցին, որք 'ի հինգ ցեղս հատանին · որք են եղանութի̅, ներգործութի̅, արարչութի̅, արարածութի̅, և կրելութի̅ : Առաջինն բացատրի այնպիսի բայիւք՝ զորս քերականք կոչեն չէզոքս (խոլթ բառ անճոռնի բարդութեամբ հնարեալ 'ի տգիտէ ումեմնէ՝ ըստ յունին ուդէ՛տէրօն · կամ ըստ լատինին՝ նէ՛ուտէր) · և որք ընդհանրապէս յերկուս կարգս զատանին · 1 յայնս՝ յորս ցուցանի լոկ գործողութի̅ ինչ · ոպ̅, ապրիլ, բնակիլ, գթալ, զայրանալ · և 2 յայնս՝ յորս արարած կամ արտադրեալ ինչ ցուցանի, որք դարձեալ 'ի չորս դասս բաժանին · 1 յորս առարկայն եղանի այս ինչ՝ գոյական անուամբ բացատրեալ, ոպ̅, Աստուած մարդացաւ, քաղաքն ծովացաւ · եղանեն լեառնանան · 2 յորս առարկայն լինի այսպիսի ինչ, որակական ածականաւ բացատրեալ · ոպ̅, լուսաւորեցան երեսք նորա, և հանդերձք նորա եղեն սպիտակ · 3 յորս առարկայն եղանի այսչափ և այսքան ինչ, քանակական ածականաւ բացատրեալ · ոպ̅, յերկարեցան աւուրք նորա, մեծացաւ բաժին նորա, ծանրացաւ ձեռն քո · 4 յորս կատարի գործողութի̅ ինչ աներևոյթ բայիւ և բայանուամբ բացատրեալ · ոպ̅, չար ևս պատառումն լինիցի · ասէին որոտումն լինել · անդ եղիցի լալ և կրճել ատամանց · եղև մռանչել աղքատին :

§ 41 · Ներգործութիւն, գործողութիւն (actio) ·

'Ի ներգործական բայից աստի՝ ոմանք լոկ գործողութի̅ ինչ են · ոպ̅, տեսանել, ուտել, պահպանել, զրկել · իսկ ոմանք նա և զպատճառողութի̅ ինչ 'ի ներքս բերեն․ ոմն, նկարել զպատկեր, շինել զտուն․ զորոց ստորեւ։ Սեռք եւ ցեղք գործողութեանց այնչափ են, որչափ եւ գործողաց․ ըստ որոց եւ բաժանին 'ի բնականս, 'ի տարրականս, 'ի տնկականս, յանասնականս, 'ի մտաւորս, 'ի կամաւորս, յարհեստականս, 'ի մարմնականս, 'ի պղալիս, 'ի ճայականս, յանցողականս, եւ յայլ բազումս․ զորս պարտի գտանել ճարտասանն ըստ բնութեան առարկայի իւրոյ, եւ ճառել զայնցանէ պէսպէս եղանակաւ․ զի սոքա են իբրու պտուղք՝ յորոց ճանաչի ծառ էակին․ եւ առատ նիւթ մատակարարեն վերաբանելոյ՝ մանաւանդ պատմագրաց եւ ներբողաբանից․ ըստ որում պատմութիւն է յառաջբերութիւն ներգործութեանց, եւ ներբողն է քարոզ բարեգործութեանց։ Բայց գիտեմ զի քաջք 'ի ճարտասանից՝ ոչ կենդանեաց միայն, այլ եւ անշնչից եւ անզգայ էակաց, մանաւանդ իմանալեաց եւ անենթակայից ընծայեն զգործողութիւնս՝ բանականաց եւ կենդանեաց սեպհականս․ որոց օրինակք կան եւ 'ի սուրբ գիրս․ որպէս այնք, թէ բանն զոր խօսեցայ ընդ ձեզ, նա դատի զձեզ յաւուրն յետնում․ օրէնք տիրեն մարդոյ․ մահն թագաւորեաց․ ցանկութիւն յղացեալ զմեղս ծնանի, եւ մեղքն կատարեալ զմահ ծնանին․ կարդամ եւ առ լամբրոնացւոյն զբանն »բազումս գիտէ փափկութիւն գործել դանդաղութիւնս, եւն․ ըստ որոյ մարթիմք ասել՝ թէ չիք ճառ՝ զորոյ զմեծ մասն ոչ անձանց գրաւեսցեն ներգործութիւնք առարկային։ Որ ոք կամիցի ճանաչել զգլխաւոր ցեղս գործողութեանց եւ պատճառողութեանց, ընթերցցի զցանկն դիմաւոր բայից․ զոր այսու դիտմամբ 'ի մի գումար հաւաքեցաք 'ի քերականութեան, զի դիւր լինիցի ճարտասանից։

§ 42․ Ազդեցութիւն, արարչութիւն, պատճառողութիւն, գործարարութիւն, գոյացուցումն, (causalitas) ․

Բազումք յէակաց ոչ ներգործեն միայն, այլ եւ գոյաւորեն զէակ ինչ, տան այլում զգոյութիւն, եւ արտադրեն զարարած ինչ զգալի կամ իմանալի. որպէս, ծնանիլ զաւակ, բերել պտուղ, կառուցանել զտուն, նկարել զպատկեր, կերպաւորել զճառ, գծագրել զեռանկիւնի, հիմնել զընկերութիւն ինչ. և 'ի սակս այդպիսի զօրութեան իւրեանց կոչին նոքա արարիչ, գոյաւորիչ, պատճառ (իմա՛ պատճառող), ծնող, հեղինակ, արհեստաւոր. դոյնօրինակ ներգործութիւն նոցա կոչի առնելութիւն, արարչութիւն, պատճառողութիւն, գործարարութիւն. իսկ արտադրեալն 'ի նոցունց կոչի գործ, արարած, զորմէ 'ի մօտոյ: Մտաւոր և խոհական պատճառն եթէ կամի ուղղութեամբ և յաջողութեամբ յանկ հանել զգործ իւր, պարտի կանխաւ կազմել զՆախագաղափար նորա, ըստ օրինակի հիւսնապետաց. որք յառաջ քան զշինել զպալատ՝ զյատակաձև նորին գծագրեն 'ի մտի և 'ի թղթի, և զայն ինքեանց օրինակ և առաջնորդ դնելով՝ նմին համաձայնեն զշինուածն. առանց այսր նախապիծ գաղափարի՝ անհնար է բանական մարդոյ գովութեամբ 'ի գլուխ հանել զգործ ինչ իւր:

Բանական արարիչն եթէ յառաջախորհուրդ դիտմամբ ստանալի իրաց ինչ՝ շարժեսցի 'ի գործել, նկատեալն նորա կոչի Նպատակ, Վախճան (finis). այն ինչ՝ որ իբր ըստ պատահման՝ 'ի հեռուստ և որպէս թէ դիւր առնելով շարժէ զարարիչն 'ի գործել, կոչի Առիթ, պատեհ, պատեհութիւն, պարապ (մտթ. իզ. 16. մարկ. զ. 21. ևն). ինչ՝ որ նպաստ և օգնութիւն մատուցանէ պատճառին, կոչի Միջոց, միջնորդ (medium). ինչ՝ որ 'ի կալս թողու զներգործութիւն արարչին, կամ չթողու նմա 'ի կատար ածել զգործն առանց իւր, կոչի՝ Պայման (conditio, զոր յետինք կոչեցին թէութիւն). ինչ՝ որ չթողու պատճառին ստանալ զնպատակն իւր, կոչի՝ արգելք, խափանարար, խոչ, խէթ, խութ, կըճիմն. ինչ՝ որ 'ի բաց բառնայ զարգելս, և տայ ստանալ զնպատակն, կոչի՝ Նպաստ, ճար, ճարակ, դեղ, դարման, հնարք: Պատճառ՝ որ ոչ զօրէ ինքնին 'ի լոյս ածել զազդուութի̅ իւր, այլ կարօտի՝ զի այլք 'ի լոյս ածցեն զայն միջնորդութ̅ նորա, կոչի՝ Գործիք․ որպէս տապարն թէպէտ հատանէ զփայտ, բայց ոչ ինքնին, այլ այլոց կարօտի։

§ 43․ Պատճառն՝ բազմօրինակ բաժանի, և 1 եթէ զօրէ միայնակ արտադրել զգործն, կոչի՝ բաւական կամ բոլորական․ իսկ եթէ կարօտի ընկերութ̅ այլոց՝ կոչի անբաւական․ որ դարձեալ բաժանի 'ի շարակարգս, երբ բազում պատճառք հաւասար զօրութ̅ արտադրեն զգործն․ որպէս բազում երիվարք 'ի ձգել զկառս․ և 'ի ստորակարգս, ուր ստորինն գործէ ընդ ձեռամբ վերնոյն․ որպէս դատաւորն ը̅ թագաւորաւ, կամ մշակք ընդ ձեռամբ հիւսնապետին․ 2 պատճառն կամ հարկաւոր է, որ առանց ազատութ̅ գործէ, որպէս հուրն յայրելն․ կամ ազատական, որպիսի է մարդն․ որ դարձեալ կրկնակի գործէ․ բնապէս՝ որպէս 'ի խորհիլն, 'ի խօսելն, յուտելն․ և բարոյապէս՝ որպէս 'ի յորդորելն զայլս 'ի գործել ինչ, 'ի խրատելն, 'ի համոզելն։ 3 պատճառ ուղղակի, որ կամ բնութ̅ կամ դիտմամբ առ բացորոշ ինչ գործ դիմէ․ և պատճառ անուղղակի, որ դիպուած կամ պատահումն կոչի․ որպէս եթէ 'ի փլանիլ տան՝ քար մի ընդոստուցեալ հարցէ զոք և սպանցէ։

Այլով տեսութ̅ պատճառք կամ գոյացուցիչք բաժանին յութ ցեղս․ որք են․ 1 պատճառ նիւթական, այն է՝ նիւթն, ատաղձն, տարրն, որ ինքնին անձամբ 'ի մէջ արարածոյն մտանելով գոյացուցանէ զնա․ որպիսի են փայտք և քարինք 'ի մէջ տան․ 2 պատճառ ներգործական, ըստ որոյ էակ ինչ ոչ ինքեամբ մասն լինելով՝ այլ լոկով զօրութ̅ կամ ներգործութ̅ իւրով գոյացուցանէ զարարածն․ որպէս արեգակն զպտուղս, դերձիկն զզգեստս, նկարիչն զպատկեր․ 3 պատճառ սկզբնական, սկիզբն (ծորակ, ստինք, աղբիւր, principium) որ տայ զգոյութի̅, կամ որ գոյացուցանէ զէակս և զներգործութի̅ նոցա, որ լինի առաջինն՝ յորմէ սկսանի իր կամ ներգործուի՟ ինչ. որպէս՝ ակն կոչի սկիզբն գետոյն, զի անտի սկսանի հոսումն գետոյն. առաջին կէտն կոչի սկիզբն գծի. առաջին օրն՝ սկիզբն ամսոյ՝ տարւոյ՝ թագաւորուե՟՝ կամ կենաց ուրուք. երկիւղն Աստուծոյ ասի սկիզբն իմաստուե՟ մարդոյ, զի յայնմանէ սկսանի մարդս իմաստնանալ. առաջին քայլն կամ տեղին կոչի սկիզբն ընթացից կամ ճանապարհի. առաջին ճշմարիտ իմաստն կոչի սկիզբն ճանաչելոյ զայլ իմաստս. դովլին մտօք ասեմք՝ սկիզբն խորհելոյ, խօսելոյ, գրելոյ, գործելոյ, կրելոյ, այսինքն առաջինն սոյց ներգործուե՟ց. միով բանիւ՝ այն ինչ կոչի սկիզբն, կամ առաջին և նախընթաց, որում կամ յորմէ այլ ինչ երկրորդ հետևի 'ի սակս կապակցուե՟ նոցա ընդ իրեարս՝ որով և իցէ եղանակաւ. ըստ որոյ և բաժանի յերիս. այսինքն սկիզբն գոյաւորող, գործաւորող, և ծանուցանող. յայդցանէ քաջայայտ տեսանի՝ թէ սկիզբն ը՟հանրագոյն է քան զայլ պատճառս. զի թէպէտ ամ՟ պատճառ՝ է և սկիզբն, այլ ոչ ամենայն սկիզբն՝ է պատճառ ճշդիւ իմացեալ. 4 պատճառ հիմնական, հիմն, խարիսխ, պատուանդան, բուն, արմատ, որ 'ի վերայ իւր բառնայ զայլ ինչ, և տայ նմա զկայումն և զգոլ. 5 պատճառ շարժողական, շարժառիթ (motivum), որ զհոգին մեր շարժէ 'ի ներգործուի՟ս. և ըստ կարողուե՟ց նորա բաժանի յերիս կարգս, որք են. 1 փաստ, աղագ, հաւաստիք (ratio, argumentum). որ է գաղափար զճշմարտուէ՟ էակին, և շարժէ զմիտս 'ի հաւանել, 'ի վճռել, ևն. 2 լուցկիք (incentivus), գաղափար զգեղեցկութենէ և զհեշտածնուէ՟ էակաց, որ շարժէ զսիրտն 'ի զգածիլ բերկրուե՟ և քաղցրուե՟. 3 խթան (elater) գաղափար զբարուէ՟ զօգտակարուէ՟ և զայլոց հանգամանաց էակաց, որ գրգռէ զկամս 'ի գործարարուի՟ : Համբակք մի՛ շփոթեսցեն զսոսա ընդ ճգանաց, որք բնաբոյս և յարատեւ ինչ են 'ի հոգին. իսկ շարժառիթք պատահական և անցաւոր ինչ են, և զնոյն իսկ զճգանս յուզեն և ար ծարծեն. 6 պատճառ որակաւորիչ կամ յեղանակական, որ որակաւորէ զէակս. 7 պատճառ քանակական՝ որ քանակաւորէ զնոսա. 8 պատճառ առնչական՝ որ կապէ և կախէ զնոսա զիրերաց, ևն:

§ 44. Արարածութիւն, ծնելութիւն (procreatio).

Հանգամանք՝ ըստ որոյ էակն մտածի իբր արտադրեալ յարարչական պատճառէ ըստ որում կախեալ զնմանէ 'ի գոյաւորութեան իւրում ճիշդ կամ արձակ մտօք. յորմէ և ինքն կոչի արարած (effectus), ստեղծուած, յօրինուած, ծնեալ, արդիւնք, բերք, արգասիք, պտուղ, գործ, կամ յստակ ևս՝ գործած (զի գործն հոմանիշ է, և յոլով ուրեք զանցաւոր ներգործութիւն նշանակէ, ուր գործածն զմնացական պտուղն ասէ). 'ի սմա ևս հարկ է որոշել զայն ամենայն պարագայս՝ զորս 'ի վերոյ յառաջ բերաք զպատճառողէ, յորմէ ևս առնու արարածն զյարգ և զգին իւր. վասն որոյ պէտք են ճարտասանին քննել և ծանուցանել թէ առարկայ իւր՝ ո՞յր գործած է, ո՞վ է արարիչ նորին, յումմէ՞ արտադրի. որպէս, թէ հոգի մարդոյ յումմէ՞ է, յԱստուծո՞յ թէ 'ի ծնողաց, յումմէ՞ ունի զանմահութիւն՝ յԱստուծո՞յ թէ յիւրն պարզութենէ՞, թէ եկեղեցի՝ թագաւորութիւն՝ օրէնք՝ իրաւունք՝ գիտութիւնք՝ առաքինութիւնք՝ կարգ և այլ այդպիսիք յի՞նչ իրաց՝ յորմէ՞ և ո՞րպէս գոյանան՝ պահպանին՝ աճեն՝ կործանին, ևն: Յայսմ գլխոյ պերճախօսէր Լամբրոնացին յասելն,, Տօնք և աւանդութիւնք 'ի սիրոյ յառաջ եկեալ հաստատեցան, և ոչ թէ սէրն 'ի տօնից. անվայելուչ է ապա զվասն որոյ եղեն սոքա եղծանել՝ առ 'ի զսոսին հաստատուն պահելոյ:

§ 45. Նպատակադիմութիւն, հակումն 'ի վախճան, վախճանութիւն (finalitas).

Յամենայն արարածս Աստուծոյ և մարդկան՝ ոչ միայն մտածելի է՝ յումմէ՞ գոյացեալն լինել նոցա, այլ և թէ առ ինչ նպատակ կամ վախճան գոյացեալ են և կարգեալ յարարչէ իւրեանց. եբր զի մտաւոր պատճառք ոչ արտադրեն ինչ առանց կարգելոյ զնա 'ի բացորոշ ինչ ներգործութի կամ 'ի կրելութի. և դոյն այդյարմարութի և կարգութի գոյութե նոցա առ այլ, կոչի դիմողութի 'ի նպատակ, կամ կարգութի 'ի վախճան. իսկ ներգործութին կամ կրելութին 'ի նոցունց առնելի՝ կոչի վախճան, և ըստ որում է կանխաւ դիտեալ 'ի պատճառէն՝ կոչի Նպատակ (առեալ զնմանութին 'ի նետաձգողաց, որք զնետն ուղղեն 'ի նշանն, Թիրախ կոչեցեալ առ մեզ 'ի պարսկաց). յօրինակի համօր՝ աչք ստեղծեալ են 'ի տեսանել զառարկայս, և պալատն կարգեալ է 'ի լինել բնակարան մարդկան. ուստի որոշելի են 'ի միմեանց՝ պատճառն արարչական, գործած նորա, և նպատակն. որ ըստ եդեալ օրինակացդ է ներգործութի կամ կրելութի ինչ, ոչ արարչական պատճառին՝ այլ գործածոյ նորա, թէպէտ և դիտեալ յարարչէն. և որովհետև սոյն այս նպատակ շարժէ զարարիչն առ 'ի արտադրել զգործածն, յայսմանէ և ինքն կոչի՝ պատճառ վախճանական. այն է շարժող զարարիչն. յորոյ 'ի զանազանութի զարարիչն անուանի պատճառ արարչական ։

Նպատակադիմութի էակաց բաժանի յերիս, 'ի մասնական, 'ի բոլորական, և 'ի տարասեռ. մասնական է՝ ըստ որոյ իւրաքանչիւր ինչ իբր մասն բոլորոյ իրիք կարգի առ գործակցութի միւսոյ մասնակցի իւրոյ. որպէս մասունք ծառոյ՝ արմատ, կեղև, ճիւղ, ծուծ, տերև, ծաղիկ, կարգին առ 'ի նպաստել իրերաց. նոյնպէս անդամք մարդկային մարմնոյ ծառայեն միմեանց. ըստ այդմ և անդամք գերդաստանի՝ քաղաքի՝ եկեղեցւոյ՝ և այլոց նպաստեն իրերաց. բոլորական է՝ ըստ որոյ մասունք կարգին առ պահպանութի բոլորոյ իւրեանց, որպէս մասունք ծառոյ վասն բոլոր ծառոյն, և անդամք մարմնոյ վասն բոլոր մարդոյ. իսկ 'ի տարասեռն նկատի կարգութի նոցա առ այլ ինչ՝ բաց 'ի մասնակցաց և 'ի բոլորոյ նոցին ․ որպէս ծառն կամ մասունք կարգին 'ի կերակուր կենդանեաց կամ յայլ ինչ պէտս մարդոյ ։ Արարիչն կամ գործած նորա երբեմն առ ստանալոյ զնպատակն կարօտին նպաստից այլոյ իրիք երրորդի ․ որպէս աչք ծերոյ՝ ակնոցի առ 'ի տեսանել ․ և սա կոչի՝ միջոց ․ զոր չէ պարտ շփոթել ընդ վախճանի ․ զի թէպէտ վախճան և միջոց անձուկ կապակցեալ են ընդ իրեարս ․ սակայն գաղափար և պաշտօն նոցա ամենևին այլազան են ․ և միում իմիք մարթ է այլով տեսութ̃՝ միջոց, և այլով՝ նպատակ լինել ․ այլ ոչ՝ ըստ նմին բանի ։ Բաժանի և ևս վախճանն յառաջին՝ 'ի միջին և 'ի վերջին, երբ բազումք հետզհետէ շարադասին մին առ միւսն կարգելով, մինչև 'ի հասանել ցվերջինն ․ որպէս առաջին նպատակ մտանելոյ աշակերտի 'ի դպրոց՝ է ուսանել զգիտութ̃ս ․ երբ սոյն կարգի առ այլ ինչ վախճան, որպէս 'ի քահանայութ̃, կոչի միջին ․ և եթէ սա ևս կարգեսցի առ երրորդ իմն, որպէս առ փրկութ̃ հոգւոյ իւրոյ կամ ընկերաց կամ 'ի փառս Աստուծոյ, անուանի վերջին ։ 'Ի սեպհական վախճան իրաց կամ գործոց՝ մարդիկ յաւելուն երբեմն զայլ ինչ երկրորդական ․ որպէս բուն նպատակ ողորմութ̃ է թեթևացուցանել զկարիս աղքատին, յոր սնափառք յաւելուն զգովեստ կամ զպատիւ 'ի մարդկանէ ․ և յայնժամ առաջինն կոչի բնական, իսկ երկրորդն՝ պատահական ․ զոր ոմանք գործոյն և գործողին ասեն ։ Հարկ է ճարտասանից քննել յառարկայ իւրեանց զբան վախճանի և միջոցի, և կազմել անտի իմաստս և փաստս, որք կարի բռնադատիչ են առ ունկնդիրս ․ ըստ այդմ փրկիչն մեր ասէր,, շաբաթ վասն մարդոյ եղև, և ոչ եթէ մարդ վասն շաբաթու ․ ուրեմն մարդն պարտի տէր, և ոչ գերի լինել շաբաթու ․ նոյնպէս և առաքեալն ասէր,, կին վասն առն եղև, և ոչ եթէ այր վասն կնոջ ։ Կարգումն իրաց առ վախճան բացատրի շաղկապօք, վասն, յաղագս, սակս ․ այլ և զանազան հոլովովք անուանց ․ զորոց տես 'ի քերական ․ մերում, յերես 277 ։

§ 46 · Կրելութիւն, Կիրք (passio) ·

Սա որպէս ատայաւ դիմադրէ ներգործութեան, և ընդհանուր է քան զարարածութիւն · զի 'ի ներքս փակէ զամենայն կրաւորական բայս · բաժանի ըստ սեռից և ըստ ցեղից թէ՛ ներգործութեանց թէ՛ պատճառաց և թէ՛ կրող առարկայից · զի ոչ միայն մարդիկ, այլ և անբանք, և աննիւթ էակք 'ի ներքոյ անկեալ կան պէսպէս փոփոխութեանց, և յաջող կամ ձախող այլայլութեանց · զորս մասնաւորապէս կոչեմք՝ անցք՝ արկածք · ըստ որոյ յիմաստնոյն Եւրոպիոյ արդէն պատմագրեալ կան անցք գրեթէ ամենայն գիտութեանց, արհեստից, կրօնից, քաղաքաց, թագաւորութեանց, օրինաց, լրաւանց, և դոցին նմանեաց · և ճարտասանք իսկ պարտական են զկիրս և զանցս առարկայից իւրեանց ըստ տեղւոյն յառաջ բերել պէսպէս խորհրդածութեամբք · զի օգուտ բազում բերէ ունկնդրաց առ 'ի ճանաչել և 'ի սիրել կամ յատել զառարկայն ։

§ 47 · Պարագայ (circumstantia)

Են զանազան եզերք բայից՝ միօրինակ պատշաճեալք հնդից նախընթաց հանգամանաց · նախնիք յեօթն գլուխս ժողովեցին զսոսա, որք են · ո՞վ, զի՞նչ, ո՞ւր, ընդէ՞ր, որո՞վ, ե՞րբ, զիա՞րդ · բայց մեք մանր հետազօտեալ բաժանեսցուք զնոսին 'ի 33 գլուխս, որք են

1 ո՞վ, ցուցանէ զգործողն կամ զենթակայն ամենայն բայից ·
2 զո՞վ · է հայցական խնդրեալն ներգործական բայից, կամ առարկայն ·
3 յումմէ՞ · եզր նիւթող կամ բացառական խնդիր կրաւորական բայից ·
4 զի՞նչ · եզր արտադրեալ կամ ուղղական խնդիր բայից ·
5 որո՞վ, եզր ընկերիչ 'ի գործիական հոլովն ·
6 յորմէ՞, եզր սկզբան 'ի բացառական հոլովն ·

7 առ ո՛վ, եզր դադարման կամ տրական խնդիր ·
8 զումն՛ · առարկեալ եզր բայից 'ի պատմական հոլովն ·
9 ընդէր · եզր պատճառական 'ի զանազան հոլովս ·
10 որո՛յ, եզր յատկացուցող՝ 'ի սեռական հոլովն ·
11 ժամանակ ո՛րքան, եզր ժամակական 'ի հայցական հոլովն ·
12 ժամանակ յորո՛ւմ · եզր 'ի ներգոյական հոլովն ·
13 ժամանակ յորմէհետէ · եզր 'ի բացառական հոլովն ·
14 ժամանակ զորո՛վ · եզր 'ի պարառական հոլովն ·
15 ժամանակ ցո՛ր · որպէս ցամս երիս · մինչև ցկատարած աշխարհի ·
16 տեղի յո՛րմէ · եզր տեղական · 'ի բացառական հոլովն ·
17 տեղի առ ո՛ր · եզր 'ի տրական հոլովն ·
18 տեղի յորո՛ւմ · եզր 'ի ներգոյական հոլովն ·
19 տեղի զորո՛վ · եզր 'ի պարառական հոլովն ·
20 տեղի ընդ ո՛ր · որպէս, յածիլ ընդ ծով, ընդ ցամաք, ընդ լերինս ·
21 քանիցս · անգամ գործողութե՟ց · զորմէ ստորև ·
22 ո՛րպէս · եղանակն ներգործութե՟ց · զորմէ նոյնպէս ստորև ։
23 նմանութիւն · խնդիր բայից նմանական նախադրութեամբք և մակբայիւք ·
24 բաղդատութ՟ · խնդիր բայից բաղդատական նախադրութեամբք և մակբայիւք ·
25 պատճառողութ՟ · խնդիր բայից պատճառական նախադրութեամբք ·
26 առաւելութ՟ · խնդիր առաւելական նախադրութ՟բք և մակբայիւք ·
27 կցորդութ՟ · խնդիր կցորդական նախադրութ՟բք ·
28 բացառութ՟ · խնդիր զատական նախադրութ՟բք և մակբայիւք ·

29 ներհակութեան, խնդիր բայից նախադրութեամբս, դէմ, ընդդէմ, ներհակ, հակառակ. և ներհական մակբայիւք:

30 կարգ ներգործութեանց՝ դասական մակբայիւք բացայայտեալ.

31 գոյութեան և չքութեան ներգործութեանց՝ ստորասական կամ բացասական մակբայիւք նշանակեալ.

32 աստիճան սաստկութեան և թուլութեան ներգործութեանց, զորմէ ստորև.

33 երագութեան և յամրութեան ներգործութեանց, երագական և յամրական մակբայիւք բացատրեալ.

շատ են ծանօթութիւնքդ պարագայիցդ, միայն թէ զօրեսցեն համբակք ըստ արժանւոյն ՚ի կիր առնուլ զնոսին խոհական ընտրութեամբ, զորոց զպէսպէս եղանակս խնդրառութեանց ցուցեալ եմք յառաջին հատորն քերականութեան մերում յայլևայլ տեղիս:

§ 48. Որակութիւն, որպիսութիւն (qualitas).

Սովին հանրական ձայնիւ իմանամք որպէս ասացաք զայնպիսի հանգամանս՝ որք ոչ զօրեն միայնակ անձնաւորիլ, այլ կարօտին յարիլ ՚ի գոյաւոր անհատս, զորս և կացուցանեն՝ այսպիսի կամ այնպիսի. բաժանին յայլ և այլ սեռս և ՚ի ցեղս, որպիսի են. 1 բնականք կամ նիւթականք, որք յամենայն արարածս Աստուծոյ տեսանին. որպէս, գոյն, համ, հոտ, գեղ. 2 մտաւորականք՝ ՚ի միտս բանականաց գոյաւորեալք, իմաստութիւն, գիտութիւն, թիւրութիւն, ուղղութիւն, ուսումն, արհեստ. 3 կամայականք՝ ՚ի բաղձանս մարդկան յիցեալք, բարութիւն, չարութիւն, առաքինութիւնք, մոլութիւնք. 4 ներգործականք, ՚ի խօսս և յայլ գործս մարդկան երևեալք, ճշմարտութիւն, ստութիւն, օրինաւոր, ապօրինաւոր, օգտակար, վնասակար. 5 մարմնականք, ՚ի մարմինս կենդանեաց կամ անշնչից նշմարեալք, առողջութիւն, խօթութիւն, ցրտութիւն, չորութ̃, ձգողութ̃, վանողութ̃. 6 արհեստականք. 'ի պէս պէս ձեռակերտս մարդկան հնարիւք մուծեալք, 'ի շինուածս, 'ի զգեստս. և այլ դոցին նմանք. յորոց զյոլովս թողեալ բնախօսից՝ յառաջ բերցուք աստանօր մասնաւորելով զայնս միայն, զորս առաւել կարևորս դատիմք Ճարտասանից, որպիսի են յետագայք մինչև ցքանակութիւնն.

§ 49. ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ, ԻՍԿՈՒԹԻՒՆ, ՎԱՒԷՐՈՒԹԻՒՆ... ՍՏՈՒԹԻՒՆ, ԽՈՐԹՈՒԹԻՒՆ, ԱՆՎԱՒԷՐՈՒԹԻՒՆ.

Ճշմարիտ լինի և անուանի էակ ինչ՝ եթէ արդեամբք ունիցի զամենայն գոյացական հանգամանս առ էութ̃ իւր կարևորս, և սուտ կամ խորթ՝ եթէ միայն զուրուական ինչ զնոյա ունիցի, այլ ոչ՝ զբուն հանգամանսն իրօք. որպէս արծաթ, ոսկի, ձուկն, հաց և այլ բնական կամ արհեստաշէն էակք՝ եթէ ունիցին զնիւթ զկերպ և զյատկութ̃ իւրեանց՝ լինին Ճշմարիտ. ապա եթէ լոկ զկեղծեալ նմանութ̃ ինչ նոցին ունիցին՝ կոչին սուտ. նոյնպէս ևս գաղափարք իմաստք 'ի միտս, բառք և խօսք 'ի լեզուի՝ եթէ ունիցին զամենայն գոյացական հանգամանս, Ճշմարիտ անուանին, ապա թէ ոչ՝ սուտք. եւ որովհետև մի 'ի գլխաւոր հանգամանաց դոցա համարի Ճիշդ նմանակցութ̃ ընդ սկզբնատպի իւրեանց, իմա՛ էակաց, յայսմանէ սովորութ̃ ընկալեալ է ասել՝ թէ Ճշմարտութ̃ իմաստից և խօսից եդեալ կայ 'ի համաձայնութ̃ նոցա ընդ էակս: Վաւերութ̃ մտածի առաւել 'ի մարդկային ներգործութ̃ս՝ և յարարածս 'ի նոցունց արտադրեալս, որպէս 'ի դաշնագրութիւնս, 'ի խոստմունս, 'ի կտակս, 'ի մուրհակս, և 'ի դոյնպիսիս: Ճշմարտութ̃ յիրս անդ գտեալ՝ կոչի իրական. որ 'ի միտս և յարարածս նորա է՝ անուանի մտաւորական, իսկ որ 'ի լեզուի և 'ի պտուղս նորա՝ կոչի խօսական. զնոյնն իմա՛ և վասն ստութ̃: Քննեսցեն ապա Ճարտասանք յառարկայ իւրեանց զՃշմարտութ̃ կամ զստութ̃ նոցա, զի մի՛ ունկընդիրք խաբեալք յարտաքնայարդար երևութից իրաց՝ զկծիկ մազոյ և զպաճուճապատանս դաւթի ընկալցին իբրև զնոյն ինքն զդաւիթ (ա թագաւորութ. ԺԹ):

§ 50. Ուղղութիւն . . . Թիւրութիւն.

Սոքին են որակութիւնք իրաց և ներգործութեանց՝ առնչութեամբ առ կանոնս նոցա. որոյ՝ որք համաձայնինն ուղիղ կոչին, և որք հակառակինն՝ թիւր և ծուռ անուանին, զօրէն երկայնաձիգ գծի՝ որ ուղիղ կամ թիւր կոչի և լինի, ըստ համաձայնութեան կամ տարաձայնութեան առ քանոնն ուղղաչափ. ըստ այդմ գաղափարութեամբ՝ դատողութիւն և բանականութիւն մտաց, ևս պտուղք նոցա՝ գաղափարք իմաստք և իղձայք՝ ուղիղ ասին՝ եթէ յօրինեսցին ըստ կանոնաց ՚ի տրամաբանութեան աւանդելոց. նոյնպէս և բարբառ մի ուղիղ լինի ՚ի համաձայնիլն կանոնաց նախնեաց ՚ի քերականութեան լեզուիս պարունակելոց. ըստ այդց պարտ է դատել և զայլոց նմանեաց: Յասացելոցդ ինքնին երևի՝ թէ ուղղութիւն և թիւրութիւն նոյն են ընդ կանոնաւորութեան և անկանոնութեան, այլ ոչ նոյնպէս՝ և ընդ ճշմարտութեան. որոց խտիրն ինքնին երևի սրատես մտաց, և վայրապար ոմանք խառնախօսեն զուղիղն ընդ ճշմարտի վարելով. կամ զճշմարիտն ընդ կատարելոյ, յորմէ բազմօք զանազանի. զի ճշմարտութիւն ՚ի գոյութեան էական հանգամանացն հիմնի, իսկ կատարելութիւն ՚ի քանակութեան հանգամանաց միայն. այնպէս՝ զի որ ունի իրօք զամենայն կարևոր հանգամանս՝ լինի և ճշմարիտ և կատարեալ. իսկ որ պակասի միայն յիմիք՝ ոչ լինի սուտ, այլ՝ անկատար եթ. զի սուտն բնաւ չունի ինչ ՚ի հարկաւորացն, այլ լոկ զկեղծ ուրուականն նոցա:

§ 51. Բարութիւն, Բարոյականութիւն . . . Չարութիւն, Տոլութիւն.

Տիրապէս որակութիւնք են սոքին կամաւոր ներգործութեանց մարդկան. որք թէ ամենայնիւ համաձայնին աստուածայրին օրինաց՝ բարի կոչին և առաքինական. ապա եթէ հակառակին՝ զգենուն զչարու՟ն, և անուանին մեղք և մոլու՟ն. զորոց սակաւ ինչ խօսեցեալ է մեր 'ի կրօնագիտու՟ն. անդր առաքեմք զընթերցողս 'ի տեսանել զկարևորս ։

Բայց 'ի սովորական խօսս բաց 'ի ներգործու՟է կամայ՝ նա և նիւթական կամ աննիւթ էակաց ընծայի բարու՟ն կամ չարու՟ն. ըստ որոյ և զառողջու՟ն, զհարստու՟ն և զայլ նմանս բարի կոչեմք. իսկ զներհականս դոցին զաղքատու՟ն, զհիւանդու՟ն և զնոյնպիսիս չար անուանեմք. ուր և ոմանք յորոշել զդոսին յիրերաց՝ զայն որ 'ի կամս՝ կոչեն բարոյական բարու՟ն, որպէս թէ՝ 'ի բարս և 'ի վարս երևեալ. իսկ զայն՝ որ բաց 'ի կամաց յայլ իրս գտանի՝ կոչեն իրական բարու՟ն ։

§ 52. Թէ յի՞նչ հաստատեսցի բարու՟ն և չարու՟ն իրաց, կամ ո՞ր իրք իցեն՝ որ արժանապէս բարիք կամ չարիք կոչիցին, դեռ ոչ միաձայնին իմաստասէրք. վասն որոյ նոցա ապապարեալ զայդ 'ի վճռել, մեք առ տեղեաւս շատանամք սովորական գաղափարաւ ճարտասանից. ո՛յք ըստ ոճոյ իւրեանց բարի կոչեն զայն ինչ՝ որ համաձայն է բնական ճգանց և վերջին վախճանի մարդոյ. որ յագեցուցանէ զբաղձանս հոգւոյ և զկարօտու՟նս մարմնոյ նորա. որ 'ի բաց բառնայ զներկայ չարիս. և որ շատ թէ սակաւ կատարելագործէ զնա և երջանկացուցանէ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. իսկ յանդրադարձ սակի՝ չար անուանեն զայն ինչ՝ որ հակառակի բնական ճգանց՝ բաղձանաց՝ և վերջին վախճանի մարդոյ, որ վնասէ և թշուառացուցանէ զնա ներքուստ կամ արտաքուստ. կամ որ զրկէ 'ի ներկայ բարւոյ. զայդ եդեալ՝ զբարիս կամ զչարիս բաժանեմք 'ի յետագայ ցեղսդ. որք են 1 ծայրագոյն ամենակատար բարի և աղբիւր ամենայն բարու՟էց Աստուած. մի միայն կէտ նպատակի ամենայն երջանկու՟է մերոյ. 2 գերբնական և երկնային բարիք, հայրական նպաստք և պարգևք Աստուծոյ, հան րական ձայնիւ՝ շնորհք անուանեալք. 3 մտաւոր բարիք, գիտութիւն, իմաստութիւն, ճշմարտութիւն, արհեստք, և այլ կատարելութիւնք առ միտս վերաբերեալք. որոց դիմադրին տգիտութիւն, յիմարութիւն, մոլորութիւն, զառանցանք, ցնորք, բանդագուշանք, և այլ բնական կամ բարոյական չարիք 'ի միտս. 4 կամաւոր կամ համեստ բարիք, ազգի ազգի առաքինութիւնք և բարեգործութիւնք, սրբութիւն, պատուիրանապահութիւն, և այլ գովանի լաւութիւնք աստուածասէր կրօնի և կամաց սեպհականք, որոց հակադրին բազմադիմի մոլութիւնք և մեղք, անօրէնութիւնք, և այլ կամաւոր անհամեստ չարիք. 5 մարմնական բարիք կամ չարիք, անմիջապէս 'ի մարմնի մերում ենթակայացեալք, կեանք և մահ, առողջութիւն և խօթութիւն, ամբողջութիւն անդամոց և խեղութիւն, գեղեցկութիւն կամ տգեղութիւն, օրինաւոր հեշտութիւնք զգայարանաց, թեթևութիւն և նազ շարժուածոց, և դոցին նմանք կամ ներհականք. 6 կենսական կամ հարկաւոր բարիք՝ առ պահպանութիւն կենաց կարգեալք, կերակուր, ըմպելի, օդ, զգեստ, բնակարան, քուն, հանգիստ, ևն. առանց որոց չէ մարթ կեալ կենդանի. 7 գերդաստանական բարիք, ամուսնակից, ուստերք, դստերք, սպասաւորք, կահք և կարասիք տան, ոսկի, արծաթ, հարստութիւն, կալուածք, զարդարանք, և ամենայն ինչ առ ընտանեկան կեանս պատշաճեալք. յորոց որ զրկեալն են՝ չարաբաղդ զանձինս համարին. 8 քաղաքական բարիք, ազգ ազգ պաշտօնակալութեանց, վիճակք կենաց, աստիճանք պաշտամանց, ազնուութիւն, ասպետութիւն, տիտղոսք, պատուանշանք, պատիւ, փառք, համբաւ, բարեկամք, նմանեօք և ներհականօք հանդերձ. նախընթացն և սա կոչին բարիք բաղդի. 9 արհեստական բարիք, բիւրազգի ճարտարութիւնք 'ի մարդկանէ հնարեալք. և անբաւ ձեռակերտք 'ի հեշտութիւն կենաց մարդկան. 10 բնական բարիք, ամենայն արարածք Աստուծոյ 'ի պէտս մարդոյ կարգեալք՝ անհամար շահեկանութիւնք իւրեանց. (նախընթաց ցեղք բարեաց 'ի 5 Թուոյ մինչև ցօա՝ միով հատորակ անուամբ կոչին՝ օգտակար կամ բերկրական բարիք, իսկ հակառակք նոյին անուանին՝ վնասակար և դառնացուցիչ չարիք)․ Ա հանդերձեալ բարիք, զորս յուսամք յետ աստի կենաց ժառանգել յերկինս։ Սոքին են գլխաւոր սեռք և ցեղք բարեաց, աստիճանաւ յարգիւ և գնով 'ի միմեանց զանազանեալք․ զորս և մարդիկ ուրեք երբեք անարժան կիրառու̃ք փոխեն 'ի վնաս հոգւոյ և մարմնոյ իւրեանց։

§ 53․ Սեպհական կնիք և յատկանիշ բարեաց և չարեաց՝ է լինել կամաշարժ, կամ զրգռել զկամս և զսիրտ մարդոյ յայլևայլ բաղձանս․ զի բարիք պէսպէս երևութիւ իւրեանց ածեն 'ի հոգին զայլևայլ տարփանս․ ըստ այսմ յորժամ յանդիման լինի մեզ բարի ինչ՝ մերով զօրու̃ք յապյն ստանալի, ծնանի 'ի սրտի մերում կիրս․ երբ արդեամբք ստացեալ և վայելեալ լինի՝ ծնանի զխնդութիւն և զուրախու̃․ յայլ նուագ գրգռէ զսէր, զնախանձ, զզարմանս․ նոյնպէս և չարիք երևելով կամ վերահասու̃ք իւրեանց ծնանին զատելու̃, զերկիւղ, զբարկու̃, զտրտմու̃, որպէս ասացի առաջև։

Բարու̃ և չարու̃ առարկայից՝ անսպառ շտեմարանք են, յորոց ճարտասանք առնուն դրեթէ զամենայն նիւթ իմաստաբանութեց և բանախօսութեց իւրեանց․ զի որովհետև ճիշդ համոզական ճառք միշտ զգործելեօք յածին, և 'ի գործելիս գլխաւոր հանգամանք՝ բարու̃ նոցա է կամ չարու̃, յայն սակս ճգնին ճարտասանք յայսց աղբերաց առնուլ զյոլովագոյն շարժառիթս 'ի հաւատս բանից իւրեանց։

§ 54․ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆ, ԼԱՒՈՒԹԻՒՆ, ԱՄԲՈՂՋՈՒԹԻՒՆ․․․ ԱՆԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ, ՎԱՏՈՒԹԻՒՆ, ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆ․

Կատար կոչէ բարբառ մեր զվերջին ծագ լերանց՝ աշտարակաց՝ և այլոց վերամբարձ շինուածոց, ուր աւարտի յետին մասն նոյին, և անդ համարին լրացեալ ամենայն սարօք. նովին ոճով և գործոց ասէ՝ ՚ի կատար ածել, յանգ հանել. ապա այդու մտօք 1 նիւթական էակք, որպէս՝ ոսկի, արծաթ, կատարեալ կոչին, եթէ անպակաս ունին զամենայն գոյացական հանգամանս, եթէ ՚ի մէջ հանգամանաց գուցէ համաձայնութիւն և բաղադրութի̅, և եթէ ժամանեալ իցեն յայն չափ բնական խմորման՝ զոր բնութի̅ նոցա պահանջէ. նոյնպէս միրգք և պտուղք կատարեալ համարին՝ եթէ ժամանեալ իցեն ՚ի չափն հասունութեան սահմանեալ ՚ի բնութէ. 2 արհեստաշէն էակք որովհետև միշտ վասն պիտոյից ինչ յօրինին, համարին կատարուն, եթէ բաւական լինիցին տալ ստանալ մեզ զնպատակն՝ յոր կարգեցան. ըստ այսմ նուագարանք, կշիռք, անօթք, և այլ կահք և կարասիք՝ կատարեալ ասին, եթէ անսայթաք գան ՚ի պէտս և աջողակ լինին զպաշտամունս իւրեանց. ժամացոյցն համարի կատարեալ, եթէ ամենայն մասունքն քաջարհեստ ոլորեալք՝ անսխալ ցուցանեն զժամանակ և զմասունս նորա. մատեանն ասի կատարելագիր՝ եթէ ուղղութ̅ ուսուցանէ զգիտութի̅ն, զոր ՚ի ճակատին ձայնել խոստանայ. 3 աննիւթ էակք, որակութիւնք, քանակութիւնք, ներգործութիւնք, առաքինութիւնք, արհեստք, գիտութիւնք, ուսմունք, պաշտամունք, նմանեօք հանդերձ, կատարեալ համարին՝ երբ վերաթևեն ՚ի յետին չափն և յաստիճանն սատկուն՝ սահմանեալ վ̅ն նոցա յԱ̅Յ կամ ՚ի մարդկանէ, յորմէ որչափ հեռանան՝ այնչափ համարին անկատար. գոցէ ապա ճարտասանն յառարկայի իւրում զայս հանգամանս, և առցէ ՚ի խոր հրդածել պէսպէս վերաբանու̅թք։

§ 55. Գեղ, Գեղեցկութիւն, Տգեղութիւն (pulchritudo).

Թէ զինչ իցէ գեղեցկութի̅՝ յաւէտ աչօք մարթ է ճանաչել և զգալ, քան բանիւ սահմանել. վասն որոյ առաքեմք զընթերցողս տեսանել ՚ի բուն մատեանս գեղագիտութ՟ (Aesthetica) գերմանացւոց և գաղղիացւոց, որք և դեռ չեն միաձայն ՚ի ծանօթութ՟ և ՚ի բացատրութ՟ նորին․ իսկ մեզ շատ լիցի նշանակել աստանօր՝ թէ գեղեցկութիւն առարկայից, կամ գեղեցիկ էակք լայնաբար առեալ բաժանին յութ դասս․ որք են․ 1 հոգեկանք, կամ հոգիք արդարոց և սրբոց՝ աստուածային շնորհօք զարդարելոց․ 2 մտաւորականք, ՚ի դատողութ՟՝ յիմաստս՝ և ՚ի հրաշալի գիւտս վսեմախոհ մտաց արժանացօղ հեղինակաց երևելեաց, մանաւանդ յաստուածաշունչ գիրս, ՚ի շարականս մեր, և առ այլ նախնիս։ 3 կամայականք, գերաբուն առաքինութ՟իք և բարերարութ՟իք աստուածամերձ անձանց․ 4 խօսականք, ՚ի քաղցրանուագ յօրինուածս գերազանց բանաստեղծից և ճարտասանից զանազան ազգաց նշմարեալք․ 5 գործականք, հսկայազօր մեծագործութ՟իք երևելի դիւցազանց, կենցաղօգուտ հայրենասիրաց, և մեծամեծարար ազգասիրաց․ 6 բնականք, արարածք ամենագեղեցկին Աստուծոյ, լուսաճաճանչ աստեղալից երկինք, գեղածիծաղ արշալոյս, ջուարճալի ծիածան, ծաղկազուարճ դալարագեղ բլուրք դաշտք և մարգագետինք, երփներանգ ծաղիկք, թռչունք, և կենդանիք․ 7 արհեստականք, ափշեցուցիչ պատկերք, նկարք, արձանք, պալատք,, մեքենայք, գործիք, զարդք, և այլ ձեռակերտք հռչակաւոր արհեստաւորաց․ 8 մարմնականք, գեղանկար դէմք, ներդաշնակաւոր ձայնք, երգք, երաժշտութ՟իք, կաքաւմունք, պարանցիկք, նազ և շարժուածք անձին և անդամոց։ Ընդ սովաւ իմացեալ լինի և չքնաղութ՟ին (venustas)․ զորմէ նոյնպէս հարցեն ընթերցողք զգեղադէտ մատեանս։

§ 56 · Վսեմութիւն (sublimitas), Մեծութիւն . . . փոքրութիւն, նուաստութիւն ·]

Յատկութի է սա ոմանց զգալի կամ իմանալի էակաց, այնուիկ տարբերեալ 'ի գեղեցկութէ, զի սա առ որակութին՝ իսկ վսեմութին առ քանակութին նոյին վերածի· զորոյ զլիակատար ծանօթութին թողեալ գեղագիտական դրոց՝ առ տեղեաւս շատասցուք ասել, թէ վսեմութին է այն յատկութի ոմանց էակաց, որք չափազանց մեծութբ՝ սաստկութբ՝ բարձրութբ՝ վեհափառութբ և ընդարձակութբ իւրեանց՝ հետս և կնիքս ինչ անսահմանութե և անչափութե յինքեանս վերբերեն, և այնուիկ լնուն զհոգի զննողին լիապատար բերկրութբք և քաղցրախորժ հեշտութբք, կամ երկիւղիւ և ապշութբ· որպիսի են 'ի համար օրինակի՝ անպարագրելի ընդարձակութի երկնից և ովկիանոս ծովու, բոցագոյն փայլատակմունք, հրայան շանթք և կայծակունք, կատաղի ահեղագոչ որոտմունք, բռնաշունչ փոթորկեալ մրրիկք, սոսափիւն և վարհաւրանք անապատ վայրաց, հրաբուղխք լերանց, լեռնակարկառ դէզադէզ կոհակք խռովայոյզ ալեկոծութեց, և սոցին նմանք։ Միջակային աստիճան վսեմութե՝ կոչի մեծութի, իսկ ստորինն՝ փոքրութի· որք առ հասարակ բաժանին յիրականս, որպէս յիշատակեալքդ· և 'ի մտաւորականս, այն է՝ յիմաստս, 'ի դատողութիւս և յիդէայս վսեմախոհ գիտնականաց երևեալք։

§ 57 · Բերկրարարութիւն, Հեշտածնութիւն . . . . դառնաբարութիւն, ժանտահամութիւն ·

Ասել ունիմք 'ի յետագայդ թէ 'ի հոգիս մարդկան տնկեալ կան ընդաբոյս ձգանք, որք դիմեն 'ի բնաւորական առարկայս իւրեանց· և 'ի սոսա գոն այնպիսի որակութիւնք ներքինք՝ որ ինքնին կամ զբերկրութի կամ զդառնութի պատճառեն 'ի հոգին· և ահա զայսպիսի ընդաբոյս զօրութիս էակաց կոչեմք աստանօր բերկրարարութիւնս և դառնաբերութիւնս, զորս չէ պարտ շփոթել ընդ բերկրութեան կամ դառնութեան · զի սոքա 'ի սիրտս մարդկան են, իսկ նոքա յարտաքին էակս կամ յառարկայս · որպէս բարեգործութիւնք և գիտութիւնք ինքեամբք զհեշտութիւն ծնանին 'ի սիրտս մեր, իսկ տգիտութիւն և մեղանչութիւն՝ զդժոխային դառնութիւն առթեն ամենեցուն · վասն որոյ նոքա կոչին՝ բերկրարար կամ հեշտածին բարիք · իսկ սոքա՝ դառնաբերք և լեղուահամք ։

§ 58 · Օգտակարութիւն, շահաւէտութիւն . . . Վնասակարութիւն, վնաս ։

Ամենայն ինչ՝ որ ոչ ինքնին և ինքեամբ, որպէս նախընթաց բերկրարար բարիք, այլ լոկ գործիք և միջոց լինելով յագուրդ տան բնական ճղանաց, կամ զուգընթաց լինին առ ստացումն բերկրութեան, կոչին՝ օգտակար · որոց դիմադրեալքն ասին վնասակար, զի խափան լինին հեշտութեան · որպէս՝ ոսկի, արծաթ, դեղք՝ վարին իբր միջոցք բերկրութեան, յայն սակս օգտակար համարին · իսկ աղքատութիւն, հիւանդութիւն, տգիտութիւն՝ լինին գործիք դառնութեան · վասն որոյ ասին վնասաբեր · զի բերկրութիւն օգուտ համարի, և դառնութիւն վնաս · և արարածք Աստուծոյ կամ մարդկան՝ երբեմն իբր նպատակ ծառայեն մեզ, և այլ երբեմն՝ իբր գործիք միայն · և ըստ զանազան հայեցուածոց՝ այլևայլ թելս բանից դնեն 'ի միտս և 'ի բերանս ճարտասանից առ իմաստաբանել ։ Շահն և վնասն կա՛մ նկատին իբր հասարակաց և ամենայն բազմութեան պատշաճեալ, որպէս՝ 'ի քաղաքի, 'ի թագաւորութեան, 'ի տան · կա՛մ իբր մասնաւորաց միայն և անհատից · դարձեալ ըստ ժամանակին և ըստ տեղւոյն կամ իբր ներկայ և կամ իբր ապառնի · և որովհետև մարդիկ բնապէս անձնասէր են, և 'ի ներկայ և յանձնական օգտէ կամ 'ի վնասուէ առաւել շարժին քան յապագայէն և 'ի հասարակացն, վասն այն պերճախօսն զընդհանուրն մասնաւորեսցէ, և զապառնին իբր մօտ և տռ դուրճ բերցէ, զի առաւել ազդու լինիցին բանք նորա ։

§ 59. Գին, յարգ, արժէք, արժանիք... անարգութիւն, անարժանութիւն (valor).

Ներքին յարգ իրաց՝ չափի նախ ՚ի պատուականութէ ՚ի գերազանցութէ՝ և յազնուութէ նիւթոյ և կերպի նոցա. և երկրորդ ՚ի շահաբերութէ նոցա. ըստ այսմ գոհար ակն թանկագին է քան զքարաժայռ՝ վասն նիւթոյն. նուրբ գործած ինչ հնդկաց կամ անգղիոյ մեծայարգ է քան զհասարակ գործած ՚ի նոյն նիւթոյ՝ վասն կերպաւորութեն. նկար ինչ հռչակաւոր պատկերահանի՝ յանչափս թանկագին է վասն սքանչելի յօրինուածոյ կերպին. մեքենայք՝ գործիք և կազմուածք՝ որք առաւել օգուտ բերեն, մեծագին վաճառին քան զայլս. գիտութի՝ իմաստութի՝ լուսաւորութի մտաց՝ բարեգործութի և առաքինութի՝ անհամեմատ առաւելութբ գերազանց և արժանայարգ են քան զկորստական բարիս՝ թէ՛ վասն ազնուութե և թէ՛ վասն ամենաշահ օգտակարութե իւրեանց. անձինք՝ որք ծառայեն և օգուտ տան բոլոր ազգի և եկեղեցւոյ կամ տէրութե՝ առաւել պատուելի և վարձատրելի են քան զնոսա, որք սակաւ կամ ոչինչ օգուտ բերեն. նոյնպէս և ամենայն ինչ՝ որոյ մեծ և առաւել է օգուտն՝ նախադասելի է քան զսակաւաշահն ։ Իսկ արտաքին յարգ և գին իրաց՝ է դատողութիւնն մարդկան զներքին արժէից. որ յոլովակի ոչ հաւասարի ներքնոյն, այլ սխալէ ՚ի գնահատութե կամ չափազանցութբ կամ պակասաչափութբ. վասն զի որովհետև ոմանք ՚ի մարդկանէ անկարգ անձնասիրութբ մոլեալք զառանձնական օգուտն յառաջադաս առնեն քան զհասարակացն, յայդ սակս և ՚ի հատանելն զգինս իրաց կամ ՚ի դատելն զարժանեաց մարդկան՝ չարաչար մեղանչեն օգտածարաւ ագահութբ և առանձնախնդիր շահասիրութբ. ապա հարկ լինի Ճարտասանից՝ ուսուցանել սղղախեաց, արդար գին հատանել կամ ճանաչել զյարգ իրաց և անձանց, առ 'ի չխաբել ինքեանց կամ այլոց։

§ 60. Արդիւնք, արգասիք, վարձք, թոշակ, արժանիք (meritum).

Խտիր սորին 'ի նախընթացէն յայտ է. զի յարգն է չափ արժանաւորութեան գոյացութեան իրաց կամ օգտի նոցա. իսկ արդիւնքն է չափ արժանեաց՝ մարդկային գործողութեանց կամ կրելեաց. ընդ յարգ գոյացութեան կամ շահուն չափի; իսկ ըստ յարգ ներգործութեանց կշռի և գնահատի. և որպէս գինն է հատուցումն արժէից 'ի փոխադրելն զիրս 'ի վաճառողէն 'ի գնողն, նոյնպէս և վարձն կամ թոշակն է հատուցումն արժէից օրինաւոր ներգործութեանց՝ արարելոց յօգուտ վարձատրողին. որպէս և տուգանք, տոյժ, և պատիժ՝ են հատուցմունք արժէից ներգործութեանց՝ հակառակ հրամանաց օրէնսդրաց արարելոց. այս ծանօթութիւնք 'ի պէտս գան ճարտասանից յոլով ուրեք 'ի նիւթ ճոխաբանութեան, մանաւանդ առ 'ի քարոզել զարդիւնս մեծագործութեանց հայրենասէր և ազգասէր անձանց, և 'ի ցուցանել զչափ՝ զգին և զաստիճան օգտակարութեան նոցա առ 'ի յորդորել զունկնդիրս։

§ 61. Օրինաւորութիւն, կանոնաւորութիւն . . . անօրէնութիւն, անկանոնութիւն.

Սոքին են որակութիւնք մարդկային ներգործութեանց և կրելեաց, ներքնոց և արտաքնոց, որք միշտ կապեալ են ընդ օրինաց լինել և կանոնաց. զորոց ասեմք համառօտ՝ թէ օրէնք են վճիռք՝ վասն գործողութեանց հպատակաց սահմանեալք յԱստուծոյ, յեկեղեցական և 'ի քաղաքական իշխանութենէ, և յայլոց մեծաւորաց. որք ուսուցանեն և հրամայեն զոր և զորպէսն ներգործութեանց, և դնեն կապանս և պարտաւորութիւն 'ի վերայ հպատակաց. որք թէ լինին զայնս՝ վարձուց, իսկ թէ հակառակ այնց գործեն՝ պատժոց լինին արժանի․ վասն որոյ երբ առարկայ Ճարտասանին իցէ ներգործութիւն ինչ եղեալ, քննեսցէ զօրինաւոր կամ զանօրէնն լինել նորին, և ըստ այնմ առցէ յիմաստաբանել․ ապա թէ իցէ ներգործութիւն ինչ յապայն դնելի, որպէս ամուսնութիւն, դաշնադրութիւն, զղջումն, ուսումն, ևն, ցուցցէ ունկնդրաց զեղանակն ըստ օրինաց կատարելոյ զայնս, զհարկն և զվարձն օրինապահութեան, զվնաս օրինազանցութեան, այլովք հանդերձ։ Խտիրն ընդ մէջ օրինաց և կանոնաց այն է, զի օրէնք սովորակի զաստուածայնոց և զբնականաց ասին, անփոփոխելի են, հարկաւորք և մշտնջենաւորք․ որպէս օրէնք տեսչութեան և վարչութեան աշխարհի և բնական իրաց, ծնընդեան, սննդեան, շարժման, ապականութեան․ այլ և օրէնք բարեգործութեանց կամաց և ներգործութեանց մտաց, խորհելոյ, դատելոյ, վճռելոյ և դոցին նմանք․ իսկ կանոնն յաւէտ զմարդկային սահմանադրութիւն ասէ, որ տնօրինելի է նոյնպէս ’ի կանոնադրէն, որպիսի են կանոնք եկեղեցականք, քերականականք, արհեստականք։

§ 62․ Կարգ, կարգաւորութիւն . . . անկարգութիւն (ordo)․

Կրկնակի նկատի սա, ըստ տեղւոյ և ըստ ժամանակի։ Տեղական կարգն է շարուած անձանց կամ իրաց, զորս հուպ իրերաց կամ ’ի վերայ միմեանց զետեղէ արհեստաւորն՝ ’ի պատճառս նմանութեան ինչ նոցա ընդ իրեարս, առ ’ի խորշել ’ի շփոթութենէ և ’ի խառնակութենէ, կամ առ ’ի մուծանել ’ի նոսա զկերպ և զգեղեցկութիւն․ որպէս զօրապետն շարադասէ զզօրս ’ի ճակատու կարգաւ, հիմն դնելով այնմ զնմանութիւն կամ հասակի կամ զգեստու կամ նշանի նոցա․ պարտիզպանն տնկէ զծառս կարգաւ՝ առ կերպաւորելոյ զձև ինչ․ գրավաճառն շարէ զմատեանս՝ հիմն դնելով կարգի իւրոյ զնմանութիւն մեծութեան կամ նիւթոյ նոցա․ և հիւսնապետն դասէ զմասունս և զյարկս տան կարգաւ ինչ ըստ նպատակի բնակողացն․ ցեղք տեղական կարգի երեք են․ 1 երկրաչարած կամ գետնատարած (horizontal) , ուր հուպ իրերայ շարին անհատքն , որպէս զօրք կամ ծառք ․ 2 երկրակոխ կամ ոտնակաց և վերամբարձ (perpendicularis), ուր 'ի վերայ միմեանց շարին անհատքն , որպէս մատունք կամ աստիճանք սանդխոյ ․ 3 խառն յերկոցունցդ , որպէս քարինք որմոյ կամ յարկք տան ։ Կարգըն ժամանակական որ և ներգործական՝ է շղթայաշար հետևողութիւն կամ յառաջատութիւն գործողութեանց և կրելութեանց՝ յընթացս ժամանակի ․ յորոց երկրորդն այնպէս պարտի յաջորդել առաջնոյն , զի 'ի միջի նոցա դիցի համեմատութիւն , յարմարութիւն , վայելչութիւն , ուղղութիւն , քաղցրութիւն , և գեղեցկութիւն , և սոսկեալ լիցի նպատակն՝ յոր կարգեալն են ․ ըստ այսմ հնչմունք երաժշտական նուագարանաց կարգաւ ինչ ունին յաջորդել իրերայ՝ զի ծագեսցի ներդաշնակութիւն ․ նոյնպէս քայլաչափք կաքաւողաց և ձայնք տաղասացից և երգեցողաց պահեն զկարգ ինչ ։

Յօր և իցէ դասակարգութիւնս՝ հարկաւ նկատելի են , կարգեալ կամ կարգելի մասանցն շարունակութիւն և միջահատութիւն , միապաղաղութիւն կամ խառնատութիւն , կապակցութիւն կամ անկապութիւն , ուղղաձիգ կորաձիգ կամ անկիւնաւոր գծաձգութիւն , նախընթացութիւն և հետևութիւն , նմանութիւն և աննմանութիւն զոյգ ընդ հիմանց նոցա , համօրինակութիւն կամ հակորակութիւն , նոյնաչափութիւն կամ այլաչափութիւն , սկիզբն՝ մէջ և աւարտ , վերին՝ միջին և ներքին , ամբողջութիւն կամ անվթարութիւն բոլորոյն , այլովք հանդերձ ։

Պերճախօսք առաւելապէս ճառեն զկարգաց մտաւոր՝ կամաւոր և կենցաղական գործոյ մարդկան , որպիսի են կարգ արտաքին աստուածպաշտութեան և կրօնի յաղօթս 'ի տօնս և յայլ արարողութիւնս և յանձինս եկեղեցւոյ ․ կարգ ուսուցանելոյ և ուսանելոյ զգիտութիւնս ․ կարգ խորհելոյ՝ դատելոյ՝ գրելոյ՝ ճառելոյ ․ կարգ վարելոյ զթագաւորութիւն , զեկեղեցի , զնահանգ , զդերդաստան ․ կարգ կենցաղելոյ ընդ մեծամեծս՝ ընդ հաւասարս՝ ընդ փոքունս, և այլ անհամարք. զորս՝ ոյք պահպանեն՝ պատուոյ գովեստի և վարձուց արժանանան իբրու անձինք բարեկարգք. իսկ որ անարգեն՝ պարսաւին վասն անկարգութեան իւրեանց։

§ 63. Իրաւացութիւն, իրաւունք, արդարութիւն... անիրաւութիւն, անարդարութիւն, զրկողութիւն.

Որակութիւնք են սոքա առաւելապէս արտաքին և առնչական գործողութեանց մարդկան յընկերական կենաց, որպէս 'ի գերդաստանի, 'ի քաղաքի, 'ի տէրութեան, յեկեղեցւոջ, 'ի վաճառաշահութեան, և 'ի նոյնպիսիս. յորս յոլովակի լինի պահել կամ ոչ պահել զարդարութիւն, մեղանչել ընդդէմ իրաւանց իւրոց կամ ընկերաց, զրկել, հարստահարել, յորոց ծագեն պարտք հատուցանելոյ զօտարինն, այլովք հանդերձ։ Զընդարձակ տեղեկութիւնս սոցին աւանդեն օրէնսդէտք և իրաւագէտք, առ որս տեսցեն՝ որ կարօտինն։

§ 64. Հարկ, հարկաւորութիւն... ազատութիւն, անհարկութիւն.

Ասացաւ 'ի վերոյ՝ թէ հանգամանք գոյացաբար պահանջեալք առ կերպաւորութիւն էակին, կամ անշուշտ նմա հետևեալք, կոչին հարկաւոր. և պահանջումն այդպիսի՝ կոչի հարկաւորութիւն. և քանզի յոլով են ցեղք հանգամանաց՝ յայնմանէ և բազմանան ցեղք հարկաւորութեան. որպէս են հանգամանք հարկաւորք էակի իմիք առ 'ի գոյանալ, առ 'ի գործել, առ 'ի կրել, առ 'ի յորականալ այսպիսի, առ 'ի քանականալ այսչափ, առ յառնչակցիլ ընդ այլում, ևն։ Սակայն ճարտասանք լայնաբար խօսելով հարկաւոր կոչեն, 1 զօրէնս և ըզհրամանս Աստուծոյ և մեծաւորաց, յայս միտս ասի „հարկ է հնազանդ լինել իշխանութեան. 2 զայն ինչ՝ որ էական հանգամանք է իրաց, կամ որ ըստ անփոփոխելի օրինաց և կարգի բնութեան՝ ունի արդեամբք 'ի գլուխ ելանել, յոր միտս ասի ,,Հարկ է մարդոյ լինել բանական... Հարկ է գալ գայթագղութեանց. 3 զայն ինչ՝ որ անտնօրինելի պտուղ կամ հետևանք է 'ի նախընթացից՝, կամ գործ 'ի հզօր պատճառայ, ըստ այսմ՝ ասեմք,, առաքինին և իմաստունն հարկաւ է երջանիկ... անմիաբանութիւն հարկաւ կործանէ զթագաւորութիւն. 4 զայն ինչ՝ որ համաձայն է ուղիղ բանականութեան՝ արդարութեան՝ իրաւանց՝ օրինաց՝ գովանի կարգաց և սովորութեանց. ըստ այդոցիկ ասի,, ո՞չ էր պարտ և քեզ ողորմիլ ծառայակցին քում, որպէս ես քեզ ողորմեցայ. 5 զայն ինչ՝ որում պարտապան եմք 'ի պաշտամանէ՝ 'ի խոստմանէ՝ յուխտադրութենէ՝ յերդմանէ՝ 'ի դաշնադրութենէ և յոր և իցէ յանբռնադատ յանձնառութենէ, յոր միտս ասեմք,, Հարկ է հովուի խնամել զհօտ իւր. 6 զայն ինչ՝ որ միջոց՝ գործիք կամ պայման է առ ստացութիւն նպատակի իրիք. ըստ այդմ ասի,, պարտ է ձեզ վերստին ծնանիլ. 7 զայն ինչ՝ որ լոկ դիւրայուցիչ և օգտակար է առ ստացութիւն այլոյ իրիք. զոր առանձինն կոչեմք, պէտք, պիտոյութիւն, պիտանութիւն. դոյին մտօք ասեմք,, Ճոխութիւնք հարկաւոր են առ երջանկութիւն կամ առ իմաստասիրութիւն. Եւն: Ընդ սովին պարունակի նա և

§ 65. Պարտք, պարտիք, պարտաւորութիւն... անպարտութիւն, ազատութիւն.

Որ է ցեղ հարկի՝ որ զօրէն շղթայից և կապանաց պրկէ զկամս և զազատ ներգործութիւն նորա առ 'ի գործել կամ 'ի չգործել ինչ. յորմէ և պարտաւորեալ ներգործութիւնք մեր կոչին՝ Պաշտօն, պաշտամունք. զորոյ քան զի սակաւ ինչ խօսեցեալ եմք 'ի կրօնագիտութեան, աստանօր շատանամք նշանակել, թէ պարտք բառնին 'ի մեր վերայ նախ՝ յԱստուծոյ, որ սրբազան օրինօքն կապէ զանկարգ ազատութիւն մեր. երկրորդ՝ յեկեղեցական և յաշխարհական մեծաւորաց, որք ունին յԱստուծոյ իշխանութիւն օգտակար օրինօք կապարաւորելոյ զանձարձակ անձնիշխանութիւն մեր. երրորդ յուղիղ դոր ծական բանականութենէ մերմէ, որ պատկեր գոլով Աստուծոյ՝ նորին հրամանաւ պարտաւորէ զմեզ. և չորրորդ՝ յազատական հաւանութենէ՝ ՚ի յանձնառութենէ և ՚ի խոստմանէ մերմէ, յարդարութենէ, ՚ի փոխառութենէ, և ՚ի նմանեաց։ Վասն ազատութեան և անձնիշխանութեան մարդոյ արժան է հարցանել զբարոյագէտս, որք բազում ինչ պիտանի աւանդեն զայնմանէ։

§ 66. Կարելութիւն, հնարաւորութիւն... անհնարութիւն, անկարելութիւն.

Էակք նկատմամբ առ յեղափոխական հանգամանս կոչին կարելի, կարող, մարթուն, ատակ՝ յընդունել զնոսա. որպէս՝ մարդն զիմաստութիւն, կամ զհայրութիւն. իսկ բաղդատեալք առ հակասական հանգամանս՝ անուանին անկար, անհնար, կամ չմարթուն՝ առ ընդունելոյ զնոսա յինքեանս. որպէս, մարդն զանբանութիւն, կամ քառակուսին զբոլորակութիւն. և որպէս զհարկաւորութենէ ասացաք՝ նոյնպէս թէ՛ կարելութիւն և թէ՛ անկարութիւն բազմապատիկ ըստ ցեղից հանգամանաց. ըստ որոց և որոշին կարելութիւն և անկարութիւն էակի իրիք առ ՚ի գոյանալ, առ ՚ի գործել, առ ՚ի կրել, առ յօրականալ, առ ՚ի քանակիլ, և առ յառնչակցիլ. և դոքին կա՛մ արձակաբար կա՛մ պայմանաւ, կամ բաղդատութեամբ միայն. իբր զի բազում հանգամանք՝ լինին կարելի և անկարելի (զնոյնն իմա և վասն հարկաւորի) մերթ բացարձակութեամբ, մերթ պայմանաւ, և մերթ առնչութեամբ նկատեալք, որպէս բառնալ զբացորոշ ինչ ծանրութիւն կարելի համարի չափահասից, իսկ մանկանց՝ անկարելի։ Զկարողութիւն մարդկան առ ՚ի գործել ինչ մարթին ճարտասանք հաստատել ՚ի յօժարակամութենէ նոցա, ՚ի հնարագիտութենէ, ՚ի պարտաւորութենէ, ՚ի պատրաստութենէ, ՚ի ձեռին ունելոյ նոցա զմիջոցս, զգործիս, զգործակիցս, զբարեկամս, զծախուցս, և այլ բնական՝ բարոյական և քաղաքական պահանջեալս առ սկսուած՝ առ ՚ի հանապազորդութիւն և առ յաւարտումն գործոյն ։ Իսկ զկարելիս իրաց առ 'ի գոլ կամ 'ի գործել մարթին ստուգել, 1 եթէ իրն ոչ պարունակեսցէ 'ի գաղափարի իւրում զհակասական հանգամանս, որպէս մարդ ամենակարող · 2 եթէ ունիցի զպարտական պատճառ, զնիւթ, զկերպ, և զայլ կարևորս գոլոյ կամ գործելոյ · 3 եթէ տեղին՝ ժամանակն և այլ պարագայք ներեսցեն կարելւոյն · զի պարտէզ 'ի ծովու և խաղող 'ի յունվարի յանկարելեաց համարին · 4 եթէ կարողացեալ իցէ սեռն իրին, ցեղն, բոլորն, մեծն, հաւասարն, առնչակիցն, նմանն, օրինակն, մարթ է հաւանել թէ կարասցէ և ինքն իրն · 5 եթէ առաջի կայցեն բաւական նշանք՝ հետք՝ ցուցակք՝ նախընթացք և հետեւակք անցեալ ներկայ և ապագայ իրի կամ գործոյ, որք հաւանական գործեսցեն զկարելին ։

Նոյնպէս և զանհնարութիւն իրաց կամ գործոյ մարթ է հաստատել 'ի ներհականաց յիշեալ հանգամանացդ, այնք են, եթէ իդէայ իրին զհակասական հանգամանս ծրարեսցէ յինքեան, որպէս, աստուածութիւն առանց գոյութեան · եթէ չունիցի զնիւթ, զկերպ, զառարկայ, զենթակայ, զարարիչ, և զայլ կարևոր հանգամանս գոլոյ կամ գործելոյ, զորս 'ի մօտոյ յիշեցաք · յաղագս այդորիկ ասի 'ի սուրբ գիրս „ առ 'ի մարդկանէ այդ անհնարին է, այլ ոչ առ 'ի յԱստուծոյ ··· ոչ է մարթ չգալ գայթագղութեանց ··· ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել ··· մի թէ կարիցէ՞ կոյր կուրի առաջնորդել ··· անհնար է առանց հաւատոյ հաճոյանալ Աստուծոյ ։

§ 67 · Դիւրութիւն ··· դժուարութիւն ·

Սոքա նկատին 'ի կարելիս էակաց, և առաւել լինին 'ի ներքին բնութեան նոցա, 'ի պատճառացն, 'ի գործոյ, 'ի գործակցաց, յառթից, 'ի խոչընդոտից, 'ի դեգորէից, 'ի միջոցաց, 'ի գործեաց, 'ի տեղեաց, 'ի ժամանակաց, 'ի ծախուց, յաշխատութեանց, և յայլոց պէսպէս պարագայից և 'ի հանգամանաց · և ուրեք յայնմանէ՝ զոր ռամիկն բաղդ կոչէ․ որով իմանամք ոչ զկոյր դիպուածն կամ զճակատագիրն հեթանոսաց, այլ զզուգընթացութի՟ օգտակար կամ վնասակար պատճառաց առ 'ի յաջողութի՟ կամ 'ի ձախորդութի՟ վիճակի անձանց կամ գործոց․ յայտ է՝ միշտ ենթադրելով զաստուածախնամ տեսչութի՟ն․ զոր վահան 'ի ձեռին ունելով՝ գուն գործեսցե՛ն քարոզիչք և ճարտասանք՝ խորտակել զամենայն խրտուիլակ դժուարութե՟ց յընթացս առաքինութե՟ց, և դիւրել զամենայն առապարս ։

§ 68․ Նոյնութիւն․․․ այլութիւն, այլազանութիւն․

Երկու կամ բազում անհատք՝ նոյն կոչին ընդ միմեանս, եթէ հաւասարապէս ունիցին զնոյն գոյացական հանգամանս․ որպէս աշոտ և արշակ նոյն համարին 'ի մարդութե՟, զի ունին զնոյն մի կենդանութի՟ և զբանականութիւն․ նոյնպէս երկու արձանք նոյն համարին՝ եթէ յօրինեալ իցեն 'ի համացեղ գոյացական հանգամանաց․ յորոց թէ մին աւելի կամ պակաս ունիցի՝ կոչի այլազան․ ըստ այսմ ասի զփրկչէն թէ 'ի գիշերի մատնութեանն երիցս աղօթեաց առ հայր, և երիցս զնոյն բան ասաց․ ուրանօր նոյնն զայն ցուցանէ՝ թէ այն երեք բանք բաղկացեալ էին 'ի համացեղ բառից կամ յիմաստից ։ Զնոյնութի՟ն չէ պարտ շփոթել, **1** ընդ միութե՟ թուոյ կամ միահատութե՟․ որպէս յասելն՝ բրուտն 'ի նոյն զանգուածոյ կաւոյ ստեղծանէ այլևայլ անօթս, բառն նոյն՝ դնի փոխանակ միոյ․ **2** ընդ միաւորութե՟ կամ միաբանութե՟, որպէս գինի և ջուր, կամ երկաթ և հուր, թէպէտ միաւորին՝ այլ ոչ նոյնանան․ **3** ընդ նմանութե՟՝ զի 'ի սմա իրք ունին զնոյն փոփոխական հանգամանս միայն, և ոչ զգոյացականս, որպէս ձիւն և թուղթ զսպիտակութի՟․ և **4** ընդ հաւասարութե՟՝ յորում էակք ունին զնոյն քանակութի՟․ վասն որոյ ճշդիւ խօսելով ասելի է՝ թէ 'ի նոյնութե՟ մտածի միութի՟ գոյացական հանգամանաց ; ՚ի նմանութեան՝ միութեան պատահական որակութեանց, իսկ ՚ի հաւասարութեան՝ միութեան քանակութեանց։

§ 69 · Համորակութիւն, նմանութիւն . . . հակորակութիւն, աննմանութիւն ·

Երկու կամ բազում ձայնք եթէ ունիցին զնոյն որակութիւն՝ կոչին համորակք, որակակիցք, նմանք · հայեցուած նոցա առ իրեարս ըստ նոյն որակութեանց՝ կոչի նմանութիւն · հայեցուած ըստ այլազան որակութեան՝ աննմանութիւն · իսկ բուն որակութիւնն ըստ որոյ հային նոքա առ միմեանս, ասի՝ հիմն նմանութեան կամ աննմանութեան · որպէս ածուխն և եթովպացին կոչին նմանք ըստ սևութեան, ածուխն և ձիւնն ասին աննմանք · իսկ սևութիւն և սպիտակութիւն նոցա՝ հիմունք նմանութեան և աննմանութեան։ Սեռք և ցեղք նմանութեանց և աննմանութեանց այնչափ են, որչափ և որակութեանց, զորս չէ մարթ ընդ թուով արկանել · ապա թողեալ զյոլովս՝ յիշեսցուք միայն զյետագայ ցեղսդ աննմանութեան ·

§ 70 · Ներհակութիւն, կամ հակադրութիւն և դիմամարտութիւն, որ զաննման որակութիւնս էակաց առնու ՚ի խորհրդածել · որպէս յայս բան Նարեկացւոյն (հա) · մտիմ ՚ի բոյնն աղաւնի, և անդուստ ագռաւ ելանեմ · ևն · զոր ընթերցիր։

§ 71 · Հակասութիւն, որ զնոյն մի որակութիւն ընդ չգոյութեան նորա բաղդատէ ածական անուամբք · որպէս, իմաստուն՝ ոչ իմաստուն, հայր՝ ոչ հայր, ևն · կարդա՛ զօրինակն (ովսեայ · ա · 9 · բ · 2 · 24 · ևն)։

§ 72 · Բացասութիւն, յորում գոյութիւն և չգոյութիւն նոյն գործողութեան բաղդատին ընդ միմեանս դիմաւոր բայիւք · որպէս յայսմ „ սէր ոչ նախանձի՝ ատելութեան օրինօք վարժեալքս նախանձեցաք · սէր ոչ դրդուի՝ մեք զօրհանապազ երկնեցաք և երկնիմք առ միմեանս զչարութիւն · սէր ոչ խնդրէ զիւրն, իսկ մեք ոչ միայն խնդրեմք, այլ և անիրաւութեամբ ընկենումք զիրաւունս իրերաց (Շնորհալի)։

§ 73. Պակասումն, այն է բացթողումն նոյն հանգամանաց այլով բառիւ բացատրեալ. որպէս „Լոյս եկն յ'Ե, և սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս… եթէ կոյր էիք՝ ոչ էր ձեր մեղ. այլ արդ ասէք թէ տեսանեմք, և մեղք ձեր 'ի ձեզ հաստատեալ են… այսուհետև մահ 'ի մեզ զօրանայ, և կեանքն 'ի ձեզ ։

§ 74. Առնչումն, որ զերկու կամ զյոլով առնչակից առնու 'ի խորհրդածումն. որպէս„ որդի փառաւոր առնէ զհայր, և ծառայ երկնչի 'ի տեառնէ իւրմէ. իսկ արդ՝ եթէ հայր եմ՝ ո՞ւր են փառք իմ. և եթէ տէր եմ՝ ո՞ւր է պատիւ իմ. ընթերցիր ևս, մտթ. Ժ. 24. Իգ. 8. յովհ. Ժ. 1—17. Ժգ. 13.

§ 75. Անհաւասարումն, որ 'ի նիւթ վերաբանութեց առնու զաննմանութիւս քանակութեց, չափուց, կշռոց, ծանրութեց, թուոց, ձևոց, և [illegible], զորոց զօրինակս գիտ, մտթ. Ե. 19. ԺԱ. 11. ԺԸ. 1—7։ Թ. 37։ ԻԲ. 14։ ԻԵ. 21—23։ ԻԳ. 4. 23. և այլուր բազում ։ Ընդ նմանութ. իմացեալ լինին նա և համեմատումն և յարմարումն, զորոց ստորև.

§ 76. Եղանակ, տարազ (modus).

Իմանամք սովին առ հասարակ զխուրափոփոխս որպիսութիս էակաց և ներգործութեց նոցա. որք թէպէտ ինքնին թեթև ինչ են. բայց երբեմն սաստիկս զգածեն զընթակայն 'ի բարւոյ մասին և 'ի չարին. օրինակ իմն՝ խօսիլ՝ քարոզել՝ յորդորել՝ են ներգործութիք, բայց բիւր եղանակաւ մարթին կատարիլ յանհատս. որպէս, յորդորել քաղցրութ. կամ սպառնութեամբ, սաստիկ կամ թոյլ, 'ի ժամու կամ 'ի տարաժամու, 'ի դէպս կամ յանդէպս, չափու կամ յանչափս, առանձին կամ հրապարակաւ, ըստ արժանեաց կամ յանարժանս, զմերձաւորն՝ զհաւատարս կամ զհպարտակս, և այլ նման եղանակօք, զորս սովորաբար բացատրեմք մակբայիւք. և ածականօք բարդելովք ընդ բառիս, գոյն, գունակ, կան ; բար , պէս , օրէն · կամ պարզ որակական ածականօք , որպէս յայտ է 'ի քերականութ՟ · ըստ այդորիկ ասի ,, բարւոք ստեցեր 'ի քոյին գլուխ , կայդ արդար ասացեր , հոգւով և ճշմարտութ՟ պարտ է երկրպագանել Աստուծոյ , ուղիղ ետուր զպատասխանիդ · զի որպէս մակբայք 'ի վերայ բայից՝ նոյնպէս և ամենայն ածականք եղանակ են 'ի վերայ դիմականաց , զորս արթուն ճարտասանք յօդուտ լուրեանց շրջեն ը՟ պաշտանջելոյ առթից:

§ 77 · Քանակութիւն ·

Ասացեալ է կանխաւ թէ կրկին են սեռք էակաց , աննիւթ և նիւթական , կամ իմանալի և զգալի · իմանալիքն պարզ են , իսկ զգալիքն՝ բաղադրեալ 'ի զանազան մասանց նիւթաւորաց · և սոքա են՝ որք կացուցանեն զիսկութ՟ քանակութ՟ · յորմէ 'ի բաց յապաւեալ զնուրբ խնդիրս բնազանցականսն՝ յառաջ բերցուք միայն զհասարակ ծանօթութ՟ս , որք ուրեք երբեք գան 'ի պէտս ճարտասանից · բաժանեալ զայն յիօթն գլխաւոր ցեղս , որք են , որչափութ՟ , կշիռ , հաւաքում՟ , ընդհանրութ՟ , թիւ , նուագ , աստիճան :

§ 78 · Որչափութիւն , Ծաւալութիւն , Տանութիւն ·

Յոր և իցէ նիւթական էակս՝ զանազանին , 1 մասունք՝ յորոց իւրն բաղկանայ · որք կոչին և բաժինք , կէտք , եւն · սոքա նկատմամբ առ բաղադրեալն՝ կամ էական են , որք զէութ՟ իւրն կացուցանեն , որպէս , քար և փայտ 'ի տան · կամ ամբողջական միայն · որպէս , մասունք , աչք , ունկն 'ի մարդն · դարձեալ մասունք կամ նոյնասեռ են ընդ միմեանս , որպէս յաթոռ ինչ համակ փայտեայ · կամ տարասեռ , որպէս , արիւն՝ միս՝ մորթ՝ ժիլ՝ (յորմէ՝ ժլատ) 'ի մարմնի կենդանեաց · ամենայն մասունքս պարտին լինել կցեալ և կապեալ ընդ իրեարս · 2 բաղադրեալն 'ի մասանց՝ անուանի , բոլոր , ամբողջ · 3 կէտք եթէ ըստ երկայնութ՟ միայն ձգեսցին՝

ծնանի՝ գիծ, տող, լար. որ կամ ուղղաձիգ է, կամ պարբերական, և սա կոչի՝ ծիր, պար, բոլորակ. որոյ մասն կոչի՝ աղեղն, կամար։ Առաջին կէտն գծի՝ կոչի սկիզբն, վերջին կէտն՝ եզր, աւարտ. իսկ բառն՝ ծայր, ընծայի թէ առաջնոյն թէ վերջնոյն։ Ուղիղ գիծք՝ կից իրերաց եղեալք ծնանին զմակերևոյթ, որ է տարածութիւն ընդ երկայն և ընդ լայն, որոյ եզերքն կոչին՝ սահման, կոպար. իսկ խոտոր և հակ եղեալք՝ ծնանին զանկիւն. և սոքա առ միմեանս յարեալք՝ ծնանին զձև, որոյ բազումն են ցեղք առ երկրաչափս, եռանկիւնի, քառանկիւնի. Դ. մակերևոյթն կամ բոլորշի է, կամ անկիւնաւոր. բոլորշին ինքեամբ բազմապատկեալ ծնանի ըզգունտ. յորում մտածին՝ շրջապատ, կենդրոն, շառաւիղ, գմբէթ. անկիւնաւոր մակերևոյթք 'ի վերայ միմեանց եղեալք՝ ծնանին զխորանարդ. որում ընծային՝ երկայնութիւն, լայնութիւն, խորութիւն, բարձրութիւն, թանձրութիւն, սերտութիւն, հոծութիւն, ևն. Ծայրք որ և իցէ մակերևութից կոչին նոյնպէս՝ կոպար, սահման. Ե մարդիկ ը հաճոյից իւրեանց սահմանեալ ունին զբացորոշ ի մասն գծի՝ լայնութեան և խորանարդի, զոր կոչեն չափ (չափող զայլս), զի եղեալ զայն փոխանակ միոյ կամ միութեան՝ մերձեցուցանեն յանորոշ գիծն, առ 'ի գիտել թէ բացորոշն այն քանի՞ցս անգամ պարունակի յանորոշն, և զայդ կոչեն՝ չափել. որպէս զերկայնութիւն ճանապարհի կամ կտաւոյ չափեն կանգնաւ, մղոնաւ. Զ 'ի բաց հանել կամ կտտանել զմասունս իւրեն՝ ասի բաժանել. և բաժանեալ մասունք՝ եթէ նոյն չափ ունիցին, կոչին՝ հաւասար իրերաց. ապա թէ այլևայլ չափս ունիցին՝ ասին անհաւասար. յորոց նա՝ որ առաւել է չափու, կոչի՝ մեծ. իսկ որ սակաւաչափ է՝ ասի փոքր. ապա մեծութիւն, փոքրութիւն, հաւասարութիւն, անհաւասարութիւն՝ են առնչականք. զի 'ի մէջ բերեն զբաղդատութիւն միոյ չափու առ այլ։ Այսոքիկ և սոցին նման չափողական ծանօթութիւնք՝ շահաւէտ են ճարտարանից. զի մարթ է լայնաբար յանկել զայնս նա և իմանալի և աննիւթ էակաց. ոգ̃, իմաստութե̃, սիրոյ, բարերարութե̃, մարդասիրութե̃, առաքինութեանց, և այլոց բազմաց, որպէս Առաքեալն խորհրդածելով զփրկութի̃ն Քրիստոսի՝ պատշաճէ նմին զյիշեալ չափս, գրելով առ Եփեսացիս (գ. 18) „ զի կարող լինիցիք հասանել ընդ ամենայն սուրբս. զինչ է լայնութի̃, և երկայնութի̃, և բարձրութի̃, և խորութի̃. ճանաչել զառաւելութի̃ գիտութե̃ սիրոյն Քի̃ի: Ըստ այդմ յաճախ լսին յաստուածային՝ 'ի վարդապետական՝ և 'ի ճարտասանական գիրս՝ ամենայն վերոյիշեալ բառքդ, չափ, չափել, մեծութի̃, բարձրութի̃, հաւասարութի̃, մասն, բոլոր, և մնացեալքն:

§ 79. Կշիռ, ծանրութիւն... թեթևութիւն.

Սա թէպէտ նիւթական իրաց է յատուկ, սակայն ճարտասանք ընծայեն զայն նա և իմանալի և աննիւթ առարկայից. մանաւանդ գիտնականաց, բարոյականաց և կենցաղականաց. յորս կարևորագոյն և դժուարագոյն մասնն՝ ծանրութի̃ կոչի. ըստ որոյ ասեն, բառնալ զծանրութի̃ աւուրն, ծանր է մեզ և տեսանելն զնա, թեթև ինչ թուի յաչս ձեր, ծանրանալ հոգովք աշխարհականօք, թեթևանալ 'ի պարտուց, ծանրութի̃ կամ թեթևութի̃ պաշտաման, իշխանութե̃, ամուսնութե̃: Առ 'ի գիտել զորքանութի̃ ծանրութե̃՝ սահմանեալ են մարդիկ զպէսպէս գործիս. որպիսի են կշիռ, կշռորդ, զոյգ, լծակ, նժար, թաթ, մէտ. զորս և պերճախօսք վարեն երբեմն փոխաբանութե̃. որպէս „ ոչ իշխեմք կշռել և հաւասարել զանձինս մեր՝ ումանց... զգործ իւր կշռեսցէ իւրաքանչիւր ոք... զիւր և զայլոց կենցաղս լծակօք իմն կշռէր:

* * *

§ 80․ Հաւաքումն, Գումարութիւն, Խումբ, Զոյգ․
§ 81․ Ընդհանութիւն, Սեռութիւն, Ցեղութիւն․
§ 82․ Թիւ, Քանիութիւն, Համար, Հատ․

Բոլորք՝ ըստ այլևայլ տեսու՟եց բաղադրիչ մասանցն՝ յերիս ցեղս զատանին․ որք են, կցորդամասն, հաւաքամասն, և անջատամասն․ զի նախ՝ են բոլորք ; որոց մասունքն շաղկապեալ են ընդ իրեարս․ որպէս մարմին մարդոյ և այլ նիւթական էակք՝ որք չափեալ և կշռեալ լինին․ յերկրորդ ցեղն մասունք ոչ են կցեալ, այլ միայն հուպ և մօտ եդեալ կամ հաւաքեալ․ որպէս դէզ ցորենոյ, հօտ ոչխարաց․ երրորդ՝ են ևս բոլորք մտօք միայն բաղադրեալք, որոց մասունքն ոչ կցեալ են և ոչ հաւաքեալ, այլ ցրուեալ և անջատեալ․ զորս տրամաբանք՝ ընդհանուր, սեռ, կամ ցեղ կոչեն․ այն է էակ սեռական կամ ցեղական, ընդհանրական, ոմ՟ կենդանի, թռչուն, ձուկն, ծառ, պտուղ, ծաղիկ, մարդ․ և այլ անբաւք ։ Արդ մասունք հաւաքամասն և անջատամասն բոլորից՝ մտածին իբր անորոշ և իբր բացորոշ․ իբր անորոշ առեալ մի մասն կոչի՝ հատ, անհատ, միահատ, եզական․ եթէ երկու միայն իցեն մասունքն՝ զերկրորդն զայն կոչեմք՝ միւս․ ապա յաւելուլ ասեմք՝ սակաւք, ոմանք․ և ևս յաւելեալ ասեմք, բազումք, յոլովք․ հուսկ յետոյ զբոլորն միանգամայն կոչեմք, ամենայն, բոլորեքեան, համօրէն ։ Իսկ յորժամ բացորոշել կամիմք զքանիութի՟ անհատից յայնժամ ՚ի կիր առնումք զթիւ, կամ թուեմք զհատսն, ՚ի թիւ արկանեմք ; համարեմք․ ասելով, մի, երկու, երեք․ զի թիւն ոչ է այլ ինչ, բայց եթէ համար միու՟եց կամ բացորոշու՟ե քանիու՟ե հատից․ օրինակ իմն՝ րոպէից, ժամուց, ամսոց, դաշն կոնաց, զինուորաց․ վասն որոյ բազմութիւն և սակաւու՟ն՝ են անորոշ քանիու՟իք․ յորոց բազմու՟ն՝ զորոյ ոչ կարեմք գիտել զքանիու՟ն, կոչի՝ անթիւ, անհամար․ և այն՝ կամ արձակաբար և կամ առնչապէս միայն։ Զընդհանրից և զթուոց յոլով են գիտելիք, այլ ոչ է ճարտասանից ճոխագոյնս ճառել զնոցունց։

Ծանօթութիւնք որ և իցէ բոլորոյ, սեռի, ցեղի, ընդհանրոյ, և որոց ընդ նոքօք՝ կարևոր են յոյժ ճարտասանից՝ 'ի բազում իրս, մանաւանդ 'ի ստուգելն ինչ կամ 'ի ջրել. վասն զի ոչ միայն 'ի նիւթական՝ այլ և յաննիւթ առարկայս իսկ տեսանեն նոքա զբան բոլորուն. որպէս զառաքինութիւնս, զգիտութիւնս, զմոլորութիւնս, զներգործութիւնս, զկրելութիւնս, և զայլ մտաւոր էակս, որք շատ թէ սակաւ ընդ ինքեամբք պարունակեն զմասունս ինչ, իբր զսեռ նկատեն. զորս ապա բաժանեն 'ի տոհմս, յազգս, 'ի ցեղս, 'ի մասնաւորս, յանհատս և 'ի ստորակայս։

§ 83. Նուագ, գամ, անգամ, հաղ.

Թիւն՝ զոր 'ի վերոյ մեկնեցաք՝ անհատից կամ մասանց պատշաճի, իսկ անգամն՝ գործողութեանց և կրելութեանց. նա զկրկնութիւն միութեանց նոյնացեղ էակաց, իսկ սա զկրկնութիւն նոյնատեսակ ներգործութեանց ցուցանէ. նա թուական անուամբք՝ իսկ սա կրկնական և թուական մակբայիւք բացատրի. անդ ասեմք,, առն միոջ էին երկու որդիք, տասն դրամք, հարիւր ոչխարք. իսկ աստ ասեմք,, քանիցս անգամ՝ թէ մեղիցէ ինձ եղբայրն իմ՝ թողից նմա. զայս արարէք՝ քանիցս անգամ թէ ուտիցէք. և քաջայայտ է թէ ճարտասանից հարկ լինի երբեմն բացատրել զնուագս գործոց ինչ բարեաց կամ չարաց, 'ի ներբողելն զայնս, 'ի պարսաւելն, 'ի պատմաբանելն, և յայլ դէպս։

§ 84. Աստիճան, սանդուղք.

Չափ է սա քանակի կարողութեանց՝ զօրութեանց՝ ներգործութեանց՝ և այնպէս որակութեանց էակաց. որպէս, ջերմութեան կամ ցրտութեան օդոյ և ջրոյ, սաստկութեան կամ թուլութեան լուսոյ՝ ցաւոց՝ հնչման՝ ձայնից՝ հոտոյ՝ համոյ՝ գունոց, որք լինին ընդ աստիճանս կամ ընդ մատունս սանդղոց եղանեն և իջանեն, աճեն և նուազին, սաստկանան կամ մեղմանան, կամ մնան 'ի նմին կայի․ և ճարտասանք յանկեն զայնս իմանալի աննիւթական որակութ՟ց․ իմն, գիտութ՟, իմաստութ՟, սիրոյ, բարեկամութ՟, իշխանութ՟, պատուոյ, փառաց, օգտակարութ՟, բարերարութեան, ազգասիրութ՟, ատելութ՟, տրտմութ՟, ուրախութ՟, և որոց 'ի կարգի․ յորս և զանազանեն զաստիճան սոցին, միջին, վերին, և գերակատար․ և առնուն զայնս 'ի նիւթ իմաստաբանութ՟ պէսպէս եղանակաւ․ ո՟պ ասելն փրկչին,, մեծ ես քան զայս սէր ոչ ոք կարէ ունել՝ եթէ զանձն իւր դիցէ վասն բարեկամաց, զգերածայրեալ աստիճան սիրոյ ցուցանէ․ զնոյն յայտ առնէ և բանն Յովհաննու վասն Քրիստոսի,, սիրեաց զիւրսն, 'ի սպառ սիրեաց զնոսա․ և Պաւղոս զսարկաւագաց ասէ, թէ բարւոք սպասաւորութեամբ շահին զաստիճան բարի պատուոյ՝ անուանն համբաւոյ․ այլուր յիշատակին, աճել շնորհօք և գիտութ՟, ցամաքիլ կամ նուազիլ սիրոյ, նմա պարտ է աճել՝ և ինձ մեղմանալ։ Նա քերականս աստիճան սաստկութ՟ և թուլութ՟ ներգործութ՟ց բացայայտի՝ սաստկական, յաճախական և նուազական անուանեալ մակբայիւք։

'Ի սովին յարեմք զծանօթութիւն տեղւոյ և ժամանակի․ զի և սոքին քանակութ՟ չափին, այն է՝ ժամանակն մտածի իբր ուղղագիծ երկայնութ՟ միայն․ իսկ տեղին՝ իբր երկայնութ՟ և լայնութ՟ միանգամայն։

§ 85․ Ժամանակ, ամանակ, երբ․

Թէպէտ արդի իմաստասէրք զսա՝ ո՟պ և զտեղին ոչ դասեն 'ի շարս քանակութ՟, սակայն մեք դիւրընկալ իմացուածոյ համբակաց պատկառ կալով՝ ասեմք, թէ ժամանակն է քանակութ՟ գոլոյ և գործելոյ էակաց․ ո՟պ յասելն՝ Քրիստոս զամս երիս քարոզեաց հրէից և հալածեցաւ 'ի նոցանէ, իմանամք զքանակութ՟ գործելոյ և կրելոյ նորա ։ Մտածի սա իբրու անսահման գիծ ինչ․ որոյ մասունք են, վայրկեան, պահ, ժամ, օր, ամիս, ամ․ իսկ բոլորն անուանի՝ մշտնջենաւորութի՟, յաւիտենականութի՟։ Սկիզբն ժամանակի՝ որ նշանաւոր դիպուածով ինչ հաշուեալ իցէ առ յետագայս, ասի թուականութի՟, թուական․ ոպ՟ թուական Քրիստոսի, լուսաւորութեան հայոց ։ Վայրկեանն ժամանակի՝ որ քաջայարմար թուի առ 'ի գլուխ հանել զգործ ինչ, կոչի պարապ (մաթ․ իզ․ 16․ մրկ․ Զ․ 21․ ժդ․ 11․ ևն)․ գայլ պէսպէս ցեղս ժամանակաց նշանակեցաք 'ի վերոյ 'ի պարագայս գործողութե՟ց․ ոպ՟ և 'ի քերականութե՟ յայտնի է բաժանում՟ն նորա յանցեալ, 'ի ներկայ, և յապառնի ։

Յիրս առ միմեանս բաղդատեալս ըստ ժամանակին գոլոյ և գործելոյ՝ մտածին

1 Սակաւ կամ յերկար տևողութի՟ նոցա, որոյ աղագաւ գովին կամ պարսաւին 'ի Ճարտասանից․ ոպ՟ գիտութի՟ք՝ առաքինութի՟ք և ամենայն հոգևոր և երկնային բարիք վասն մշտնջենաւոր յարատևութե՟ իւրեանց արժանի են ամենայն գովեստի պատուոյ և սիրոյ․ իսկ գեղ՝ փառք՝ պատիւ՝ և նմանք յաղագս դիւրաթառամ սակաւատևութեան անարգ համարելի են․

2 Համագոյութի՟ կամ ժամանակակցութի՟ նոցա, ոպ՟ հայրն և որդի նորա, արեգակն և լոյս նորա, հուրն և ջերմութի՟ նորա, մեղքն և թշուառութի՟ նորա, անբաժանկից են ժամանակաւ․ նոյնպէս և այլ բազում իրք անձուկ ժամանակաւ կապակցեալք ընդ իրեարս ։

3 Յաջորդութի՟ նոցա, որոց ոչ վայելով 'ի միում ժամանակի գոլ կամ գործել, պահանջեն՝ զի մի 'ի նոցունց յառաջեսցէ, և ապա միւսն յաջորդեսցէ նմա․ որպէս ժամք յընթացն աւուր, ձայնք և հնչմունք յերգս, բառք 'ի խօսս ։ յայսպիսիս նկատին

1 Յառաջնութի՟, յառաջընթացութի՟, որոյ ցեղք առ Ճարտասանս են, 1 յառաջնութի՟ ժամանակի, ոպ՟ մանկութի՟ն կանուխ է ժամանակաւ քան զերիտասարդութիւնն, ա-

ռաւօտն քան զերեկոյն․ 2 առաջնութ՟ն կարգի․ որ ըստ կանխաւ գրելոյս կրկին է, ըստ տեղւոյ և ըստ ժամանակի․ ոպ՟ 'ի ճակատու զօրաց և 'ի գլուխն՝ զինուորն և մատեանն, որք ունին զառաջին տեղին, ունին և զառաջնութ՟ն կարգի․ իսկ երկու քահանայք թէպէտ հաւասար են 'ի հոգևոր պաշտաման, սակայն յառաջ ձեռնադրեալն ժամանակաւ՝ առաջին համարի և կարգաւ․ 3 առաջնութ՟ն պատուոյ․ երբ 'ի մէջ հաւասար իշխանաւորաց՝ մի ոմն առաջին ասի վասն այլուստ մեծապատիւ լինելոյ քան զընկերս․ ոպ՟ յազնուապետական կառավարութե՟ թէպէտ ամենայն ծերակոյտք հաւասար են իշխանութ՟․ սակայն նախագահեալն 'ի նոցանէ առաջին կոչի․ 4 առաջնութ՟ն պատճառական, ըստ որում որ և իցէ պատճառ գոնէ զօրութ՟ առաջին դատի քան զարարածն իւր․ որպէս ծառն քան զպտուղն, արհեստաւորն քան զգործն։

2 Յետնութ՟ն, յետագայութ՟ն, որոյ տեսակք և իմաստք ամենևին նման են յառաջնութե՟, ընդ որում է առնչակից։

Յայտնի է ճարտասանից որոշումն ժամանակաց 'ի սրբազանս, 'ի հասարակս, և յայլ պէսպէս ցեղս։

§ 86․ Տեղի, վայր, ուր․

Ցուցեալ են 'ի վերոյ որոշմունք տեղեաց՝ յորս կատարին գործողութ՟ք և կրելութ՟ք․ բայց յայսցանէ էակք ունին ևս զտեղի գոյանալոյ՝ սնանելոյ՝ ծնանելոյ՝ տևելոյ՝ աճելոյ՝ նուազելոյ, այլովք հանդերձ․ յորս ըստ ճարտասանից որոշին 'ի միմեանց․ 1 սրբազան տեղիք, որպիսի են տաճարք և տունք աղօթից, անօթք, ուխտատեղիք, գերեզմանք․ 2 հասարակ տեղիք, յորում կեան էակք, որոց յարաբերութ՟ն առ վայրն՝ կոչի դիրք, պէսպէս տեղական մակբայիւք և նախադրութ՟ք բացատրեալք․ Մնալ իրին յիւրում տեղւոջ՝ ասի դադարումն․ իսկ փոխելն զտեղին և գնալն՝ կոչի շարժումն, որոյ եղանակք են, յաջ, յահեակ, յառաջ, յետս, 'ի վեր,

՚ի վայր , ուղղագիծ , բոլորագիծ , ևն՟ . 3 մտաւոր տեղիք (որպէս յիշատակեալ եմք և ՚ի քերականութեան , յեր , 274 . 333 , ևն՟) . 4 տեղի լի կամ դատարկ , որ ունի կամ չունի՝ զոր պարտն էր ունել . զոր և յաննիւթ էակս յանկելով Հարտասանից՝ ասեն , բան թափուր յիմաստից , զուրկ ՚ի ճշմարտուէ՟ , այր լցեալ կամ դատարկացեալ ՚ի շնորհաց , ՚ի գիտութ՟ց , յառաքինութ՟ց . 5 տեղի բացարձակ կամ առնչական , յարաբերութ՟ առ էակ ինչ նիւթական և աննիւթ . որ մարթի գոյիլ կամ պարսաւիլ՝ երբ զօրութ՟ և ներգործութ՟ նորա մտածի տարածեալ ՚ի յոլով կամ ՚ի սակաւ տեղիս . որպէս քրիստոնէութ՟ն սերմանեալ ՚ի պաղեստին՝ տարածեցաւ յաշխարհ ամենայն վասն գերազանցութ՟ իւրոյ : Այլ և սեռք և տեսակք տեղեաց այնչափ են , որչափ ներգործելոյ և կրելոյ , ըստ որոյ առնուն և զպէս պէս անուանս . որպէս տեղիք բնակութ՟ մարդկան կոչին՝ տուն , պալատ , սենեակ . տեղիք պահելոյ գիրս՝ շտեմարան , համբար , գանձատուն , մարագ . տեղին դատելոյ՝ ատեան , դատարան , և այլ այդպիսիք :

§ 87 . Առնչականութիւն . . . առնչութիւն .

Այլազգ դասեն զառնչումն իմաստասէրք , և այլազգ Հարտասանք . առ սոսա՝ որ և իցէ կապակցութ՟ կամ հայեցուած իրաց առ միմեանս՝ առնչութ՟ անուանի . զոր մարթ է առ յստակ իմացութ՟ համբակաց՝ փոխահայեցութ՟ կոչել , իբրու փոփոխ հայեցուած երկուց առ իրեարս , որպ՟ հօր և որդւոյ , վարդապետի և աշակերտի . սոքին խորհրդով Հարտասանք յետ նկատելոյ զառարկայն առանձինն և միայնակ՝ ըստ զինչութ՟ ըստ որակութ՟ և ըստ քանակութ՟ նորին , ՚ի մէջ առնուն և ևս զընկերն ընդ որում ունիցի ինչ յարակցութ՟ , և քաղեն անտի պէսպէս նիւթս իմաստաբանութ՟ց . վասն զի բազում իմաստք ծնանին ՚ի միտս՝ երբ հայեցուցանեմք զգլուխն առ իրանս , զմարմինն՝ առ հոգին կամ առ ան դամս, զբոլորն առ մասունս, զսեռն առ ցեղս կամ առ անհատս, զհովիւն առ հօտն, զթագաւորն առ հպատակս, զքահանայն առ եպիսկոպոսն կամ առ ժողովուրդն, ըզպարունակողն առ պարունակեալն, զփոխատուն առ պարտաւորն. միով բանիւ՝ զայն ամենայն, որք զիարդ և իցէ յօդակից և հաղորդակից են իրերաց թէ ըստ ներգործութ՟ և կրելութ՟, թէ ըստ որակութ՟ և ըստ քանակութ՟. յորոց զբազումս 'ի նախընթացսդ նշանակեալ եմք, այլ են բաց 'ի յիշելոցդ, նիւթ և կերպ, գոյաւորիչ և գոյաւորեալ, ներգործող և կրող, արարիչ և արարած, նման և աննման, հաւասար և անհաւասար, մեծ և փոքր, բազում և սակաւ, այլովք հանդերձ: Զօրինակս պէսպէս առնչական եղերաց ընթերցցին համբակք 'ի սկզբան շրջաբերական թղթոյ Շնորհալւոյն. ուր նախ դնէ զառընչական անուանս եպիսկոպոսաց, թէ վերակոչին ծնող, դայեակ, վարդապետ, դէտ, հովիւ, առաջնորդ, միջնորդ, դատաւոր. և ապա բացատրէ զիւրաքանչիւրսն, յինքն և 'ի ժողովուրդն յանկելով:

§ 88. Փոխազդեցութիւն.

Ճիւղ է սա ըստ ծանօթութ՟ յառնչութ՟ն, զի նշանակէ զփոխադարձ ներգործութ՟ երկուց էակաց 'ի միմեանս. այլ ոչ միայն հոգի մարդոյ ներգործէ 'ի մարմինն, այլ և մարմինն ներգործէ 'ի հոգին. ըստ այդմ 'ի գիտնականս 'ի բարոյականս՝ և 'ի քաղաքականս՝ բազում ինչ իրք են՝ որ փոփոխակի առնեն յիրեարս, զորս պարտ է Ճարտասանից բացայայտել և տպաւորել 'ի միտս ունկնդրաց. քանզի ոչ պակասեն պարագայք՝ ուր թէպէտ ցանկան զայս ինչ գիտութ՟ յանձին բերել, բայց ոչ յետըս կասին 'ի մոլի վարուց. անգիտացեալք զընդհանուր օրէնս փոխազդեցութ՟, թէ իմաստութ՟ և առաքինութ՟ միշտ զիրերաց ունին. նոյնպէս մասունք որ և իցէ բոլորոյ, անդամք որ և իցէ մարմնոյ, ընկերք որ և իցէ հասարակութ՟՝ եկեղեցւոյ՝ քաղաքի՝ ազգի՝ և հայրենեաց՝ միշտ ներգործեն և պարտական են փոխ առ փոխ ազդել յի-րեարս. վասն որոյ չարաչար սխալին և մեղանչեն այն ամենայն անձինք, որք հայրենեաց և ազգին՝ օգուտ ինչ ոչ առնեն, այլ միայն զանձինս և զարիւնակիցս իւրեանց հոգան. ոչ միտ դնելով անտնօրինելի բնական օրինաց՝ թէ յորժամ բոլոր մարմինն ախտանայ՝ անհնար է անդամոց մնալ յառողջութեան. և ՚ի հոլանալ արմատոյն՝ հարկաւ զօսանան շառաւիղք ամենայն. վասն որոյ որ ոք ունիցի ՚ի սրտի զճշմարիտն անձնասիրութիւն և հայրենասիրութիւն, ըստ առաքելական խրատուն՝ ոչ զանձինն եթ հոգասցէ, այլ և զընկերին և զազգին. զի անդամքն պարտին միմեանց ծառայել:

§ 89. Նախընթաց . . . . Հետևանք, Հետևորդք.

Զիմնի այս հանգամանք ՚ի կապակցութեան՝ որ ընդ մէջ գոյութեան և գործողութեան էակաց. երբ ՚ի դնել միոյն՝ եդեալ լինի և միւսն. որպէս ՚ի ծագմանէ արևու՝ զհետ գայ տիւն լինել, և ՚ի մեղանչելոյ՝ թշուառանալ. և որովհետև կապակցութիւնդ այդ ընդ մէջ երկուց՝ մարթի լինել կամ հարկաւ ինչ կամ հաւանաբար միայն, յայն ակս և այս հանգամանք բաժանի ՚ի հարկաւորն, որպէս յեղեալ օրինակդ. և ՚ի պատահականն, որպէս անսխալ ծաղիկս ՚ի ծառն՝ ճշմարտանման երևի՝ թէ զհետ գայցեն և պտուղք, ենթադրեալ՝ եթէ ոչ վնասեսցին յանբարեխառնութենէ օդոյ. այսպիսի են ամենայն բանք՝ թէական շաղկապօք յօրինեալք: Ըստ վերածին և նախընթաց պատրաստութիւնք առ ներգործութիւնս, և հետևանք նոցին. որպէս եթէ բանք իցեն զգիւտոյ տառից մերոց ՚ի սրբոյն Մեսրոպայ, մարթ է յառաջ բերել թէ զնախընթաց դժուարութիւն եկեղեցականաց՝ արքունեաց և քաղաքականաց ազգին՝ առ ՚ի չգոյէ քաջայարմար գրոց ՚ի բացատրել ճշդիւ զհնչումն լեզուին, և թէ զկատարեալ զիւրութիւն և զկատարելութիւն յարտայայտութեան ամենատեսակ հնչմանց սեպհական և օտար լեզուաց. այսպէս իմա և յայլ ամենայն առարկայս:

Նախընթաց և հետևորդ կոչին նա և առաջինք և յետինք՝ զոյգ ընդ ցեղից իւրեանց, զորս 'ի վերոյ բացատրեցաք. քան զի և 'ի նոսին գտանի կապակցութ՟՝ հոսումն և կախումն միոյ զմիւսոյ, ուր ճիշդ և ուր արձակ, զորս խորագիտութ՟ ճարտասանին պարտի գտանել և յօգուտ իւր շրջել։

§ 90. Նշանակող.... նշանակեալ.

Նշանակողն՝ կամ զոր սովորութին ունի՝ նշանն ընդհանրապէս՝ է զգալի երևոյթ կամ իր, որ առաջակայութ՟ իւրով այնպէս բացորոշ ցուցանէ զայլ ինչ բաց յիւրմէ, մինչև մտաց տեսանողին անդէն յուշ առնել և զուշակել զմիւսն զայն, զոր կոչեմք նշանակեալ։ Ըստ այլևայլ տեսութեց նշանն բաժանի նախ 'ի բնական՝ որ 'ի բնուստ կապակցութ՟ ցուցանէ զայլ ինչ, ո՟պ արտասուքն՝ զտրտմութի. և 'ի կամայական՝ որ ըստ հաճոյից մարդկան կապեալ է ընդ նշանակելոյն, որպէս տառք ընդ հնչմունս, և թուագիծք ընդ թուեալ իրս. երկրորդ նկատմամբ ժամանակի՝ նշանք բաժանին 'ի յիշատակական, որ զանցեալ ինչ ցուցանէ. որպէս սպիք վիրաց, տապանաքարինք ննջեցելոց, կոթողք և կամարք յաղթութեց. 'ի ներկայական որ զառաջիկայ ինչ ցուցանէ, ո՟պ ծուխն զհուր. և 'ի գուշակական որ զապագայ ինչ կանխաձայնէ, ո՟պ արշալոյսն զծագումն արևու, և ամենայն նախընթաց պատրաստութիք ցուցակք ապագայ գործողութեց, տօնից, հարսանեաց, ևն։ Երրորդ բաժանին նշանք 'ի յատկականս, որք զայս ինչ յայլոց նմանեաց որոշեալ յատկացուցանեն. ո՟պ նշանք զինուորաց, մատանիք հարսանց և փեսայից, դրօշակք թագաւորութեց, զգեստք և կնիքք զանազան անձանց. 'ի նմանականս՝ որք ոչ միայն զիրն, այլ և զնմանութիւն՝ զտեսիլ և զուրուական նորա յանդիման կացուցանեն, ո՟պ են ամենայն պատկերք, նկարք, և արձանք մարդկան. ևս և զաղափարք նիւթական իրաց և ձևոյ՝ յաչս և 'ի միտս մարդկան տպաւորեալք. եւ յերևութականս՝ որք չունին ինչ նմանութ̃ի ընդ իրին, այլ միայն յուշ ածեն զայն և 'ի ցոյց բերեն, կամ փոխանակ այնր վարին, ոպ̃ են բազմատեսակ գիծք և խաղք յերաժշտութ̃՝ 'ի թուաբանութ̃՝ 'ի տոմարագիտութեան՝ 'ի բժշկութ̃. ևս և պէսպէս շարժուածք անդամոց նշանակիչք խորհրդոց մտաց կամ կրից հոգւոյն:

§ 91. Հեղինակութիւն, Վկայութիւն.

Իմանամք սովաւ զդատողութ̃ի արժանայարգ անձանց զառարկայէ ճառելն, թէ զի՞նչ վկայեալ իցեն նոքա խօսիւք կամ գրովք զայնմանէ՝ 'ի բարւոյ մասին կամ 'ի չարի. վասն զի կարծիք՝ բանք և գրուածք գիտնական անձանց, առաւել ևս՝ հասարակութ̃ց՝ ժողովրդոց՝ բազմութ̃ց՝ ազգաց կամ եկեղեցեաց՝ բազում յարգ և ծանրութ̃ի ընծայեն, և հզօր փաստ համարին առաջադրիր դատին. և ստիպեն զունկնդիրս 'ի հաւատալ. վասն որոյ ճարտասանք ջան դնեն ըստ կարի՝ մեծարու վկայից բանիւք ամրապնդել զփաստս իւրեանց. ցուցեալ թէ ոչ ինքեանք միայն՝ այլ և բազում այլ անկաշառ դատաւորք այնպէս վճռեալ են գրով կամ ձայնիւ զառարկայէն: Վկայք և վկայութ̃ք բաժանին յաստուածայինն և 'ի մարդկայինն. առ առաջինն վերածին օրէնք՝ հրամանք և ամենայն բանք աստուածաշունչ մատենից, զորս միայն 'ի քարոզս, 'ի ներբողեանս սրբոց, և յաստուածաբանական ճառս արժան է 'ի կիր առնուլ. 'ի նոյն վերածին ըստ իմիք և սրբազան երդմունք՝ խաչիւ և աւետարանաւ վաւերացեալք, օրէնք և կանոնք մեծաւորաց եկեղեցւոյ: Մարդկային վկայք 'ի չորս կարգս բաժանին, որք են, ճարտար, անձնափորձ, ականատես, և ականջալուր,

Ճարտար կոչի՝ որ քաջ ժառանգէ զտեսական ճանաչումն (theorie) գիտութ̃ կամ արհեստի իրիք, ոպ̃ քերականութ̃, ճարտասանութ̃, բժշկութ̃. որոյ ձայնաւոր կամ գրաւոր վկայութ՟ն պարտիմք հաւատալ, թէպէտ և ոչ առանց ամենայն բացառութ՟ • այլ ըստ չափու տեղեկութեան նորա ։

Անձնափորձ կամ փորձառու անուանի հասունացեալն ոչ միայն տեսական, այլ և գործադրական գիտութ՟ (pratique) • որում նոյնպէս արժան է հաւատս ընծայել՝ բայց զգուշութեամբ ։

Ականատես ասի վկայն՝ եթէ անձամբ առաջիկայ և տեսանող լինէ անցիցն՝ զոր պատմէ • իսկ եթէ ոչ ինքնին տեսանող՝ այլ միայն յայլոց լուեալ իցէ՝ զոր աւանդէ, Ականջալուր անուանի • բանք այդպիսեաց ևս ունին յարգ ինչ և կշիռ, բայց պէսպէս զգուշութ՟ք շրջափակեալ ։ Ընդ դոքօք դասի և անձնական փորձառութ՟ն մերոյ իսկ զգայարանաց, երբ անխաբ զփորձ առեալ իցեմք զնոյն՝ զորոց բանք իցեն • միայն թէ ՚ի փորձառութ՟ անդ պահեալ իցեմք զկանոնսն՝ ՚ի տրամաբանից հրամայեալս ։ Բաց յայդցանէ առ վկայութիւն մարդկան վերածի և նոցայն

§ 92 Օրինակ, յարացոյց, Գործադրութիւն •

Առողջախորհուրդ մարդիկ՝ ոչ միայն խօսելով, այլ և գործելով և կրելով իւրեանց տան մեզ վկայութ՟, թէ այս ինչ՝ այսպիսի է, և այն ինչ՝ այնպիսի • ըստ որում բանք ասին ձայնաւոր վկայ • իսկ գործք և կիրք անձայն կամ հայելի վկայ • բայց սորայս զօրութ՟ այնչափ առաւել է քան զնորայն, որչափ դժուարին է գործել քան զխօսել • Յայն սակս և գործք կամ օրինակք գործոց այլոց կարի բռնադատիչ փաստ են՝ թէ ՚ի ձեռս ճարտասանից առ ՚ի հաստատել զբնաբան ինչ, և թէ ՚ի միտս ունկնդրաց, մանաւանդ՝ ռամկաց • որք ծածուկ ինչ բռնութ՟ ստիպին հաւատալ գործողաց, շարժիլ ՚ի նախանձ օրինակելոյն, և յանձին բերել զնմանութիւն նորա • այդորիկ աղագաւ յաճախ վարեն զսա թէ սրբազան և թէ արտաքին մատենագիրք • որպէս տեսանի ՚ի գործս և 'ի թուղթս առաքելոյ․ յորս յառաջ բերին յօրինակ՝ գործք և կիրք Նահապետաց և մարգարէից՝ առ 'ի վկայել ճշմարտու՟ե ինչ նոր օրինաց․ նոյնպէս և իրաւագէտք՝ օրէնսգէտք և կենցաղագէտք յոլով ուրեք օրինակաւ գործոց այլոց՝ նախնեաց կամ ներկայից՝ ապացուցանեն զառաջարկեալն իւրեանց․ իբր զի որպէս բանք՝ նոյնպէս և գործք այլոց՝ մանաւանդ վեհագունից և մեծաւորաց՝ իբրու օրէնք համարին գործոց հատակաց․ և թերևս սովին տեսու՟ե՝ 'ի լեզուի մերում օրինակն ածանցի յօրինաց, ո՟ղ թէ նուազական կամ թեթև օրէնք․ զի արդարև օրինակ բարի գործոց այլոց բուռն զօրու՟ե շարժէ զմեզ 'ի նմանել նոցա․ և ճարտասանք իսկ՝ երբ ունին յառաջկայ զներգործու՟ե ինչ, պարտական են՝ յետ բերելոյ զներքին կամ զիրական փաստս՝ գտանել զքաջայարմար օրինակս գործոց այլոց․ և զի սոքա միայն 'ի պատմագրութիս գտանին, յայս մանէ հարկ 'ի վերայ դնի ճարտասանից լիուլի տեղեակ լինել պէսպէս պատմու՟եց, զի 'ի դիպող ժամու մարթասցին առնուլ անտի ինքեանց փաստս․ միայն՝ զգուշլիցին մի՛ կարի թախանձել զզօրու՟ե նոցին․ իբր զի օրինակն առ ռամիկս ազդէ առաւելապէս՝ և ոչ այնչափ առ իմաստունս․ զի սոքա ոչ եթէ զօրէնս ըստ գործոց դատեն, այլ ընդ հակառակն՝ զգործս ըստ օրինաց․ որովհետև ըստ առակի իրաւագիտաց՝ օրէնք ոչ հաստատին կամ ստին 'ի գործոց, այլ գործք՝ յօրինաց։

Ակյու՟ն և օրինակ՝ ո՟ղ և ոմանք 'ի նախընթաց համեմատանաց՝ կրկնակի նկատին, մի՝ իբր ներգործութ՟իք ճարտասանին, զորոց սորև ունիմք խօսել․ և միւս իբր առնչակից որակութ՟իք կամ համեմատանք առարկայից․ և յայս միտս կարգեսցաք զնոսա 'ի շարս համեմատանաց։

§ 93․ Գոքին են ահա գլխաւոր համեմատանք էակաց ընդհանրապէս և 'ի համառօտ տեսակք․ զորոց՝ որ կամիցին առաւելագոյն ինչ ծանօթանալ, գտցեն առ Բնազանցախօսս և առ իմաստասէրս, որոց անկ է ընդ երկար ճառել զնոցունց։

'ի միտ առ աստանօր՝ թէ զհանգամանս էակաց զորս կարգեցաք մինչև ցայսվայր թուով իբր վաթսուն, նախնիք կոչեցին՝ հասարակ տեղիս, զորս և բաժանեցին 'ի ներքինս և յարտաքինս. առ ներքինս վերածին առ նոսա վեշտասան սոքին, սահման, թուումն մասանց, ստուգաբանութիւն, լծորդք, սեռ, տեսակ, նմանութիւն, աննմանութիւն, հակադրութիւն, պարագայք, նախընթացք, հետևանք, ընդդիմամարտք, պատճառ, գործ, և բաղդատութիւն. իսկ առ արտաքինս՝ վեցեքին սոքա, օրէնք, համբաւ, արձանագիր, երդումն, տանջանք, և վկայք: Բայց յայդցանէ 'ի կացորդական հանդիսի նշանակեն զերիս տեղիս, որք են, վայելչական, օգտակար, և դժուարին. 'ի բաղխոհական հանդիսի՝ զվեց, վայելչական, օգտակար, հարկաւոր, դիւրին, բերկրալի, և փառաւոր. իսկ ատենական հանդէսին անտեղի է առ նոսա. զի ոչ նշանակեն ինչ: Սակայն դոքա զբուն տեղիս կամ զհանգամանս առարկայից շփոթեցին ընդ ներգործութեանց ճարտասանին. զոր վասն զի չէ մարթ աստանօր յստակ իմացուցանել ուսանելեաց՝ թողումք բացատրել սորև 'ի վախճանի վերաբանութեանց:

§ 94. Յիշատակեալ հանգամանքդ՝ ընտրականք ոմանք են և հանրականք. և բայց 'ի դոյունց գտանին այլ ևս անհամարք. զորս խորշելով յերկարաբանութենէ ոչ 'ի մէջ բերաք. այլ կամեցաք զայս ընդհանուր կանոն աւանդել համբակաց՝ թէ բայց 'ի նիւթական գոյականաց (տես 'ի քերկն, յեր. 14) միւս ամենայն բառք միշտ զհանգամանս նշանակեն զէակաց. յորոց աներևոյթ անուանեալ բայք զզօրութիւնս էակաց բացատրեն. իսկ միւս ածական անուանք, ընդունելութիւնք, նախադրութիւնք, ածական դերանուանք, և յոլովք 'ի վերացեալ գոյականաց՝ կամ զորակութիւնս կամ զքանակութիւնս և կամ զառնչութիւնս էակաց նշանակեն. որպէս և մակբայք ամենայն՝ զհանգամանս ներգործութեանց և կրելութեանց. վասն որոյ յորդոր լինիմք ճարտասանից և քերթողաց՝ զի ուր մեք 'ի շահ օգտի նոցա 'ի մի վայր հաւաքեցաք 'ի քերականութեան զհոլովելի ածականս միայն , նոքա 'ի նորատիպ բառարանէ անտի (զոր տպագրել սկսան արժանագոյն Հարքն Մխիթարեանք) արտագրեսցեն զամենայն ածական անուանս . բաժանելով զնոսա յերիս տեսակս . յորոց յառաջնումն գրեսցեն զներբողականս, իմա՝ որք զբարութիւնս և զայլ գովելի հանգամանս առարկային բացատրեն . որպիսի են , ազնիւ, ախորժելի, ախտահալած , ևն . յերկրորդումն զպարսաւականս , կամ որք զվատ հանգամանս էակաց յառաջ բերեն . ոպի են ագահ , ալեկոծ , ախտալից , անօրէն, ևն. իսկ յերրորդումն՝ զհասարակս , որք թէ բարւոյ և թէ չարի մասին պատշաճեսցին . ոպի են , ազդու, աճեցուն, ամուր , աշխատալից , ևն . և 'ի կամիլն ճառել զառարկայէ ինչ՝ քաղեսցեն զտեսակսդ (յայտ է՝ համբակք, զի զարգացեալք անկարօտ գոն այդպիսի նպաստից) . զի այդուիկ դիւրաւ մարթին գտանել զբազմապիսի հանգամանս իրին . վասն զի թէ և ոչ ամենեքին, սակայն յոլովք 'ի նոցունց յանկին միշտ յամենայն էակս . յորոց և բազում զգուշութիւն ընտրեսցեն՝ (ոպ և 'ի քերականութեան ասացաք , յեր, 381—384) զառաւել քաջայարմարսն և զհամապատշաճսն . քան զի խտիր ծանր է ընդմէջ նոցա . և գործ է գտանել զբնաւորսն , կամ ըստ արժանւոյն բացատրել զնոսա . յօրինակի համար՝ ոչ ուղիղ լինի ասել այժմ ընդ շարականին,, Լոյս մեծ և ահաւոր,, զի մեծն զչափելի քանակութիւն ասէ, որ ոչ ճշդիւ յանկի 'ի լոյսն . այլ ուղիղ ևս լինէր ասել,, Լոյս սաստիկ և ահաւոր . թէպէտ և դոյլն ոչ դիտեմք զերանելի նախնիս մեր ստգտանել, այլ միայն զհամբակս զգուշացուցանել . զի և ոչ ամենայն գրուածոց նախնեաց՝ անխտիր արժան է նմանողաբար հետևել . ըստ որում գոն առ նոսա անհարթ հայկաբանութիւնք , նա՝ յաւէտ հելլենաբանութիւնք . յորոց սակի են գրութիւնք Դաւթի անյաղթի , Մովսեսի քերթողի 'ի գիրսն պիտոյից , և դոցին նմանք , զորս չէ արժան ընթեռնուլ անգամ համբակաց :

* * *

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ.

Յաղագս նպատակի ճառից, և միջոցաց առ ստացութիւն նորին կարևորաց.

§ 95. Ընդհանրական նպատակաց (scopus, finis).

Ըստ երրեակ հանրական ցեղից ճառից՝ երեք համարին և գլխաւոր նպատակք կամ վախճանք ճարտասանից և ճառաբանութ՟ նոցա. 1 յուսուցողական ճառս՝ հրահանգել՝ լուսաւորել և յաղթահարել միայն զմիտս ունկնդրաց ճշմարտութ՟ առարկային. 2 'ի սրտազգած ճառս բայց 'ի մտավարժութ՟է նա և վարակել զսիրտս նոցա գեղեցկութ՟ կամ տգեղութ՟ առարկային. 3 իսկ 'ի կամաշարժական ճառս՝ բաց 'ի մտավարժութ՟է և 'ի սրտազգածութ՟է, գրգռել կամ խափանել զգրգռութ՟ կամաց նոցա բարութ՟ կամ չարութ՟ առարկային. ուստի մտավարժութ՟՝ սրտազգածութ՟ և կամաշարժութ՟ ներգործապէս առեալք (ք՟ իբր ներգործութ՟ք ճարտասանին նկատեալք) համարին երեք միջոցք. յորոց ընդ ձեռն ճարտասանք 'ի ձեռս բերեն զնպատակ իւրեանց. իսկ առեալք կրաւորապէս և արարածաբար (այն է՝ երբ պտուղք 'ի ներգործութ՟ց ճարտասանից արտադրեալք 'ի հոգիս ունկնդրաց) համարին բուն իսկ նպատակք կանխաւ 'ի ճարտասանից դիտեալք. ըստ առաջին տեսութ՟ն ունիմք խօսել զսոցունց ստորև. իսկ ըստ երկրորդին աստանօր:

Առաջին նպատակն կամ մտավարժութ՟ն հինգ ինչ պահանջէ առ լրութ՟ իւր. 1 զի տեսիլք՝ նկարք՝ գաղափարք՝ և իդէայք ճանաչողական կարողութ՟ ունկնդրաց լուսաւորեսցին և կատարելագործեսցին. 2 զի միտք նոցա փաստիւք յաղթահարեսցի զճշմարտութ՟է իմաստից. 3 զի 'ի մտաց նոցա հերքեսցին երկբայութ՟ք՝ մոլորութ՟ք և սխալական իմաստք ընդդէմ ճշմարտութ՟. 4 զի արծարծես ցի մտադրութ՟ և ուշադրութ՟ նոցա առ բանս ճարտասանին․ Եւ զի տպաւորեսցին նոյն բանք 'ի յիշողութ՟ նց՟։

Երկրորդ նպատակն կամ սրտազգածութին յաջողի երկոքումբք․ մի՝ զի 'ի սիրտս ունկնդրաց կաթեսցին քաղցր հեշտալի զգածմունք․ և միւս՝ զի փանեսցին անտի դառինք։

Իսկ երրորդ նպատակն կամ շարժումն կամաց պահանջէ, զի առ կամս ունկնդրաց մատուսցին խթանք առ բարին, և զի հեռասցին անտի հրապոյրք չարեաց։

Որպէս զի յաջողակի և արդեամբք մարթասցին ճարտասանք 'ի ձեռս բերել զայդոսիկ, և մի՛ հողմոյ հոսեսցեն զամենայն ջանս, հարկ է նոցա քաջահմուտ տեղեկութ՟ խելամուտ լինել, նախ՝ թէ զի՛նչ և քանի՞ են կարողութ՟ք մարդկային հոգւոյ, և պտուղք 'ի նոցունց արտադրեալք․ և թէ ո՛յք են կատարելութ՟ք, թերութ՟ք և այլ հանգամանք նոցա․ և երկրորդ՝ թէ որո՛վք միջոցիւք մարթ իցէ աճել 'ի կարողութ՟դ, կատարելագործել զպտուղս նոցին և 'ի ձեռս բերել զնպատակդ․ իբր զի առանց այդց ծանօթութ՟ց՝ բնաւ անյուսալի է նոցա յաղթական հանդիսանալ, կամ օգուտ ինչ քաղել 'ի ճառաբանութ՟ց․ վասն այդորիկ կարևոր համարիմք սակաւուք յոյժ աւանդել յայսմ վայրի զհանրական գիտելիս զառաջնոյն․ իսկ զերկրորդն թողումք յառաջ բերել 'ի գլուխդ՝ որ զկնի։

§ 96․ Կարողութիւնք հոգւոյ և բաժանումն նոցա․

Զկարողութ՟ց հոգւոյ և զպտղոց նոցա՝ անլոյծ կնճիռք են առ հին և նոր իմաստասէրս և հոգեբանս․ և մեզ ոչ հարկ և ոչ կար գոյ մխել յանդունդս իրացդ․ վասն որոյ շատ համարիմք 'ի մէջ բերել զամփոփակի ընկալեալս միայն․ յանձն արարեալ՝ որոց կարօտին՝ ընթանալ 'ի բուն աղբիւրս նոցա, 'ի մատեանս եւրոպացւոց, և առաւել՝ գերմանացւոց․ որք 'ի հռչակաւորն

Քանթէ և այլք սքանչելի սրամտութբ գերազանց հանդիսացան յամենայն ազգս գիտութեց :

Արդ տեսանի հաւաստի փորձիւ. թէ ամենաբարի Արարիչն անդէն 'ի ստեղծագործութեն տարրացուցեալ է 'ի հոգիս կենդանեաց զբնական հակամիտութիս և զարտաձգութիս ինչ. ըստ որոց հոգին 'ի ներքուստ յինքենէ իբրու թէ եռացեալ փրփրի և գրգռի առ 'ի հանապազորդել զգոյութի իւր, և առ 'ի վարել զմիջոցս այնր հանապազորդութե կարևորս. զհակամիտութիսդ զայդոսիկ միով հանրական ձայնիւ կոչեմք ճգանս (stimulus, conatus), որք երբ մտածին իբր անգործք և ծրարեալք 'ի հոգւոջ՝ անուանին կարողութի. երբ արծարծեալ գրգռին՝ կոչին զօրութի. իսկ երբ սկսանին ազդել արտաքոյ քան զինքեանս և իրաւորել զառարկայս, ասին՝ ներգործութի կամ գործողութի : Բաժանին ճգանք ընդհանրապէս յերիս դասս. յանձնականս, 'ի սերնդականս, և յընկերականս. անձնականք դուն գործեն յարատևել զգոյութի անհատից՝ յորս ենն, գտանել և վարել զմիջոցս առ այն կարևորս, որպիսի են՝ 'ի կիր առնուլ անխափան զզգայարանս և զմասունս մարմնոյ, ուտել, ըմպել, սնանիլ, խաղալ, հանգչիլ, առողջ և ամբողջ լինել, խորշիլ 'ի վնասակարաց, սիրել զկեանս, երկնչիլ 'ի մահուանէ, բժշկել զախտս. միով բանիւ՝ գտանել և վայելել զամենայն ինչ՝ որք հարկաւոր իցեն առ 'ի պահել զկենդանութի իւրեանց. սերնդականք ձգտին հանապազորդել զինքեանս 'ի ճետս և 'ի զարմս իւրեանց, յորմէ բխեն բնական խթան մերձաւորելոյ արուի և իգի, սէր առ ծնեալ զաւակս, հոգ սնուցանելոյ և խնամելոյ զնոսա, և որ ինչ առ դոյնս պահանջին. իսկ ընկերականք զհետ պնդին կենակցիլ ընդ համանմանս, յորմէ ծնանին համակրութի առ ազգակիցս, հակակրութի առ աննմանս, կցորդ լինել կենաց և կրից այլոց, և որ ինչ վերածին առ ընկերական կեանս կենդանեաց :

Անձնական ճգանք դարձեալ բաժանին յերիս սեռս, որք կոչին՝ ճիգն ճանաչելոյ զաւարկայս, ճիգն զգածելոյ աւարկայիւք, և ճիգն բաղձալոյ կամ գրգռելոյ յիրաւորել զաւարկայս. սոքա են երեք ազգք կենաց հոգւոյ, կամ երեք աստիճանք կենդանութե, ըստ որոց զօրեն կենդանիք յարատևել զգոյութի իւրեանց. և առանց սոցա անօգուտ լինէին նոցա նախայիշեալ ցեղք ճգանց։

§ 97. Ընդհակ այդ ազգք ճգանց շնորհեցան յԱստուծոյ և մարդկայինս հոգւոյ, բայց բազմադիմի գերազանցութբ կատարելագործեալք, և 'ի լաւագոյն աստիճան ամբարձեալք. վասն որոյ և կոչին բանական ճգանք, յորոց զսերնդականս և զընկերականս 'ի կողմն եդեալ իբրու ոչ անկաւորս մեզ 'ի ժամուս, 'ի մէջ առցուք զանձնականս միայն. զորոց արժան է գիտել, թէ 'ի ծլարձակութե և 'ի յառաջատուութե դոցա՝ հարկաւ զանազանելի են 'ի միմեանց, 1 ինքնակայն կամ հոգին՝ յորում բունաւորին ճգանքդ. 2 նոյն իսկ ճգանք, 'ի վիճակի կարողութե, զօրութե և ներգործութե մտածեալք. 3 արտաքին աւարկայք՝ յորս դիմեն դոքա ըստ յատկութե իւրեանց. և որոց ստացութի և վայելումն՝ կամ բարութ իւրով երջանկացուցանէ զհոգին, և կամ չարութն թշուառացուցանէ զնա. 4 ծարաւ հոգւոյն, այն է՝ վիճակն յորում զուրկ և հեռի գտանի նա յաւարկայէն. 5 յագուրդ հոգւոյն, որ է վիճակն ժառանգելոյ նորա զաւարկայն. 6 շարժառիթ որ զհոգին և զճգանս նորա հրապուրէ յարձակիլ յաւարկայն, զորմէ 'ի վերոյ ասացաք. 7 կերպ դիմելոյ ճգանայն յաւարկայն այսու կամ այնու եղանակաւ. 8 արարածք կամ պտուղք (productum) 'ի ներգործութց ճգանացդ արտադրեալք. ոմն են՝ դիտակք տեսիլք և պատկերք 'ի զգայական կարողութէ, գաղափարք՝ իմաստք՝ և իդէայք 'ի մտաց ստեղծագործեալք, քաղցր և դառն զգածմունք 'ի սրտէ բղխեալք, և հետամտութի կամ յետադարձութի 'ի կամաց ելուզեալք, զորոց ստորև. 9 նպատակ՝ զոր կանխաւ դիտէ հոգին 'ի դիմելն յաւարկայն. սա երբեմն նոյն է ընդ պտղոյն, և երբեմն օտար ինչ յայնմանէ․ բայց 'ի մասնաւորի հոգին ըստ ճանաչողականին բերի յԱստուածութիւն, 'ի կրօն, 'ի ճշմարտութիւն, յուղղութիւն, եւն. ըստ զգածողականին՝ 'ի գեղեցկութիւն, 'ի հեշտութիւն, յերանութիւն կամ յերջանկութիւն․ իսկ ըստ բաղձողականին՝ 'ի բարութիւն, յազատութիւն, յանձնիշխանութիւն, յիրագործութիւն, եւն․ 10 միջոցք որոց սատարութեամբ նկրտի հոգին 'ի ձեռս բերել զառարկայն կամ զնպատակն․ 11 վճիռ կամ դատակնիք (decretum), ըստ որոյ հոգին բացորոշէ 'ի գործ դնել զմիջոցս եւ ստանալ զնպատակն․ 12 իրաւորութիւն, իրագործութիւն (realisation), այն է՝ իրական գոյացուցումն առարկային․ 13 արգելք եւ խոչընդոտք որք մերթ խափան լինին հոգւոյն եւ չտան նմա ստանալ զնպատակն․ 14 դեղք կամ դարմանք, որք 'ի բաց վանեն զարգելս եւ միաւորեն զհոգին ընդ առարկային․ այլովք հանդերձ․ զորոց բազում ինչ հոգեբանք ։

Զկնի համառօտ ծանօթութեանցդ՝ մատչիմք 'ի բացատրել 'ի մասնաւորի զերրեակ կարողութիւնս հոգւոյ եւ ըզպտուղս նոցա․ եւ առ յստակ մտառութեան ուսանելեաց՝ զգլուխս բաժանել յերկուս յօդուածս, յառաջնումն խօսիմք զճանաչողական կարողութենէ եւ զպտղոյ նորա․ իսկ յերկրորդումն՝ զզգածողական եւ զբաղձողական կարողութեանց, զոյգ ընդ պտղոյ նոցին սակաւ բանիւք ։

ՅՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ.

Յաղագս ճանաչողական կարողութեան, և պտղոց նորա.

§ 98. Զգայութիւն, բաժանումն, և պտուղք ճանաչողական կարողութեան.

Գլխաւոր պաշտօն ճանաչողական կարողութեան մարդոյ է ընդունիլ և յինքն առնուլ զտպաւորութիւնս առարկայից, նոյն և կերպաւորել զգաղափարս էակաց և զհանգամանաց նոցա. զատանի սովորաբար յերկուս աստիճանս. 'ի ստորին՝ որ զգայութիւն կոչի. և 'ի վերին՝ զոր միտք կոչեմք։

Զգայութիւն կամ զգայողութիւն (sensatio) է մարմնական կարողութիւն, որ կրէ և առնու զտպաւորութիւնս կամ զազդեցութիւնս առարկայից, և բաժանի յարտաքին և 'ի ներքին։ Արտաքինք համարին հինգ, տեսանողական, լսողական, ճաշակողական, հոտոտական, և շօշափական. որոց գործիք 'ի մարմնի են աչք, ականջք, քիմք, ռնգունք, և ձեռք կամ բոլոր մակերևոյթ մարմնոյ. որոց ներգործութիւնք յայտնի են ամենեցուն անկարօտ յերկար բացատրութեան։ Ներգործութիւնք ամենայն արտաքին զգայարանացդ միով հանրական ձայնիւ անխտիր կոչին դիտողութիւն (intuitio), իսկ պտուղք 'ի ներգործութեանցդ արտադրեալք՝ անուանին դիտակ (intuitus). զորս չէ պարտ զաչաց միայն իմանալ, այլ ոպ՟ ասացաք՝ առհասարակ զամենայն զգայութեանց։

Ներքին զգայութիւն յինքն ընդունի զփոփոխութիւնս 'ի ներքս 'ի մեզ պատահեալս. և բաժանի լայնաբար խօսելով 'ի վեց ազգս, որք են. **1** ըմբռնողութիւն (perceptio) որ առնու զազդեցութիւնս և զտպաւորութիւնս էակաց. **2** ինքնաճանաչութիւն (conscientia), ըստ որոյ հոգին յիւր վերայ ցոլանայ կամ զինքն զննէ և ճանաչէ. **3** ընտրողութիւն (discretio), որով հոգին զինքն յայլոց, զայլս յին քննէ, և զիր յիրաց որոշելով խորէ ․ 4 Երևակայութի̅ (imaginatio, phantasia) որ նկարէ զպատկերս քանակաւոր առարկայից, բաղադրէ և լուծանէ զայնս ըստ կամի, և 'ի զանազան մասանց զնոր նկարս ստեղծանէ ․ պտուղ սորա կոչի պատկեր կամ նկար ․ 5 Ուշ կամ յիշողութի̅ (memoria), որ զպատկերս առնու և պահպանէ յինքեան իբրու 'ի գանձատան ․ իսկ 'ի ժամու պիտոյից արտաքս տայ, և յայնժամ կոչի յիշատակութիւն ․ 6 Նմանաբերութի̅ (repraesentatio), որ զնկարս և զնմանութի̅ս առարկայից վերստին յառաջ բերէ, և ոչ թէ յանդիման աչաց հոգւոյն կացուցանէ ։ Զընդարձակ տեղեկութի̅ս ամենայնի այդոցիկ գտցեն ցանկացողք առ հոգեբանս և տրամաբանս ։

§ 99 ․ Միտք, ներգործութիւնք և պտուղք նորա (intellectus) ․

Միտք կամ խելք է աստուածաձիր աննիւթ կարողութի̅ հոգւոյ, որոյ պաշտօն է խորհել կամ խոկալ, այն է կերպաւորել և դիտաւորել յինքեան զգաղափարս և զիդէայս էակաց, և բացորոշել զհանգամանս նոցա, մանաւանդ զանզգալեաց և զանենթակայից (իմա ոչ կապելոց ընդ տեղւոյ և ընդ ժամանակի) ։ Ներգործութի̅ք մտաց թէպէտ բազմաթիւ են և յոգնացեղ, սակայն գումարին յերիս գլխաւորս ․ որք են, 1 գաղափարել զառարկայն, որոյ արդիւնքն կոչի՝ գաղափար ․ 2 իմանալ զառարկայն, այն է բացորոշել զհանգամանս նորա ․ զորոյ զարտադրեալն կոչեմք իմաստ ․ 3 շարաբանել զառարկայսն, այն է՝ զքանի մի իմաստս կապել ընդ իրեարս, և կազմել զնոր իմաստ բաղադրեալ ․ զորոյ զպտուղն կոչեսցուք նախադաղափար ։ Զտեղեկութի̅ ներգործութեանցդ և զպտղոց նոցա՝ կարի պիտանիս գիտելով համբակաց՝ յանձն առնումք սակաւ ինչ յերկարել աստանօր զբանս ․ բայց նախ ցուցանել նոցա զխտիրն ընդ մէջ զգայուն և մտաց, որք յերիս հիմունս հաստատին ․ նախ՝ յայն զի զգայութիւն առանց միջադրութեան այլոց ինչ իրաց հպի և յարի յառարկայն, իսկ միտքն միջնորդութեամբ զգայարանաց. երկրորդ զի զգայութիւն ըմբռնէ զառարկայն՝ ոչի առաջակայ գտանէ զնա ինքեան, զօրէն համբակի պատկերահանից, որ մեքենապէս ընդօրինակէ զնկարն առաջադրեալ նմա 'ի վարժապետէն, իսկ միտքն ոչ շատանայ այդուիկ, այլ ինքնին քրքրէ զառարկայն; մտանէ յամենայն խորս և 'ի խորշս նորա, և դատաւորաբար որոշէ վճռէ և սահմանէ զամենայն հանգամանս նորա, ևս և զառ 'ի զգայարանաց անմերձենալիս. և երրորդ՝ զի զգայութիւն միշտ կապեալ է ընդ տեղւոյ, ընդ տարածութեան, ընդ քանակութեան և ընդ ժամանակի, իսկ միտքն ազատ է 'ի դոցունց, և աննիւթութեամբ իւրով անցանէ սլանայ անդր քան զամենայն տեղիս և զժամանակս:

'Ի բացատրել մեր աստանօր զկարողութիւնս հոգւոյ և ըզպէսպէս ներգործութիւնս նորա, յարմար ևս համարիմք՝ յարարածոց նոցա սկսանել զթել բանիցն, և ընդ նոքօք զներգործութիւնս մտաց լուսաբանել. զի քան զսոսա՝ նոքին առաւել ևս պիտանեգոյն են համբակաց. վասն որոյ առնումք 'ի ձեռն նախ զգաղափարս, երկրորդ զիմաստէ, և երրորդ զշարաբանութենէ:

§ 100. Զինչութիւն գաղափարաց (conceptus, notio).

Արդ գաղափարն է իբրու նուրբ պատկեր և հայելի էակաց, կամ ընդ աղօտ ծանօթութիւն զինչութեան և որպիսութեան նոցա, զոր հոգի մեր յօրինէ և կերպաւորէ քառեակ ներգործութեամբք. իբր զի 'ի կամել նորա յօրինել՝ յօրինակի համար՝ զգաղափար եռանկեան, **1** 'ի փոխ առնու յերևակայութենէ զպատկերս ձևոյդ, և ըմբռնէ զայնս պարզապէս. **2** ապա՛ նկատէ զբոլորն և զմասունս նորա, զննէ և գտանէ՝ զի գոն 'ի նմա բազմադիմի մասունք (հանգամանք), այնք են, կէտք, գիծք, անկիւնք, կողմունք, խարիսխ, տարածութիւն, թիւ գծից և անկեանց, դիրք նոցա ուղիղ կամ խոտորնակ, ևն. **3** զմասունսդ կամ զհան գամանսդ ընդ իրեարս համեմատեալ գտանէ՝ զի ոմանք համաձայն են ընդ միմեանս , և կարեն կեալ 'ի միասին 'ի միում ենթակայի , իսկ ոմանք հակառակ են և վանեն զիրեարս 'ի նոյն ենթակայէ · դարձեալ զի ոմանք հասարակ են բազում ենթակայից , զորս կոչէ նա հանրանիշս · իսկ ոմանք՝ սեպհական են ոմանց միայն , ըստ որոյ կոչէ զայնս՝ յատկանիշս · Եւ զհակառակ հանգամանսն վերացուցեալ 'ի բաց արձակէ իբրև զանհարկաւորս ինչ առ ժամս · իսկ զհամաձայն հանգամանս (զյատուկս և զհասարակս) 'ի ներքս բերեալ և 'ի մի գումար ժողովեալ , կազմէ զայսպիսի փունջ մասանց ,, ձև յիրից անկեանց և յիրից կողմանց ,, և ահա այս փունջ հանգամանաց է՝ որ կոչի գաղափար եռանկեան · որ ըստ իրին է իբրու զաւակ և ծնունդ մտաց , կամ ձեռագործ արարած նորա · նոյն և պատկեր՝ հայելի՝ նշան՝ և երես փոխան արտաքին առարկային կամ էակին ։

Զօրինակ եռանկեանդ խորհրդով 'ի մէջ բերաք վ̅ա դիւրին մտառուե̃ համբակաց · բայց ճշդիւ քննելով՝ գտանեմք՝ զի միտքն յառաջ քան զամենայն յօրինէ ըզգաղափարս մասանց , կամ որ նոյն է՝ զհանգամանաց · առանց որոյ անհնար է նմա կազմել զգաղափարս էակաց · ո՛չ յօրինակիդ հարկաւ ենթադրի՝ ունել մտաց կամ առ տեղեաւն կերպաւորել զգաղափարս կիտի, գծի , անկեան, ձևոյ , ևն̃ · ապա թէ ո՛չ՝ չզօրէր նա բաղադրել զգաղափար եռանկեան · յորմէ և ինքնին իմացեալ լինի՝ թէ բուն և իսկական գաղափարք՝ նախ առաջին ընդօրինակեալ լինին զհանգամանաց , և ապա զբաղադրեալ էակաց · ևս՝ թէ հանգամանք և գաղափարք՝ մի և նոյն իրք են , այսպիսի խորու̃րդք՝ զի նոքա յէակն անդ են , իսկ սոքա 'ի միտս մարդոյ · նոքա են սկզբնատիպք , սոքա 'ի նոցունց ածանցեալք · նոքա են իբրու կենդանի մարդիկ , իսկ սոքա պատկերք և կերպարանք նոցա , 'ի մտաց և 'ի միտս մեր՝ իբրու 'ի թղթի ձևացեալք · նոքա են կարգեալք առ 'ի բաղադրել զէակս արդեամբք և իրօք , իսկ սոքա կարգին առ 'ի բաղադրել զիմաստս, և առ 'ի ծանուցանել մեզ զինչութիւն էակաց ։

§ 101. Հարկ է զգուշանալ համբակաց՝ չշփոթել զգաղափարս ընդ պատկերակերպութեանց երևակայութեան. զի թէպէտ հեղինակ երկոցունց ևս նոյն մի բանական հոգին մարդոյ է, որպէս ենթադրեմք, բայց և այնպէս բազում խտիր է ընդ մէջ նոցա. իբր զի պատկերակերպութիւնք նիւթական ինչ են, մարմնական և զգայական. իսկ գաղափարք աննիւթ են, մտաւորական և հոգեղէն. նոքա գտանին և յանասուն կենդանիս, իսկ սոքա սեպհական են մարդկան միայն մտաւորաց. նոքա երևեցուցանեն զիրս նիւթաւորս, սոքա զաննիւթս՝ ըղ վերացեալս և զանենթակայս. նոքա կերպաւորին սպասաւորութեամբ ներքին և արտաքին զգայարանաց մարմնոյ, սոքա չկարօտին բնաւ զգայութեանց, այլ խոհական և որոշական զօրութեան մտաց. որ որոնէ գտանէ և դասաւորէ զսոսա ինքնին ։

Յորժամ հարկ լինիցի ձայնիւ կամ գրով արտայայտել զգաղափարս մտաց, ըստ նոցանէ՝ և զհանգամանս իրաց, յայնժամ 'ի կիր առնումք զմիակ բառս, մանաւանդ զգայական անուանս. զի սոքա են ցուցակք և երևեցուցիչք նոցա. վասն որոյ ձայնքս՝ մարդ, արծիւ, ջուր, սրբութիւն, գեղեցկութիւն, խորհել, ըմպել, ևն, նախ առաջին վարին իբր երեսփոխանք, և նշանակեն զգաղափարս մտաց, և ապա դոցա միջնորդութեամբ՝ նա և զնոյն իսկ զէակս և զհանգամանս նոցա. որով և գոյական անուանք 'ի լեզուի՝ լինին ոչ թէ հայելիք որք երևեցուցանեն զգաղափարս. իսկ գաղափարք լինին հայելիք՝ որ յանդիման առնեն զհանգամանս ։

§ 102. Սեռք և ցեղք գաղափարաց.

Գաղափարք նախ առաջին բաժանին յերկուս հանրական սեռս. յէակացոյցս՝ որք զէակ ինչ յանդիման առնեն, ոպ̄, զմարդ, զծառ, զչուխայ. և 'ի հանգամանացոյս՝ որք զլոկ հանգամանս էակայ առաջի առնեն մտաց, որպէս, զգեղեցկութ̄ի մարդոյ, զմեծութ̄ի ծառոյ, զսևութ̄ի չուխայի. և դոքա երկոքին ևս դարձեալ բաժանին յայնչափ սեռս և 'ի ցեղս, որչափ նոյն իսկ էակք և հանգամանք. ըստ այդոյիկ յիշատակին առ տրամաբանս՝ գաղափարք աննիւթք և նիւթականք, իմանալիք և զգալիք, վերացեալք և թանձրացեալք, մասնաւորք և ընդհանուրք, պարզք և բաղադրականք, պայծառք և շփոթք, բացորոշք և խառնափնդորք, սեռականք՝ տարբերականք և ցեղականք, գոյացականք՝ հակասականք և փոփոխականք, դրականք և պակասականք, համաձայնք և հակառակք, բացարձակք և առնչականք, ներքինք և արտաքինք, նկարաւորք և աննկարք, և այլ դոյնպիսիք բազումք. զորս աւելորդ վարկանիմք վերստին բացատրել յայսմ վայրի. զի յայտնի է զլինելութ̄ դոցա յայնց՝ զորս վերագոյն լուսաբանեցաք զէակաց և զհանգամանաց։

Գաղափարք որովհետև պատկեր են էակաց կամ հանգամանաց, ըստ համաչափութ̄ կամ տարաչափութ̄ իւրեանց առ նախատիպն՝ բաժանին, 1 'ի ճիշդս կամ 'ի զուգաչափս՝ որք այնպիսի և այնչափ երևեցուցանեն զնախատիպն՝ որպիսի են նոքին արդեամբք. 2 յաւելագանցս՝ որք ընծայեն նախատիպին, զոր ինչ ոչն ունի. 3 'ի թերուս՝ որք պակաս ընծայեն կամ յապաւեն զնախատիպն, և 4 'ի շրջմոլիկս՝ որք ոչ զլոկ նախատիպն, այլ զնորին հակառակն երևեցուցանեն, ոպ̄ զչարն՝ բարի, զլոյսն՝ խաւար, զքաղցրն՝ դառն, ևն̄։

Գաղափարք յարաբերութ̄ առ նախատիպ իւրեանց բաժանին ևս, 1 'ի պատճենականս՝ յորս միտքն իբրու նորընծայ աշակերտ պատկերահանի մեքենայապէս ընդօրինակէ միայն զնախատիպն. 2 'ի սկզբնատիպս՝ զորս միտքն իբրու հեղինակ և բեղմնաւոր մայր՝ յինքենէ նորոգ ստեղծանէ հիմնաւոր ճշմարտութ̄. և 3 'ի կեղծահնարս՝ զորս առանց հիման և ճշմարտութ̄ կեղծէ միտքն ըստ քմաց · որպիսի են անուանեալքն՝ պայիկ, համբարու, նհանգ, յուշկապարիկ, շնկնճիթ, և այլ խօլական ուրուականք ։ տես ՚ի կարգիդ և զբաժանումն գաղափարաց յուղիղ և ՚ի մոլորական, ՚ի ճշմարիտ և ՚ի սուտ, և զայլ դոյնպիսիս ։

§ 103 · Զ՛որ և իցէ գաղափարս և զիդէայս մտաց (նոյն և զիմաստս և զշարաբանութ̅իս) ոչ̅ սատարութ̅ զգայարանաց կազմեն մարդիկ, նոյնպէս և նոցին սպասաւորութ̅ միայն զօրեն արտաքուստ բացայայտել զայնս և հաղորդել ընկերաց · սպասաւորութ̅իք զգայարանաց ընդհանրապէս կոչին՝ արտաքին կամ զգալի նշանք · և համօրէն բաժանին ՚ի բնատուր, որպիսի են ժպիտ, ծիծաղ, լալիւն · և ՚ի կամակացոյց, որ վերստին զատանի ՚ի հնգեակ կարգս · որք են, 1 շարժուած գլխոյ, աչաց, ձեռաց, մատանց, ոտից, ակնարկութ̅իք, քաղցր և խոժոռ հայեցուածք, ձեռնաձգութ̅իք, դոփիւն ոտից, կաքաւ, պէսպէս շարժուածք համերց, միմոսաց, դերասանաց, և դոյին նմանք · 2 ձայնք և հնչմունք անյօդաւորք, հառաչանք, ճիչ · 3 բառք նշանականք և հեգաւորք, առանձինն առեալք · 4 բարբառ, այն է՝ բառք ընդ իրեարս կապակցեալք առ ՚ի յայտնել զիմաստս, որ դարձեալ բաժանի ՚ի ձայնաւոր՝ զոր կոչեմք խօսք, լեզու, լեզուախօսութ̅ի, առասութ̅ի, զրոյց · և ՚ի գրաւոր, այն է՝ գծիւք և մրով դրոշմեալ ՚ի թղթի կամ յայլ նիւթս, որ առանձինն անուանի՝ Գրաբանութ̅ի (գրեալ բան կամ խօսք), ըստ որմէ և քաջ հմտութ̅ին գրեալ բանից միոյ կամ զանազան ազգաց և առարկայից՝ կոչի՝ Գրագիտութ̅ի (litteratura) · 5 արուեստակերտութ̅ի, ձեռագործութ̅ի, ըստ որում ամենայն արհեստաւորք զգաղափարս մտաց իւրեանց դրացուցանեն յարտաքին նիւթ · որպիսի են մանաւանդ ճարտասանք, երաժիշտք, պատկերահանք, արձանագործք, և դոյին նմանք ։

* * *

§ 104. Զինչութիւն իմաստից և դատողութեան (sententia, judicium).

Իմաստն է դատակնիք մտաց՝ զհամաձայնութիւն կամ զհակառակութիւն երկուց գաղափարաց ընդ իրեարս. կամ որ 'ի նոյն շրջի՝ է վճիռ մտաց զյարմարութիւն և զանյարմարութիւն այս ինչ հանգամանաց ընդ այն ինչ էակի. որպէս յասելն, մարդն է մահկանացու, մարդն ոչ է ամենագէտ, եթէ զօրեսցէ միտքն վճիռ հատանել զհամաձայնութիւն և զհակառակութիւն մակածականացդ ընդ ենթակայից նոցա, այն վճիռ անուանի իմաստ (իմացեալն, իմացածն). յորոյ 'ի կազմութիւն զուգընթանան վեցեակ ներգործութիւնք մտաց. որք են, ըմբռնել, խորհել, փաստաբանել, համարել, դատել, և հաճիլ կամ հաւանել:

§ 105. Ըմբռնելն է ներգործութիւն՝ որ առնու և ունի զերկուս գաղափարս պարզապէս, ըստ որում առաջի լինին նմա յերևակայութենէ կամ 'ի զգայութեանց. նոյն և խտրէ զմին 'ի միւսոյն, բայց 'ի հասարակի և ընդհանրապէս:

§ 106. Խորհել է որպէս թէ յածել զաչս մտացն մերթ 'ի մին, և մերթ 'ի միւս գաղափարն, համեմատել զայնս ընդ միմեանս, զննել թէ զիա՞րդ վերաբերեսցին առ իրեարս, զի՞նչ իցէ մին առ միւսով, համաձա՞յն թէ հակառակ իցեն, կապե՞լ զնոսա՝ թէ զատանել արժան իցէ: Աստանօր միտքն կա՛մ ինքնին անկարօտ այլոց ընտրողութիւն առնելով գտանէ զվերաբերութիւն երկուց գաղափարացն, լռելեայն ենթադրելով զքաջայայտութիւն նոցա ինքեան. և կա՛մ ոչ զօրէ ինքնին գտանել, այլ կարօտի 'ի մէջ ածել զայլ ոմն միջնորդ՝ առ ուսանելոյ 'ի նմանէ զորպէսն իրացդ. այս երկրորդ եղանակ կոչի փաստաբերութիւն կամ փաստաբանութիւն, զոր յայլում վայրի ունիմք մեկնել. վասն որոյ առ տեղւոյս ենթադրեմք՝ մտաց առաջին եղանակաւն վարել, և ինքեամբ տեսանել զվերաբերութիւն գաղափարացն:

§ 107 · Համարիլ կամ վարկանիլ (verihabitio) է ներգործութիւն, ըստ որոյ միտքն իբր զճշմարիտ ընդունի զգտեալն յինքենէ զյարաբերութիւն գաղափարաց, 'ի սակս յայտնի կամ լռելեայն փաստից առ վաւերութիւն նորին մատուցելոց · որ և ըստ չափու ազդուութեան փաստիցն բաժանի 'ի չորս աստիճանս · որք են, 1 ստուգութիւն կամ ստոյգ համարել՝ վասն բացայայտ լինելոյ ճշմարտութեան փաստիցն առանց կասկածանաց ստութեան և մոլորութեան · 2 վստահութիւն, երբ փաստք կարի յոյժ ծանրակշիռ են, և վտանգ մոլորելոյ անգոյ է, կամ յոյժ թեթև · 3 արժանահաւատութիւն, հաւանականութիւն կամ ճշմարտանմանութիւն, ուր փաստք առաւել են 'ի կողմն ճշմարտութեան քան ստութեան · 4 երկբայութիւն, յորում հաւասարաչափ երևին փաստք յերկոցունց կողմանց :

§ 108 · Դատելն է կնիք դնել դատին կամ վճիռ հատանել զհամաձայնութենէ և զհակառակութենէ երկուց գաղափարաց, կապելով զմակածականն ընդ ենթակային, կամ բաժանելով զայն 'ի նմանէ · և ըստ աստիճանաց համարման բաժանի 'ի չորս կարգս · այնք են, դատել զիմեքէ ստուգութեամբ, վստահութեամբ, հաւանականութեամբ, և երկբայութեամբ :

Չէ արժան զդատողութիւն շփոթել ընդ իմաստի, որպէս առնեն ոմանք՝ անխտիր փոխանակ իրերաց վարելով զձայնսդ · իբր զի այն է անցաւոր ներգործութիւն մտաց՝ որ յետ կազմութեան իմաստիցն դադարի · իսկ իմաստն է մնացական պտուղն կամ թէ ծնեալն 'ի մտաց, որ ամբարեալ և պահի 'ի ներքս անդ 'ի յուշի :

Ոչ է արժան նոյնպէս շփոթել զգաղափարն ընդ իմաստի · որոց խտիրն եղեալ կայ յանբացորոշ և 'ի բացորոշ աստիճանի ճանաչելոյ մտաց զառարկայն · զի գաղափարն է աղօտ ծանօթութիւն էակին, իսկ իմաստն պայծառ և որոշագոյն ծանօթութիւն · նա է որպէս թէ կոկոն թերաբաց և նորախայծ, իսկ սա վարդ թերթասփիւռ և լիաբաց · նա արտայայտի միով գոյական անուամբ, որպէս, մարդ, ուղտ, սենեակ․ յոր երբեմն յարի մի կամ երկու ածական, բայց միշտ առանց միջադրութեան դիմաւոր բայի․ որպէս, մարդ մահկանացու, ուղտ իմաստուն, սենեակ քառակուսի և ոսկեզօծ․ իսկ իմաստն բացայայտի խօսիւք կամ առասութեամբ, յորում միշտ դնի բայ դիմաւոր, ենթակայ, և խնդիր․ որպէս, մարդն է մահկանացու, ուղտ է իմաստուն, այս սենեակ է քառակուսի և ոսկեզօծ․ յայդցանէ քաջայայտ տեսանի՝ թէ գաղափարն է իմաստ կծկեալ․ իսկ իմաստն է գաղափար սփռեալ և տարածեալ։

Դատողութիւն մտաց ըստ այլևայլ առարկայից՝ զանազան անուանս ընդունի․ զի ուր յածի զճշմարտութիւն կամ զստութիւն էակաց և հանգամանաց նոցա, սեռական անուամբ կոչի՝ ճանաչումն, իմաստ․ երբ յածի զգեղեցկութիւն կամ զտգեղութիւն էակաց՝ փոխաբերութեամբ անուանի՝ ճաշակ գեղազգածական (gustus aestheticus)․ իսկ յորժամ յածի զբարութիւն կամ զչարութիւն առարկայից, կոչի ընտրողութիւն․ բայց յոլովակի փոխանակ իրերաց և խառն ՚ի կիր ածին ձայնքդ։

§ **109**․ Հաճիլ, ախորժել և հաւանել՝ են այլևայլ անուանք միոյ և նորին ներգործութեան մտաց, ըստ պէսպիսութեան առարկայից զանազանաբար ընծայեալք նմա․ զի ուր միտքն գտանէ զբարութիւն կամ զչարութիւն էակաց, և ընդունի զվճիռ իւր իբր ուղիղ և արդար, ընծայի նմա հաճութիւն․ երբ դատողութիւն յածի զգեղեցկութիւն առարկայից՝ յանձնառութիւն մտաց կոչի՝ ախորժել, ախորժակ․ իսկ ուրանօր զճշմարտութիւն իրաց վճիռ հատանէ միտքն՝ յանձնառութիւն նորա անուանի՝ հաւանութիւն, այն է՝ իբր ճշմարիտ և անսխալ ընդունել զբացորոշութիւն իրաւարարութեան իւրոյ։ Բայց որովհետև միտքն ոչ ուրեք գտանէ զիրաց առանց բացայայտ կամ լռելեայն փաստից, և ազդութիւն փաստից ոչ միշտ զուգակշիռ է յամենայնի, յայն սակս ըստ պէսպէս աստիճանաց զօրութեան փաստից՝ զանազանին և քառեակ աստիճանք հաւանութեան (զնոյնն իմն ըստ հաճշմարտութե և զհաճութէ և զախորժակէ)․ որք են, գիտել, հաւատալ, համոզել, և կարծել ։

Գիտելն է առաջին աստիճան հաւանութե, որ կից իւր ունի զփաստս իրականս, մտաւորականս և տարասեռս (զորոց այլուր), եւս և զստուգութի համարման․ և բաժանի 'ի փորձառական, յորում միտքն հաւանի վասն վկայութե զգայարանաց․ և 'ի հայեցողական՝ յորում միտքն հաւանի զօրութ անստելի օրինաց և սկզբնառածից իւրոց․ որ դարձեալ զատանի յիմաստասիրական և 'ի չափաբերական, որոց իւրաքանչիւրն վերստին զանազանի յայլ և այլ կարգս ։

Հաւատալն է երկրորդ աստիճան հաւանութե, յորում միտքն ունի զփաստս տարասեռս, ուրեք՝ զմտաւորականս, այլ ոչ՝ զիրականս․ սա կից իւր ունի զվստահութի համարման․ և բաժանի 'ի բազում ցեղս, ոմն են հաւատք աստուածային, մարդկային, առանձնական, հրապարակական, պատմական, հայեցողական, գործական, նիւթական, կերպական, և այլք ։

Համոզելն է երրորդ աստիճան, յորում միտքն հաւանի իմիք ոչ 'ի մտաւորական և յիրական փաստից շարժեալ, այլ միայն 'ի տարասեռից․ ունի առ իւր զարժանահաւատ համարումն, և բաժանի 'ի պէսպէս ցեղս ։

Կարծելն է ստորին աստիճան հաւանութե, յորում միտքն ունի փաստս երկուստեք նոյնաչափս և զուգակշիռս՝ 'ի վկայութի ճշմարտութե կամ ստութե առարկային ։

§ **110**․ Զյիշատակեալ ներգործութիւնս մտաց կարի համառօտիւ մեկնեցաք աստանօր ըստ նպատակի մերում․ այլ զսոցունց անհամար բանք են առ արդի իմաստասէրս և հոգեբանս, առ որս պարտին դիմել՝ որոց կամք իցեն լիագոյնս տեղեկանալ ։

Յամենայն 'ի վերոյիշեալ ներգործութիւնս մտաց՝ չորք ինչ զգուշութք որոշելի են 'ի միմեանց․ այնք են, 1 ենթակայն ներգործութե կամ միտքն․ 2 անցաւոր ներգործութիւնք նորա, որք հուսկ ապա դադարին․ 3 մնայս ջան պտուղն, կամ ստեղծեալն և արտադրեալն 'ի ներգործութե մտաց իբրու ծնունդ և զաւակ նորա. զոր սովորաբար արտայայտեմք բայածին գոյականօք, որք են 'ի յողունց անտի ձայնքս, գաղափար, իմաստ, Ճառ, գիտութի, համար, բան, սահման, կարծիք, վճիռ. որք թէպէտ 'ի քերականաց գոյական համարին, սակայն առ 'ի միտս նշանակեն իբր կրաւորական անցեալ ընդունելութի, այն է փոխանակ ասելոյ, գաղափարեալն, իմացեալն, Ճառեալն, ըստ մտաց անուանց ած եղերելոց, առած, տրարած, կազմած, վարկած, հատած. Առարկայն ներգործութե, այն է արտաքին էակն՝ զորով յածի միտքն և ներգործութին նորա։ Յիշեցաք զսոսա և 'ի վերոյ՝ ընդ այլոց բազմաց, ուր տես զՄիացեալսն, զի աստ զգլխաւորսն միայն կրկնեցաք։

'Ի սահմանելն զնշանակութի և զկարգ յիշատակեալ ներգործութեանց մտաց և զանուանց նոցա, ոչ յամենայնի միօրինակ համաձայնին հոգեբանք և տրամաբանք. այլ մեք 'ի բազմաց նորոց քաղեցաք հատընտիր զայնս՝ որք առաւել ուղիղ և իրաւացի երևեցանն մեզ ըստ զննութեց արդի իմաստասիրաց։

§ 111. Պարագայք կամ հանգամանք իմաստից.

Զիմաստից բազում ինչ ունէաք ասել. բայց առ չծանրաբեռնելոյ զհամբակս՝ ցուցցուք համառօտիւ զնոցայն 1 շտեմարանս, 2 զնիւթս, 3 զկերպ, 4 զառարկայս, 5 զնպատակս, 6 զգործիս, 7 զեղանակս, 8 զգերազանցութիս, 9 զպաշտամունս և զանուանակոչութս։

Շտեմարանք կամ բովք՝ յորոց միտքն իբրու հանքահան ոմն պեղելով արտաբերէ զիմաստս, են հանգամանք էակաց, ըստ որոց բաժանին իմաստք յէականս և յեղանակականս։ Էականն բացատրէ զիրն երրակի անուամբ. յորոց առաջինն բացատրէ զայն հանգամանս՝ որով իրն հաւասարի ընդ այլ էակս, և կոչի՝ սեռ, որպէս, աշտ է կենդանի, երկրորդն զայն հանգամանս՝ որով իրն զանազանի ՚ի յայլոց նոյնասեռ էակաց, և կոչի տարբերուն̄ կամ յատկուն̄. ոպ̄, աշոտ է մտաւոր, բանական, իսկ երրորդն նշանակէ զբուն զինչուն̄ իրին զգումարեալն ՚ի սեռէ և ՚ի տարբերուն̄է. և կոչի ըստ քերականաց՝ ընդհանուր կամ հասարակ գոյական, իսկ ըստ Ճարտասանից՝ ցեղ. ոպ̄, աշոտ է մարդ, այս իր է քար, Թռանողն այն է արծիւ:

Նշանակական իմաստ է՝ յորում իրն դնի իբր ենթակայ, իսկ մակածականն բացատրէ զեղանակ կամ զպատահական հանգամանս ինչ յաւելեալ ՚ի նա. և բաժանի ՚ի վեց կարգս. որք են, **1** որակական՝ յորում որպիսուն̄ ինչ ընծայի կամ բացասի ենթակային. ոպ̄, աշոտ է առաքինի, ոչ է շռայլ. **2** քանակական՝ յորում ձև, չափ, կշիռ, և քանակուն̄ ենթակային բացատրի, որպէս, աշոտ է վիթխարի, երկայնաձեռն, այս տուփ է քառակուսի. **3** առնչական՝ յորում կապակցուն̄ և վերաբերուն̄ ենթակային ծանուցանի. ոպ̄ վասակ է հայր, աշակերտ, հովիւ. **4** գործողական, որ զներգործուն̄ս կամ զկրելուն̄ս ենթակային յառաջ բերէ. ոպ̄ երկինք որոտան, ծով ալեկոծի. **5** տեղական՝ յորում վայրն և ուրն. և **6** ժամանակական յորում երբն ենթակային բացայայտի. ոպ̄, աստ է Քրիստոսն կամ անդ, խոտն այսօր է, և վաղիւ ՚ի հնոց արկանի:

§ **112**. Նիւթք կամ ատաղձք իմաստից երեք են. **1** էակ ինչ՝ զորմէ կազմի դատողուն̄, և կոչի՝ ենթակայ. **2** հանգամանք ինչ, որ ընծայի ենթակային կամ բացասի ՚ի նմանէ, զոր քերականք կոչեն խնդրեալ կամ խնդիր բայի. իսկ մեք մակածական անուանեմք. **3** էական բայ դիմաւոր, որ ՚ի յանձնառական իմաստս զենթակայն կապէ ընդ մակածականին. իսկ յուրացականս՝ բաժանէ:

Ենթակայն միշտ բացատրի գոյական անուամբ, և բաժանի նախ՝ յանորոշ. ոպ̄, այս իր է քար, այն որ թռանի՝ է սոխակ. և ՚ի բացորոշ՝ ոպ̄, մարդն է մահկանացու. երկրորդ՝ ՚ի թանձրացեալ. ոպ̄, ձիւնն է սպի տակ· և 'ի վերացեալ, ոպ՟, սպիտակութին է գոյն, հայհոյելն է մեղք· երրորդ՝ 'ի յայտնի· ոպ՟, մեղքն է խորշելի· և 'ի գաղտնի՝ որ կա՛մ զօրութ՟ իմացեալ լինի· ոպ՟, աճաւասիկ գամ և դատեմ, կամ ածականն դնի փոխանակ նորա· ոպ՟, չարն է խորշելի, քաղցրն վնասէ ատամանց։ Ըստ քանակութ՟ն բաժանին ենթակայք, **1** յեզական· ոպ՟, աշոտ է առաքինի· ոմ՟ մարդ է գիտուն· **2** մասնական· որպէս, ոմանք մարդիկ են հարուստք· **3** յոգնական· ոպ՟, բազում զինուորք հաւատարմութ՟ ծառայեն· **4** հանրական· ոպ՟, ամենայն մարդիկ են սխալական։

§ **113**· Մակածականն ևս զօրէն ենթակայի միշտ գոյականաւ բացատրի, և վայրապար ոմանք 'ի տրամաբանից (ընդ որս և Սոաւէ և ծանօթարար նորա· յեր· **203**· **324**·) զհակառակն ուսուցին· ոչ ինչ միտ եդեալ հանրական օրինացն, թէ ածականք միշտ երեսփոխան են գոյականաց, և առանց սոցա մտածել իսկ անհնար է զնոսա։ Բաժանին մակածականք նախ՝ 'ի համաձայնս՝ որք միաբանին ընդ ենթակային· որպէս, մարդն է սխալական· և 'ի հակառակս՝ որք բացասին և արտաքսին յենթակայէն· որպէս, մարդն ոչ է ամենագէտ։ Երկրորդ՝ 'ի հարկաւոր՝ որ գոյացական կամ յէութենէ ենթակային է, որպէս, մարդն է մտաւոր, անձնիշխան· 'ի փոփոխական՝ որում կարելի է և՛ համաձայնիլ և՛ հակառակիլ ենթակային· որպէս, մարդն է առաքինի, իմաստուն· և յանհնարական՝ որ բնաւ ոչ միաբանի ընդ ենթակային· որպէս, մարդն է անսխալ· Աստուած է փոփոխական· յերից աստի՝ առաջինն միշտ է ճշմարիտ· երրորդն միշտ է սուտ· իսկ երկրորդն ըստ նիւթոյն պահանջելոյ ուրեք ճշմարտի և ուրեք ստեալ լինի։ Երրորդ՝ բաժանին մակածականք 'ի յայտնի՝ որ ներգործութ՟ դնի· որպէս, աշոտ է մարդ· և 'ի գաղտնի՝ որ կա՛մ 'ի սպառ ոչ դնի և մտօք գուշակի· որպէս, Աստուած գոյ, իբրև զտղայ խօսէի· կա՛մ ածական նորա դնի միայն, և ինքն լռելեայն իմանի· որպէս, աշոտ է (այր) առաքինի, մեծիմաստ։ Չորրորդ՝ բաժանին ՚ի թանձրացեալ․ որպէս, առիւծն է դալան․ և ՚ի վերացեալ․ որպէս, արբեցուե̃ն է մոլուե̃․ զորոյ արժան է գիտել՝ թէ մակածականք միշտ պահանջեն համաձայնիլ ընդ ենթակային ՚ի բանի թանձրացեալ կամ վերացեալն լինելոյ, այն է՝ երկոքին ևս պարտին լինել կամ վերացեալ կամ թանձրացեալ, և չէ հնար զմին դնել թանձրացեալ և զմիւսն վերացեալ։ Հինգերորդ՝ մակածականք ըստ եղանակին որով արտաքուստ բացատրին լեզուաւ, բաժանին ՚ի բաղադրական և յառանձնական․ բաղադրական համարին ամենայն առաքական անուանեալ բայք, որք միշտ վերլուծանին յէական բայ և յանուն ինչ․ որպէս ասելն՝ Աստուած մարդացաւ, աշոտ սիրէ, նոյնանայ ընդ այսց․ Աստուած եղև մարդ, աշոտ է սիրող, (սակաւ ուրեք ենթակայք ևս բացատրին սոյնպիսի ոճով․ որպէս ասելն՝ ձիւնէ, անձրևէ, որոտայ, զայն իմաստս տայ, թէ ձիւն իջանէ, անձրև հոսէ, որոտումն լինի)։ Առանձնականք միշտ տարանջատ դնին և իբր խնդիր կապին ընդ էական բային, կամ ուղղական կամ կողմնական հոլովով․ օրինակք ուղղականի բազում են ՚ի վերոյգրեալսդ․ իսկ ՚ի կողմնական հոլովոյ՝ առաւելապէս ընտանենայ ընդ մակածականի, 1 սեռականն, ոպ, տեառն է երկիր լրիւ իւրով, այս մատեան է սմբատայ․ 2 բացառականն, որպէս, մածեալն է յէուե̃ հոգւոյ․ 3 պարառականն, որպէս, շուրջ էին զնովաւ զօրք․ 4 ներգոյականն, որպէս, պետրոս էր ՚ի բանտին․ ևն․ զորոյ տես ՚ի քերականուե̃ս։ Վեցերորդ՝ ըստ քանակուե̃ն բաժանին ՚ի մասնական և ՚ի հանրական․ մասնական են ամենայն մակածականք յանձնառական իմաստից․ որպէս ասելն, մարդն է կենդանի, այս սենեակ է քառակուսի, զայն նշանակէ՝ թէ մարդն է մի ՚ի ցեղից կենդանեաց, այս սենեակ է մին ՚ի թուոյ քառակուսի սենեկաց․ իսկ հանրական են ամենայն մակածականք բացասական իմաստից․ որպէս ասելն՝ քարն ոչ է ծառ, ախտ ոչ է առաքինի ։ զայն կամի ցուցանել թէ քարն ոչ է և ոչ 'ի միոյ 'ի տեսակաց ծառոյ , ախտ ոչ ունի և ոչ զմի 'ի ցեղից առաքինութեց ․ կամ թէ՝ ամենայն ցեղք ծառոյ արտաքսին 'ի բանէ քարանց , և ամենայն ցեղք առաքինութեց հեռի և օտար են յախտոյ ։ Գիտեմ լինձ աստանօր՝ թէ մակածականք բաց յայսպիսի քանակութէ իւրեանց՝ ունին նա և զզօրութի կոպտութեանց զքանակութի ենթակայի իւրեանց ․ իբր զի եթէ հարկաւոր և անհնարական իցեն՝ ընծային ենթակային ըստ ամենայն տարածութե նորա , որպէս լինելն անձնիշխան և սխալական՝ պատշաճի ամենայն և իւրաքանչիւր մարդոյ ․ ապա եթէ իցեն փոփոխական և պատահական ինչ՝ յայնժամ մասնաւորեն զտարածութի ենթակային , կամ միայն ոմանց 'ի նոցանէ պատշաճին ․ ոպ յասելն՝ հայք են անմիաբան , գաղղիացիք են թեթևամիտ , մակածականքդ քան զի չեն էական ինչ , ճշմարտին ոչ յամենայն հայս կամ 'ի գաղղիացիս , այլ յոմանս միայն ։

§ **114** ․ Ենթակայն և 'ի մակածականն յաւելեալ լինին երբեմն այլ գաղափարք երկրորդականք ․ զորս քերականք կոչեն ածականս , յատկացուցիչս , բացայայտիչս , խնդիրս , ևն ․ որք պէսպէս օրինակաւ փոփոխեն զնշանակութիւն նոցա և այլայլեն զիմաստն ․ և թէպէտ բացորոշ ծանօթութի այդպիսեաց պիտանի է ճարտասանից , բայց քան զի չէ հնար զամենայնն յառաջ բերել մանրամասնութբ , շատասցուք նշանակել գոնէ զոմանս 'ի գլխաւորացն ։

Ենթակայն սեպհականէ ինքեան զմակածականն մերթ ըստ բովանդակ տարածութե իւրոյ , և մերթ ըստ մասին միայն ․ զառաջինն պարտ է բացատրել արձակաբար առանց յաւելլոյ ինչ յենթակայն ․ որպէս , մարդն է մահկանացու , ուր մահկանացուն անկանի 'ի վերայ ամենայն և իւրաքանչիւր մարդոյ ․ իսկ յերկրորդ դիպուածն հարկ է յաւելուլ յենթակայն զբառդ՝ Էոյ , զոյգ ընդբառնալի մասինն ․ որպէս , ամենայն ջուրք՝ բայց 'ի ծովայնոյ, են ըմպելի. ամենայն քաղաքացիք՝ բաց ՚ի գինուորաց՝ վճարեն թագաւորի զհարկս. զերկրորդս զայս կոչեն՝ իմաստս բացառողականս. բայց պարտ է յուշի ունել՝ թէ բացառութիւն դնի երբեմն նա և ՚ի կողմանէ մակածականին. որպէս յայսմ, աշոտ պարկեշտ է յամենայն իրս՝ բաց ՚ի խաղուց։

Ընթակայն երբեմն այնպիսի ճշդուք՟ սահմանէ ինքեան զմակածականն՝ մինչև չներել նմա պատշաճիլ այլում ենթակայի. և յայնժամ օրէն է յորել ՚ի նա զմին յածականացս միայն, էն. որպէս, Աստուած միայն է անսխալ, ՚ի կենդանեաց մարդն եթ՝ է բանաւոր. որոց՝ այս է իմաստ. թէ անսխալութիւն է այնպիսի հանգամանք, որ միում ենթակայի Աստուծոյ պատշաճի. իսկ ամենայնի որ չէ Աստուած՝ ոչ յարմարի։ Զնոյնդ առնեն երբեմն և մակածականք, և նովին ոճով բացատրին. որպէս, տիգրան է հարուստ միայն, մագնիս առ ինքն ձգէ զերկաթն եթ. իմաստք այդպիսիք կոչին զատականք կամ առանձնականք վասն մասնկանցդ։ Ծանուցանեմք վասն ածական բառիս՝ եթ. թէ ոմանք անխտիր վարեն զայն հանդերձ նախադաս և շաղկապաւ, որ ոչ արդարանայ ամենայն ուրեք. այլ անդ միայն՝ ուր յառաջ քան զնա կայցէ այլ ածական, ընդ որում կապեսցի շաղկապաւն. որպէս, Աստուծոյ ճշմարտի և եթ պատիւ է երկրպագանել. իսկ ուր չգուցէ նախընթաց ածական՝ անհնար է յաւելուլ զշաղկապ. զի որպէս ՚ի քերականութեան ասացեալ եմք՝ ընդ մէջ գոյականի և ածականի ոչ ինչ լեզու ներէ մուծանել զշաղկապ բաղհիւսական։

§ 115. Կերպ իմաստից և դատողութեանց՝ է եղանակն կնքելոյ մտաց զյարաբերութիւն մակածականին ընդ ենթակային, և բաժանի ՚ի վճռական և յանվճառ. վճռական է՝ յորում միտքն իբրու իրաւարար դատաւոր վճռէ և որոշէ կամ զհամաձայնութիւն կամ զհակառակութիւն ենթակային և մակածականին. որոյ վասն և զատանի սա ՚ի յանձնառական, որպէս, աշոտ է իմաստուն. և ՚ի յուրացական կամ բացասական · որպէս , քար ոչ է կենդանի : Իսկ անվճար է՝ յորում միտքն ոչ զօրելով ճանաչել զկապակցութ՟ե երկուց գաղափարացն՝ անվճիռ առ 'ի կախ թողու զայն , որոյ յոլով են աստիճանք և ցեղք · որպիսի են , երկբայական ,, թերևս արասցէ պտուղ յայսմ ամի · վիճողական ,, գնտաձև՞ թէ ձուաձև իցէ երկիր · պայմանական ,, աշոտ եթէ առողջ է՝ գայ առ մեզ այսօր · տրոհական ,, կամ պարզ կամ ամպոտ լինիցի երկինք վաղիւ · և այլ նմանք :

§ 116 · Առարկայք՝ զորովք յածին և պատաղին միտք մեր յիմանալն՝ անհամար են , սակայն մարթ է վերածել զնոսա 'ի հինգ կարգս · որք են , 1 անսահման էակն Աստուած անբովանդակելի կատարելութ՟բք իւրովք · 2 անձն կամ հոգի և մարմին մեր՝ ներքին և արտաքին զօրութ՟բք իւրեանց · 3 ընկերք մեր կամ ամենայն մարդիկ · 4 բնական արարածք Աստուծոյ , կենդանիք և անկենդանք · կամ բնութ՟ին և տիեզերք ամենայն · 5 մտացաստեղծ և ձեռաստեղծ արարածք ընկերաց մերոց · և իւրաքանչիւր յայդցանէ վերստին բաժանի յայլևայլ ցեղս , զորս յերկար լինի բացատրել :

§ 117 · Գործիք կամ միջոցք՝ որոց սպասաւորութ՟բ գանձեմք մեզ զիմաստս՝ համարին երեք · միտք , մարմին , և ընկերք մեր · միտքն կրկնակի կազմէ զիմաստս , մի՝ եթէ զուտակածին մայր որ յիւրն սեփհական արգանդէ՝ իմա՛ յանստեղծ օրինաց և 'ի սկզբնառածից՝ յօրինէ զիմաստս · միւս ևս՝ իբրու դայեակ և թխամայր հաւ՝ որ զձուս օտարաց տածէ՝ կենդանագործէ և ինքեան որդեգրէ · զառաջինսն կոչեմք՝ իմաստս մտաբանականս , իսկ զերկրորդսն՝ զննողականս : Մարմին և զգայարանք մեր՝ փորձառութ՟բք՝ գործադրութ՟բք՝ կիրառութ՟բք՝ և ոչ թէ ճաշակառութ՟բք իւրեանց՝ ճարակ մատակարարեն մտաց , և գոգցես թելս տան նմա առ 'ի հենուլ և 'ի հիւսել զիմաստս , զորս կոչեմք փորձառականս : Ընկերք մեր անդադար հաղորդեն մեզ զիմաստս երբեակ ճանապարհաւ, կենդանի ձայնիւ, զորս կոչեմք պատմական իմաստս · գրովք և մատենիւք իւրեանց, և ասին գրաբանական իմաստք · և օրինակաւ գործոց և վարուց իւրեանց, որք անուանին յայտացուցական իմաստք ։ 'Ի կիրառութեան միջոցաց և 'ի կազմուե՟ պէսպէս իմաստից՝ բազում արթնուե՟ց և զգուշուե՟ց պէտք են մտաց՝ առ ոչ զառածանելոյ 'ի մոլորութ՟ս · զորոց զկանոնս աւանդեն տրամաբանք ։

§ 118 · Նպատակք՝ զորս դիտէ միտքն 'ի կազմելն զիմաստս, երեք միայն համարին · զի կամ ճանաչել և իմանալ կամի զիսկութի՟ և զճշմարտութի՟ առարկային · կամ բերկրիլ և հեշտանալ նովին, և կամ զծանուցեալն արդիւնաւորել՝ գոյաւորել և իրականել, այն է՝ զոր սովորաբար կոչեմք՝ գործել, գործադրել · առաջինն կոչեմք՝ իմաստ հայեցողական, զերկրորդն՝ զգածողական · իսկ զերրորդն՝ գործադրական ։

§ 119 · Թէպէտ և գիտեմք՝ զի եղանակն տիրապէս արտաքին խօսից պատշաճի, բայց որովհետև լեզուն ոչ իշխէ խօսել ինչ առանց հրամայելոյ և կերպաւորելոյ մտացն, յայն սակս առ սա վերածեմք և զպէսպէս պատահական կերպս խորհելոյ և իմանալոյ · որոց գլխաւորքն են, 1 սահմանական, մարդն է կենդանի մտաւոր · 2 պատմական, Յիսուս Քրիստոս ծնաւ 'ի Բեթղեհէմ յաւուրս Օգոստոսի կայսեր · 3 հրամայական, Ել 'ի դմանէ այսդ պիղծ · 4 արգելական, մի տայք զսրբութի՟ շանց · 5 կոչական, Ղա՛զարէ՝ Եկ արտաքս · 6 հրաւիրական, եկա՛յք առ իս ամենայն աշխատեալք · 7 գոհացական, գոհանամ զքէն Հայր՝ Տէր երկնի և երկրի · 8 աղաչական, Հա՛յր անցո՛ յինէն զբաժակս · 9 հարցական, զի՞ է քեզ ծո՛վ, զի՞ տեսեր և փախեար · 10 հեգնական, ո՛վ մտացի դու՝ ո՞ւր ուսար վիրօք զվէրս բժշկել · 11 բղձական, երանի թէ մօտակտուր իսկ լինէին · 12 զարմացական, ո՛վ խորք մեծուե՟ն և իմաստուե՟ն Աստուծոյ · 13 աւաղական, վա՜յ ձեզ դպրաց և փարիսեցւոց · 14 յորդորական,, օ՟ն որիք դնասյուք սատի • բաղդատական, նմանական, և այլք բազումք • զորոց քերականք խօսին ընդարձակ :

§ **120** • Իմաստք ըստ այլևայլ պաշտամանցն՝ զոր վարեն, այլևայլ կոչմանց վիճակին • և նոյն մի իմաստ ըստ զանազան վերաբերուե՟ իւրոյ առ այլ՝ մարթի առնուլ զպէսպէս անուանս • յօրինակի համար՝ բանս,, մարդն է մահկանացու,, եթէ առցի իբր հիմն ընդարձակ ճառի՝ կոչի բնաբան • եթէ դիցի իբր փաստիք ապացուցանելի՝ անուանի խնդրակ, խնդիր • վասն զի պահանջէ զփաստ ինչ առ ճշմարտուե՟ իւր, որպ՟ զայս, վասն զի է կենդանի • եթէ համարեսցի բղխեալ յայլմէ նախընթացէ, որպ՟ յայսմ,, մարդն է կենդանի, ուրեմն է մահկանացու,, կոչի հետևորդ, հետևանք • եթէ առցի իբր քաջայայտ ինչ բան անկարօտ փաստից, անուանի առած, որ եթէ իցէ յայտ ճշմարիտ և յամենեցունց խոստովանեալ՝ կոչի սկզբնառած, որպէս թէ արմատական ճշմարտուե՟ և նախասկիզբն այլոց • նոյնպէս եթէ այլով ինչ հայեցուածով առնուցի ընդ միում կամ ը՟ բազմաց, ընդունի զայլ կոչումն • յորոց և զբազումս մեկնեալ եմք 'ի վեր և 'ի վայր : Գոն առ տրամաբանս և այլ զանազան անուանք իմաստից, որպ՟ են, առարկուած, առումն, պարապումն, և՟ն, զորս գտցեն որ կամիցին առ նոս՟:

§ **121** • Գերազանցութիւնք կամ կատարելութիւնք իմաստից՝ են յատկութիւնք ինչ, որք հարկաւ պահանջին թէ առ վաւերութիւն և թէ առ զօրաւոր ազդուուե՟ նոցա 'ի միտս ունկնդրաց • զի դատել և յօրինել իմաստս զառարկայից՝ սեպհական է ամենայն մարդոյ, որ ունիցի միտս առողջս • բայց ճարտասանն պարտի գերազանցել քան զհասարակ խուժանն՝ ոչ լոկով արտաքին պերճախօսուե՟ կամ գեղեցկախօսուե՟, այլ մտաց ծննդականուե՟ և իմաստից վսեմութեամբ • զի սա միայն է՝ որ շարժել զօրէ զունկնդիրս 'ի գործարարուե՟ • իսկ դատարկ և անիմաստ խօսք իբրու մարմին անհոգի ոչ միայն չազդէ ինչ, այլ և տաղտուկ ածէ յընկերս․ վասն այդորիկ կարևոր համարիմք ՚ի շնորհս համբակաց՝ ՚ի յոլովից անտի գերազանցութեանց, յառաջ բերել զյետագայսդ միայն՝ երկոտասան թուով և համառօտ բացատրութեամբ։

§ 122 · Գերազանցութիւնք իմաստից ·

Ուղղութիւն կամ ուղղադատութիւն, որ հիմնի ՚ի համաձայնութեան կազմածոյն իմաստից՝ ընդ օրինաց ՚ի նոյն իսկ յիմացական զօրութենէ մտաց սահմանելոց․ զերևելիս յայդց օրինաց համառօտեմք աստանօր՝ յարմարելով առաւելապէս պիտոյից ունկնդրաց, 1 միտ դիցէ ճարտասանն քաջայարմար ժամուն՝ յորում հարկ և մարթ իցէ ուղղել զդատողութիւն և զիմաստ ունկնդրաց իւրոց․ 2 զգոյշ լիցի չցնդել զմտադրութիւն և չաղմկել զհոգի նոցա օտարոտի բանիւք, այլ ամենայն հնարիւք ուռկանեսցէ զուշադրութիւն նոցա, և յառարկայն եթ յառեսցէ․ 3 որչափ յիւրում կարի իցէ՝ խցցէ զամենայն աղբիւրս մոլորութեանց և թիւրադատութեանց՝ զոր ՚ի տրամաբանից նշանակեալս, յունկնդիրս իւր․ 4 այնմ մեծապէս պատկառ կացցէ՝ զի զգաղափարս և զիմաստս յարմարեսցէ առարկայիցն, և ոչ եթէ զնոսա՝ կեղծեսցէ լինել ըստ նոցա․ 5 զառաջինն կերպաւորեսցէ զգաղափար ենթակային, և ապա զմակածականին՝ ըստ իւրաքանչիւր հանգամանաց նոցա առանձինն․ 6 բաղդատեսցէ զնոսա և ՚ի լոյս ածցէ զյարաբերութիւն նոցա առ միմեանս, համաձայն արդեօք՝ են թէ հակառակ իցեն իրերաց․ և եթէ հակառակ իցեն՝ հեռացուսցէ զնոսա, որպէս, անկիւնաւորն լինել՝ բոլորակ․ 7 որովհետև որևիցէ մակածական միշտ մտածիլ մարթի իբր դրական, և իբր պակասական, կամ որ նոյն է՝ իբրու երկու հակասականք, յայսմանէ զհետ գայ՝ թէ յոր ժամ մին ՚ի հակասականացդ գտանի հակառակ այս ինչ ենթակայի, յայնժամ հարկաւ յարել պարտ է յայն զմիւս հակասականն նորին․ որպէս, անսխալութիւն որովհետև հակառակ է մարդոյ, ապա սխալականութիւն հարկաւ պար տի ընծայիլ նմա․ 8 Թէպէտ և յերկուց հակասական հանգամանաց մին անշուշտ պարտի համաձայնիլ ամենայն էակի․ սակայն ոչ երբէք արժան է ընծայել կամ բացասել զայնս ենթակային՝ առանց համոզարար փաստից․ այլ ամենայն ուրեք հարկ է գտանել փաստս բաւականս՝ թէ ո՞յր աղագաւ պարտ իցէ ընծայել կամ բացասել զայնս․ ո՛չ, մարդոյ ընծայեմք զսխալականութիւն, վասն զի էակ է կոպարաւոր և արարածական․ և ստորացուցանեմք ՚ի նմանէ զանսխալութիւն, վասն զի ոչ է էակ անսահման․ 9 ուր գտանիցէ փաստս՝ վճռեսցէ յանձնառութիւն կամ ուրացութիւն․ իսկ ուր ոչ գտանիցէ՝ անվճիռ թողուցու զդատն, և յայտնեսցէ՝ եթէ հարկ իցէ՝ ունկնդրաց զվասն էրն․ 10 ՚ի գտանել զփաստս՝ քննեսցէ զազդուութիւն նոցին, և ըստ այնմ ընծայեսցէ նոցա զհաւանութիւն․ զի ոչ ամենայն փաստք համազօր են․ 11 Յետ կապելոյ զենթակայն ընդ մակածականին՝ ուսուսցէ ևս ունկնդրաց զպատճառն կապակցութեան, գոյացակա՞ն իցէ արդեօք թէ յեղափոխական․ այլովք հանդերձ։ Ընդ գլխաւոր կանոնօքդ պարունակին և այլ մասնաւորք ոմանք, զորս մարթ է տեսանել առ տրամաբանս։

§ 123․ Բարութիւն կամ սրբութիւն, ըստ որում ամենայն իմաստք՝ զորս ճարտասանն հաղորդէ ունկնդրաց, պարտին լինել համաձայն աստուածային և մարդկային օրինաց, հեռի յամենայն մոլութեանց և յանմաքուր ախտից։

§ 124․ Գեղեցկութիւն․ զսա ոմանք համարին լինել գումար կամ փունջ պէսպիսութեան չափակցութեան և համեմատութեան մասանց ընդ իրեարս՝ առ ՚ի կազմել զմի բոլոր․ բայց սակայն գլխակատար ծանօթութիւն սորա, ո՛չ և ըղվսեմութեան և զչքնաղութեան՝ առնուլ պարտ է ըստ կանուխ ասացելոցս ՚ի գեղագիտական մատենից նոր հեղինակաց։

§ 125․ Նրբութիւն, այն է անօսրութիւն մտածութեանց (նման նաշհոյ կամ գերմակ ալեր ընդ շարամաղ անցելոյ) յերկար որոճանօք մանր ծամքելոց, և յամենայն թանձրամիտ յանհեթեթ խորհրդոց զտելոց։

§ **126** · Սրութիւն · որ թէպէտ տեսութեան մտաց պատշաճի տիրաբար, որ զօրէն արծուային աչաց խոյանայ և թափ անցանել յամենայն խորշս առարկային՝ քաղէ իւր ճարակ, հասարակաց մտաց անտեսանելի · բայց երկրորդաբար և նոյն իսկ իմաստից ընծայի, իբրու այնց՝ որք հանգոյն յեռանոսուր սլաքաց խոցամուխ ընդմտանեն յընդերս և յոգիս ունկնդրաց · և սաստիկ վիրաւորեն զնոսա սրով ճշմարտութեան:

§ **127** · Ցորդութիւն, որ զամենայն հանգամանս և զպարագայս առարկային առատութեամբ բովանդակեսցէ և յառաջ բերցէ · յայտ է՝ զկարևորս և զծանունս, զարժանաւորս խօսելոյ և լսելոյ ազնուաբարոյ իմաստնոյ · զի տղայոյ է խաղալ սնոտեօք · և ցուցակ անծնունդ մտաց է ամլանալ 'ի նիւթս՝ ուր մարթ իցէ եօթնպատիկ ծնանել:

§ **128** · Հարազատութիւն, իմն անստգիւտ կերպարանակցութիւն և նմանակցութիւն իմաստից՝ ընդ առարկայից նոցա · զոր դիւրաւ մարթ է 'ի միտ առնուլ օրինակաւ նկարեալ պատկերի · որ եթէ ամենայն ճշդութեամբ երևեցուսցէ զկերպարանս նախատպին ըստ ամենայն գծից և ձևոյ նորա՝ հարազատ կոչի, ապա՛ թէ ոչ՝ խորթ և պիտակ անուանի · ըստ նմին օճոյ և իմաստք յայնժամ միայն յինքեանս բերեն զհարազատութիւն, երբ ամենայն մասամբք և կենդանանկար հանուածովք պատկերացութեանն զնախատիպ առարկայ իւրեանց:

§ **129** · Միութիւն, կամ միանձնութիւն, առ որ պահանջի՝ զի թէպէտ բազում և յոգնադիմի իցեն անդամք մտածութեանց, սակայն ամենեքին յատուկ և սեպհական իցեն միում մարմնոյ, առ մի առարկայ և առ մի նպատակ վերածեսցին, և 'ի միոյ հիմնական բնաբանէ բղխեսցին իբրու յաղբերականէ, զի արտաքսեսցին ամենայն անպատշաճք և օտարականք, զի բնաւ իսկ ոչ, կամ գէթ հազիւ և հարկիւ 'ի մէջ բերցին զարտուղութիւնք՝ խոտորմունք՝ բացառութիւնք և միջանկեալ բանք այլաբունք, զի մի յումպէտս խոկեսցին և փոփոխեսցին անձինք՝ գործողք՝ կրողք՝ տեղիք՝ ժամանակք և այլ պարագայք ։

§ 130 · Բազմուն, և պէսպիսուն · որքս ոչ հակառակին միում, այլ քաջ մտերմանան ընդ նմա · զի միուն զբոլոր անձնն ասէ, իսկ որքս զանդամս նորին · և յայտնի է՝ թէ անդամք ոչ միայն բազում են թուով, այլ և պէսպէս են ցեղիւ՝ պաշտամամբ՝ դիրիւք՝ ձևովք՝ նպատակօք և այլ հանգամանօք · և նոյն սա պահանջի նա և 'ի խառն անդ իմաստից · զի ով 'ի նկարս՝ միակ գոյն, և յերաժշտութ միակ եղանակ տաղտկալի է, նոյնպէս և 'ի ճառս · վասն որոյ ջան դիցէ ճարտասանն զօրէն քաջարուեստ դերասանի պէսպիսացուցանել զկերպարանս թատրոնի իւրոյ · բայց միշտ անփոփոխ պահելով զմիուն բնաբանի, առարկայի, և նպատակի ճառին · ուր և զայն գիտեա՛ լինձ, զի միութն մտօք եթէ ընկալեալ և ըմբռնեալ լինի, իսկ բազմուն և պէսպիսուն մասանց՝ նա և զգայարանօք ։

§ 131 · Նորուն, ճարտասանն առ խափանելոյ զտաղտկուն ունկնդրաց և առ յագեցուցանելոյ զհետաքրքիր բաղձանս նորասիրութ նոցա՝ պարտական է հնարել իմաստս նորանշանս՝ անակնկալս և անսովորականս · այդպիսի համարին, 1 որք բնաւ անծանօթ իցեն ցարդ նոցա · 2 որք թէպէտ գիտնականաց և սակաւուց ումանց ծանօթ, այլ մեծի մասին բազմութն անծանօթ իցեն · 3 որոց կամ բնաբանն, կամ առարկայն, և կամ նպատակն անլուր ինչ իցէ · 4 որոց գէթ կերպաւորուն և յօրինուածն նորատեսիլ իցէ · 5 որք պճնազարդեալ և զգեստաւորեալ իցեն նորաստեղծ նմանութք՝ օրինակօք՝ ներհականօք՝ և այլովք հանգամանօք · 6 որք կամ արտաքոյ, կամ դերապանց, և կամ հակառակ իցեն հասարակ կարծեաց՝ սովորութց և ընթացից մարդկան, ևն ։ Այսմ պատուիրանի առաւելապէս պատկառ կացցեն այն քարոզիչք, որք յամենայն կիւրակէի քարոզեն զբանն Աստուծոյ · որոյ առ 'ի չգոյէ նորանոր նիւթոց՝ հարկ

՚ի վերայ դնի՝ գէթ փոփոխել զկերպ և զկազմած նոցին. Նմանեալք յայսմ հնարագէտ բրտից, որք ՚ի նոյն ՚ի միոյ զանգուածոյ կաւոյ՝ միշտ ստեղծանեն անօթս պէս պիսատեսիլս՝ երերաց աննմանս նորագիւտ հանգամանօք ինչ :

§ 132. Բացերևութիւն, յայտյանդիմանութիւն, դիւրիմանալի լինել իմաստից՝ ՚ի միտս ունկնդրաց. առ որ պէտք են, զի ճարտասանն, ոչ միշտ՝ այլ ուր հարկն պահանջեսցէ, մեկնաբանեսցէ զնշանակութիւն իմաստից, ամենայն պարզութեամբ ՚ի մէջ բերելով, 1 զքերականական բացայայտութիւնս և զզանազանութիւնս բառից և գաղափարաց, եթէ իցեն նոյնանշանք, համաձայնք, պարզք, նախադիրք, ածանցեալք, թագուցեալք, տեղափոխեալք, և որ այլ ևս խորութիւնք կայցեն առ քերականս. 2 զպէսպէս հանգամանս ենթակային և մակածականին, և զեղանակս կապակցութեան նոցա. 3 զայլ և այլ խորութիւնս իմաստից՝ զորս ՚ի վեր և ՚ի վայր նշանակեմք. 4 զնմանութիւնս, զօրինակս, զվկայութիւնս, զներհականս, և զայլ ոճս բանից՝ որք զիարդ և իցէ պարզեն զմթութիւն իմաստից և լոյս ընծայեն մտաց ունկնդրաց՝ առ լիուլի իմանալոյ նոցա զառարկայն :

§ 133. Ճշմարտութիւն, այն է՝ մտաւորականն. որ հիմնի յամենակերպ նոյնութենէ իմաստից՝ ընդ առարկայից իւրեանց. և որովհետև մեկնեալ եմք այլուր զխտիր նմանութեան և զնոյնութեան, Պայ մեզ աստանօր ասել, թէ իմաստք նկատմամբ ճշմարտութեան՝ բաժանին ՚ի չորս կարգս. որք են, 1 անապացուցանելիք, որք չկարօտին փաստից, և կոչին ինքնառած. 2 ապացուցանելիք, որք թէպէտ յինքեանս ճշմարիտ են, բայց վասն պարագայից ինչ աստ և այժմ կարօտ գոն փաստաբանութեան. 3 վարկպարազի. այն է անհիմն վարկ կամ վարկած, որ ճշմարիտ համարի ՚ի մոլորելոց, բայց ինքնին սուտ է և սխալ. 4 սուտ, ստութիւն, ցնորք, որ և այնպիսի լինել ճանաչի կամ յոմանց, կամ ՚ի բազմաց, և կամ յամենեցունց :

Յիշատակեալ կատարելութեանցդ դիմադրին նոյնչափ անկատարութիւնք իմաստից, թիւրութիւն, չարութիւն, տգեղութիւն, թանձրամտութիւն, այլովք հանդերձ· որոց զինչութիւն յայտնի է ՚ի վերոյիշելոցդ·

Զայդ ամենայն գերազանցութիւնս եւ զդոյն նմանս՝ հարկաւ պարտին յանձին բերել նա եւ զաղափարք, շարաբանութիւնք, իդէայք, վերաբանութիւնք, եւ այլ ամենայն իմաստք պէսպէս անուամբք յիշատակեալք ՚ի վեր եւ ՚ի վայր· նոյնպէս եւ ամենայն տեսակ եւ մանր մասունք ճառից։

§ 134· Զինչութիւն բանի (ratio) եւ շարաբանութեան·

Բանն կամ բանականութիւն է երրորդ եւ գերակատար աստիճան ճանաչող կարողութեան եւ ներգործութեան հոգւոյ, որում իբրու մշակք ծառայեն այլ ամենայն կարողութիւնք մարդոյ· եւ որ ՚ի սակս անթարգմանելի աննիւթականութեան իւրոյ ոչ կապի ընդ տեղւոյ՝ ընդ ժամանակի՝ ընդ փորձառութեան եւ ընդ այլոց նիւթական հանգամանաց· այլ անցանէ զանցանէ քան զամենայն զգալիս, եւ վերասլանայ յանսահմանն՝ յանպայմանն եւ յանկապարն։ Հանրական ներգործութիւն սորա կոչի՝ Շարաբանել, իմա՝ զյոլով զաղափարս եւ զիմաստս շարակարգել ՚ի մի փունջ գիտնական, զցրուեալ անդամս ՚ի մի մարմին գումարել, զտարանջատ մասունս ՚ի մի բոլոր ձուլել, զանհամաձայնս համաձայնել, զներհականս արտաքսել, զխառնափնդորս պարզել, յեզականաց՝ առ ընդհանուրս յառաջանալ, եդեալ զգործս՝ զպայմանաւորս՝ զհետեւորդս՝ զմիջոցս՝ զսահմանաւորս՝ եւն, գտանել զնոցունց զպատճառն՝ ըզպայմանն՝ զնախընթացն՝ զվախճանն՝ զսահմանն՝ եւ զդոյնպիսիս· համառօտ ասել՝ զամենայն բազմութիւն՝ ՚ի միութիւն վերածել, կամ զանհամար ճիւղս եւ զբարունակաց՝ զմի միայն արմատն գտանել։ Ընդ սոյն սեռական ներգործութեամբ պարունակին յոլով ցեղականք· որոց գլխաւորք համարին, 1 առածաբանել, այն է՝ ՚ի խուռն անդ հետեւորդական ճշմարտութեանց որոնել և գտանել զմիակ նախընթացն, կամ զմայր և զսկիզբն նոցա․ որ ՚ի սակս գերազանցութեան իւրոյ անուանի՝ առած կամ սկզբնառած (principium)․ 2 պայմանաբանել, յեդելոց անտի պայմանակապ էակաց կամ ՚ի ներգործութեանց՝ ելուզանել զմի միայն պայման կարելութեան կամ գոյութեան նոցա․ 3 պատճառաբանել, յառձեռն եղեալ արարածոց՝ մակաբերել զարարիչ նոցին․ 4 վախճանաբանել, ՚ի շարս անդ էակաց կամ ներգործութեանց իբրու միջոց առ միմեանս կարգելոց՝ գտանել ըզմերձաւոր, զհեռաւոր, զվերջին, և զամենակատար վախճանն (absolutum)։ Ընդ դոքօք բովանդակին և այլ մասնական ցեղք, զորս յիշել ունիմք ՚ի բաժանման նոցուն։

Այլով տեսութեամբ ներգործութիւնք բանի բաժանին յիմացողական, որոյ առարկայ և նպատակ է լոկ ճանաչել․ և ՚ի գործականն որ յածի զառարկայիւ՝ զոր մարթ իցէ գործադրութեամբ գոյաւորել։

§ 135․ Զպտուղս կամ զարարածս բանականութեան ՚ի չգոյէ ճշդագոյն ձայնի՝ ընդհանրապէս կոչեմք Նախագաղափարս, կամ ըստ յունականին՝ իդէայս (idea, որ ծագեալ ՚ի յոյն բայէն՝ ἰδεῖν, εἰδέναι, նշանակէ զտեսիլ կամ զտեսեալ կերպարանս իրաց ՚ի միտս), որք արդեամբք ոչ այլ ինչ են, բայց եթէ գերազանց և գերամաքուր գաղափարք, կամ գերագաղափարք, ոչ կապեալք ընդ տեղւոյ՝ ընդ ժամանակի՝ ընդ նիւթոյ և ընդ այլոց մասնաւորութեանց․ և բաժանին յերկուս սեռս, յօրինակականս և ՚ի ստեղծականս։

Օրինակական անուանին՝ զորս միտքն ընդօրինակէ կամ արտագրէ ըստ հանգամանաց արդէն գոյաւոր էակաց կամ ներգործութեանց, և հատանին յերիս կարգս․ այնք են, իդէայք զԱստուծոյ, զբանական հոգւոյ, և զտիեզերաց․ յորոց յետինդ վերստին որոշի յանհամար սեռս և ՚ի ցեղս։

Ստեղծական կամ նորահնար իդէայք են՝ զորս միտքն իբրու կատարելագործ ճարտարապետ և ինքնագլուխ հեղինակ կամ արհեստաւոր՝ նորոգ յիւրմէ յօրինէ՝ զապագայ գոյանալի էակաց և զձեւակերտաց. կամ զորս հոգին՝ ըստ իրաւացի ոճոյ սուրբ գրոց (սղմս. Է. 15. յովբ. ԺԵ. 35. եսայ. ԻԶ. 18. ԾԹ. 4. 13. յակոբ. Ա. 15. 18. եւն) և սրբոց հարց՝ իբրու զաւակածին մայր, յարգանդի իւրում յղանայ երկնէ և ծնանի, ոչ միայն ըստ նիւթոյ՝ այլ և ըստ կերպի նոցա. ոչ ծառայական աշակերտութ՟ և նմանողութ՟ բնութ՟ կամ այլոյ ինչ նախատպի, այլ նորացեղ ստեղծագործութ՟, որոյ աղագաւ այսօրինակ իդէայ տիպարէս լինի և անուանի՝ Սկզբնատիպ. վասն զի ըստ տիպարու սորին յօրինի յետագայ արհեստակերտուածն. այդպիսի են յօրինակի համար՝ իդէայ յօրինելի ճառին՝ 'ի միտս ճարտասանին, իդէայ պալատան՝ 'ի միտս հիւսնապետի. և այլ անհամարք, յորոց և բաղկանայ մտաւորական կեանքն մարդկային հոգւոյ: Սկզբնատիպն՝ որովհետև ոչ նիւթապէս, այլ երևութաբար միայն գոյաւորի 'ի միտս մեր, յայն սակս կոչի ևս ուրեք՝ գաղափարական (ideale):

Ստեղծական սկզբնատիպք 'ի յոլով ցեղս հատանին. բայց գլխաւորքն են, 1 գիտնականք՝ զորս միտքն կերպաւորէ զազգի ազգի գիտութ՟ց և զմակացութ՟ց ըստ այլևայլ առարկայից. 2 գեղարուեստականք՝ 'ի պէտս յօրինուածոց գեղեցիկ արհեստից 'ի մտաց հնարեալք. որք են գիւտք ճարտասանից, բանաստեղծից, պատկերահանից, երաժշտաց. 3 բարոյականք՝ յառաջ քան զկամաւոր ներգործութ՟ս 'ի բարեպաշտից նշանակեալք. 4 ձեռագործականք՝ ըստ որոց կազմին բազմադիմի յօրինուածք արուեստից. 5 տնտեսականք, ընկերականք, քաղաքականք, և այլ նոյնպիսիք:

Այս կարողութ՟ պտուղ և արարած են վերացեալ իդէայք զճշմարտութ՟է և զստութ՟է, զգեղեցկութ՟է և զտգեղութ՟է, զբարութ՟է և զչարութ՟է, զիրաւացութ՟է և զանիրաւութիւն, զկատարելութիւն և զանկատարութիւն, և զայլոց նմանօրինակ հանգամանաց էակաց · զորս բանականութիւն պէս պէս որակութիւնք և քանակութիւնք թանձրացուցանէ 'ի ձեւակերպս և յայլ յօրինուածս իւր, ըստ արհեստից ։

Յուշի կալցեն համբակք՝ թէ ձայնդ բան՝ ուրեք նշանակէ զերամբարձ կարողութիւն հոգւոյ, ուրեք՝ զներքին պտուղ կամ զարարած նորա (զիդէայն), և ուրեք զարտաքին նշանն ներքնոյն, այն է՝ զներքինն բանն թանձրացեալ բառիւք · վասն որոյ ըստ պատշաճի տեղեաց յանկեսցեն զնշանակութիւն իւրաքանչիւրոյն՝ առ 'ի խորշել 'ի շփոթութենէ ։

§ 136 · Նիւթք բաղադրիչք շարաբանութեան՝ են պարզ իմաստք վերագոյն աւանդեալք · կերպ նոցա դնի յեղանակն կապակցութեան մասանց՝ առ 'ի կազմել զմի բոլոր · իսկ առարկայք՝ Նպատակք և գերազանցութիւնք նոցա՝ նոյնք են, զորս կանխաւ նշանակեցաք զիմաստից ։ Շարաբանութիւն կենդանի ձայնիւ կամ գրաբանութիւն արտայայտեալ՝ անուանի Յարասութիւն (periodus), զոր աստանօր փոխանակեմք ընդ յունամիտ ձայնին պարբերութիւն ։

Ըստ զանազան հանգամանաց իւրեանց՝ պէսպէս օրինակաւ բաժանին շարաբանութիւնք · եւ նախ՝ ըստ քանակութեան նիւթոյն բաժանին 'ի միանգամ, յերկանգամ, յեռանգամ, և 'ի քառանգամ ։ Միանգամ է՝ յորում բազմապատկեալ են կամ ենթակայք, կամ դիմաւոր բայք, և կամ մակածականք · որպէս, աշոտ և վասակ գնացին 'ի դավրէժ, վասակ ընկալաւ և ուրացաւ զհաւատս Քրիստոսի, աշոտ է ճարտասան՝ և իմաստասէր և մեծատուն ։ Երկանգամ է՝ յորում երկու ամբողջ իմաստք դնին առանձինն, և եղանակաւ ինչ յօդաւորին ընդ միմեանս · որպէս „ դատապարտէ արդար հանգուցեալ՝ զամպարիշտս կենդանիս · և մանկութիւն վաղվաղակի փոխանեալ՝ զբազմամեայ ծերութիւն անիրաւի ։ Եռանգամ է՝ յորում երեք իմաստք յօդակապին ընդ իրեարս ոճով ինչ · որպէս „ մի ոմն 'ի ներքին խորհրդակցաց արքայի 'ի ծածուկ ունէր զանքակ սէրն 'ի Քրիստոս, քան զի մկրտեալ իսկ էր յաւազանն կենդանի. և մեծապէս հոգ տանէր խնամոց կենաց վշտացելոցն (Եղիշէ · 82): Քառանդամն յինքն բովանդակէ զքառեակ ամբողջական իմաստ՝ կերպաւորեալ միջադրութ̃բ մասնկաց ինչ. որ„ ոչ եթէ չէր կարող Աստուած բառնալ զպատանայ 'ի միջոյ, քան զի չի՛ք ամենևին տկարութ̃ն զԱստուծով, այլ զի չէր ինչ մեծ գործ Աստուծոյ՝ զպատանայ ինքնին անձամբ սպանանել, և զպարարած մի զխուր փոքր՝ յոչինչ դարձուցանել, զի մի՛ կարծիցի՝ թէ վասն չժուժալոյ չարութեն նորա սպան զնա (Եզնիկ · 55): Առաւել քան զչորս իմաստս մուծանել 'ի մի մարմին շարաբանութե̃՝ ոչ ներէ ուղիղ դատողու̃ին, զի ձապաղեալ կթուցանէ զմիտս և՛ յօրինողին և՛ ընթերցողին. և թէպէտ գտանին օրինակք այնպիսեաց առ Նախնիս, սակայն չէ արժան նմանել նոցա յայսմ մասին. զի հակառակ է այժմեան յստակ պարզախօսութեան իմաստուն եւրոպական լեզուց, և բազումս վնասէ համբակ ուսանողաց. մանաւանդ երբ առարկայն իսկ դժուարըմբռնելի ինչ իցէ:

§ 137 · Երկրորդ՝ շարաբանութ̃իք ըստ գծացական կերպին պատանին 'ի բազում ցեղս յոյժ՝ տարօրինակս յերերաց, մանաւանդ եռանդամք և քառանդամք. բայց որովհետև սոքա կերպանան 'ի պէսպէս զուգադրութե̃ց երկանդամից, յայն սակս կարևոր դատի նախ քան զայնս՝ յառաջ բերել զոյգուն ծանօթութիւն: Արդ գլխաւոր ցեղք երկանդամից համարին քսան և երեք յետագայքդ, զորս ըստ կարգի տառից անուանց նոցա շարադասեմք սակաւ օրինակօք:

1 անկատարական, յորում երկու իմաստք այնպէս կապակցին համանուն շաղկապօք, մինչև միոյն անկատար մնալ առանց յարադրութե̃ միւսոյն„ թէպէտ և ոստովք առ ժամանակ մի պտկեսցէ (անօրէնն), սակայն զաղփաղփուն կանդաղեալն 'ի հողմոյ շարժեսցի... բայց թէպէտ և ասին ինչ անուանք 'ի գրոց յուշկապարկաց կամ համբարուաց կամ պարկաց, ըստ կարծեաց մտաց մարդկան ասին՝ և ոչ ըստ բնութ̅ (Եզնիկ. 97) :

2 առաւելական, յորում երկրորդ իմաստն զառաւելուն̅ կամ զգերազանց ինչ յաւելու յառաջինն, միջնորդութ̅ շաղկապաց, մանաւանդ, առաւել, յաւէտ, նա, Թող. ոպ,, որ բարւոք վերակացու լինին երիցունք՝ կրկին պատուոյ արժանի եղիցին, մանաւանդ որ աշխատիցին բանիւ և վարդապետութ̅ :

3 բաղդատական, յորում երեք և աւելի ևս գաղափարք բաղդատին ընդ միմեանս նախադրութ̅ քան. ոպ,, ծանր է քար, և դժուարաբառնալի աւազ, բայց բարկութիւն անզգամի ծանրագոյն է քան զերկոսեան :

4 բաղհիւսական, որ զբազում իմաստս զօդաւորէ ընդ միմեանս համանուն շաղկապօք,, չէ բաւական 'ի չար լինելոյ հեռանալ, այլ պարտ է և զբարիս գործել... դու զի՞ դատիս զեղբայր քո, կամ ընդէ՞ր անգոսնես զեղբայր քո :

5 բացառողական, յորում երկրորդ իմաստն դնի իբր բացառուն̅ կամ ուղղուն̅ առաջնոյն,, ոչ էր օրէն նմա ուտել, բայց միայն քահանայից :

6 դասական, յորում բազում գաղափարք կամ իմաստք հետ զհետէ շարին շղթայօրէն միջնորդութ̅ համանուն մակբայից,, երկիրն ինքնին բերէ զպտուղ, նախ զխոտն, ապա զհասկն, և ապա ցորեան ատոք 'ի հասկին:

7 ժամանակական, որ զայլևայլ իմաստս կապակցէ միջադրութ̅ նոյնպիսի մակբայից,, յորժամ տեսանիցէք շուրջ պատեալ զօրօք զերուսաղէմ, յայնժամ գիտասջիք թէ մերձ է օր նորա :

8 խնդրողական, յորում երկրորդ իմաստն կայի ը̅ առաջնոյն իբր խնդիր բայի ուրուք յառաջինն եդելոյ. ոպ,, սկսաւ քարոզել Յիսուս և ասել (զբանս զայս), ապաշխարեցէք՝ զի մերձեալ է արքայութիւն երկնից... Եւ 'ի հնումն զայսր տպաւորուն̅ օրինակաւ նկարագրեցեր, զդարձարուքն առ իս. և ես դառնամ առ ձեզ (Նաւէէ.

ծէ) · ընդ սովին բովանդակեմք և զայն եղանակ, յորում յետագայ իմաստն դնի իբր բացայայտիչ գաղափարի իրիք 'ի նախընթացն եդելոյ · ո՛վ,, այսօր լցաւ խոստումն Աստուծոյ առ նահապետսն , (յ) 'ի զաւակի նոյա օրհնիլ ամենայն ազանց :

9 հակադրական , յորում երկու ներհական իմաստք կապակցին մասնկամբք կամ առանց այնց,, որ ոչ մտանէ ընդ դուռն ոչխարաց՝ այլ ընդ այլ ելանէ՝ նա գող է և աւազակ · իսկ որ մտանէ ընդ դուռն՝ հովիւ է ոչխարաց · · · · հովիւ քաջ զանձն իւր դնէ 'ի վերայ ոչխարաց , իսկ վարձկանն թողու զոչխարս և փախչի :

10 հարցական , յորում առաջին իմաստն հարցանէ, և երկրորդն տայ պատասխանի՝ կամ զօրինակ և զնմանութի,, զի՞նչ ելիք տեսանել յանապատի , զեղէգն շարժո՞ւն 'ի հողմոյ · · · · ո՞ւմ երդուաւ չմտանել 'ի հանգիստն , եթէ ոչ անհաւատից · · · · ո՞վ է պաւղոսն կամ ո՞վ ապաւղոսն , պաշտօնեայք՝ որովք հաւատայցէք ·

11 մակաբերական · յորում առաջին իմաստն դնի իբր նախընթաց աղբիւր , իսկ երկրորդն իբր գետ հետևեալ և բղխեալ 'ի նմանէ , միջարկութ համանուն շաղկապաց,, մարդն է կենդանի, ապա ուրեմն է մահկանացու · · · եթէ հոգւովն Աստուծոյ հանեմ զդևս, ուրեմն հասեալ է 'ի վերայ ձեր արքայութին Աստուծոյ :

12 մեկնաբանական , յորում երկրորդ իմաստն դնի իբր բացայայտութի կամ լուսաբանութի առաջնոյն,, մերձ է բանն [illegible] բերան քո , այս ինքն՝ բանն հաւատոյ՝ զոր քարոզեմք :

13 յարացուցական , յորում յետագայ իմաստն մուծեալ լինի իբր օրինակ կամ իբր վկայութի,, մի թէ սպանանե՞լ կամիցիս զիս , զոր օրինակ սպաներ երէկ զեգիպտացին · · · տէր մեր առաքեցաւ 'ի հօրէ քարոզ հեթանոսաց , ընդ այնմ՝ եդի զքեզ յուխտ ազգի և 'ի լոյս հեթանոսաց :

14 յարաբերական . որ զերկուս իմաստս կապէ ընդ իրեարս միջադրութ՟ համանուն դերանուամն ,, որ էրն ՚ի սկզբանն , զորմէ լուաքն , որում ականատեսն իսկ եղաք , ընդ որ հայեցաքն ․ և ձեռք մեր շօշափեցին ՚ի վերայ բանին կենաց ։

15 նմանական , յորում յերկուց իմաստից՝ մին դնի իբր նախատիպ , և միւսն իբր պատկեր նորա , զօրութ՟ համանուն նախադրութեց՟ ,, ոպ՟ անհնազանդութ՟ միոյ մարդոյ մեղաւորք բազումք եղեն , նոյնպէս և հնազանդութ՟ միոյն արդարք բազումք եղիցին ․ ․ ․ ոպ՟ փայլակն որ ելանէ յարևելից և երևի մինչև յարևմուտս , այնպէս եղիցի և գալուստն որդւոյ մարդոյ ։

16 չափազանցական , յորում յետագայ իմաստն բացայայտէ զգերազանցութիւն և զչափազանցութ՟ ինչ քան զնախընթացն ․ նախադաս ունելով զշաղկապսդ , մինչ , մինչև , զի , անգամ ․ ևն՟ , ոպ՟ ,, այնքան կուրացեալ ես յատելութենէ , մինչ զի ոչ միայն զկարծիս ա՟դին , այլ և զազգն ողջոյն բամբասես ։

17 պայմանական , որ յերկուց անտի իմաստից՝ զմին դնէ իբր պայման գոյութ՟ կամ գործողութ՟ միւսոյն , ոպ՟ թէ սա կախեալ իցէ զնմանէ ՚ի գոլն և ՚ի գործելն ,, եթէ լուեալ էր քո պատուիրանաց իմոց , լինէր քեզ իբրև գետ խաղաղութ՟ քո ։

18 պատճառական , կամ հետևողական ․ յորում նախընթաց իմաստն եդեալ լինի իբր արարչական պատճառ , իսկ երկրորդն դնի իբր պտուղ և արարած նորա , նախադաս ունելով զմի ՚ի բառիցս , վասն , սակս , աղագ ․ ոպ՟ ,, նոքա զմերս ատեն ազգ , վասն այսորիկ և ՚ի մէնջ ատեսցին ․ կռփեն և կեղեքեն և հայհոյեն զմեզ , յաղագս այսորիկ և ՚ի մէնջ հայհոյեսցին ։

19 վարանական , յորում երկու իմաստք միջադրութ՟ համանուն շաղկապաց կապակցին ընդ իրեարս ,, թէ և յԱստուծոյ ոչ երկնչիմ և ՚ի մարդկանէ ոչ ամաչիմ , գոնէ վս՟ աշխատ առնելոյ զիս այրւոյն արարից նմա դատ ։

20 տեղական , որ համանուն մակբայից զօրութ՟ զերկու իմաստս կապէ ընդ միմեանս՝ ըստ յարաբերութեան վայրաց նոցա „ սա աստ մխիթարի, և դու այդր պապակիս • • • աստի առ ձեզ անցանել ոչ կարեն, և ոչ այտի որք առ մեզ անցանել ։

21 Տրոհական կամ անջատական, յորում ցուցանի թէ երկու առաջարկեալ իմաստք հակառակ են իրերաց, և չզօրեն համակ կալ 'ի միասին „ կամ արարէք բան առ բան նամակիդ պատասխանի, և կամ արիք 'ի դուռն եկայք, և յանդիման լերուք մեծի հրապարակիս ։

22 Փաստաբանական, յորում մին յիմաստից յառաջ բերի իբր փաստ առ 'ի ցուցանել զճշմարտութիւն խնդրակին, միջադրութեամբ շաղկապացս, զի, վասն զի, քանզի „ աշոտ է մահկանացու, վասն զի է կենդանի ։

23 Քանակական, որ զերկուս իմաստ 'ի մի ձուլէ զօրութեամբ համանուն մակբայից „ որչափ փառաւորեաց զինքն և խայտաց, այնչափ հատուցէք դմա սուգ • • • այնչափ առաւել եղեալ քան զհրեշտակս, որչափ լաւ ևս քան զնոսա անուն ժառանգեաց ։

§ 138 • Սոքին են ահա նշանաւոր եղանակք և ցեղք կերպաւորութեան երկանդամ շարաբանութեանց • բայց սակայն արտաքոյ դոցուն գտանին և այլք բազումք յոյժ, զորս և չէ հնար մի առ մի նշանակել • զի անպարափակ զօրութիւն մարդկային մտաց բերէ օրինակաւ զխոհս ծնանել և յօդակապել զիմաստս • որպէս տեսանի 'ի գրուածս ներհուն իմաստասիրաց և մեծահռչակ ճարտասանից զանազան ազգաց ։

§ 139 • Եռանդամ և քառանդամ շարաբանութիւնք արտադրին 'ի պէսպէս զուգադրութենէ երկանդամից ընդ իրերս • և որովհետև անթիւ և անհամար են եղանակք զուգադրութեանց, յայն սակս անմարթ է ընդ կանոնաւ ինչ գրաւեալ զայնս յառաջ բերել աստանօր • վասն որոյ շատանամք առաքելով զընթերցողս տեսանել զօրինակսն առ ընտիր մատենագիրս մեր, մանաւանդ առ խորենացւոյն, առ եղիշէի, առ եզնկայ, առ օձնեցւոյն, առ յովհաննու կաթողիկոսի պատմագրի · և առաւել ևս 'ի շարականս մեր · ուր ամենայն տունք երգոց գրեթէ մէն մի առանձին շարաբանութիւնք են բազմանդամ ։

Զցեղս և զանուանս եռանդամից կամ քառանդամից առնուլ պարտ է 'ի գլխաւոր իմաստէն կամ յերկանդամէն՝ որ տիրէ 'ի նոսա · իբր զի յամենայն բազմանդամս՝ մի ոմն յիմաստից համարի հիմն և արմատ , յոր այլք յաւելեալ լինին իբր շառաւիղք նորա · և զկոչումն իւրեանց ընդունին 'ի նմանէ · ըստ այսմ զցեղ մի նոցա տրամաբանք կոչեն ապացուցութիւն , զոր և բաժանեն յայլ վեց դասս , որք են ըստ նոցա , հաւաքաբանութիւն , հնարք , մակածութիւն , յարացոյց , համաբարդութիւն , և երկսայրաբանութիւն · որք իրօք ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ այլևայլ կերպարանք բազմանդամից ։

§ 140 · 'Ի կապելն զքանի մի իմաստս ընդ միմեանս առ 'ի յօրինել զշարաբանութիւն , գուն գործեսցեն Ճարտասանք՝ 'ի մէջ մասանցն մուծանել զկարգ (տեղւոյ և ժամանակի) , զյօդակապութիւն , զնախընթաց , զհետևորդ , զհոսումն նախընթացի 'ի հետևորդն , զկախումն հետևորդի 'ի նախընթացէն , զչափակցութիւն և զհամապատշաճութիւն մասանց ընդ իրեարս , զսկիզբն՝ զմէջ և զաւարտ , զուղղաշաւիղ ընթացս իմաստից և դատողութեանց (առանց թափառելոյ յաջ և յահեակ , յետ և յառաջ , 'ի վեր և 'ի վայր , առանց վայրապար 'ի ներքս բերելոյ զբացառութիւնս , զշարտուղութիւնս , ևն) , զմիապաղաղ սերտութիւն և զխստութիւն մասանց (այն է՝ չթողուլ 'ի մէջ մասանցն զծերպս՝ զխոռոչս և զխրամատս , և ապա ըստ յիմար որմնադրաց կարկատել և ծեփել զծակս անյարմար ; կամ գուցէ ներհական իդէայիւք և իմաստիւք) , զհիւսուած և որպէս թէ զշաղուած ամենայն մասանց՝ առ 'ի բոլորել զմի զանդուած ամբողջամասն , որպէս զի մի ցան և ցիր՝ յօշանդամ և ծայրակոտոր օձտեսցի մարմին բանին · այլովք հանդերձ ։ Զկանոնս զայդոսիկ առաւել ևս զգուշութեամբ յանկեսցեն Ճարտասանք 'ի յօրինելն զվերաբանութիս , և 'ի զուգաւորիլն զմասունս ձայնին առ 'ի կերպաւորել զմի բոլոր . զի բարեկարգութին ոչ միայն 'ի միջի մանրիկ մասանց , այլ առաւել ևս 'ի մէջ գլխաւորայն խստիւ պահանջի . և գեղեցկութի մարմնոյն 'ի գեղեցկութէ անդամոցն բաղադրի և կշռադատի ։

Ներգործութիք և պտուղք ճանաչողական կարողութս 'ի մի գումար հաւաքեալք՝ կայուցանեն զառաջին ցեղ իմանալի կենաց հոգւոյ մերոյ , որ կոչի՝ կեանք մտաւորական , տեսական , դիտողական , հայեցողական , ճանաչողական , իմաստական , գիտնական , ևն ։

ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

Յաղագս զգածողական և բաղձողական կարողութց , և պտղոց 'ի նոցունց արտադրելոց ։

§ **141** . Զինչութիւն զգածման (sensio, affectio, tactus).

Վասն զգածողական կարողութե ասացեալ եղև 'ի վերոյ , թէ 'ի հոգիս մեր վառեալ կայ յԱստուծոյ իբր հնոց , որ միշտ խնդրէ ինքեան զճարակ և զլուցկիս . և յորժամ գեղեցիկ առարկայք հուպ գան կամ ըմբռնին 'ի նմանէ՝ հոգին ուրախանայ և վարակի հեշտութբ՝ բերկրութբ և քաղցրութբ , զորէն լեզուի կամ քմաց 'ի շաքարահիւթ տողորելոյ . իսկ յորժամ տգեղք և զազիրք միաւորին՝ հոգին վարակի դառնութբ և ցաւով . այս քաղցր կամ դառն եղանակաւորութ՟ հոգւոյ՝ յըմբռնմանէ գեղեցկութ՟ կամ տգեղութ՟ ծագեալ, կոչի՝ Զգածութ՟ (շօշափութ՟ հոգւոյ), զորոյ զփորձ հանապազօր ճաշակեմք յընթացս կենաց՝ յուրախութ՟ս և 'ի տրտմութ՟ս, 'ի յաջողութ՟ս և 'ի ձախորդութ՟ս, յառողջութ՟ և 'ի խօթութ՟, և յայլ դէպս:

Յամենայն զգածմունս հարկ է ըստ մարթելոյ խորել զպարագայս յիշատակեալս վերագոյն ընդհանրապէս զամենայն ճգանաց . իսկ առանձինն զենթակայէ նորին զայն ծանուցանեմք, զի թէպէտ նոյն իսկ բանական հոգին է՝ որ կրէ և տիրապէս որականայ ամենայն զգածուբ՟ք, սակայն թէ սրբազան մատեանք (ղկս . իդ՟ . 32 . յովհ. ժդ՟ . 1 . 27 . ժզ՟ . 6 . 22 . գործ . բ՟ . 26 . ժդ . 16 . իա՟ . 13 . հռովմ . թ՟ . 2 . բ՟ կորնթ . բ՟ . 4 . եւն՟), և թէ հասարակ ոճ խօսից մեր և այլոց լեզուաց՝ սրտի ընծայեն զայնս, կամ զսիրտն համարին ենթակայ . և փորձառութ՟ն մեր վկայէ թէ յուրախութ՟ս և 'ի տխրութ՟ս զգամք զլայնութ՟ կամ զճնշութ՟ ինչ 'ի սահմանս սրտի և կրծոյ . զոր և բժիշկք հաւաստեն՝ ընդարձակիլ սրտի 'ի ցնծութ՟, և կծկիլ 'ի թախծութ՟ . այդոյիկ աղագաւ և մեք նմին ընծայելով՝ զգածութ՟ սրտի, կամ սրտազգածութ՟ կոչեմք զայն 'ի յետագայսդ, և իմանամք զնոյն իսկ զպտուղն արտադրեալ յայսմ կարողութ՟ կամ 'ի ներգործութ՟ հոգւոյ:

§ 142 . Պատկառ կացցեն համբակք՝ զզգածութ՟ սրտի չշփոթել ընդ զգայողութ՟ և իմացութ՟՝ վերագոյն աւանդելոյ . վասն զի 1 զգածիլն ոչ՟ ասացուք է կրաւորական վիճակ՝ յորում հոգին զոգ թոյլ տայ վարակիլ ինքեան, իսկ զգալն է ներգործական վիճակ կամ ներգործութ՟ . զի յօրինել՝ առնուլ՝ և ըմբռնել զպատկերս՝ են յաւէտ ներգործել, քան թէ՝ կրել . 2 զի զգալն 'ի դուրս յորձակի յառարկայ ինչ օտար 'ի հոգւոյն, իսկ զգածիլն 'ի նոյն իսկ 'ի հոգին զեղանի և անդ վարակէ . 3 զի զգալ և զգածիլ թէպէտ և յոլովակի ընդ միմեանս լծորդին 'ի նմին ենթակայի և զոյգ ներգործեն, սակայն բազում անգամ և տարանջատ գտանին․ ըստ որում հնար է զգալ՝ այլ ոչ զգածիլ․ և անդրադարձ սորին՝ զգածիլ՝ այլ ոչ զգալ․ ոպ՟ վայրենիք եթէ լսեն զքաղցրանոյշ ներդաշնակութ՟ի պարագլուխ երաժշտի, կամ տեսանեն զնկար աւագ պատկերահանի, զգան այո՛ աչօք և ականջօք, այլ ոչ զգածին․ ուր որոց ճաշակելիք կիրթ են յարհեստսդ՝ ոչ զգան եթ՝ այլ և ծայրագոյն հեշտութ՟բ զգածին 'ի սիրտ և 'ի հոգի․ իսկ զգածիլ առանց զգալոյ՝ ամենեցուն մեզ պատահէ հանապազօրեայ փորձիւ․ 4 զի զգայութ՟ին յածի զնիւթական որակութ՟ք․ որպիսի են, ջերմութ՟ի, ծանրութ՟ի, ձայն, համ, հոտ․ իսկ զգածումն առաւելապէս զբարոյական որակութ՟ք, ոպ՟ի են ամօթ, երկիւղածութ՟ի, պարկեշտութ՟ի, խանդ սիրոյ, և նմանք․ 5 զի ըստ հաւաստելոյ բժշկաց՝ ենթակայ կամ գործիք զգալոյ՝ են ջիղք, իսկ զգածիլն՝ տիրապէս 'ի հոգին ենթակայանայ, և անտուստ 'ի սիրտն զեղանի․ 6 զի զգացողութ՟ին յածի զներկայ առարկայիւք եթ, իսկ զգածիլ մարթ է նա և յիշատակութ՟բ անցելոց և ապագայից․ ըստ այսմ ճշմարիտ աստուածասէրք յուշ ածեալ զանցեալ մեղս՝ լնուն դառն ապաշաւանօք ։

§ 143․ Ցիշեցաք արդէն թէ յերկուս խումբս հատանին զգածմունք ըստ որակութ՟ցն․ 'ի քաղցր և 'ի դառն ։ Քաղցունք այլևայլ կոչմամբք առ մեզ բացատրին ըստ զանազան ցեղից և աստիճանաց իւրեանց, ոպ՟ի են անուանեալքն, Անուշութ՟ի, ակնկալութ՟ի, բերկրութ՟ի, գորով, զարմանք, դիւրութ՟ի, զովութ՟ի, զուարճութ՟ի, լրջութ՟ի, խտտղումն, խրախոյս, խանդաղատանք, խնդութ՟ի, խրախութ՟ի, ծաղր, ծիծաղ, կաթոգնութ՟ի, կայտիռ, համարձակութ՟ի, հիացումն, հրճուանք, մարմաջումն, մորմոքումն, յոյս, ուրախութ՟ի, սխրանք, սփոփանք, սքանչանալ, վստահութ՟ի, ցնծութ՟ի, փղձկումն, քքուանք, քնքշութ՟ի, և նմանք ։

Նոյնպէս և դառն զգածմունքս, Աղեկծութիւն սրտի, ակնկորութիւն, ամօթ կամ ամաչել, այրեցումն, անձկութիւն, ապաշաւ, գխլումն, գալարումն, դառնութիւն, երկիւղ, զարհուրանք, զայրացումն, զկծանք, զիղջ կամ զղջումն, զզուութիւն, թալկութիւն, թախծութիւն, խէթ, խոժոռութիւն, ծփումն հոգւոյ, կասկած, կսկիծ, կոտտումն, հեղձումն, հոգ կամ հոգածութիւն, ճայթումն, ճմլումն, մաղձոտութիւն, մորմոք, մտայուզութիւն, նուաղումն, շուարել, պատկառանք, սլշգանք, սարսափ, սուգ, ստրջացումն, վարանք, վիշտ, վհատութիւն, տաղտկութիւն, տառամութիւն, տխրութիւն, տրոփումն, տրտմութիւն, ցաւ ներքին, և դոցին նմանք. զորոց զառ յիրերաց խտիր բացատրեն հոգեբանք՝ զոյգ ընդ այլոց տեղեկութեանց:

§ 144. Աղբերք զգածմանց.

Աղբերակունք՝ յորոց իբրու ՚ի ստեանց ոմանց ծորեն զգածմունք ՚ի սիրտս մեր, համարին եօթն այսոքիկ.

1 Մարմին և զգայարանք, և նոցունց պէսպէս զգացողութիւնք, որպէս են օրինաւոր անմեղ վայելչութիւնք, ջերմութիւն, քաղց, ծարաւ, խոնջութիւն, հանգիստ, ծիծաղ, խաղարկութիւն, վէրք, ցաւք, և այլ դոյնպիսիք, յորոց զեղուն ՚ի հոգին զգածմունք դոցին համեմատք:

2 Երևակայութիւն, որ կամ զանցեալս յուշ ածելով; կամ զապագայս ներկայ բերելով, և կամ զնոր պատկերս ինքնահնար կեղծելով, զգածէ զհոգին բերկրութեամբ կամ լեղեաւ. ո՞չ չարանախանձ հոգիք քանիցս յիշեն զզրկանս յայլոց կրեալս՝ լնուն դառնութեամբ:

3 Համակրութիւն և հակակրութիւն, որք ըստ անթարգմանելի օրինաց բնութեան փոխադրեն ՚ի մեզ զնոյն զգածմունս՝ զորս յայլս տեսանեմք. ըստ այսմ վկայութեամբ Հորատիոսի՝ մարդկային դէմք լան ընդ լացողս, և խնդան ընդ խնդացողս. և սիրտք մեր բազում անգամ ՚ի վիշտս և յուրախութիւնս այլոց, մանաւանդ նմանեաց և ծանօթից մերոց՝ զգածին նովին կարեկցութեամբ. այլուր խորշումն և

հակակրութի՟ ինչ ծնանի 'ի մեզ յանձանց կամ յիրաց՝ առանց գիտելոյ իսկ մեր զառիթն . առաւել դիւրազգած ենթակայ կրիցդ համարին կանայք , մանկունք , և յարանց անտի՝ որոց աշխոյժ է երևակայութի՟ , փղձուկ սիրտ , կամ արիւնային խառնուածք , ևս և կենցաղակիրթ և քաղաքավար անձինք . ոպ՟ հակառակ այդմ սոքա վայրենիք և տգէտք զուրկ գտանին 'ի համակրութէ՟ . և յանձին բերեն զանկրականութի՟ ինչ և զմարդատեցութի՟ :

4 Գեղեցկութի՟ բնական՝ արհեստաշէն՝ և իմանալի առարկայից , ոպ՟ արշալոյս , ծիածան , աստղալից երկինք, ծաղիկք , մարգագետինք , պատկերք , բանք , շարժուածըք , զաւեշտութի՟ք , սրամիտ կատակք , բանաստեղծական քերթուածք , ներդաշնակութի՟ք երաժշտականք , և բազում այլ գեղեցիկք զգածեն զմեզ բերկրանօք . ոպ՟ և ներհականք դոցին՝ տգեղութի՟ք և այլանդակութիւնք դառնացուցանեն :

5 Լուսաւոր և խաւար որակութի՟ք մտաց , կամ մտաւոր ճշմարտութի՟ , իմաստութի՟, վսեմական իդէայք , և գիւտ այդպիսեաց, որք իմանալի հեշտութի՟ք լինուն զհոգիս ուսումնասիրաց 'ի վեր քան զամենայն քաղցրութի՟ս մարմնոյ և զգայարանաց . մինչև երբեմն 'ի հոգւոյ անտի 'ի մարմինն իսկ զեղուլ , ոպ՟ պատմի զԱրքիմիդեայ :

6 Առաքինութի՟ք և մոլութի՟ք , կամ դատումն զբարութէ՟ և զչարութէ՟ բարոյական ներգործութեց՟ մերոց և այլոց . զի բարեգործութի՟ք անուշակ հեշտութբ՟ դրդեն զհոգիս մեր , ոպ՟ և մեղանչական գործք դիւալլուկ դառնութբ՟ տոչորեն . և այս է անուանեալն բարոյական զգածումն . որոյ զօրութբն՟ սրբք՟ և առաքինիք տարան ուրախասիրտ ազգի ազգի տանջանաց և նեղութեց՟ :

7 Ուղղափառ կրօն և անկեղծաւոր աստուածպաշտութի՟, յորմէ նոյնպէս բղխեն երկնային քաղցրութի՟ք 'ի հոգին , մանաւանդ յետ արժանապէս կատարելոյ զաստուածային պաշտամունս , և զսրբազան խորհուրդս և զարարողութի՟ս եկեղեցւոյ . որոյ զանցառութի՟ն և չարաչար կատարումն լնու դառնաճիւ զսիրտ մարդոյ :

§ 145. Եօթնեակ այդ ցեղք զգածմանց՝ ըստ աղբերացն անուն ընկալեալ յորջորջին՝ զգայականք, երեւակայականք, համակրականք, գեղերեստականք, իմացականք, բարոյականք, եւ կրօնականք. որք առ միմեանս բաղդատեալք մի քան զմի բուռն եւ յերկարատեւ համարին. եւ պէսպէս օրինակաւ ներգործեն 'ի միտս 'ի կամս եւ 'ի գործս մարդոյ:

Քաղցր եւ դառն զգածմունք՝ հարկաւոր պայմանք են, նա թէ աղբիւրք եւ պատճառք ամենայն բանաստեղծութեանց, ոգեշնչութեանց, երաժշտութեանց, ներդաշնակութեանց, հաւներգութեանց, պարերգութեանց, տաղից, նուագաց, շարականաց, մեղեդեաց, երգոց, եւ այլոց պէսպէս ձայնարձակութեանց, ո՛չ եւ այնց՝ զորս քերականք միջարկութիւնս կոչեն:

Ներգործութիւնք եւ պտուղք զգածողական կարողութեան՝ համօրէն առեալք՝ կացուցանեն զերկրորդ աստիճան կամ զցեղ իմանալի կենաց հոգւոյ մերոյ, որ կոչի՝ կեանք գեղազգածական, սրտազգածական, կրիցաշարժական:

§ 146. Զինչութիւն բաղձանաց (appetitio, aversio).

Բաղձողական կարողութիւն է ձիրն՝ ըստ որոյ հոգին ջանայ գոյաւորել զբարի առարկայս, եւ խափանել զգոյութիւն չար առարկայից. առաջին ներգործութիւն անուանի հետապնդութիւն (փափագ, տենչանք, ախորժակ, իղձ, եւն). իսկ երկրորդն՝ յետադարձութիւն (խորշումն, փախուստ, դժկամակութիւն, տհաճութիւն, մերժումն). զի երբ հոգին ճանաչէ զառարկայ ինչ լինել քաղցր՝ օգտակար՝ եւ բարի, իմա՛ յագեցուցիչ բնական ճգանաց իւրոց, անդէն հրամայէ բաղձանաց զհետ պնդել այնմ, գոյաւորել՝ 'ի ձեռս բերել՝ եւ վայելել զայն. իսկ ուր գտանէ զառարկայն լինել դառն՝ վնասաբեր՝ եւ եղծանող ճգանաց՝ հրամայէ նոյնպէս բղձանաց հեռանալ յայնմանէ եւ սպառել զայն. եւ այդ կրկնաւոր ջանք հոգւոյ միով սեռական ձայնիւ կոչին, դրդութիւնք կամաց. որք երբ բորբոքին՝ 'ի հոգւոյ պեղանիս եւ 'ի մարմինն.

և շարժեն զնա յարդիւնմունս իրագործութեան. և որովհետև բարիք ընդհանրապէս յերիս կարգս հատանին, 'ի հեշտականս՝ որք զմարմինն անուշեն, յօգտակարս՝ որք միջոց լինին առ ստացումն մերձաւոր նպատակի իրիք, և 'ի համեստս՝ որք վասն սրբութեան իւրեանց առանց ամենայն օգտի ցանկացեալ լինին, յայդմանէ և բաղձանք մարդոյ ասի բաժանիլ յերիս աստիճանս. այնք են՝ ստորին կամ զգայական՝ որ ձգի առ հեշտականս. միջին կամ իմացական որ դիմէ յօգտակարս. և վերին կամ բանական՝ որ յարձակի 'ի համեստս, և երրորդս այս է՝ որ կոչի՝ կամք, կամեցողութիւն, ընդ որում լծորդ համարի ազատութիւն, զորոյ բազում ինչ բարոյախօսք։

Զկանխասաց պարագայս ձգմանց յանկեսջիր ըստ կարի և այսմ կարողութեան, պահմամբ համեմատութեան. զի մի կրկնեսցուք զնոյն աստանօր յումպէտս. 'ի նախնի և յայժմեան աստացելոյդ իմացեալ լինի ինքնին առանց մեր խօսելն այսր կարողութեան յերկուց նախընթացից. և չէ մարթ շփոթել զնոյն ընդ իրեարս. զի զգածողականն կրաւորական գոլով ինքնին որոշի 'ի սմանէ. իսկ ճանաչողականն թէպէտ ներգործական է, այլ տարբեր յայսմանէ. զի նա ճգնի յօրինել զգաղափարս առարկայից, իսկ սա դուն գործէ գոյաւորել կամ նորոգացուցանել զգոյութիւն նոցա. վասն այդորիկ ընդ այսու կարողութեամբ պարունակին և իմացեալ լինին ամենայն մրցութիւնք, ջանացողութիւնք, փոյթք, եռանդք, գործողութիւնք, ներգործութիւնք, առնելութիւնք, շինողութիւնք, արհեստագործութիւնք, և որ ինչ այլ ևս ազդուութիւնք իցեն մարդկային հոգւոյ 'ի ներքուստ առ արտաքս։

§ 147. Պտուղք Բաղձանաց.

Արդասիք 'ի պէսպէս ներգործութեանց բաղձանաց արդիւնացեալք՝ են որակութիւնք ինչ, զորս կոչեմք դրդութիւնս, և ըստ ցեղից ներգործութեանց բաժանին 'ի հետամտականս և 'ի յետադարձականս։ Առ հետամտականն՝ որ ջանայ իրաւորել զբաղձալին, վերածին անուանեալքն, 1 սէր կամ սիրելութիւն, որ ըստ պէսպիսութեան առարկայից զատանի 'ի բազում ցեղս․ որք են, ազգասիրութիւն, արծաթսիրութիւն, անձնասիրութիւն, բարեկամութիւն, ընկերսիրութիւն, իմաստասիրութիւն, հայրենասիրութիւն, հեշտասիրութիւն, մարմնասիրութիւն, շահասիրութիւն, պատուասիրութիւն, փառասիրութիւն, և այլք բազումք․ 2 թշնամութիւն, ոսոխութիւն, չարակամութիւն, վրէժխնդրութիւն, նախանձ, քէն․ 3 յամառութիւն, կամակորութիւն, խստասրտութիւն, հեստութիւն, անլսողութիւն․ 4 չարակնութիւն, նախանձաբեկութիւն, յաչաղանք, խանդանք, լրբութիւն, արհամարհել զայլս․ 5 հեշտախտութիւն, որկրամոլութիւն, վաւաշոտութիւն, արբեցութիւն, դատարկակեցութիւն, խաղասիրութիւն․ 6 զառանցանք և բանդագուշանք մտաց առ 'ի գործել զմեծամեծ և զվսեմական կարծեցեալս յիրս կամ 'ի նիւթս կրօնի՝ եկեղեցւոյ՝ հայրենեաց՝ ազգի՝ գիտութեանց՝ արհեստից՝ ընկերութեան՝ և դոյնպիսեաց։

Իսկ առ յետադարձականն՝ որ երեսդարձութեամբ խորշի յառարկայէն և ճգնի չքացուցանել զայն, վերածին, 1 զզուութիւն, պժգանք, տաղտկութիւն, տհաճութիւն․ 2 ատելութիւն, զոր պարտ է զանազանել 'ի թշնամութենէ, զի ատել է սաստիկս զզուիլ՝ առանց վնասել կամելոյ ատելոյն․ իսկ թշնամացեալն յաւելու յայն նա և զհատուցումն վնասու․ 3 երկիւղ, անվստահութիւն, յուսահատութիւն, փոքրոգութիւն, խէթ, կասկած, սարսափ, սոսկումն․ 4 բարկանալ, գժգմիլ, զայրանալ, պչրիլ, ծանրամտիլ, կատաղիլ, մաղձոտիլ, մոլեգնիլ, սրտմտիլ, վշտանալ, ցասնուլ, և այլ այդպիսիք։

§ 148․ 'Ի դոցունց որք ոչն հակառակին աստուածային օրինաց և ուղիղ դատաստանաց մտաց՝ բարի են, և բազում ուրեք պիտանի․ իսկ որք պատերազմին պատուիրանաց Աստուծոյ և բանականութեան՝ մոլեկան և չար են, և առանձինն կոչին՝ մոլութիւնք և ախտք հոգւոյ (passio), զոր յետինքս՝ կիրք անուանեն, բայց ոչ ուղիղ․ զի դոքա չեն լոկ կրելութիւնք յայլոց, այլ մանաւանդ ճգանք ներգործելոյ յայլս։

Ոմանք 'ի դոցունց թէպէտ առ աղքատութ՟ ճիշդ բառից՝ համանուն գտանին ընդ վերոյիշեալ զգածմանց սրտի, սակայն ըստ ինչութ՟ն ոչ են նոյնանիշ. զի զգածմունք տոգորեն միայն զհոգին, կամ գրգռեն ևս զնա 'ի գործել կամ 'ի փախչել, իսկ բաղձանք յաւելուն զնոյն իսկ զներգործութիւնն. որպէս ասացեալ է ըստ բաւականին ։

Ներգործութիւնք և պտուղք երից կարողութ՟ց՝ յոլովակի ընկերանան 'ի մի, և զոյգ ներգործեն, ևս և 'ի միում վայրկենի, մինչև չմտադրել իսկ մեզ խտրութ՟ նոցին. զի մի և նոյն է հեղինակ ամենեցուն հոգին. բայց և այդպէս խտիր և կարգ նոցա բնաւ ոչ եղծանի, և ոչ մին 'ի միւսն փոխարկի. զի ամենայն ուրեք նախ ճանաչողականն կարապետէ, ապա զհետ գայ զգածողականն 'ի միջոցին, և հուսկ յետոյ 'ի վերայ հասանէ բաղձողականն. անշփոթ միշտ պահելով զյատկութ՟ի և զիսկութ՟ի իւրեանց ։ Այլ իմն զայդ յայնպիսի առարկայս՝ որք զերիսին ևս պահանջեն, որպիսի են գործադրականք ամենայն. զի 'ի լոկ գիտնական նիւթս ուսմանց և արհեստից՝ միտքն միայն պատաղի, և հազիւ ուրեք կամ ոչ երբէք խլրտին անդ զգածմունք կամ բաղձանք ։

Ներգործութիւնք և պտուղք այսր բաղձողական կարողութ՟ համագումար ժողովեալք՝ կացուցանեն զերրորդ ցեղ իմանալի կենաց մարդկայինս հոգւոյ. որ կոչի՝ կեանք ներգործական, բարոյական, արարչական, իրագործական, կամարարական, ևն ։

Զզգածողական և զբաղձողական կարողութ՟դ նախնիք չփոթեալ խառնակեցին ընդ իրեարս, և մի ինչ համարեցան զնոսին. և դեռ չեն յիսուն ամք՝ յորմէ հետէ խորախորհուրդ իմաստասէրք գերմանիոյ որոշեցին զայնս 'ի միմեանց. վասն այնորիկ յոլով ինչ հանդամանք և խտրութ՟ք երկոցունցդ տակաւին ընդ խաւարաւ ծածկեալ կան առ 'ի մէնջ. զորս յետ ժամանակաց յուսամք թէ լուսաւորեսցեն նրբազնին հոգեբանք ։

§ 149. Ցեղք գրգռութեանց.

Զճիշդ բնութ՟ և զյատկութ՟ վերադաս գրգռութ՟ց ընդարձակ ճառեն հոգեբանք և բարոյագէտք. բայց ըստ որում սակաւ են յազգի մերում այնպիսի մատեանք, ոչ անտեղի ինչ համարիմք գոնէ զոմանս 'ի նոցունց սուղ բանիւք լուսաբանել յայսմ վայրի. ոպ՟ և սովորութ՟ է ճարտասանից:

§ 150. Սէրն ընդհանրապէս առեալ՝ է քաղցր և բուռն ձգանք հոգւոյ յառարկայ այնպիսի, որոյ լիական կամ կեղծ բարութիք ծնանին 'ի մեզ զանուշակ հեշտութիւն՝ 'ի սակս հանգիտութ՟ և քաջադիպութ՟ ինչ նորա ընդ մեզ. բաժանի յայլևայլ ցեղս վերադոյն յիշատակեալս. յորոց կէսք բարի են և սուրբ, և այլք՝ մեղանչականք. և պարտիք ճարտասանին են զմաքուրսն բորբոքել, իսկ զանառակսն շիջուցանել:

Ճշմարիտ սէրն և սիրողն գոգցես միշտ լինի, 1 կապիկ՝ զի ջանայ յամենայնի նմանել սիրելւոյն, որով և կարասցէ. 2 մունետիկ՝ զի քարոզէ ամենեցուն զճշմարիտ կամ զկեղծ գերազանցութիս նորա, և զանուն նորա ունի հանապազ 'ի լեզուի և 'ի սրտի իւրում. 3 պատկերահան՝ զի զկերպարանս և զամենայն հանգամանս սիրելւոյն նկարէ նախ 'ի մտի և 'ի հոգւոջ իւրում, և ապա յանդիման այլոց՝ ոպ՟ զիարդ մարթասցի. 4 ընկեր, որ ամենայն ուրեք ցանկայ անբաժան առաջակայ գտանել նմա. 5 հիւանդոտ՝ զի այրի և մաշի տապով ցանկութ՟ նորա. 6 շռայլ՝ զի զամենայն ինչ զիւր անխնայ վատնէ վասն նորա. 7 կասկածոտ և երկչոտ, զի դողայ կորուսանել զնա, բաժանիլ 'ի նմանէ, կամ անհաճոյ գտանիլ յաչս նորա. 8 խելագար, զի գործէ և կրէ զանվայելս աստիճանի և վիճակի իւրում. 9 յանդուգն՝ զի վասն նորա յանձն առնու զամենայն վտանգս և նեղութիս. 10 անհամբեր՝ զի ոչ տանի յապաղանաց և յետաձգութ՟. այլ առ կիտին կամի՝ զոր և կա մի · **11** աղճատակեաց՝ զի մռայեալ լքանէ զինքն և զիւրսն՝ միտ եդեալ միայն՝ որում սիրէն · **12** անպարտելի, զի որով և է նշանաւ մատնէ և հրապարակէ զինքն այլոց, ևս և յոկամայս : Զայս նկարագրութիւն ճշմարիտ սիրոյ 'ի թիւ արկանէ առաքեալն 'ի ա կորնթ․ ժգ․ զոր կարդա՛ :

§ **151** · Գլխաւոր շարժառիթք բորբոքելոց կրից և զկամս ունկնդրաց՝ առ 'ի սիրել զանձն՝ զիր՝ կամ զոր և իցէ բարի առարկայս, են գովանի հանգամանք նոյն իսկ անձին կամ առարկային · Յորոց նշանաւորքն են՝ բարութիւն նորա բազմադիմիք վերագոյն յիշատակեալք · այլ և օգտակարութիւնք, կատարելութիւնք, օրինաւորութիւնք, խրատացութիւնք, և այլ գեղազանցութիւնք առարկային · զորոց զիրական գոյութիւն յառարկայն՝ հաստատել պարտի ճարտասանն անխորտակելի փաստիւք, յաւելլով յայնս և զայնպիսի ցեղս վերաբանութեան զ'ի յետագայս յիշատակելս · իսկ զօրինակս նոյա մարթ է տեսանել առ Կիկերոնի 'ի պէսպէս ճառս նորա, որպէս են վասն Միլոնի (Գլ․ 38)․ վասն Սուլպիկեայ (Փիլիպ․ Թ․ 5․ 6․)․ վասն Դրէպոնից (նոյն, ԺԱ․ 4)․ վասն Մուրենայ (9․ 40․) վասն Պոմպէի, և վասն այլոց : Դովլին արուեստիւ յաղթանակել պարտի ճարտասանն 'ի յուզելն կամ 'ի շիջուցանելն զյետագայ գրգռութիւնդ · այն է՝ զգութն իսկ հանգամանս առարկային կենդանագրելով ճշգրտահան գրչաւ և վրձնաւ · զորմէ և այլուր ունիմք տեսանել զկարևորն :

§ **152** · Տաղտկութիւն, զայրացումն, ատելութիւն, թշնամութիւն, են զանազան աստիճանք ըղձից հոգւոյ, որ զերեսս դարձուցանէ յառարկայէ՝ զոր իրաւամբք կամ յանիրաւի համարի լինել չար՝ վնասակար՝ թիւր՝ անօրէն՝ անկատար՝ արգելեալ՝ ագեղ, և՛ն · ըստ առարկային որ պիտուն մարթի լինել գովելի, ոչ տալ զմոլութիւնս և զմեղս, կամ պարսաւելի՝ ոչ տալ զբարիս և զառաքինութիւնս · ապա ըստ որպիսութեան նորա կամ՝ շիջուցանէ կամ բորբոքեսցէ Ճարտասանն զատելութիւն ունկնդրացն, օրինակ ունելով բազում բանս առ Սարգսի մեկնչի, և առ Կիկերոնի 'ի Ճառսն ընդդէմ Կատիլինայ, տոլապելայ, Կլոդիոյ, և այլուր. որպէս և առ Տակիտոսի 'ի բանսն Կալկաքոսի առ. բրիտանացիս ընդդէմ հռովմայեցւոց:

§ 153. Բարկութիւն, վրէժխնդրութիւն, ցասումն, սրտմտութիւն, է սաստիկ բորբոքումն հոգւոյ՝ որ ցաւի ընդ վնաս և արհամարհութիւն յանիրաւի հասեալ ինքեան կամ այլում անմեղի. վասն որոյ և մտաբերէ պատժել զանիրաւն և հատուցանել նմա զարժանն. ուրեք գովելի և արդար է այս իղձ, վասն որոյ և յուզելի 'ի Ճարտասանէն, կենդանագրելով զծանրութիւն զպարագայս և զեղանակ անիրաւութեան, զապերախտութիւն և զչարութիւն վնասաբար անձին, զանմեղութիւն և զլաւութիւն վնասելոյն, զհետևանս զառ 'ի վնասուէն 'ի վերայ հասեալս կրողին կամ այլոց, և զնոյնպիսիս. որոց օրինակք կան 'ի Ճառն Կիկերոնի ընդդէմ Վերրեսի, և 'ի բանն յաղագս սպանութեան Մետելոսի 'ի կնոջէն դեղելոյ. սակայն բազում ուրեք չար է բարկութիւն և անիրաւ, վասն որոյ Ճարտասանն պարտի շիջուցանել զայն և 'ի հեզութիւն փոխարկել, ցուցանելով թէ ոչ չար դիտաւորութեամբ և յօժարակամ յանդգնեալ է վնասողն, այլ անխորհուրդ մտօք և ըստ դիպաց, կամ յայլոց բռնադատեալ և խաբեցեալ, թէ արդէն զղջացեալ է և ներումն խնդրէ, թէ վնասն չէ այնչափ ինչ ծանր և անբուժելի՝ որպէս կարծի, թէ յանցաւորն պիտանի ոք է և խնայելի վասն անցելոյ և ներկայ վաստակոցն կամ յապագայն յուսացելոց. յորս մարթ է յաւելուլ և զդիպողութիւն տեղւոյ՝ ժամանակի՝ և միջնորդաց, այլ և զշարժառիթս 'ի սուրբ գրոց քաղեալս՝ եթէ եկեղեցական իցէ Ճառն: Ներգործութիւնք և նշանք բարկացելոց յայտնի են ամենեցուն, զորս և գեղեցիկ նկարագրէ Սարգիս վարդապետ 'ի մեկնութեան կաթողիկեայց. ուր առաքեմք զընթերցողս գտանել ոչ միայն զայսր, այլ և զայլոց ես նախընթաց և յետագայ կրից զնշանս՝ զդէմս և զշարժառիթս, այլովք բազմօք հանդերձ, զորոց և մեր խօսեցեալ է սակաւ ինչ 'ի կրօնագիտութեան :

§ 154 · Անձուկ, փափաք, կարօտ, է զեղումն և յարձակումն հոգւոյ առ 'ի ստանալ և 'ի ժառանգել զառարկայ ինչ բացակայ, որոյ բարութիւնք և գերազանցութիւնք յոյժ սիրելի են մեզ · գովելի է սա և գրգռելի 'ի ճարտասանէն՝ եթէ առարկայն արդարև իցէ բարի, որպիսի են գիտութիւնք, առաքինութիւնք, հոգևոր և հանդերձեալ բարութիւնք · ապա թէ կեղծ և անարժան բարի իցէ՝ շիջուցանելի է փափաք նորա :

§ 155 · Ակնկալութիւն, յոյս, վստահութիւն, որ ծնանի 'ի նախընթացէն · զի երբ փափաքեալն դատի ևս մարթելի առ ստացութիւն՝ միջոցօք 'ի ձեռին մեր եղելովք, անդէն բղխէ յոյս · ոչ ընդ հակառակն՝ 'ի ճանաչել հոգւոյն թէ անհնարին է ստանալ զփափաքեալն՝ ծնանի յուսահատութիւն · սոքա երկոքին ևս մարթին լինել առաքինական կամ մոլեկան, արծարծելի կամ խամրելի, ըստ առարկային որպիսութեան · վասն որոյ զգովելի յոյս մարթ է զարթուցանել՝ յառաջ բերելով թէ հնար է ստանալ զբարին վասն այս ինչ և այն պատճառաց, թէ 'ի նման դէպս արդէն ստացեալ է մեր կամ այլոց՝ զայն կամ զնմանն, թէ 'ի պատրաստի կան միջոցք և հնարք զօրաւորք առ ստացութիւն նորին, ճոխութիւն, բարեկամք, պաշտպանք · ևն, թէ սակաւ կամ թեթև ինչ են խափանարարքն և հեշտութեամբ վանելիք, ևն · զայդոսիկ ընդհակառակն շրջելով մարթ է ծնուցանել զյուսահատութիւն առ 'ի ստանալ զանարժան առարկայս, ստութեամբ բարի համարեալս 'ի հեշտասիրաց :

§ 156 · Ուրախութիւն, խնդութիւն, է զեղումն սրտի առթեալ 'ի ստացութենէ և 'ի ժառանգութենէ ակնկալեալ բարւոյն · ուր եթէ անակնկալ էր բարին և արտաքոյ յուսոյ 'ի ձեռս եկեալ՝ ծնանի ցնծութիւն, խայտանք, սաստիկ աստիճան ուրախութեան · զորս թէ օրինաւոր իցեն՝ մարթ է և ևս բորբոքել նկարագրելով և ընդլայնելով զմեծութիւն բարւոյն, զնորօրինակն լինել, զպարունակել նորա զայլևս զանազան բարուց և զհետեւանս, զազատելն 'ի թշուառու՟ց՝ որք կանխաւ պաշարեալ էին կամ իբր ապագայ նախատեսեալ, և զայլ սոյնպիսիս. որոց ներհակնօքն արժան է շիջուցանել զանօթի ուրախու՟ս յանարժան առարկայէ ծնեալս.

§ 157. Երկիւղ, սարսափ, է ծփանք և վրդովու՟մ սրտի ծագեալ 'ի վնասաբեր առարկայէ նախատես եղելոյ և մօտ առ դուրս հասելոյ. յորում անմարթ իցէ կամ յոյժ դժուարին՝ զերծ լինել. Թէ բորբոքել կամիցի զսա Ճարտասանն՝ նկարեսցէ զդառնու՟թի զծանրու՟թի և զմեծու՟թի չարին, զլինելն մերձակայ, հաստատ, անխորշելի, ոչ միայն հասարակաց՝ այլ և իւրաքանչիւր անհատից վնասակար, ևն. յորս յաւելցէ ևս զնախընթաց կամ զներկայ նշանս չարին, զօրինակս նոյին տագնապելոյ, զկատաղու՟թի պատճառողին, զպակասու՟թի հնարից և միջոցաց առ ազատիլ յայնմանէ, և զսոյնպիսիս. ապա եթէ փարատել հարկ իցէ զերկիւղն, առցէ փաստս 'ի հակառակ մասանց յիշատակեալ գլխոյդ։ Ըստ սա վերածին ևս անհամարձակու՟թի, կասկած, փոքրոգու՟թի, կարճամտու՟թի, յուսահատու՟թի, ևն։

§ 158. Տրտմու՟թի, տխրու՟թի, թախծու՟թի, ցաւ. է դառնու՟թի կամ ո՟պ թէ հիւանդու՟թի հոգւոյ, ծնեալ 'ի չար առարկայէ, որ առ և այժմ կալեալ զմեզ՝ տանջէ և ցաւեցուցանէ, ո՟պ ներկայ խօթու՟թին զմարմինն. սա ըստ պէսպիսու՟թ պատճառողացն և եղերաց՝ այլևայլ անուանս ընդունի. զի թէ առիթ չարին այլ ոք իցէ և մեք անմեղու՟թ կրեմք՝ տրտմու՟թի կոչի. ապա թէ մեք իցեմք պատճառ վնասուց և ձախորդու՟թ և մերովքս յանցանօք առիթ տուեալ այնմ, յայնժամ ասի զղջու՟մ, ապաշաւ, ապաշխարու՟թի. Եթէ տրտմու՟թի մեր զայլ՟ց ումեքէ իցէ նոյնպէս առանց յանցանաց իւրոց տանջելոյ և հարստահարելոյ, անուանի՝ ցաւակցութիւն, ողբակցութիւն, կարեկցութիւն. որոյ ներհակն կոչի անգթու թիւն, խստասրտութիւն. այն է՝ չզգալ սրտիւ զցաւալոց յանիրաւի տառապելոց. իսկ եթէ տխրութիւն մեր իցէ վասն յաջողութեան և բարօրութեան՝ արժանաւոր ընկերի մերոյ՝ կոչի մախանք, հեռ, նախանձ, չարակնութիւն. ուր եթէ ընկերն անարժան իցէ այնմ բարեբախտութեան և առանց իրաւանց վայելէ, ծնանի դժգոհութիւն, խոժոռութիւն, ծանրամտութիւն. իսկ եղանակ դրդելոյ կամ շիջուցանելոյ զդոսա՝ նոյն է ամենեւին, զոր վասն վերագրելոյդ պատմեցաք ըստ բաւականին:

§ 159. Յաւարտ ծանօթութեանս զկարողութեանց հոգւոյ՝ հարկ համարիմք ազդ առնել և եւս նախ՝ թէ համբակք փոյթ կալցեն, յառաջ քան զայլոց՝ զիւրեանց կարողութիս ուղղութեամբ և արգասաւորութեամբ 'ի գործ ածել. այն է՝ 'ի պատաղել զնոսա զառարկայիւ Ճառին՝ մի նմանեսցին արձագանքաց, որ անբանօրէն առնու և տայ ձայնս օտարաց. այլ ամենայնիւ յանձին բերցեն զպաշտօն կենդանածին մարց, և սոցա պէս ընկալցին զսերմանս առարկային յորդանդս քաղեալ կարողութեանց հոգւոյ իւրեանց, յերեւակայութեան՝ զպատկերս և զնկարս առարկային (թէ իցէ տարածական ինչ). 'ի միտս՝ զգաղափարս զիրդէպս և զիմաստս նորա. 'ի սիրտս՝ զզգածմունս, և 'ի բաղձանս զդրդութիս զնմանէ. որովք իբրու թէ յղացեալք՝ փոխարկեսցեն զնոսին 'ի սաղմն, ապա ոգեւորեալ զնա՝ կերպաւորեսցեն զմի ողջանդամ մարմին Ճառական: Պատկառ կացցեն և եւս՝ յընթացս անդ գործոյդ ոչ զերեւակայութիւն և զյիշողութիւն եթ, այլ յաւէտ զուղղադատութիւն մտաց և զխելահաս խորախորհուրդ հմտութիւն իւրեանց 'ի կիր առնուլ յամենայնի. զի մի նմանեսցին ոմանց 'ի բանախօսից, որք զոր ինչ տեսեալ և ընթերցեալ իցեն՝ զայնս միայն պապաջեն թութակօրէն, առանց խմորելոյ՝ եփելոյ՝ և հաստատուցանելոյ զնիւթն 'ի խելապատակի իւրեանց:

Երկրորդ՝ 'ի ներգործել անդ Ճարտասանից 'ի կարողութիս հոգւոց ունկնդրաց՝ գուն գործեսցեն առաւելաւ ևս զմիտս նոցա հրահանգել և յագեցուցանել անսուտ ճշմարտութեամբք, քան զզգայութիւնս և զմիտս նոցա զգածել գեղեցկութեամբ կամ քաղցրութեամբ առարկային. քան զի սոքա աւաղ են՝ իսկ ճշմարտութիւն վէմ անվանելի, և կամաշարժութիւն յաւազի հիմնացեալ՝ փութով կործանի 'ի հողմոյ և 'ի հեղեղաց. որում ողբալի օրինակ են այնչափ դաշնակցութիւնք՝ ընկերութիւնք և ամուսնութիւնք՝ լոկով զգայականութեան և սրտազգածութեան սոսնձով թերաքամ մածուցեալք, և յետ աւուրց ինչ 'ի հրոյ առողջամիտ դատողութեան և ճշմարտութեան քայքայեալք և աճիւնացեալք. վասն որոյ ճարտասանք զզգայութիւնս և զմիտս ընկերաց վարեսցեն իբրև զգործիս միայն, կամ ուղիղ ևս՝ իբրու զկամուրջ, որ զկամս ունկնդրաց պնդակապ մածուսցէ ընդ մտաց նոցա. և բովանդակ շինուած պաշտօնակատարութեանն ամբարձցի 'ի վերայ մտաց և կամաց նոցա միայն, իբրու յերկուս անսասան ներքնախարիսխս և 'ի հաստահեղյս պատուանդանս անկործան ամբարտակաց.

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

Յաղագս նիւթոյ ճառից.

§ 160. Զինչութիւն և բաժանումն նիւթոյ ճառից.

Ճառն որովհետև կրկին եղանակաւ գոյաւորի, և յերկուս վիճակս մտածի, այն է՝ նախ 'ի ներքս 'ի մտի, և զկնի ժամանակաւ արտաքոյ 'ի լեզուի, յայդմանէ և բաղադրիչ նիւթք նորա համարին երկու. ներքին և արտաքին, կամ հոգեկան և մարմնական։ Ներքին և հոգեկան նիւթ՝ են ամենայն իմանալի բանք (իմա՝ գաղափարք, իմաստք, իդէայք, զգածմունք, գրգռունք, ևն) յորդանդի հոգւոյ Ճարտասանին դայեկութ արուեստիս սաղմնաւորեալք՝ հասակաւորեալք՝ և իբրև զաւակ ծննդագործեալք, զորս առ հասարակ միով հանրական ձայնիւ կոչեմք՝ իմաստաբանութիւնս: Իսկ արտաքին և մարմնական նիւթ՝ են նոյն իսկ ներքինք, բայց զգալի բառիւք մարմնազգեցեալք՝ թանձրացեալք՝ անձնաւորեալք և վերածնեալք. զոր սովորաբար կոչեմք խօսք կամ բարբառ, և ՚ի Ճարտասանից ՚ի սակս պէսպէս սեթևեթիւք պճնազարդութն անուանի՝ Պերճախօսութիւն: Երկոքին դոքա համօրէն առեալ կոչին Արուեստաբանութիւնք, զի այսու արուեստիւ յօրինին. և են բուն առարկայք Ճարտասան կարողութ. որք և բաղդատին առ միմեանս իբրու հոգի առ մարմին. զի ներքին բանն հոգի է և կեանք և կենդանարար, իսկ արտաքինն լոկ՝ մարմին մեռելոտի՝ որ սակաւ ինչ օգնէ. բայց առ Ճառն վերաբերեալ՝ երկոքին ևս միօրինակ համօրին ատաղձք. զի անձամբ մասն եղեալք՝ բաղադրեն զբոլորն, և զի ընդունին զկերպ Ճառական, որք սեպհական են նիւթոյ: Առ նպաստելոյ յստակ մտառութ ուսանելեաց՝ պատշաճագոյն երևի զգլուխս բաժանել յերկուս պրակս, յառաջնում աւանդել զներքին նիւթն առանձինն, իսկ յերկրորդում՝ զարտաքինն:

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ.

Յաղագս ներքին նիւթոյ Ճառից.

§ 161. Զինչութիւն և բաժանումն իմաստաբանութեանց.

Վեցեակ տեսութ՟ արժան է զննել զիմաստաբանութիւն՝ զորս ունիմք յառաջ բերել 'ի բովանդակ պրակիս. և 1 յինքեանս ըստ զինչութ՟ նոցա առանց վերաբերութ՟ առ այլս. և ըստ այսմ տեսեալ՝ ոչ այլ ինչ են, եթէ ոչ իմաստք կամ շարաբանութիւնք. յոր սակս և անուն կարդացաք նոցա իմաստաբանութիւնս, որպ՟ եթէ իմաստալից բանս. կամ իմաստս բանաւորս. 2 առնչութ՟ առ Ճարտասանն, յորում երբեմն մտածին նոքա, իբր սաղմն յարգանդի հոգւոյ նորա յառարկայէն յղացեալք, իբր կրելութիւնք և ներգործութիւնք հոգւոյ նորա, և իբր հարազատ զաւակք 'ի ներգործութեց այտի ծնեալք. 3 վերաբերութ՟ առ յօրինելի Ճառն. ըստ որոյ են սոքա որպ՟ ասացաւ՝ ատաղձք, որք բաղադրեն զնա ամբողջութ՟, և բաժանին 'ի քառեակ աւագ մասունս. այնք են՝ բնաբան, վերաբան, յառաջաբան, և վերջաբան. 4 վերաբերութ՟ յառարկայ Ճառին. և ըստ այսմ սոքա պարտին լինել Ճշգրտահան պատկերք նորա, և ջինջ հայելիք երևեցուցիչք ամենայն հանգամանաց նորին. 5 առնչութ՟ առ ունկնդիրս, որոց համարին սոքա կերակուր և Ճարակ հոգւոյ, նոյն և բժշկական դարման ախտից նոցա. և ըստ այդմ բաժանին 'ի մտավարժս, 'ի սրտազգածս, և 'ի կամագրգիռս. որպ՟ տեսցես ստորև. 6 բաղդատութ՟ առ նպատակս Ճառին. առ որս լինին սոքա սերտապէս գործիք և միջոցք. յորոց ընդ ձեռն լօրէ ճարտասանն արդեամբք ստանալ զվախճան և զյաղթանակ իւր։

§ 162. Սակայն խոկուլի այսց իմաստագիտ ներգործութեց ճարտասանի՝ կայանայ՝ ՚ի բազմաց այտի՝ Նախ առաջին և ՚ի սկզբան անդ՝ յորոտագրութ. հանգամանաց առարկայի իւրոյ, համայն պատկերահանութ. որոյ զին չունի դոլ յառնուլ և ՚ի դեղովք երանգօք արտայայտել (exhibere) զգիծս՝ զծալս և զգոյնս կամ զնմանութիւն երեսաց կենդանի մարդոյ. յոր միտս և զգումար ներգործութեց փոխաբանութեն կոչեմք՝ ընդօրինակութիւն, կամ պատճէնագրութիւն. և բաժանեմք զնոսա ըստ կրկին տեսութեց. այն է՝ ըստ սեռից հանգամանաց մի՝ յիրքեանս մտածելոյ, և միւս՝ առ կերպողութիւն հոգւոյ ունկնդրաց առնչայելոյ։

Ըստ առաջին տեսութեն՝ քան զի համօրէն հանգամանք առարկայից յեօթն դասս զատանին, յայտ է և այս պատճէնագիր ներգործութիք բաժանին ՚ի նոյնչափ ցեղս, որք են, 1 գոյացական՝ յորում ճարտասանն բացատրէ զգոյացական հանգամանս էակին. և այսպիսի է միայն սահմանելն, յորում սեռ և տարբերութի իրին յառաջ բերեալ լինի. 2 որակականք՝ յորս գլխաւորաբար որպիսութիք և պէսպէս որակութիք առարկայից բացայայտին, ոմք են ստուերագրել, կենդանագրել, պարագրել, և այլք ոմանք, նա և ամենայն սրտազգած և կամաշարժ փոխաբանութիք. 3 ներգործականք՝ որք տիրապէս յածին զբացատրութիք գործողութեց և կրելութեց առարկային. յորոց սակի են, պատմել, անցագրել, ապապարել, խափանել, ջատագովել, ամբաստանել, արդիւնագրել, օրինակել, և դոյնպիսիք. 4 քանակականք՝ յորս չափ՝ կշիռ՝ ծանրութի՝ թիւ՝ աստիճան՝ և այլ ցեղք քանակութեց առարկային նկարեալ լինին. ոմք են մանաւանդ մասնաթուել, ցեղուարել, ղանազանել, նմանեցուցանել, բաղդատել, և դոյն նմանք. 5 տեղականք յորս ճարտասանն կամ առնչակից էակս մօտ առ իրեալս բերէ, որ զպատճառն առ գործն, զմիջոցն առ նպատակն, զներգործողն առ կրողն. և կամ զհայեցուած միոյն առ միւսն լուսաբանէ. 6 տեղականք, և 7 ժամանակականք՝ յորս զո՛ւրն և զե՛րբն գոլոյ գործելոյ և կրելոյ առարկային յառաջ բերէ ճարտասանն: Ընդ դոքօք մարթ է պարունակել և զայլ պէսպէս ցեղս վերաբանից:

Իսկ ըստ երկրորդ տեսութեան՝ որովհետև հանդամանք 'ի բաղդատելն առ կարողութիւնս հոգւոյ՝ բաժանին յերիս սեռս, 'ի ճշմարտութիւն, 'ի գեղեցկութիւն, և 'ի բարութիւն, ըստ դոցունց պահանջման՝ և ամենայն պատճէնածիր ներգործութիւնս զատանին 'ի մտավարժս՝ որք տիրապէս զճշմարտութիւնս առարկային ներկայացուցանեն յանդիման մտաց ունկնդրաց, 'ի սրտազգածս՝ որք զգեղեցկութիւնս և զհամայեղ հանդամանս մատակարարեն սրտի ունկնդրաց, և 'ի կամագրգիռս՝ որք բարութեամբք առարկային ընդ կամս ունկնդրաց խթանեն 'ի գործարարութիւն. զորոց ունիմք խօսել 'ի յետագայդ: Այս օրինակագիր պաշտօն իմաստաբանելոյ՝ թէպէտ հարկաւոր և պիտանի է նորամուտ համբակաց, սակայն զարգացելոց և 'ի կատարելութիւն անդր վերճեմելոց ոչ է բաւական. այլ հարկ է սոցա

§ 163. Երկրորդ՝ յանձին բերել նա և զպաշտօն ինքնագլուխ հեղինակի կամ արուեստագիտի, յորմէ ճիշդ իրաւամբք պահանջի, 1 զի կազմեսցէ ինքնին զգաղափար և զօրինակական իդէայ մէն մի հանդամանաց առարկային՝ զորմէ կամիցի վերաբանել. 2 զի յօրինեսցէ 'ի մտի զսկզբնատիպս միոյ միոյ 'ի վերաբանութեանցս ամենայն զգուշութեամբ և ուղղութեամբ. 3 զի պատրաստեսցէ զնիւթս սոցա համեմատութեամբ հանդամանաց առարկային. 4 զի զնիւթսդ որակաւորեսցէ վերոյիշեալ գերազանցութեամբք իմաստից. 5 զի զորակութիւն և զքանակութիւն նիւթոյդ յարմարեսցէ նպատակի՝ բոլորական մարմնոյ և այլոց պարագայից ճառին, եւս և ենթակայից նպատակին (իմա՛ ունկնդրաց՟ և վերծանողաց). 6 զի 'ի նիւթոց մուծանիցէ զհամապատշաճ կերպս իւրաքանչիւր վերաբանութե՟ց , և զամենայն մասունս նոցա կապեսցէ և հիւսեսցէ 'ի մի մարմին . և 7 զի զմարմինդ մի թողուցու սառուցեալ մեռելապատկեր , այլ ոգեւորեսցէ և կենդանացուսցէ զնա երրակի կենօք հոգւոյ իւրոյ , մտաւորաւ , գեղազգածիւ , և բարոյականաւ . զի այդ է պարտիք զաւակագործ մօր , կայտառ և կենդանի 'ի լոյս ընծայել զպտուղն որովայնի ։

Բայց զայդ ամենայն չմարթի Ճարտասանն յաջողակի 'ի գլուխ հանել՝ եթէ ոչ յառաջ քան զդոսա քաջ ձեւակերպեսցէ զսկզբնատիպն ամբողջ Ճառին . ամենեւիմբ նմանելով յայսմ Ճարտար հիւսնապետի , որ յառաջ քան զամենայն ինչ գծագրէ զձեւ յատակի և ըզխորանարդի կառուցանելի ապարանիցն . և ապա այնմ յարմարէ զնիւթսն ըստ պէսպէս մասանց նորա ։

Զայդոսիկ համառօտիւ նախակարգեալ՝ զպրակս բաժանեմք 'ի քառեակ յօդուածս . յորոց յառաջնումն խօսիմք զբնաբանէ . յերկրորդումն՝ զվերաբանից . յերրորդումն՝ զյառաջաբանէ և զվերջաբանէ . որք են քառեակ մասունք նիւթոյ ամենայն Ճառից . իսկ 'ի չորրորդումն՝ զեղանակաց իմաստաբանութե՟ց . յորս և բովանդակին ամենայն գիտելիք զնելքին նիւթոյ Ճառաբանութեանց ։

* * *

ՅՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ·

Յաղագս բնաբանի·

§ 164· Զննութիւն և բաժանումն բնաբանի (thema, causa)·

Բնաբան ճառից ըստ զօրութեան անուանն՝ է բուն բանն, այն է բացորոշ առարկայն կամ էակն՝ զորմէ 'ի մասնաւորի ճառել կամի ճարտասանն· զոր և դնէ իբրև զներքնախարիսխ կամ զհիմն, և 'ի նորուն վերայ բարձրացուցանէ զբոլոր շինուած վերաբանութեան։ Որովհետև առարկայն կրկնակի ըմբռնել լինի 'ի մտաց, իմն կամ իբր գաղափար, և կամ իբր իմաստ, յայսմանէ և բնաբանք նախ առաջին յերկուս հանրական սեռս բաժանին· այնք են, գաղափարական, և իմաստական։

Գաղափարական անուանի բնաբանն՝ երբ էակն առաջի դնի ըստ միոյ գաղափարի իւրում և եթ· կամ երբ միակ գաղափար նորա առեալ լինի 'ի նիւթ ճառելոյ, որ և միով գոյական անուամբ առաջարկի· և բացատրի սովորական ոճովս, յաղագս այս ինչ իրի, ոպ՟, յաղագս օրինաց, յաղագս դատողութեան մտաց, յաղագս մագնիսի, յաղագս շարժման երկրի, ևն· և որովհետև թէ էակք, թէ հանգամանք նոցա, և թէ գաղափարք երկոցունց՝ անհամար են գոլով սեռիւ և ցեղիւ, այդորիկ աղագաւ և բնաբանք դիւրալիք վերստին զատանին յայլ և այլ կարգս ըստ սեռից և ցեղից նոցա, զորս և չէ հնար ընդ թուով արկանել· զի ոչ միայն զիւրաքանչիւր անհատ էակաց, այլ և զիւրաքանչիւր հանգամանաց միոյ մասնաւոր էակի՝ մարթ է կալնուլ զբնաբան, և ճառել ըստ կանոնաց արհեստին. և աստի յայտնանէ ծնանի նոր բաժանումն բնաբանից՝ ըստ սեռից և ըստ ցեղից միոյ միայնոյ հանգամանաց. զի եթէ 'ի ձեռն առնու ոք զցանկ հանգամանաց վերագոյն բացատրելոյ, և յանկէ յէակ ինչ մասնաւոր, դիցուք՝ յօրէնս, մարթի կերպաւորել զնոր բնաբանս ըստ մէն մի հանգամանաց նորա. խնդրելով՝ յօրինակի ասել, 1 զի՞նչ է օրէնքն, յի՞նչ եղեալ կայ զինչութիւն օրինաց. 2 ո՞ր իցէ նիւթ օրինաց. 3 ո՞յք են ենթակայ օրինաց. 4 ո՞յք են առարկայ օրինաց. 5 ո՞ր իցէ ներքին կերպ օրինաց. 6 ո՞յք և քանի՞ են յատկութիւնք օրինաց. 7 յաղագս գոյութեան կամ՝ անգոյութեան օրինաց. 8 յաղագս ներգործութեանց, պատճառողութեանց, կամ կրելութեանց օրինաց. 9 յաղագս նպատակի և առթի օրինաց, ևն. և թէպէտ ոչ ամենայն էակ միօրինակ մարթի ունել զամենայն հանգամանս, սակայն զբազումս յայնց ունին գրեթէ ամենեքեան. և եթէ ոմանք զուրկ իցեն յոմանց, մարթին ունել զայլս, զորս ոչ կարգեցաք 'ի ցանկին՝ խորշելով յերկարութենէ, և յանձնելով սրատեսութեան ճառաբանից: Այլ և որովհետև համօրէն գունդ հանգամանաց բաժանի յերիս սեռս. 'ի ճշմարտութիւն, 'ի գեղեցկութիւն, և 'ի բարութիւն, ըստ դմանէ և բնաբանք զհանգամանաց կալեալք՝ բաժանին նոյնպէս յերիս. 1 'ի ճշմարտապատումս, յորս խնդրի բացատրել զճշմարտութիւն էակին միայն, ոչ 'ի գիտութիւն. 2 'ի գեղապատումս՝ յորս պահանջի լուսաբանել զգեղեցկութիւն առարկային, ոչ 'ի սրտագրաւ ճառս. և 3 'ի բարեպատումս՝ որոց վերաբանութիւնք խօսին գլխաւորաբար զբարութենէ առարկային, ոչ 'ի ճիշդ համոզական ճառս. և թէպէտ ուրեք երբեք երեքին ևս դոքա ընկերացեալ գտանին 'ի միում բնաբանի կամ 'ի ճառի, սակայն զյարանուանութիւն նոցա առնուլ պարտ է 'ի գլխաւորէն՝ որ տիրէ այլոց:

Իմաստական կոչի բնաբանն՝ երբ ոչ լոկ գաղափար, այլ ամբողջ իմաստ ինչ եղեալ լինի 'ի նիւթ ճառի.

որպէս, իմաստութիւն է գերագոյն բարի հոգւոյ · դատարկութիւն է աղբիւր ամենայն մոլութեանց · բաժանումն սոցա ՚ի պէս պէս սեռս և ՚ի ցեղս՝ յայտնի է արդէն յորոց ասացաք վերագոյն զիմաստից ընդհանրապէս · զի զմին մի յայնց մարթ է առնուլ ՚ի բնաբան՝ հայելով ՚ի պահանջումն առթից ։

§ 165 · Երկրորդ բնաբանք ըստ քանակութեան բաժանին, 1 ՚ի սեռական՝ որ զբոլոր սեռ ինչ էակի առնու ՚ի նիւթ · որպէս, յաղագս առաքինութեանց · 2 ՚ի ցեղական, որպէս, յաղագս խոնարհութեան · և 3 յանհատական կամ ՚ի մասնական, որպէս, յաղագս խոնարհութեան փրկչին մերոյ, յաղագս ուրացութեան յուդայի, եւն · նախնիք զսեռականն և զցեղականն կոչեն ըստ յունաց՝ դրութիւն (thesis) · իսկ զանհատականն՝ ենթադրութիւն կամ հանգէս (hypothesis, causa) · զորոց զհին եղանակս կազմութեանց աւանդէ մովսէս քերթող ՚ի գիրս պիտոյից ։

Երրորդ՝ զբնաբանս մարթ է բաժանել նա և ըստ անձուից առարկայից, հեղինակաց, տեղեաց, ժամանակաց, և այլ մասնաւոր պարագայից, որպէս յայտ է յասացելոցս վերագոյն զպէսպէս ցեղից ճառից · զորս աւելորդ է կրկնել աստանօր ։

§ 166 · Չորրորդ՝ բնաբանք ըստ գոյութեան բաժանին ՚ի յայտնի, որ բացորոշ բանիւ ծանուցանի ունկնդրաց · և ՚ի գաղտնի՝ որ ՚ի սակս մասնաւոր ինչ պատճառի՝ լռեալ լինի · որպէս երբ ինքնին յայտնի իցէ ունկնդրաց, կամ անախորժ և ցաւեցուցիչ իցէ նոցա, երբ յայտնելն զայն խափան լինիցի յաջողութեան և յաղթանակի ճարտասանին · կամ երբ մասնաւոր ինչ պարագայ փակէ զբերան նորա ՚ի հրապարակել · ըստ այսմ կիկերոն ՚ի չորրորդ ճառին կատիլինայ առ քերելոյ յանձնէ զկասկած խստասրտութեան՝ թաղէ զբուն բան իւր, զայն թէ հարկ է մահու դատել զկուսակիցս ապստամբութեան ։ Այն այս պատճառք ստիպեն ևս երբեմն զճարտասանն փոփոխել զտեղի բնաբանին, և զետեղել զայն՝ ոչ՛ զկնի յա ռաջաբանութիւն, զոր ունի սովորութիւն, այլ 'ի հասարակածի · յորում պահու անուանի բնաբան քերթողաց:

Հինգերորդ՝ բնաբանք ըստ յարաբերութեան առ ճառաբանս՝ բաժանին յաւանդական, որ յունկնդրաց 'ի խնդրոյ կամ յայլ ինչ անձնէ և 'ի պարագայից յանձն լինի ճարտասանին · և յինքնագիւտ, որ չէ որոշեալ յայլմէ, այլ ինքն ճարտասանն որոնէ և գտանէ ըստ պատշաճի տեղւոյն, ժամանակին, նպատակին, ունկնդրաց, կամ այլ ինչ պարագայից · զորմէ դժուարին է աւանդել ճշգրիտ կանոն, և լոկ հասուն խոհականութեան ճարտասանին յանձն լինին ինքն · բայց զայդոսիկ իմա՛ զսեռական բնաբանէ, և ոչ զմասնականէ · զի եթէ սեռն կամ ցեղն առարկային եղեալ իցէ՝ յայնժամ դիւրին է, կամ գէթ ոչ այնչափ դժուարին՝ զանհատականն գտանել, պահելով միշտ զյիշատակեալ զգուշութիւն · առ օրինակի՝ եթէ առդէն որոշեալ իցէ ճառել զհայրենասիրութենէ, զանհատական բնաբանն արժան է գտանել ըստ կանխասաց եղանակին · իմա՛ նշանակելով զիւրաքանչիւր հանգամանս, զինչութիւն, զկերպն, զներգործութիւն, զորակութիւն, զքանակութիւն, զենթակայս, զառարկայս, ևն · և ընտրելով յայնց զաւանդել պատշաճաւորն : Նովին ոճով արժան է յառաջանալ նա և ուր բնաբանն իցէ իմաստ ինչ բացորոշ · իբր զի եդեալ՝ օրինակի աղագաւ՝ այս իմաստ ցեղական ,, Ճեմարանն է գիտնական ընկերութիւն ուսուցանողաց և ուսանողաց ,, պարտ է նախ բացորոշել զմասունս զաղափարին 'ի նմա, և ապա կամ զնոսին ամբողջ կարգել 'ի բնաբան մասնաւոր, այս, յաղագս գիտնականութեան 'ի ճեմարանի, յաղագս գիտնական ընկերութեան, յաղագս ուսուցանողաց 'ի ճեմարանի, յաղագս ուսանողաց 'ի ճեմարանի, ևն · կամ զիւրաքանչիւր գաղափարացդ զմասնաւոր հանգամանս առնուլ 'ի բնաբան, այս, յաղագս պիտանութեան և էական կերպի ճեմարանաց, գիտնականութեան, ընկերութեան, դասատուութեան, դասառութեան, ևն · ըստ եղանակին՝ զոր 'ի մօտոյ աւանդեցաք :

§ 167 Զանց արարեալ զայլովք ևս պէսպէս ցեղիւք բնաբանից՝ զորս մարթ էր նշանակել, յուշ ածցուք միայն զբաժանումն նոցին ըստ երից նպատակաց և կարողութեց հոգւոյ, 'ի գիտնականս, 'ի զգածողականս, և 'ի գործադրականս, զորս և վերագոյն մեկնաբանեալ եմք ։ Զգիտնականս՝ որոց նպատակ է կամ ուսուցանել միայն զճանաչելի և զգործադրելի ճշմարտութիս, կամ համոզել ևս զմիտս ունկնդրաց, անուն 'ի բնաբան դասատու վարժապետք և գիտնական մատենից հեղինակք ․ զզգածողականս որք գիտեն գգուել զսիրտս, յաճախ վարեն հոգւոր քարոզիչք, թատրոնական հեղինակք, և ատենաբանք ․ իսկ գործադրականքն են սեպհական բնաբանք համոզական ճառից, որք և հանրական ձայնիւ կոչեն պաշտամունք ․ իսկ կարգութին նոցա 'ի բնաբան՝ կրկնակի լինի, ըստ վերագոյն ասացելոցդ ․ այն է՝ կամ իբր գաղափար, և կամ իբր իմաստ ․ և

Նախ՝ յառաջարկելն իբրու պարզ գաղափար՝ խնդրի բացայայտել զհանգամանս նոցա ըստ ցանկին, յօրինակի սակս, 1 ըստ զինչութեն, զի՞նչ իցէ առնուլ կաշառս, բռնանալ յընկերս, յափշտակել զկոյս, օգնել կամ վնասել հայրենեաց ․ 2 ըստ գոյութեն, արդեօք աշտ գողացեալ իցէ զդրամս տաճարաց ․ 3 ըստ ենթակային, հոգւո՞յս թէ մարմնոյն իցէ ենթակայ զգածելոց, ցաւելոց, մեղանչելոց ․ 4 ըստ առարկային, ո՞ր իցէ սեպհական առարկայ ճանաչելոց, բաղձալոց, տեսանելոց ․ 5 ըստ ներգործութե և պատճառութե ․ ո՞ր իցէ պտուղ մեղանչելոց, արբենալոց, ծուլանալոց ․ 6 ըստ որակութե ․ գովելի՞ թէ պարսաւելի իցէ հարստանալ, ամուսնանալ, արժա՞ն է հարկս տալ կայսեր, պա՞րտ իցէ որդւոց պատուել զծնողս ․ 7 ըստ քանակութե, քանի՞ են սեռք և ցեղք դաշնադրութե, քանի՞ հանգամանք պահանջին առ գողութե ․ 8 ըստ միջոցաց կամ գործեաց, որո՞վ իւիք երջանիկ լինի հոգին, եկեղեցին, թագաւորութին ․ որո՞վք լուսաւորի կամ խաւարի միտքն ․ 9 ըստ նպատակաց, առ ի՞նչ ստեղծեալ է մարդ յԱստուծոյ. զի՞նչ է վախճան եկեղեցական իշխանութե՟. ըստ այդոցիկ իմաստասիրեմ և վասն միացեալ հանգամանաց. զորս մարթ իցէ զննել ՚ի ներգործութե՟ ։

Իսկ յորժամ իբր իմաստ առեալ լինին ՚ի բնաբան, ոպ՟ յայսմ,, պարտ է խորշիլ յարբեցութե՟,, յայնժամ նովին օրինակաւ բաժանին յայլևայլ կարգս՝ որով և իմաստք զէակաց, վերագոյն առ ՚ի մեզ աւանդեալք ։

Զբնաբանս մարթ է ևս բաժանել յայլևայլ ցեղս՝ ըստ զանազան վերաբանութե՟ց. յորոց և անուն ընկալեալ կոչին նոքա բնաբան բաղադրելի, վերլուծանելի, սահմանելի, կենդանագրելի, համոզելի, պատմելի, գովելի, ապացուցանելի, հերքելի, ուսանելի, ճանաչելի, գործադրելի, ևն. որոց զինչութի՟ լաւ ևս ծանուսցի ՚ի յետագայսդ ։

Բնաբանք ամենայն ցայս վայր յիշատակեալք՝ անտնօրինելի հարկաւ պարտին յանձին բերել զայն ամենայն գերազանցութի՟ս, զորս պահանջեցաք վերագոյն ՚ի գաղափարս և յիմաստս. իմա՛ զուղղութի՟, զճշմարտութի՟, զբարութի՟, զմիութի՟, զնորութի՟, և զորս ՚ի կարգին. իսկ պաշտամունք բաց ՚ի դոցունց պահանջեն նա և, 1 զկարելութիւն, զի մարթ իցէ ունկնդրաց գործով կատարել զայնս. 2 զքաջադիպութի՟՝ զի յարմար և պատշաճող իցեն վիճակի և պայմանի ունկնդրաց, տեղւոյն, ժամանակին, և այլոց պարագայից. 3 զօգտակարութի՟՝ զի հոգևոր և մարմնաւոր շահ քաղեսցի ՚ի նոցունց. և 4 զհարկաւորութի՟՝ զի ցուցցի հարկ ինչ և պարտիք արդեամբք ստանձնելոյ զայնս. քանզի առանց այդց հանգամանաց ոչ շարժեն նոքա ինչ զլսելիս ։

§ 168. Առաջարկութիւն բնաբանի (propositio).

Բացածանուցանելն զբնաբան ճառին՝ կոչի ՚ի նախնեաց՝ առաջարկութի՟. այն է՝ առաջի ունկնդրաց դնել բացայայտակի զառարկայն՝ զորմէ ճառելի իցէ, և զմասունս նորին՝ եթէ ունիցի՝ ազդել նոցա որոշակի. նոյն և նշանակել թէ ո՛րպիսի վերաբանութիւն ունիցի կառուցանել ՚ի վերայ նորին. յորոց ինքնին իմացեալ լինի՝ թէ առաջարկութիւն ո՛չ է բնաբանն կամ առարկայն, այլ լոկ արտայայտութի՟՝ հրապարակութի՟ կամ յառաջբերութի՟ նորին, զոր մարթ է բնաւ իսկ լքանել ՚ի համառօտ ճառս:

Զնոյն պարտ է ասել և զբաժանմանէ բնաբանին կամ առաջարկութե՟՝ յերկու կամ յերիս անդամս. որ միայն յընդարձակ ճառս պահանջի, և նոյնպիսի օրինօք կազմի՝ որովք մասնաւորութիւն ստորև բացատրելի. իսկ զհիմն բաժանմանն ինքն բնաբանն մատակարարէ. իբր զի եթէ լոկ գաղափար իցէ և խնդրիցի քերթել զհանգամանս նորա, յայնժամ պարտ է ամփոփել զայնս յերկուս, յերիս, կամ թէ շատ, ՚ի չորս անդամս (այլ ոչ երբէք՝ աւելի քան զայդ). զի թէպէտ և յոլով իցեն հանգամանք առարկայի իրիք, տացուք՝ հայրենասիրութե՟, սակայն ո՛չ օգուտ և ո՛չ հարկն ստիպէ զմեզ զամենայն բովանդակել ՚ի միում ճառի. զի այդ ոչ ՚ի ճառս՝ այլ ՚ի գիտնական մատեանս պահանջի. և ճառաբանն ոչ է և ոչ իսկ պարտի լինել մատենագիր, ոպ՟ և ոչ ճառն է մատեան. վասն որոյ շատ է՝ թէ ՚ի բազմութե՟ անտի հանգամանաց խոհական ընտրանօք քաղեսցէ ճարտասանն զյոյժ կարևորսն և զպատշաճագոյն նպատակի՝ տեղւոյ՝ ժամանակի և այլոց պարագայից, և տրոհեսցէ զայնս ՚ի քանի մի փունջս. զորս սուղ բանիւք այդ արարեալ ունկնդրաց աստանօր ընդ բնաբանիս, ասելով յօրինակի սակս,, խօսեցայց նախ՝ զհարկաւորութե՟, երկրորդ զօգտակարութե՟, և երրորդ զեղանակէ սիրելոյ զհայրենիս,, ապա քերթեսցէ ընդարձակութ՟բ ՚ի վերաբանել. ոպ՟ ասելոց եմք ՚ի մօտոյ: Այլ եթէ իմաստ ինչ իցէ բնաբանն, ոպ՟ վերոյիշեալ սահմանադրութի՟ն ճեմարանին, յայնժամ բազմութիւնք գաղափարաց ՚ի նմին պարունակեալք, մանաւանդ ենթակայն և մակածականն, ինքնին մատակարարեն ընկարկինն բաժանելոյ զնա 'ի պէսպէս մասունս , յորոց միշտ ընտրել պարտ է զքաջադէպսն առ տեղեաւն . մարթ է ևս զգաղափարն խորհրդով փոխել յիմաստ ինչ վայելուչ , և ապա զատանել զանդամս նորին . քան զի ասացաք իսկ՝ թէ գաղափարն է իմաստ կծկեալ , զոր հնարին է պարզել ըստ կամի :

§ **169** . Թէ ընտրանն և թէ առաջարկուն նորին մերթ արտաքոյ պատմաբանօրէն և պարզաբար . որպէս , պարտ է հարկս տալ կայսեր (որ դարձեալ բաժանի 'ի մոկասական և 'ի բացասական). և մերթ հարցական կամ վիճաբանական եղանակաւ . որպէս , արժա՞ն է հարկս տալ կայսեր , թէ ոչ . և զսա նախնիք կոչեցին խնդիր (quaestio) , այն է քննուն կամ խուզարկուն առարկային . զոր և բաժանեցին 'ի պարզ և 'ի յարակից , 'ի տեսական և 'ի գործական , յորոշեալ և յանորոշ , 'ի գուշակական , 'ի քանակական , յորակական , ևն . այլ քան զի դորա պարունակին 'ի բաժանմունս իմաստից վերադիրն յիշատակեալս , յայդ սակս աւելորդ համարիմք երկրորդել զայնս աստանօր :

Ոմանք յիշատակեն յայսմ վայրի և զպատմուն ատենական , այն է՝ զյառաջբերուն հանգամանաց գործոյ իրիք 'ի վէճ և յատեան դատաւորաց ձգելոյ . բայց որովհետև դա ոչ յամենայն ճառս՝ այլ 'ի ճիշդ ատենաբանութիւն միայն պահանջի , և զբովանդակ վերաբանութիւն ընտրանին կայուցանէ , այդորիկ աղագաւ 'ի շարս վերաբանից ունիմք խօսել զայդմանէ :

* * *

ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ։

Յաղագս վերաբանի։

§ 170։ Զննութիւն և ցեղք վերաբանից (tractatio)։

Վերաբանն է կարևորագոյն մասն և իբրու իրանք ճառին, և ըստ կազմուե՟ ձայնին նշանակէ զայն ամենայն բանս՝ որք թէ հարկի և թէ զարդու աղագաւ յաւելեալ լինին 'ի վերայ բնաբանին։ քան զի առարկայն բնաբանիւ առաջադրեալ՝ նման է խողակի շերամոյ, զորոյ զհանգամանս և զմասունս իբրև զթելս մետաքսի քակել և լուծանել պարտի ճարտասանն։ ապա մէն մի յօրինել և յերիւրել զնոսա առանձինն։ և 'ի վերջէ նոքօք ոչ թէ հենուլ և անկանել զոսկեհուռն դիպակ ճառին։ յորս՝ ոչ ակներև տեսանի և ըստ որոց կանխաւ ասացաք՝ երեք ինչ գլխաւորաբար զուգընթանան՝ յիրերաց որոշելիք, 1 Առարկայք վերաբանից, որք են հանգամանք առարկային իբր հանութք կամ հանք՝ (ըստ նախնեաց՝ տեղիք), յորոց իբրու 'ի պալարտալից ծաղկանց ոմանց հոգի ճարտասանին մեղուօրէն ծծէ ընհիւթս։ 2 կրկնուե՟ք և ներգործուե՟ք հոգւոյ ճարտասանին՝ յառարկայսդ եղեալք (զորս նախնիք կոչեն՝ գիւտս, գտանել)։ և 3 լրացեալ ծնունդք կամ արտադրեալք նոցա, որք կոչին իմաստաբանուե՟ք, և որք նկատմամբ առ բնաբանն՝ թէպէտ համարին վերարկեալ բանք, սակայն ըստ իրին և ըստ ճշմարտուե՟ մտածեալք՝ են և իրաւամբք կոչին 'ի լատինաց ճառողուե՟ի կամ ճառաբանուե՟ի (tractatio), քան զի արդարև յայտնիկ և այս քիւք միայն ճառէ ճարտասանն զուարկայէն․ իսկ յառաջաբան և վերջաբան են միայն հետևակ մասունք ։

Զվերաբանութիւն թէպէտ և մարթ էր ըստ վեցեակ կանխասաց տեսութեանց իմաստաբանութեանց տրոհել յայլ և այլ դասս, սակայն նախամեծար թուի աստ տեղեաւս բաժանել զդումար նորա ըստ երից կարողութեանց հոգւոյ և ըստ երից նպատակաց, 'ի մտավարժս, 'ի սրտայզածս, և 'ի կամաշարժս․ և 'ի դոսին ցուցանել զայլ և այլ բաժանմունս նորա յերիս հատածս այսր յօդուածոյ ։

* * *

ՀԱՏԱԾ ԱՌԱՋԻՆ․

Յաղագս մտավարժ վերաբանից ․

§ 171․ Զնշանակութիւն և բաժանումն մտավարժ վերաբանից (finis didacticus)․

Սոքա են պէսպէս իմաստք՝ գտեալք և յօրինեալք 'ի ճարտասանէն զհանդամանաց առարկայի իւրոյ, որք ուղղակի կարգին 'ի հրահանգումն ճանաչողական կարողութեան, որով և լինին տիրապէս գործիք 'ի ձեռս ճարտասանին առ ուսուցանելոյ զմիտս ընկերաց․ և որովհետև գլխաւոր սկզբնատարերք ամենայն ճանաչմանց և ուսմանց մերոց՝ են գաղափարք և իմաստք մտաց, յայդսակս և ամենայն ցեղք դաստիարակիչ վերաբանիցս յածին և պտտին 'ի կատարելագործել զդոսա․ ըստ որոց և բաժանին զօրէն բնաբանից՝ 'ի գաղափարականս և յիմաստականս ։ Առաջինք դիտեն ուղղակի լուտարանել զգաղափարս կրկին ճանապարհաւ ․ այն է՝ կամ նորոգ կերպաւորելով և բաղադրելով զնոսա , կամ քրքրելով և վերլուծանելով զշփոթակի կերպացեալսն ․ յորոց յետին վերածին որոշի առ մեզ յերեսուն և յերիս ցեղս , որպէս տեսցի ՚ի մօտոյ ։ Իմաստական վերաբանութիւնք զատանին ՚ի վեց կարգս ․ որք են , ապացուցութիւն իմաստից փաստաբանութիւն , պաշտպանութիւն իմաստից հերքմամբ թշնամեաց նոցա , արգասաւորութիւն իմաստից՝ զմին ՚ի միւսոյ հետևաբանութիւն , յանկուցումն իմաստից , ուժեղութիւն և ամրապնդութիւն իմաստից ․ որովք և համօրէն խումբ մտավարժ վերաբանութեանցս հատուկ ապա բաժանի ՚ի քառասուն ցեղս ․ որք են , Բաղադրել , սահմանել , ստուերագրել , կենդանագրել , մեկնաբանել , զանազանել , մասնաթուել , պատճառաբանել , արդինագրել , վախճանաբանել , պարագրել , պատմաբանել , անցագրել , զուգաբանել , պարսաւել , ասպարել , խափանել , ջատագովել , ամբաստանել , համայնագրել , փոխագրել , ընդարձակել , ստեղծաբանել , ցեղաւորել , ձեւացուցանել , նմանեցուցանել , փոխաբանել , այլաբանել , համեմատել , բաղդատել , օրինակել , առակաբանել , վկայաբանել , հակադրել , փաստաբանել , հերքել , հետևաբանել , յանկել , կորովաբանել , և ամրապնդել , զորս բացայայտեսցուք ՚ի կարգին ։

§ **172** ․ Զայդ ամենայն ցեղս պաշտամանց ճարտասանին՝ մարթ է վերածել նա և յինն հանրական սեռս հրահանգութեան կամ մտավարժութեան ընկերայ ․ որք են , 1 ուսուցանել զմիտս նոցա կերպաւորութիւն և ներածութիւն նոր գաղափարաց ․ 2 պարզել՝ ուղղել և յստակել զնախագոյակ խառնափնդոր գաղափարս նոցա , առ որ վերածին քսան և երկու ցեղք վերլուծութեանց բաղադրական բոլորոյ ․ 3 լուսանորոգել զմթին գաղափարս վերլուծութեամբ հանրական բոլորոյ , որոց ցեղք համարին մետասան ․ 4 ապացուցանել զճշմարտութիւն կամ զստութիւն իմաստից՝ յերևան ածելով զհամաձայնութիւն կամ զհակառակութիւն մակա ծականի նորա ընդ ենթակային • 5 հալածել 'ի մտաց ունկնդրաց զամենայն խոչընդոտս հաւանութե՟, իմա՛ զերկբայութիս, զտարակուսիս, եւն • 6 բազմապատկել զիմաստս եւ նոքօք հաստատուցանել զմիտս ունկնդրաց • 7 յանկել եւ յարմարել զիմաստս 'ի պիտոյս մտաց՝ սրտից եւ կամաց ունկնդրաց • 8 յինքն գրաւել զմտադրութի՟ եւ զխորհուրդս ունկնդրաց • եւ 9 տպաւորել զգաղափարս եւ զիմաստս 'ի յիշողութե՟ մտաց ունկնդրաց ։ Զանց արարեալ յառաջ բերել զայլ եւս հեռաւոր գիտելիս զիբայդ՝ բուռն հարցուք 'ի լուսաբանել զիւրաքանչիւրսդ սուղ բանիւք ։

§ 173 • Բաղադրել կամ Բաղադրութիւն (sinthesis) •

Բաղադրել է զցրուեալ եւ զբաժանեալ մասունս իրիք՝ ո՟ղ զժամայուցի՝ հաւաքել, կարգադրել, ընդիրեարս կապակցել, եւ 'ի նոյունց զբոլորն կերպաւորել • այդու նմանութ՟ բաղադրել ասի առ ճարտասանս՝ զհանգամանս էակի իրիք, զորս զճիշդ գաղափարն բնաւ չունիցի ունկնդիրն, բացատրել՝ կապակցել եւ զամբողջ էակն նոքօք կերպաւորել • օրինակի վասն՝ եթէ մանուկ կամ անմեղ ոք դեռ չգիտիցէ զինչութի՟ գողութե՟, եւ հարկ լիցի ուսուցանել զնա, արժան է ասել՝ թէ չորք հանգամանքս, առնուլ զինչս, զօտարի, առանց գիտութե՟ եւ հաւանութե՟ տեառն, եւ դիտմամբ անձին սեպհականելոյ, 'ի մի ծորդեալք կոյուցանեն զմեղս գողութե՟ • եւ որովհետեւ յոլովակի դէպ լինի ճարտասանից (ընդ որովք միշտ իմա՛ նա եւ զքարոզս եւ զամենայն ուսուցիչս) նորոգ կերպաւորել զգաղափարս 'ի միտս ունկնդրաց, կամ զթիւրն ուղղել, առաջի առնեմք աստ նոր զեղանակս բաղադրելոյ զնոսա ըստ այլեւայլ ցեղից եւ ազգաց նոցին ։

Ուր հարկ լինիցի զբազմամասն գաղափարս կերպաւորել, **1** փոյթ կալցի ճարտասանն զամենայն իրերաց հակառակ հանգամանս արտաքսել, եւ միայն զհամաձայնս

՚ի ներքս առնուլ . ոպ̃, անբանուն̄ և անսխալուն̄ հակառակ են մարդուն̄, իսկ կենդանուն̄ մտաւորուն̄ և բարոյականուն̄՝ համաձայնին ՚ի կազմել զմարդ . 2 յառնուլն ՚ի ներքս զհամաձայնս՝ ծանուցանէ ունկնդրաց՝ թէ ո՞յք ՚ի նոյանէ գոյացական են յէակն, ո՞յք յատկականք, և ո՞յք փոփոխականք . 3 ուսուսցէ նոցա զխտիր գոյին, թէ ՚ի բառնալ գոյացականաց և յատկականաց՝ եղծանի էակն, այլ ոչ նոյնպէս՝ ՚ի բառնիլ յեղականաց . 4 յընտրուն̄ անդ հանգամանաց՝ մի ըստ քմաց վարեսցի . այլ ՚ի ձեռին ունիցի զփաստ բաւական՝ թէ վասն է՞ր զայսոսիկ, զայսպիսիս, և զայսչափ հանգամանս կամիցի առ և այժմ ՚ի ներքս առնուլ, և ոչ զայլս . իբր զի լոկ բազմուն̄՝ համաձայնուն̄ և անհակառակուն̄ հանգամանաց չեն բաւական ՚ի բաղադրուն̄ էակի . այլ բաց յայդցանէ պահանջի ևս փաստ առ ՚ի նախադասել զոմանս քան զայլս (զփաստս ցուցանել ունիմք յիւրում վայրի) . 5 ապա արասցէ ունկնդրաց՝ զի նոքա ինքնին ՚ի գործ դիցեն զներգործուն̄ս մտաց ՚ի կերպաւորուն̄ գաղափարաց, և մի շատասցին լոկով լսելուբ̄ և ընդունելուբ̄ բանիցն իւրոց . 6 յետ բոլորելոյ զգաղափարն՝ ցուցցէ ևս զբուն գոյական անուն նորին, թէ էակ և գաղափար այսպիսի՝ անուանակոչի այս ինչ սեպհական բառիւ . յայտնելով և զտարբերուն̄ յազգակցաց կամ ՚ի հոմանունաց :

§ 174 . Առ բաղադրելոյ զգաղափար ընդհանուր էկաց, 1 յառաջ բերցէ թէ ոչ զամենայն, գէթ զբազում ստորակայս նորին . ոպ̃, զբազում անհատս միոյ ցեղի, կամ զբազում ցեղս միոյ սեռի . 2 ցուցցէ թէ ո՞յք իցեն հանրանիշ հանգամանք նոցա, և ո՞յք յատկանիշք . 3 զյատկանիշս ՚ի բաց տարեալ վերացուսցէ, և զհանրանիշս միայն ՚ի մի փունջ հաւաքեալ ասասցէ, թէ այն է գաղափար ընդհանրոյն, զորոյ և զճիշդ անունն ուսուսցէ : Ցայդցանէ իմացեալ լինին և կանոնք կերպաւորելոյ զգաղափարս ստորակայից :

Պակասադեան կամ բացասական գաղափարք, ոպ̃, կուրութիւն, կերպանան նախ կազմելով զդրական նոցին, և ապա 'ի բաց տանելով զնոսա․ զի չքութիւն նոցին ցուցանէ զպակասականն ։

'Ի կերպաւորութիւն գաղափարաց վերացեալ և անենթակայ էակաց, ոպ̃, իմաստութիւն, սպիտակութիւն, ևն̃, 1 ցուցցէ թէ յորպիսի և յորքան ենթակայս գտանիցին նոքա․ 2 թէ բաղադրեալ իցեն՝ մեկնեսցէ թէ 'ի քանի̃ պարզից բաղկանայցեն․ 3 'ի մէջ բերցէ և զընկերսն ընդ որոց համաձայնեալ թանձրանայցեն յենթակայս․ 4 զենթակայս և զընկերսն 'ի բաց արձակեսցէ․ և որ միայն՝ յայտ առնէ զվերացեալն ։ Զառնչակից գաղափարս չէ հնար այլապէս կերպաւորել, բայց եթէ լուսաբանելով զմիւս ընկեր կամ զառնչակից նորա ։

Առ յօրինելոյ զհաւաքական էակաց գաղափարս, 1 ծանուսցէ զինչութիւն եզականաց նորին․ ոպ̃, զմիոյ քրիստոնէի, զինուորի, ևն̃․ 2 զբազում անհատս նոցա 'ի մի խումբ հաւաքեսցէ․ 3 ուսուսցէ զյատկանիշս և զանունըն՝ զոր նորոգ ստանայ խումբ նոցա․ 4 նոյնպէս և զտարբերութիւն յայլոց նմանեաց․ ոպ̃ի են յօրինակիդ՝ նոր անունն եկեղեցի, և յատկանիշքն, 1 պաշտել զԱստուած․ 2 արտաքին և բացորոշ ինչ ծիսիւք․ 3 ընկերակցութեամբ բազմաց․ 4 հրապարակաւ․ 5 առանձին պաշտօնէիւք կրօնի, և այլ նմանք ։

§175․ Եթէ պէտք լինիցին կազմել զգաղափարս աննկար և անկերպարան էակաց, ոպ̃ զերջանկութիւն, ևն̃, 1 կերպարանեսցէ զնկարաւոր գաղափար ինչ համանման աննկարին․ ոպ̃ յօրինակիդ՝ զառն բախտաւորի ամենայն բարութեամբք յղփացելոյ, ոպ̃ի համարի սաղոմոն․ 2 'ի նկարաւորէ այտի 'ի բաց տարցէ զամենայն թերութիւնս՝ զանկատարութիւնս՝ զկոպարաւորութիւնս՝ զանարգս և զնուաստս․ 3 'ի ներքս բերցէ զայլ կատարելութիւնս և զգերազանցութիւնս՝ որք առ տեղեաւն կարևոր իցեն 'ի լրութիւն աննկարին․ 4 որոշեսցէ զսեպհական անուն նորին, և զտարբերութիւն․ միտ զննելով և ճշդութեան, զի մի 'ի հարկաւորացն պակասեսցի ինչ կամ օտարոտիւք խառնեսցի։

Դոքին են գլխաւոր կանոնք բաղադրութեան նոր գաղափարաց, ըստ որոց արժան է և զայլոցն իմաստասիրել· յորս և հիմն ուղղութեան կամ թիւրութեան նոցին· զի որք համաձայն կանոնացդ յօրինին՝ ուղիղ կոչին, իսկ որք խոտորին՝ թիւր և մոլար լինին· զի ոչ և կանոնս ասացաք՝ ուղղութեան և թիւրութեան իրաց հիմունս 'ի համաձայնութեան նոցա առ կանոնս իւրեանց։

Մեծապէս յոյժ փոյթ ունիցին ճարտասանք՝ ուղղութեան գաղափարաց յընկերս· զի որովհետև սոքին են սկզբնատարերք՝ հիմունք և բաղադրիչք՝ իմաստից, իմաստք՝ շարաբանութեանց, և շարաբանութիւնք՝ ողջոյն ճառից, 'ի զեղծանել և 'ի մոլորել անդ ունկնդրաց 'ի սկզբանն 'ի կերպաւորութեան գաղափարաց, այնուհետև ամենայն շինուածքն 'ի վերայ նոցա հարկաւ վաղափուլ կործանին, և չշարժին լսելիք 'ի միտս և 'ի կամս առ 'ի արդեամբք գործադրել զբարին։

§ 176 · Վերլուծանել (analysis) ·

Որպէս արուեստապետ ժամագործն առ ուսուցանելոյ զհամբակ իւր՝ զամբողջ ժամացոյցն լուծանէ առաջի նորա, զանիւսն և զայլ մասունսն բաժանէ, և զիւրաքանչիւրոյ զօրպէսն և զնպատակն որոշակի բացայայտէ նմա, ըստ նորուն օրինակի և ճարտասանն առ քաջ պայծառացուցանելոյ զգաղափարս մտաց ունկնդրաց՝ պարտական է զառարկայ իւր լուծանել, բացատրելով նոցա՝ թէ ո՛յք, ո՛րպիսիք, և ո՛րքան մասունք պարունակին 'ի նմա· իբր զի էակն ըստ որում բոլոր ինչ՝ նման է ո՛չ թէ ծալեալ և պալարեալ կերպասու, որ եթէ ոչ սփռեսցի ըստ ամենայն մասանցն՝ ոչ ծանուցեալ յարգի 'ի զննողաց, ոչ գեղեցկութեամբն զօշոտէ զաչս նոցա, և ոչ բարութեամբն 'ի սէր ստացութեան իւրոյ յափշտակէ զսիրտս նոցա· ապա ո՛չ զի նպատակ ճառաբանութեան մի խափանեոցի և ջանք Ճարտասանին մինանրացին՝ հարկ է նմա գործն կերպասավաճառաց մերկանալ զամենայն ծալս առարկային, որ այն ինքն է՝ վերլուծանել զնա ։ Արդ՝ որովհետև բոլորք և մասունք նոցա՝ ըստ կանխաւ ասացելոյս ՚ի վեցեակ դասս զատանին, յայդմանէ և այս ներգործութի Ճարտասանին բաժանի ՚ի նոյնչափ սեռս․ որք են՝ վերլուծութիւն բաղադրական բոլորոյ, հանրական բոլորոյ, յաջորդական բոլորոյ, գերազանցական բոլորոյ, հաւաքական բոլորոյ, և աստիճանական բոլորոյ․ որոց իւրաքանչիւրն վերստին զատանի յայլևայլ ցեղս․ եւ

1 Բոլորն բաղադրական զի զբազմացեղ մասունս պարունակէ ՚ի փոքր իւրում, յայնմանէ վերլուծութի մէն մի մասանց նորա այլևայլ կոչմամբ անուանի ՚ի Ճարտասանից․ ոպ վերլուծութի գոյացական մասանցն՝ կոչի սահմանել․ պատահական մասանցն՝ ստուերագրել և կենդանագրել, նոյնպէս և այլոց մասանցն այլովք անուամբք․ որոց գումարն բաժանի ՚ի քսան և յերկու ցեղս․ որք են, սահմանել, ստուերագրել, կենդանագրել, մեկնաբանել, զանազանել, մասնաթուել, պատճառաբանել, արդիւնագրել, վախճանաբանել, պարագրել, պատմաբանել, անցագրել, գովաբանել, պարսաւել, ապապարել, խափանել, ջատագովել, ամբաստանել, համայնագրել, փոխադրել, ընդարձակել, սեղծաբանել ։

2 Վերլուծութին ընդհանրական բոլորոյ՝ որ զմասունս ՚ի ներքոյ իւր պարունակէ, զատանի ՚ի մետասան կարգս․ որք են, ցեղաւորել, ձևացուցանել, նմանեցուցանել, փոխաբանել, այլաբանել, համեմատել, բաղդատել, օրինակել, առակաբանել, վկայաբանել, և հակադրել։ Մնացեալ բոլորք չունին զառանձին կանոնս, այլ ՚ի նախագրեալսդ և ընդ նոքօք պարունակին պէսպէս օրինակաւ․ որպէս ծանուսցուք առ իւրաքանչիւրսն ՚ի նոցունց ։

Հարտասանն՝ որպէս զի մարթասցի ուղիղ կերպաւորել զվերլուծութիւնդ՝ հարկաւ պարտի քաջ խելամուտ լինել կանոնաց առ ուղղութեան դոցա կարեւորաց. և զի նոքա յերկուս կարգս բաժանին, 'ի սեռականս՝ որք ամենայն վերլուծութեանց անկաւորին, և 'ի ցեղականս՝ որք 'ի յօրինուածի իւրաքանչիւրոյն պահանջին, կարեւոր համարիմք զառաջինսն համադումար աստ աւանդել, իսկ զերկրորդսն՝ 'ի բացատրութեան անդ միոյ միոյ 'ի նոցունց:

§ 177 · Առաջին կանոնք վերլուծութեանց .

1 Առաջին յուշի կալցէ Հարտասանն՝ թէ առ ճշմարիտ լուսաւորութեան գաղափարաց մտաց ունկնդրին՝ հարկաւ երկու պայմանք պահանջին. այն է՝ զի քաջ ծանիցէ նա թէ զբաղադրական և թէ զհանրական քանակութիւն էակին. առանց երկուցդ գաղափարք միշտ մնան 'ի մթութեան և 'ի խաւարի. **2** գիտասցէ Հարտասանն՝ թէ խստութեամբ խօսելով ոչ ոք 'ի մարդկանէ՝ զօրէ լուսաւորել զմիտս կամ զգաղափարս ընկերաց, այլ միայն՝ դայեկաբար օգնել և նպաստել նոցա նշանակօք, իմա բառիւք և իմաստիւք. իսկ բուն լուսաւորութիւն կախի 'ի նոյն իսկ յունկնդրէն, ուրեմն հարկ 'ի վերայ կայ՝ սատարութեամբ Հարտասանին ինքնին կերպաւորել զգաղափարս իւր, որպէս կին ծննդական օգնութեամբ դայեկի. **3** քննեսցէ զվիճակ ունկնդրացն՝ և այնմ յանկեսցէ զբանս իւր. զի ոչ ամենայն ոք միապէս կարօտի ամենայն ցեղից լուսաւորութեանց. այլ ոմանք այսմ առաւել, և ոմանք այնմ. նա և մի կարի վստահասցի 'ի ծանօթութիւնս նոցա, և մի կարի անյուսասցի, այլ ընդ միջինն ընթասցի ուղի. առաւել ևս պատկառ կացցէ չպատրել զանձն սուտ ենթադրութեամբ, թէ որք զանուն էակի իրիք գիտենն՝ նոքին և զպայծառ գաղափար նորին ժառանգեն. քան զի փորձիւ հաւաստեալ է՝ թէ բազումք 'ի մարդկանէ լոկ անուամբք իրաց տամկացեալ գտանին առանց յստակ ծանօթութեան նոյին. այսմ առաւել պատկառ կացցեն քարողիցք․ 4 զընկերաց միտս լուսաւորել կամեցեալ ճարտասանն՝ զառաջինն փոյթ կալցի զիւրն լուսաւորել լիուլի զառարկայէ ճառին․ զի զոր չունի ոք՝ յաւիտեան չզօրէ այլում հաղորդել․ և կակաղն ոչ միայն զկակաղ չուղղէ, այլ և զուղիղն կակաղէ․ զնոյն ջանասցի ճարտասանն և 'ի պաշտաման սրտազգածութե՟ և կամաշարժութե՟․ զի նոյն պատճառ զօրէ յամենայն դէպս․ 5 ոպ՟ զի վերլուծութե՟ գաղափարաց և առարկային ուղիղ վճարեսցի՝ 'ի բացատրութե՟ անդ հանգամանաց միշտ նախադաս ընտրեսցէ զյատուկս քան զհասարակս, զդրականս քան ըզբացասականս, զներքինս քան զարտաքինս, զարմատականս քան զածանցականս, զանփոփոխս քան զփոփոխականս, զէականս քան զպատահականս, և զբարդս քան զպարզս․ 6 յամենայն վերլուծութի՟դ միտ դիցէ նախ ճշմարտութե՟ և երկրորդ ուղղութե՟ նոցին․ զորոց զնշանակութի՟ս մեկնեալ եմք այլուր․ 7 առ դիւրըմբռնելի առնելոյ ունկնդրաց զվերլուծութի՟ս, մանաւանդ զամենայն վերաբանութի՟ս, ջանասցի թէ զառարկայն և թէ ըզհանգամանս նորա՝ որչափ մարթ իցէ՝ ձեւացուցանել իբր ենթակայաւորս՝ թանձրացեալս և զգայարանաց ներքոյ անկեալս․ 8 ամենայն վերլուծութի՟ք ըստ քանակութե՟ն զուգաչափ լիցին թէ առարկային, թէ նպատակին, և թէ պիտոյից ունկնդրացն․ այնպէս զի ոչ յոլովութբ՟ խեղդեսցեն և ոչ նուազութբ՟ նքողեցուսցեն զնոսա։ Վ՟ բարեկարգութե՟ և այլոց ոմանց յատկութե՟ց սոցա խօսեցեալ եմք այլուր։

§ 178․ Սահմանել կամ սահման (definitio)․

Սահման կոչի տիրապէս՝ շրջապատ գծին կամ կոպարն՝ որ ամենուստ պարփակէ զտարածութի՟ ինչ երկրի․ և 'ի դրացեաց զատուցեալ՝ սեպհականէ միում ումեք․ սոյին նմանութբ՟ սահման կոչի ծանօթութին կամ իմաստն մտաց (ըստ որմէ՝ և արտաքին խօսքն), որ բացորոշէ զինչութի՟ էակի կամ առարկայի իրիք, և զգաղափարի նորա 'ի միտս ունկնդրաց․ և բազկանայ յառաջբերութբ՟

երկուց գոյացական հանգամանաց էակին · մի՝ սեռական կամ ցեղական հանգամանաց, և միւս՝ յատկականին · ըստ այդմ ՚ի սահմանել զառաքինութիւն պարտ է ասել, թէ է անձնիշխան ներգործութիւն մարդոյ (որ է սեռ կամ ցեղ), արարեալ համաձայն օրինաց Աստուծոյ և բարոյականութեան (որ է յատկութիւն նորա) · նոյնպէս ՚ի սահմանել զմարդն ասեմք, լինել նմա կենդանի (սեռ) մտաւոր՝ ազատական և բարոյական (յատկութիւն կամ տարբերութիւն) · և որովհետև ըստ կանոնի ասացելոցս՝ սեռն իբր նիւթ մտածի, և յատկութիւն իբր կերպ, յայնմանէ ճարտասանք սահմանեն զիրս յառաջ բերելով զնիւթ և զկերպ նոցին, յոր յաւելուն ևս զայլ պէսպէս գաղափարս և զարդարանս ձևոյ, շատ կամ սակաւ, բայց միշտ անշփոթ պահելով զգաղափարս սեռի և յատկութեան · որում օրինակ լիցի այս սահման սարգսի վարդապետի „ զի՞նչ են կուռք՝ եթէ ոչ յոսկւոյ և յարծաթոյ ուրուական պատկերս կանգնել · և զի՞նչ այլ է պաշտօն նոցա՝ եթէ ոչ սիրել զնոսա և երկիրպագանել իբրև Աստուծոյ ։ Եւ ոչ միայն յոսկւոյ և յարծաթոյ գոլ կուռսն . . . այլ և յայլ ինչ վատթարագոյն նիւթոյ · ՚ի պղնձոյ ասեմ և յերկաթոյ, ՚ի քարանց և ՚ի փայտից · ուստի զմեռելոտի պատկերսն քանդակեալ պաշտօն նոցա մատուցանէին ։

§ **179**· Կանոնք ուղիղ սահմանաբանութեան են, **1** որչափ մարթ իցէ՝ աշխատ լիցի ճարտասանն գտանել զմերձաւոր սեռն կամ զցեղն, և զճիշդ յատկութիւն, առանց որոց ոչ պայծառ ծանօթանայ իրն · որպէս ՚ի սահմանի մարդոյ՝ կենդանին է անմիջական սեռն, իսկ էակն կամ արարածն՝ հեռաւոր · նոյնպէս բուն յատկանիշ առաքինութեան է պահել զօրէնս Աստուծոյ վասն յարգելոյ զնոյն իսկ զօրէնսդիրն և զօրէնս նորա · **2** մի՛ ճապաղ տարտամ և անբացորոշ յօրինեսցէ զբանն, այնպէս զի զօրէն թամբից երիվարաց՝ օտարաց ևս յարմարեսցի · որպէս թիւր սահմանէ՝ որ ասէ „ բառք են նշանք խորհրդոյ մտաց ·

բոլորակն է ձև կորագիծ. քան զի և շարժուածք անդամոց նշան են խորհրդոց. նոյնպէս ձուաձև և պարուրաձևն ևս են կորագիծք. 3 մի՛ աւելորդ և մի՛ թերակատար կրճատեսցէ զսահմանն, մինչև չյանկիլ նմա յամենայն անհատս կամ 'ի ցեղս. ոպ՟ 'ի սահմանելն ըզմարդն, կենդանի բանական և սպիտակամարմին, եթովպացիք արտաքսին 'ի մարդուէ. 4 դիւրիմանալի պարզախօս և յստակիմաց յօրինեսցէ զայն՝ առանց խորթաձայն բազմանշանակ և փոխաբերական բառից. քան զի վայրապար լինի ասել,, միտքն է ճրագ և լապտեր 'ի սրտի մարդոյ... կիրք են խելայնոր հիւանդութիւնք հոգւոյ... ծառայութիւն է սահմանադրութիւն իրաւանց ազգաց, որով ոք ընդ օտարի տէրութ՟ անկանի հակառակ բնութ՟, ևն. զի յայդպիսեաց չէ հնար ճիշդ ճանաչել զիրն կամ ուղղել զթիւր գաղափարս իւր. 5 մարթ է սահմանել ոչ միայն զբուն էակս, այլ և զամենայն հանգամանս նոցա, զներգործութիւնս, զկրելութիւնս, զորակութիւնս, ևն. ըստ որում իբր էակ մտածին ամենայն առարկայք խօսից. ըստ այդմ մարթ է ասել,, խաւարումն լուսնի է խափանումն ճառագայթից նորա, պատճառեալ յայնմանէ՝ զի երկիրս անկանի ընդ մէջ նորա և արեւու. ժամացոյցն է մեքենայ, որ կանոնաւոր շարժմամբ իւրով ցուցանէ զժամանակ և զմասունս նորա, ևն։

§ 180. Ստուերագրութիւն (descriptio).

Ստուերագրութիւն կամ հովանագրութիւնն (զոր նախնիք կոչեցին ստորագրական սահման, ստորագրութ՟. որ ճշդիւ է՝ ձեռնագրել 'ի ստորև նամակի կամ թղթոյ իրիք, subscribere) է անճարակ և անկատար սահման, կամ զիարդ և է պարզաբանութ՟ էակի՝ զոր չիցէ հնար ճշդիւ սահմանել, առ չգիտելոյ զբուն զինչութ՟ նորին. իբր զի բազում ինչ իրք են՝ որոց սեռ և տարբերութ՟, կամ գոյացուցիչ հանգամանք անծանօթ են. կամ այնպէս ճապաղ և տարտամ՝ մինչև չզօրել անսխալ կողմա լուսաւորել զայնս · և ահա յայդպիսի Ճարտասանք ստիպին փոխանակ ճիշդ սահմանի՝ 'ի մէջ բերել զստուեր և զստուերական ինչ նորին · առաջի առնելով զորակութիւնս, զքանակութիւնս, զազդեցութիւնս, զներգործութիւնս, զկրելութիւնս, և զայլ յեղական հանգամանս, առ ծանուցանելոյ ունկն դրոյ՝ թէ ոչ զլիակատար էութիւն, գոնէ զպէսպէս որպիսութիւնս առարկային · և որովհետև բազմայեղ են յեղափոխ հանգամանք՝ յայնմանէ պէսպիսանան և եղանակք ստուերագրութեան · բայց առաւել սովորականքն են յետագայքդ ։

1 Յառաջ բերել զպէսպէս ներգործութիւնս և զկիրս առարկային · որպէս յայս բան սրբոյն ,, կրօնաւորութիւն է առանձնանալ յաշխարհէ, և անզբաղ կեանս ստանալ, ժուժկալութեամբ զկեանս տնօրինել 'ի կերակուրս և յըմպելիս, 'ի զգեստս խարազն և խոշոր, բոկ ոտնակոխել 'ի վերայ սուրբ երկրի, նա և 'ի բանս և 'ի խորհուրդս և 'ի հայեցուածս անգամ, և յայլ այսպիսիս, ուր սկսանի ժուժկալութիւն և ուր կատարի ։

2 'Ի բաց տանել զհակառակ որակութիւնս, և 'ի ներքս բերել զվայելչական հանգամանս · ըստ այսց բանից Առաքելոյն ,, եպիսկոպոսն է անարատ տնտես Աստուծոյ, ոչ յանդուգն, ոչ բարկացող, ոչ թշնամանող, ոչ հարկանող, ոչ զաւշաքաղ, այլ հիւրասէր, բարեսէր, ցած, արդար, սուրբ, ժուժկալ, վերակացու, հաւատարիմ բանին վարդապետութեան, կարող մխիթարել ողջմտութեամբ վարդապետութեան, և զհակառակորդս կշտամբել ։

3 Ցուցանել զօգտակարութիւն կամ զվնասակարութիւն առարկային · ըստ այսմ մարթ է ասել ,, իմաստութիւն է սերմնարան առաքինութեանց, մանգաղ մոլութեանց, դայեակ բարեբախտութեան, զարդարանք կենաց . . . . մեղքն է ժանտախտ հոգւոյ, արատ խղճի մտաց, ապականութիւն կենաց, կորուստ առաքինութեանց, տրտմութիւն հրեշտակաց, ուրախութիւն դիւաց . . . արբեցութիւն է լուցկի բղջախոհութեան, թոյն իմաստութեան, առիթ բարկութեան՝ հայհոյութեան՝ սպանութեան ։

4. Նմանեցուցանել զառարկայն՝ այլ և այլ իրաց, առ ծանուցանելոյ զորպիսութիւն նորին. որպէս առնէ սարգիս վարդապետ 'ի բանսդ,, ծառ է այնպիսի կրօնաւորն՝ ապաղուն տերևաթափ և պտղակորոյս, ոչ 'ի գնացս ջուրց տնկեալ, և ոչ 'ի ջուրս հանդստեան կենարար վարդապետութեան Քրիստոսի սնեալ. այլ 'ի յոստին տեղիս՝ յամայի յանջրդի և 'ի վիհս կորստեան, ուր ոչ առնէ այցելութիւն տէրն.... (բարկացողք) խայթեն իբրև զկարիճ, խածանեն իբրև զօձս, հաչեն իբրև ըզշունս, պատառեն իբրև զգայլ, սրեն զատամունս իբրեւ զվարազս, փրփրին իբրև զդիւահարս, ևն:

5 Ընծայել առարկային զհակադրեալ որակութիւն, բայց զճշմարտեալս, ըստ այսց բանից սարգսի,, պետրոս՝ որ տգէտն էր և իմաստուն, որ յիմարն էր և խորին փիլիսոփայն, որ աղքատն էր՝ և մեծատուն, որ տնանկն էր՝ և զբազումս մեծացուցանէր, որ ոչ ինչ ունէր՝ և զամենայն ինչ ունէր, ևն:

§ 181 Կենդանագրութիւն (pictura).

Կենդանագրութիւն (որ և նկարագրութիւն, գեղագրութիւն, պատկերագրութիւն) է ճշգրտատիպ և նմանահան գծագրութիւն զգալի և տարածական առարկայից, ըստ ներկայ վիճակի նոցա. այնպիսի բոցավառ երևակայութեամբ և հոգեշարժ ոճով ճարտարեալ, մինչև ունկնդրաց բուռն սաստկութեամբ վառիլ յերևակայութեան, զգածիլ 'ի սրտի, և յափշտակեալ անձամբ համարիլ՝ առաջի աչաց տեսանել զիրն կամ լսել ականջօք, և ընդ փորձ իրացն անցանել: Ճարտասանն յայսմ ներգործութեան պարտի ամենայնիւ նմանել՝ որպէս և անուանքն ցուցանեն՝ ճարտար պատկերահանի, որ զկերպարանս կենդանի նախատպի նկարեսցէ գծիւք և գունովք կամ երանգօք. վասն որոյ ըստ արհեստի սորա նախ 'ի միտս և յերևակայութեան իւրում ճշգրտաձևեսցէ զնախատիպն ամենայն կարևոր մասամբք և յատկանշանօք․ և ապա ՚ի գիր և ՚ի բան մատիցէ․ անկորուստ պահելով յաչաց մտացն զնախատիպն միշտ, և նմին նմանեցուցանելով զձեւակերտ իւր՝ ըստ ամենայն մասանցն։ Գլխաւոր եղանակք սորին՝ ըստ զանազան առարկայից՝ համարին յետագայքդ։

1 Նկարագրութիւն մարդկային ներգործութեանց և կրելութեանց՝ ըստ տեղւոյ և ըստ այլոց զգալի պարագայից նոցա․ որում գեղեցիկ օրինակ է պատմութիւն վշտաց և չարչարանաց Հրէից (յերրորդ գիրս Մակաբայ․ գլ․ դ․ ե․ զ)․ ՚ի նոյն ոճ վերածի և գրեալն յողբսն Երեմիայ (Գլ․ դ․ 2—15), որպէս և աղօթքն նորին․ և սոյն պատկեր պատերազմին բելայ ընդ Հայկայ առ խորենացւոյն (յէր․ 55 — 59) և այլք բազումք առ Նմա, առ Եղիշէի, առ Յովհաննու կաթողիկոսի, և առ այլ ընտիր մատենագիրս մեր։

2 Դիմագրութիւն արտաքին կերպարանաց մարդկան զանազան եղանակաւ զգածելոց (prosopographia)․ որպիսի են բանքս առ Խորենացւոյն,, Զայս և որ այլ այսպիսիք բազումք՝ եբեր մերոյ աշխարհիս՝ խարտեաշս այս և աղէբեկ ծայրիւ հերաց երուանդեանս տիգրան, երեսօք դունեան և մեղուակն, անձնեայն և թիկնաւէտն, առոյգաբարձն և գեղեցկոտն, պարկեշտն ՚ի կերակուրս և յըմպելիս․․․․ իսկ զայր խոժոռադէմ և բարձր և կոպտարանձն և տափակաքիթ խորակն և դժնահայեաց, տորք անուն կոչեցեալ, զոր վասն առաւել ժահադիմուեն ձայնէին անգեղեայ, վիթխարի հասակաւ և ուժով, հաստատէ կուսակալ արևմտից, և յերեսացն անպիտանուէ կոչէ զանուն ազգին՝ անգեղ տուն (ա․ 24․ է․ 8)․ և առ սարգսի վարդապետի վասն բարկացողաց,, յոնքն անկեալք և խոնարհեալք, երեսք դեղին և ապականեալք, շրթունքն սեաւ և երկթայեալ, ունչք երկայն և սուր, ձայն խոշոր և թիւր, աչք հրատեսակք, բանք ընդդիմադրեալք և անախորժք, և բոլորովին դժնեայ և ահարկու տեսողաց․․․ դողան բոլոր անդամք, ոչ կարեն կալ յոտից վերայ և զմի տեղի ունել․ այլ զօրէն

արբելոց այսր անդր դեդեւելին , ընդ վայր ածեն զձիւսն և 'ի հարուածս մրձաւորացն ձգեն ։

3 Պատկեր զանազան տեղեաց , շինուածոց , քաղաքաց , դաշտաց , գետոց , աշտարակաց , և այլոց բնական՝ արհեստաշէն և կեղծահնար վայրաց (topographia) ․ ոպ̃ս են առ Խորենացւոյն նկարագիր վանայ քաղաքին և երուանդակերտի (ա ․ 16 ․ բ ․ 42) ․ և այլ ևս բանք առ զանազան հեղինակս , զորս կարդա ։

4 Նկար պատերազմաց , ջրհեղեղուե̃ց , կոտորածոց , երկրաշարժուե̃ց , և նման թշուառուե̃ց , բովանդակ ժողովրդեան և ազգի կամ քաղաքի իմ̃ք հասելոց ․ ոպ̃ք կան առ եղիշէի վարդապետի (յեր ․ 133 — 202), առ յովհաննու պատմագրի , և առ այլս բազումս ։

5 Նկարագիր բարոյական հանգամանաց և ներքին հոգւոր յատկանշաց առաքինի կամ մոլի անձանց , որ կոչի Բարոյացուցուի̃ կամ Կրիցագրուի̃ (pathopoeia , ethopoeia) , ընդ որում իմանին ոչ միայն յատկուի̃ք և գերազանցուի̃ք առ կամս վերաբերեալք , այլ և որ առ միտս , առ ուսմունս գիտուե̃ց , առ զգածմունս սրտի , և առ այլ հոգւոր կարողուի̃ս վերածին ․ ոպ̃ է ըստ իմ̃ք նկար սրբոյն մեսրովպայ առ Խորենացւոյն (գ ․ 67) ․ և նման բանք առ այլ հեղինակս մեր և այլոց ազգաց՝ զբարս առաքինեաց կամ մոլեաց նկարողաց ։

6 Ժամանակագրուի̃՝ ոչ պատմական , այլ ճարտասանական ․ այն է նկարել զիրական կամ զկեղծահնար ժամանակս և զմասունս նոցա (chronographia) , որպիսի է առ հեթանոս բանաստեղծս պատկեր ոսկեղէն դարուն ․ այլ և նկար ամառան , ձմերան , գարնան , աշնան , մանկուե̃ ․ կամ ժամանակաց յաջողուե̃ , ձախորդուե̃ , ուրախուե̃ , տրտմուե̃ , խաղաղուե̃ , ալեկոծուե̃ , և որ 'ի դոյնպիսիս վերածին ։

7 Նկար այնպիսի բոլորոյ՝ որ ոչ գոյ համանգամայն , այլ տակաւ աճելով և հետզհետէ սաստկանալով 'ի վերջին աստիճան լաւուե̃ կամ յոռուե̃ և ուժեղուե̃

բարձրանայ (hypotyposis, կերպաւորութի՟), որում քաջադէպ օրինակ է պատկերն թշուառութ՟ և անարգական մահուան ուրացողին վասակայ առ եղիշէի (յէջ · 245—8)։

§ 182 · Մէկնաբանութիւն (explicatio) ·

Մեկնաբանութի՟ն յանձուկ միտս առեալ աստանօր՝ նշանակէ նախ՝ զբացատրութի՟ մթին անուանց և բառից · զի սոքա թէպէտ և ըստ կամի յարեալ են յիրս, սակայն զի անմիջական նշանք են գաղափարաց, նոյն և միջօցք զարթուցանելոյ զնոսա յայլս, յայն սակս ուրեք երբեք օգուտ բաղում բերեն սպայծառութ՟ նոցա · իսկ եղանակք մեկնաբանութ՟ համարին յետագայքդ, 1 սահմանել կամ բացատրել զնոյն իսկ զանունն կամ զբառն (notatio), որպէս, մահացու մեղք է՝ որ մահ ածէ կամ մեռուցանէ զհոգին · ծերակոյտն է ժողով ոչ երիտասարդաց, այլ ծերոց · 2 պարզել և ցուցանել զբարդութի՟, զբաղադրութի՟ և զածանցութի՟ բառից (derivatio), որպէս 'ի բառսդ, փառասէր, անփառ, փառաւոր, անփառացի, ևն · 3 յաւելուլ զնոյնանշան և զհամիմաստ բառս (synonymia) · որպէս յայս բան նարեկացւոյն ,, ստեղծչին սերմ ազդեցմամբ կոչեցաւ զգօն, այն ինքն է հանդարտ, եբր թէ հեղ, որ է հաստատուն, այս է՝ անփոփոխ, որ է լրութի՟ կատարելութ՟ · 4 բառնալ զշփոթութի՟ համանուն ձայնից (aequivocus), որոց զինչութի՟ յայտնի է ուսանելեաց 'ի քերականութ՟է · որպ՟ 'ի բառսդ՝ ակն, դեղ, լոյ, մայր, ևն։ Բայց յայդմանէ գոյ և համաձայնութի՟ իմաստից, յորժամ նոյն իմաստ այլևայլ մտօք առեալ լինի 'ի զանազան անձանց վասն օգտութ՟ կամ առ չարութ՟ · զպարզութի՟ սորա տրամաբանք կոչեն՝ բացորոշել զվիճակ խնդրոյն, զորմէ պարտ է տեսանել առ նոսա։

Երկրորդ՝ նշանակէ զբացատրութի՟ խրթին և օտար կազմածոյ բազմամանուած առասութ՟եց և յարասութ՟եց, վսեմական ոճով և ձևովք քերականութ՟ կամ ճարտասանութ՟ յօրինելոց · յորս անսովոր դասակարգութ՟ և կապակցութ՟ բառից եթէ վարագոյր ընդ մէջ անկեալ ամպամած մթագնէ զխօսս, և չներէ մտաց տեսանել զ'ի նոսա թաղուցեալ իմաստն · յայսպիսիս պէտք են՝ ուր յայտ է՝ վերլուծութ՟ շարադրածոյն ըստ քերթողական կանոնաց · որոց ծանօթս համարեմք զուսանելիս ։

Երկոքին եղանակքդ մեկնաբանութ՟՝ անուանին բառական · զի յածին զնշանակութ՟ և զշարադասութ՟ բառից · իսկ մեկնաբանութիւն անուանեալ իրական, կամ լաւ ևս՝ առարկայական՝ վճարի մտավարժ վերաբանութ՟բք, իմն սահմանելով, բաժանելով, ևն · զի վերլուծութիւք գաղափարաց՝ թէպէտ կարգին առ 'ի լուսաբանել զգաղափարս մտաց · սակայն դորին միջնորդութ՟ նա և զնոյն իսկ զառարկայն պայծառացուցանեն · մանաւանդ երբ յօրինին 'ի ճարտասանէ ամենայն կարևոր գիտութ՟բք ճոխայելոյ, և յերկար 'ի ճառաբանութիւնս առարկայից վարժելոյ ։

§ 183 · Զանազանութիւն (distinctio) ·

Նշանք՝ ըստ նոյանէ և գաղափարք նոցա՝ թէ առ մանրութ՟ յատկանշիցն և թէ առ համգիտութ՟ որակութեանցն յոլովակի այնպէս շփոթ և խառնիխուռն պատկերանան 'ի միտս, մինչև ճարտասանին ոչ զօրել, ոչ ինքնին պայծառ որոշել զնոսա յիրերաց, և ոչ այլոց իմացուցանել բացորոշակի · և ահա յայսպիսի դէպս պարտաւորի նա զանազանել, իմն 'ի յայտ բերել զպէսպիսութ՟ կամ զխտիր նոցա, մանաւանդ ըստ որակութ՟ցն · որպէս զի ունկնդիրք ստասցին զբացորոշ ծանօթութ՟ գիրոյն՝ զորմէ բանքն իցեն ։

Ցեղք զանազանութ՟ գաղափարաց՝ ըստ նոյանէ և իմաստից և ոճոյ՝ յոլով են առ տրամաբանս · այլ մեք զբազմօք անպիտան նրբութ՟բք զանց արարեալ՝ յառաջ բերցուք զայնս միայն, որք առաւել կարևոր դատին ճարտասանից ։

1 Անձնական . . . իրական . կամ , ենթակայական . . . առարկայական .

Այս պէսպիսութիւն մտածի յաւէտ 'ի վերացեալ և յան նիւթ էակս, 'ի գիտնականս, 'ի բարոյականս, և 'ի քաղաքականս. որոց անունն թէպէտ մի է, բայց իրն այլազան՝ ըստ այլևայլ տեսութեանց մտաց. յօրինակի համար, պերճախօսութիւն մտածի նախ՝ 'ի միտս մարդոյ, իբր արդէն ստացեալ 'ի նմանէ կամ թէ ենթակայացեալ 'ի նմա, և երկրորդ՝ ըստ ինքեան իբր էակ ըստ ինչութեան և հանգամանաց իւրոց՝ առանց ուրուք ընդունողի. ըստ առաջին տեսութեան՝ կոչի պերճախօսութիւն անձնական կամ ենթակայական, իսկ ըստ երկրորդին՝ իրական կամ առարկայական. նոյնպէս յարգ, գին, արժանաւորութիւն, պատիւ, գեղեցկութիւն, օգուտ, բարութիւն, և այլ անհամարք՝ կամ յիրս անդ մտածին կամ լոկ 'ի միտս մարդոյ. ըստ այսմ արբեցութիւն իրապէս չար և վնասակար է, բայց 'ի միտս արբեցողին օգտակար համարի. մարգարիտն գտեալ և անարգեալ յաքաղաղէն եզովբոսի՝ պատուական էր առարկայապէս, և անարգ՝ անձնապէս. գայթագղութիւն՝ զոր փարիսեցիք առնուին յանմեղ վարուց Քրիստոսի, սուտ էր իրապէս, բայց ճշմարիտ երևէր անձնապէս կամ յանձինս փարիսեցւոց. զնոյնն իմա և յայլ նմանս:

2 Անուամբ . . . արդեամբք . կամ . վերերևութիւ . . . . արգասեօք .

Ակնարկէ սա յիսկութիւն կամ 'ի խորթութիւն էակաց, զոր 'ի վերոյ մեկնեալ եմք. որպէս տալ ողորմութիւն վասն Աստուծոյ և վասն օգնելոյ տառապելոյն՝ է բարեգործութիւն արդեամբք և արգասեօք, իսկ վասն սնոտի փառաց կամ այլով չար ինչ դիտմամբ արարեալ՝ լոկով անուամբ և վերերևութիւ կարծի առաքինութիւն. ծխածանն գունաւոր է երևութիւ, այլ անգոյն արդեամբք. նոյնպէս ծանիր և վասն իմաստութեան, գիտութեան, սիրոյ, բարեկամութեան:

3 Արձակաբար .... առնչաբար.

Հանգամանք մտածին յէակս կամ միայնակ և առանձինն, կամ համեմատութեամբ և բաղդատութեամբ առ այլս. և ըստ կրկնակի տեսութեան մերթ ճշմարտին, և մերթ ստին կամ չափաւորին. ըստ այսմ Աստուած է և կոչի՝ սբ՟ արդար իմաստուն մեծ՝ արձակաբար, իսկ մարդիկ լինին և կոչին այդպիսիք՝ բաղդատութեամբ առ միմեանս, առ ներհականս, առ գերագոյնս, առ ստորինս, կամ առ այնպիսիս՝ յորմէ իւիք զանազանին. նոյնպէս սեւ, բոլոր, ընդհանուր, կամ արձակաբար կամ առնչապէս միայն կոչին այնպիսի:

4 Արձակաբար .... պայմանաբար.

Խտիր սորին ՚ի նախընթացէն՝ յայնմ երևի, զի նա յորակութիւնս և ՚ի քանակութիւնս, իսկ սա ՚ի ներգործութիւնս և ՚ի կրելութիւնս յաւէտ մտածի. կամ յայնպիսիս՝ յորս գոլն և գործելն կապեալ է ընդ պայմանի իրիք. որպ Աստուած է և ասի ներող մեղաւորաց՝ եթէ միայն զղջասցուք ընդ անցեալ չարիս և դադարեսցուք յապագայից. աշակերտք մարթին ուսանել զգիտութիւնս, բայց այսու պայմանաւ՝ եթէ արիաջան փութասցին առանց ծուլութե. նոյնն իմացեալ լինի գոգ յամենայն առասացութս՝ յորս մտանեն թէական մակբայք և շաղկապք՝ ըստ տեղւոյն և նիւթոյն հանգամանաց:

5 Բնական ... Գերբնական ... Անբնական.

Յայտնի է տարբերութիւն սոցին՝ ամենեցուն, մանաւանդ ՚ի գործողութիւնս և ՚ի կրելութիւնս. որպ հացն բնապէս սնուցանէ զմարդ, գերբնապէս լինի մարմին Քրիստոսի, և անբնապէս կամ հակառակ բնաւոր զօրութեանն վնասէ ումանց. մեռեալ մարմին մարդոյ՝ բնապէս ապականի, գերբնապէս՝ յառնէ ՚ի մեռելոց, իսկ անբնապէս՝ կարէ լինել երբեմն մարդախանձ վայրենեաց:

6 Բնական . . . Բարոյական .

Որք տգէտք և մոլիք՝ բնապէս բարի են և կենդանի, իսկ բարոյապէս չար են և մեռեալ. զի կուրք են յիմաստուէ̃ և յառաքինուէ̃. նոյնպէս առաքինական գործք, օրինապահուի̃ք և նմանք մարթին լինել բնապէս ուղիղ, իսկ բարոյապէս թիւր և մոլար:

7 Էական . . . պատահական . . . ամբողջական .

Որ և լսէ էակ՝ ունի զիւր էուի̃, պատահմունս, և ամբողջարար մասունս. ոպ̃ էական է մարդոյ ունել զհոգի և զմարմին, պատահումն են գիտուի̃, հարստուի̃, ամբողջարար մասն են ձեռք, ոտք. նոյնպէս ՚ի դաշնադրուի̃ս էական է հաւանուի̃ դաշնակցաց, պատահումն՝ լինել իրաւ, կամ անիրաւ, ամբողջական՝ պէսպէս պայմանք յօրինաց կամ ՚ի դաշնադրաց սահմանեալք, են:

8 Ըստ սաստկութեան . . . ըստ տարածութեան .

Կարևոր է այս զանազանուի̃ յամենայն գիտուի̃ս առ ՚ի զերծանիլ ՚ի բազմադիմի սխալանաց, և առ ՚ի ճանաչել զօրինաւոր յարգ էակաց, յորս դէպ լինի բաղդատել զմին ընդ միւսոյն. արդ սաստկուի̃ս նշանակէ զաստիճան որակուե̃ էակաց, իսկ տարածուի̃ն՝ զչափն քանակուե̃, կամ զորչափն մեծուե̃, պարունակուե̃ և ընդհանրուե̃. ոպ̃ եթէ զկաղնաչափ գոհարն բաղդատես ընդ քարաժայռ լերին, գոհարն համարի մեծ քան զլեառն ըստ սաստկուե̃, և փոքր ըստ տարածուե̃. իսկ լեառն ասի մեծ քան զգոհարն ըստ տարածուե̃, և փոքր ըստ սաստկուե̃. նոյնպէս՝ զճառ ինչ գերապանց արհեստիւ յօրինեալ՝ բայց համառօտ ՚ի մի թերթ թղթոյ բովանդակեալ՝ եթէ համեմատես ընդ բազմաթերթ ճառատանոյ իմաստակի ումեմն, առաջինն ասի գերապանց քան զերկրորդն ըստ սաստկուե̃, այլ ոչ՝ ըստ տարածուե̃. նոյնպէս ծանիր և յայլ նմանս. բայց եր բեթ հարկ լինի բաղդատել զսաստկութիւն և զտարածութիւն մի և նոյն էակի ընդ միմեանս· որպէս 'ի գոհարն մեծ է սաստկութիւն քան զտարածութիւն նորա, իսկ 'ի լեառն՝ տարածութիւն քան զսաստկութիւն։

9 Ինքնազօրութեամբ . . . Փոխառութեամբ·

Ամենայն հանգամանս մարթ է գտանել զայս խտիր· զորս ոմանք յէակաց ինքնին կամ էապէս ունին, իսկ ոմանք հաղորդեալ յայլոց· որպէս Աստուած յանձնէ ունի զամենայն ինչ, իսկ արարածք՝ հաղորդեալք 'ի նմանէ· արեգակն յինքենէ ունի զլոյս, իսկ այլ մոլորակք զնոյն յածեալք՝ փոխառութեամբ· Թագաւորն ինքնօրէն ունի զիշխանութիւն սպանանելոյ, իսկ դահիճն հաղորդութեամբ։

10 Կերպապէս . . . Նիւթապէս·

Մեկնեալ եմք զկերպն և զնիւթն՝ յորոց բաղադրին զգալի էակք, ըստ որոց և մարթ այսպէս նկատին նոքա, և մարթ այնպէս· որպէս որ ունի զձոյլ ոսկի՝ ասի ունել զդրամս նիւթապէս և ոչ կերպապէս· մարդն նիւթապէս առեալ է մահկանացու, իսկ կերպապէս՝ անմահ· ճառն նիւթապէս տեսեալ՝ է փունջ տեղեկութեանց ճարտասանին, իսկ կերպապէս՝ է պատկեր և ցուցակ հանգամանաց առարկային· եկեղեցին նիւթապէս է բազմութիւն աստուածապաշտից, իսկ կերպապէս՝ ընկերակցութիւն կրօնի յարտաքին պաշտամունս· նոյնպէս իմն և յայլս, յորս մտածին կերպ և նիւթ ինչ թէ զգալի թէ իմանալի։

11· Կերպապէս . . . . Հարոզաբար·

'Ի ներգործութիւնս և 'ի պատճառողութիւնս նկատի այս տարբերութիւն, զորս ոմանք յէակաց պարունակեն ըստ կերպին, իսկ այլք՝ թէպէտ չունին զայն կերպ, սակայն զայլ ինչ գերազանց կամ հաւասարազօր որակութիւն բովանդակեն, որ կարող է արտադրել զնոյն ներգործութիւն· որպէս արեգակն ոչ ինքն է կենդանի և ոչ պարունակէ զկեանս կերպապէս. բայց երբ սաստիկ ջերմութ̅ ծնուցանէ յերկրէ զպէսպէս միջատս կամ զորդունս, տալ ունել զկեանս կարողաբար. Թագաւորն ոչ է ներկայ յամենայն քաղաքս կերպապէս, այլ կարողաբար. որ յորդորէ կամ սաստէ զայլ ոք 'ի գողու̅ի, ինքն լինի գող ոչ կերպական, այլ կարողական. ժառանգն տէր կոչի ամենայնի, ոչ կերպապէս՝ այլ կարողապէս. նովին մտօք և անդրանիկն Թագաւորի՝ Թագաւոր կոչի:

12. Հաւասարական ... անհաւասարական.

Եւ սա նոյնպէս մտածի Թէ 'ի պատճառս լինաց, ոպ̃ երկու երիվարք կառաձիգք են հաւասար պատճառք ընԹացից կառաց. բայց Աստուած և մեք ոչ եմք հաւասար պատճառք փրկութ̅ հոգւոյ մերոյ. և Թէ 'ի բաժանման բոլորոյ ինչ 'ի մասունս հաւասարս կամ յանհաւասարս. ոպ̃ բաժանել զեղանակս տարւոյ 'ի չորս՝ 'ի գարուն, յամառն, ևն̃, հաւասար է. իսկ եԹէ զկենցաղ մարդոյ բաժանես յաղքատս և 'ի հարուստս, անհաւասար ասի, զի արտաքոյ մնան միջակայինք:

13. Ուղղակի ... անուղղակի.

ԳրեԹէ 'ի ներգործութ̅ս միայն տեսանի այս խտիր, մանաւանդ 'ի մարդկայինս. որք ուղիղ գծիւ զայս ինչ դիտեն, բայց անուղիղ և կոր գծիւ յայլ ինչ եղերին. ոպ̃ որ եկեղեցական կմ̃ քաղաքական իշխանութ̅ հակառակ կայ, ուղղակի զնոսա՝ իսկ անուղղակի զԱստուած անարգէ. որ վնասէ եղբօրն զիարդ և իցէ, ուղղակի ընկերին՝ բայց անուղղակի ինքեան վնասէ. պատանի՝ որ 'ի մանկութ̅ ոչ ուսանի զկարևոր գիտութ̅ս, ուղղակի ծուլութ̅ կամ զանցառութ̅ մեղանչէ, իսկ անուղղակի յանձն առնու զամենայն Թշուառութ̅ս՝ որք առ տգիտութ̅ Թափին 'ի վերայ նորա 'ի բոլոր ընԹացս կենացն. ուսումնական մատեանք ուղղակի զայս ինչ նիւԹոյ ճառեն, և անուղղակի՝ զայն:

14 · Սեռօրէն . . . ցեղօրէն . . . անհատօրէն ·

Հարկ է ճարտասանին զննել՝ թէ հանգամանք ինչ՝ որ ընծայի այս նիշ էակի, որո՛վ տեսութ̅ե սեպհականի նմա · ա՛յն է՝ բոլոր սեռի՞ն արդեօք ընծայի, թէ ցեղին միայն, կամ անհատին եթ · ոպ̅ զմարդն կոչեմք կենդանի՝ ըստ սեռին, մտաւոր ազատական՝ ըստ ցեղին, իսկ գիտուն՝ աստուածաբան՝ հարուստ դատաւոր՝ ըստ անհատին · ասել՝ թէ տգէտն և մոլին թշուառ են, ճշմարիտ է ըստ սեռին՝ ըստ տեսակին և ըստ անհատին · իսկ ասել՝ թէ քրիստոնեայք սուրբ են կամ ճգնաւոր, ստոյգ է միայն ըստ անհատից ոմանց, այլ ոչ ըստ սեռին կամ ցեղին · այդպիսի խտրութ̅ ասացեալ լինի, թէ հայք անմիաբան են, ուսումնատեացք, և առաւել քան զչափն օտարասէրք քան թէ ազգասէրք կամ հայրենասէրք ·

15 · Ենթակայաւոր . . . անենթակայ · հատ, 'ի թանձրացեալն . . . 'ի վերացեալն ·

Այս զանազանութ̅ի դնի յաւէտ յիմանալի էակս, յորակութ̅իս, 'ի ներգործութ̅իս և յայլ նմանս · որք մերթ մտածին 'ի մէջ ենթակային, կամ կցորդ ընդ ունողին, ոպ̅ գիտութ̅ին 'ի միտս կամ 'ի մարդն, սպիտակութ̅ին 'ի ձեան, խօսելն 'ի բանախօսն · և յայնժամ ասին՝ գոյաւորք ենթակայապէս կամ 'ի թանձրացեալն · իսկ մերթ նկատին վերացեալ յամենայն ենթակայից և առանց յարաբերութ̅ե առ ստանձնողն, ըստ որում և անուանին՝ անենթակայ կամ վերացաբար գոյաւորք · որպէս կենդանութ̅ի, իմացութ̅ի, և այլ վերացական անուանք ը̅ քերականաց ։

16 · Ներգործաբար . . . արտադրաբար ·

Հարկ է պատկառ կալ այսմ խտրութ̅ե 'ի լեզուի մերում, ըստ որում յոլովեն առ մեզ ձայնք՝ որոց շփոթ գոլով նշանակութիւն՝ մերթ զներգործութիւն պատճառողին ցուցանեն, և մերթ զպարտադրեալն 'ի ներգործութենէն. որք բազմօք տարբերին յիրերաց, և յանզգուշս առնեն զշփոթ իմացուածս. որպէս նկար՝ ուրեք զնկարելն պատկերահանին ցուցանէ, և այլուր զնկարեալն պատկեր. և յայտ է՝ թէ անդ իբր ներգործութիւն համարի, իսկ աստ իբր անուն ածական. նոյնպէս խօսք, աղօթք, հաշիւ, և այլ անհամարք՝ գոլին զանազանութեամբ 'ի կիր արկանին :

§ 184. Մասնաթուել, Բաժանել (enumeratio partium).

Թուել զմասունս պարունակեալս 'ի բաղադրական բոլորի, և մի առ մի բացայայտել զնոսա՝ մեծապէս օգնութիւն մատուցանէ պայծառութեան գաղափարաց 'ի միտս. որում դժուարին է միով հայեցուածով ըմբռնել զամենայն անդամս բազմայօդ մարմնոյ իրիք. վասն որոյ ամենայն մարդիկ բնական դատողութեան թելադրութեամբ 'ի կամիլն քաջ իմանալ և իմացուցանել զիրս կամ զգործս՝ զհետ պնդին կրկնել զմասունս նոցա. որպէս առնեն բժիշկք 'ի ճանաչելն զախտ հիւանդին, և անդամազննիք յուսանիլ և յուսուցանել զկազմած մարմնոյ, եղանակք մասնաթուութեան զանազան են ըստ պէսպիսութեան բոլորոյ և մասանց, բայց գլխաւորքն են,

1 բաժանումն և յառաջբերութիւն էական մասանց աստուածաստեղծ կամ բնական բոլորոյ. որպէս են հոգի և մարմին 'ի մարդն, նիւթ և կերպ 'ի բնական էակս, կենդանութիւն և յատկութիւն ինչ յանասունս, ևն :

2 յառաջբերութիւն ամբողջական մասանց նոյնպէս բնական էակաց. որպէս արմատ, բուն, շառաւիղ, ճիւղ, տերև, ծաղիկ, կեղև, և այլ մասունք ծառոյ. ըստ այսմ Նարեկացին ('ի Բանն, Ֆ) թուարկէ զանդամս մարմնոյ իւրոյ զոյգ ընդ մոլութեանց նոցին, յասելն,, սիրտ նենգախորհուրդ, բերանս չարախօս, ակնս յայրատատես, ևն. նոյնպէս և յոբ յիշատակէ զայլևայլ մասունս ծառոյ (Ժդ. 7—10). զորս կարդա առ նոսա :

3 յառաջբերումն ամբողջաբար մասանց արհեստակերտ շինուածոց. որպէս մասունք տաճարաց, պալատից, աշտարակաց, պարտիզաց, զգեստուց, մատենից, եւն. իսկ զօրինակս թուարկութեան սոցա մարթ է գտանել յամենայն գիրս. որպիսի են՝ այգւոյ առ եսայ (Ե. 1—6), տաճարին սողոմոնի (Գ Թգ. Զ. Եզրայ. Ը. 1—7). նաւուն առ Նարեկացւոյն (ԺԷ), զորս ընթերցիր:

§ 185. 'ի պատճառս համառօտութեան բարւոք համարիմք յայսմ վայրի առաջի առնել նախ՝ զցեղաւորութիւն (specificatio). որոյ պաշտօն է յառաջ բերել զստորակայս ընդհանրոց, յոր վերածին

4 յառաջբերումն պէսպէս ցեղից 'ի ներքոյ միում հանրական սեռի պարունակելոց. և որովհետև սեռք էակաց բազմազգի են, որպէս սեռ բնական էակաց, արհեստական էակաց, սեռ ներգործական, սեռ քաղաքական կենաց, սեռ որակական, և այլ սեռք իրականք կամ մտաւորք, այդոյիկ աղագաւ և ցեղաւորութիւն բաժանի 'ի յիշատակեալ և 'ի նման դասս. որպէս փրկիչն մեր 'ի թիւ արկանէ զգլխաւոր մոլութիւնս 'ի սրտէ մարդկան բղխեալս (Մարկ. Է. 21). առաքեալն նորա զցեղս մեղաւորաց (Ա Կորնթ. Զ). և եզնիկ զցեղս չարեաց աշխարհիս (յէր. 18—21), զորս կարդա:

5 յառաջբերումն անհատ, կամ միաթիւ էակաց ընդ միով ցեղիւ պարունակելոց (individuazione). ըստ այդմ առաքեալն յօրինակ հաստատուն հաւատոյ 'ի մէջ բերէ զաբէլ, զենովք, զնոյ, զաբրահամ, զսառա, զյակոբ, և զայլ եղական անձինս (Եբրայ, ԺԱ). ընթերցիր բաց յայդմանէ և զայլ օրինակ (Ա Մակաբ. Բ. 50=62):

§ 186. Երկրորդ՝ նա և զբաժանմունս 'այլոց եւս կանխասաց բոլորոց. ոյք են մանաւանդ

6 յառաջբերումն իմանալի մասանց գերազանցական բոլորոց. ոչ զանազանել յԱստուած զմիտս, զկամս,

զգիտու՟ն, զսէր, զքաղցրու՟ն, զբարկու՟ն, զորս յիշատակէ առաքեալն բազում ուրեք 'ի թուղթս իւր:

7 Յառաջբերու՟ն մասանց հաւաքական բոլորդ. որպիսի են՝ եկեղեցի, այգ., տուն, քաղաք, բանակ, և այլ բազումք. որոց մասունք յայտնի են ամենեցուն. իսկ զօրինակն տես առ խորենացւոյն յողբս նորա զաշխարհէն հայոց. ուր թուելով զպէսպէս վիճակս եկեղեցական և քաղաքական կենաց յարէ 'ի նոսա զմոլու՟ն:

8 Յառաջբերու՟ն մասանց աստիճանական բոլորդ (climax), յորում ճարտասանն նկարագրէ զաստիճանս սանդղաձև ելևէջից իմանալի կամ զգալի իրաց՝ որակուե՟ց և ներգործուե՟ց, ըստ սաստկուե՟ն կամ ըստ թուլուե՟ն նացա. ո՜վ տեսանի յօրինակդ,, իսկ առաքելքն՝ ոչ միայն առաքեալք, այլ և սպասաւորք, այլ և ականատեսք բանին. և ոչ միայն ականատեսք՝ այլ և սիրելիք, և բարեկամք, և որդիք, և ժառանգք, և ժառանգակիցք.... չի՛ք և չի՛ք քան զայսոսիկ (զերկնաւորս) վերագոյն բարի, և ոչ գեղեցկու՟ն վայելչական 'ի յերկրաւորս. զի եթէ զթագէ ասիցես, եթէ զծիրանեաց, եթէ զոսկեհուռն հանդերձից, առ համեմատուե՟ այնր գեղեցկուե՟ն իբրև կղկղանք են և իբրև աղբ անպիտան. և զի՞նչ ասացից զնուաստագունիցս և զերկրաւորացս, զերկնաւորացն ասացից. ոչ արեգական ծագումն՝ ոչ լուսնի ճառագայթք՝ և ոչ արուսեկին պայծառու՟ն կարեն հաւասարել այնր լուսաւորուե՟ն... թելադիր լեր՝ աղաչեմ, զամենայն հնարս հնարեսջիր, թերևս կարասցես զոմանս ապրեցուցանել. եթէ զոմանս ոչ՝ սակայն կէս մի. և եթէ կէս մի ոչ՝ սակայն զերիր մասն մի, սակայն տասներորդ մի. և եթէ ոչ այսպէս՝ գոնէ զմի ոք 'ի բազմաց. և եթէ ոչ զմի ոք՝ սակայն զքո անձնդ ապրեցուսցես 'ի տանջանաց (ոսկեբ.):

Յաջորդական բոլորն սովորաբար ժամանակաւ չափի և մասամբք նորա. վասն որոյ ամենայն ինչ՝ յորս նախ առաջին՝ ճանաչումն ժամանակին պահանջի, ընդ սովաւ պարունակի, և ըստ վերոգրելոցդ կարգի :

Ամենայն ցեղք յիշատակեալ մասնաւորութեանցդ մարթին անկանել ընդ այլովք ևս վերաբանութիւնք · այն է՝ թուարկել զմասունս հնար է կամ սահմանելով զնոսա, կամ կենդանագրելով, կամ պատմելով, կամ փաստաբանելով, հերքելով, գովելով, պարսաւելով, և այլովք եղանակօք վերաբանութեանց :

Խտիր զանազանութեան ՚ի բաժանմանէ յայսմ է · զի անդ զբոլոր ՚ի բոլորս որոշեմք, կամ դէթ իբր բոլոր մտածին զանազանեալքն, իսկ աստ զայլևայլ մասունս միոյ բոլորոյ յիրերաց զատանեմք :

§ 187 · Պատճառաբանութիւն (aetiologia) ·

Է բացատրութիւն կամ յառաջբերումն արարչական պատճառի կամ ներգործողի՝ որոյ արդէն յայտնի իցեն արարածքն · կամ ըստ լեզուի չափաբանից՝ է զեղելոյ գործոյն գտանել և հրապարակել զպատճառն · իբր զի ը̅ գաղափարի արարածոց անանջատ յօդակից է և գաղափար արարչին, առանց որոյ չէ մարթ պայծառ ճանաչել զնա · օրինակք վերաբանութեանս յոլով են ՚ի սուրբ և յարտաքին դիրս · որպէս հեղինակն գրոց յովբայ (Գլ. ԼԸ, ԽԱ) ցուցանէ՝ յանդիմանել Աստուծոյ զյովբ առ ՚ի ճանաչել յարարածոց զիրաւունս արարչին · և առաքեալն պաւղոս բազում ուրեք յարարածոցս յարարիչ նոցա ՚ի վեր տանի զհաւատացեալս · և իմաստունն (ԺԳ. 1—19) յանդիմանէ զհեթանոսս վասն չճանաչելոյ նոցա զարարիչն ՚ի ստեղծուածոց նորա · և լամբրոնացին զսքանչելի ատենաբանութիւնն իւր սկսանի յառաջբերութեամբ արարչական պատճառի ժողովոյն, զոր կարգմ :

Պատճառաբանութիւն նպաստէ երից ևս նպատակաց ճարտասանին, իմա յուսուցանել զմիտս, ՚ի զգածել զսիրտս, և ՚ի շարժել զկամս · որոյ օրինակք բազում են 'ի գրուածս կիկերոնի, մանաւանդ 'ի ճառն յաղագս վերրեսի, և այլուր յաճախ։ Նոյնպէս 'ի կերածի և 'ի մէջ այլոց վերաբանութեանց, որպ 'ի գովելն, 'ի պարսաւելն, 'ի պատմաբանելն, 'ի կենդանագրելն, 'ի համայնագրելն, և յայլս։

§ 188. Առարկանագրութիւն (pragmatographia).

'Ի սմա ճարտասանն հակառակ նախընթացին՝ զեդելոյ պատճառին՝ զգործածս և զորարածս յառաջ բերէ զանազան խորհրդածութիւնս, որպ առնէ մովսէս յառաջին գլուխն ծննդոց, յորս պատմէ զստեղծուածս ամենայօր հրամանին Աստուծոյ. միայն՝ չէ արժան շփոթել զսա ընդ պատմութեան, յորում ոչ արարածք՝ այլ լոկ ներգործութիւնք գործողաց 'ի մէջ մատուցանին. իսկ զխտիր գործողութեանց 'ի գործածոց ցուցեալ է մեր վերագոյն. յաճախ է սորայս կիրառութիւն յամենայն նպատակս և 'ի ցեղս վերաբանութեանց. որպ տեսանի 'ի գրուածս երևելի ճարտասանից զանազան ազգաց։ Կարդա՛ առ յակոբայ առաքելոյ (4) զբարի և զչար պտուղս մարդկային լեզուի, և յայլ տեղիս սուրբ գրոյ բազում ինչ պտղոց և զարդեանց պատճառողաց։

§ 189. Վախճանաբանութիւն.

Զվախճանէ կամ զնպատակէ բաւական խօսեցեալ եմք 'ի վերոյ. վասն որոյ աստ յորդորել միայն ունիմք զուսանելիս՝ սուր մտօք որոնել՝ գտանել և բացատրել զնպատակս առարկայի իւրեանց պէսպէս, մանաւանդ զներգործականն և զկրաւորականն. իմա՛ զայն՝ զոր առարկայն ինքն ներգործելովն կարգէ ինքեան. և զայն՝ առ որ նոյն առարկայն կարգեալ և ուղղեալ է յայլմէ ումեքէ։ Ընդ սովաւ իմա՛ և զբան միջոցութեան կամ գործի լինելոյ, թէ արդեօք առարկայ ճառին իցէ՞ ինքն գործիք կրաւորական 'ի ձեռս այլոց, որպ, դրամք 'ի ձեռին մարդոյ. կամ թէ ունիցի՞ սահմանեալ զայլ իմն գործի վասն իւր առ 'ի ձեռս բերելոյ զնպատակ ինչ։

§ 190. Պարագրութիւն (circumscriptio).

Պարագայք ընդհանրապէս բաժանին յիրականս և 'ի գործողականս. առ իրականս վերաբերին ամենայն մանր հանգամանք՝ որք զօրէն շրջապատ գծի բոլորակաձևոյ՝ յամենայն կողմանց պար և բոլ առեալ ոլորտանան և յանկապատեն զէակ ինչ իբրու զկենդրոն իւրեանց, զգածելով զնա պէսպէս որակութիւնք՝ քանակութիւնք կամ առնչութիւնք. ըստ այդմ եթէ առարկայ ճառին իցէ անձն կամ մարդ՝ պարագայք նորա համարին ցեղն, տոհմն, ազգն, լեզուն, հայրենիք, ծնողք, սեռն արական կամ իգական, հասակն, ծնունդ, սնունդ, վարժումն, վիճակ կենաց, կազմուած մարմնոյն, պաշտամունք, ներգործութիւնք, կրելութիւնք, գիտութիւնք, արհեստք, առաքինութիւնք, մոլութիւնք, ճոխութիւնք, ընտանիք, ձև, գոյն, ձայն, տեղի, ժամանակ, և այլ դոյնպիսիք։ Զպարագայս առ գործողութիւնս վերաբերեալս գիտեն արդէն ուսանելիք 'ի վերոգրելոյս. վասն որոյ փոյթ կալցին որոնել և յառաջ բերել զնոսա 'ի ճառի իւրեանց՝ ըստ որպիսութեան առարկայիցն. ընդ որս պարտին խառնել նա և զնախընթացս և զհետևորդս առարկային, զորս ցուցեալ եմք յառաջագոյն։ Զօրինակս յառաջբերութեան պարագայից բազում ուրեք է տեսանել առ նախնիս մեր՝ յամենայն գիրս, մանաւանդ 'ի շարականս և այլուր։

§ 191. Պատմութիւն (narratio, historia).

Պատմագրել կամ վիպասանել՝ է գաղափարել ներգործութիւն ճարտասանին, որոյ առարկայ են մարդկային ներգործութիւնք և կրելութիւնք, 'ի տեղւոջ և 'ի ժամանակի դիպեալք. ոչ որք և իցեն՝ աննշանք սովորականք և անօգուտք, այլ արժանայիշատակք, անցեալք կամ ներկայք. և որոյ նպատակ է իբրու 'ի հայելւոջ պատկերակերպել զորպիսութի՟ և զորքանութի՟ թէ գործոյն թէ գործողացն, և նոյնն իբրու փաստս հաստատել զբնաբանն իւր. այլ և հաղորդել ունկնդրաց զբազմաշահ ծանօթութի՟ս գիտնականս և բարոյականս: 'Ի կիր ածի պատմութի՟ն նախ՝ համառօտ հարևանցի իբր մասն, 'ի մէջի գլխաւոր ճառի՝ և զոյգ ընդ այլոց հանգամանաց բուն առարկային. ոպ՟ պատահէ յեկեղեցական և 'ի դատաստանական ճառս. երկրորդ՝ ընդարձակ իբր ինքնագլուխ ճառ առանձինն. և երրորդ՝ իբրու փաստ 'ի հաստատել զբնաբան ինչ. և եղանակ յօրինուածոյն մի և նոյն է յերեսին: Գլխաւոր կանոնք՝ որոց պատմաբան՝ ով և իցէ՝ ճշդիւ պարտի պատկառ կալ, համարին յետագայքդ:

1 Հանրական անտնօրինելի պարտաւորութի՟ է՝ զի անաչառ լինիցի վիպասանն, սիրող ճշմարտութե՟, առանց ակնառութե՟՝ կուսակցութե՟ և կողմնասիրութե՟. առանց երկսպաշտ մարդահաճութե՟ և կեղծաւորութե՟ խօսեսցի զամենայն ինչ. մի՛ շնթեսցէ և քծնեսցէ այսմ կամ այնմ կողմանն. մի՛ վասն հաւատակցութե՟ կամ այլով ինչ ակնածութ՟ արդարացուսցէ կամ դատապարտեսցէ զայս ոք կամ զայն. այլ զոր ինչ տեսեալ՝ լուեալ և ընթերցեալ իցէ՝ զայնս միայն յառաջ բերցէ անխարդախ հաւատարմութ՟. ոպ՟ զի գործն կամ անցքն ինքն զինքն ջատագովեսցէ կամ պարտաւորեսցէ, և ոչ թէ պատմագիրն. թէպէտ և ներեալ լինի նմա՝ 'ի կատարածի պատմութե՟ն յայտնել սակաւ բանիւք զկարծիս իւր զորպիսութենէ եղելոցն:

2 Մի՛ յաւելցէ 'ի քմաց իւրոց զոչ եղեալսն իբր զհաւաստի եղեալ՝ 'ի նպաստ իւր. մի՛ կրճատեսցէ կամ լռութ՟ զանց արասցէ զիրօք եղեալսն, յայս սակս միայն՝ զի հակառակ են կրօնի և կարծեաց իւրոց. մի՛ փոփոխեսցէ ոչ զինչութի՟ և ոչ զհանգամանս եղելոցն, 'ի սակս օգտակար կամ վնասակար լինելոյն այնց՝ իւրումն եկեղեցւոյ և դաւանութե՟. մի՛ կեղծեսցէ զսուտ վկայութի՟ս և

փաստս 'ի հաստատութիւն անհիմն բանից իւրոց · մի՛ գովեսցէ զիւրսն կամ նախատեսցէ զհակառակորդս · մի՛ ծածուկ մեքենայիւք գովասցի և որսասցի զընթերցողս 'ի կողմն կրօնի իւրոյ · մի՛ նենգաւոր դաւաճանութեամբ կուրացուսցէ զմիտս և զդատողութիւն նոցա, կամ շարժեսցէ զկիրս նոցա առ 'ի սիրել կամ ատել զայն ինչ, զոր ինքն սիրէ կամ ատէ ։

3 Հարկ է պատմագրի նախ մանրամասն ճանաչել և լիուլի ժառանգել զամենայն նիւթս պատմելիս, ապա զմասունսն ըստ պատշաճի ընդ իրեարս կապակցել, և կազմել զմի բոլոր · բայց այնպէս զի ամենայն անդամք կալցեն զիւրեանց վայելչագոյն տեղիսն ըստ բնական դրից բարեկազմութեան · և ապա մատչել 'ի գրութիւն կամ 'ի բանախօսութիւն ։

4 Յամենայն վայրի ցուցցէ զվկայս և զաղբերս՝ յորոց առնու զբանս իւր · Ճշդիւ նշանակեսցէ զսկիզբն, զառիթն, զգործիս, զմէջ, զկատարած, զարժէս, զազդեցութիւնս, զկարգ, և զընթացս գործոց և կրից · այլ և զտեղիս և զժամանակս, զյատկանիշս՝ զնպատակ և զվախճան գործողին և գործոյն, զկարևոր պարագայս նախընթացս՝ զուգընթացս և զհետևորդս, զներհականս և զառընչակիցս · բայց և այդպէս՝ մի՛ ընդմիջահատ կցկտուր յետսյառաջ խառնափնդորեսցէ զբանն, այլ շղթայշար օղ ընդ օղ հիւսեսցէ զամենայն ինչ · մի՛ թափառական զարտուղեսցի յաջ և յահեակ, այլ ուղիղ գծիւ անկուլինչ ձգեսցէ զթել պատմութեան ցվախճան ։

§ 192 · Տեսակք պատմելոյ զանազան են՝ ըստ զանազանութեան առարկայից, տեղեաց, ժամանակաց, և այլոց պարագայից · բայց գլխաւորքն են, 1 սովորականն, զոր հանապազ առանձինն 'ի կիր առնումք, կամ կենդանի ձայնիւ ընդ առաջիկայ անձանց, կամ նամակաւ ընդ բացակայից · 2 բարոյական, զոր քարոզիչք վարեն ծանուցանելով հանդիսականաց զանցս ինչ հաւատոյ կամ կրօնի՝ 'ի սուրբ գիրս պատմագրեալ կամ յեկեղեցական պատմութեան. 3 դատաստանական, երբ փաստաբանն կամ դատախազն պատմէ դատաւորին զորպէսն գործողութեան 'ի դատ ձգելոյ. 4 մահագրութիւն (necrologia) է պատմութիւն եղանակի և որպիսութեան մահուան երևելի անձանց, հանդերձ կարևոր հանգամանօք. 5 կենցաղագրութիւն (biographia) պատմութիւն բոլոր վարուց և ընթացից կենաց հռչակաւոր անձանց՝ զոյգ ընդ արժանայիշատակ պարագայից. 6 արձանագրութիւն, վերտառութիւն, յիշատակ երևելի դիպուածոց կամ անցից 'ի վէմս և յարձանս նշանակեալ. 7 տապանագրութիւն, համառօտ վարք ննջեցելոց 'ի տապանաքարի դրոշմեալ. 8 տարեգրութիւն, պատմութիւն գործոց անհատի ուրուք կամ հասարակութեան՝ ըստ ընթացից ամաց շարադասեալ. 9 եկեղեցական պատմութիւն, վէպ յընդհանուր կամ յազգային եկեղեցիս դիպեալ անցից և փոփոխութեանց. 10 քաղաքական պատմութիւն, յառաջբերութիւն յաջող կամ ձախող ներգործութեանց և կրելութեանց ազգի ուրուք կամ բոլոր թագաւորութեան. 11 բնապատմութիւն էակաց, գիտութեանց, արհեստից, և դոցին նմանեաց՝ ըստ առարկայից զանազանեալք. 12 նորապատում (gazette, nouvelle), հրապարակական ծանօթութիւն նոր դիպուածոյ ինչ, արժանաւոր գիտութեան հասարակաց, վասն որոյ տպագրութեամբ տարածեալ առ ամենեսեան. 13 աշխարհագրութիւն, վիճակագրութիւն (statistica), և այլ պէսպէս եղանակք կենցաղօգուտ պատմութեանց՝ նորանոր տարազու 'ի լոյս ածեալք յեւրոպական գիտնականաց. որոց կերպաւորութիւն կախեալ կայ 'ի հաճոյս իւրաքանչիւր մատենագրի՝ շատ թէ սակաւ վարժելոյ 'ի բանագրութիւնս: Բայց ճարտասանք առաւելապէս յառաջ բերեն զգործս և զկիրս մարդկան, իբրու զփաստ և ըզվկայ, առ 'ի յապացուցանել զճշմարտութիւն ինչ ընդ վիճիւք անկեալ. որ թէպէտ արտաքին փաստ է, սակայն յոյժ ազդու և բերկրական է առ ունկնդիրս. մանաւանդ առ ռամիկս:

Պատմագիրն մարթէ ունել ինքեան 'ի նպատակ, 1 զպարզապէս հրապարակումն եղելոյն առ ուսուցանելոյ միայն զունկնդիրս · 2 զյայտարարումն աստուածային կառավարութեան և զվարչութիւն նորա ՚ի տիեզերս, զիմաստութիւն նորա, զքաղցրութիւն, և զտնտեսութիւն ՚ի կարգի բնութեան, յիրս եկեղեցւոյ, կրօնի, թագաւորութեանց, քաղաքաց, ընտանեաց, և նոյին նմանեաց · 3 զբարոյական վարժութիւն ընթերցողաց ՚ի սուրբ և յառաքինի վարս, ՚ի խրախուսել զնոսա ՚ի բարեգործութիւնս, ՚ի յետս քաշել զնոսա ՚ի մոլութեանց, յարծարծել զքաղցր և զբարի զգածմունս, ՚ի գրգռել զկամս նոցա ՚ի գովանի յառաջադրութիւնս և յիրագործութիւնս, ՚ի մխիթարել ՚ի վիշտս, և զայլ դոյնպիսիս · 4 զհրահանգումն ընթերցողացն ՚ի նիւթս կենցաղավարութեան, քաղաքատեսչութեան, տնտեսութեան, արհեստագործութեան, ուսումնականութեան, և որոց ՚ի նոյնս կարգին ։

§ 193 · Անցագրութիւն, դիպուածաբանութիւն ·

՚Ի սմա յառաջ բերէ Ճարտասանն ոչ զներգործութիւն՝ որպէս ՚ի պատմութեան, այլ զկրելութիւնս բանականաց, եւս և զանցս կամ զդիպուածս ընդ անշունչ և անբան էակս անցեալս · որպէս ընդ քաղաքս, ընդ տէրութիւնս, ընդ գիտութիւնս, ընդ արհեստս, ընդ կրօնս, և ՚ի նմանս · որպիսիք գոն արդէն առ իմաստուն եւրոպացիս, որք ընդարձակ գրեցին զպէսպէս անցս ՚ի վերայ իմաստասիրութեան, տրամաբանութեան, կամ այլոյ գիտութեանց հասեալս, և սուրբ գիրք ևս յառաջ բերեն զանցս ընդ մարդիկ անցեալս (տե՛ս, ղուկաս, ԺԵ · 26 — 33 · ԺԶ · 1 — 9 ։ մատթ · Է · 19 — 29 ։ Ա պետրոս · Ա · 4 — 9 · Գ · 6 · ևն ։)

§ 194 · Գովաբանութիւն (laudactio) · պարու ·

Գովաբանել ցուցանէ հռչակել զփառս և զկատարելութիւնս բանականաց · յառաջ բերելով զպէսպէս ցեղս բարեմասնութեանց նոցա, զաստուածապաշտ կրօնն, զառաքինութիւնս ազգի ազգիս, զկամաւորս և զմտաւորս, զդերաղանցութիւնս մարմնոյն , և զայլ տեսակս բարեաց . հանդերձ իմաստալից խորհրդածութեամբ յօգուտ ունկնդրաց , առ 'ի նմանել նոցա՝ վարուց ներբողելոյն . ուրեք երբեք յառարկայ գովեստից առեալ լինին՝ բաց 'ի բանականաց՝ նաև անբան կենդանիք , տունկք , պտուղք , արհեստաշէն ձեռակերտք , ժամանակք , ևս և աննիւթ էակք և ամենայն բարիք՝ գովութեան արժանաւորք , ըստ իւրաքանչիւր համապատշաճ հանգամանաց ։ Նշանակ կիրառութեան ներբողենի կրկին է . մի՝ իբր մասն այլոց ճառից՝ յորս համառօտ և 'ի հարևանցի գովի առարկայն . որպէս առնէ Խորենացին բազում ուրեք 'ի պատմութեան . և միւս՝ իբր առանձին ինքնագլուխ ճառ . օրէնք կերպաւորութեան նոյն է յերկոսին՝ պահմամբ չափակցութեան տարածութեան և այլոց պարագայից ։

Գլխաւոր ցեղք գովասանութեան համարին յետագայքդ ։

1 Ներբողեան՝ ճշդիւ ասացեալ , է հռչակ երևելի բարելաւութեանց սրբոյ ուրուք , կամ առաքինւոյ , իմաստասիրի , իշխանի , ազգասիրի , երախտաւորի յեկեղեցի կամ յազգ և 'ի հայրենիս , կենդանւոյ կամ ննջեցելոյ . զոր առնու ճարտասանն 'ի կենդանագրել ըստ ազգի ազգի գերազանց յատկութեանց նորա , շարադասեալ զայնս վայելչութեամբ կամ 'ի քանի մի գլուխս , և կամ ըստ ընթացից ժամանակի կենաց ներբողելոյն . իսկ գլխաւոր հանգամանք՝ 'ի նիւթ ճառի մատուցանելիք՝ համարին , հայրենի երկիրն՝ եթէ ունիցի ինչ ազդութիւն 'ի ներբողեալն , նախահարք և ցեղապետք նորա , սնունդն և վարժութիւն , մտաւոր կատարելութիւնք նորա , գիտութիւնք և արհեստք , բարոյական առաքինութիւնք առ Աստուած , առ անձն իւր , առ ընկերս , առ եկեղեցին , առ ազգն և հայրենիս , բարիք մարմնոյ և բաղդի , պէսպէս մեծագործութիւնք , նշանակ և պատճառ մահուան նորա , յիշատակք թողեալք 'ի նմանէ յետ մահուանն , և այլ դոյն պիսի ձիրք և գերազանցութիւնք սեպհականք գովելոյն ։ Առ նախնիս մեր բազում են օրինակք այսպիսի ներբողենից .

մանաւանդ 'ի շարականս, առ Խորենացին, Նարեկացին, և առ այլս, զորս մարթին ընթեռնուլ համբակք։

2 Ներբող՝ առանձինն ներգործութեց և կրելութեց միայն բանականաց, որոց կարևոր հանգամանք են, **1** օրինաւորութի․ այն է՝ համաձայն լինել օրինաց Աստուծոյ՝ եկեղեցւոյ՝ և աշխարհի իշխանաց․ **2** իրաւացութի․ **3** օգտակարութի առ 'ի ներքս բերել զպէսպէս բարիս, և 'ի վանել զչարիս․ **4** տարածութի և սաստկութի օգտաւետութեն՝ ըստ ժամանակի և ըստ տեղւոյ․ **5** դժուարութին 'ի յաղթել խոչընդակաց և 'ի գլուխ հանել զսկսեալն․ **6** յատկութիք նոցա՝ որովք տարբերին յայլոց․ **7** պարագայք ներգործութեց՝ 'ի վերոյ 'ի թիւ արկեալք․ **8** պարագայք գործող կամ կրող անձին, որպէս եթէ արարեալ իցէ անպարտ գոլով, ոչ 'ի պաշտամանէ՝ այլ 'ի սիրոյ լոկոյ շարժեալ, կամ նախ առաջին յառաջ քան զայլս, միայնակ կամ իբր գլուխ և հեղինակ, 'ի տեղւոջ և 'ի ժամանակի ծանր հարկաւորութե, ևն։

Ընդ սոքօք իմացեալ լինի և ներբողն անբան կենդանեաց, անշունչ իրաց՝ բնականաց և արհեստականաց, տեղեաց և ժամանակաց․ որոց հանգամանք են զինչութի նոցա, պէսպէս որակութիք, համ, հոտ, գոյն, ձև, դիրք, օգուտ, ներգործութիք, քանակութի, ևն։

3 Ներբող նորածնելոյ, որոյ հանգամանք են գովեստ նախահարց և ծնողաց մանկանն ըստ վերոգրեալ կանոնացդ, ուրախակցութի ընդ ծնողս, շնորհաւորել նոցա զզաւակն, մաղթանք առ Աստուած վասն բարօրութե և յաջողութե ծնողաց և ծնելոյն․ և այլ մասնաւոր պարագայք ըստ տեղւոյն և ըստ ժամանակին։

4 Ներբող ամուսնական, 'ի հարսանիս իշխանաց, որոյ հանգամանք են՝ հանրական գովեստ ամուսնական ընկերութե, օգուտն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ՝ անտի ծագեալ, հարկ զաւակասերութե 'ի մշտնջենաւորել զազգ մարդկային, վիշտք և վնասք ամուրի կենաց յաշխարհականս, գովեստ նախահարց՝ ծնողաց՝ և նորապսակ ամուս նայելոյ, հուչակ հանդերձանաց և խրախուճ հարսանեաց, շնորհաւորութե և բարեմաղթութե հարսին, փեսային, ծնողաց և արիւնակցաց նոցին, և այլ պէսպէս պարագայք։

5 Ներբող դամբանական կամ արձանական, 'ի մահուան արժանաւոր անձանց. որոց հանգամանք են հանրական բանք զղինչուէ և զոլէսպէս հանգամանաց մահուան իբրու քուն և նինջ նկատելոյ առ քրիստոնեայս, առանձին զովեստ ննջեցելոյն ըստ վերոյիշեալ կանոնաց, յուսադրութե առ ընտանիսն վասն արժանանալոյ նմա աստուածայինն տեսութե, կարեկցութե և մխիթարութե առ մերձաւորս նորա ընդ զրկումն յառնէ այնպիսւոյ, յորդոր առ հանդիսականս յաղօթել առ Աստուած 'ի ներումն մարդկօրէն սխալանաց նորա, և եթէ երևելի ձրիւք ինչ պերճացեալ էր ննջեցեալն՝ խրախուսել ըզ հանդիսականս 'ի նմանութե այնր բարելաւութե, կսկիծ և ցաւ մեր ընդ զրկիլ վախճանելոյն յանմեղ բարեաց աստի կենաց՝ յընտանեաց՝ 'ի զաւակաց, զրկիլ մեր յայնպիսի բարեկամէ կամ 'ի բարերարէ, սփոփուն ընդ ազատիլ նորա 'ի դառնութեց աստի կենաց, յորոգայթից մեղաց. և այլ մասնաւոր պարագայք.

Զբարբառ. յիշատակեալ ճառիցդ և զզդացումն կրից՝ հարկ է յարմարել առաջադիր առարկային և նպատակի բանիցն. յուրախականս՝ զուարթ ցուցանելով զինքն և զխօսս. և 'ի տրտմականս՝ տխուր, որպէս խոհեմութին՝ տեղիք՝ և ժամանակք թելադրեն։

§ 195. Ուր պէտք լինին ճարտասանից ոչ թէ գովել, այլ Պարսաւել և դսրովել զհակս՝ զանձինս՝ ըզ բանս կամ զգործս նոցա, զնիւթ բանիցն ունին քաղել 'ի դիմադրեալ հանգամանացդ. այսինքն է 'ի չարութէ առարկային, 'ի մոլութեն, յանօրէնութէ, 'ի վնասուց, և յայլոց ներհականաց. վասն որոյ զանց առնեմք ընդ երկար խօսել զպարսաւանաց. զի դիւրին է յօրինել զայն ընդհակառակս շրջելով զվերոյիշեալ հանգամանս գովաբանութե։

§ 196 · Ապսպարել, և խափանել ·

Դովլին անուամբք իմանամք զայն եղանակ վերաբանութեան՝ զոր նախնիք կոչեցին՝ բազխոհական հանդէս․ այն է համոզութիւն կամ տարհամոզութիւն մտաց ունկնդրաց առ 'ի գործել կամ 'ի չգործել ինչ․ տարբերի սա 'ի պատմութենէ և 'ի գովութենէ յայսմ, զի սոքա յածին զանցեալ ներգործութիւնք, իսկ ապսպարել և խափանել զապագայ գործողութիւնք միայն․ որք են բուն առարկայ համոզաբանութեան․ զորմէ բազում ինչ աւանդեցաք ցայս վայր ։ Գլխաւոր հանգամանք պաշտամանց՝ վեց համարէին 'ի հնոց․ վայելչական, օգտակար, հարկաւոր, դիւրին, բերկրալի, և փառաւոր․ սակայն մարթ է յաւելուլ 'ի դոսա և զայլ բազումս, վերագոյն յիշատակեալս զջակայ և զներգործութեանց․ յորոյ գովելի հանգամանք նիւթ մատակարարեն ճարտասանին յապսպարել ունկնդրաց զպաշտօնն․ իսկ վատթար հանգամանք նպաստեն նմա 'ի խափանել զչար գործողութիւն յապայն գործադրելի ։

§ 197 · Ջատագովել և ամբաստանել ·

Որպէս նախընթացքդ՝ նոյնպէս և սոքա կրկնակի 'ի գործ ածին․ մի իբր մասն այլոյ ճառի, և յաւելուած 'ի բնաբանն․ յոր միտս կոչին վերաբանութիւն․ և միւս՝ առանձին և ինքնագլուխ ճառ, և յայնժամ անուանին տիրապէս ատենաբանութիւն․ որոյ է յատենի օրինաւոր դատաւորաց կամ ջատագովել և արդարացուցանել զբարի գործ ինչ և զգործողն․ կամ դատախազել և պատժապարտ ցուցանել զչար գործն և զգործողն․ զորմէ և ստորև ունիմք խօսել վերստին ։ Բուն հանգամանք այդպիսի գործոյ՝ են իրաւացութիւն և արդարութիւն, կամ անիրաւութիւն և անարդարութիւն․ ընդ որս լծորդին և օրինաւորութիւն, բարութիւն, և այլք․ որոց լիալիր ծանօթութիւն աւանդի յիրաւագիտութեան և յօրինագիտութեան մատեանս ։

§ 198 · Համայնագրութիւն ·

Սովին անուամբ կամեցաք նշանակել զայնպիսի յառաջբերութիւնս հանգամանաց՝ որք արտաքոյ միայն յիշատակեալ ցեղիցդ վերաբանութեանց, և զորս նախնիք ոչ յիշեցին բացորոշ ինչ կոչմամբ · որպիսի են յառաջբերութիւնք կամ բացատրութիւնք առարկայի, ենթակայի, սկզբան, միջոցի, կատարածի, վիճակի, առթի, պայմանի, արգելանաց, նպաստից, արժէից, արդեանց, վարձուց, կարգի, կանոնի, պարտաւորութեան, ազատութեան, նոյնութեան, այլազանութեան, համոյ, հոտոյ, ձևոյ, գունոյ, շարժման, չափոյ, կշռոյ, հաւաքման, նուագի, աստիճանի, համագոյութեան, յաջորդութեան, փոխազդեցութեան (reactio), նշանակողի, նշանակելոյ, և այլոց դոյնպիսեաց, որք ոչ ինչ պակաս քան զայլ գլխաւոր հանգամանս՝ մերթ սաստիկ և մերթ նուազ զգածեն զառարկայս ճառից · որով և առատ նիւթ մատակարարեն ճարտասանից 'ի կազմել զպէսպէս իմաստս · զորոց զօրինակս մարթին ուսանելիք գտանել մտադիր ընթերցանութեամբ յամենայն գիրս հռչակաւոր ճարտասանից · զի մեզ ընդերկար լինէր հաւաքել զդոսին աստանօր, և մի առ մի լուսաբանել · որում և ոչ իսկ կարօտին վերծանողք · զի ամենայն ուրեք առաջի աչաց կան յարացոյցք իրացդ ։

§ 199 · Փոխաբերութիւն (tropus) ·

'Ի կանուխ ժամանակաց սովորութեամբ ընկալեալ են մարդիկ, առաւել ևս ճարտասանք, 'ի խօսելն գիրաց՝ փոխանակ այս ինչ հանգամանաց նոյա՝ զայլ իմն յառաջ բերել, կամ զմի հանգամանս ընդ այլում փոխադրել · որոյ թէպէտ պէսպէս են առ նոսա ցեղք և եղանակք, սակայն մարթ է հաւաքել զայնս յերկուս սեռս · այն է՝ յառնչականս, և 'ի քանակականս · իբր զի կա՛մ զմի առնչակիցն ընդ միւսումն փոխեն (զոր նախնիք կոչեն փոխանունութիւն, metonymia), և կա՛մ զմի քա նակակիցն փոխանակ միւսոյն վարեն (խելամտութիւն, synecdoche)․ բայց որովհետեւ այդ խտրութիւն սակաւ օգուտ բերէ համբակաց, վասն որոյ զանց զնովին արարեալ, կարգեմք աստանօր միայն զգլխաւոր եղանակս փոխադրութեան ոմանց հանգամանաց․ որպիսի են,

1 զպատճառողն կամ զարարիչն դնել փոխանակ գործոյ նորա, զհեղինակն կամ զմատենագիրն՝ փոխանակ գրուածոց նորա․ որպէս „զհոգին մի՛ շիջուցանէք (այսինքն զշնորհս հոգւոյն սրբոյ)․․․ ունին զմովսէս և զմարգարէս, նոցա լուիցեն (այսինքն զգրուածս մովսէսի և մարգարէից)․․․ ընթեռնոյր զեսայի մարգարէ (զմատեանն եսայեայ)․․․ հաճոյ են աստուածոց բարեպաշտութիւն և մուզայն (բանաստեղծութիւնն) իմ (հորատիոս)։

2 զգործիս դնել փոխանակ արտադրելոցն 'ի նոցունց․ որպէս յասելն կիկերոնի„ խուսեսցուք յաչաց մարդկան՝ թէ ոչ կարեմք դիւրաւ խուսել 'ի լեզուաց նոյա„ աչք և լեզու՝ որք են գործիք տեսանելոյ և խօսելոյ, դնին փոխանակ ներգործութեանց իւրեանց․ սմին հանգոյն և 'ի սուրբ գիրս յոլով ուրեք անդամք մարդոյ, աչք, ականջք, լեզու, բերան, ձեռք, ոտք, եդեալ լինին փոխանակ գործողութեանց իւրեանց․ որպէս յասել տեառն, եթէ ակն քո կամ ձեռն քո գայթագղեցուցանէ զքեզ, այսինքն տեսութիւն կամ շօշափութիւն։

3 զպտուղն կամ զարտադրեալն դնել փոխանակ արարչական պատճառին․ որպէս„ քրտամբք երեսաց կերիցես զհաց քո (ուր քրտունքն դնին փոխանակ ծանր աշխատանաց կամ վշտաց)․․․ ոչ դադարեցի արտասուօք խրատել զմի մի իւրաքանչիւր (հայրական և հովուական սիրով, որ զարտասուս բղխէ)․․․ հնազանդեցուցանէր զամբարտաւան և զբիրտ ապստամբութիւն նոցա, (զընակիչս դունայ զպատճառս ապստամբութեան)։

4 զնիւթն դնել փոխանակ յօրինելոցն 'ի նմանէ․ որպէս„ հող էիր և 'ի հող դարձցիս․․․ բայց ես հող եմ և մոխիր (ստեղծեալ 'ի հողոյ)․․․ ոչ պարտիմք հա-

մարել, ոսկւոյ կամ արծաթոյ կամ քարի, որ 'ի ճարտարուէ և 'ի մտաց մարդկան քանդակեալ իցէ, զԱստուածականն լինել նմանող (արձանաց յօրինելոց յոսկւոյ յարծաթոյ կամ 'ի քարէ՝ զԱստուածութին լինել նմանող)․․․․ չնչին փայտի հաւատան մարդիկ զանձինս իւրեանց (ցք նաւու)․․․ որոց ոչ զօրեն թագաւորք յաղթել երկաթով, յաղթեն ոսկւով։

5 զպարունակողն կամ զտեղին դնել փոխանակ պարունակեալ իրին․ և ընդ հակառակն․ ոպ, ապականեցաւ երկիր (բնակողքն յերկրի) առաջի Աստուծոյ, և լցաւ երկիր անիրաւութք, և ետես տէր Աստուած զերկիր, և էր ապականեալ․․․ մեղայ յերկինս (յԱստուած 'ի բնակեալն յերկինս) և առաջի քո․․․․ բաժակն օրհնութ (ցք գինին 'ի բաժակի) զոր օրհնեմք, ո՞չ ապաքէն հաղորդութ է արեանն Քրիստոսի․․․ ողբամ զքեզ հայո՛ց աշխարհ (բնակեալքն 'ի հայաստան)․․․․ եկն փեսայն և պատրաստքն մտին ընդ նմա 'ի հարսանիսն ('ի տունն որ պարունակէր զհարսանիսն)․․․ մո՛ւտ յուրախութ տեառն քո ('ի տեղին պարունակող ուրախութեան)։

6 զնշանն դնել փոխանակ նշանակեալ իրին, կամ փոփոխ կարգաւ՝ զնշանակեալն փոխանակ նշանակողին․ ոպ, զաղեղունս փշրեաց, զզէնս խորտակեաց, և զասպարս այրեաց հրով․․․ վաճառեսցէ զձորձս իւր և գնեսցէ իւր սուսեր․․․ յակնարկելն Աստուծոյ հաստեցան արարածք ('ի հրամայելն՝ որոյ նշան է ակնարկութին)․․․․ բազումք ունչս առնելով (արհամարհանօք անտես առնել) բանիցս՝ զայս բարբառին, տեսանողք՝ տեղի տուր 'ի հրէաստան․․․ եթէ յանկայք աթոռոց և գաւազանաց իշխանութ՝ բռո՛ւնք ժողովրդոց՝ պատուեցէք զիմաստութ, ․․․ահաւասիկ տապար առ արմին ծառոց դնի։

7 զորակութին դնել փոխանակ ենթակայի նորա որակացելոյ, կամ որպէս տրամաբանք ասեն, զվերացեալն փոխանակ թանձրացելոյ․ որպէս, ել 'ի բարձունս, գերեաց զգերութ (զգերեալսն)․․․ ակնկալութ արարածոց

յայտնութ՟ որդւոյն Աստուծոյ սպասէ . . . մանկունք վաղվաղակի վախճանեալ (դատապարտէ) զբազմամեայ ծերունս անիրաւս (մանուկ վաղամեռիկ) ։

8 զիրս կամ զգործս գտնել փոխանակ ժամանակին; կամ զժամանակն փոխանակ իրաց . ոպ՟, հայր ապրեցո զիս 'ի ժամանակէ աստի յայսմանէ, այլ վասն այնորիկ եկի ես 'ի ժամս յայս . . . . գնեցէք զժամանակս, զի աւուրքս չարութ՟ են (ծածկելի աւուրցս չար են) . . . . ոպ՟ ցօղ ամարայնի և անձրև 'ի հունձս ('ի ժամանակի հնձոց) ։

9 զմասն գտնել փոխանակ բոլորին, կամ զբոլորն փոխանակ մասին . ոպ՟, բարձին զտէրն իմ 'ի գերեզմանէ աստի (զմարմինն տեառն) . . . բանն մարմին (մդ՟) եղև . . . կրետացիք հանապազստուտք, չարաճճիք, դատարկապորտք . . . յամենայն բերան գոհութ՟ ստացար քեզ օրհնաբանութ՟ . . . որքան գլուխք՝ այնքան կարծիք ։

10 զսեռն գտնել փոխանակ ցեղին, կամ զցեղն փոխանակ սեռին . ոպ՟, տեսցէ ամենայն մարմին (մարդիկ) զփրկութ՟ Աստուծոյ մերոյ . . . քարոզեցէք զաւետարանն ամենայն արարածոց (մարդկան) . . . մի արբենայք գինւով՝ յորում զեղխութ՟ է (ուր գինին՝ որ է տեսակ ինչ, դնի փոխանակ սեռի արբեցուցիչ ըմպելեաց) ։

11 զցեղն գտնել փոխանակ անհատին . կամ զսորին հակառակն, զանհատն փոխանակ տեսակին . այսու ոճով բառն՝ առաքեալ, վարի փոխանակ սրբոյն պաւղոսի, իմաստունն՝ փոխանակ սողոմոնի, լուսաւորիչն փոխանակ սրբոյն գրիգորի . բանաստեղծն՝ փոխանակ հոմերոսի, ճարտասանն՝ փոխանակ կիկերոնի . քերթողահայրն՝ փոխանակ մովսէսի խորենացւոյ . մարգարէն փոխանակ եսայեայ, եւն՟ . ներհակ այդմ անհատք 'ի տեղի տեսակի վարին յաճախ,, ննջէ երբեմն ևս և քաջն հոմերոս (մարթին սխալել նա և գերազանց բանաստեղծք) . . . ոչ ամենեքին զօրեն լինել հոմերոս կամ պինդարոս . . . . դիր 'ի մտի՝ թէ յոլով են անդ հեկտորք (ախոյեանք) . . . կրիւսոսք (հարուստք) ժամանակիս անփոյթ են զաղքատաց . . . . սակաւ են առ մեզ մեկենասք ։ Այսօրինակ իմաստք և 'ի սուրբ գիրս գտանին ․ ոպ՟ , ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում , և իսրայէլ (եբրայեցիք) յիս ինչ ոչ նայեցաւ . . . դու ես հայր մեր ․ զի աբրահամ՝ ոչ գիտաց զմեզ , և իսրայէլ ոչ ծանեաւ զմեզ ․

12 զբացորոշ թիւն վարել փոխանակ անորոշ բազմուե՟ն ․ ոպ՟ ,, երիցս թշուառական ․ երեքերանեան . . . . քառասուն տարւոյ պատարագողն դեռ ևս տկարանայ գիտել ․ թէ ո՞ր 'ի պատարագի սարկաւագին բան , և ո՞ր ժողովրդեան (Ղամբրոն) . . . որչափ հնարիս ծածկել զյանցանս եղբօրն առաջի տասն մարդոյ , կամ հարիւրոյ , կամ թէ աւելի՝ հազարաց (Որոգէս) ։

13 զնախընթացս դնել փոխանակ հետևորդաց, կամ զհետևորդս փոխանակ նախընթացից ․ ըստ այսմ բազմիլ դնի փոխանակ ճաշ ուտելոյ (Եսյ · Է · **15** · **16**) ․ յոտն կալ կամ յառնել ումեք փոխանակ պատուելոյ՝ ողջունելոյ (յոբ · ԺԲ · **8** · **9** · ղուկ · ԺԲ · **32**) ․ ալիք դնին փոխանակ ծերուե՟ն, իբր նախընթաց և նշան նորա (ծնն · Է · **9** · 4 · Գ թագ · Է · **6** · **9**) ։

14 զսեփհական որակուե՟ս իրաց ինչ՝ փոխադրել յայլ առարկայ ․ ոպ՟ ,, որքան 'ի սեւ և 'ի մուր կեանքս պանդխտիմք . . . ընդէ՞ր՝ զանձնդ 'ի սուրբ արջնաթոյր տուողդ (սևազգեստ կրօնաւորդ) ոչ յագեցուցանես զակն քո 'ի մեծութէ՟ (Ղամբրոն) . . . գիշերադէմ (սևադէմ) գոլով ես՝ 'ի բնաւից պարսաւիմ (Մխիթար Գօշ) ։

15 զնմանն դնել փոխանակ նմանելոյն , զոր նշանակեցաք յայլաբանուե՟ն ։

§ **200** · Ընդ սոյն պարունակի և համեստաբանութիւնն (Euphemismus) · յորում փոխանակ անախորժ՝ անհամեստ՝ ախրական և ծանրալուր գաղափարաց և բառից , եդեալ լինին ախորժականք՝ պարկեշտք ուրախականք և հեշտալիք · ոպ՟ 'ի սուրբ գիրս փոխանակ անիծանելոյ դնի օրհնել (յոբ · Ա · **10** · Բ · **9**) · փոխանակ մահուան դնի քուն կամ ննջել · և առաքեալն զմարմնական մերձաւորութիւն կոչէ՝ պէտք բնական կամ անբնական, և այլուր զկինն կամ զարգանդ նորա կոչէ աման (Ա Թեսաղ. Դ)։

§ 201. Ընդարձակել (amplificare). անօարէլ.

Ընդարձակել (որ և ընդլայնել, աճեցուցանել, տարածանել, մեծացուցանել), յայտ առնէ՝ կուտակումն յառաջ բերել զպէսպէս ցեղս միոյ ուրուք հանգամանաց. կամ զբազում հանգամանս միոյ էակի. զի որովհետև բազումք 'ի հանգամանաց սեռ են, և ընդ իւրեամբք պարունակեն զայլևայլ ցեղս, ճարտասանք բազում ուրեք կարևոր համարին 'ի հանդէս հանել զայնս՝ առ մեծայարգ ընծայելոյ զառարկայն, կամ յայլ ինչ պէտս. գլխաւոր եղանակք սորա համարին այնչափ՝ որչափ են ընդհանրական հանգամանք. բայց յաճախ գործադրեալքն՝ են յետագայքդ։

1 Այլևայլ ոճով բացատրել զինչութիւն առարկային, կամ կուտել զպէսպէս սահմանս նորին. որպէս առնէ Նարեկացին (Խէ) 'ի սահմանելն զինչութիւն զղջման սրտի՝ մեղայ բառիւ բացատրելոյ. յասելն ,, սոյն սա պատուելի աւանդ, անմոռաց պատուէր, հայրենեաց տուրք, նախահարցն օրէն, ևն. զորս տես առ նմա. Նոյնն 'ի գովելն զսուրբ կոյսն՝ սահմանաբար անուանէ զնա, վեհին պատկեր՝ կերպիւ կշռորդեալ, թերթև պարզութիւն հիւթիւ բաղկացեալ, ևն. զորս նոյնպէս կարդա։

2 Յառաջ բերել զյոլով մասունս բոլորոյ իրիք. զորոյ զպէսպէս եղանակս՝ ցուցեալ եմք 'ի վերոյ։

3 Նշանակել զպէսպէս արարչական պատճառս՝ միոյ ուրուք գործոյ. ուր ծանիր՝ զի թէպէտ միոյ արարածոյ՝ սովորաբար մի լինի և արարիչ, սակայն յոլով ուրեք ընդ բուն պատճառին զուգընթանան և այլք բազումք իբր երկրորդական պատճառք կամ գործակիցք և ընկերք. ըստ այսմ Նարեկացին՝ 'ի պատճառ կռապաշտութեան սողոմոնի յառաջ բերէ զայլևայլ անձինս և

գիրս , յասելն (Խը) ,, տարաւ զէութիւն բարեբաստութեանն՝ որ զնախնիսն որսաց 'ի կորուստ , յաղթեաց մեծութեանն՝ իմաստիցն առաւելութեամբ , գերեաց զառոյգութիւն , յիմարեցոյց փափկութիւն , վանեաց արծաթն ծառայեցուցիչ , յոգի դատեցաւ զայրն տօնելի՝ հին զէնն կործանողին , մեռոյց մեղկութիւն , թմրեցոյց ծուլութիւն , արբեցոյց շուայտութիւն :

4 Յառաջ բերել զբազում և զպէսպէս ներգործութիւնս կամ զկրելութիւնս էակի ուրուք . որպէս առնէ երանելին Եղիշէ՝ յասելն վասն ուրացողին Վասակայ ,, քան զի մոռացօնք եղեն նմա՝ զալուստ որդւոյն Աստուծոյ , և ոչ յիշեաց զբարութիւն սուրբ աւետարանին , ևն (որս ընթերցիր , յեր , 158—163) . և առաքեալն յիշատակեալ զզանազան վիշտս մարգարէիցն՝ ասէ ,, կէսք կոշկոճեցան . . . և կէսք զտանջանաց և զգանից զփորձ առին , զկապանաց և զբանտից , քարկոծեցան , սղոցեցան , փորձեցան , սպանմամբ սրոյ մեռան , շրջեցան լաշկամաշկօք և մորթովք այծենեօք , կարօտեալք , նեղեալք , չարչարեալք (Եբր . ԺԱ) . կա՛րդա ևս առ Եղիշէի զգործս կանանց աքսորեալ նախարարացն Հայոց (յեր . 355—362) . յորում փայլէ սքանչելի ընդարձակութիւն ճարտասան մտաց:

5 Առաջի առնել զբազմութիւն նմանութեանց և օրինակաց . որպէս յայտուսիկ ,, զի ո՞ր գազան է այնպէս ահարկու՝ իբրև զբարկացողն , կամ ո՞ր հուր գիտէ այնպէս այրել զխռիւ՝ իբրև նա զընկերս , կամ ո՞ր սուր երկսայրի այնպէս հատանէ՝ իբրև նա բանիւք բերանոյն . կամ ո՞ր արագաթև արծուի այնպէս հասանէ որսոյ և պատառէ՝ որպէս նա վնասէ մարդոյ (Ոսկեբ.) . . . . տօնելի եղև մանաւանդ՝ առ իմոց պարտուցս առաւելութեան , պատուեցաւ և փարինեցին՝ առ դժնէիս ամբարշտութեան , գովեցաւ անառակ որդին՝ առ անդարձիս ուխտազանցութեան , յիշատակեցաւ կեղծաւորութիւն որդւոյն ամասեայ՝ առ անշնորհութեան ապախտաւորիս . օրհնաբանեալ եղև աւազակն՝ որ դատախազն է անհաւատից , պատուեցաւ և կինն պոռնիկ՝ սկզբնամայրն ապաշխարողաց (Նարէկ . Է) :

6 Գումարել զհամանմանն նախընթացս և զհետևորդս․ ոպ՟ 'ի սուրբն,, մի՛ լիցի ինձ երկնել՝ և ոչ ծնանել․ ողբալ և ոչ արտասուել․ խորհել և ոչ հառաչել․ ամպել և ոչ անձրևել․ ընթանալ և ոչ հասանել․ ինձ ձայնել՝ և քեզ ոչ լսել․ պաղատիլ և անտես մնալ․ կողկողել և ոչ ողորմել․ աղաչել և ոչ ինչ օգտել․ գոչել և ոչ ճենճերել․ զքեզ տեսանել և դատարկ ելանել (Նարէկ․ Է)։

7 Յաճախաբան նկարագրել զպէսպէս որակութիս առարկային՝ այլ և այլ ածական անուամբք․ բայց ոպ՟ 'ի քերականութ՟ ասացաք, մի՛ ամենևին համանշանիւք․ տե՛ս զօրինակն և զկարգս անդ յեր․ 209 = 213։

8 'Ի բացատրելն զհանգամանս կամ զորակութի՟ էակին՝ իբրու ընդ աստիճանս սանդխոց 'ի ստորէ 'ի բարձունս վերելս առնել, կամ հետզհետէ սաստկացուցանել զիմաստ բանին (gradatio, climax, anabasis)․ ոպ՟ տեսանի յօրինակդ,, ոչ միայն առաքեալք, այլ և սպասաւորք, այլ և ականատեսք բանին, և ոչ միայն ականատեսք՝ այլ և սիրելիք, և բարեկամք, և որդիք, և ժառանգք, և ժառանգակիցք (Ոսկեբ)․․․․ յանցանք են՝ յաղթահարել զայր հռոմայեցի․ եղեռն է՝ գան հարկանել․ գրե՛թ հայրասպանութի՟ է՝ մեռուցանել․ զի՞նչ ապա ասացից՝ զ'ի խաչ հանելոյ․ չէ և չէ իսկ հնար՝ անուն արժանաւոր դնել այնպիսի անօրէնութ՟․․․․ եթէ այսմ համբերութ՟ տանիք՝ ո՛ դատաւորք, յայսմհետէ ոչ միայն 'ի ծածուկ, այլ և աստ 'ի հրապարակիս, այլ և առաջի ատենիս, նա և առ ոտիւք իսկ ձերովք գործեսցին մարդասպանութիւնք․․․․ ստել ոչ է արժան մանկանց, ևս առաւել ոչ՝ արանց և ալևորաց, բայց ամենևին իսկ ոչ՝ թագաւորաց․․․․ ապախտ արար նա զերդմնակուռ հաւատարմութի՟ իւր, ապախտ արար 'ի նմին իսկ աւուր՝ յորում երդուաւ, (կարդա, ևս, Ա յոհ․ Ա․ 1․ Ա կորն․ Ա․ 30․ ևն)․ տե՛ս ևս § 186։

9 'Ի մէջ բերել զպէսպէս պարագայս գործողութեց

և կրելութե՟ց , զտեղիս և զժամանակս նոցա , և զայլևայլ եղանակս . այլովք հանդերձ . յորս 'ի հաւաստի յօրինակ ընթերցցին համբակք զպատմութիւն տառապանաց հրէից՝ նկարեալ յերրորդ գիրս մակաբայ . գլ . դ . ե . զ ։

10 Ոչ միայն բաղդատել զառարկայն ընդ այլում , որ այլուր ասացեալ է , այլ և կուտակել զծայրս բաղդատութե՟ . որպէս 'ի սմին ,, գերազանցեալ պատիւ նոցա (սրբոց առաքելոց) քան զբնաւից արարածոց . քան զի պայծառ են քան զարեգակն . լուսաւոր են քան զաստեղս . բարձր են քան զերկինս . հաստակառոյց են քան զերկիր . լայնատարած են քան զծովս . առատագոյն են քան զգետս . անուշահոտ են քան զխունկս . գեղեցիկ են քան զծաղիկս . անմեղ են քան զգառինս (ոսկեբ.) ։

11 Մեծացուցանել և բարձրացուցանել զչափ և ըզքանակութի՟ էակին՝ առաւել քան որ են արդեամբք . խորհիլ և խօսել չափազանցութի՟ (hyperbole) . որում օրինակ լիցին այս բանք ,, եկայք շինեսցուք մեզ քաղաք և աշտարակ , որոյ լինիցի գլուխն մինչև յերկինս (ծննդ . ժա՟) . . . . օն և օն արասցեն ինձ դիքն , եթէ բաւիցէ հող սամարիոյ ափւովքն հանդերձ՝ ամենայն զօրականի հետևակայն իմոյ (գ . թգ՟ . ի) . . . . ահա իբրև ամպ ելցէ և իբրև մրրիկ կառք նորա . արագագոյն քան զարծուիս երիվարք նորա (երեմ . դ) . . . . ոչ ինչ եթող չարիս՝ զոր ոչ գործեաց 'ի կեանս իւր . և ոչ միոյ 'ի մեծամեծ չարեացն՝ որ ոչ անցին ընդ նա 'ի մահուան իւրում . . . դաւիթ 'ի մանկութե՟ ժամանակին՝ քարիւ կործանեաց զմեծ բլուրն մսեղէն (եղիշէ) . . . . բազում անգամ է տեսանել զգազանս վայրենիս՝ զարջ զինձ զգայլ զառիւծ , հանդարտեալս դարմանելով և մարդասէրս , իսկ զբարկացողն և ոչ երբէք . բազում անգամ և ըզծով տեսանեմք հանդարտեալ յալեաց և ցածուցեալ 'ի վայրենութե՟ն , իսկ զբարկացողն և ոչ բնաւ . հանապազ 'ի դառնութե՟ կայ , միշտ 'ի վայրենութե՟ , յար 'ի տմարդութե՟ , համակ յալեկոծութե՟ (ոսկեբ.) ։

§ 202. Ծանի՛ր աստանօր՝ զի ուրեք երբեք հարկ լինի ճարտասանից՝ զհանգամանս էակաց ոչ թէ աճեցուցանել, այլ նուազեցուցանել, թեթևացուցանել և անօսրացուցանել (exstenuatio, tapinosis, mejosis), և յայնժամ՝ զվերոյիշեալ եղանակդ շրջել պարտ է 'ի ներհական ոճ, ըստ իւրաքանչիւր պատշաճի յարմարելով զհակառակն ընդարձակութեան, մանաւանդ 'ի բարձանց 'ի ստոր իջանելով իբրու ընդ աստիճանս ինչ. կամ զյոռութիւն իւրին սաստկացուցանելով. որով և անուղղակի սպառի լաւութիւն նորին, և կամ այլով պէսպէս օրինակաւ ըստ խոհականութեան, առ որ կարդա՛ զսակաւ օրինակս. տե՛ս Թգր. իդ. 15. գործ. ե. 36։

§ 203. Ստեղծաբանութիւն (fictio).

Ստեղծանել (հնարել, կեղծել) է առանձինն իմն զօրութիւն մտաց՝ հանճարոյ և երևակայութեան մարդկան, ըստ որոյ ճարտասանք՝ մանաւանդ բանաստեղծք՝ 'ի կարևոր ժամու ոչ շատացեալք աստուածաստեղծ և արհեստակերտ էակօք՝ յոչէից գոյացուցանեն կամ զնոր էակ ինչ, կամ զնոր հանգամանս էակաց, զներգործութիւնս, զորակութիւնս, զքանակութիւնս, ևն. զորս և եդեալ իբր զգոյաւոր առարկայս՝ կազմեն զպէսպէս խորհրդածութիւնս, առ հեշտեաւ 'ի ձեռս բերելոյ զնպատակ ինչ բանի։ Զայլ կարևոր ծանօթութիւնս և զյատկութիւնս այսր բանաստեղծ զօրութեան ծննդական մտաց՝ ուսուցանեն հոգեբանք, առ որս դիմեն՝ որք կարօտին. իսկ մեզ անկանի յառաջ բերել աստանօր զգլխաւոր եղանակս կազմութեան նորին, զյաճախեալս առ ճարտասանս. որք համարին յետագայքդ։

1 Կեղծել զանձն կամ զմարդ՝ բնաւ անգոյ, և ընծայել նմա խորհուրդս, խօսս, ներգործութիւնս, կրելութիւնս, բաղձանս, կիրս, և զայլ հանգամանս պատշաճաւորս, նոյն և քաջայարմարս նպատակի բանաճառին. այս եղանակ կարի յաճախեալ էր առ հին արևելեան ու-

նուցիչ, ըստ որոյ և փրկիչն մեր վարէր երբեմն 'ի քարոզութեան իւրում. յորոց զոմանս յիշատակեն աւետարանիչք ընդ անուամբ առակաց. որպէս այնք, այր ոմն էր մեծատուն՝ որոյ էր տնտես, և եղև զնմանէ ամբաստանութիւն.... առն միոջ էին երկու որդիք, և ասէ կրտսերն 'ի նոցանէ ցհայրն.... այրք երկու ելին 'ի տաճարն կալ յաղօթս. և այլ նոյնպիսիք։

2 Կեղծել կամ ստեղծանել խորհուրդս՝ խօսս՝ գործս և կիրս, և ընծայել անձանց կանխաւ ննջեցելոց. որք թէպէտ ոչ ասացեալ և ոչ արարեալ են զայնս, բայց մարթ էր ասել և առնել նոցա յայնպիսում տեղւոջ և 'ի ժամանակի. որպէս ագաթանգեղոս ստեղծանէ զաղօթս և դնէ 'ի բերան հռիփսիմեանց 'ի հռոմ աղօթողաց (յէջ. 112). Հեղինակն պիտոյից գրոց՝ ընծայէ զինքնաստեղծ բանս՝ այլ և այլ անձանց, ընդ բնաբանիւքս՝ զինչպիսի բանս ասէր ադամ ելանելով 'ի դրախտէն, զինչպիսի բանս ասաց յովսէփ վաճառեալ յեղբարցն. խորենացին 'ի ներբողն հռիփսիմեայ տայ նմա խօսել ընդ այլ և այլ անձինս և իրս. լամբրոնացին 'ի ճառն համբարձման առնէ խօսել աստուածամօրն ընդ Յիսուսի. զնոյնն առնեն և այլ ճարտասանք; որք զեղանակս զայս կոչեն՝ ձև Դիմառնութիւն կամ Բարառնութիւն. իսկ պուէտք՝ որք անուանեն զսա դիւցազնական բանաստեղծութիւն, առաւել յանդուգն գոլով քան զճարտասանս՝ ոչ միայն խօսս, այլ և գործս և կիրս ընծայեն անձանց, որպէս բաց 'ի բիւրաւորաց անտի՝ առնէ միլտոն 'ի դրախտին կորուսելոյ։ Ընդ սմին անկանի և անուանեալն՝ Մարդաբանութիւն. ըստ որոյ հեղինակք սուրբ գրոց ընծայեն Աստուծոյ խօսս՝ կիրս՝ նա և անդամս մարդկայինս. որպէս զոր ասէ. բերան 'ի բերան խօսեցայց ընդ մովսէսի. եղև բարկութիւն սրտմտութեան տեառն 'ի վերայ նորա. զղջացաւ Աստուած զի արար զմարդն, և մտախոհ եղև 'ի սրտի իւրում և ասէ. աչք տեառն 'ի վերայ արդարոց, ականջք նորա 'ի վերայ աղօթից նո-

ցա․ երեսք տեառն 'ի վերայ չարագործաց․ և այլ այդպիսիք յոլովք։

3 Ստեղծանել և ընծայել անբան՝ կենդանեաց՝ ըզբանս՝ զբարս և զգործս մարդկայինս․ զոր առասպել կոչեն․ զորպիսիս գրեաց առ մեզ մխիթար գօշ 190 թուով, որք տպագրեալ են 'ի վենետիկ յամին 1790․ ևս և մեծն վարդան՝ 144 թուով․ որոյ մատեանն աղուէսագիրք անուանեալ՝ բազում անգամ տպեալ է յայլևայլ տեղիս․ առ լատինս գրեցին եզոպոս, փետրոս, և այլք բազումք։

4 Անշունչ և անբան իրաց կամ ծառոց և տնկոց ընծայել զմարդկային խօսս, կամ անձնաւորել և խօսեցուցանել զնոսա․ ո՞չ այնք՝ որ գրին յաստուածաշունչն ,, գնալով գնացին ծառք օծանել իւրեանց թագաւոր, և ասեն ցձիթենին, թագաւորեա՛ 'ի վերայ մեր․ ևն (դատաւոր․ Թ․ 8—16)․․․ անդունդք ասացին թէ չէ առ իս, և ծով ասաց թէ չէ ընդ ինև․ կորուստ և մահ ասացին՝ լուաք զփառաւորութ̃ նորա (յոբ․ իը)․․․․ զիա՞րդ զատաւ նստաւ քաղաքն բազմաժողով, լալով ելաց 'ի գիշերի, և արտասուք իւր 'ի վերայ ծնօտից իւրոց, սուգ առին ճանապարհք սիոնի, յիշեաց երուսաղէմ զօր տառապանաց և զօր անջատման իւրոյ․ մեղս մեղաւ երուսաղէմ (ողբ․ ա)․ այսպիսի է երկար ողբն այն՝ զոր շնորհալին ընծայէ եդեսիոյ քաղաքին՝ պէսպէս խօսակցութ̃ս և խորհրդածութ̃ս ընծայելով նմա։ Սորա առաջին աստիճան է զօրակութ̃ս կամ զածական անուանս՝ բանականաց և այլոց կենդանեաց սեպհականս՝ ընծայել անշնչոց և անբանից, ո՞չ ,, կատաղի հողմ կամ մրրիկ, վայրենի ալիք, ծարաւի երկիր, ծիծաղադէմ դաշտ, անողորմ բարկութ̃, ամուլ անդաստան, սուրբ անկողինք, առ կաշառս լռութ̃ արդարութ̃, ծեր ուրբաթ, և դոյնպիսիք։ Այս ձև կեղծման 'ի նախնեաց կոչի դիմառնութ̃ (prosopopoeia)․ այն է իմաստ կեղծեալ 'ի դիմաց այլոց։

5 Մտաւոր և աննիւթ էակաց, քանակութե՟ց և ներգործութե՟ց՝ վերագրել զբանս զգործս և զկիրս մարդկայինս. ոպ՟ 'ի սմին,, սէր ոչ նախանձի, ոչ գրգռի, ոչ խնդրէ զիւրն, ևն՟ (Ա՟ Կորնթ. ԺԳ՟):

6 Կեղծել էակս՝ դիպուածս՝ պատահմունս՝ նմանութիւնս օրինակս՝ գործս և կիրս, համաձայնս առարկայի ճառին կամ նպատակի նորա. ոպ՟ են յետադայքդ,, զոր օրինակ եթէ փախիցէ մարդ յերեսաց առիւծու, և պատահեսցէ նմա արջ, և փախնուցու 'ի տուն, և յեցուսցէ զձեռս իւր յորմ՟, և հարկանիցէ զնա օձ, ո՞չ ապաքէն խաւար է օր տեառն և ոչ լոյս (Ամովս. Ե՟).... զոր (Յ՟ զաղօթս) պարտ է համարել որպէս թէ լուսաւոր լար ինչ՝ յերկնից 'ի սորին վայրս երկրի կախեալ. և մեր բուռն հարեալ զնմանէ և ձեռս ձեռամբ փոփոխեալ, կարծիս տամք 'ի սկզբանն՝ որպէս թէ զլարն 'ի մեզ քարշեալ ածեմք. իսկ նա քան զի յերկինս արմատացեալ է՝ ոչ թէ 'ի սորիւ բերի, այլ պնդագոյն փոփոխմամբն և բուռն հարկանելովն՝ զմեզ յերկին 'ի ճաճանչեղ վայրս երկնից վերածէ. այսպէս է և գիտութիւն Աստուծոյ՝ հաստատեալ աստուածաշունչ գրովք (Լամբրոն.).... զոր օրինակ ոք 'ի բարձրագունի կալով տեղւոջ, կամ 'ի վերայ վիմի յամենայն կողմանց սեպացելոյ, և 'ի ներքոյ խոր անդունդս անհնարինս և պակուցանողս. և ինքն ոտին կռուան ոչ ունիցի. այլ 'ի վերուստ նայիցի 'ի խորս՝ նշմարել տեսանել մարգարիտս գեղեցիկս կամ ականս պատուականս. ոչ միայն ոչ տեսանիցէ ինչ, այլ և առ երկիւղի անկանելոյն զարհուրեալ թմբրեսցի. նմանապէս և իմս կրեցին միտք (Որոգէս):

7 Կեղծել՝ որպէս թէ ներկայ իցէ անձն ոք բացակայ և ննջեցեալ. առ որ իբրու 'ի կենդանի յառաջակայ ուղղէ ճարտասանն զբանս իւր, հարցանէ զնա, խօսակցի ընդ նմա, խորհրդակցի, 'ի վկայ կոչէ, աղաչէ յորդորէ, սաստէ, ևն՟. ('ի նախնեաց ձև բացադարձութ

անուանել, Apostrophe)· որպէս խորենացին յողբալն զաշխարհս Հայոց՝ դառնայ առ երեմիա մարգարէ, և աղաչէ զնա՝ ասելով ,, զարթի՛ր զարթի՛ր Երեմիա, զարթի՛ր և ողբա՛ հանդերձ մարգարէանալով՝ զոր ինչ թշուառացաք և զոր ինչ թշուառանալոց եմք, ևն · Նոյնպէս և Լամբրոնացին 'ի Ճառելն զկարգաց եկեղեցւոյ՝ դարձուցանէ զբան իւր առ առաքեալն պաւղոս, յասելն ,, իսկ այսօր՝ պաւղոս, ոչ մի հաց, որպէս դու ուսուցեր՝ աստուածընկալ հոգի, այլ բազումս · · · · ողբա՛ դու աղաչեմ զվիմս թշուառու͞թե · · · · արդ լա՛ց զմեզ՝ որպէս երբեմն զգաղատացիս · · · · վշտակցեա՛ մեզ քաղցր արտասուօքդ, ևն · Նոյնն 'ի Ճառն համբարձմանն Քրիստոսի՝ դառնայ խօսակցել ընդ սատանայի, ասելով ,, ո՛ւր ես անզեղջդ 'ի չորիս բանսարկու, ո՛ւր դու զրպարտի՛չ դատախազ, ե՛կ այժմ, կա՛ց մեզ առընթեր, տե՛ս և ողբա՛ յանձն քո, ևն · ընթերցի՛ր և զայլ օրինակս 'ի սուրբ գիրս, սղմս · ի̄ · 8 — 12 ։ ողբոց · բ̄ · 11 — 17 ։ Ըստ այսմ սարգիս մեկնիչ յաւարտ մեկնու͞թե թղթոյն պետրոսի՝ աղաչէ զնա իբրու զներկայ և կենդանի ,, աղաչեմ զքեզ՝ ո՛վ սուրբդ Աստուծոյ՝ արտասուալից պաղատանօք, մի՛ անտես առներ զհեծու͞թիս իմ, մի՛ մոռանար զերկս վաստակոց իմոց, հասո՛ ինձ տոկոսեօք · · · Հայեա՛ց յիս զթածաբար, անտե՛ս արա զտգիտու͞թիս իմ ։

8 Կեղծել և 'ի մէջ բերել զինքնահնար խօսս իբրու յայլմէ ումեքէ ճշմարտիւ ասացեալս նոյնպիսի բանիւք, այն է խօսեցուցանել զանձինս կամ զիրս անդէմս (sermocinatio)· ո͞պ մարգարէն մովսէս յաղօթելն առ Աստուած՝ հնարէ և յառաջ բերէ բանս իբրու 'ի փարաւոնէ ասացեալս ,, ա՛ջ քո տէր՝ փառաւորեալ է զօրու͞թ իւրով, աջ քո տէր խորտակեաց զթշնամիս, հողմով սրտմտու͞թ քով պատառեցան ջուրք, ասաց թշնամին՝ հալածեցից և հասից, բաժանեցից զաւարն, և լցուցից 'ի նոյանէ զանձն իմ, սատակեցից սրով իմով, տիրեսցէ նոյա ձեռն իմ · · · առաքեցեր զհողմն քո և

ծածկեաց զնոսա ծով (Ելք․ ԺԵ)․ գեղեցիկս 'ի կիր առնու զայսպիսի ստեղծաբանութիւնս լամբրոնացին յատենաբանութեան, ուր խորհուրդս՝ բանս և գործս ընծայէ սատանայի, և յառաջ բերէ զայլևայլ մտացածին խօսս նորա,, Յայնժամ որ վարանէրն գաղտնի սկզբնաչար թշնամին՝ ծանուցեալ թէ մեքենայք իւր խայտառակեցան․․․ արտաքս սողէր յորջէն չարութեան․․․ զի՞նչ է ինձ ասէր՝ մասնաւոր նետիւք զձեզ խոցոտել, և 'ի յաղթութենէ 'ի դերև ելանել․ համակործան կարօտանամ մեքենայից․ պիտոյ է ինձ գործի՝ առ ամուր արձանս ձեր աւերող․ դուք սէր առիք օրէնս՝ և զմիմեանց վէրս այնու բժշկէք, ես յատելութիւն զայն փոխանակեմ և իսպառ կործանեմ․ խաղաղութեան առիք պատուիրան և 'ի միմեանց զօդեցայք, 'ի թշնամութիւն զայն դարձուցանեմ, և զմիութիւն 'ի բաժանումն հերձեմ․ եւ տես զամենաչարն՝ թէ զի՞նչ ասէր անզեղջ մոլանօքն․ գործի ասէ՝ յայսմ մարտի 'ի հնար՝ ոչ յիմոյս ասափ, զորս իմաստնոյայք ճանաչել, պատրաստեմ․․․ այլ զի՞նչ․ ամենեցուն ձեր աչք 'ի յոյսն և 'ի գլուխն ձեր Քրիստոս հայի․ ինձ չի՞ք այլ հնար ըզձեզ քակելոյ, բայց եթէ այլևայլ գլու նա հայելն ուսուցից առնել․ և որպէս զուղիղ բանն Աստուծոյ՝ նախահօր ձերում թիւր մեկնեալ՝ զկժեցուցի, այսպէս կարելի է և այժմ զբանս գրոց՝ ոմանց 'ի ձէնջ այլևայլ ցուցանել, և նոքօք զամենեսեան խռովեցուցանել․․․․ զայս ամենայն ոչ միայն խորհեցաւ (սատանայ) նենգաւորն, այլ և արար, ոչ միայն կամեցաւ՝ այլ և կատարեաց, Եւն։ 'Ի դէպ են և այս բանք կիկերոնի (վասն կուէնտ․ ԺԷ),, Եւ զի՞նչ առ այս նեղիս․ ծաղր առնէ նա զխաղաղութիւն մեր․․․ զի՞ կայ բնաւ, ասէ նա, ընդ իս և ընդ այս ծայրագոյն սրբութիւն և զգուշութիւն։

9 Զանշունչս և զանզգայս իբրև զկենդանիս համարելով՝ խօսել ընդ նոսա, հրամայել, աղաչել, յորդորել, Եւն․ որպէս,, լո՛ւր՝ երկինք, և ունկնդիր երկիր, զի տէր խօսեցաւ (Եսայ)․․․ մինչև յե՞րբ կոտորեսցես՝ սու-

ընդ տեառն, մինչև յե՞րբ ոչ դադարիցես, դարձիր ՚ի պատեանս քո, դադարեա և վերացիր (Երեմ. խէ)... Ծով ետես և փախեաւ, և յորդանան անդրէն դարձաւ. զի՞ է քեզ՝ ծո՛վ, զի՛ ետեսեր և փախեար, կամ դո՛ւ յո՛րդանան՝ զի՞ դարձար անդրէն (սղմ. ճժգ) ։

10 Ստեղծանել զկեղծ համախօսութիւն ընդարձակ (dialogus) ՚ի մէջ երկուց անձանց, կենդանեաց կամ ՚ննջեցելոց, ՚ի նիւթ ուսումնական, բարոյական, պատմական, կամ քաղաքական, այլևայլ նպատակաւ և արհեստիւ. որպիսի են յօրինեալքն ՚ի նախնի յունաց և ՚ի լատինաց. ՚ի պղատոնէ, ՚ի քսենոփոնտեայ, յեսխինեայ, ՚ի կիկերոնէ, ՚ի կուինտիլլիանոսէ, և յայլոց բազմաց. ըստ որոց և առ մեզ գտանին ՚ի ձեռագիր մատեանս նախնեաց ինչ ինչ նման նոյին, այլ ոչ նոյին արժէնիք ։

Յուշ բեր աստանօր՝ զոր կանխաւն ուսուցաք (§ 103) թէ արտադրական և ստեղծագործ զօրութիւն մարդկային մտաց կամ հոգւոյ՝ բազում եղանակաւ ծաւալէ զինքն. յորոց միջի սքանչելի են մի՝ զօրութիւն բանաստեղծ կամ խօսողական, յորմէ ապա ծնաւ դպրաբանութիւն (նախ ձեռագիր, և ապա տպագիր), և միւս՝ զօրութիւն կերպուածաստեղծ կամ ստեղծագործական, զոր սովորաբար արուեստ կամ ձեռագործութիւն կոչեմք, որ ըստ յետնոց բաժանի ՚ի մեքենական և յազատական. և երկոքին դարձեալ՝ ՚ի բազում ցեղս. արդ՝ այդր ստեղծողական զօրութեան մտաց ծնունդ և պտուղ են, ոչ միայն վերոյիշեալ եղանակք ստեղծաբանութեան, այլ և բուն իսկ առանձին արուեստ համարեալն բանաստեղծութիւն (poesis). որ ճիշդ տեսութեամբ ոչ այլ ինչ իւիք, եթէ ոչ գերագոյն և սաստկագոյն աստիճան ստեղծաբան զօրութեան մտաց, զորմէ աստանօրս խօսիմք ։

§ 204 • Ձեւացուցութիւն (schematismus) •

Ձեւացուցանել է ազդ ինչ կազմուե̄ իմաստից, յորում Ճարտասանք առ հեշտեաւ մտառուի̄ ունկնդրաց՝ զանենթակայ և զվերացեալ էակս կամ զգաղափարս բացատրեն նիւթական և թանձր ձեւովք, կամ իբրև զզգալիս և զձեւացեալս 'ի տեղւոջ ուրեք կամ 'ի ժամանակի • յօրինակի սակս՝ առ իմանալի առնելոյ զյաւիտենականուի̄ն՝ ասեն, թէ է տեւողուի̄ որ ոչ երբէք գիտէ զվախճան ժամանակի • առ 'ի բացայայտել զկարողուի̄ կամ զզօրուի̄ էակի ուրուք ասեն, է այն ինչ՝ որ ներքին բնաբոյս է 'ի նմա, որ յամենայն ժամանակի տեւէ 'ի նմա անկորուստ, և կանխէ քան զարարածն իւր • լի՛ են այսպիսի իմաստք 'ի գրուածս նախնեաց, ևս և 'ի սուրբ գիրս • ոպ̄ մարգարէն դաւիթ զամենագիտուի̄ն և զամենուրեք ներկայուին Աստուծոյ զանբովանդակելին տեղեաւ և ժամանակաւ՝ այսպէս ձեւացուցանէ ըստ զանազան տեղեաց ժամանակաց և դիպուածոց,, Յո՛ երթայց ես յոգւոյ քումմէ, կամ յերեսաց քոց ես յո՛ փախիցեմ • թէ ելանեմ յերկինս դու անդ ես, և թէ իջանեմ 'ի դժոխս՝ և անդ մօտ ես • թէ առից զթեւս իմ ընդ առաւօտս և բնակեցայց յեզերս ծովու, սակայն և անդ ձեռն քո առաջնորդեսցէ ինձ և աջ քո ընկալցի զիս • խաւարն քեզ ոչ խաւարեսցի, և գիշերն ոպ̄ տիւ լուսաւոր եղիցի, և խաւար նորա ոպ̄ լոյս նորա • դու ստացար զերիկամունս իմ • ոչ թագեաւ ոսկր իմ 'ի քէն • զանգործս իմ տեսին աչք քո, և 'ի գիրս քո ամենեքեան գրեցան (սղմ • ճլը̄) • նոյնպէս և որդի նորա սաղմոսն զանսկիզբն մշտնջենաւորուի̄ իմաստուե̄ կամ բանին Աստուծոյ ձեւացուցանէ սովին ոճով, զոր կարդա՛ առակաց • ը̄ • 22—32 • ըստ այդոյիկ ծանիր և զայլ նմանս, յորս աննիւթ իդէայն նիւթաւորի, անմարմինն մարմնանայ, և անզգալին իբրև զզգալի ձեւակերպի ։

§ 205 · Նմանութիւն (similitudo) ·

Նմանութիւն է բացայայտութիւն հանգամանաց առարկային՝ ընթերադրութեամբ այլոց ինչ անշունչ էակի՝ նովին զուգաչափ հանգամանօք զգածելոյ · կամ է իմաստ՝ յորում հանգամանք առարկային՝ ցուցանին լինել հաւասար նոյնպիսի հանգամանաց այլոյ ինչ էակի · առ յստակ իմացուած իրացդ գիտելի առնեմք՝ թէ յամենայն նմանութիւն չորք ինչ են զանազանելի · 1 նախատիպ՝ որ կարօտի բացայայտութեան · 2 պատկեր կամ հայելի՝ որ ածեալ լինի ’ի լուսաբանել զնախատիպն , և որ միշտ լինի խնդիր նմանական նախադրութեանց , իբր , պէս, որպէս , զերթ , զօրէն , ըստ , ևն · 3 հիմն նմանութեան , որ է նոյնատեսակ հանգամանք ինչ՝ որ անշուշտ պարտի գտանիլ թէ ’ի նախատիպն և թէ ’ի պատկերին · 4 հաւասարութիւն նոյն հանգամանաց առարկային՝ ընդ հանգամանաց պատկերին · ըստ այդց յասելն՝ աշոտ է իմաստուն իբրև սողոմոն · աշոտ լինի նախատիպ · սողոմոն՝ պատկեր , իսկ իմաստութիւն հաւասարապէս գտեալ յերկոսին՝ համարի արմատ և հիմն նմանութեան , կամ նոյն իսկ նմանեալն և հաւասարեալն իրերաց · վասն որոյ տիրապէս խօսելով՝ ոչ այնչափ նախատիպն և պատկերն, այլ հանգամանք նոցա ածեալ լինին ’ի նմանութիւն և ’ի հաւասարութիւն միմեանց · ըստ որմէ և զնմանութիւն մարթ է սահմանել , յայտարարութիւն հաւասարութեան հանգամանաց յերկուս (կամ ’ի բազում) էակս մանաւանդ յանշունչս գտելոց · օրինակ իմն՝ ’ի բանիս , սուրբն գրիգոր լուսաւորիչ իբրև արեգակն ծագեցաւ ’ի հայաստան աշխարհի · նմանութիւն իսկապէս դնի յայնմ գործողութեան , թէ որպէս արեգակն ծագմամբ և լուսով իւրով փարատէ զխաւար մթութեան և գիշերոյ , նոյնպէս և սուրբն այն քարոզութեամբ և վարուք իւրովք ցրուեաց զխաւար կռապաշտութեան և տգիտութեան յազգէն հայոց ։ Նշանակք և օրինակք նմանեցուցանելոյ՝ լի են յամենայն գիրս նախնեաց , ’ի սուրբս և յարտաքինս․ յորոց շատ լիցի զմին զայս յառաջ բերել յերգոց սողոմոնի „ իբրև լար կարմիր են շրթունք քո, իբրև կեղև նռան այտք քո․ գեղեցիկ ես իբրև երուսաղէմ, պարանոց քո իբրև աշտարակ փղոսկրեայ, աչք քո իբրև ծովակն․ հիւսք գլխոյ քո իբրև ծիրանի թագաւորի․ ով է սա՝ որ երևեալ է իբրև առաւօտ, գեղեցիկ իբրև լուսին․ դիր զիս իբրև զկնիք 'ի սրտի քում․ իբրև զմատանի յաջոյ ձեռին քո․ բուռն է իբրև մահ՝ սէրն․ խիստ է իբրև դժոխք՝ նախանձն․ թռիչք նորա իբրև թռիչք բոցոյ հրոյ։

§ 206․ Գիտել պարտ է և ես, **1** թէ պատկերք առեալ լինին կամ յանբան էակաց կամ 'ի զօրութեց նոցա․ և զի դոքա գոյական անուամբք և բայիւք բացատրին, յայդ սակս 'ի քերականութե 'ի մի հաւաքեցաք զդասաւորս 'ի նոցունց, մանաւանդ զպարզս․ որ դիւրութի բազում բերէ համբակ ճարտասանից․ **2** զպատկերս պարտ է ածել ոչ 'ի յոյժ նմանեաց՝ ծանօթից՝ սովորականաց կամ 'ի յաճախելոց, և ոչ 'ի կարի աննմանից յանծանօթից և 'ի հեռաւորաց, այլ որ զմիջին վայրն ունիցի, և առիթ տայցէ երևակայութե և մտաց ունկնդրաց ինքնին խաղալ և բազում ինչ իմաստասիրել․ ըստ այդմ գեղեցիկ լինի ասել„ անկարգ կիրք զօրէն ամեհի ալեաց ծովու ըմբոստանան առ ղեկ մտաց և առ առաջնորդութի նորա․ յորում բաց յանհնազանդութէ կրից և յանկարութէ վարչութե մտաց՝ իմացեալ լինի և վտանգն նաւաբեկութե կորստեամբ ամենայն բարեաց․ **3** չէ արժան առնուլ 'ի պատկեր զիրս աղտեղիս՝ զանարգս և զամօթալիս․ զի անվայել է այնիւ կենակցութե խօսել և լսել զայնպիսիս, այլ ըստ կարի պարտ է ընտրել զմեծայարգս և զպատուականս․ **4** հիմն նմանութե ներգործութք եղեալ լիցի, և մի լռելեայն կամ 'ի ծածուկ թաքիցէ․ ապա թէ ոչ՝ շրջի 'ի փոխաբերութի, զորմէ 'ի մօտոյ․ **5** նոյն հիմն նմանութե մի կարի դժուարահաս մթագին և անըմբռնելի լիցէ, այնպէս զի ունկնդիրք սովորեցին՝ ոչ ինքնին գուշակել, այլ որպէս թէ հմայել կամ մարգարէանալ. 6 նմանութիւնք և զնմանէ կախեալ փոխաբերութիւնք՝ այլաբանութիւնք և որ 'ի նոյն յանգէն՝ առաւելապէս նպաստեն 'ի լուսաւորել զմիտս և 'ի զգածել զսիրտս. բայց ոչ՝ առ 'ի շարժել զկամս և 'ի գրգռել զկիրս. վասն որոյ հարկ է միտ դնել տեղւոյ՝ ժամանակի և այլոց պարագայից՝ 'ի կիրառութեան դոցին. նոյնպէս ևս չէ արժան յանչափս յաճախել զդոսին 'ի միում ճառի. այլ ընտրութեամբ պէտք են և ինքնին բղխելոյ նիւթոյն և առթին. ևս և աշխուժոյ ճարտասանին. բայց այն ևս՝ անդ միայն, ուր պատկերն և հիմն նմանութեան կամ փոխաբերութեան զօրէ յաւելուլ յառարկայն զվսեմութիւն, զգեղեցկութիւն, զազնուութիւն, զքաղցրութիւն, զյարգանս, զշնորհս, և զայլ կատարելութիւնս իմաստից և խօսից. 7 զնմանութիւնս բացատրեմք ոչ միայն նախադրութեամբք, այլ և մակբայիւք և շաղկապօք բաղդեալովք ընդ նախադրութեանս, պէս, ըստ. յորոց ոմանք են բառքն, այսպէս, նոյնպէս, որպէս, ըստ նմին, զոր օրինակ. ևն. 8 նմանութիւն առեալ լինի յանշունչ և յանբան էակաց, իսկ օրինակն 'ի բանականաց՝ ճշգրտութեամբ խօսեցեալ. (որպէս նմանութիւնս յանշնչից մարթ է տեսանել 'ի սուրբ գիրս յաճախ, ուր են. յակոբ. ա̅. 6—23. բ̅. 26. գ. 3—13. ե̅. պետրոս. ա̅. 19. բ̅. 17. և այլուր անթիւ):

§ 207. Համեմատութիւն (collatio).

Համեմատութիւն է իմաստ՝ ըստ որոյ առարկայն անուանեալ և նմանեալ լինի այլում ինչ իրի՝ վասն վերբերելոյ սորա յինքեան՝ ոչ զբուն հանգամանս, այլ զերևոյթ կամ զուրուական ինչ նորին ըստ արտաքին յարմարութեան և կերպարանակցութեան եւթ. որպէս 'ի սուրբ գիրս առաքինութիւնք կոչին և նմանին ուղիղ ճանապարհի. և գործողն զառաքինութիւն նմանի ընթանալոյ յուղիղ ճանապարհ. ընդհակառակն՝ մոլութիւնք նմանին թիւր և մոլար ճանապարհի, և մեղանչելն՝ խոտորելոյ կամ զարտուղելոյ յուղիղ պողոտայէ․ Աստուած նմանի հօր, և մարդիկ մանաւանդ արդարք՝ որդւոց նորա․ առաքինիք՝ զինուորաց․ կենցաղավարութի̅ մեր՝ պատերազմի․ երկիւղ տեառն՝ աղբեր կենաց, իսկ մոլորեցուցիչք՝ անջրդի աղբեր․ կին ժրագլուխ՝ պսակի ՚ի գլուխ առն․ ատամունք՝ աղօրեաց (ժողովող․ ժբ̅)․ վերին՝ միջին և ստորին մասունք լերանց՝ նմանին գլխոյ լանջաց և ոտից կենդանեաց․ ըստ դոցունց օրինակի և այլ անհամար հանգիտութի̅ք գտանին յամենայն գիրս և ՚ի հասարակ խօսս իսկ․ յորս ոչ ճիշդ նոյնութի̅ հանգամանաց (ոպ̅ ՚ի բուն նմանութե̅), այլ պարզ և լոկ ազգակցութի̅ և համակիրութի̅ նոցա ընդ միմեանս՝ առիթ տայ մեզ, զերկու ինչ համեմատ համարելոյ, զանուն միոյն՝ միւսում ընծայելոյ, և զմին միւսովն բացատրելոյ․ և այն՝ ոչ յէակս միայն, այլ և ՚ի գործողութի̅ս և ՚ի կրելութի̅ս նոցա․ ոպ̅ աղալն՝ որ է գործ երկանաքարանց, ընծայի ատամանց՝ վասն նոցա պէս մանրելոյ և լուծելոյ նոցա զկերակուրս․ նոյնպէս ուտել՝ յագենալ՝ ծարաւիլ՝ և նման գործք կենդանեաց ընծային սրտոյ և հրոյ․ ևն ։

§ 208․ Ընդ սովին իմացեալ լինի, կամ Թերևս նոյն համարի նա և Յարմարութի̅ն, պատշաճողութի̅ն և վայելչութի̅ն, որ է համօրակութի̅ կամ չափակցութի̅ երկուց էակաց ընդ միմեանս, ՚ի սակս ունելոյ նոցա զնոյն արտաքին կերպարանս, կամ զքանակութի̅ և զորակութի̅․ ըստ այդոցիկ ասի ՚ի սուրբ գիրս, Թէ Նոր կապերտն ոչ յարմարի ընդ հնոյն (ղկս․ ե̅․ 36)․ Թէ սուտ վկայութի̅ք զՔրիստոսէ տուեալք՝ անյարմար էին միմեանց (մրկ․ ժդ̅․ 56)․ Թէ նաւահանգիստն անպատշաճ էր առ ՚ի ձմերել (Գործ․ իէ̅․ 12)․ և այլ դոյնպիսիք (կարդա՛ և ս, մաթ․ գ․ 15․ բ̅ կորնթ․ բ̅․ 16․ գ․ 6․ եփես․ ե․ 3․ եբրայ․ բ̅․ 10․ է․ 26․ ա̅ տիմ․ բ̅․ 10․ բ̅ տիմ․ բ̅․ 2․ տիտ․ բ̅․ 1․ և այլուր)։

§ 209. Փոխաբերութիւն և այլաբանութիւն (metaphora, allegoria).

Փոխաբերութիւն է եղանակ վերաբանութեան. յորում զառարկայն եդեալ իբր զնախատիպ ենթակայ, զպատկերն մակածեմք ՚ի նա իբր զհանգամանս ինչ նորին. որպէս թէ՝ ոչ այնչափ նման, որքան թէ մի և նոյն համարելով զնոսա ՚ի պատճառս անձուկ նմանութեան նոցին ընդ իրեարս. յոր սակս և ՚ի բաց թողումք զհիմն նմանութեան և զմիջադիր նախադրութիւն. օրինակ իմն ՚ի բանս տեառն ,, Դուք էք լոյս աշխարհի, դուք էք աղ երկրի,, լոյսն և աղն իբր հանգամանք ինչ ընծային առաքելոց, և ոչ՝ իբր լոկ պատկեր նմանութեան. որոյ պատճառն է՝ ամենակերպ նմանակցութիւն և հանդիտութիւն գործոց առաքելոց՝ ընդ ներգործութեանց լուսոյ և աղի. դիւրահաս են բանքդ՝ յորոց ասացաքս զնմանութիւն, և անկարօտ յերկար բացատրութեան. Իսկ այլաբանութիւն ոչ այլով ինչ տարբերի ՚ի փոխաբերութենէ, բայց եթէ քանակութեամբ. զի է ընդարձակ և յերկարապատում փոխաբերութիւն ՚ի բազում ասացութիւնս և ՚ի յարասութիւնս բովանդակեալ, բայց միշտ զնոյին պատկերաւ յածեալ. որպէս է այս բան Եսայեայ (Ե) ,, Այգի եղև սիրելւոյն յանկեան, ՚ի տեղւոջ պարարտութեան, ցանգով փակեցի, ամրութեամբ պարսպեցի, ձողաբարձ կարգաւորեցի, և տնկեցի որթ սորեկ. աշտարակ շինեցի ՚ի միջի նորա, և գուբ հնձան փորեցի ՚ի նմա. և մնացի զի բերցէ խաղող, և եբեր փուշ . . . Եւ ինձէն պատմեցից՝ զինչ արարից ընդ այգի իմ. քակեցից զցանգ նորա և եղիցի ՚ի յափշտակութիւն. կործանեցից զպարիսպս նորա, և եղիցի ՚ի կոխումն. և թողից զայգի իմ. մի՛ յատցի և մի՛ բրեսցի. և բուսցի ՚ի նմա փուշ իբրև ՚ի խոպանի. և պատուէր տաց ամպոց իմոց՝ զի մի՛ տեղասցեն յայգի իմ. զի այգի տեառն զօրութեանց՝ տունն իսրայելի է. և մարդն յուդայ՝ նորատունկ սիրելի: Կարդա ևս. Եզեկ. Ժզ. Իգ. 32 — 35. Սղմս. ՀԹ. 9 — 18:

§ 210 . Պատկերք փոխաբերութեան և այլաբանութեան՝ որպէս և նմանութեան՝ առեալ լինին յամենայն աստուածային և 'ի մարդկային արարածոց՝ 'ի ներգործութեանց՝ և 'ի հանգամանաց նոցա . որպէս յարեգակնէ , 'ի լուսնոյ , 'ի փայլականց , յորոտմանէ , 'ի տարերաց , 'ի հրոյ , 'ի ջրոյ , 'ի հողոյ , 'ի զգայարանաց մարդոյ , 'ի տեսանելոյ , 'ի լսելոյ , 'ի ճաշակելոյ , յընթանալոյ , 'ի մարդկային պաշտամանց և յարհեստից , յանասնոց , յանշունչ իրաց , 'ի ծաղկանց , 'ի տնկոց , և յամենայն էակաց . որոց զանուանս զգործողութիւնս և զայլ որակութիւնս փոխաբերեալ յառարկայ ճառին՝ ասեմք,, ծագեա ողորմութիւնս քո . իջուցանել զգետս արտասուաց . այրիլ՝ տոչորիլ՝ բորբոքիլ սիրով՝ նախանձու՝ ցանկութեան , ևն . ամպել և ոչ անձրևել , երկնել և ոչ ծնանիլ . ես տնկեցի՝ Ապողոս ջուր ետ . ես իբրև իմաստուն ճարտարապետ հիմն եդի , բայց այլ է՝ որ շինէ . խաւարեալ և տատանեալ յամենայն հողմոց վարդապետութեան . ալեկոծեալ 'ի խորհուրդս ծփանաց մտաց . գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանութեան . մի ճաշակեսցէ զմահ . երիվարն որոտայ 'ի դաշտի և դափ հատանէ , իբրև փող հարկանի՝ նա վաշ վաշ կարդայ . հոտ անոյշ եմք Քրիստոսի առ Աստուած . լուծ իմ քաղցր է , և բեռն իմ փոքոգի . սանձել զանզուսպ բարկութիւն . որոտացան զանձն արդարոյ . արմատախիլ առնել զմոլութիւնս . ծաղկեաց գարունն հաւատոյ , պտղաբուծիլ առաքինութիւնք . և այլ դոյնպիսիք անբաւք . կոյս յամենայն գիրս իմաստնոց մարթ է տեսանել :

§ 211 . Սովոր են ճարտասանք զպատկերս նմանութեանց և զեղանակ փոխաբերելոյն զնոսին՝ բաժանել 'ի քառեակ դասս . որք են , 1 զանուն կամ զգործ կենդանւոյ՝ փոխել յայլ կենդանի . որպէս , այլ ևս ոչխարք են իմ՝ որք ոչ են յայսմ գաւթէ , և զայն ևս պարտ է ինձ ածել այսր , և ձայնի իմում լուիցեն , և եղիցին մի հօտ և մի հովիւ . . . բարձրաբազուկ 'ի վերայ Թշնամեաց մերոց ճախրեսցուք . 2 զանուն և զգործ կենդանւոյ փոխադնել յանշունչս . ոպ՟ ,, զմանկունս ծնեալս մեզ 'ի քաղդէացւոց սերմանէն՝ զիմի հարցուք . տարերք սուգ ըզգեցան . ծիծաղին մարգագետինք . 3 զանշունչս փոխել ընդ անշնչոյ . ոպ՟ , Ճրագ մարմնոյ ակն է . լեզու հուր զարդ անիրաւութե՟ . 4 զանշունչս փոխել ընդ կենդանեաց . ոպ՟ , դուք էք լոյս աշխարհի . մի 'ի բարունակացն և մեք՝ 'ի նոցա որթոյն սաղարթ ծաղկեցաք , ևն. սակայն բաց 'ի դոցունց գտանին առ հեղինակս և այլ զէսպէս եղանակք . զորս մարթ է գտանել մտադիր զննողաց :

Փոխաբերութե՟ և այլաբանութե՟ բաց 'ի կանոնաց՝ զոր վերագոյն զնմանութե՟ աւանդեցաք , և զայս առանձինն պահանջեն . զի յոր պատկերէ սկսանն , 'ի նոյնն շարունակեսցին և աւարտեսցին անփոփոխ , առանց խառնելոյ 'ի նոսա զգաղափարս և զբառս , յայլ օտար պատկերս վերածեալս , կամ անյարմարս առաջակայ նիւթոյն . զոր մէ ընթերցիր 'ի քերկն . մերում զբանն յաղագս ներքին ուղղութե՟ խօսից . յեր . 381 :

§ 212 . Բաղդատութիւն (comparatio) .

Բաղդատութի՟ն՝ կամ Ճիշդ ևս՝ կշռադատութի՟ն է ոճ ինչ իմաստաբանութե՟ , յորում զառարկայն կամ զհանգամանս ինչ նորա՝ միտքն ոչ թէ դնէ 'ի նժարս կշռոյ ընդ այլում համատեսակի՝ առ 'ի յայտ բերելոյ զառաւելութի՟ քանակութե՟ նորա քան զսորա . ոպ՟ յասելն՝ աշոտ հարստագոյն է քան զարշակ , զայն կամի ցուցանել՝ թէ հարստութի՟ն որ գտանի յաշոտ՝ առաւել է քանակաւ քան զոր էն յարշակ . տեսանի 'ի բանիցդ՝ թէ ոչ 'ի նմանութե՟ , նոյնպէս և յայսմ չորք ինչ են զանազանելի , 1 նախատիպ՝ որ է առաջին ծայր բաղդատութե՟ , ոպ՟ է յօրինակիդ աշոտն . 2 պատկեր՝ որ միւս ծայրն դնի 'ի միւս թաթ կշռոյն . ոպ՟ է արշակն . 3 հիմն բաղդատութե՟ կամ բուն կշռելին , որ յերկոսին ևս անտարակոյս պարտի համասեռ լինել և արդեամբք գտանիլ .

որ յօրինակիդ է հարստութիւն • Գ առաւելութիւն հիմանն 'ի նախատիպն քան 'ի պատկերն • յորում և դնի էական տարբերութիւն բաղդատութեան 'ի նմանութենէ • զի սա՝ ոչ ասայաք՝ ջանայ ցուցանել զհաւասարութիւն, իսկ նա բաղդատութիւն ցուցանէ զառաւելութիւն հիման 'ի նախատիպն քան 'ի պատկերն • ըստ որմէ և նմանութիւն բացատրի նմանական նախադրութեամբք • իսկ բաղդատութիւն՝ բաղդատական ածականօք՝ նախադրութեամբք մակբայիւք և շաղկապօք • ոչ տեսանի յայսոսիկ ,, ծանր է քար, և դժուարաբառնալի՝ աւազ, բայց բարկութիւն անզգամի ծանրագոյն է քան զերկոսեան • • • • լաւ են հարուածք բարեկամի քան զկամակար համբոյրս թշնամւոյ • • • գործոյն առաւել միտ դնեն՝ քան բանից • կարդա՛ ևս • իմաստ • Ժզ • 3—10 :

Ճարտասանք բաղդատեն զամենայն ինչ • իմա՛ թէ զէակս՝ զանձինս և զիրս • ոչ, առաւել պատուեցաւ յովնան քան զամենայն մարգարէսն • բարձր է ծառայութիւն պատիւ քան զառաքելութիւն ,, թէ զգործողութիւն և զկրելութիւն, որպէս, լաւ է ամուսնանալ քան ջեռնուլ • թէ զորակութիւն ,, սպիտակութիւն առաւել է 'ի ձեան քան 'ի թղթի • և թէ զայլ մնացեալ հանգամանս • որոց օրինակք առ ձեռս են ամենայն ումեք :

'Ի հասարակ խօսս յոլովակի հիմն բաղդատութեան և մերթ բուն նախատիպն և պատկերն լռելեայն մնան, և միայն հետևութիւն կամ վերածութիւն ինչ նոյա բացատրեալ լինի • որպէս յասելն, աշաւ ոչ պատուէ զծնողս, ապա ևս առաւել ոչ յարգեսցէ զվարժապետս, բուն բաղդատութիւնն թագուցեալ՝ այն է, թէ ծնողք առաւել յարգելի են քան զուսուցիչս • իսկ արդ՝ աշաւ ոչ յարգէ զնոսա, ապա և ոչ զսոսա յարգեսցէ • այսպիսի է և այն բան առ եղիշէի վասն վասակայ ,, եթէ առ Աստուածն իւր սուտ գտաւ դա, առ ո՛ ոք 'ի մարդկանէ արդար գտանիցի • ուր հիմնական բաղդատութիւն գաղեալ կայ • այն՝ թէ մարդ պարտի առաւել հաւատարիմ գտանել առ Աստուած քան առ ընկերս • զնոյն իմացիր և յայլ նմանօրինակ բանս :

Համբակք թէ 'ի նմանութեան և թէ 'ի բաղդատութեան բազում զգուշութեամբ զանազանեսցեն յիրերաց զնախատիպն՝ զպատկերին և զհիմն. զի 'ի խառնակութենէ դոցա փոփոխի իմաստն, և այլ ինչ օտար ծնանի. ըստ այսմ այլ ինչ նշանակէ ասելն, եղև քահանայն իբրև զժողովուրդն. և այլ ինչ՝ եթէ ասես, եղև ժողովուրդն իբրև զքահանայն. որոց խտիր տարբերութեան ամենեցուն քաջայայտ է։

§ 213. Հակադրութիւն (oppositio).

Հակադրութիւն է այդ ինչ լուսաբանութիւն առարկային ընթերադրութեամբ աննման պատկերի. իբր զի նպատակ ճառին ստիպէ երբեմն զճարտասանն հուպ բերել յառարկայ իւր զպատկեր՝ ոչ միայն համասեռ հանգամանօք զգածեալ (որպէս 'ի նմանութեան և 'ի բաղդատութեան), այլ և զայնպիսի՝ որ զներհական հանգամանս ունիցի. այնու դիտամամբ՝ զի առաւել ևս բացայայտեսցին գաղափարք և իմաստք մտաց ունկնդրաց, ընդ նմին և բուն իսկ առարկայն. ըստ որում քաջայայտ է 'ի փորձոյ՝ թէ աննմանք առ իրեարս եդեալք՝ լաւ ևս ցուցանեն զյատկանիշ և զխտիր իւրեանց. որպէս կապոյտ և դեղին հուպ նկարեալք՝ առաւելապէս զանազանին. ըստ այսմ փրկիչն մեր կամեցեալ ուսուցանել առաքելոց զամենակերպ հաւասարութիւն հովուական իշխանութեան նոցա՝ հակադրէ այնմ զանհաւասարութիւն իշխանութեան կամ զտիրողութիւն ոմանց 'ի վերայ այլոց. զոր և արգելեալ նոցա պատուիրանաւք՝ հրամայէ հաւասար իշխանութեամբ հովուել զժողովուրդն. յասելն „ գիտէք՝ զի որ յանուան իշխանքն են հեթանոսաց՝ տիրեն նոցա, և մեծամեծք նոցա իշխեն նոցա. ոչ նոյնպէս իցէ 'ի ձերում միջի. այլ որ կամիցի 'ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ. և որ կամիցի 'ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ամենեցուն ծառայ (Մարկ. Ժ)։

Զայլևայլ տեսակս հակադրութեան կամ աննմանութեան՝ ցուցեալ եմք կանխաւ. բայց տիրապէս խօսելով հակադրութեան մտածի մի՝ յէակս, և միւս՝ 'ի հանդամանս նոցա . և դոքին դարձեալ կրկնակի, նախ՝ 'ի մէջ գոյութեան և անգոյութեան նոցին, կամ ընդ մէջ դրականի և պակասականի նոյն իրի . որպէս կեանք և մահ, տեսութիւն և կուրութիւն, հուր և ոչ հուր, որք հակասականք կոչին . և երկրորդ՝ 'ի մէջ բազում գոյաւորաց . և յայս միտս վերստին զատանին նոքա 'ի բազում կարգս . որպիսի են, համաձայնք, հակառակք, անհաւասարք, և առընչականք . համաձայն կամ զանազան կոչին՝ էակք և հանդամանք, որք թէպէտ տարբեր որակութիւնս ունին, բայց մարթին 'ի միում անհատի ենթակայանալ, որպէս սըրբութիւն, իմաստութիւն, և հարստութիւն յաշտն . հակառակք ոչ միայն զանազան են, այլ և եղծանող իրերաց, որպէս սրբութիւն և պղծութիւն, առողջութիւն և ցաւագարութիւն, ևն . բայց գիտեա զի համաձայնութիւն և հակառակութիւն մտածին յամենայն հանդամանս . այն է՝ յորակութիւնս, որպէս յօրինակդ . 'ի ներգործութիւնս՝ որպէս սիրել և յանդիմանել, սիրել և ատել . 'ի քանակութիւնս՝ որպէս, երկայն և լայն, երկայն և կարճ . 'ի տեղիս՝ որպէս յաջմէ և 'ի թիկանց, յաջմէ և յահեկէ . 'ի ժամանակս՝ որպէս երեկ և 'ի մէջօրէի, երեկ և այսօր . ևն . անհաւասար ասին ամենայն տարբերեալքն քանակաւ . իսկ առնչակիցք յայտնի են 'ի կանխաւ ասացելոց։

§ 214 . Ըստ կիրառութեան՝ հակադրութիւն 'ի մէջ ածի մի՝ 'ի գաղափարս և 'ի բառս . միւս ևս յիմաստս և յառասութիւնս . զբառս մարթ է հակադրել ըստ պէսպէս պաշտամանց նոցա . և 1 զենթակայս, որպէս „ կեանք և մահ 'ի ձեռս լեզուի են . 2 զբայս „ կամի և չկամի ծոյլն գործել . 3 զխնդիրս միոյ բայի „ պետրոս՝ որ տգէտն էր և իմաստուն . որ յիմարն էր և խորին փիլիսոփայն... վասն առողջութեան՝ զապիկարն կարդայ, և վասն կենաց՝ զմեռեալն աղաչէ . և վասն 'ի թիկունս հասանելոյ՝ տարակուսելոյն մաղթէ . 4 զենթակայն և զխնդիրն բային„ որպէս չի՛ք յանիրաւութենէ արդարութիւն, այսպէս և ոչ 'ի ստութենէ ճշմարտութիւն . . . կեանք իւրեանց

՚ի մահ համարեալ էին․ և մահ նոցա՝ անշուշտ կեանք․․․ ձիւն և սառն կային ընդդէմ հրոյ և ոչ հալէին․ հուրն բորբոքեալ ընդ կարկտի, և փայլատակեալ ՚ի մէջ ջրոյ․ հուր՝ ջրոյ յաղթէր իւրով զօրութեամբ․․․ ծառայ իմաստուն տիրեսցէ տերանց անմըտաց․ 5 զլայն և զմակբայ նորա,, եւ զերրեակ միուն զանտանելի զլոյն տեսանելով՝ կենդանեայն մահացան․ ըստ այդց մարթ է հակադրել և զայլ տեսակս բառից, զյատկացուցիչս, զբացայայտիչս, զածականս, և որ ՚ի դոյունց սակի։

Հակադրումն իմաստից առաւել մծայրդ է, երբ ՚ի միում յարասութեան երկու առասութիք դիմադրին միմեանց ըստ իմաստից (յայտ է՝ և ըստ բառիցն)․ որում գեղեցիկ օրինակ է այս բան եղիշէի,, վարդապետ էիք առաքինականն քաջութեանցն, արդ աշակե՞րտ լինիցիք մոլար խաբէութեան․ ուսուցիչ էիք ճշմարտութեան, արդ ուսուցանե՞ք զպատիր խաբէութեան մոգաց, եւն․ զոր կարդա առ նմա յէր․ **92—96**․ որոց պէս և յայլ բազում տեղիս գտանին օրինակք․ որպէս և առ նարեկացւոյն (է) քանանու զաւակս և ոչ յուդայի․ եւն։ Մարթ է և զբովանդակ յարասութիս հակադրել իրերաց թէ ըստ իմաստից և թէ ըստ բառից․ որոց օրինակք կան առ նախնիս մեր բազում ուրեք։

§ 215․ Օրինակութիւն գործոց (exemplum)․

Օրինակութիւն է այդ ինչ վերաբանութեան․ յորում ճարտասանն՝ զառարկայն և զգաղափար նորա բացայայտէ հուպ բերելով զգործս և զփորձառութիս այլոց՝ իբրու զհամատեսակ պատկերս կամ զկերպընկալ հայելիս․ որք յանդիման աչաց ունկնդրաց եդեալք՝ առաւել և հեղինակուքն իւրեանց շարժեն զնոսա ՚ի լաւ եւս ճանաչել և ՚ի սիրել զառարկայն․ իբր զի յոլովք ՚ի մարդկանէ՝ մանաւանդ անուսումք, քան ՚ի բանաւոր փաստից՝ յօրինակէ գործադրութեանց այլոց շարժին․ մանաւանդ՝ իշխանաց՝ գիտնոց՝ առաքինեաց և մեծաւորաց, ՚ի սակս մեծայարգ համարմանն՝ զոր ունին զնոցանէ ։

Գործք՝ փորձառութիւնք և օրինակք՝ նկատմամբ հեղինակացն բաժանին ՚ի սրբազանս, ՚ի սոսկականս· և ՚ի կեղծահնարս ։ Սրբազան են գործողութիւնք Աստուծոյ և սրբոց նորա, յաստուածաշունչ գիրս, յայսմաւուրս, և յեկեղեցական պատմագիրս բովանդակեալք· զորս յօրինակ ածեն առաւելապէս հռետոր քարոզիչք և աստուածաբանք· ըստ այսմ փրկիչն մեր ասաց ուրեմն, „ Դաւիթ յորժամ քաղցեաւն եմուտ ՚ի տունն Աստուծոյ, և զհացն առաջաւորութեան եկեր· նոյնպէս և առաքեալք նորա բազում ուրեք առին յօրինակ զյոբ, զաբրահամ, և զայլ մարգարէս ։ Սոսկական օրինակ կոչին գործարարութիւնք այլ ամենայն մարդկան, բայց ՚ի սրբոց· և ընդհանրապէս բաժանին յանձնականս և ՚ի պատմականս· անձնական են գործք և փորձառութիւնք նոյն իսկ ունկնդրաց՝ զորս գործեցին կամ կրեցին, ըստ հոգւոյ կամ՝ըստ մարմնոյ, մտօք, սրտիւք, կամօք, և վարուք· զորս իբրև արժանահաւատ և անսուտ վկայս ՚ի մէջ ածէ ճարտասանն ՚ի հաստատութիւն բանից իւրոց· պատմական են ներգործութիւնք անցեալ կամ ներկայ մարդկան՝ բաց յունկնդրաց, զորս նոյնպէս ՚ի վկայ ածէ ճարտասանն ըստ նպատակի իւրոյ ։ Կեղծահնար կոչին օրինակք՝ ՚ի ճարտասանէն ճարտարեալք և ստեղծագործեալք· որք ըստ գործողացն բաժանին ՚ի մարդկայինս, յանբանականս, և յանշնչականս· և առհասարակ՝ առակ, առակաբանութիւն կոչին· մարդկային են գործք ինքնահնար անձանց, զորս և փրկիչն մեր ըստ սովորութեան այնց ժամանակաց ՚ի կիր առնոյր յաճախ· որպէս են առակ մեծատանն, տնտեսին, անառակ որդւոյն, և նմանք ։ Անբանական են՝ զորս ըստ յատկութեց անբանից կեղծէ ճարտասանն, որպէս են առ մեզ առակք մխիթարայ գօշի, և աղուեսագիրքն ։ Անշնչական են ընծայեալքն ծառոց՝ տնկոց և այլոց անկենդան իրաց, որպէս է այն որ գրի ՚ի դատաւոր· Թ· զոր կարդատե՛ս եւս. Ա կորնթ. ԺԲ. 14 — 31. յայսցանէ բաւական լսօլի Հայրն սահման ադոնց 'ի Ճարտասանութեան, առ որում տեսցին՝ որ կամիցին ։

Նկատմամբ նպատակի եւ օգտի՝ բաժանին օրինակք յայնս, 1 որք լուսաւորեն զմիտս եւ պայծառացուցանեն զգաղափարս. 2 որք հաստատեն զմիտս եւ ապացուցանեն զճշմարտութիւն իմաստից. 3 որք զգածեն զսիրտ պէսպէս կիրօք. եւ 4 որք գրգռեն զկամս յիրագործութիւն. ուր եւ զայն յաւելումք նախ՝ թէ նոյն մի օրինակ Ճարտարութեան 'ի կիր առեալ մարթի վճարել քառեակ նպատակացդ. եւ երկրորդ՝ թէ չէ արժան համբակաց զօրինակաբերութիւն՝ զոր աստ աւանդեմք, ընդ պատմաբանութեան շփոթել. զի թէպէտ ամենայն պատմութիւն է յառաջբերութիւն գործոյ այլոյ, բայց ոչ ամենայն յառաջբերութիւն գործոյ՝ է պատմութիւն. եւ խտիր նոցա եդեալ կայ յեղանակն եւ յոճն Ճառելոյ. զի այլ է պատմաբան լեզուն, եւ այլ՝ օրինակաբանին. զոր լաւ եւս մարթ է ճանաչել զննողութեամբ լեզուաց դասագլուխ մատենագրաց ։ Եւ այլ եւս պէսպէս զանազանութիւնք օրինակաց, զորս զանց առնեմք 'ի մէջ առնել առ չծանրանալոյ համբակաց, իսկ զկանոնս կիրառութեան աւանդեմք 'ի մօտոյ ։

§ 216. Վկայութիւն, վկայաբանութիւն (testimonium).

Յայտնի է յանուանէդ՝ թէ Ճարտասանն յառաջ բերել ունի յայսմ՝ զձայնիւ կամ զգրով տուեալ իմաստս եւ զխօսս արժանահաւատ անձանց. զորս առ հասարակ կոչեմք՝ վկայութիւնս. որք եւ բաժանին նախ՝ ըստ հեղինակացն յաստուածայինս՝ զորս քարոզիչք եւ աստուածաբանք յառաջ բերեն. եւ 'ի մարդկայինս՝ որք դարձեալ զանազանին յեկեղեցականս, 'ի գիտնականս, յարքունականս, 'ի ժողովրդականս, եւ յայլ նմանս ըստ վիճակաց անձանց վկայելոյն ։ Երկրորդ՝ վկայք ըստ ժամանակի կենացն բաժանին 'ի նախնիս, որք յառաջ քան զմեզ կեցին. եւ յարդիս՝ որք մեզ ժամանակակից գտանին. իսկ ըստ եղանակի ճանաչման նոցա բաժանին 'ի ճարտար, յանձնափորձ, յականատես, և յականջալուր, զորոց տուեալ եմք կանխաւ։ Երկրորդ՝ ըստ եղանակի տուչութեան վկայութիւնք բաժանին 'ի գրաւորս՝ որք ձեռագիր կամ տպագիր մատենիւ կամ թղթով առ մեզ հասանեն. և 'ի ձայնաւորս՝ որք կենդանի ձայնիւ յառաջակայ վկայից մեզ աւանդին. իսկ ըստ զօրութեանցն բաժանին յընդհանրականս՝ որք յամենայն մարդկանէ, և 'ի մասնականս՝ որք յոմանց միայն ընկալեալ և հաւատացեալ լինին։

Այն ինչ՝ զոր վկայք բանիւ կամ գրով աւանդեն մեզ, կոչի առարկայ վկայութեան. հաւանութիւն՝ զոր մեք ընծայեմք վկայութեանց, կոչի՝ Հաւատք, հաւատալ, հաւատարմութիւն. իսկ արժանաւորութիւն և յարգն վկայից և վկայութեանց՝ կոչի Հեղինակութիւն։ Վկայութիւն՝ որ միայն յականջալուր անձանց աւանդի, և ստոյգ առաջին հեղինակն անծանօթ մնայ, կոչի՝ Համբաւ, հռչակ. որ եթէ նոր և մեզ ժամանակակից իցէ, անուանի՝ Լուր, զրոյց (rumor). իսկ եթէ հին և վաղնջական իցէ՝ ասի Աւանդութիւն, որ կամ ձայնաւոր է կամ գրաւոր։ Առարկայք վկայութեան բաժանին յանձնականս՝ յորս վկայն զիւրոց անձին զգաղափարս, զդատողութիւնս, զիմաստս, զզգածմունս, զզգացմունս, զներգործութիւնս, զկիրս, զփորձառութիւնս, և զայլ նման սեպհականութիւնս հաղորդէ մեզ. և յօտարականս՝ յորս զոր յայլս տեսեալ կամ լուեալ իցէ, զայնս միայն փոխադրէ. և այսպիսիք կոչին՝ պատմութիւն, վէպ. վէպ պատմէ մեզ զօտարսն։ Առ զանազան ցեղս վկայութեանց վերածին օրէնք մեծաւորաց, պատուիրանք, հրամանք, կանոնք, կարգք, առածք (proverbia), վճռաբանութիւնք (sententia), ամենայն մատեանք և գրուածք այլոց, նամակք, կոնդակք, արձանագրութիւնք, վերտառութիւնք, առակք, առասպելք, և այլ ձայնաւոր և գրաւոր խօսք ընկերաց. որք և ըստ կարողութեանց հոգւոյ բաժանին 'ի մտավարժս, 'ի սրտազգածս, և 'ի կամաշարժս ։ Վկայութիւնք բաժանին ևս 'ի հաւանական՝ և 'ի կասկածական ․ հաւանական կոչին՝ եթէ 'ի վկայողս գտցի մի՛ բաւական գիտութիւն և իմաստութիւն, որպէս զի մի՛ լիցի ինքն մոլորեալ և խաբեալ ․ և միւս՝ բարութիւն, զի կամեսցի առանց մարդահաճութեան և կողմնապահութեան աւանդել մեզ զճշմարիտն ․ կամ չխաբել զմեզ վասն կողմնական նկատմանց և ակնածութեանց ինչ՝ թագուցանելով կամ խարդախելով զճշմարտութիւն ։ Իսկ կասկածական ասի վկայութիւն՝ եթէ 'ի հեղինակ նորին նշմարեսցին հետք կամ տգիտութեան կամ չարակամութեան ։

Զօրինակս վկայաբերութեանց մարթ է տեսանել յամենայն գիրս ․ իսկ կանոնք ուղիղ կիրառութեան նոցին են, **1** զի ճարտասանն ընտրեսցէ զճշմարիտ և զարժանահաւատ վկայութիւնս, և մի՛ բնաւ յառաջ բերցէ զկասկածականս ․ **2** զի քաջայարմար իցեն ընդ առարկայի և նպատակի ճառին ․ ևս և տեղեաց , ժամանակաց , և այլոց պարագայից ․ **3** զի մի՛ կուտակեսցէ զայնս յաճախութեամբ 'ի ձանձրոյթ ունկնդրաց ․ այլ որչափ մարթ իցէ կարի համառօտութեամբ վճարեսցէ ․ **4** զի նախ յառաջ բերցէ զփաստս իրականս և մտաւորականս, և ապա զվկայութիւնս կամ զօրինակս ․ **5** զվկայութիւնս միայն 'ի մտավարժ ճառս 'ի մէջ բերցէ ․ և սակաւ ուրեք՝ 'ի կամաշարժս, բայց 'ի սրտաշարժս՝ ոչ երբէք ․ իսկ զօրինակս՝ 'ի կամաշարժ ճառս միայն, և ոչ երբէք յայլս ․ **6** 'ի յառաջբերութեան վկայութեանց և օրինակաց ընտրութիւն արասցէ խոհականութեամբ , չհանել յատեան զթեթևս , զռամկականս , և զգեղջկականս , այլ զծանրակշիռս և զբանադատիչս ․ զորս և պէսպէս ձևովք զարդարեսցէ ․ բայց առանց խարդախելոյ և թիւրաթեք ծամածռելոյ զայնս յօգուտ կողման և կարծեաց իւրոց ։

§ 217 ․ Փաստաբանութիւն (argumentatio) ․

Փաստաբանութիւն (որ կոչի ևս հաւաստաբանութիւն, ճշմարտաբանութիւն , ապացուցութիւն , հաստատութիւն , ևն), է ցեղ ինչ վերաբանութեան ․ յորում ճարտասանն զանբացայայտ իմաստ կամ գաղափար ինչ՝ ճշմարտէ միջնորդութ՟ այլոյ գաղափարի կամ իմաստի. կամ որ 'ի նոյն դառնայ, յորում զհամաձայնութի՟ մակածականին ընդ ենթակային՝ ստուգէ միջնորդութ՟ այլոյ իրիք մակածականի նոյն ենթակային. այնու դիտմամբ՝ զի 'ի միտս ունկնդրաց ծնանիցի համոզումն և ստուգուի զճշմարտութէ՟ հանգամանաց առարկային. օրինակի սակս՝ եթէ ունեք անըստոյգ երևոյթի իմաստս,, մարդն է մահկանացու,, և ինձ հարկ լիցի յերևան ածել զճշմարտութի՟ զորին, ստիպիմ որոնել զայլ ինչ հանգամանս ենթակային (մարդոյ)՝ որ կարող լինիցի վկայել թէ մահկանացութին արդարև պատշաճի մարդոյ իբրև սեպհական հանգամանք նորա. և գտանեմ զկենդանութին. զոր յառաջ ածեալ իբր զմիջնորդ և զերաշխաւոր՝ ասեմ. մարդն ճշմարտիւ է մահկանացու, վասն զի մարդն է կենդանի, և ամենայն կենդանիք երբ և իցէ մեռանին. և ահա այս խորհըրդածութի մտաց՝ յորում զանստոյգ կարծեցեալ հանգամանս՝ ճշմարտեմ միջնորդութ՟ այլոյ ստուգապոյն հանգամանաց՝ կոչի փաստաբանութի. յորում իբրու 'ի բոլոր մարմնի՝ հինգ ինչ են զանազանելի. այնք են. **1** իմաստ ինչ անստոյգ համարեալ, որ կարօտի ապացուցութե. և տիրապէս կոչի խնդրակ կամ խնդիր (thesis). **2** իմաստ ինչ ճշմարիտ՝ որ ածեալ լինի իբր վկայ և միջնորդ՝ առ 'ի ցուցանել զճշմարտութի կամ զստութի խնդրակին. և սովորաբար անուանի՝ փաստ, ազդ, հաւատալիք, ապացոյց (ratio, argumentum). **3** բաղադրեալն յերկոցունց, կամ բոլորեալ յարասութին. իմն զբոլոր ներգործութին մտաց և լեզուի. որ տիրապէս փաստաբանութի կամ ապացուցութի կոչի. **4** նիւթք փաստաբանութե. այնք են՝ վերոյիշեալ երկու իմաստք, խնդրակն և փաստն. և **5** կերպ փաստաբանութեան:

§ **218**. Խնդրակն՝ ոպ՟ ասացաւ՝ է իմաստ այնպիսի, որոյ ճշմարտութին առաջին տեսութ՟ ոչ երևի բացորոշ. որով և ոչ համոզէ զմիտս լսողաց 'ի հաւանութի, այլ պահանջէ զիմաստ, որ դդաղեալ ճշմարտութիւն կամ զստութիւն նորա 'ի յայտ բերցէ. բաժանի յայլևայլ դասս և 'ի կարգս՝ ըստ շտեմարանաց, ըստ նպատակաց, ըստ առարկայից, և ըստ այլոց տեսութեանց իմաստից. և իւրաքանչիւր 'ի նոցունց պահանջէ զիմաստ իւրեանն համապատշաճ. յօրինակի համար՝ մտաբանական իմաստք կամ խնդրակք՝ պահանջեն զիմաստ ճիշդ տրամաբանական սկզբամբք և օրինօք յօրինեալ. փորձառականք՝ զվկայութիւն նոյն իսկ ունկնդրաց կամ ծանօթից նոցա, և այլոց արժանահաւատ անձանց. պատմականք՝ զվկայութիւն 'ի պատմագրաց. տեսականք՝ զիրականս և զմտաւորականս. զործադրականք՝ զիմաստս առեալս 'ի կարելութենէ, 'ի հարկաւորութենէ, յօգտակարութենէ և յայլոց հանգամանաց գործոյն. ըստ այդց իմն և զայլոց. զի չէ հնար միօրինակ կանոնաւ կապաւորել զամենայն, այլ ամենայն ուրեք խոհեմութեան՝ վարժութեան և սրամտութեան ճարտասանին յանձն լինին իրքդ: Զխնդրակն՝ նախընթաց ճարտասանք կոչեցին՝ խնդիր (որ յաւէտ զեկրայեալ ներգործութիւն նշանակէ իբր աներևոյթ բայ, խնդրել, խնդրումն), այլ և՝ հանդէս. զոր և բաժանեցին յայլևայլ տեսակս. որ է տեսանել 'ի գիրս նոցա:

§ 219. **Փ**աստն է ստուգապէս ճշմարիտ իմաստ, զոր ամենայն ոք այնպիսի ճանաչէ և ընդունի առանց նոր փաստ պահանջելոյ զճշմարտութիւն նորա. որ և ոչ միայն տրամաբանական պատճառաւորութեամբ զմիտս բռնադատէ 'ի հաւանել իւրեան՝ զօրութեամբ ակներև ճշմարտութեան իւրոյ, այլ և նովին զօրութեամբ 'ի յայտ ածէ զճշմարտութիւն կամ զստութիւն այլոց իմաստից. այդպիսի են պէսպէս բանք 'ի չափաբերութեան, 'ի բնաբանութեան, յաստուածաբանութեան, և յայլ գիտութիւնս և յարհեստս. որպէս՝ թէ բոլորն մեծ է քան զմասն. հանգամանք սեռին՝ պատշաճին նա և տեսակաց նոցին, չի՛ք գործ առանց պատճառի. ևն:

Փաստք ըստ աղբերացն՝ յորոց քաղեալ լինին, բաժանին 'ի չորս դասս. որք են, իրականք, մտաւորականք, փորձառականք, և տարասեռք:

Իրական փաստք են ընտանի և ներքին հանգամանք նոյն իսկ առարկային՝ զորմէ կազմեալ է խնդրականն. որք 'ի սակս անլոյծ ընդ իրեարս յօդակապութեանն՝ անվանելի պաշտպան և փաստաբան են միմեանց, նոյն և անհաշտ թշնամի օտարաց. այնպէս՝ զի եթէ ոք յինքեանց 'ի վտանգ անկանիցի կամ յատեան քննութեան կոչեսցի, ընկերք ամենայն խուռն գրոհ տան յազատել զնա. և եթէ օտար ոք 'ի խումբս նոցա 'ի ներքս վազեսցէ՝ երամովին 'ի վերայ յորձակին արտաքսել զնա. առ օրինակի՝ եթէ գոյութիւն Աստուծոյ յորոգայթ երկբայութեան անկանիցի առ ումեք, եթէ գո՞յ արդեօք Աստուած, ընկերք նորա՝ արարչութիւնք և ներգործութիւնք Աստուծոյ 'ի մէջ անցեալ միաձայն վկայեն „ արդարև գոյ Աստուած, վասն զի գոն արարածք աստուածավայելք. և ուր գործք կան՝ հարկաւ լինել պիտի և պատճառ. զի և մտածել անգամ անմարթ է զգործ անպատճառ. նոյնպէս եթէ ոք յարբշռաց հաստատել կամիցի, թէ արբեցութիւն է բարի, զի ուրախ առնէ զսիրտ մարդոյ, անդ 'ի ներքս վազել՝ բաց 'ի բազմաց՝ միւս գործք կամ պտուղք արբեցութեան, վանեն զայդ օտար հանգամանս. վկայութիւն եղեալ՝ թէ արբեցութիւն չար է և վնասակար, վասն զի խաւարէ զմիտս, վնասէ առողջութեան, վատնէ զինչս, և 'ի ներքս թափէ զամենայն թշուառութիւնս. ըստ դոցուն օրինակի զինուորեն և այլ հանգամանք վասն միմեանց: Սեռք և ցեղք իրական փաստից այնչափ են՝ որչափ ներքին հանգամանաց միոյ էակի, զորս ցուցեալ եմք վերագոյն. յորոց և թէպէտ դիւրին է ամենեցուն առնուլ և վարել զայնս 'ի ձև փաստից, սակայն 'ի պէտս տկարաց՝ յաւելցուք և զայլ օրինակս: Արդ՝ փաստ լինի, 1 զինչութիւն և սահման առարկային. ոպ՟, այս առաջակայ ձև է բոլորակ, վասն զի ամենայն շառաւիղք սորին հաւասար են իրերաց. և այդ իսկ կացուցանէ զէութիւն բոլորակի. 2 նիւթն, ոպ՟ „ Աստուած է անմահ, վասն զի ազատ է 'ի նիւթոյ և 'ի մարմնոյ. 3 կերպն „ նորածին մանուկդ այդ է ճշմարիտ մարդ, վասն զի ունի զբանական հոգի. 4 ենթակայն„ դիւրաթառամ է գեղեցկութիւն, վասն զի մարմին մարդոյ անկեալ կայ ընդ բնաւ փոփոխութեամբ... ոչ յերկար տևեսցէ այն ինչ բարեկամութիւն, զի հիմնեալ կայ յաւազի անձնասիրութեան. 5 պատճառն և գործն. որոց օրինակք երևին 'ի վերոյ. 6 նպատակն կամ վախճանն. օր„ ոչ վարձատրեսցէ Աստուած պահոց քոց. զի 'ի փառս մարդկան և ոչ Աստուծոյ՝ պահես. 7 առարկայն. օր„ այլ ամենայն գիտելիք ստորադաս են քան զաստուածաբանութիւն. զի սա զԱստուծոյ ճառէ, իսկ նոքա զարարածոց նորա. 8 բոլորն և մասունք. օր„ արշակայ՝ վասն զի ցաւին աչք, ականջք, ձեռք, ոտք, ևն. ամենայն մարմինն ցաւի. 9 սեռն՝ ցեղն՝ և անհատն. օր„ խոնարհութիւն վարձատրի յԱստուծոյ, վասն զի է առաքինութիւն. և ամենայն առաքինութիւնք վարձուց են արժանի.... աշոտ է մահկանացու, վասն զի մարդ է. և ամենայն մարդիկ նոյնպէս են։ Ըստ այդոցիկ իմա և զայլոց հանգամանաց լուսաբանչելոյ։

§ **220**. Մտաւոր փաստն՝ (a priori) է իմաստ ստեղծեալ 'ի նոյն իսկ յիմացական զօրութենէ մտաց՝ ըստ նորայն անփոփոխ օրինաց դատելոյ և ինքնագիտութեան. և զատանի 'ի տեսական և 'ի գործական. իսկ տեսականն դարձեալ 'ի կերպական և 'ի նիւթական։ Զկերպական սկզբնաւորս ուսուցանեն տրամաբանք, առ որս հաշակաւոր են սոքին. 1 որ և իցէ էակ 'ի հանգամանաց բաղադրի և ընդ նոսա միշտ հաւասարի. և հանգամանք համօրէն գումարեալք՝ բոլորն զէակն հաւասարապէս. զի բոլորն հաւասար է մասանց իւրոց, և մասունք խմբովին առեալք՝ հաւասար են բոլորոյ իւրեանց. յայս սկզբնաւոր հիմնի ապացուցութիւն ճարտասանից 'ի սահմանէ կամ 'ի զինչութենէ էակին. յորում յառաջ բերեն գոյացական հանգամանք իւրն. 2 որ և իցէ էակ բաղադրի 'ի համաձայն հանգամանաց միայն, և ոչ երբէք 'ի հակառակաց. վասն որոյ յերկուց ներհական կամ հակասակայն հանգամանաց՝ հարկաւ մին պարտի համաձայնիլ և ընծայիլ էակին, և միւսն բացասիլ․ յայս կանոն հիմնի ապացուցութե՟ն 'ի յեղական հանգամանաց, 'ի նմանուէ՟, 'ի բաղդատուէ՟, 'ի հակադրուէ՟, և յայլոց ոմանց․ 3 յընտրելն զմին յերկուց հակասական հանգամանաց՝ միտքըն հարկաւ և միշտ ունի զխաստ բաւական․ որ ստիպէ զնա զմին 'ի հանգամանաց նախամեծար ընտրել քան զմիւսն, և ընծայել զայն էակին․ 4 'ի հանգամանաց անտի՝ որք զէակն բաղադրեն, ոմանք հարկաւ ունին զբան նիւթոյ, և ոմանք՝ զբան ներքին (գոյացական) և արտաքին (յեղափոխական) կերպի․ առանց որոց ոչ ինչ էակ մարթէ գոյաւորիլ․ յայս կանոն հիմնի ապացուցութե՟ն 'ի նախընթաց, 'ի զուգընթաց և 'ի հետևորդ պարագայից, ևս և 'ի նիւթոյ, 'ի կերպէ, և՟ն․ 5 որ և իցէ էակ հարկաւորապէս ունի զկապակցութի՟ և զառնչութի՟ ինչ ընդ այլում էակի, կամ իբր պատճառ և գործ, կամ իբր բոլոր և մասն, կամ իբր հանրական և եզական, կամ իբր վախճան և միջոց, և կամ այլ ինչ այդպիսի, և՟ն։ Զնիւթական սկզբնաւորս առնուլ պարտ է 'ի բնագանցական գիտուէ՟, և այն հազիւ ուրեք․ զի սակաւ է կիրառութի՟ նոցա 'ի հասարակ ճառաբանուե՟․ նոյնպէս և զգործական սկզբնաւորս գտցեն՝ որ կամիցին առ բարոյագէտս․ զի նոցա անկանի ընդարձակ աւանդել զայնս ըստ պէսպէս նրբութեանց և մանրամասն պարագայից։

§ **221**․ Փորձառական փաստիք (a posteriori) իմացեալ լինին ամենայն հմտութի՟ք և իմաստք՝ զորս միտքն կերպաւորէ սպասաւորութ՟ և վկայութ՟ ներքին և արտաքին զգայարանաց․ փորձառութ՟ք, ներգործութ՟ք, կրելութ՟ք, դիտողութ՟ք, զննողութ՟ք, և՟ն․ ըստ այսմ սոյա վկայութ՟ գիտեմք թէ հուրն այրէ, ձիւնն ցրտացուցանէ, կենդանիք շարժին, և՟ն․ միայն՝ չէ արժան միշտ և անխտիր հաւատալ ցուցման նոցա, զի և ուրեք խաբեն զմեզ․ ո՞չ աչք ցուցանեն արեգական յածիլ զերկրաւ, այլ աստեղաբաշխք զհակառակն հաստատեն · վասն որոյ 'ի կիրառութ այսպիսեաց՝ պարտ է պահել զկանոնսն, որք աւանդին 'ի տրամաբանութ և 'ի հոգեբանութ ։

§ **222** · Տարասեռ փաստ կոչին ամենայն իմաստք՝ զորս միտքն ընդունի ոչ յիւրմէ և ոչ յառարկայէն, այլ արտաքոյ երկոցունցդ՝ յօտարէ ումեմնէ · այսպիսի են հաւանականութի, ճշմարտանմանութի, բարոյական վարք, ձայնիւ և գրով տուեալ վկայութիք այլոց՝ զառարկայէն (ընդ որով իմանին և բանք սուրբ գրոց 'ի սկէտս քարոզչաց) · գործով տուեալ օրինակք կամ ներգործութիք, կիրառութիք և փորձառութիք այլոց՝ յօգուտ կամ 'ի վնաս առարկայի ճառին · սոտւլ՝ անհնարութի և անմիտշաճութի ներհական կարծեաց · օրէնք՝ կանոնք և սահմանադրութիք զառարկայէն · նմանն՝ համեմատն՝ պատկերն, առնչակիցք, ներհականք · հակասական հետևանք յայլոց ճշմարտութեց կամ 'ի ներհական կարծեաց ելուցեալք · օգուտն ճշմարտութ · վնասն մոլորութ, ևն · որք թէպէտ արտաքոյ են առարկային և դատող անձին, սակայն բաւական վկայութի տան մտաց՝ առ 'ի հաւանել կամ չհաւանել ճշմարտութ խնդրականին ։ Նոքա սա վերածին և ամենայն փաստք 'ի մակածութէ, 'ի հանգիտաբանութէ, 'ի պայմանաբանութէ, և յայլոց ցեղից հետևաբանութեց առեալք · Եւ և ամենայն փաստք 'ի սրտազգած և 'ի կամագրգիռ վերաբանութեց ելուցեալք · քան զի և ճգունք հոգւոյ, զգածմունք սրտի, կիրք և յօժարութիք կամաց, և այլ պէսպէս շարժմունք զգածողական և բաղձողական կարողութեց իբրու զօրաւոր փաստք շարժեն զմիտ 'ի հաւանել կամ 'ի չհաւանել իմիք · ըստ որում յայտնի է փորձիւ՝ թէ սիրողն ամենայնի հաւատայ, իսկ ատեցողն ամենայնի չհաւատայ ։ Ուրեք ևս փաստ և զէն լինին կարծիք ունկնդրաց և հակառակորդաց · զորս թէպէտ ինքն ճառողն ոչ ընդունի, բայց յընդունելութէ նոցա առնու և ընդդէմ նոցա ախոյեան հանէ ։

§ 223 . Ներքին փաստաբանութիւն՝ եղեալ կայ յայսմ, զի փաստն նկատմամբ առ խնդրականն իցէ նախադաս պատճառ և պայման գոյութեան կամ գործողութեան նորա . և խընդրականն կոչեալ իցէ զնմանէ ըստ գոլոյ կամ ըստ գործելոյ . զի յայս իսկ հիմն իսկութեան փաստի իբրու մտաւորական պատճառի . և այդու աղագաւ յարտաքին խօսս բացատրի պատճառական շաղկապօքս , զի , վասն , յաղագս . ըստ որում յամենայն փաստաբանութեան՝ խընդրականն իբր գործ դնի , և պատճառն որոնի . նա օր. թէ տարակուսեալ վիճաբանող հետազօտէ հարցական մակբայիւք ,, մարդն վասն է՞ր է մահկանացու ,, իսկ փաստն իբրու ջատագով դատին պատասխանէ պատճառական շաղկապօք ,, վասն զի մարդն է կենդանի , և մարմին ունի ապականացու ,, յորում զայս կամի ասել՝ թէ կենդանի լինելն և ապականացու մարմին ունելն մարդոյ՝ է պատճառ , որում և յօրմէ իբրու գործ և պտուղ հետևի մահկանացու լինել նորա . ըստ այդմ օրինակի իմա և յայլ ամենայն դէպս . միայն զգոյշ լինել պարտ է՝ զի փաստն իցէ ճշմարիտ պատճառ խնդրակին , և առ ճշմարիտ գործ նորա . այլով բանիւ՝ զի կապակցութիւն ընդ մէջ փաստին և խնդրակին հարազատ և իրական իցէ . զի փաստն արդեամբք հոսեսցէ 'ի խընդրակն , և զի ոչ անլուծ շաղկապեալ և բղխեալ իցէ 'ի նմանէ . զի յոլով ուրեք ընթեռնումք և լսեմք բանս փաստաւորս, յորս կարի անյարմար՝ թերի և սուտ են պատճառքն . օր. եթէ ոք ասէ . քրիստոնեայն արժանանայ արքայութեան Աստուծոյ , վասն զի մկրտեալ և հաւատացեալ է յԵրրորդութիւնն . անկատար և սխալ խօսի . քանզի մկրտութիւն և հաւատք չեն բաւական պատճառ առ այդ գործ , այլ պիտոյ և բարի գործք ընդ շնորհացն Աստուծոյ . նոյնպէս եթէ ասես ,, Աշոտ աստուածաբան և փիլիսոփայ է , վասն զի զամս տասն լուաւ դասս գիտութեանց 'ի ճեմարանս , կարի թիւր փաստաբանես . զի լոկ դասառութիւն ոչ պատճառէ զայնպիսի գործ, այլ բազում և այլ ինչ պահանջի․ զայս յատկութիւն մարթ է կոչել՝ ճշմարտութիւն փաստի կամ փաստաբանութեան․ որում դիմադրի ստութիւն թիւրութիւն և անկատարութիւն նորա, ոչ երևի յօրինակող։ ՚Ի ճշմարտութենէ աստի ծնանի և յաղթահարել կամ ըմբերանելն փաստից զմիտս ունկնդրաց առ ՚ի հաւանել ճշմարտութեան խնդրականին․ զի փաստք լուսով ճշմարտութեան իւրեանց բռնադատեն զունկնդիրս տեսանել և ճանաչել զհամաձայնութիւն հանգամանաց ընդ էակին․ և ոչ զանազան են փաստք սեռի և ցեղի, նոյնպէս և զանազան է աստիճան ուժեղութեան և բռնադատիչ զօրութեան նոցա․ ըստ որոյ և զանազանին աստիճանք հաւանութեան ՚ի միտս ունկնդրաց․ զի ոմանք ՚ի փաստից՝ մանաւանդ իրականք և մտաւորականք՝ պատճառեն զգիտութիւն․ այլք զհամոզումն եթ․ կէսք զճշմարտանմանութիւն կամ զարժանահաւատութիւն․ ոմանք զկարծիս կամ զկասկած․ և այլք՝ զայլ ինչ․ զորոց և չէ հնար բացորոշակի սահմանել․ զի զօրեղութիւն նոցա կախի ոչ միայն զճարտարութենէ ճարտասանին ՚ի կազմելն և ՚ի դասելն զնոսա, այլ և զընդունակութենէ և զպատրաստութենէ ունկնդրաց․ զի նոյն մի փաստ այլազգ ազդէ զիմաստունս և այլազգ զռամիկս, այլազգ զառաքինիս և այլազգ զմոլիս․ այլազգ զայր՝ զչափահասակ՝ զհարուստս, և այլազգ զկանայս զմանկունս և զաղքատս․ Թող և զայլ բիւր պարագայս նոյն իսկ առարկային կամ տեղեաց և ժամանակաց, այլովք հանդերձ․ որոց սակս աւանդեմք ստորև կանոնս ինչ զգուշարարս։

Յասացելոցդ ակներև տեսանի, թէ ճշմարտութիւն և բացայայտութիւն են երկու իսկական հանգամանք որ և իցէ փաստից․ առանց որոց նանրանայ ամենայն զօրութիւն նոցա․ և թէ հարկ է ճարտասանից մեծապէս պատկառ կալ իրացդ յիւր և յայլոց բանս, և ընտրել զճշմարիտն ՚ի լոկ ճշմարտանմանէն․ և որ ՚ի դոյնս հային։

§ 224․ Փաստաբան ներգործութիւն մտաց իբր բոլոր ինչ նկատեալ՝ քաջ ՚ի դէպ նմանի փորձառական գոր ծողուե՟ ոսկերչաց․ զի ոպ՟ սոքա յերկբայելն զհարազատութէ ոսկւոյ քննեն զայն ՚ի վերայ բացորոշ ինչ քարի, նոյնպէս և միտքն զկասկածաւոր խնդրականն մերձեցուցանէ ՚ի վստահ իբրու ՚ի փորձաքար, առ ՚ի յայտ ածելոյ զճշմարտութի և զստութի նորա (ըստ որում և լատինք զայս գործ մտաց կոչեն փորձել probare, և յանդիմանել argumentari)․ բաժանի փաստաբանութի յայլևայլ ցեղս՝ ըստ զանազան տեսութեց մտաց, և

1 Ըստ ցեղից խնդրակին բաժանի ՚ի մտաւորական, ՚ի քննողական, ՚ի փորձառական, ՚ի տեսական, ՚ի գործադրական, և յայլ սոյնպիսիս․ զորս մեկնել եմք այլուր։

2 Ըստ պէսպիսութե յառաջածելոյ փաստից՝ բաժանի ոպ՟ ասացաւ՝ յիրական, ՚ի մտաւորական, ՚ի փորձառական, և ՚ի տարասեռ, առ որ բաց յայլոց վերածելին (ոպ՟ ասացաւ) անպատշաճութի և անհնարութի իմաստից դիմադրելոյ խնդրակին․ ըստ այսմ առ ՚ի հաստատել զշրջայածութի երկրի զարեգակամբ՝ յառաջ բերել անտեղութի ներհական կարծեաց․ որ համարի զմեծամեծ լուսաւորս յածել զերկրաւ անըմբռնելի արագութեամբ։

3 Ըստ ներքին կերպաւորութեն բաժանի ՚ի ճշմարիտ և ՚ի սուտ․ նոյնպէս և ըստ համոզական զօրութեն բաժանի ՚ի գիտնական՝ որ զգիտութի պատճառէ յունկնդիրս․ ՚ի համոզական՝ որոյ զօրութի նուազ է քան զգիտութի․ ՚ի հաւանական․ ՚ի կարծիքական․ և ՚ի կասկածական, ևս և ըստ նոյն ազդողական զօրութեն բաժանի ՚ի հանրական՝ որ յամենայն ունկնդիրս ազդէ զհաւանութի․ և ՚ի մասնական՝ որ զոմանս միայն շատացուցանէ ՚ի հաւանութի ճշմարտութեն։ Արժան է յուշի պահել, զի՝ թէ գիտութին ծնանի յիրական և ՚ի մտաւորական փաստից․ իսկ համոզումն՝ ՚ի փորձառական և ՚ի տարասեռ փաստից․ միւս ևս՝ թէ ճշմարիտ և սուտ փաստն կամ իրօք այնպիսի է, կամ ըստ կարծեօք և մոլորութ․ և երկոքին ևս՝ կամ առ ամենայն մարդիկ այնպիսի են, կամ առ ոմանս եթ․ ոպ՟ բազում իմաստք և փաստք իրօք ստոյգք՝ առ կա

պաշտօն՝ ճշմարիտ համարին, իսկ առ քրիստոնեայս՝ ստոյ սուտք. այդմ հակառակ՝ ճշմարիտ իմաստք աւետարանին՝ առ քրիստոնեայս միայն այնպիսի համարին, իսկ անհաւատից սուտ և մոլորական. Են ևս՝ որք ամենայն ազգաց և ազանց երևին ճշմարիտ կամ սուտ:

Յասացելոյդ յայտյանդիման իմացեալ լինի, թէ վերջին նպատակ՝ յաղթանակ և պտուղ ամենայն փաստաբանութեց՝ մի ինչ է միայն. հաւանեցուցանել մտաց ունկնդրաց զճշմարտութ̅ի կամ զստութ̅ի խնդրակին. կամ՝ համոզել և տարհամոզել զնոսա առ 'ի հաւանել, առ 'ի զգածել, և առ 'ի գործադրել զպաշտօն ինչ բարոյական. որով և հաւանութ̅ի և համոզումն բաժանին յերիս ցեղս. 'ի մտաւորական՝ յորում հոգին 'ի համանուն փաստից շարժի յընդունել և 'ի յանձն առնուլ ինչ. 'ի զգեցական՝ յորում 'ի պատճառս քաղցր և դառն զգածմանց, կամ 'ի սակս գեղեցկութ̅ե և տգեղութ̅ե առարկային ածի հոգին 'ի համոզումն. և 'ի բարոյական՝ յորում բարութիւն և չարութիւն առարկային առնէ 'ի հոգւոջ զհաւանութ̅ի. և ճարտասանից հարկ է ճանաչել զազդերս՝ զառիթս՝ զտեղիս և զժամանակս կիրառութեան իւրաքանչիւրոյդ:

§ **225**. Կարևոր կանոնք՝ որոց պարտին ճարտասանք պատկառ կալ 'ի փաստաբանութեան, բովանդակին 'ի յետագայդ. **1** մի՛ յառաջ բերցին փաստք տկարք՝ անյարմարք՝ կեղծահնարք՝ անընդունելիք, կամ որք չունին զճիշդ կապակցութ̅ի ընդ խնդրակին. և մի՛ իբր ճշմարիտ ենթադրեսցին այդպիսի սնոտի շաղփաղփութիւնք. ո՞չ եթէ առ 'ի ցուցանել զօրինաւորութ̅ի զերկիւղածութ̅ե բողոքեսցէ ոք յօգուտ վաճառողաց և գնողաց, 'ի նանիր շաղակրատէ. զի օգտակարութ̅ի զանօրէնութ̅ի ոչ փոխէ յօրինաւորութ̅ի. զայսպիսի թերութիւն տրամաբանք կոչեն՝ զեղծումն սկզբան, սուտ վարկած, և խաբէութ̅ի միջնորդ եզեր. **2** մի՛ այլայլեսցի իմաստ խնդրակին. և մի՛ այլ ինչ դիցի իբր ցուցանելի՝ քան զոր խնդրակ

Նշանակէ. կամ ըստ տրամաբանից՝ մի՛ տգիտասցի խնդրին և մի՛ փոփոխեսցի պայման խնդրոյն. որպէս եթէ ոք յապացուցանել զգոյութիւն ուրուական ցնորից և տեսլեանց՝ զայն առնուցու 'ի փաստ, թէ այս ոք և այն տեսեալ իցէ զայնպիսիս. զի ոչ եթէ սորա և նորա տեսանելն խնդրի, այլ այն՝ թէ այնպիսի անսովոր երևոյթք էին արդեօք ճշմարիտ ցնորք կամ տեսիլք. 3 խնդրակ և փաստ մի՛ փոփոխ շրջանակեսցին առ 'ի ճշմարտել կամ 'ի ստել զիրեարս. որպէս եթէ ոք ասասցէ ,, ստոյգ են բանք սուրբ գրոց, վասն զի յԱստուծոյ են յայտնեալ... ստոյգ է յայտնութիւն Աստուծոյ, վասն զի այդպէս վկայեն սուրբ գիրք. 4 յառաջ բերցին մերձաւոր և անմիջական փաստք, և մի՛ զմօտաւորս թողեալ՝ 'ի հեռաւորս լիցի ընդոստ թռանել. իբրու որ ասիցէ, բարի գործք հեթանոսաց մոլութիւնք են, վասն զի ոչ են քրիստոնեից. զի կարի հեռաւոր է փաստդ, և գոն 'ի միջի այլ բազումք առ խնդրակն հպաւորագոյնք. 5 խնդրակ և փաստ համաչափ իցեն ըստ տարածութեան. կամ այլով ոճով, ճշմարտող զօրութիւն փաստին մի՛ լինիցի ոչ առաւել և ոչ նուազ՝ քան որչափ ինչ պահանջէ խնդրակն. ըստ այսմ եթէ ոք զԱստուածութիւն Քրիստոսի ապացուցանել կամիցի լոկ 'ի հրաշագործութենէ նորա, առաւել ինչ ասէ. զի յայնմանէ զհետ գայր՝ նա և մովսեսի կամ այլոց հրաշագործ սրբոց ընծայել զԱստուածութիւն. Իսկ եթէ ոք զնոյն բան հաստատել կամիցի լոկ 'ի սրբութենէ վարուց նորա, պակասութեամբ մեղանչէ. զի անբաւական է փաստդ առ ճշմարտելոյ զԱստուածութիւն. 6 ծանիցէ ճարտասանն զորպիսութիւն խնդրակին՝ և ըստ պիտոյից խորհեսցի. զի են խնդրակք՝ որք անկարօտ են ապացուցութեան. որպէս համարին ոչ այնք միայն՝ որք անապացուցանելի կոչին. այլ և որք աստ և այժմ ընկալեալ են յունկնդրաց. և ոչ ոք 'ի նոցանէ կամ սակաւք լիցեն յերկբայութեան. վասն որոյ և բառնի ամենայն հարկ ապացուցութեան. դարձեալ են խնդրակք՝ որք զօրէն բոլորամաշ կապերտի բնաւ չհամբերին կարկատանաց, այլ չորաչոր ևս պատառոտին· զորս և լաւագոյն է չհանել խայտառ յատեան, քան զինքն և զդաս իւր ամօթալի առնել· ապա միայն ասել՝ թէ այն խնդրակք միայն կարօտին ապացուցութեան, որք զմիջին վայրն ունին ընդ մէջ երկոցունց· զորս և հարկաւ պարտ է ճշմարտել· զի եթէ միտք ոչ յապահովեսցին ճշմարտութեան տարակուսին՝ անհնար է թէ կամք սիրեսցեն զնա և շարժեսցին 'ի ստացումն նորին· 7 'ի յառաջբերութեան փաստից կարգաւ զետեղեսցէ զնոսա Ճարտասանն· Նախ զմտաւորականս, երկրորդ զորտաղղածս, և ապա զկամաշարժս դասելով· և մի խառնափնդոր խոկեսցէ զնոսա կէս մի 'ի նոյունց և կէս մի 'ի սոյունց կարկատելով, յետեւյառաջ շփոթելով, կամ զնոյնն բազում անգամ կրկնելով· 8 սկիզբն արասցէ 'ի սակաւազօրաց և հետզհետէ զհզօրագոյնս յաւելցէ· կամ թէ զնոսա յերկուս ծայրս, իսկ զնոսա 'ի միջավայրն կարգեսցէ· զի ընդ հովանեաւ սոցա՝ և նոքա ապրեսցին· ապա եթէ բնաւքն անզօր իցեն՝ զթիւսն բարդեսցէ· զի թէ ոչ զօրութեամբ՝ գոնէ բազմութեամբ և ամբոխիւ վճարեսցեն ինչ· 9 ասացաք այլուր թէ միտ դիցէ Ճարտասանն աստիճանաց վարժութեան ունկնդրաց՝ և ըստ այնմ յարմարեսցէ զփաստս· ով թէ մանկանց՝ զկաթն, իսկ չափահասից զհաստատուն կերակուր ջամբելով· 10 այլ և այլ կերպարանօք և զարդուք պէսպիսացուսցէ զփաստս, զի մի նոյնատեսիլ յօրինուած միակերպութեան նոցին տաղտկացուսցէ զունկնդիրս· 11 փաստք թէպէտ զէն և նետ են, բայց և կարօտին սրելոյ· և 'ի դիպաց կորովեաց խնդրեն զօգնութիւն· վասն որոյ Ճարտասանն յեռանեսցէ զսայր նոցա՝ ընդարձակելով զայնս, և պէսպէս հանդամանաց յարադրութեամբ վառելով զզօրութիւն նոցին· 12 զդէմս և զգնացս սլաքին շեշտակի ուղղեսցէ յունկնդիրս իբրու 'ի նպատակս· և մի ըստ տխմար նետաձգաց զօդս հարկանիցէ· 13 ըստ մարթելոյ յամենայն փաստից ելուղանիցէ զհետևութիւնս գործականս, և յանկեսցէ յունկնդիրս, ուսուցանելով նոցա և զեղանակ գործադրութեան նոցին. 14 ոչ միայն զխնդրակն փաստիւք հաստատեսցէ, այլ և զթշնամիս նորա հերքեսցէ և զզօրութիւն նոցա եղծանիցէ, զորմէ ասացի ընդ հուպ. 15 եթէ խնդրակն իցէ իմաստ ճանաչելի միայն, շատասցի հաստատել զայն մտաւոր փաստիւք ևեթ. ապա թէ իցէ գործադրելի ինչ, բաց 'ի մտաւորականացն՝ յաւելցէ նա և զփաստս սըրտազգածս և կամաշարժս. 16 եթէ առ 'ի ճշմարտել զխնդրակ ինչ՝ առ ձեռն կայցեն նմա բազմութիւն և բազմացեղ փաստք, ընտրութիւն արասցէ 'ի միջի նոցա՝ ըստ զօրութեան՝ ըստ հպատակութեան՝ ըստ բացայայտութեան և ըստ այլ պարագայից և թուոյ նոցա. այնպէս զի ունկնդիրք ոչ սուաղեալ մնասցեն և ոչ կարի յափրասցին. այլ շատացեալ և շինեալ մեկնեսցին 'ի նմանէ գոհութիւն. 17 անջինջ տպաւորեսցէ ճարտասանն զայս խրատ 'ի մտի իւրում, թէ առ 'ի շարժել զունկնդիրս յիրագործութիւն՝ չէ բաւական դնել զխնդրակն, և յաւելուլ յայն զփաստս ևս և զբռնադատիչս. այլ բաց յայդմանէ յամենայն դէպս հարկաւ պահանջի, զի կորովութիւն յօդակապութեան դոցա ընդ իրեարս՝ պարզիմաց և ակներև բացայայտեսցի. այն ինքն է՝ զի յայտյանդիման լուսաբանեսցի թէ փաստն արդարև է իբրու մտաւոր պատճառ արարչական, որ արդեամբք հոսէ զխնդրակն իբր ըղգործ, և թէ՝ խնդրակն ճշմարտիւ իբրու պտուղ ծնանի և յառաջագայի 'ի փաստէն. զի յայդմ հիման վերայ խարսխի համօրէն զօրութիւն և բռնադատութիւն փաստաբանութեան, և այդ իսկ է անուանեալն ոյժ և ժիլ փաստից.

§ 226. Հերքումն (refutatio).

Հերքել (որ և եղծանել, ջրել, ստել, մերժել) առ ճարտասանս նշանակէ հալածել 'ի մտաց ունկնդրաց ; զամ խոչ և խութ, որք խափան լինին նոցա հաւանել ճըշմարտութեան բնաբանին և փաստից, սա երկրորդ մասն է փաստաբան պաշտաման ճարտասանին. որում անկ է ոչ միայն զիւր բնաբանն ապացուցանել, այլ և զթշնամիս նորա տապալել. առանց որոյ միտք ունկնդրաց միշտ կաղ 'ի կաղ գայթագղին յընդունիլ զճշմարտութին, և կամք նոցա ոչ շարժի հզօրեղապէս առ արդիւնաւորք 'ի գործ դնելոյ զբարին: Արդ ամենայն խոչընդոտք 'ի միտս ունկնդրաց՝ ճշմարտութե ճարտասանին ներհակեալք՝ վերածին 'ի չորս կարգս. որք են, մոլորութիւն, ստութի, երկբայութի, և տարակութի:

Զմոլորութին բազումք շփոթեն ընդ ստութե. բայց ցուցաք 'ի վերոյ՝ թէ ուղղութի և թիւրութիւն կամ որ նոյն է՝ մոլորութի՝ ընծայի դատողական անցաւոր ներգործութե մտաց, երբ նա 'ի կազմել անդ զիմաստս՝ պահէ կամ չպահէ զկանոնս 'ի սակս ուղղադատութեան սահմանեալս. իսկ ճշմարտութի և ստութի պատշաճի իմաստից, որք են իմացական պտուղք և գործածք մտաց. վասն որոյ աստանօր զմոլորութե յայս միտս առելոյ՝ չունիմք զայլ ինչ յաւելուլ, բայց եթէ զայս միայն՝ զի թէ ուրեք երբէք դէպ լինի ճարտասանից նշմարել զթիւր եղանակ դատողութե յունկնդիրս, ուղղեսցէ զայն ըստ կանոնաց վերագոյն 'ի մէնջ աւանդելոյ:

§ 227. Սուտ և խաբէական կոչի իմաստն՝ որ ճշմարիտ համարեալ լինի 'ի մտաց կազմողին կամ ստացողին, բայց իրօք ոչ է այնպիսի. զի այլազան և հակառակ է նախատիպ առարկայի իւրում. ոպ եթէ դատեսցես՝ աշոտոյ լինել ագահ և արբեցող, և նա արդեամբք չիցէ այնպիսի, իմաստ մտացդ սուտ է. թէպէտ ճշմարիտ համարեալ 'ի քէն. յայսմանէ յայտնի երեւի՝ թէ առ ստութի երկու ինչ պահանջի հարկաւ. հակառակութի իմաստից ընդ առարկայի նոցա, և պատրուակեալ ճշմարտութի անդր. որ լոկով կերպարանաւ միայն խաբէ զմիտս. և յերկոսին իսկ մեղաւոր է միտքն կրկնակի. մի՝ զի անուշադրութե և առանց բաւական փաստից զհանգամանս արբեցութե և ագահութե էած թափեաց 'ի գլուխ անմեղն աշտոյ. և միւս՝ զի ռամկաց վճռաքննութեան ուղիղ և ճշմարիտ համարի զայդ թիւր դատաստան և զհամոզութիւն իւր:

Պատճառք և աղիթք խաբէութեան, նոյնպէս և դեղք բժշկութեան նոցա՝ բազում են և զանազան. զորոց մանրամասն ճառէ տրամաբանութիւն. վասն որոյ անդր առաքեալ զընթերցողս 'ի տեսանել՝ շատանամք աստէն յառաջ բերել զպէսպէս ցեղս նոցա, և զեղանակն եղծանելոյ զնոսին ըստ ճարտասանից:

Արդ ստութիւնք բաժանին, 1 յարմատականս՝ որ մայր և ծնող լինին այլոց բազում խաբէութեանց, և յածանցականս, որք յարմատականաց բղխեն և զայլս ոչ ծնանին. զինչութիւն սոցա յայտնի է և անկարօտ բացատրութեան: 2 ըստ ցեղից իմաստից բաժանին 'ի տեսականս և 'ի գործականս. և երկոքին դարձեալ 'ի յոլով ճիւղս և յառաջս ըստ առարկայից և նպատակաց և այլոց պարագայից. որպէս տեսականք՝ 'ի նիւթս հաւատոյ՝ գիտութեանց՝ և արհեստից. և գործականք՝ 'ի նիւթս բարուց՝ կրօնի՝ ծխից՝ քաղաքավարութեան՝ տնտեսութեան և այլոց բազմաց. 3 բաժանին 'ի կերպական և յիրական. կերպականն հիմնի 'ի նոյն իսկ 'ի ներգործութիւն մտաց, որ ոչ միայն թիւր գաղափարէ և վճռադատէ, այլ և ուրուական առերևոյթ փաստիւք համոզի և հաւանի դատողութեան իւրում. իսկ իրականն յայս հիմնի՝ զի միտքն նոյն համարի կամ նոյնացուցանէ զգաղափարականն ընդ առարկականին. ընծայելով առարկային զայնպիսի հանգամանս՝ որք արդեամբք բնաւ ոչ գտանին 'ի նմա, այլ լոկ 'ի մտաց կեղծին իբր գոյաւորք յիրս անդ. ըստ այսմ ռամիկն պատրանօք աչաց և երևակայութեան խաբեալ՝ ընծայէ արեգական պարայածիլ զերկրաւ, կամ ելանել յարևելից և մտանել յարևմուտս. զորս չունի նա. 4 ըստ սկզբանցն՝ յորոց բղխեն խաբէութիւնք, բաժանին 'ի պակասականս և 'ի դրականս. պակասականն է տգիտութիւն փաստից զճշմարտութիւն կամ զստութիւն բացայայտողայ • զոր չէ պարտ շփոթել ընդ տգիտանալոյ զնոյն իսկ զճշմարտութիւն • իսկ դրականն է թիւր համոզումն և հաւանութիւն մտաց՝ որ զսուտ իմաստն համարի ճշմարիտ և հանգչի յայնմ անհոգութեամբ • 5 ըստ թուոյ մասանցն փաստաբանութեան բաժանին խաբէութիւնք 'ի քառեակ կարգս• իբր զի 'ի փաստաբանութեան անդ՝ որ ենթադրի 'ի միտս ունկնդրաց , կա՛մ բուն խնդրակն միայն է սուտ• կամ յառաջ բերեալ փաստք միայն են թիւր • կա՛մ ներքին կերպն միայն և կապակցութիւն փաստից ընդ խնդրակին՝ է մոլորական • և կամ դոքա ամենեքին զուգածեալ են համանգամայն , և չի՛ք 'ի նոսա ինչ ճշմարիտ • ըստ որոյ և որոշելի են 'ի միմեանց՝ սուտ խնդրակ , սուտ փաստ, թիւր կերպ փաստաբանութեան • և բոլոր փաստաբանութիւնն խաբէական :

§ 228 • Արդ ըստ պէսպէս ցեղից ստութեանց՝ պէսպիսանայ և եղանակն հերքելոյ զնոսին • զոր մեք ընդհանրապէս բաժանեմք 'ի կողմնական և 'ի հարթական : **Կ**ողմնական հերքումն յայնժամ եղեալ կայ , **1** զի ճարտասանն բնաւ մի՛ յիշատակեսցէ զհեղինակ, զինչութիւն և զցեղս ստութեանց , որպէս թէ չգիտասցէ կամ արհամարհեսցէ զայնս • **2** զի զճշմարտութիւն՝ որ ուղղակի դիմադրի խաբէութեանն , ընդարձակ և ըստ բաւականին յառաջ բերցէ, և այնպիսի յատակ հանգամանօք կենդանագրեսցէ զայն, զի ունկնդիրք ինքնին 'ի միտ առնուցուն զստութիւն կարծեաց իւրեանց • **3** զի զճշմարտութիւն իւր անյեղլի փաստիւք հաստատեսցէ • և յընտրութեան անդ փաստից՝ զայնս առաւել նախադասեսցէ, որք ոչ զիւրն միայն ամրապնդեն , այլ և զփաստս ստութեանն հիմնովին կործանեն • **4** զի մի՛ յառաջ բերցէ զփաստս տկարս անզօրս՝ և զայնպիսիս՝ որք իրաւացի բացառութեամբ կամ այլազգ մեկնաբանութեամբ մարթին կորուսանել զոյժ և և զբռնադատութիւն իւրեանց • **5** զի թէ պէտք իրացն պահանջեսցեն՝ 'ի հարևանցի յիշեսցէ զդիմախօսս՝ անմիտս ամպարիշտս և անզգամս կոչելով զնոսա, ըստ օրինակի որբադան ճարտասանից (սղմս․ ծբ․ 2․ բ պետր․ ա․ 9․ յուդայ․ 4—13․ ևն)․ 6 զի ազդ արասցէ ունկնդրաց՝ թէ անմտութիւն և անհաւատութիւն ցուցակ է, վասն որոյ և իցէ թեթև պատճառի երկբայիլ կամ թերահաւատիլ ընդ ճշմարտութիւն բաւական կանդաղեալս և յամենայն իմաստնոց ընկալեալս, ևն ։ Սովին օճով հերքողութ յայնպիսի դիպուածս մարթի վարիլ ճարտասանն, երբ նախատեսութ ՚ի վերայ հասանէ, 1 թէ յոլովագոյնք յունկնդրաց անծանօթ են խաբէութեանցն և փաստից նոցա․ 2 թէ չիք ծանր վտանգ զառածանելոյ նոցա ՚ի ճշմարտութէ՝ թէպէտ և ծանօթ իցեն այնց․ 3 թէ մարթ է ինքեան սովին օճով ՚ի ձեռս բերել զնպատակ իւր՝ առանց կարօտ գոլոյ հարթական հերքողութ․ 4 երբ ակներև վտանգ առաջի կայցէ՝ թէ միջնորդութ հարթական օճոյն ուսանիլ ունիցին անմեղ ունկնդիրք զստութի և զփաստս նոցին․ ՚ի ծանր վնաս անձանց իւրեանց և ընկերաց․ այլովք հանդերձ ։

§ 229 · Իսկ ուրանօր առիթք ոչ կայցեն, այլ մանաւանդ ներհակաք նոցին․ իմա՝ երբ ունկնդիրք տեղեակ են խաբէութեանն, և վնասին նոքօք․ և երբ ճարտասանն իրաւամբք նախատես լինի՝ թէ առանց բացայայտ հերքելոյ ստութեան՝ ճշմարտութիւնք և փաստք իւր չունին ինչ ներգործել, և ինքն անկանիլ ունի ՚ի նպատակէ իւրմէ, յայնժամ հարկաւ պարտի ՚ի ձեռս առնուլ զօճն հարթական․ որոյ խոկումն յայսմ կայանայ, զի ճարտասանն յայտանուն և բացորոշ ՚ի մէջ բերցէ զսուտ իմաստն, և եղծանիցէ զայն ըստ յետագայ կանոնացդ․ 1 որոշեսցէ նախ զսեռն և զցեղն յոր վերածի ստութիւն եղծանելի, և ըստ այնմ ներհական զինուք պատերազմաւ տապալեսցէ զնա ՚ի սպառ․ 2 եթէ ածանցական է ստութիւն՝ նախ զարմատն քննեսցէ, յորմէ զհետ գայ ամենայն բարունակայն ինքնին չորանալ․ 3 եթէ ճանաչելի և հաւատալի միայն իցէ ստութիւն, ցուցցէ զհակառակութ մակածականին ընդ ենթակային․ կամ զներճակութեան հանգամանացն ընդ էակին . այլ և զանհնարութիւնն, զանգոյութիւն, զհակասութիւն, զանտեղի հետևութիւն, զհակառակ ներգործութիւն . և զայլ իրական և մտաւորական փաստս վերագոյն առ 'ի մէնջ յիշատակեալս . 4 եթէ գործադրելի և բարոյական իցէ սուտ իմաստն, հաստատեսցէ նոյնպէս զհակառակութիւն մակածականին ընդ ենթակային . և ցուցցէ զչարութիւն նորին, զվտանգաւորութիւն, զապօրինաւորութիւն, զանիրաւութիւն, զանկարելութիւն, զչարաչար ներգործութիւն և զհետևութիւն, զնմանութիւնս, զօրինակս, զբաղդատութիւնս, այլովք բազմօք հանդերձ . 5 եթէ խնդրակն դիմախօսաց սուտ իցէ՝ նշաւակեսցէ զայն թէ ըստ տացեալ եղանակայդ. թէ նորագոյն փաստիւք զիւր ճշմարտութիւն հաստատելով, և թէ զփաստս դիմախօսացն ցրուելով . 6 իսկ եթէ խնդրակն ճշմարիտ իցէ, և միայն փաստքն անյարմար իցեն, ազդ արասցէ զայն ունկնդրաց, թէ այնպիսի փաստիւք ոչ հնար է ապացուցանել զայն խնդրակ, և թէ չկան բնաւ ճշմարիտ փաստք ուրեք՝ առ 'ի հաստատել զայն վարկած . 7 եթէ կերպն փաստաբանութեան թիւր իցէ, ուսուսցէ նոցա, թէ չիք կապակցութիւն ընդ փաստն և ընդ խնդրակն իբրու ընդ պատճառ և գործ . և ոչ յայնպիսի նախընթացէ մարթ իցէ մակաբերել զհետևութիւն այսպիսի . ծանուսցէ և ևս՝ թէ ներհական կարծիքն այն հակառակի զգայութեանց և զդատմանց (մերոց կամ ամենայն մարդկան), փորձառութեանց, օրինակաց, նմանութեանց, այլուստ ընկալեալ ճշմարտութեանց, թէ յայնմանէ զհետ գան այսպիսի և այսչափ սուտք, անտեղութիւնք, վնասք, և այլ սոյնպէս չարիք 'ի քաղաքի կամ յեկեղեցւոջ, ևն . 8 բազում օգուտ բերէ ևս պատմել ունկնդրաց զաղբիւրն՝ զեղանակն՝ զառիթս զճարակս և զմիջոցս, որոց զօրութեամբ ծնեալ՝ կերպաւորեալ և տարածեալ իցէ սուտ իմաստն այն, ընկալեալ 'ի տգիտաց և յանշանից . 9 գլուխ ամենայնի՝ զամենայն ջանս իւր յայն ուղղեսցէ ճարտասանն . զի նախ յառաջկայէն՝ զորմէ բանքն են՝ 'ի բաց հալածեսցէ զամենայն հանգամանս՝ յանիրաւի նմա ընծայեալս 'ի սուտ իմաստից և 'ի հակառակորդաց, և ապա վերադարձուցէ նմա զամ՟ ճշմարիտ հանգամանս՝ զորս ունին նա իրօք և արդեամբք. զի սա միայն է խոկական հնարք և միջոց եղծանելոյ զամենայն սուտս. 10 'ի կազմութենէ բանից քաղցրութեամբ և սիրով վարելոյ ընդ հակառակորդս, առանց դառնութեան և կծանելոյ կամ հեգնելոյ զընկերս. 11 մարթի ուրեք երբեք առարկութիւն ընդդէմ հանել դիմախօսաց, 'ի դիւրել նոցա շրջել զբանս, ունել զօձեաց, և նովին բանիւք պարտաւոր ցուցանել զնոսա (տես օրինակն. ղկս. ԺԹ. 20 — 24). 12 մի անպատասխանի թողցէ զբանս դիմախօսաց, մի փախուստ ցուցցէ յալսեանից, և մի զօձիս իւր տացէ 'ի ճանկ նոցա, ևն: Զայլ պէսպէս կանոնս զճշմարտութիւն ջատագովելոյ և զստութիւնն եղծանելոյ՝ տեսցեն համբակք առ տրամաբանս:

§ 230. Երկբայութիւն (տարակոյս, վարանք, կասկած) կոչի իմաստ կամ գաղափար այնպիսի՝ զոր ունկնդիրք յանձանց և յինքեանց ունին. և զոր թէպէտ ոչ համարին ամենևին ճշմարիտ (ոչ առնեն 'ի սուտ խաբէութենէ), սակայն և ոչ կարեն միաբանել զայն ընդ բանից ճարտասանին. յորմէ հետևի յերկուս հեռս կալ՝ նոցա, և դայթագղիլ 'ի ճշմարտութենէն. իսկ առարկութիւն (դիմախօսութիւն, ընդդիմաբանութիւն, objectio) կոչի իմաստ այնպիսի՝ զոր այլ ոք կաթեցուցանէ 'ի միտս ունկնդրաց առ 'ի խարբալել զհաւանութիւն նոցա 'ի ճշմարտութենէն. և երկոքին ևս բաժանին յայլևայլ ցեղս մի՝ ըստ աղբերացն, և միւս՝ ըստ աստիճանի ծանօթութեանց. ըստ որոց պէսպէս անուն և եղանակք ցրելոյ զնոսին:

§ 231. Ըստ աղբերացն՝ յորոց բղխեն երկբայութիւնք և առարկութիւնք, բաժանին 'ի հինգ կարգս. որք են,

1 Փաստաւորք. իմա այնպիսիք յորս ունկնդիրք ունին զփաստս իրականս կամ մտաւորականս, ընդդէմ ճարտասանին. զորս լուծցէ նախ ճարտասանն ըստ վե

բղխեալ կանոնացդ. և այս զիւր ճշմարիտ փաստս յառաջ բերցէ. որով և վճարէ զամենայն ինչ:

2 Փորձառականք, յորս ունկնդիրք ոչ զիրական կամ զմտաւոր փաստս, այլ զանձնական փորձ իւրեանց յառաջ բերեն. զայն՝ թէ ինքեանք կամ բնաւ ոչ գտան փորձիւ յանձինս զապացուցեալն 'ի ճարտասանէն, կամ որ չար ևս է՝ զհակառակն այնր զգան և փորձեն. զառաջին դիմադրութիւն ցրեսցէ ճարտասանն կրկնակի. այսուիկ՝ թէ կամ ճառեցեալ առարկայն՝ վերացեալ և անզգալի ինչ գոլով ոչ անկանի ընդ փորձիւ. և կամ թէ փորձ իւրացն անցանէ արդեամբք ընդ նոսա, այլ ինքեանք ոչ ուշ դնեն այնմ բաւական արթնութ̅ և հսկողութ̅, մինչև ինքնադիտութ̅ և անդրադարձ տեսութ̅ ճանաչել նոցա զայնս. զերկրորդ դիպուածն ջրեսցէ ճարտասանն՝ ասացեալ, թէ ներհական փորձառութիւնք նոցա կամ բնաւ ոչ վերաբերին յառարկայն, կամ թէ ներհակութիւն այն՝ առերեւոյթ ուրուական ինչ է, և ոչ այնչափ զօրաւոր՝ մինչև խախտել նմա զճշմարտութ̅ իւր:

3 Հեղինակաւորք, յորս ունկնդիրն զայն պատճառէ՝ թէ այլք 'ի մարդկանէ (աստուածաբանք, իմաստասէրք, եկեղեցիք, դպրոցք, ազգք, ևն) այլով եղանակաւ կամ դուցէ զհակառակն իսկ հաւատան և ուսուցանեն ձայնիւ կամ գրով, քան զոր ճարտասանն խրատէ. այսմ հակառակ դիցէ նա ասելով, թէ կամ բնաւ չկան այլազգ խորհեցողք, կամ սակաւք և սինլիքորք ոմանք են, կամ փաստ նոցա սնոտի ինչ են. զորս և թէ հարկ լիցի՝ ցրեսցէ:

4 Օրինակաւորք, ըստ որոց ունկնդիրն համարի դիմադրել զօրինակս գործոց և վարուց մեծարու արանց (մանաւանդ եկեղեցական և քաղաքական իշխանաց, իմաստասիրաց, ևն. զորոց զգործս սովոր են մարդիկ առնուլ ինքեանց յօրինակ նմանելի) հակառակ բանից ճարտասանին ներգործողաց. առ 'ի ջրել զսոսին ծանուսցէ ճարտասանն, 1 թէ ոչ արժան և ոչ կարելի

է դատել զգործս այլոց 'ի մասին բարուե̃ կամ չարուե̃. զի Աստուծոյ եթ յայտնի են գաղտնիք մարդկան. 2 թէ կարծեցեալ ներհակ գործք՝ կամ անդգյ են գլխովին, կամ ոչ այնպիսի՝ որ նոքա կարծեն. 3 եթէ չիցէ հնար կամ ուրանալ կամ արդարացուցանել զգործս այլոց՝ ուսուսցէ ունկնդրաց, թէ օրէնք վարուց մերոց ոչ սահմանին և ոչ ուղղին՝ ոչ 'ի գործոց և ոչ ըստ գործոց մարդկան, այլ յԱ̃Յ միայն և յուղիղ բանականուէ̃. 4 թէ բազմուի̃ կամ մեծարգյուի̃ չարագործաց ոչ սրբէ զաղտեղուի̃ նոցա. 5 թէ նոքին իսկ ունկնդիրք, մանաւանդ՝ նոքին չարագործք անարգեն զչար գործս, և 'ի խորշս անդ խղճի մտաց կշտամբեն զնոսին. ևն:

5 Կրօնականք (զոր 'ի պէտս հոգևոր քարոզչաց յաւելումք), ըստ որոց ունկնդիրն զայն ընդդէմ բերէ, թէ աստուածային մատեանք՝ կամ բնաւ լռեն, կամ տարաձայն, կամ հակառակ այնմ ուսուցանեն՝ զոր քարոզիչն աւանդէ. ընդդէմ առաջնոյն զայն դիցէ հոգևոր ճարտասանն, թէ լռելն սուրբ գրոց զծիսից և զարարողուե̃ց ինչ՝ ոչ արգելու զգործածուի̃ նոցին՝ երբ ինքնին անմեղ և բարեպաշտ իցեն. ըստ երկրորդին պարզաբանեսցէ և հաշտեցուսցէ զկարծեցեալ տարաձայնուի̃ն, բայց ճշմարտուբ̃ և ոչ խաբեբայուբ̃. իսկ ըստ երրորդին ծանուսցէ՝ թէ զհակառակ համարեալ բանս՝ կամ թիւր իմանան ունկնդիրք, կամ թիւրուբ̃ մեկնեցուցանեն յառաջակայ բնաբանն՝ յոր ոչ վերածին նոքա աստ և այժմ:

§ 232. Ըստ եղանակի ծանօթուե̃ց՝ երկբայուի̃ք և առարկուի̃ք բաժանին, 1 'ի դրականս՝ որք աստ և այժմ արդեամբք գոն 'ի միտս ունկնդրաց, և ճարտասանն գիտէ զգիտել նոցա. զայսպիսիս լուծցէ նա ըստ վերոյիշեալ կանոնացդ հարթական ոճով. 2 'ի պակասականս, որոց կամ բնաւ անտեղեակ են ունկնդիրք աստ և այժմ, կամ եթէ և տեղեկացեալ՝ չունին ինչ խարբալել. և 3 'ի կասկածականս, որք թէպէտ դեռ չեն ժամանեալ ՚ի ծանօթութիւն ունկնդրաց. բայց նախատեսեալ լինի, թէ ոչ միայն ժամանել, այլ և մոլորեցուցանել ունին զնոսա. ընդ երկոսին սոսա կողմնական ոճով մարտիցէ ճարտասանն ըստ վերոգրելոցդ։

Զոր ինչ ասացաք մինչև ցաստ զքառեակ ցեղիցդ թիւրադատութեան մտաց՝ զնոյնս պարտ է իմանալ և զայլոց պէսպէս շառաւիղաց նոցա. որք են անուանեալքն նախապաշարութիւն, սուտ համոզումն, թիւր ըմբռնումն, անհիմն վարկած և համարումն, պատրանք, առերևոյթ ցնորք (illusio), զառանցանք, բանդագուշանք, և այլ գոյնօրինակ վրիպականութիւնք մտաւոր ներգործութեանց. զորս մարթ է ուղղել ըստ վերյիշեալ կանոնացդ, կամ նոցին նմանեօք։

§ 233. Հետևաբանութիւն (inferentia, consequentia).

Հետևաբանել կամ մակաբերել՝ է իմաստաբանութիւն, յորում միտքն ՚ի միոյ իմաստէ ելուզանէ զայլ իմաստ ՚ի սակս հաղորդակցութեան հանգամանաց էակաց յիմաստն յայնոսիկ պարունակելոց. իբր զի բազումք յէակաց կապակից գոլով ընդ այլում յօդիւ ինչ՝ հաղորդեն նոցա նա և զհանգամանս ինչ իւրեանց. որով և միտք մեր ՚ի դատելն նախ զորպիսութիւն միոյն՝ իւրովի ածեալ լինի ՚ի դատել նա և զհանգամանաց միւսոյն. յօրինակի սակս որոյհետև պատճառ և գործ նորա առնչակից են իրերաց, և նա փոխադրէ ՚ի սա զհանգամանս ինչ իւր, յայն սակս միտք մեր ասէ,, գոյ կամ չգոյ պատճառն, ապա գոյ կամ չգոյ նա և գործն... հայրն է կենդանի մտաւոր և անձնիշխան, ուրեմն նոյնպիսի է և որդին... նկարիչ այսր պատկերի մի է յառաջին ճարտարաց. ուրեմն գերազանց ինչ է և այս նկար նորա. ևն։ Յասացելոցդ իմացեալ լինի՝ թէ առ ուղիղ հետևաբանել՝ երկու ինչ պահանջի գլխաւորաբար. մի՝ կապակցութիւն կամ առնչակցութիւն էակաց, միւս ևս՝ հաղորդակցութիւն և հոսումն էական հանգամանաց՝ ՚ի միոջէ ՚ի միւսն.

զի պատահականք ոչ միշտ կամ հարկաւ՝ փոխադրին · ոմ՟ թիւր լինի ասել, հայրն է իմաստուն և փարթամ · ուրեմն նոյնպէս է և որդին ։ Արդ առնչակից էակք թէպէտ բազում են և զանազան, սակայն մեք զգլխաւորսն միայն նշանակեսցուք աստանօր · որք և զիրերաց ունելով և զուգ գնալով՝ անդրադառնան ընդ միմեանս · այսպիսի են, բոլոր և մասն · սեռ և ցեղ · ցեղ և անհատ · միջոց և վախճան · պատճառ և գործ · ներգործող և կրող · պարտաւորող և պարտաւորեալ · նախատիպ և պատկեր նմանութ · խնդրակ և փաստ · պայման և պայմանեալ · հակասականք և ներհականք, և այլ սոյնպիսի լծորդակիցք · յորս 'ի հանգամանաց նախընթացին՝ մակաբերի և հանգամանք հետևորդին · ուրեք երբէք՝ նա և յանդրադարձ սակի · ըստ այդոցիկ յաճախ ասեմք և լսեմք „ շաբաթ վասն մարդոյ եղև և ոչ թէ մարդ վասն շաբաթու, ապա ուրեմն մարդն իշխող և տէր է շաբաթու . . . . եթէ որդի եմք Աստուծոյ՝ ապա և ժառանգ եմք նորա . . . . եթէ արմատն սուրբ է՝ ապա և ոստքն սուրբ են . . . . տեսանի ամենիմաստ կարգ 'ի տիեզերս, ապա ամենիմաստ է և արարիչ նորա . . . տգէտ է ժողովուրդն յաստուածայինս, ուրեմն յիմար են և առաջնորդք և հովիւք նորա . . . բոլորն՝ սեռն և տեսակն ունին կամ չունին զայս ինչ դիպացական հանգամանս, ուրեմն ունին զնոյն նա և մասունքն ցեղքն և անհատք նոցին . . . . այս ինչ հակառակ է այնմ, ապա ոչ զորեն կալ 'ի միասին . . . . նման էակք նմանօրինակ ներգործեն, ուրեմն հակառակ էակք հակառակաբար ներգործեն . . . . իմաստութին երջանկացուցանէ զմարդ · ապա տգիտութին թշուառացուցանէ . . . . էակս այս նման է այնմ այսչափ ինչ հարկաւոր հանգամանօք, ուրեմն նման է այլովք ևս ամենայն հանգամանօք, ևն ։ Տեսանի յօրինակդ՝ թէ 'ի հետևաբանութիս միշտ դնին երկու իմաստք · յորոց առաջինն կոչի՝ նախընթաց, նախադր, յառաջընթաց, առաջարկեալ · իսկ երկրորդն՝ որ միշտ մակաբերական շաղկապաւ կապի ընդ նախընթացին, ասի՝ հետեւորդ, յետադայ, մակաբերեալ. նախընթացն երբեմն լինի մի դատողութի, որ յեղուածի. երբեմն երկու՝ որ ՚ի հաւաքաբանութե. եւ երբեմն աւելի քան զերկուս՝ որ ՚ի համաբարդութե. բայց ամենեքին դնին իբր մի իմաստ նախադրոյ. զի հարկաւ պահանջին յառաջ ընթանալ՝ առ ելուզանելոյ ՚ի նոյունց զհետեւորդս։

§ 234. Գլխաւոր եղանակք հետեւաբանելոյ՝ համարին եօթն այսոքիկ. եղուած, հաւաքաբանութի, համաբարդութի, մակածութի, հանգիտաբանութի, պայմանաբանութի, եւ տրոհաբանութի. զորոց խօսեսցուք համառօտիւ, տրամաբանից թողլով զճշդութին։

Եղուածն (enthymema) է սեպհական հետեւաբանութի տիրապէս առեալ, յորում ՚ի միոյ նախադաս իմաստէ ելուզանեմք զօրինաւոր հետեւութի. որպէս են վերոյեդեալ օրինակք, եւս եւ յետադայքդ „ եթէ մարմին եմք ՚ի մար„մնոյ նորա (Քրիստոսի) որ խոստմունքն են. եւ տիրա„պէս հաւատայոք նմա, մի ապա աղտեղեսցուք զան„դամս Քրիստոսի ՚ի շարաւս մեղաց եւ ՚ի ճենճերս ա„նօրէնութե ([illegible])... տեսանեմք զաշխարհս ՚ի պէս„պէս կերպարանս եւ ՚ի զարդս եւ ՚ի յարդս, ապա ու„րեմն կերպարանաց եւ զարդուց եւ արդուց արարիչ է Աստուած (Եղիշէ). այսպիսի են ամենայն յարասութիք մակաբերական շաղկապօք յօրինեալք, ըստ քերականաց։

§ 235. Հաւաքաբանութին (syllogismus) է այդ ինչ հետեւաբանութե, յորում յերկուց հանրական իմաստից՝ մասնաւորն մակաբերի. կամ յորում հանգամանքն անհատին ելուզանի ՚ի հանգամանաց ցեղին, եւ հանգամանքն ցեղին՝ ՚ի հանգամանաց սեռին. որ „ամենայն մարդ է մահկանացու, տաճատ է մարդ, ապա եւ նա է մահկանացու... ամենայն մոլութիք են խորշելի, արբեցութին է մոլութի, ուրեմն եւ նա է խորշելի։ Հիմն հետեւութեանս այն է, թէ հանգամանք՝ զոր ունի սեռն կամ ցեղն, պարտի ունել վայն եւ անհատն. իսկ ՚ի կիրառութ̄ սոցա ճարտասանք պարտին զիւրաքանչիւր առասուխսդ ընդարձակել պէսպէս խորհրդածուք̄, յորմէ ձևանայ ճառ ամբողջ կամ վերաբանութ̄ բնաբանից․ օրն̄ առնէ կիկերոն բազում ուրեք ։

§ 236 ․ Համաբարդութիւն (sorites) է հետևաբանութ̄, յորում 'ի բազում իմաստից ընդ իրեարս աղխաղխելոց և յիրերաց ածանցելոց՝ մակաբերի հետևութ̄ ․ օրն̄ ,, սակաւք են 'ի քրիստոնէից՝ որ ոչ մեղանչեն մահուչափ․ որք մահուչափ մեղանչեն՝ հազիւ երբէք ճշմարտութ̄ ապաշխարեն․ որք ոչ ապաշխարեն ճշմարտապէս՝ մեռանին 'ի մահուչափ մեղս․ որք մահացու մեղօք մեռանին՝ ոչ փրկին և ոչ արժանանան արքայութ̄ն Աստուծոյ․ ուրեմ̄ սակաւք 'ի քրիստոնէից փրկին և տեսութ̄ն Աստուծոյ արժանանան ։ Որպէս վասն հաւաքաբանութ̄ ասացաք՝ նոյնպէս և յայսմ զիւրաքանչիւր առասուխս ընդլայնեսցեն ճարտասանք, մանաւանդ քարոզիչք ։

§ 257 ․ Մակածութիւն (inductio) է հետևաբանութ̄ հիմ̄եալ յայս կանոն․ թէ զգոյացական հանգամանս, զոր ունին կամ չունին անհատք՝ ցեղք կամ մասունք, զնոյն ունին կամ չունին նա և ցեղք սեռք և բոլորք նոցա․ վասն որոյ յայսմ ոչ եթէ ըստ օրինակի հաւաքաբանութ̄ յընդհանրոյ զմասնաւոր հետևութ̄ ելուզանեմք (ոճ բաղադրական), այլ հակառակ այնմ՝ յանհատից զընդհանուրն կամ 'ի մասանց զբոլորն մակաբերեմք (ոճ վերլուծական)․ ընդ որովք իմացեալ լինին նա և նմանք և օրինակք․ վասն այն քառակի մարթ է հանել հետևութ̄ մակածութ̄ ։

1 Յորժամ զգոյացական հանգամանս ինչ ընծայելով կամ զլանալով անհատից, 'ի վերայ ածեմք թէ ուրեմ̄ և ցեղ նոցա կամ սեռն՝ ունի կամ չունի զայն․ որպէս, հայկակ՝ արամ՝ ցլիկ՝ աշոտ՝ են մտաւոր ազատակամ, ապա ամենայն մարդիկ են մտաւոր և ազատակամ ․․․ արիութ̄՝ արդարութ̄՝ կուսութ̄ են սիրելի, ապա ամենայն առաքինութ̄ք են սիրելի ։

2 Երբ ընծայելով կամ զլանալով էակի իմիք զմասունս՝ մակաբերեմք ունել կամ չունել նմա նա և ըզբոլորն· որպէս „ կենդանիս այս ունի զհոգի զկամս ըզմիտս զմարմին և զամենայն կարևոր անդամս, ուրեմն է մարդ կատարեալ ։

3 Յորժամ զբազում նմանս յառաջ բերեալ՝ ածեմք յայնց զնմանօրինակ հետևումն· որպէս „ Ջուրք անշարժ լճացեալք ժահահոտին, և օդ փակեալ ուրեք՝ ապականի, և երկաթ անգործ՝ ժանգահարի, և անդաստան անվար՝ մոլախոտի, ապա դոյնպէս և անձն գործատեաց ոչ լիցի ազատ 'ի մոլութեանց· ընթերցիր և զայլ օրինակ առ Նարեկացւոյն, յաղօթսն ծդ· 'ի բանն՝ ոչ երբէք հարթ ընթանայ երկիւղը, ևն ։

4 Երբ զյոլով օրինակս անձանց կամ մարդկան նմանօրինակ գործովք կամ կրիւք հանդիպայելոյ առաջի արարեալ՝ եզրակացանեմք 'ի նոցունց հետևումն յառաջակայ մեր· առ որ կարդա զբան մատաթիայ առ որդիս իւր (ա մակաբ· բ· 50—62)· ևս և զբան փրկչին (մտթ· ժբ· 1—8) ։

§ 238· Հանգիտաբանութիւնն (analogia) է ազգ ինչ հետևման՝ խարսխեալ յայս կանոն, թէ էակք՝ որք նմանին միմեանց քանի մի հանգամանօք, հաւանելի է թէ նմանեսցին միմեանց նա և այլովք հանգամանօք· որպէս տեսեալ՝ թէ տարսայիճ և դերենիկ նման են իրերաց 'ի խօսս՝ 'ի գործս՝ յուսմունս՝ 'ի վարս՝ 'ի կենակցութեն՝ ևն, զնովլիմբ ածեմք՝ թէ ուրեմն նման են նոքա միմեանց նա և 'ի խորհուրդս 'ի մտածութիւնս 'ի կամս և 'ի յօժարութիւնս· նոյնպէս տեսեալ թէ այժմեան հարաւային շարունակ հողմունք նման են 'ի նախընթացայ ամս շնչելոյ, 'ի վերայ բերեմք՝ թէ և սոքին անձրևեսցեն հանգոյն նոցա· զի նման պատճառք նմանօրինակ ներգործեն· և փոխադարձութ՝ նմանօրինակ ներգործութիք 'ի համահանգէտ պատճառաց բղխեն· այսու կանոնաւ բազում ուրեք անսխալ հետևաբանեն նա և բժիշկք՝ օրէնսգէտք՝ կենցաղագէտք՝ բանասէրք և այլք բազումք·

§ 239. Պայմանաբանութիւն է այդ ինչ հետեւաբանութիւն. որոյ առաջին կամ հիմնական իմաստն է երկանդամ պարբերութիւն թէական շաղկապաւ յօդաւորեալ. յորում ստորասութիւն կամ բացասութիւն միոյ անդամոյն՝ ստիպէ զմեզ 'ի ստորասել կամ 'ի բացասել զմիւս անդամն. որպէս,, եթէ յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ զձեզ սիրէր արդեօք. իսկ արդ՝ դուք չէք յաշխարհէ աստի, ուրեմն աշխարհ ոչ սիրէ զձեզ. կամ այսպէս, իսկ աշխարհ ոչ սիրէ զձեզ, ապա դուք չէք յաշխարհէ աստի.... եթէ հոգի մարդոյ լինէր նիւթական ինչ՝ ոչ զօրէր խորհել և դատել. զի նիւթ անընդունակ է խորհրդածութեան. իսկ արդ գիտեմք 'ի փորձոյ՝ զի հոգի մարդկային խորհի և դատի, ապա չէ նա նիւթաւոր ինչ: Ճարտասանք մարթին զբնաբան ճառին յայս տարազ կերպաւորել, և զիւրաքանչիւր նախադասութիւն ընդարձակել պէսպէս օրինակաւ, որպէս և կանխաւ ազդեցաք վասն վերոյգրելոյ:

§ 240. Տրոհաբանութիւն կամ սայրաբանութիւն է այդ ինչ հետեւաբանութիւն. որոյ հիմնական իմաստն կամ դատողութիւն է յարասութիւն բազմանդամ տրոհական շաղկապօք միաւորեալ. յորում յընդունելութենէ կամ յուրացութենէ միոյ անդամոյն՝ մակաբերի ընդունելութիւն կամ ուրացութիւն միւս անդամոց. որպէս,, անկիւնն կամ ուղիղ լինի՝ կամ սուր և կամ բութ. իսկ արդ առաջակայ անկիւնս է սուր, ուրեմն ոչ է ուղիղ կամ բութ: Բաժանի սա և անուանի ըստ թուոյ տրոհեալ անդամոյն. զի թէ յերկուց անդամոց իցէ՝ կոչի երկսայրի (dilemma), որպէս այս բան՝ զոր ասացին սկիւթացիք ցմեծն աղեքսանդր,, կամ Աստուած ես դու՝ կամ մարդ. եթէ Աստուած ես՝ պարտիս բարօրութիւն պարգևել մահկանացուաց, և ոչ թէ զնոցայն յափշտակել. իսկ եթէ մարդ ես՝ միշտ զմտաւ ած՝ զոր ինչ ես: 'ի լինելն եռանդամ ասի եռասայրի (trilemma), որպիսի է վերոյգրեալ օրինակն. Նոյնպէս 'ի լինելն քառանդամ կամ հնգանդամ՝ նոյն պիսի անուամբք կոչի քառասայրի, հնգասայրի (tetralemma, pentalemma)։ Զընդարձակ ծանօթութիւն ամենայն յիշատակեալ հետեւաբանութեանցդ՝ առնուլ պարտ է ՚ի տրամաբանութենէ. ուր և աւանդին պէսպէս կանոնք և զգուշութիւնք՝ թէ երբ ուղիղ կամ թիւր լինիցի հետեւութիւնն ՚ի նախընթացից. այլովք հանդերձ։

§ 241. Գիտեմ աստանօր՝ թէ տրամաբանք ՚ի սկըզբանէ և այր զփաստաբանութիւն շփոթեն ընդ հետեւաբանութեան, խաբեալք յարտաքին կերպէն. և նոյնացուցանեն զայն մանաւանդ ընդ հաւաքաբանութեան. սակայն ըստ ճշգրիտ* տեսութեան՝ կարի տարբեր ներգործութիւնք են դոքա մտաց, և զանազանին յիրերաց ըստ ներքին էական կերպի իւրեանց՝ երկոքումբք ծանր տարբերութեամբք. յորոց մին նկատի ՚ի կողմանէ մտաց, իսկ միւսն՝ ՚ի կողմանէ առարկային. իբր զի ՚ի փաստաբանութեան՝ միտքն ոչ է ապահով զճշմարտութենէ խնդրականին, այլ կարօտի իմանալ՝ թէ վասն ո՞ր պատճառի զմակածական նորա պարտաւորի կապել ընդ ենթակային. յոր սակս և ո՞վ թէ աղաղակէ, ոչ ընդունիմ զճշմարտութիւն խնդրակիդ՝ մինչև լիցի ոք ինձ երաշխաւոր. իսկ ՚ի հետեւաբանութեան՝ զդորուն հակառակն գործէ միտքն. զի ընդ ճշմարտութեան նախընթացին ոչ երկբայի և ոչ զփաստ խնդրէ, այլ ընկալեալ զայն իբր զճշմարիտ՝ որոնէ և ես, թէ բաց յայնմանէ՝ զինչ այլ ևս արժան իցէ նմա ընդունել, կամ թէ ՚ի ճշմարտութենէ անտի նախընթացին՝ զինչ այլ ճշմարտութիւն հարկ իցէ եզրուգանել. այս դէմընդդէմ ներգործութիւնք մտաց ծնանին ՚ի հակառակ դիրից անտի առարկային. յոր հիմնի երկրորդ տարբերութիւն իրացդ. իբր զի ՚ի փաստաբանութեան՝ նախ գործն դնի (մարդն է մահկանացու), և ապա պատճառն պահանջի (վասն զի է կենդանի). զի փաստն է իբր պատճառ, և խնդրակն՝ իբր գործ. իսկ ՚ի հետեւաբանութեան ամենևին շրջի կարգդ այդ. նախ պատճառն դնի (մարդն է կենդանի), և ապա գործն ՚ի վերայ ածի (ուրեմն է ևս մահկանացու)․ և թէպէտ ոչ ամենայն նախընթաց է իրական պատճառ, և ոչ ամենայն հետևորդ՝ է գործ իրական, բայց և այնպէս ճշմարիտ է՝ թէ ամենայն նախընթաց դնի իբր ազդիչ, յորմէ հոսէ հետևորդն․ զի նա է սկիզբն ճանաչելոյ և ընդունելոյ զսա․ յորոց ինքնին իմացեալ լինի նախ՝ թէ փաստաբանութիւն բնաւ ոչ է հետևաբանութիւն, թէպէտ և մերթ կորուսեալ զիւր բնաւոր կերպն՝ ընդունի զորայն ըստ հաւաքաբանութեան․ և երկրորդ՝ զոր 'ի հարևանցի նշանակեմք՝ թէ երրորդ ներգործութիւն մտաց ոչ է լոկ փաստաբանութիւն միայն, որպէս պարծին տրամաբանք, այլ և բազում ինչ այլ․ իբր զի զաստիճանս կամ զցեղս ներգործութեանց մտաց՝ որոշել պարտ է՝ որպէս երևի՝ ըստ թուոյ գաղափարաց և համգամանաց զորովք յածին նոքա․ զի ըմբռնումն յածի զմիով գաղափարաւ 'ի կերպաւորել կամ 'ի բացորոշել զայն․ դատողութիւն յածի զերկու գաղափարօք՝ 'ի միաբանել զնոսա ընդ իրեարս կամ 'ի զատանել․ իսկ բանականութիւն պարտի յածիլ զերեք կամ աւելի ևս գաղափարօք, որպիսի են փաստաբանութիւն ըստ բնական կերպին, հետևաբանութիւն ըստ եօթն ցեղից իւրոց, ամենայն ցեղք եռանդամ և քառանդամ շարաբանութեանց, և այլ ևս բազմագաղափար ներգործութիւնք մտաց մինչև ցայժմ անքննին և անհաս մնացեալք իմաստասիրաց և 'ի հոգեբանից․ և ըստ մեզ՝ ուղիղ ևս լինէր աստ վերածել զնմանեցուցանելն, զբաղդատելն, զհամեմատելն, և զդդոյնպխսխս․ յորս առարկայ մտաց լինին երեք կամ աւելի ևս գաղափարք կամ համգամանք էակաց։

§ 242․ Յանկել, յանկուած (applicatio)․

Գաղափարք՝ ըստ նոցանէ և իմաստք նպաստեն և որպէս թէ ծառայեն մի՝ իրերաց, և միւս՝ մտաց մերոց․ և վարել զնոսա 'ի կրկին յայդոսիկ պէտս՝ կոչի յանկել զնոսա․ այն է զմին մերձեցուցանել առ միւսն, որ կարօտի նպաստից նորա։ Բաժանի յանկումն ըստ կրկին եղերայն 'ի համասեռ և 'ի տարասեռ. համասեռ է յանկումն՝ երբ գաղափար կամ իմաստ ինչ մատչի 'ի նպաստ իւրում ազգակցի. ըստ այդմ 'ի նմանութեան՝ 'ի համեմատութեան՝ 'ի բաղդատութեան՝ յօրինակաբերութեան՝ և յայլս պատկերն յանկի 'ի նախատիպն առ 'ի լուսաբանել զնա. յապացուցութեան փաստն յանկի 'ի խնդրակն առ 'ի ճշմարտել զնա. 'ի հերքողութեան մին 'ի հանդամանաց էակին յանկի առ միւսն առ 'ի հալածել զնա. 'ի հետևաբանութիւնս նախընթացք յանկին առ եզրակացութիւնս 'ի ցուցանել զօրինաւոր մակաբերութիւնս նոցա. զնոյնն իմա և յայլ վերաբանութիւնս ըստ պատշաճի նոցա. և որովհետև իմաստք զատանին 'ի տեսականս և 'ի գործականս, յայդմանէ և յանկումն իմաստից տրոհի 'ի քառեակ կարգս, 1 տեսականի առ տեսական, 2 տեսականի առ գործական, 3 գործականի առ տեսական, և 4 գործականի առ գործական. զորոց զօրինակս դիւրին է գտանել յամենայն գիրս. Թող զի յայտնի է նշանակութիւն ձայնիցդ և անկարօտ օրինակի կամ բացատրութեան։

Տարասեռ կոչի յանկումն՝ երբ ճարտասանն զգաղափար կամ զիմաստ ինչ վարէ 'ի պէտս հոգւոյ ունկնդրաց. և ըստ կարողութեանց հոգւոյ բաժանի 'ի ճանաչելի, 'ի զգածելի, և 'ի գրգռելի. և իսկութիւն ամենեցուն դնի 'ի ճարտարութեան՝ յեղեալ իմաստէ եղուզանելոյ զայլ ինչ իմաստ համասեռ կամ տարասեռ. այն է, 1 յեղեալ ճանաչելի իմաստէ՝ մակաբերել զայլ իմաստ յօգուտ կամ մտաց կամ բաղձանաց ունկնդրաց. 2 յեղեալ զգածելի իմաստէ՝ ծնուցանել զայլ իմաստ 'ի նոյնպիսի պէտս. և 3 յեղեալ գրգռական իմաստէ՝ բղխեցուցանել զիմաստ ինչ 'ի յագուրդ միոյ յերից կարողութեանցդ. յօրինակի համար յայսմ իմաստէ „ մարդն է անձնիշխան ազատագործ „ մարթ է եղուզանել և յայլևայլ պէտս յանկել զայսպիսի և զայլ այնպիսի յոլով իմաստս ...ապա մարդն է գերագոյնն յամենայն կենդանիս և յամենայն արարածս Աստուծոյ... ապա հայելի և պատկեր է նա ազատութեան և այլոց կատարելութեանց Աստուծոյ... ապա հեղինակ և աղբիւր է նա ներգործութեանց իւրոյ... ապա ո՛չ ոք բաց յԱստուծոյ զօրէ հակել զկամս նորա յայս ինչ կամ յայն... ապա ինքն է պատճառ թէ երջանկութեան և թէ թշուառութեան իւրոյ... ապա հարկ 'ի վերայ դնի նմա կատարելագործել զինքն ամենայն ջանիւք... ապա չէ արժան նմա սկսանել զգործ ինչ առանց նուրբ կշռութեան ամենայն հանգամանաց և պարագայից նորա... ապա ո՛չ ոք 'ի մարդկանէ լեալ է և ոչ իսկ մարթէ լինել անսխալ և անմեղանչական... ապա ո՛չ ոք յայլոց, այլ յանձնէ իւրմէ խաբի և մոլորի.... ապա ո՛չ ամենայն ոք զօրէ վերաթևել յայն աստիճան կատարելութեան՝ յոր ամբարձան այլք... ապա ինչ ինչ 'ի մոլութեանց կամ 'ի մոլորութեանց ներելի է տկարութեան մարդոյ, ևն. դոյլին ոճով մարթ է վարիլ և ընդ այլ ամենայն իմաստս:

§ 243. Կորովաբանել (energia, emphasis).

Հողմոյ հոսեն ամենայն բանք և ջանք ճարտասանին՝ եթէ ունկնդիրք ոչ լուիցեն նմա յօժարութեամբ և մտադրութեամբ 'ի բոլոր ընթացս ճառին. իսկ միջոյն գերելոյ զմիտս հանդիսականաց և ուռկանելոյ զուշադրութիւն նոցա՝ է եռանդագին և աշխուժալից առնել զիմաստս, ըստ որմէ և զխօսս. այն է անուանեալն՝ Ազդուաբանութիւն, կամ կորովաբանութիւն. որոյ քաջարուեստ յօրինուած հիմնի գլխաւորաբար 'ի յետագայ կանոնդ. **1** Խորագէտ ճարտարութեամբ քննեսցէ ճարտասանն՝ թէ որո՞յ հոգւոյ իցեն ունկնդիրքն՝ 'ի միտս 'ի սիրտս և 'ի կամս. և ըստ այնմ զգուշասցի չթափել 'ի բերանոյ իւրմէ զայնպիսի իդէայս՝ զդածմունս և զդրդռունս, որք անախորժ և հակառակ իցեն նոցա. զի այսուիկ մարթի որսալ զբարեյօժարութիւն սրտի նոցա առ ինքն. **2** եթէ նա խստես լինիցի՝ թէ 'ի մտի 'ի սրտի և 'ի կամս ունկընդրաց արդեամբք գտանին դրականապէս՝ իդէայք զգած մունք և գրգռութիւնք հակառակք նպատակաց իւրոց, փոյթ կալցի դաղտորսակ թաքնութեամբ գողանալ զայնս. բայց՝ ոչ ձայնն գողութեամբ այդ առնէ՝ այնպիսի հնարագիտութեամբ, զի ունկնդիրք բնաւ մի՛ զգասցին թէ գողացան. 3 ծանուսցէ ունկնդրացն՝ թէ առարկայ ճառին լինելի յագեցուցանել ունի զամենայն բնական ճգանս հոգւոյ նոցա, ըստ երից կարողութեանց ևս. իմա՝ զճանաչողականն կամ զմիտս, զզգածողականն կամ զսիրտս, և զբաղձողականն կամ զկամս. իբր զի այդչափ շահաւէտութիւնք առարկային հաւաստի փաստիւք հաստատել՝ հարկաւ քաղցրախորժ առնեն 'ի սրտի ունկնդրաց զբանս ճարտասանին. 4 որովհետև նորասիրութիւն բնական բոյս բարուց է յամենայն մարդիկ՝ ջան դիցէ ճարտասանն, զառարկայ իւր նորատեսիլ ընծայել ունկնդրաց. և այն՝ կամ ըստ նիւթոյն, կամ ըստ կերպին միայն, կամ ըստ բոլորին, կամ ըստ մասին, կամ ըստ որակութեանցն, կամ ըստ առընչութեանց, և կամ ըստ այլոց հանգամանացն. 5 զառարկայն մի՛ առաջարկեսցէ 'ի վերացեալն, և ընդհանրական կամ աննիւթական կերպարանօք. այլ այդմ հակառակ՝ թանձրացուսցէ զայն, մասնաւորեսցէ և իբր ըզգալի և շօշափելի ձևացուսցէ. այն է ասել՝ ոչ այնչափ 'ի միտս՝ քան թէ յերևակայութիւնս և 'ի զգայութիւնս ունկնդրաց ազդողաբար ներգործեսցէ. 6 գովին դիտմամբ յանկեսցէ յարմարեսցէ զառարկայն և զնպատակն՝ մասնաւոր պարագայից, վիճակաց, տեղեաց, ժամանակաց, սեռոյից, և այլոց հանգամանաց ունկնդրացն. 7 զնիւթ բանիցն ոչ դժուարիմանալի և ոչ կարի դիւրիմանալի յօրինեսցէ. այլ այնպէս՝ զի զմեծ մասն բանից 'ի միտ առնուցուն ունկնդիրք, բայց և բազում ինչ թողցի որոճալոյ և կրկնելոյ հետաքրքիր խուզողութեան մտաց նոցա. 8 որպէս զերեսս իւր՝ նոյնպէս և ըզդէմս խօսիցն առ ունկնդիրս շրջեսցէ, և երկրորդ դիմօք բայից և դերանուանց խօսեսցի ընդ նոսա. այնպէս զի խօսքն բոլորովիմբ վերաբերեսցի կամ առնչասցի առ ներկայ հանդիսականս միայն՝ և ոչ առ բացակայս ոմանս • 9 զբարբառ բանիցն զարդարեսցէ յափշտակիչ սեթևեթիւք և ձևովք իմաստից կամ խօսից • նոյն և շրտեցուցիչ և ընդոստաբար ոճով և շարժուածովք անձին յուզեսցէ միշտ զմտադրութիւն ունկնդրաց • 10 'ի վեր քան զամենայն ինչ՝ հարկ է ճարտասանին քաջ ժառանգել զարուեստն հանդիպահայեաց տեսաբանութեան (perspectiue) իմն՝ յայնպիսի դիրս զետեղելոյ և այնպիսի կերպարանս զգեցուցանելոյ առարկային կամ ճշմարտութեան, յորս մեծապէս ուժգնութեամբ մարթասցի նա խոցել և նետահար վիրաւորել զհոգիս ունկնդրաց • այդ է վերջին ծագ կատարելութեան ճարտասան կարողութեան, յոր սակաւուց ոմանց տուեալ է վերասլանալ փառօք ։

§ 244 • Ամրապնդել զիմաստս (confirmare) •

Ունկնդիրք՝ որովհետև ոչ միշտ 'ի նմին տեղւոջ և 'ի նմին վայրկենի 'ի կիր առնուլ ունին զճշմարտութիւն, այլ յոլովակի՝ յայլում վայրի և 'ի ժամանակի, մերթ ևս՝ 'ի բովանդակ ընթացս կենաց, յայդմանէ պարտիք 'ի վերայ դնի ճարտասանին՝ զիմաստս և զիդէայս այնպէս ամրապինդ բևեռել 'ի յիշողութիւնս և յուշի նոցա, զի ընդերկար տարրայցին անդանօր առանց մոռացութեան, և 'ի ժամու պիտոյից՝ դիւրաւ յիշատակեսցին վերստին • առ այդ նպատակ՝ ճարտասանն փոյթ տարցի, 1 չխօսել զյոլով և զտարանջատ առարկայից, այլ զմիոյ միայնոյ, կամ զոնէ զերկուց՝ բայց զընդ իրեարս կապակցելոց • 2 թէպէտ և զմիոյ առարկայէ խօսեսցի՝ բայց մի առաւել քան զչափն և զհարկն շատախօսեսցէ, կամ ճապաղեսցէ զճիւղս անդր քան զարժանն և զպիտոյն • 3 ըղյոյժ կարևորս 'ի ճշմարտութեանցն՝ ոչ 'ի միում, այլ յերկուս և յերիս վայրս և 'ի ժամս կրկնեսցէ • բայց այլալան կերպարանօք և պարագայիւք • զի մի երևեսցի կաղամբ կրկնեփեաց • 4 'ի մէջ գաղափարաց՝ իմաստից և իդէայից՝ մուծցէ զկարգ յօրինաց ինչ հրամաջեալ , զորմէ ասացեալ եմք այլուր . 5 զընաբանն ամենայն պարզութեամբ բացորոշեսցէ , և զվերաբանութիւն ամենայն ճշդութեամբ յօդակապեսցէ ընդ նմա . 6 որչափ հնար իցէ՝ անձնապահ լիցի չմուծանել 'ի ճառն զխոտորմունս, զմիջադրութիւնս , զբացատրութիւնս , զարտուղութիւնս , և զանշահ յաւելուածս . 7 բաժանումն և մասնաթուութիւն բոլորի , ոչ և վերլուծութիւն ընդհանրոյ՝ բազումս օգտեն թէ մտառութեան և թէ վերայիշութեան իմաստից . 8 նոյնպէս և ս կարևոր է՝ զգաղափարս և զդէպս կապել ընդ զգալի և տարածական նիւթոյ կամ տեղեաց . յորոց 'ի տեսութենէ կամ 'ի լսելութենէ հեշտին իցէ վերստին յիշել զայնս :

Այսչափ ծանօթութիւնք զմտավարժ վերաբանութեանց՝ շատ համարեսցին և՛ մեզ և՛ ուսանելեաց . զորոց թէպէտ յոլով ինչ այլ ևս ունէաք յառաջ բերել , սակայն խնայելով 'ի համբակս թողումք այլում ժամու և տեղւոյ :

ՀԱՏԱԾ ԵՐԿՐՈՐԴ .

Յաղագս սրտազդած վերաբանից .

§ 245 . Զինչութիւն և կազմութիւն սրտազդած վերաբանից (finis patheticus) .

Վերաբանութիւնք՝ զորս առանձինն եղանակաւ կերպաւորէ ճարտասանն զգեղեցկութիւն առարկային , և յանկէ զայնս առ 'ի վարակել դէպուղիղ զսիրտս ունկնդրաց քաղցր կամ դառն զգածմամբք , անուանին բանք սրտազգածք կամ կրիցաշարժք . 'ի ներգործութենէ անտի ճարտասանին՝ որ զքաղցրն կերպաւորէ՝ կոչի ամոքել, դորովել. իսկ որ զդառնն արբուցանէ կոչի մորմոքել, քքուել. առարկայք՝ զորով յածին ներգործութիւնքդ, ոչ են որ և իցէ հանգամանք էակին անխտիր, այլ միայն գեղեցկութեան և տգեղութեան, վսեմութեան և նուաստութեան, չքնաղութեան և գծծութիւն, կատարելութեան և անկատարութեան, յարգութեան և անարգութեան, արժողութիւն և անարժանութեան, օգտակարութեան և վնասակարութեան, և այլ այդպիսի որակութիւնք նորա. և դոքա երբ մտածին առաջակայութեամբ և երևութիւ իւրեանց յերևակայութեան ունկնդրաց՝ բորբոքել զսիրտ նոցա՝ անուանին լուցկիք. որպէս ճշմարտութեանն նկատմամբ առ միտս կոչի՝ փաստ. և բարութեանն նկատմամբ առ կամս կոչի խթան:

§ 246. Միջոցք և ճարտարութիւն ճարտասանին 'ի զգածել զունկնդիրս իւր.

Արհեստն ամոքելոյ կամ մորմոքելոյ զսիրտ ունկնդրաց՝ հիմնի գոգցես 'ի կանոնս յայսոսիկ. 1 փոյթ կալցի ճարտասանն զգուշութեամբ քննել և գտանել զցեղ զգածմանն՝ որով կամի զկծել զունկնդիրս. 2 որոշեսցէ և զբուն ճգանսն՝ յորմէ իբրու յաղբերէ բղխել ունիցի զգածումն այն. 3 նշանակեսցէ նոյնպէս և զնպատակն՝ յոր կամի ուղղել, և զմիջոցսն որով մարթ իցէ լուցանել զզգածումն. 4 յերևակայութեան ունկնդրաց տպաւորեսցէ զայնպիսի պատկերս, և 'ի միտս նոցա յարուսցէ զայնպիսի իդէայս՝ որք համաձայն և նոյնաբուն իցեն ընդ ճգանաց և զգածման. 5 զգոյշ լինիցի մեծապէս չզարթուցանել 'ի միտս և յերևակայութեան նոցա զայնպիսի գաղափարս՝ որք խամրեցուցիչ և վնասակար իցեն նպատակի և զգածման դիտելոյ 'ի նմանէ. 6 կատաղեցուսցէ զբնական կարօտութեան ճգանայն, արծարծեսցէ զբոցն և պայծառացուսցէ զծարաւ նոցա. կամ որպէս ռամիկք մեր ասեն՝ քորեսցէ զքոս նոցա, զի առաւել ևս դիւրապատրաստ լիցին առ հեշտաւէտ զգածումն. 7 ճշդրտատիպ նմանահանութք կենդանագրեսցէ առաջի ունկնդրաց զգեղեցկութի և զայլ վերոյիշեալ հանգամանս առարկային . և մասնաւոր զայն՝ որ առաւել քաջայարմար լիցի 'ի լուցանել զկարօտն . 8 զառարկայդ կամ զհանգամանս զայդ առնչացուսցէ՝ մերձեցուսցէ և մօտ բերցէ յունկնդիրս իւր . ոչ թէ զխծուծն հոտոտել տալով հրոյ , կամ զվառօդն 'ի հուր հպաւորելով . առ որ՝ յայտ է՝ պահանջի զընդհանուրն անհատաւորել, զբոլորն մասնաւորել, զվերացեալն թանձրացուցանել, զհեռաւորն մօտ առ դուրս բերել, զանցեալն և զապագայն ներկայացուցանել, զօտարն ընտանի առնել . և զամենայն ինչ յանկել յարմարել մասնաւոր վիճակի և պարագայի անձանց՝ տեղեաց և ժամանակաց ունկնդրաց . 9 զքաղցրութի և զդառնութի զգածմանն, կամ զօգուտն և զվնասն ծանրացուսցէ սեպհականեսցէ և յատկացուսցէ նոցին իսկ ունկնդրաց . ցուցեալ թէ ոչ զատուերէ իցեն բանքն, և ոչ զօտարաց ումանց, այլ թէ բուն նոցա կաշին կայ 'ի կշիռս, նոցա անկանի վայելել զայնս . և նոքօք միայն յագենալ կամ եղծանել ունին կարօտ և վտանգ նոցա . 10 զօրաւոր բանիւք յուշ ածցէ նոցա զճաշակ և զհամ այնր հեշտութե կամ դառնութե, զորս զփորձ առեալ իցեն նոքա յընթացս նախընթաց կենաց. 11 նկարագրեսցէ ևս գեղեցիկ ոճով զօրինակս այլոց անձանց (բաց յունկնդրաց), որք նոյնպիսի բերկրութք կամ կսկծանօք զգածեալ եղեն երբեմն . 12 որովհետև արտաքին առիթք և դիպուածք իսկ գիտեն յոլովակի յաւելուլ կամ առթել անգամ զզգածմունս, ապա 'ի մէջ մատուսցէ զայնպիսիս ըստ առարկայի և նպատակի իւրում . 13 չափ և կշիռ պահեսցէ 'ի բորբոքել անդ զսիրտս, և մի յանչափս ջանասցի սաստկացուցանել զզգածմունս . զի հրդեհք հոգւոյ փութով և դիւրաւ շիջանին . և 'ի կամիլն առաւել արծարծել՝ մարթ է առիթ տալ ցրտութե և գաղջութե . 14 յատենաբանելն անդ ինքն ճարտասանն ևս բորբոքեալ լիցի նովին զգածմամբ՝

զոր յայլս կամիցի փոխադրել․ ոչ 'ի շրթանց՝ այլ 'ի սրտէն բղխեսցէ զբանս․ զի բարբառ առանց սրտի՝ մարմին է անհոգի, և ցրտունի սառնամանեաց ոչ զօրէ ջեռուցանել զոք․ **15** Թէպէտ և զհամօրէն մասունս ճառին՝ բայց առաւելապէս զյառաջաբանն և զվերջաբանն արասցէ սրտազդած․ զի անդ առ գրաւելոյ և սարանելոյ զմտադրուի՟ լսողաց, և աստ առ արդեամբք շարժելոյ զնոսա յիրագործուի՟ հարկաւ պահանջին եռանդն և ջերմուի՟․ **16** որովհետև զգածմունք չունին զտարածուի՟ (ընդ երկայն կամ ընդ լայն), այլ միայն զաստիճան սաստկուե՟ և թուլուե՟, կամ ոպ՟ թէ զսանդխաձև ելևէջս ըստ բարձրուե՟ և ըստ խորուե՟, արդ հարկ է ճարտասանից․ սկիզբն առնել 'ի ստորնոյն կամ 'ի թուլագունէն, և հետզհետէ 'ի վերինս ամբառնալ կարգաւ և առանց ընդոստանաց․ նոյն և ստորև կալ՝ չզահավիժել վերուստ 'ի վայր կամ ընդ կրունկն դառնալ․ **17** գիտելով չափ թէ նոյնուի՟ և միակերպուի՟ զաղափարաց ջլատէ, իսկ պէսպիսուի՟ն ամեհացուցանէ զզգածմունս, փոյթ կալցի դամ քան զդամ փոփոխել զպատկերս և զգաղափարս․ և ըստ թատրոնական տեսարանաց և դերասանաց միշտ զնորս՝ զանսովորս՝ զհաճոյագիւտս և զանակնկալս հանցէ 'ի հանդէս․ **18** քանզի ներհական առարկայք և գաղափարք նոցա յաջորդաբար առաջարկեալք՝ սովոր են սաստիկս յուզել զամենայն կարողութիւնս հոգւոյ, մարթի և պարտի ևս ճարտասանն ըստ տեղւոյն յանդիման ածել երբեմն և զհակադրեալս առաջակայ զգածմանն առ բորբոքելոյ զսա․ ըստ այսմ տնանկացեալն յիշելով զառաջին ճոխուի՟ իւր սաստիկ ևս դառնանայ․ ճշմարիտ ապաշխարողն յուշ ածեալ զկանխագործ մեղս առաւել ևս ընու սգով և արտասուօք․ և զճաշակ առողջուե՟ կամ զազատուե՟ չէ մարթ քաղցր ևս զգալ, բայց եթէ 'ի հիւանդուե՟ և 'ի կապանս բանտի․ **19** մի և նոյն առարկայ մարթի երբեմն զհակառակ զգածմունս բորբոքել միանգամայն 'ի սրտի. որք են մանաւանդ յուսացեալ բարիք, երկուցեալ չարիք, և այլ նմանք. վասն որոյ միտ դիցէ ճարտասանն թէ զո՛ր թել հարկանել արժան իցէ նմա յայս ախտիս, կամ ո՛ր 'ի նոյունց աջողակ իցէ նպատակի իւրում, և զայն միայն արծարծելով՝ ջանասցի զներհականն շիջուցանել. ըստ այդմ զագահն՝ որ դեռ ունիցի ինչ յերկիւղէն Աստուծոյ, աստի հրապուրէ ծարաւն ոսկւոյ՝ զոր յափշտակել կամի յաղքատէն, և անտի յետս քեցէ զնա անօրէնութեան գործոյն. Նոյնպէս գիշերային հրկիզութեան քաղաքի գեղեցիկ տեսլեամբ խառնութեան լուսոյ ստուերի և երանգոյ՝ զմայլէ զդիտողն, բայց մտածութեան անչափ վնասուն աղքատաց դառնացուցանէ զնա. 20 զգածմունք սրտի ամենահարկաւոր պայմանք և խթանք են առ շարժելոյ զկամս 'ի գործել կամ 'ի չգործել. վասն որոյ ուր առարկայ ճարտասանին գործադրելի կամ խափանելի պաշտօն ինչ իցէ, ամենայնիւ հարկ է նմա բաց 'ի ճարակոյ մտաց՝ պատրաստել նա և զճարակս սրտի, գուն գործելով ամոքել զունկնդիրս այնպիսի զգածմամբք, որք բաւական և յաջող իցեն 'ի շարժել զկամս նոցա. 21 ուրանօր միացեղ զգածումն չիցէ բաւական 'ի գրգռել զկամս՝ յաւելցէ անդ զայլ ևս պէսպէս ըստ պատշաճի. զի ուր մին տկարանայ՝ բազմապատկեալքն թերևս զօրեսցեն. ո՛չ զոր ոչն շարժէ լոկ պարտիք հայրենասիրութեան 'ի զինուորիլ 'ի պատերազմի, պսակն և այլ պատիւք խոստացեալ 'ի թագաւորէ՝ մարթին հրապուրել զկամս և զձեռս նոցա 'ի գործ. 22 Հողեշարժ բանիւք լուսաբանեսցէ յանդիման ունկնդրաց՝ զզգածմանն զայնոսիկ, որով կամի լուցանել զհոգի նոցա, զխնդութիւն, զյատկութիւն, զառարկայն, զողբիւրն, զարմանն, զաստիճանս սաստկութեան և թուլութեան, զհարկաւորութիւն, զօգուտն կամ զվնասն, զմիջոցն ստացութեան, զխափանարարս, զդեղորայս, զնմանութիւնս, զօրինակս, և զայլ հանգամանսն ըստ վերոգրեալ ցանկին. միայն թէ զգոյշ լինիցի մի իջանել 'ի կարի մանրամասունս , և մի՛ դպրոցական իմաստասիրութեամբ ճշդեսցէ զամենայն ինչ . այլ կարի իմն զբաղումն մտաց 'ի ճանաչմունս՝ ցրտացուցանէ զհոգին . **23** այդոքիկ աղագաւ 'ի բաց թողցէ ևս զամենայն նուրբ հանճարաշատ և խորախորհուրդ մտածութիս, զճարտարահնար գիւտս և ծնունդս մտաց , զվերացեալ և զաննիւթ գաղափարս , և զամենայն ինչ 'ի հանդարտ և 'ի հանգստավայել հոգւոյ յառաջ բղխեալս . և ընդ այնց 'ի մէջ առցէ զթանձրացեալս , զզգայականս , զտարածականս , զկերպարանաւորս , և զկենդանագրականս . միով բանիւ՝ զայնպիսիս , որք առաւելապէս զարտաքին և զներքին զգայութիւն և զերևակայութիւն դրդեալ յուզեն և շրջուցանեն . զի զդայական պատկերք համազգութեամբ իւրեանց աղագաւ առաւել ևս զգածեն զսիրտ , քան մտաւորականք եթ . **24** 'ի բարբառ իւր խառնեսցէ զայնս 'ի ձևոց իմաստից՝ որք յանկաւոր իցեն առ սրտազգածութիւն . որպէս են մանաւանդ , բացադարձութիւն , բացագանչութիւն , հարցումն , չափազանցութիւն , կրկնութիւն , բացբարձութիւն , և դոցին նմանք . այլ և զդէմս և զշարժուածս իւր յարմարեսցէ առարկային և նպատակին . այլովք հանդերձ :

* * *

ՀԱՏԱԾ ԵՐՐՈՐԴ .

Յաղագս կամագրգիռ վերաբանութեանց .

§ 247 . Զինչութիւն և բաժանումն կամագրգիռ վերաբանից (finis flexanimus) .

Կամաշարժ անուանին բանք՝ զորս ճարտասանն կերպաւորէ առաւելապէս զբարուէ , զօրինաւորուէ , զկրաւացուէ , և զայլոց բարոյական հանգամանաց առարկայի իւրոյ · և բաժանին յապոպրականս և 'ի խափանողականս · յառաջինումն ճառելով ճարտասանն զյիշատակեալ հանգամանացդ՝ յուզէ և գրգռէ զկամս ունկընդրաց 'ի հետապնդել բարի առարկային, 'ի գոյաւորել զայն արդեամբք, 'ի ստանալ և 'ի վայելել զայն (իմա ևս՝ 'ի հանապազորդել յայնմ՝ եթէ արդէն ստացեալ իցէ, 'ի նահանջել զթշնամիս նորա, և զնմանս) · յերկրորդումն 'ի մէջ բերելով զհանգամանս հակառակս վերոյիշելոցդ խթանէ զունկնդիրս առ 'ի խափանել զգոյուն̄ չար առարկային · իսկ անուամբ առարկայի կամ էակի՝ աստանօր միշտ իմացեալ լինին բարի և չար պաշտամունք միայն, կամ բարոյական ներգործուն̄ք յապայն գործադրելիք · որք և են սեպհական առարկայք ճշդ համոզական ճառից · զի այդպիսիք միայն կարօտին կամաշարժուե̄, կամ պահանջեն 'ի ճարտասանէն զկամախթան բանս : Իսկ թէ ո՞յք և քանի՞ իցեն պաշտամունք մարդոյ՝ ուսանել պարտ է 'ի բարոյական դիտուէ̄ և 'ի հոգեբանուէ̄ · զորոց և սակաւ ինչ խօսեցեալ եմք 'ի կրօնագիտութեան :

Արդիւնակատար շարժուն̄ մարդկային կամաց 'ի գործարարուն̄՝ տիրապէս յաստուածային շնորհաց յաջողի · իսկ ճարտասանից և քարոզչաց անկանի դայեկուն̄ եթ · որոց պարտիք համարին, մի՛ բանաւոր խթանօք իբրու ծանրաշարժ նգօք ոմամբք յուզել և ոլորել զդանդաղ կամս ունկնդրաց 'ի վճռել և 'ի գործել, և միւս՝ վանել 'ի հոգւոյ նոցա զհրապոյրս և զմղանս չարեաց, որք խոչընդոտն լինին իրագործուե̄ · զի ո՛չ 'ի մտավարժուե̄ և 'ի սրտազգածուե̄, նոյնպէս և յայսմ կրկին օրինակաւ մշակել պարտին համոզաբանք զհոգիս ունկնդրաց · քաղահան առնելով զմոլախոտս, և սերմանելով զբարի սերմանիս :

Գլխաւոր սեռք հզօրագոյն խթանաց կամ բաբանաց՝ զանգործ կամս 'ի ներգործուն̄ շարժողաց՝ համարին վեց այսոքիկ · ուղիղ անձնասիրուն̄ · շահասիրուն̄ (հեշտուն̄, փափկուն̄, գրդանք, ևն̄)․ բարուն̄․ հարկաւորուն̄․ ընկերսիրուն̄ (բարեկամուն̄, համակրուն̄, ողորմածուն̄, մարդասիրուն̄, կենակցուն̄, ևն̄)․ և իրաւասիրուն̄ կամ արդարուն̄․ ընդ որովք պարունակին և այլ մասնական նիւթք 'ի մօտոյ աւանդելիք ։

§ 248․ Միջոցք և հնարք ուղղելոյ զպէտս ունկնդրաց․

Կանոնք արհեստական կամաշարժուե̄ բովանդակին 'ի յետագայ գլուխսդ բանից․ 1 դուն գործեսցէ ճարտասանն ընտրուն̄ առնել նախ՝ և խոհիւ դնել ընդ վիճակս ունկնդրաց, ընդ վարս, ընդ սովորուն̄ս, ընդ պաշտամունս և վարժուն̄ս կենաց, և ընդ այլ պարագայս նոցա․ զի ոպ̄ ոչ ամենայն ձկունք միով կարթիւ և խայծիւ որսացեալ լինին․ նոյնպէս և ոչ ամենայն մարդիկ 'ի միոյ պաշտամանէ և 'ի շարժառթէ հրապուրին․ վասն որոյ ըստ ճարտար բժշկաց քննեսցէ քաջ զզարկ երակաց ունկնդրացն, և ըստ այնմ պատրաստեսցէ զդեղն ապաքինիչ․ նոյն և միտ դիցէ քաջայարմար ժամանակի՝ տեղւոյ՝ առթի՝ միջոցի և այլոց պարագայից, որք բազումս կրեն օգտել կամ վնասել կամաշարժութեան․ 2 բացորոշեսցէ զցեղն բաղձանաց՝ յոր գրգռել կամի զունկնդիրս․ զնպատակն՝ յոր ածել նկրտի․ զմիջոցն՝ որովք 'ի ձեռս բերել զայն մարթասցի․ և զխափանարարս նոցա զոյգ ընդ դեղոյն․ 3 ընտրեսցէ 'ի ճառել զպաշտօն հարկաւորագոյն՝ օգտակարագոյն՝ և ծանրակշիռ․ զի թեթևք և անօգուտք սակաւ կամ ոչ ինչ ներգործեն 'ի կամս․ 4 յերևակայուէ̄՝ 'ի մտաց՝ և 'ի սրտէ ունկնդրաց հեռացուսցէ կամ ջնջեսցէ զայնպիսի պատկերս՝ և զզգածմունս, որք վնասակար լինեն նպատակի ճառում․ և ը̄ այնց 'ի ներքս բերցէ զօգտակարս և զքաջադէպս․ 5 պահեսցէ զբնական կարգ հոգեշարժուե̄․ այն է՝ նախ ներգործեսցէ 'ի զգայուն̄ս և յերևակայուն̄ս ունկնդրաց․ ապա յարուցեսցէ զմիտս պատշաճաւոր ճառակօք, յետ այնր զգածեսցէ զսիրտս, և հուսկ ամենայնի զկամս նոցա բաղխեսցէ հզօրապինդ մեքենայիւք ։ 6 որոշեալ զբնական ճգանսն հոգւոյ՝ յորմէ աղբերանալ ունին բաղձանքն, զայրացուսցէ զկարօտութի նորա ։ և մարմաջեսցէ զնա՝ որմովք և զօրեսցէ, առ 'ի թաւալգլոր դահավիժելոյ զնա՝ ուր ինքն կամիցի ։ 7 լիակատար իմաստիւք լուսաբանեսցէ զպաշտամանն զայնոսիկ՝ զինչութին, զյատկութին, զառարկայն, զպատճառսն, զոհիցն, զորպիսութին, զքանակութին, զտրամադրութին մարդկային հոգւոյ առ նա, և զայլ կարևոր հանգամանս ։ 8 կենդանատիպ ճշգրտութ նկարեսցէ առաջի ունկնդրաց զբարութի պաշտամանն ըստ ամենայն ցեղից և աստիճանի կամ տարածութե նորա, զաստուածայինն, զկրօնականն, զբարոյականն, զգիտնականն, զքաղաքականն, զընտանեկանն, և զորս 'ի կարգի, մեկնաբանեալք վերագրոյն ։ 9 նոյնպէս ճարտարութ 'ի մէջ ածցէ և զօրինաւորութին նորին ։ այն է՝ զյօրինեալն լինել յօրինաց Աստուծոյ և ուղիղ բանականութեան ։ զորս ամենայն մարդիկ՝ թէ չկամին հաւասարել անասնոց անբանից՝ հարկաւ պարտին յարգել մեծարել և արդեամբք կատարել ։ զի յայդ իսկ հիմնի յարգ և գին բանական մարդոյ և մարդութե ։ 9 տացէ 'ի ճառել և զպարտականութիւնն, որով օրէնք Աստուծոյ և մեծաւորաց կապեն զկամս և զազատութի մեր՝ առ 'ի գործել ըստ նշանակեալ եղանակին, և ոչ հակառակ այնմ ։ 10 նոյնպէս և զհարկաւորութին ։ որ կայ 'ի մէջ բերէ՝ թէ պաշտօնն թելադրեալ՝ գոյացական և անբաժանելի հանգամանք է ամենայն կամ այս ինչ վիճակի և աստիճանի ունկնդրաց ։ և թէ առանց նորա անհնար է պահել զիսկութի այնր վիճակի ։ և զայլ նոյնպիսի իմաստս՝ ըստ պատշաճի յարմարեալս ։ 11 այլ և զներքին յարգ և զարժէք պաշտամանն, զծայրագոյն ազնուութին՝ զպատուականութին և զկատարելութին նորա, զհամեստութին և ըզվայելչութին, որք միայն զօրեն ճշմարտիւ ազնուական առնել զմարդ ։ 12 զիրաւացութին և զարդարութի պաշտամտան տանձին Ճարտարութ՟ լուսաբանեսցէ ընդարձակ. զի բազումք 'ի մարդկանէ մեծապէս շարժին յառնուլ և 'ի տալ զարդար իրաւունս ըստ բնաւոր տրամադրութ՟ ինչ իւրեանց. 13 քան զի մարդիկ բնապէս անձնասէր են՝ շահախնդիր և օգտածարաւ, ապա զայդ կայծ բնատուր բորբոքեսցէ ամենայն ջանիւք, և յաւելցէ յայն զբուծինս համացեղս ըստ յարմարութ՟ պաշտամանն՝ նպատակին՝ ունկնդրաց՝ և այլոց պարագայից. 14 մեկնեսցէ զընդհանրութ՟ի պաշտամանն ըստ ամենայն ենթակայից և տեղեաց. և զմշտնջենաւորութ՟ի նորա ըստ ամենայն ժամանակի. ըստ որոյ ոչ ումեք՝ ոչ ուրեք՝ և ոչ երբէք արժան լինի զանց զնովաւ առնել. 15 ցուցցէ թէ մշտնջենաւորութ՟իդ և ընդհանրութ՟իդ բացարձակ են՝ և ոչ առնչական, անպայման են՝ անկապար և անկախ, և 'ի բաց արտաքսեն զամենայն տնօրէնութ՟ի՝ զթուլացուցումն և զբացառութ՟ի. 16 'ի մէջ բերցէ և զկարելութ՟ի պաշտամանն, ևս և զդիւրութ՟ի և զդժուարութ՟ի նորին. և ուսուսցէ թէ բարեգործութ՟ ճանապարհք թէպէտ մացառուտ և փշալից են՝ այլ ոչ անկոխելիք, թէ անձնիշխանութ՟ի և ազատութ՟ի մարդոյ զոյգ ընդ շնորհացն Աստուծոյ մարթի յաղթել ամենայն դժուարութ՟ց, վերասլանալ 'ի տաճար փառաց և պատուոյ, և առնուլ զպսակն յաղթութ՟. թէ վանել և խորտակել զծանր խափանարար՝ կիրք և յատկանիշ է դիւցազնական հոգւոյ մեծամեծալար վեհանձանց. որ ընդհակառակն՝ փոքրոգութ՟ի և յուսահատութ՟ի նշանակ է թուլամորթ և կնամարդի սրտերութ՟, անվայել մարդոյ իսկ բանականի, թո՛ղ՝ քրիստոնէի իշխանի՝ գիտնականի՝ առաքինւոյ՝ ևն. թէ՝ վարձատրութ՟իք՝ արդիւնք՝ փառք՝ և պատիւք առաքինութ՟ց աճեն ըստ չափու դժուարութ՟ց և ճգնանաց 'ի ստացութ՟ նոցին. թէ՝ իսպառ անդէպ կամ թեթև յոյժ են դժուարութ՟իքն՝ զորս գուցէ ունկնդիրք կարծեն, և որք ենն՝ չեն ինչ անվանելիք. թէ՝ ներհական մոլութ՟ին ևս ոչ է ազատ 'ի սրտամաշ դառնութ՟ց և 'ի վշտաց , **17** բաղդատեսցէ զպաշտօնն ընդ դիմադրելոյ նորին , ընդ զանյառութն կամ ընդ մոլութն , և անտի կերպաւորեսցէ զպէսպէս գեղեցիկ իմաստս և զշարժառիթս առ 'ի դրդել զկամս . **18** մանրանկար գրչաւ գծագրեսցէ առաջի ունկնդրաց զհոգևոր հետևանս և զներքին պտուղս պաշտամանն . իբրու այն թէ բարեգործութն հաստատէ և կատարելագործէ զբարոյական կնիք և զյատկանիշ հոգւոյն 'ի բարին , ծնանի զանուշակ անդորրութն և զաստուածային ուրախութն խղճի մտաց , զքաղցր զերկնային զգածումն սրտի , զլուսաւորութն մտաց , զարդիւնս և զխրատունս վարձուց առ Աստուծոյ . ուր անդրադարձ սարօք՝ չար գործն խոցոտէ և կրծէ զխղճմտանս , խաւարեցուցանէ զմիտս , լնու զհոգին դժոխային դառնութբ՝ զարհուրանօք՝ երկիւղիւ՝ և անհանգիստ կոտտանօք . մինչև ոմանց մխիլ յանձնասպանութն առ ազատելոյ յանողորմ նեղքին դահճէ անտի . **19** 'ի թիւ արկցէ նոյնպէս զկենցաղական հետևանս և զարտաքին պտուղս պաշտամանն . որք են 'ի բարեգործութէ ծնեալ փառք՝ պատիւ՝ համբաւ՝ գովութն՝ յաջողութն՝ հարստութն՝ խաղաղութն , առողջութն , վարձք և պսակըք մեծաւորաց , սէր և բարեկամութն սիրելեաց , շնորհակալութն երախտագիտաց , օգուտ ընկերաց՝ հայրենեաց՝ եկեղեցւոյ՝ քաղաքի՝ ընտանեաց և համօրէն ազգի , փոխադարձ հատուցմունք , և այլ բազմադիմի բարիք ըստ մարմնոյ՝ ըստ գերդաստանի՝ ըստ քաղաքի և ըստ հասարակութն . ուր և ներհականք դոցին 'ի չար գործոց ծընեալք , ամօթ , անպատուութն , անարգութն , անյաջողութն , նախատինք , վատահամբաւութն , պատիժք , կորուստ ընչից , աղքատութն , հիւանդութիւն , և ամենայն չարիք և թշուառութիք 'ի մեղաց բղխեալք . ուր և նոյն իսկ մահն՝ որդ խայթոց և թոշակ մեղքն են . **20** ստուերագրեսցէ ևս զհետևանս ապագայ կենաց , զվերջին վախճան գործոյն և գործողին , զյաւիտենական երջանկութն կամ զթշուառութն յետ մահուան . զոր ամենայն ազգ և ազինք հաւատան յուսոյն և ընդունելի ունին ըստ արժանեաց՝ որոց ասեն գործեցին . **21** յամենայնի յայդոսիկ փոյթ կալցի՝ զի զաւարկայ բանիցն ձևացուսցէ քանակութ՟ մեծ, մասամբք բազմաթիւ և բազմայեղ, տարածութ՟ ընդհանուր, աստիճանաւ ստորիկ, տեղեաւ և ժամանակաւ մերձաւոր, կշռութ՟ ամենածանր, և որ 'ի դիւրս բերին . **22** 'ի բաց 'ի միջոյ հերքեսցէ զամենայն ինչ՝ որոց նախատեսն լինի փնասել իւրական կամաշարժութե՟, զնախապաշար դատողութի՟ս մտաց, զմոլորութի՟ս, զստութի՟ս, զյուսահատութի՟, զծուլութի՟, զհակակրութի՟ս, զներհակս զգածմունս սրտի, այլովք հանդերձ . **23** 'ի մէջ ածցէ զհեղինակութի՟ և զվկայութի՟ իմաստասիրաց՝ զգիտնականաց և դպրոցաց, որք բանիւ և գրով վկայեալ իցեն պաշտամանէն՝ զորմէ բանքն են . **24** նոյնպէս զհասարակ զգացմունս և զկարծիս ամենայն մարդկան, զհամարումն ամենայն ազգաց և ազանց, կամ զմիոյ Թագաւորութե՟ և ժողովրդեան . **25** այլ և զօրինակս գործոց մասնաւորաց կամ հասարակութե՟, որք կամ ներգործելով և կամ կրելով՝ վարուք և բարուք հաստատեալ իցեն զբարութի՟ կամ զչարութի՟ պաշտամանն . **26** հոգևոր քարոզիչք յամենայն յասացելոց յաւելուցուն զվկայութի՟ս բանից և գործոց աստուածաշունչ գրոց, նա և զվարդապետաց և զժողովոց եկեղեցւոյ, ևն՟ . **27** ինքն իսկ Ճարտասանն 'ի յօրինելն և յատենաբանելն լցեալ և գրգռեալ լիցի նովին բաղձանօք՝ զոր յայլս կամիցի զարթուցանել . և յամենայն շարժմունս և 'ի բանս ի՛ր յայտնապէս ցուցցէ ունկնդրաց՝ թէ ինքն իսկ արդեամբք ունի տարրացուցեալ 'ի սրտի և 'ի կամս իւր՝ զոր նոցայն ապպարէ . **28** ուսուսցէ նոցա զմիջոցս և զգործիս՝ որովք հնար և հարկ իցէ ստանալ զառաքինի գործն, կամ յաղթել և բժշկել զմոլութի՟ս . **29** ցուցցէ զլուցկիս և զճարակս՝ որովք սաստկանայ կամ թուլանայ բարեգործութի՟ կամ մոլութի՟ն այն . նոյն և զարգելանս և զխափանարարս, և զդեղորայս նոցին . **30** յառաջ բերցէ և նանրացուսցէ զսուտ բաղբաղայս և զպատրուակս՝ որովք սովոր են մարդիկ անբասիր առնել և արդարացուցանել զինքեանս ՚ի տակս չվերբերելոյ զայս ինչ առաքինութիւն, կամ վասն յանձին ունելոյ զայն ինչ մոլութիւն։

§ 249. Բաշահանութիւն չար հրապուրանաց.

Որպէս ՚ի միտս բաց ՚ի տգիտութենէ (որ է չքուն իմաստից) յոլովակի գտանին նա և դրական մոլորութիւնք և սխալագտութիւնք, նոյնպէս և ՚ի կամս ունկնդրաց բաց ՚ի պղերգութենէ (որ է անգոյութիւն գործարարութե՟) տարրացեալ գտանին երբեմն և վատթար ունակութիւնք ինչ խափանիչք պաշտօնակատարութե՟, զորս մեք միով ձայնիւ կոչեմք՝ հրապոյրս չարեաց. որոց գլխաւոր ցեղք համարին, 1 սրտաթափութիւն կամ լքումն հոգւոյ և սրտի, ըստ որոյ ունկնդիրն համոզեալ գտանի ՚ի միտս իւր, ոչ թէ անկարող և անբաւական իցէ ինքն ՚ի գլուխ տանել զպաշտօնն ապապարեալ. 2 համարել սխալակի՝ թէ պաշտօնն ոչ իցէ էական և յոյժ հարկաւոր մասն առաքինութեան, կամ ոչ այնչափ խստիւ վերաբերեսցի առ ինքն և առ վիճակ կենաց իւրոց. և կամ՝ թէ պարտաւորութիւն ընդ այն՝ չիցէ այնչափ ծանր և սաստիկ, մինչև կապել զինքն արտաքսութե՟ այլոց վայելչութե՟ց. որ այն ինքն է՝ սեղմել զկոպար տարածութե՟ պաշտամանն, կամ բացառութիւս կեղծել ՚ի նմա. 3 երկնչել ՚ի դժուարութե՟ց և ՚ի վշտաց՝ իրօք կամ կեղծեօք յընթացս պաշտօնակատարութե՟ դիպելոյ. 4 չառնուլ յանձն զրկել ՚ի հեշտութե՟ց, կամ երկնչել ՚ի կորուսանելոյ զշահս և զօգուտս ինչ ՚ի պատուիրանազանցութենէ անտի արդեամբք կամ վրիպելութիւ ծնեալս. 5 սիրել և հանապազորդել յառիթս պաշտօնազանցութե՟. 6 նմանել կամ զհետ ընթանալ չար օրինակաց մոլութե՟ց այլոց. և այլ նոյնպիսիք։

Զդեղորայս սոցա ցուցեալ եմք ՚ի վերնագիր կանոնսդ, յորոց սակի են, 1 ապացուցանել փաստիւք թէ մարդ զդա ընդ նպաստե՟ց աստուածային շնորհաց կարող է անձնիշխանութեամբ 'ի կատար ածել զամենայն հրամայեալ պաշտամունս. զի անհնար ինչ ոչ հրամայի մեզ ոչ յԱստուծոյ և ոչ 'ի մեծաւորաց. 2 հերքել և ուղղել զսխալ կարծիս ունկնդրաց զդժուարութեանց բարի գործոյ. 3 եթէ արդարև կայցեն նեղութիւնք և վիշտք ինչ՝ չուրանալ և չթափուցանել զայնս, այլ խոստովանիլ՝ բայց և ցուցանել զմիջոցս վանելոյ և յաղթելոյ այնց. 4. ուսուցանել՝ թէ նա և Ճանապարհ դիմադրեալ պաշտօնազանցութեան ոչ է ազատ 'ի փշոց և 'ի խաչից. 5 ուղղել զսխալադատ համարումն ունկնդրաց՝ զկոպարփակութենէ պաշտամանց, և զսուտ բացառութենէ անձանց կամ վիճակաց ոմանց 'ի պարտաւորութենէ նոյին. 6 փարատել զմնոտի երկիւղն կորուսանելոյ զապօրինաւոր օգտութիւն մոլութեանց, և հաստատել զճշմարտին վնասակարութիւն նոյին ըստ հոգւոյ՝ ըստ մարմնոյ և ըստ կենցաղոյ. 7 զառիթս մոլութեանց և զչար օրինակաց զօրութիւն դարմանեսցէ ըստ կանոնաց կանխաւ աւանդելոյ 'ի բանի հերքողութեան ։

§ 250. Յամենայն ասացելոցդ ակներև տեսանի՝ թէ բուն գրգռութիւն կամաց 'ի գործել (զոր նախնիք կոչեն՝ շարժութիւն կրից) սեպհական զօրութիւն է առարկային միայնում. որ իւրովք յիշատակեալ հանգամանօքդ պարտի ներգործել՝ յաջողեցուցանել՝ յափշտակել՝ տիրապետել՝ բռնադատել և գրաւել թէ զզգայութիւնս, թէ զերևակայութիւն, թէ զմիտս, թէ զսիրտս, և թէ զկամս ունկնդրաց, առ 'ի Ճանաչել զինքն, առ 'ի սիրել և առ 'ի ստանալ զինքն. իսկ Ճարտասանն ընդ մէջ առարկային և ունկնդրաց՝ իբրու թէ հարսնածուումն է և խնամախօս. որոյ բովանդակ Ճարտարութիւն յայն գումարի, զի ամենայն դեղովք արհեստի իւրոյ մարթասցի քաջ նկարագրել զգեղ առարկային, և գողանալ յափշտակել զամենայն կարողութիւնս հոգւոց ունկնդրաց. այնպէս զի նոքա յայնմ յայլ փոփոխեալք և որպէս թէ 'ի թովչութեանց ոմանց կախարդեալք՝ ածցեն զնա յիրեանց հարմոնուե̄ · և որովհետև յաջողուած և յաղթանակ այդպիսի՝ կարի դժուարըմբռնելի է , կարևոր համարիմք յաւելուլ յայս նիւթ և զայլ պէսպէս ծանօթութիւնս 'ի պէտս համբակաց ։

1 Զգուշութ̄ 'ի միտ առցեն և խորհեսցեն Ճարտասանք՝ թէ ա՛յլ ինչ է՝ զգործադրելի պաշտօնն ուսուցանել միայն ունկնդրաց · ա՛յլ ինչ է՝ փաստիւք ապացուցանել զճշմարտուե̄ նորին , կամ հաւատալի առնել նոցա զայն · ա՛յլ ինչ՝ զգածել զնոսա հանգամանօք նորին · և ա՛յլ ինչ՝ գրգռել ևս զկամս և զձեռս նոցա յարդեամբք իրագործուե̄ · վասն որոյ պատկառ կացցեն ատենախօսք չխաբել զինքեանս և զայլս՝ շփոթելով զչորեսին դոսա ընդ իրեարս , կամ զառաջինսն միայն մատակարարելով՝ վճարեալ համարել զպարտաւորուե̄ իւրեանց · զի վերջին կէտ նպատակի և պսակ ամենայն ջանից նոցա՝ է զչկամեցող ունկնդիրն առնել կամեցող , և զչգործողն փոխարկել 'ի գործող · և զայդ միայն պահանջին նոքա ամենայն իրաւամբք · 2 որովհետև պատկերք երևակայուե̄ և գաղափարք մտաց որչափ առաւել լուսափայլ պայծառանան , այնչափ սաստկութ̄ դրդեն և մղեն զկամս 'ի գործ , յայդմանէ հարկ 'ի վերայ դնի Ճարտասանից՝ մեծապէս խնամ տանել բացորոշ յատակուե̄ ճանաչողական կարողուե̄ց ունկնդրաց · այնպէս զի միտք նոցա լիուլի իմասցի զամենայն հանգամանս պաշտամանն · նոյն և հաւատասցէ անկասկած ճշմարտուե̄ց նորին · նովին ոճով վարեսցի Ճարտասանն և ընդ զգածմունս սրտի , որք նոյնպէս ծանունս գիտեն ուղղել զկամս մարդոյ 'ի գործարարուե̄ · 3 քանզի համասեռ ցանկուե̄ք և բաղձանք ընդ միմեանս լծորդեալք առաւել հրդեհեն զկամս և զիրեարս , իսկ տարասեռք մաշեն շիջուցանեն զմիմեանս և զկամս , ապա հոգալ պարտի Ճարտասանն՝ զի ուր մին 'ի նոցունց ոչ բաւեսցէ՝ 'ի նպաստ կոչեսցէ զայլ համատոհմ ընկերս նորին · 4 օգուտ բազում բերէ ևս յուշի կալել Ճարտասանից՝ թէ որչափ

յորով և ծանր են խոչընդոտք ժառանգութեան բարւոյն, միայն թէ չիցեն անխուսելիք, այնչափ առաւել գրգռեն զկամս, մանաւանդ մեծագործ դիւցազանց և հայրենասիրաց. թէ միջոցաց և գործեաց՝ առ ստացութիւն բարւոյն կարևորաց յաջողութեան, առկայութեան, դիւրութեան, դժուարութեան, և այլ պարագայք մեծապէս զօրեն արծարծել կամ հովացուցանել զեռանդն ցանկութեան. և թէ՝ տարանջատութիւն բարւոյն ըստ տեղւոյ և ըստ ժամանակի կարի բորբոքէ զսէրն առ 'ի միանալ ընդ սիրելւոյն. որպէս ծնողք 'ի զաւակաց, և ամուսինք յիրերաց անջատեալք հաշին և մաշին սիրով. նոյնպէս և Ճշմարիտ աստուածասէրք ընդ Դաւթի և ընդ Պաւղոսի ցանկութեամբ աստուածային տեսութեան միշտ աղաղակեն, Երբ եկից երևեցայց երեսացդ Աստուծոյ։

§ 251. Հարկաւոր ծանօթութիւնք վերաբանութեանց.

'Ի կատարածի աստ հոգեշարժ վերաբանութեանց մնայ ինչ ինչ ծանուցանել ուսանելեաց կարևոր. և նախ՝ թէ նախնի հեղինակք Ճարտասանութեան զվերաբան ներգործութիւն Ճարտասանին կոչեցին՝ գիւտ կամ գտանել, իսկ զգտանելի նիւթս ըստ զհանգամանս առարկայից՝ անուանեցին տեղիս. բայց 'ի բազմութեան խառնակեցին զերկոսին զնոսա ընդ իրեարս. վասն զի թէպէտ և սեռ, տեսակ, պարագայք, նախընթացք, հետևորդք, պատՃառ, և գործ՝ են արդարև տեղիք կամ հանգամանք, բայց սահման, թուումն մասանց, նմանութեան, հակադրութեան, և բաղդատութեան՝ ոչ են տեղիք, այլ ներգործութիւնք Ճարտասանին, կամ պտուղք 'ի ներգործութենէ նորա արտադրեալք (որպէս յայտնի է 'ի սահմանացն որով բացատրեն նոքա զնոսա). և սակայն ոչ միայն հին՝ այլ և նոր հեղինակք ոչ միտ դնելով խառնավարութեամբ 'ի մի կոյտ դասեն զամենայն. և միով անուամբ զբոլորն կոչեն տեղիս. զորս զառաջինն մեք՝ որպէս կարծեմք՝ հոգացաք զատանել յիրերաց. և զերկաքանչիւրոց զսեպհական կայան նշանակել. իսկ առ պայծառ իմանալոյ զխորհրդոյն՝ կրկնեմք զյոլովակի ասացեալս մեր, թէ յամենայն ներգործութիւնս չորք ինչ են զանազանելի. ենթակայ և առարկայ ներգործութեանց, անցաւոր ներգործութիւնք, և միացական պտուղք 'ի նոցանէ արտադրեալք. ըստ այդոցիկ՝ 1 ենթակայք վերաբանող ներգործութեանս են երեք, միտք՝ սիրտ և կամք Ճարտասանին. 2 անցաւոր ներգործութիւնք նոցա զանազան են ցեղիւ. զի 3 միտքն պարտի նախ տեսանել և գտանել զառարկայս իւր, իմա զհանգամանս ճառին, երկրորդ առնուլ 'ի նոցանէ զսերմանիսն, և ոչ թէ յղանալ նոքօք, երրորդ տածել և սնուցանել զնոսա բաւական ժամանակաւ, փոխել զնոսա 'ի սաղմն կենդանի, և հասուցանել զնա յօրինաւոր հասակ իմաստից. և չորրորդ ծնանել զսաղմն իբրև զիմանալի զաւակ և պտուղ որովայնի. այլ և 4 սիրտ Ճարտասանին պարտի զգածել հանգամանօք ճառին, նոյնպէս և 5 կամք նորա պարտական է զրգռել և շարժել հզօրեղապէս 'ի գործադրութի՛ ըստ պահանջելոյ հանգամանաց ճառին, այդ ամենայն անցաւոր ներգործութիւնք՝ կոչեցան 'ի նախնեաց գիւտ, դատանել. 6 առարկայք երրեակ ներգործողացդ և ամենայն ներգործութեանցդ՝ են հանգամանք ճառին կամ նոյն իսկ առարկայի Ճառին, բաժանեալք յերիս սեռս. որք են, Ճշմարտութիւնք 'ի մտաց ճանաչելիք և հաւանելիք. գեղեցկութիւնք 'ի սրտէ զգածելիք, և բարութիւնք 'ի կամաց գործադրելիք. 7 միացական պտուղք կամ զաւակք յերրեակ ծնողացդ ծնեալք՝ են կանխասաց վերաբանութիւնքդ, 'ի մտաց՝ 'ի սրտէ և 'ի կամաց Ճարտասանին արտադրեալք. որք 'ի մի մարմին բոլորեալ՝ կացուցանեն զներքին կեանս և ոչ թէ զհոգի Ճարտասանին. որում և հարկ 'ի վերայ կայ բարեկարգել և կապակցել զնոսա 'ի մի փունջ ճառական, մարմնացուցանել պերճախօսութ՛, և փոխադրել զնա յունկնդիրս:

§ 252. Երկրորդ՝ թէ որովհետև երեքին ծնողքդ վերաբանութեանց , միտք (ընդ որով իմանին զգայութիւնք և երևակայութիւն) սիրտ և կամք Ճարտասանին՝ պէսպէս որակութիւնք գերազանցութիւնք կամ թերութիւնք իւրեանց բազումս գտեն ազդել 'ի բարի կամ 'ի յոռի յղութիւն և 'ի ծնունդ վերաբանութեանց , ըստ նոցանէ՝ և արտաքին պերճախօսութեանց և բոլոր Ճառին , այդու աղագաւ որ ոք ծայրանալն կամիցի յարուեստին՝ պարտական է կանխաւ քաջ կատարելագործել զյիշեալ կարողութիւնս հոգւոյ իւրոյ անթերի ուսմամբք կարևոր գիտութեանց , յաճախ ընթերցանութեամբք ընտիր հեղինակաց , և առաւել՝ խորախորհուրդ յերկարատև մտածութեամբք կամ որոճանօք առարկային Ճառին . ոչ զի մարթասցի պիտանաւոր և շահաւէտ ինչ ծնանել յօգուտ ազգին և հայրենեաց , և նպաստել ուսումնակարօտ եղբարց ։

§ 253 . Երրորդ՝ համբակք մի համարեսցին , ոչ թէ յամենայն Ճառս հարկ իցէ որոշ որոշ յօրինել միշտ զմտաւորս , զսրտազգած և զկամագրգիռ վերաբանութիւնսդ առ մի և նոյն բնաբան . իբր զի՝ ոչ այլուր ազդեցայք՝ մի նոյն ցեղ վերաբանութեան , ոչ , կենդանագրութիւն , պատմութիւն , նմանութիւն , օրինակ , վկայութիւն , ևն , յոլովակի ձեռնհաս գտանի և բաւական ներգործել թէ 'ի միտս , թէ 'ի սիրտս , և թէ 'ի կամս ունկնդրաց . բայց յաջողութիւն այդպիսի կախեալ կայ զճարտարութիւն Ճարտասանին 'ի յանկելն և 'ի յարմարելն զնոյն մի բանն առ երրեակ կարողութիւնս հոգւոյ . զոր չէ մարթ մեզ կանոնօք ինչ ուսուցանել , զի անթիւ են մասնաւոր պարագայք Ճառից ։

ՅՕԴՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ·

Յաղագս յառաջաբանի և վերջաբանի·

§ 254· Զինչութիւն և այլ հանգամանք յառաջաբանի (praefatio)·

Յառաջաբանն է համառօտ փունջ իմաստից, կարգեալ՝ ըստ ցուցանելոյ անուանն՝ 'ի գլուխ մարմնոյ ճառին, իբր նախադաւիթ պալատան· յորում ճարտասանըն արծարծանէ զուշադրութիւն մտաց և զփափագ սրտի ունկնդրաց առ ընդունելութիւն ապագայ մասանց ճառաբանութեան։ Առարկայք նորա ոչ են նոյն ընդ գլխաւոր առարկայի ճառին, այլ կողմնական հանգամանք նորա, որպիսի են հարկաւորութիւն, օգուտն, յարգն, ազնուութիւն, մեծութիւնն, սեռն, ցեղն, նմանն, տեղին, ժամանակն, և այլ դոյնպիսիք· մերթ ևս վիճակ ունկնդրացն կամ նորուն իսկ ճարտասանին, այլովք հանդերձ։ Նպատակ նորա է ցուցանել ունկնդրաց զառարկայ ճառին, ոչ պայծառադէմ բացերեւութեամբ, այլ իբր ընդ վարագուրաւ և 'ի հեռաստանէ· բայց այնպիսի արհեստիւ՝ զի զրգռեսցի նորասիրութիւն՝ հետաքրքրութիւն և յօժարակամութիւն նոցա առ 'ի ճանաչել զնա դէմյանդիման և լիապատար։ Ներքին նիւթ նորա են իմաստք զգուշաւոր խոհականութեամբ կազմեալք զվերոգրեալ առարկայից, և յանկաւորեալք այլոց մասանց։ Կերպաւորութիւն կամ զետեղումն նիւթոց յօրինի ըստ միոյ 'ի ցեղից շարաբանութեանց կամ հետեւաբանութեանց։ Տեղի և ժամանակ յառաջաբանից են 'ի բուն կամաշարժ ճառս, ևս և 'ի որտադրածս · իսկ 'ի լոկ մտավարժս, կարի համառօտ կամ ոչ երբեք · բայց դիւրի երբեմն և 'ի կամաշարժս 'ի բաց թողուլ, ոպ՟ առնեն ոսկեբերան 'ի կշտամբանս տեսարանաց կրկեսաց, խորենացին յողբսն վասն ազգին հայոց · կիկերոն յառաջին ճառն կատիլինայ, և այլք ։ Քանակուե՟ և որակուե՟ նորա ամենևին պարտին համեմատիլ այլոց մասանց ճառին · և անձուկ կապակցիլ ընդ նոսա · իսկ բարբառ կամ լեզու նորա՝ հանդարտ, ծանր, միջակ, վեհ, և խառնեալ սակաւ զարդարանօք ։

§ 255 · Սովորական եղանակք կամ կերպարանք յառաջաբանելոյ են յետագայք · սկսանել զճառն, 1 'ի բուն առարկայէ նորին՝ առանց պատ 'ի պատ թափառուե՟ց · ոպ՟ առնեմք 'ի հասարակ խօսս և 'ի նամակս · և ոպ՟ արար մեծն վարդան 'ի բանն առ ընկերս և զօրս իւր (տես յեղիշէ · յէջ 174) · 2 'ի պարտաւորուե՟՝ 'ի պաշտամանէ՝ 'ի տկարուե՟ կամ յանարժանուե՟ անձին իւրոյ · ոպ՟ առնեն եղնիկ կողբացի և սարգիս մեկնիչ 'ի գլուխ մատենից իւրեանց · 3 'ի պատճառաց և յառիթից ճառելոյ, 'ի բաղձանաց ընկերսիրուե՟՝ հայրենասիրուե՟՝ երախտագիտուե՟ան՝ հնազանդուե՟՝ արդարուե՟՝ բարեկամուե՟ · ևն՟ · ոպ՟ առնէ կիկերոն 'ի ճառսն յաղագս հռոսկիոսի և մարկեղոսի՝ յարտաքին պատճառաց · 4 յանձնէ և 'ի հանգամանաց ունկնդրաց՝ դատաւորաց կամ ամբաստանելոյ · ոպ՟ թէ աղաչելով զնոսա, հորդորելով, խօսակցելով, խորհրդակցելով, ևն՟ · ոպ՟ առնեն շնորհալին յաւուր ձեռնադրուե՟ն · լամբրոնացին յատենաբանուե՟ · կիկերոն 'ի զանազան նամակս իւր (տես և զայլ օրինակս · գրծց · իբ · 2—8 · իզ · 2—4) · 5 'ի հանգամանաց և 'ի պարագայից ժամանակին կամ տեղւոյն ճառելոյ · ըստ այսմ սկսանին խորենացին զներբողն հռիփսիմեանց · նարեկացին զողբսն հէ՟ · և կիկերոն զճառն յաղագս կեղիոսի · 6 'ի ներհականաց և 'ի հակադրելոց առարկայի ճառին · ոպ՟ 'ի խօսելն զսիրոյ կամ զիմաստուե՟՝ սկսանիլ զատելուե՟ և զտգիտուե՟ ·

7 'ի պատկերաց՝ առ նմանուի̅, համեմատուի̅, և բաղդատութիւն առարկային մատուցելոց • որպէս յայս բան շնորհալւոյն ,, նիւթականս հուր 'ի նիւթոց նուազեալ շիջանի • իսկ 'ի հոգւոջ ներգոյացեալ բոց հպարտուե̅ և բարկուե̅, ևն̅ • 8 'ի ճշմարիտ կամ 'ի կեղծ յարացուցէ և յօրինակէ մարդկան • ո՞չ առնէ յովհան օձնեցի յատենաբանուե̅ն ,, համբերողացն նախատիպ մեծն յովբ ասէր երբեմն յիւրում՝ բանսն • • • զնոյնն և ես հանդերձ հառաչմամբ բարբառիմ, ևն̅ • 9 'ի փոխաբերեալ և յայլաբանեալ գաղափարաց առարկային • ըստ նարեկացւոյն 'ի ներբողն առաքելոց ,, տնկելոց ծաղիկք և տունկք անանցալիք տանն եդեմայ, ևն̅ • 10 'ի հեղինակուէ̅, 'ի վկայութենէ, 'ի վճռաբանուե̅ց, 'ի գեղեցիկ առածից, 'ի բացայայտ ինչ ճշմարտուէ̅, 'ի վճռաբանեալ ինչ խնդրոյ, ևն̅ • այդպէս սկսանի կիկերոն դպիրս հռետորականին • զոր կարդա՛ առ նմա • 11 'ի տարակուսելոյ և 'ի վհատուէ̅, ո՞չ թէ չգիտելով ուստի սկսանել զբանն առ հոծուե̅ նիւթոյն • որպէս առնէ ոսկեբերան 'ի գովեստն իգնատիոսի • 12 ունելով խօսել զանհատէ՝ զմանէ՝ զցեղէ, սկսանել յընդհանրոյն 'ի սեռէն կամ 'ի բոլորէն • որպէս 'ի ճառելն զծուլուէ̅ սկսանել 'ի սեռէ նորին 'ի մոլուէ̅ • այս եղանակ յաճախ փարի 'ի նիւթս ցամաքս և յոսինս • միայն՝ չէ արժան յերկար դեգերել 'ի նոսին : Ըստ դոյունց տարազու մարթ է և զայլ յոլով եղանակս նորոգ սահմանել, կամ ուշադիր քննողուե̅ 'ի գործս հռչակաւոր ճարտասանից՝ մանաւանդ նորոց՝ գտանել, և յիւր պէտս վարել զօրանի նմանողուե̅ • որ չէ ումեք արգելեալ :

§ 256 • Կարեւոր կանոնք և ձիրք յառաջաբանուե̅ համարին, 1 սեփհականուի̅ և քաջայարմար պատշաճողուի̅ ընդ առարկայի, ընդ բնաբանի և ընդ նպատակի այնր անհատ ճառի • այնպէս զի թուեսցի նա իբր բնաւոր և հարազատ գլուխ այնր իրանաց, կամ իբր անպատուաստ բնաբոյս շառաւիղ յայնմ արմատոյ ընձիւղեալ • 2 ուրդնութիւն նիւթոյ . զի մի ինչ պարունակեսցի 'ի նմա՝ որ ապա բոլորովիմբ կրկնեսցի յիրանս Ճառին . զի կորուսանէ զտպաւորութիւն և զազդուութիւն իւր . 3 սերտ ազդակցութիւն ընդ բնաբանին . որպէս զի 'ի գլխաւոր գաղափարէ նորա առանց հեռապոյտ թափառանաց և առանց ընդոստ թռուցից ինքնաբերաբար անցումն լինիցի առ բնաբանն . 4 նորութիւն և արտաքոյ սովորականին ձևակերպութիւն ըստ նիւթոյն կամ ըստ արտաքին կերպարանացն . 5 չափակցութիւն և համեմատութիւն քանակութեան նորա՝ որպէս և 'ի վերոյ ասացաւ՝ ընդ իրանաց և այլոց մասանց Ճառին . 6 համեստաբան անձնապահութիւն 'ի խօսս՝ առ 'ի չխոստանալ աստանօր զմեծամեծս և ապա հատուցանել զփոքրս . կամ որպէս առասպելն ունի՝ երկնել իբրև լեառն, և ծնանել իբրև մուկն . այլ ընդ հակառակն ողջախոհ եւս է՝ սակաւ խոստանալ, և բազում հատուցանել . 7 մատչել 'ի յօրինուած սորա՝ յետ որոյ վճարեալ իցէ՝ գէթ 'ի միտս՝ համօրէն կազմած բնաբանին և վերաբանութեանցն . զի յառաջ քան զայդ գրեթէ չէ հնարին գտանել զդուռն մտից՝ ընդ որ արժան իցէ դէպ ուղիղ դիմել 'ի բնաբանն . ըստ իրաւացի խրատուն կիկերոնի ։

§ 257 . Զինչութիւն և այլ հանգամանք վերջաբանի
(peroratio) .

Վերջաբանն է զեղչեալ փունջ իմաստից՝ յարեալ յաւարտ Ճառին իբր կնիք և դրոշմ . յորում Ճգնի Ճարտասանն յաղթանակել յունկնդիրս, քաղել զպտուղ վաստակոցն, արդեամբք 'ի ձեռս բերել զնպատակ իւր, ածել ձգել զունկնդիրս՝ յոր ինչ և կամէրն, և առնել զնոսա գործունեայս և վերբերիչս առարկային Ճառելոյ . յորոյ ինքնին իմացեալ լինի՝ թէ բուն տեղի և ժամանակ սորա է 'ի կամաշարժական և 'ի սրտազդած Ճառս, իսկ 'ի մտավարժս՝ սակաւ ուրեք կամ ոչ երբէք ։ Նիւթ սորա են իմաստք ըստ ձևոյ շարաբանութեանց կամ հետեւաբանութեանց դատաւորեալք · իսկ առարկայ են՝ հիւթք վերաբանութեանց · զորոց որպէս թէ զծուծս կամ զուղեղս վերստին քամեալ և մզեալ, կամ թէ զբանադատիչ զօրութիւն նոցա 'ի մի կենդրոն հաւաքեալ, նոքօք միւսանգամ բաղխէ ճարտասանն և հարկանէ ատամանօր զսիրտս և զկամս լսելեացն, առ 'ի սպառ ընկճելոյ և յաղթահարելոյ զնոսա · ըստ այդոցիկ վարժապետք արուեստին պատուիրեն զվերջաբանն բոլորել կրկնաբանութեամբ, յանկաւորութեամբ և կրիցաշարժութեամբ: Կրկնաբանել է՝ որ ինչ ասացաւ՝ յուշ ածել ունկնդրաց համառօտութեամբ զքաղուածս հզօրագոյն վերաբանութեանց, բայց այլափոխ և նորատեսիլ կերպարանօք և շքեղափայլ վարդուք · սակայն որովհետեւ նպատակ սորա է զառաջս առնուլ զմոռացութեան ունկնդրաց՝ ինքնին 'ի յայտ ածէ թէ չունի տեղի 'ի տպագիր և 'ի սակաւապատում բանս · այլ միայն 'ի բազմամանուած և 'ի յոգնապարունակ բացախօսութիւնս · յորս կասկած կայցէ շփոթիլ խորհրդոց հանդիսականաց 'ի լսել անդ, և կորուսանել զթելս և զելս բանիցն: Յանկաւորել է՝ որ ինչ կանուխ ասացաք՝ զվերացեալն թանձրացուցանել, զընդհանուրսն յանհատս իջուցանել, 'ի պարունակաց զհետեւանս ելուզանել, զհեռաւորս մօտաւորել, զանցեալս կամ զապագայս ներկայաւորել, և զամենայն ինչ որպէս թէ զդեցուցանել ունկնդրաց · ուսուցանելով նոցա 'ի մասնաւորի թէ զինչ պարտին գործել, և որպէս գործել, և դրդելով զանձնասիրութիւն նոցա և զյատուկ օգտախնդրութիւն · այնպէս զի իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ՝ յաղթահարեալ 'ի ճշմարտութենէ, և 'ի չկամեցողէ 'ի յօժարական փոխադրեալ ասասցէ անդէն ընդ միտս, առ իս ելանեն բանքդ, այս արարից այդպէս՝ որ ինչ ուսայ: Իսկ անուանեալն շարժութիւն կրից՝ նոյն է ընդ սրտազդածութեան և կամաշարժութեան · զորոց և բովանդակ հաստուցեալ եմք կանխաւ լիուլի: Միայն քաջ յուշի կալցեն համոզաբանք՝ թէ 'ի կատարածի դիւնօրինակ ճառից՝ երկու ներհական ծայրք սպասեալ ձայն նոցա առանց միջակէտ վիճակի․ խմա՛ կամ արդեամբք շարժել և նետել զունկնդիրս ՚ի նպատակն․ կամ ՚ի չզօրելն զայդ՝ ծաղր և ծանակ եղեալ անգոսնիլ ՚ի նոցանէ․ վասն որոյ գուն գործեսցեն, մի՛ ՚ի վերջաբանի աստ ընաւ չխօսել առ միտս, այլ միայն առ սիրտս ունկնդրաց, և միւս՝ զզգածմունս և զդրդութիւնս սկսանել ՚ի ստորին աստիճանէ, և հետ զհետէ արծարծանել և բորբոքել մինչև ցբերագոյն կատար սաստկութե՟․ առ որ պահանջի ամենանուրբ հնարագիտութի՟․ քան զի յայդմ աստիճանաձեմ վերածայրութե՟ զգածմանց և դրդութե՟ց՝ ամենայն յետագայ բանք, որք ոչ ամեհացուցանեն և կատաղեն զնախընթացս, հարկաւ կթուցանեն և լքուցանեն զնոսա․ որով և զահավէժ թաւալեն զունկնդիրս ՚ի բարձանց ՚ի խոնարհ, կամ յաջմէ յահեակ, ՚ի նախատինս ճառատաբանին ։

ՅՕԴՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ․

Յաղագս յեղանակաց իմաստաբա՟ ութենաց․

§ 258․ Զինչութիւն և բաժանումն յեղանակաց․

Յեղանակօք իմանամք զայն ինչ՝ զոր նախնիք կոչեցին ձևս իմաստից․ այնք են՝ պատահական կերպք ինչ ՚ի գրգռեալ հոգւոյ ճարտասանին բղխեալք, որք ուժգնութի՟ս և շքեղութի՟ս յաւելուն յիմաստս․ և տան նոցա հզօրագոյնս ազդել ՚ի հոգիս ունկնդրաց․ յօրինակի համար՝ ասել պարզապէս,, հաւատք են յուսացելոց իրաց հաստատութիւն, և յանդիմանութիւն որոց ոչն երևին „ սահման հաւատոյ է պատմաբար առաջարկեալ. ոչ այնչափ ճարտասանից՝ որչափ իմաստասիրաց լեզուի անկաւոր. վասն որոյ ճարտասանք կամեցեալ ազդուութիւն տալ բանից՝ փոխեն զայն ՚ի ձև հարցական, և ասեն ընդ Առաքելոյն „ զի՞նչ են հաւատք, եթէ ոչ յուսացելոց իրաց հաստատութիւն, և յանդիմանութիւն որոց ոչն երևին „ յորում թէպէտ էութիւն իմաստին անփոփոխ մնայ, բայց արտաքին կերպարան նորա փոփոխի, և այլազգ եղանակաւորի. և ահա այդպիսի կերպարանափոխութիւնս նախնիք կոչեցին ձևս (schema, figura). և թէպէտ դոքին առաւելապէս ՚ի բարբառն և յարտաքին լեզուի նշմարին, բայց որովհետև բուն հեղինակ դոցա ոչ լեզուն՝ այլ միտքն է, ևս և զի ենթակայ դոցա՝ ոչ բարբառն, այլ ըստ խոստովանութեան իսկ նախնեաց՝ իմաստքն են, յայդ սակս մեզ իրաւունք թուեցան՝ ոչ ՚ի յետագայ պրակն, այլ աստանօր զկնի ծանօթութեանց իմաստաբանութեանց բացատրել և զդոսին համառօտիւ: ՚ի բաժանել զեղանակսդ՝ յայլևայլ կարծիս տարաձայնին ճարտասանք. ոմանց՝ ըստ նպատակայն զատանելով զայնս ՚ի բերկրարարս, ՚ի շարժողականս և ՚ի յուսուցանողս. կէսք՝ ըստ աղբերացն յորոց բղխեն ՚ի մտաւորականս և յերևակայականս. և այլոց՝ այլազգինչ ըստ կամի. բայց որովհետև ոչ ամենևիմբ ճշդերևելին հիմունքդ բաժանման, լաւ ևս համարիմք համագումար աւանդել աստանօր զգլխաւորս ՚ի նոցունց ըստ կարգի անուանցն:

1 Աղերսանք կամ աղաչանք (deprecatio) է իմաստ ուղղեալ առ Աստուած կամ առ մարդիկ, յորում ճարտասանն հայցէ ՚ի նոցանէ զշնորհս ինչ վասն իւր կամ վասն այլոց. օրինակք ձևոյս անհամար են ՚ի սուրբ գիրս և յայլ մատեանս, ևս և ՚ի հանապազորդական խօսս և ՚ի նամակս. ըստ այսմ առաքեալք ՚ի թուղթս իւրեանց յոլով ուրեք աղաչեն զԱստուած վասն իւրեանց կամ վա

հաւատացելոց , յորոց և հայցեն բազում ինչ վասն եկեղեցւոյ և անդամոց նորա . նոյնպէս շնորհալին, լամբրոնացին , սարգիս մեկնիչ , և այլ ականաւոր մատենագիրք մեր յաճախ վարեն զյեղանակդ ՚ի գիրս իւրեանց . որպէս և կիկերոն ՚ի ճառին յաղագս դէոտարայ աղաչէ զկեսար . և ՚ի ճառին յաղագս տան իւրոյ (Գլ. 57) աղաչէ զաստուածս իւր . զնոյն է տեսանել և առ այլ ճարտասանս զանազան ազգաց :

2 Անէծք, նզովք (execratio) է յեղանակ իմաստից՝ յորում ճարտասանն գրգռեալ ՚ի կրից իրաւացի վրէժխնդրութե՝ խնդրէ ինքեան կամ այլոց զպատիժս և զվնասս . յաճախ են օրինակք սորա ՚ի սաղմոսս , ՚ի գիրս յոբայ , և այլուր . որպէս և յողբսն եղեսիոյ . ՚ի նամակին մաշտոց վարդապետի առ աբաս սպարապետ , առ կիկերոնի և առ այլս բազումս : Արժան է զարմանալ ընդ նախնի ճարտասանս՝ թէ զէ՞ր զայս սովորութի̄ անիծանելոյ ՚ի կարգս ձևոց դասելով նոցա , վասն է՞ր զրկեցին յայսմ պատուոյ՝ զօրհնութի̄ն . զի եթէ անիծանելն ձև է , բնաւ իրաւամբք ապա և օրհնելն զԱստուած՝ զմարդիկ և զայլ արարածս՝ զկենդանիս և զանկենդանս իսկ . որոյ և օրինակք անթիւ են ՚ի սաղմոսս և յայլ սուրբ գիրս . որպէս և յօրհնութի̄ս երից մանկանց ՚ի հնոցին , և յայլ բանս վարդապետաց , զանազան փոխաբերութբ̄ք և ՚ի դէմս դէմս հոգեշարժ ոճովք և սրտազգած բանիւք յօրինեալք . որք առաւել քան զանէծս գիտեն զուարթացուցանել զհոգիս ունկնդրաց . ըստ որոյ և հարկ է քրիստոնեայ ճարտասանից՝ խապառկարճել ըզլեզու իւրեանց յանիծից , և յօրհնութի̄ս ընդարձակել ըստ պատշաճի նիւթոյն :

3 Անցումն (transitio) է անօսր և թեթև ոճ ինչ իմաստից , ըստ որոյ ճարտասանն սակաւ բանիւք յուշառնէ ունկնդրաց՝ զոր ինչ մինչև ցայն վայր ասացն , և զոր յայնմհետէ ասելոցն իցէ . որով և զերկուս մասունս ճառին ոչ թէ յօդակապիւ ինչ միաւորէ ընդ-

իրեարս. ով տեսանի յայսոսիկ„ եւ արդ այսոքիկ քեզ վասն այսորիկ բաւականացեալ, ես դարձեալ 'ի կարգ պատմութեանս դարձայց... այս ինչ՝ որ յաղագս համագոյ երրորդութեան՝ բաւականասցի առ այժմուս, տեսցուք սակաւուք և յաղագս աւանդութեանց եկեղեցւոյ, ևն. կարդա եւս բ մակաբ. դ. 17. ա կորնթ. ժբ. 31 :

4 Արտուղութիւն (digressio) է յեղանակ ճառելոյ՝ յորում ճարտասանն անկատար թողեալ զառաջակայ նիւթ իւր՝ 'ի ներքս 'ի մէջ բերէ զիմաստս ըստ ինքեան օտարս, բայց նպատակի իւրում օգտակարս, և առ տեղեաւն կարևորս 'ի լրումն բացայայտութեան բանին. ըստ որոյ օտարին այն անուանի՝ իմաստ միջամուտ կամ միջադրական. տես զօրինակն 'ի բանս առաքելոյն. ա կորնթ. ժա. յորում տունք բանից 17—33 են՝ միջամուտ իմաստք, և զտունն 16 պարտ է կապել ընդ յետագայ գլխոյն. նոյն ձև է և 'ի բանն եփես. գ. ուր տունքն 2—21 են միջադրականք. և առաջին տունն երրորդ գլխոյն յարելի է 'ի գլուխն չորրորդ :

5 Բացադարձութիւն (aversio) ձև ոչ բազմօք տարբեր 'ի նախընթացէն. յորում նոյնպէս ճարտասանն թողեալ զընական ընթացս բանից իւրոց, ուղղէ զիմաստս իւր առ անձն կամ իր բացակայ և անգոյ առ տեղեաւն. տես զօրինակն (§ 203) :

6 Բացագանչութիւն (exclamatio) է իմաստ արտայայտիչ յուզեալ կրից հոգւոյ և գրգռութեան կամ զգածման սրտի ճարտասանին, որ գրեթէ միշտ կից իւր ունի զմիջարկութիւնս կամ զընական ձայնս հոգւոյն. բաժանի սա 'ի յոլով ցեղս ըստ այլայլ զգածութեանց. յորոց սակի են՝ աւաղել, բերկրել, երանել, եղուկ տալ, երգիծանել, զարմանալ, պարհուրիլ, ըղձանալ, խնդալ, հիանալ (մակագանչութիւն ասացեալ յոմանց), սպառնալ, ցաւիլ, տրտմիլ, և այլք բազումք. զորոց զօրինակս տես առ քերականս 'ի բանն յաղագս միջարկութեանց : Կարդա եւս սաղմ. ճգ. 2. հռովմ. ժա. 33. ևն.

7 Գոհութ՟ի կամ շնորհակալութ՟ի է իմաստ առ յայտարարութ՟ի երախտագիտութ՟ե. կամ է խոստովանութ՟ի ընկալեալ բարեաց, հրապարակութ՟ի նուաստութ՟ե իւրոյ և գերապանցութ՟ե տուողին. տե՛ս զօրինակն 'ի սուրբ գիրս յոլով ուրեք. և առ այլ մատենագիրս։

8 Դիմառութ՟ի (prosopopoeia) իմաստ կեղծեալ 'ի ճարտասանէն, և ընծայեալ բացակայի ումեք իբրու անձնաւոր դիմի. զորմէ տես 'ի ստեղծաբանութ՟ե։

9 Զանցառութ՟ի (praeteritio) յեղանակ առաջադրելոյ, յորում ճարտասանն կեղծէ թողուլ և զանց առնել զիմաստ ինչ՝ զոր լռելի արտայայտէ. ոպ՟ յայսոսիկ ,, Թողում ասել զաղգակիցս և զկարեկիցս և ըզլծակիցս հարազատութ՟ս մարդկան. որոց կականումն և ողբումն և աշխարումն զուժից ճչոյ կանչոյ և կառանչոյ, և աղիողորմ ձայնք երգեցիկ գուսանաց և սևազգեաց կանանց և արանց վշտահար հեծութ՟ք սգացելոց, մինչև յերկինս բարձրացեալ հասանէր (յովհ. կաթողիկոս).... Թողից ասել զևս դժնդակագոյն զայսր ժամանակի եպիսկոպոսաց զգործ. զի բազում անարգանաց և տուժից տանին յայլազգեաց. ոչ յաղագս աստուածային օրինաց՝ ոպ՟ առաջին սուրբքն, զի այն երանութ՟ե էր արժանաւոր, այլ վասն ոսկւոյ փառաց յուսոյ (շնորհալի). կարդա՛ ևս, եբրայ. գ. 1—4. փիլիմ. 9. եղիշէ. յեր. 190—192։

10 Լռութ՟ի (reticentia) է յեղանակ՝ յորում վասն բանաւոր պատճառի 'ի բաց թողու ճարտասանն զիմաստ ինչ, զոր մարթ էր յառաջ բերել. տարբերի սա 'ի նախընթացէն յայսմ, զի նա արդեամբք 'ի ներքս բերէ՝ զոր թողուլն խոստանայ. իսկ սա լռէ ճշմարտիւ և այնուիկ առիթ տայ բազում ինչ խորհելոյ և գուշակելոյ այլոց. տե՛ս յօրինակդ ,, յայսմանէ յառաջ բերեն ոմանք բանս, որ թէպէտ գիտնոյ, սակայն սիրոյն քաղցրութ՟ե տգէտ եղելոյ. զի այսչափ ասել բաւական է, և ոչ յայտնել զաւականս ծնողաց... Թուել զսպա-

ուեցուցիչ ախտն՝ հեղգանամ, կամ թէ պճշմարիտն ասել՝ երկնչիմ. զի մի կարծելով ուղղել, 'ի յանդըգնութի զոմանս 'ի տկարամիտ եղբարց իմոց ձգեցից (չաֆ-բրոն). . . . զորս վասն կռոնոսի և արամազդայ պատմութիք իցեն՝ ամաչեմ ասել. ոչ սակս նոցա՝ որ արժանի են ամենայն պարսաւանաց, այլ խնայեմ 'ի լեզու իմ, զի մի ժանտասցի յիշատակօք պղծութե նոցա (ոսկեբ). տես Ես. գլխ. ԺԹ. **42**:

11 Խորհրդակցութի (communicatio) է յեղանակ՝ յորում խրատ և խորհուրդ հարցանել կեղծէ ճարտասանն, ոչ ուսանել ինչ կամելով՝ յորոց խնդրէն, այլ առ հզօրագոյնս յաղթահարելոյ զնոսա. զորոյ զօրինակսն գիտ. եսայ. Ե. 3—5. գործ. Դ. 19. Ա կորնթ. ԺԱ. 13. գղտ. Դ. 21: այլ և յայսմ բանի լամբրոնաց „ վասն այսր խորհրդոյ զձեզ հարցից՝ և տուք ինձ պատասխանի. ո՞ր ըստ ճշմարիտ գթոյ անուանի հայր. ա՞յն՝ որ միշտ զիւր որդին ընդ երեսն գովէ. թէ այն՝ որ զբարեօքն որ 'ի նմա կայ զանց արարեալ, զմասունս չարին 'ի մէջ բերէ և խրատէ ուղղել:

12. Խրամատութի (aposiopesis) է անկարծական ընդհատումն և կրճատութի մասանց ինչ առասութե, ըստ որոյ 'ի բաց թողեալ լինի գաղափար կամ իմաստ ինչ՝ առ տեղեաւն կարևոր, և անցեալ լինի յայլ նիւթ. ո՞վ 'ի սոսին,, եթէ գիտէիր դու՝ գո՞նէ յաւուրս յայսմիկ՝ զխաղաղութին քո — — բայց այժմ ծածկեցաւ յերեսաց քոց (ղկ. ԺԹ) . . . . բաբէ անհաւատալի երագութեն. իսկ մերոյս այսորիկ — — սակայն ոչ կարեմ ամբաստանել զնա՝ զորմէ տաղնապիմ և տոչորիմ (յորում կիկերոն գաղէ զծանդաղութին պոմպէի, առ ատտիկ. Է. **22**) . . . . չար միտք և վատթար հոգի. զոր եթէ զգայցից ես — — բայց զի՞նչ պէտք են խօսից (տէրէնտ):

13 Կրկնութին կամ յեղյեղումն (frequentatio) նոյն միոյ գաղափարի կամ իմաստի, բայց այլևայլ կերպարանօք և ճշդութե արարեալ՝ ձև համարեցաւ 'ի նախնեաց, որ դարդիս չէ ինչ գովելի. մանաւանդ երբ տաղտկութիւն ածէ 'ի վերայ. թէպէտ և չափաւորն գուցէ ներելի իցէ. տես զօրինակն բազում ուրեք 'ի սուրբ գիրս, մանաւանդ Ելից. ԺԵ. 9. 10. Դատաւորաց. Ե. և այլուր:

14 Հակափոխութիւն (antimetabole), է յեղանակ կազմելոյ զիմաստս դէմընդդէմ փոխադրութեամբ գաղափարաց ընդ իրեարս. ոպ,, շաբաթ վասն մարդոյ եղև. և ոչ եթէ մարդ վասն շաբաթու... մի յաղթիր 'ի չարէ, այլ յաղթեա՛ բարեաւն չարին... ուտել պարտ է՝ զի ապրեսցիս, և ոչ եթէ ապրիլ՝ զի կերիցես (ֆէնէլոն):

15 Հարցումն կամ հարցական յեղանակ առաջադրելոյ զիմաստս՝ ինքնին քաջայայտ է ամենայն ումեք, և անկարօտ բացատրութեան և յերկար օրինակաց. զի ամենայն ուրեք 'ի գիրս և 'ի խօսս հանապազօրեայս առձեռն պատրաստ կան ամենեցուն:

16 Հեգնութիւն (ironia) նոյնպէս ծանօթ է ամենեցուն, զոր սակաւ ուրեք և կարի պարկեշտութեամբ պարտին ճարտասանք 'ի կիր առնուլ 'ի հարկաւոր ժամու. ընթերցիր զօրինակն. Բ օրինաց. ԼԲ. 38. Գ Թագ. ԺԸ. 27. Մտթ. 40—45. եւս և առ Խորենացւոյն, Լամբրոնացւոյն, և առ այլս բազումս:

17 Նախապաշարումն (praeoccupatio), յեղանակ յառաջելոյ քան զդիմախօսս, և ինքնին լուծանելոյ զկարծեցեալ առարկութիւնս նոցա. զոր յաւէտ 'ի փաստաբանութիւնս արժան է վարել. տես զօրինակն, Հռովմ. Գ. 1—6. Զ. 1. Է. 7. Թ. 14. 19. Ղկս. Դ. 23. և յայս բան Սարգսի,, Իսկ եթէ զցուրտ պատճառ ասիցես՝ թէ մահուան թօշակ պատրաստեմ զինչս. զի գրեալ է՝ օրինօք մատնեսջիք, և գանձուք եղիցի փրկութիւն ձեր... նախ առաջին ոչ ուղղակի մեկնես զմարգարէութիւնդ. եկ և մեկնեցից քեզ զբանդ. զի մի գայթագղեսցիս գրեցելովքն: Ոչ կարի ինչ տարբեր է յայսմանէ և անուանեալն՝ շնորհումն (concessio), յորում ճարտասանն ցու

ցանէ զի՛նքն ներել տառակուեց դիմախօսին կամ թողուլ նմա խօսել . և ենթադրութ՟ ընդունելով զբանս նորա՝ հուսկ ապա ցրէ զայն ևս . բազում են օրինակք սորա առ Լամբրոնացւոյն յատենաբանութե՟ն, և յայլ գիրս։

18 Նրբաբանութի՟ (oximoron), յեղանակ իմաստից՝ ըստ վերերևութին տխմարական համարեալ, բայց արդեամբք՝ վեհմախոհ և հանճարալից . ո՛վ ,, յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ, և տկարն Աստուծոյ՝ զօրագոյն է քան զմարդիկ . . . իբրև տրտմեալք՝ և հանապազ ուրախ եմք . իբրև տնանկք՝ և զբազումս մեծացուցանեմք . իբրև ոչ ինչ ունիցիմք՝ և զամենայն ինչ ունիմք . . . հւ զերրեակ միութ՟՝ զանտանելի զլուսն տեսանելով՝ կենդանւոյն մահացան ։

19 Որոշողութի՟ (paradiastole) ցեղ ինչ զանազանութե՟, յորում ճարտասանն տրոհէ յիրերաց զգաղափարս՝ նոյնանշան համարեալս, կամ ոչ այնչափ տարբեր երեւեալս . որպէս ,, յամենայնի նեղեալք՝ այլ ոչ նուաղեալք, կարօտեալք՝ այլ ոչ տարակուսեալք, հալածեալք՝ այլ ոչ լքեալք, չարչարեալք՝ այլ ոչ սատակեալք (Բ Կորնթ. Դ)։

20 Ուղղութի՟ (correctio), յորում կեղծէ զինքն ճարտասանն սխալեալ և անմտադրութ՟ ՚ի ներքս բերեալ զգաղափար կամ զիմաստ ինչ, զոր ապա ինքնին ուղղագրելով ճշմարտէ . ըստ օրինակացս ըստ այսոցիկ ,, եթէ Քրիստոսի ես աշակերտ, մանաւանդ թէ փոխանորդ, զհետութ՟ նորին ընկալ զօրինակն . . . ձեռն ձգեալ կոչեմ և զքեզ՝ տուրևառութե՟ իմոյ, կամ ճշմարտապէս ասել՝ յանցանաց իմոց լծակից . . . գտանի ՚ի մէջ մեր անբերելի անկարգութի՟, զի մի ասացից, անօրէնութի՟ (Լաս Բերոն) . . . սթափեսցուք յայսպիսի արբեցութէ՟ աղաչեմ, եթէ արբեցութի՟ պարտ է ասել զայս, և ոչ խելագարութի՟ կամ դիւաբաղխութի՟ (Մաքսի) . . . ամաչեմ ասել զճշմարտութի՟ն. մանաւանդ թէ զանօրէնութի՟ և զամպարշտութի՟ ազգիս մերոյ (Խորէն)։

21 Տարակուսութի՟ն (dubitatio) նոյնպէս հնարք է ճարտասանին, որով ցուցանէ զինչ իբրու վարանեալ յընտրութիւն այսր կամ այնր առարկայի և գաղափարի կամ գործոյ. կարդա՛ պեղանակդ, սղմս. Ճէր. 6—10. ղկ. ժզ. 3. 4. յովհ. ժբ. 27. ա կորնթ. ժա. 22։

Դոքին են նշանաւոր յեղանակք կամ ձևք նախնեաց, ընդ որովք պարունակին և այլք թեթևք, առ անշահուն նոցին 'ի բաց թողեալք 'ի մէնջ. զի չէ իսկ արժան կոպարաւ փակել զմիտս և զլեզու գիտնականաց. որոց մարթ է յոլովս ևս զայդպիսիս նորաստեղծել։ Յուշ ած ևս զ§ 119։

ՊՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ.

Յաղագս արտաքին նիւթոյ ճառից. կամ յաղագս պերճախօսութեան.

§ 259. Բնութիւն և հանգամանք պերճախօսութեան (eloquentia).

Ներքին բանն կամ իմաստն՝ երբ ձայնիւ և հնչմամբ թանձրանայ 'ի լեզուի մարդոյ, անուանի բարբառ (բան՝ բառիւք մարմնացեցեալ). իսկ երբ պէսպէս զարդուք և սեթևեթիւք զաճուճի 'ի ճարտասանէն՝ կոչի Պերճախօսութի. որ նկատմամբ զգալի ճառին՝ համարի բաղադրիչ նիւթ և ատաղձ նորա։ Նախնի ճարտասանք յունաց այնչափ գերապանց և մեծայարգ դատեցան զսա՝ մինչև զանուն արուեստիս ըստ սմին կոչեցին ῥητορική, արհեստ խօսելոյ կամ խօսից, և զնոյն ինքն զարուեստաւորն՝ ῥήτωρ. խօսող. որոց համաձայն և մերք ասացին՝ ճարտասանութ և ճարտասան ։ Սակայն եթէ ճշդու՟թբ քննեմք զիրսդ՝ դիւրաւ է 'ի միտ առնուլ, թէ բարբառն յինքեան առանձինն տեսեալ՝ լոկ մարմին է անհոգի. և սակաւ կամ ոչ ինչ ազդէ յընկերս. որոյ աղագաւ կամք էին մեզ՝ յոյժ սղագոյն բանիւք կնքել զայս պրակ, ապսպարելով միայն ուսանելեաց՝ 'ի վեր քան զամենայն միտ դնել կազմու՟ե իմաստից կամ վերաբանու՟եց ըստ պէսպէս գերազանցու՟եց նոցա. որ ընդ անսխալ քերականական շարադասու՟ե և մաքուր հայկաբանու՟ե շատ է յըստ արժանւոյն կերպաւորել զոր և իցէ ճառս. բայց ոչ զի մի՛ 'ի սպառ անճաշակս արձակեսցուք զուսանողս, մատչիմք 'ի քննել համառօտիւ զարտաքին բարբառոյն, զինչու՟ին, զտարերս, զկերպ, զսկզբունս, զցեղս, ըզխտրու՟իս, զգերազանցու՟իս, զզարդարանս, զոճս, զնպաստըս կատարելագործելոյ զայն, և զարուեստն փոխադրելոյ զնա յընկերս. յորս դուցես բովանդակին ամենայն գիտելիք զպերճախօսութենէ ։

§ 260. Զինչութիւն բարբառոյ.

Ծանուցաք 'ի վերոյ՝ թէ յոլով են միջոցք և նշանք արտայայտելոյ զիմաստս և զներքին կեանս մեր. յորոց միջի զառաջին տեղին ունի խօսքն. զորոյ զիսկու՟ին մարթ է այսպէս սահմանագրել, թէ է նոյն իսկ ոգին կամ ներքին կենդանու՟ի մարդոյ՝ նշանական բառիւք թանձրացեալ և նիւթաւորեալ. կամ որ 'ի նոյն դառնայ, փունջ նշանական բառից՝ զներքին կեանս խօսողին արտաքուստ բացատրողայ. 'ի դոյն միտս՝ խօսքն առ Լոնգինոսի գեղեցիկ նմանու՟ի անուանի՝ արձագանք հոգւոյ 'ի մարմինն. քան զի արդարև բերան և լեզու մարդոյ է երբուփապար լերանց, որ կրկնէ և թանձրացուցանէ զներքին և զիմանալի բանս հոգւոյ մերոյ ։

Տարերք կամ ատաղձք բարբառոյ են բառք, յայտարարք գաղափարաց մտաց՝ զէակաց և զհանգամանաց նոցա. որոց բաժանու՟մն յութ ազգս՝ յայտնի է ամենեցուն 'ի քերականութիւն ։ 'Ի բառից բաղադրի Առադասութիւն, առասացութիւն, խօսք, զրոյց, ասացուած (praepositio, նախադասութիւն) ։ որ է ներքին իմաստն՝ բառիւք շարադասեալ և արտաքուստ բացատրեալ ։ իսկ յառադասութեանց բաղկանայ Յարադասութիւն (periodus, պարբերութիւն), այն է՝ ընդիրեարս յարեալ և յարմարեալ ասացուած ։ Թարգման և արտայայտիչ ներքին շարաբանութեանց ։ Զառադասութիւն և զյարադասութիւն իբրու զհայրենաւանդս փոխանակեմք աստանօր ընդ նախադասութեան և պարբերութեան, զորս առ հարկի 'ի կիր ածաք 'ի քերականութեան իբրու զծանօթագոյնս մանկանց ։

Կերպ բարբառոյ է եղանակն յօդակապութեան և շարակարգութեան բառից ընդ միմեանս՝ առ 'ի կազմել զմի բոլոր առադասութիւն ։ որոյ կանոնք աւանդին յերկրորդ մասին քերականութեան ։

Սկզբունք կամ աղբերք բարբառոյ համարին չորք ։ ներքին զգայութիւն, միտք, սիրտ, և կամք ։ իսկ լեզուն է սպասաւոր և գործիք դոցա ։ ըստ որոց և զատանին խօսք 'ի հինգ դասս ։

Բաժանումն խօսից 'ի սեռս և 'ի ցեղս՝ բազմապատկի ըստ այլևայլ տեսութեանց ։ և 1 ըստ եղանակի արտայայտութեան բաժանի յանձայն՝ որպիսի է խօսիլն համրոց և միմոսաց ։ 'ի ձայնաւոր՝ որ կենդանի ձայնիւ արտասանի առ ներկայ լսողս ։ և 'ի գրաւոր՝ որ գծիւք և մրով դրոշմի 'ի թղթի ։ 2 ըստ քանակութեան և որակութեան ատաղձին բաժանի խօսքն 'ի սակաւաբառ, 'ի բազմաբառ, 'ի հայկաբան, 'ի խժդժաբան, և յայլ դոյնպիսիս ծանօթս ամենայն քերականաց ։ 3 ըստ կերպի շարադասութեան և կապակցութեան բառից՝ տարորոշին խօսք յուղղակարգս, 'ի թիւրակարգս, յարձակաբանս, յոտանաւորս, 'ի վսեմականս, 'ի միջակայինս, 'ի պարզաբանս ։ և յորս 'ի կարգի ։ 4 ըստ պարունակեալ ներքին բանիցն բաժանի 'ի գերիմաստ, 'ի սակաւիմաստ, և յանիմաստ ։ նոյնպէս և ըստ զգածութեանց և զրգռութեանց ։ 5 ըստ քանակութեան տռասութեանցն բաժանի 'ի միանգամ, յերկանգամ, յեռանգամ, և 'ի քառանգամ. դարձեալ 'ի հատուածական և 'ի յարասական (պարբերական). այլովք հանդերձ. 6 ըստ աղբերացն ասացաք թէ բաժանի 'ի զգայական, 'ի մտաւորական, 'ի սրտաբուղխ, 'ի կամածին, և 'ի լոկ լեզուական: Ըստ դոցունց մարթ է 'ի միտ առնուլ և զայլ պէսպէս ցեղս խօսից՝ այլևայլ անուամբք յիշատակեալս 'ի գիրս:

§ 261. Առ յստակ խելամուտ լինելոյ բացորոշ խորութեանց բարբառոյ՝ կարի յոյժ կարևոր է, որպէս և 'ի նախընթացսդ յոլովակի յիշեցաք, զանազանել յիրերաց զսահմանակից պարագայս նորա. որոց գլխաւորքն են, 1 ենթական կամ արարչական պատճառ բանի. այն է հոգին բանական. 2 ներքին անցաւոր ներգործութիւնք հոգւոյ կամ բանահիւս կարողութիւն. 3 առարկայք՝ յորս եղերին ներգործութիւնքդ (Աստուած, մարդիկ և տիեզերք). 4 ներքին մնացական պտուղն՝ 'ի ներգործութեանցդ արտադրեալ, բան ներքին, իմաստ զառարկայէ. 5 գիտութիւն մտաց. ստուար փունջ յոլով իմաստից՝ զմանաւոր առարկայէ իմեմնէ կազմեալ, և 'ի միտս ենթակայացեալ. 6 լեզուախօսութիւն, բարբառումն, արտաքին և անցաւոր ներգործութիւն լեզուի, որ զներքին իմաստն թանձրացուցանէ ձայնիւ՝ հնչմամբ՝ վանկիւ՝ բառիւ. 7 բարբառ, խօսք, արտաքին մնացական պտուղն 'ի լեզուախօսութենէ արտադրեալ. որ է ներքին իմաստն՝ բառիւք թանձրացեալ և յունկնդիրս փոխադրեալ. յորոց զցեղս ցուցաք 'ի մօտոյ. 8 գրաբանութիւն, գրախօսութիւն (litteratura), որ է ներքին իմաստն և արտաքին խօսքն գծիւ և մրով դրոշմեալ կամ գրեալ, և աչաց ընթերցողաց առաջարկեալ. բաժանի սա 'ի յոլով ճիւղս՝ ոչ միայն ըստ կանխասաց ցեղից բարբառոյ, այլ և ըստ բազմադիմի գիտութեանց և արուեստից, նա և ըստ գերազանցութեանց իմաստից, ըստ առարկայից, ըստ նպատակաց, ըստ ազգաց կամ լեզուաց, ըստ ժամանակաց, ըստ տեղեաց, և ըստ այլոց պարագայից կամ հանգամանաց ․ 9 Հրահանգ կամ արուեստ ուղղախօսութ՟ և ուղղագրութ՟ ․ այն է քերականութ՟ի, որ ուսուցանէ զկանոնս ուղիղ յօրինելոյ զխօսս և զգրաբանութ՟ի ․ ոմանք աստ վերածեն նա և զճարտասանութ՟ին և զբանաստեղծութ՟ին ․ այլ ըստ մեզ՝ ոչ ուղի՛ղ ․ զի Ճարտասանութ՟ին ոպ՟ ցուցաք՝ ոչ է արուեստ խօսելոյ, այլ՝ ճառելոյ զգործադրելի առարկայից ․ ոպ՟ և զբանաստեղծութ՟ին համարեմք արուեստ ճառելոյ զզգածելի և զզգալի առարկայից ․ այլ արդ խօսել և ճառել բազմօք տարբերին յիրերաց հանգամանօք ․ ոպ՟ քաջայայտ է գիտնականաց ․ 10 գիտութ՟ի զգրաբանութ՟ց կամ ըզգրեալ բանից՝ միոյ կամ յոլով ազգի և լեզուի, 'ի միտս ենթակայացեալ կամ 'ի մատենի դրոշմեալ ․ զոր չէ արժան նոյնացուցանել ընդ գրաբանութ՟, ոպ՟ առնեն խառնախօսք ․ զի գրեալ բանքն են առարկայ այսր գիտութ՟, և ոչ թէ նոյն իսկ գիտութ՟ին մտաց ․ նոյնպէս չէ մարթ անուանել զսա՝ Գրագիտութ՟ի ․ զի այս ձայն նշանակէ առ մեզ՝ գիտել գրել և ընթեռնուլ ․ որ օտար ինչ է 'ի գիտութ՟է գրաբանութ՟ ․ 11 առարկայք կամ նիւթք գրաբանութ՟ ․ այնք են՝ գրաբանեալ գիտութ՟իք և արուեստք 'ի մատեանս պարունակեալք, և յայլևայլ ցեղս բաժանեալք ․ 12 պատմութ՟ի զգրաբանութ՟ց, իմա՛ պատմական ծանօթութ՟ի զգրաբանեալ գիտութ՟ց, կամ զհեղինակաց նոցին, զմատենից, և զայլոց հանգամանաց ։ Զանց առնեմք 'ի մէջ բերել զայլ ևս համազգայինս դոցին, զի ոչ է տեղւոյս յերկար դեգերել 'ի նոսին ։

§ 262 ․ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆՔ ԿԱՄ ՁԵՒՔ ԲԱՐԲԱՌՈՅ

Յերկուս բաժանին համօրէն, 'ի բացարձակս և յառընչականս ․ բացարձակ են՝ զորս պահանջէ խօսքն յինքեան մտածեալ, առանց վերաբերութ՟ առ այլս ․ իսկ առնչականք՝ զորս կամի նա յարաբերութ՟ առ ունկնդիրս և վերծանողս, ըստ որում լինի գործիք փոխադրելոյ 'ի նոսա զհոգի Ճարտասանին ։

Բացարձակն դարձեալ բաժանի 'ի բառական, որ նկատի 'ի մէն մի բառս առանձինն. և 'ի շարադրական՝ որ մտածի 'ի կապակցութեան բառից 'ի կազմելն զառասութիւն և զյարասութիւն ։

Բառական գերազանցութիւն կոչի ևս ընտրականութի (elegantia). և պահանջէ ունել զայն ամենայն ուղղութիւ՝ զորս աւանդեալ եմք յառաջին մասին քերականութե, և ուրեք ուրեք յերկրորդ մասին. յորոց սակի են, 'ի մասնաւորի, **1** ին բառք լինիցին սովորական, վաղեմի և քաջազգի (տես անդ. յեր. 179) և մի 'ի կիր առցեն ձայնք այլազգականք, անսովորք, խափանեալք, դաւառականք, դռեհկականք, և նոյին նմանք. **2** ին բարդութի՝ բաղադրութի՝ և ածանցութի բառից յօրինեսցի ըստ օրինակաց նախնեաց, և համաձայն քերականական կանոնաց. **3** ին հոլովմունք անուանց և խոնարհմունք բայից մի զարտուղեսցին 'ի կարևոր ուղղութէ. **4** ին ըստ մարթելոյ արտաքսեսցին բառք հոծութ բաղկացեալք 'ի դժուարահնչիւն տառից և 'ի վանկից. որպիսի են տառքս, բ, դ, թ, ժ, խ, ձ, ճ, ղ, շ, չ, ջ, ռ, ց, և 'ի դոյնպիսեաց խակեալ վանկք, բբ, բղխ, դժ, թռ, լչ, լշտ, ժլտի, խռ, ղլնի, ճռն, շռն, շռի, ուծն, չի, պռն, ռնդ, տժ, ցի, ցց, և դոյնպիսիք. **5** ին եթէ հնար իցէ մի 'ի ներքս առցեն բառք՝ յորս նոյն ձայնաւորք մի զհետ միւսոյ յաճախեն, ով, անապականադաւան, եղերերգեցութի, ուսումնասիրացողութի, և նմանք. **6** ին համաձայնք և բազմանշանք եթէ ըստ պիտելոյն 'ի մէջ բերցին՝ յարադիր ձայնիւ բարձցի երկբանութի նոյա. **7** ին իւրաքանչիւր բառ դիցի փոխանակ բացորոշ գաղափարի մտաց՝ հարազատութ հանդերձ. և մի վարեսցին ձայնք թափառականք՝ անպաշտօնք և սնոտիք. **8** ին ըստ պատշաճի 'ի կիր առցին բառք փոխաբերեալք և փոխադրեալք, վայելչութ և պնութ հանդերձ. **9** ին կազմութի բառին և հնչիւն ձայնի նորա ըստ մարթելոյ հանգիտասցի ըստ որակութե՝ բնական ձայնի կամ հնչման առարկային և գործողութեան ('ի նախնեաց կոչի ձև անուանաստեղծութիւն, onomatopoeia). որպիսի են 'ի նախնեաց աւանդեալքս,, մեղուական բզզումն, հռնչիւն կոկորդի, թնդիւն վահանաց, շկահիւն աղեղանց, շողիւն սուսերաց, շառաչիւն նետից, ճայթմունք լարից աղեղանց, դոփիւն ոտից, խանչել խոխոշել գետոց, կղկղալ կաքաւուց, մայել կատուաց. և դոցին նմանք. 10 զի առոգանութիւն և արտասանութիւն բառից ուղղեսցի ըստ քերականական կանոնաց 'ի շեշտս, 'ի բութս, յոլորակս, 'ի պարոյկս, 'ի կէտս, և յայլ նշանս հագագաձայնութեան լեզուագէտ հեղինակաց, ևն։ Պահպանութիւն կարևոր ըզգուշութեանցդ և դոցին նմանեաց՝ ծնանի զճշմարիտն հայախօսութիւն կամ զհայկաբանութիւն՝ ըստ բառից նկատեալ. իսկ զարտուղեալն 'ի դոյունց անուանի խժաբանութիւն (barbarisme)։

§ 263. Ճարտարական գերազանցութիւն պահանջէ՝ զի առասութիւնք կից ունիցին զեօթն յատկութիւնս. որք են, 1 ընտրականութիւն բառից 'ի մօտոյ աւանդեալ. 2 ուղղութիւն շարադրութեան, որ բովանդակի յերկրորդ մասին քերականութեան 'ի պէսպէս կանոնս համաձայնութեան, խնդրառութեան, այլովք հանդերձ. 3 քաջազուգութիւն բառից ընդ իրեարս, զոր դի՛տ 'ի քերական (յեր. 381—384). 4 հարազատութիւն ընդ իմաստաբանութեանց. այն է՝ զի արտաքին խօսքն պատկերացուսցէ և արտայայտեսցէ զներքին իմաստս՝ նովին կերպարանաւ և գծագրութեամբ, որպիսի են նոքին յինքեանս իրապէս. 5 Ճշգաբանութիւն՝ հիմնեալ յայն, զի այնչափ միայն բառք 'ի մէջ բերցին, որչափ հարկաւոր են առ լիուլի բացայայտելոյ զգաղափարս և զիմաստս. ըստ որոյ հարկ է արտաքսել զանալի կրկնաբանութիւնս, և զայն ամենայն՝ որք առ տեղեաւն համարին անօգուտ և առանց նպատակի միջամուխ եղեալ. Թէպէտ պարտ է ևս հոգել, զի մի կարի ճշգելով և կարճելով՝ աղօտասցի բանն և անիմանալի եղիցի ունկնդրաց. հարազատ արհեստ ճշգաբանութեան տեսանի 'ի պատմութեան խորենացւոյն, և 'ի մեկնուե՟ Իգնատիոսի · 6 պէսպիսուի՟ և նորուի՟ · առ որս պահանջի՝ զի եթէ ուրեք հարկ լինիցի կրկնել զնոյն գաղափարս և զիմաստս, արտայայտուի՟ նոցին մի լինիցի նովին բառիւք և ոճով · այլ փոփոխեսցի այդ ամենայն 'ի պէսպէս կերպարանս համանշանս, ըստ որակուե՟, ըստ քանակուե՟, ըստ առնչութեան, ըստ դրից, ըստ կարգի, ըստ կապակցուե՟, ըստ հետևուե՟, ըստ դիմադրուե՟, և ըստ այլոց հանգամանաց խօսից · այնպէս զի երկրորդն այն նորատեսիլ և անլուր լինել երևեսցի՝ գոնէ առ ժամն · 7 զարդարանուի՟, որ ըստ կարծեաց նախնեաց յաւելեալ լինի 'ի խօսս՝ 'ի պէսպէս եղանակաց կազմուե՟, զորս հինքն կոչեցին ձևս բառից ։

§ 264 · ԶԱՐԴՔ ԿԱՄ ՁԵՒՔ ԲԱՌԻՑ (figura, schema) ·

Ձև կոչեցան 'ի նախնեաց պէսպիսուի՟ք արտաքին կերպարանաց խօսից, ծագեալք առաւելապէս 'ի գոյուէ՟, 'ի քանակուէ՟, յորակուէ՟, 'ի հոլովից, 'ի տեղւոյ, և յայլոց հանգամանաց բառից · զորոց սակաւ ինչ աւանդեալ եմք 'ի քերականուե՟ յերկրորդ մասին, 'ի բազում տեղիս · Թիւ նոցա բազում է յոյժ, և գրեթէ անհամար, զի ըստ յաճախելոյ նորանոր մատենագրաց՝ առաւելուն և ձևք խօսից նոցա · զորս և չէ հնար ընդ կապարաւ փակել · զի աղբիւր նոցա հոգին՝ ամենածին է, ոչ քանակուբ՟ միայն, այլ և որակուբ՟ · ըստ որում ոչ զնորս միայն և զյոլովագոյնս ծնանի, այլ և զնորակերպարանս և զառաջնոց անհամեմատս · այդու աղագաւ 'ի յառաջ բերել մեր աստանօր զձևս նախնեաց՝ ոչ զայն դիտեմք, զի ծառայաբար և ոպ՟ ասեն մեքենապէս կապեսցուք համբաւք ընդ նոսա միայն · այլ զի ջան դիցեն և՛ նմանել նոցա 'ի պատրաստականսն · և՛ նորանորս անգամ բղխել յինքեանց · միշտ անխառ պահպանելով զօրէնս լեզուին և զյարգ դասագլուխ հեղինակաց ։

Արդ՝ զընդհանուր գումար ձևոց մարթ է բաժանել յութ սեռս · որք են, յաւելուած, կրկնութիւն, բացբարձութիւն, նմանաձայնութիւն, հակադրութիւն, արտուղութիւն, բակառութիւն, և բառափոխութիւն։

§ 265 • Յաւելումն կամ ըստ նախնեաց ընդլայնումն՝ ՚ի վերայ արմատական բառին (ընդ որով միշտ իմն զգաղափարս մտաց) բարդէ զայլս, առ ոճղեաւն կարևոր համարեալս․ բազում են սորա ցեղք, բայց գլխաւորք համարին, 1 ՚ի գոյականն յաւելուլ զածականս, մանաւանդ զբարդս և զածանցեալս․ ոպ,, այլ և հեղձամղձուկ յարկածածուկ հողաթաւալ հողահեղձոյց սատակումն դիակոյտ բազմութեան, զոր կարծրագոյն քարեղէն և անկարեկիր միտս էր ստացեալ, յարդարէր ՚ի բազում ողբս և յարտասուաթոր կականմունս,, այս ոճ յաճախ է առ Նարեկացւոյն․ բայց տես զզգուշութիւն ՚ի ՚ի քերկն, մերում (յեր, 209 — 213)․ 2 ՚ի դիմաւոր բայս յաւելուլ զայլատեսակ մակբայս․ ոպ,, ընդէ՞ր ոչ զայդ ամենայն հաւաստեաւ յանդիման չասացեր ցթագաւորն (տես ՚ի քերկն․ 242)․ 3 բազմապատկել զխնդրեալս առ մի խնդրող․ ոպ,, բազում մասամբք և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր մարգարէիւք (՚ի քերկն․ 254)․ ըստ դոյուն օրինակի մարթ է աճեցուցանել նա և զյատկացուցիչս, զբացայայտիչս, զնախադրութիս, զշաղկապս, և զայլ մասունս խօսից․ մանաւանդ զհոլովտառս, զորոց պարտ է տեսանել ՚ի քերականութիւնս․ 4 յաւելուլ յառաւելութեան զբառս համանշանակս․ ոպ,, գայր հասանէր (ոստիկանն) զկողմամբք մարդաստանի և տոսպ գաւառի, մեծամեծս փքայր ջնջել՝ ջարդել՝ հարկանել՝ խորտակել՝ բաղկել՝ և ՚ի միջոյ ՚ի բաց կորուսանել՝ ՚ի սուր սուսերի մաշել միանգամայն իսկ պահեմ զզարմ և զզաւակ (յովհ․ կթղ)․ 5 բազմանունութիւն (pleonomasmus), յորում կրկնին բառք և առաւելութիւնք մասնաւոր պարագայից նշանակիչք, զորս հնար էր լռելեայն տալ իմանալ․ ոպ,, որ էրն ՚ի սկզբանէ, զորմէ լուաքն, որում ականատեսն իսկ եղեաք, ընդ որ հայեցաքն ; և ձեռք մեր շօշափեցին 'ի վերայ բանին կենաց (Ա յովհ. Ա.) ուր նշանակին ականջօք լսել, աչօք տեսանել, և ձեռօք շօշափել . 6 շրջաբանութի՟ (periphrasis), յորում նոյն մի գաղափար կամ իմաստ շրջապատեալ ոճով բացատրի միով առասութ՟ . որպ՟ նարեկացին փոխանակ սակաւ բառիւք ասելոյ, Յիսուս ինքնին ել 'ի գողգոթայ, սովին ձևով ասէ,, որով 'ի վեր ամբարձեալ 'ի քայլս հանդարտութ՟ տիրական գնացից ոտից յեղյեղման՝ գերազանց գարշապարացն յառաջխաղացման, զկայ հանգստեան առնոյր խաչակիր հետոցն 'ի կատարս ծայրից գողգոթայ . 7 բազմաբանութի՟ (exergasia), որ զմիակ իմաստն բազմամանուած պէսպիսահիւս ոճով բացատրէ 'ի բազում առասութ՟իս . որպ՟,, բարւոք ասացեր թէ չի՛ք իմ այր . զի հինգ այր փոխեալ է քո . և զոր այժմ ունիս՝ չէ քո այր . զայդ արդար ասացեր . (տես և, սղմ. ժԹ. 2—6. լԵ. 2—6. ճԲ. 3—7. և ն՟:)

§ 266. Կրկնութի՟ն զնոյն մի բառ բազում անգամ յեղյեղէ 'ի նմին կամ յայլում առասութ՟ . և բաժանի յայլևայլ ցեղս ըստ տարբերութ՟ տեղեացն, կամ յարակցութ՟ և բացակայութ՟ նոցա . գլխաւոր կերպարանք նորա են . 1 բազմապատկութի՟ (epizeuxis), յորում նոյն բառ կրկնի կամ անմիջապէս, կամ միջադրութ՟ միոյ բառի . որպէս,, բայց զի՞նչ պարտ է ասել զպապանելն և զանդոսնելն զբարեզգեստութի՟ հայրենի աւանդութեանս՝ յիմարեալ մտօք . զոր ասեմ ասեմ, և ոչ ամաչեմ (շամ՟բրոն) . . . եւ եթէ պարտ է զաստիկն ստանօր ասել անօրինեալս անձին նախատինս, ահա դրիմ դրեմ, և ոչ անխայեմ (նարէկ) . . . իբրև ուսեալ տեղեկացաւ զառն առն իւրաքանչիւր քաջութ՟ս . . . 'ի գունդս գունդս զգաղանսն բաժանէր, և առ մի մի փիղ երեք հարիւր սպառազէն . . . ողորմիմ ողորմիմ սիրելեաց ձերոց, և բազում անգամ ողորմիմ անձանց ձերոց (եղիշէ) . 2 վերաբերութի՟ (anaphora), յորում նոյն բառ կրկնի 'ի սկիզբն քանի մի առասութ՟ց կամ յարասութ՟ց . որպէս,, այսպիսեաւ անձկաւ հեղձամղձուկ եղեալ վտանգիմ կարօտութ՟ մերոյ հօրն․ ո՜ւր է քաղցր աչացն հանդարտուի՟ առ ուղիղս և ահաւորուի՟ առ թիւրս, ո՜ւր զուարթշրթանցն ժպտումն առ բարիս աշակերտաց հանդիպումն․ ո՜ւր խրախամիտ սիրտն ընդունող արբանեկաց․ ո՜ւր երկայն ճանապարհաց յոյսն հեշտացուցիչ (խորենց․ յեր․ 550․ տես ևս․ սղմս, ճժէ․ 16․ եսայ․ լզ․ 10․ ևն)․ 3 վերադարձուի՟ (epiphora), յորում նոյն բառ կրկնի ՚ի վախճանի զանազան առասուե՟ց․ ոպ՟,, դրուի՟ երկրի ձևականուե՟՝ երկոտասան․ տեսակ աւուրց տունջեան երկոտասան․ և գլխաւոր դիրք անդամոց մարմնոյ՝ երկոտասան․ ըստ այսմ վիկասին սուրբ քառամանեակ՝ երկոտասան (Նարեկցի․ տես ևս, սղմս․ ճժգ․ 9—11․ ճլե․ 1—26․ բ կորնթ․ ժա․ 22․ 23․ ևն)․ 4 բաղհիւսուի՟ (simploce), յորում երկու նախընթաց ձևքդ միաբանին․ կամ յորում զանազան առասուի՟ք նոյնպիսի բառիւք սկսանին և աւարտին․ ոպ՟,, մեղայ մեծիդ բարերարուե՟՝ անարգս մեղայ․ մեղայ ծագմանդ ճառագայթից՝ խաւարս մեղայ․ մեղայ շնորհացդ անբաւ երախտեաց՝ արդարև. մեղայ․ ևն (Նարէկ․ իէ․ տես ևս․ սղմս․ ճժէ․ 2․ 3․ 4)․ 5 զուգապատկուի՟ (anadiplosis), յորում նոյն բառ կրկնի ՚ի վախճանի նախընթաց առասուե՟ և ՚ի սկզբան յետագային․ ոպ՟,, նոյն ինքն հոգին վկայէ հոգւոյս մերում՝ եթէ եմք որդիք Աստուծոյ, և եթէ որդիք՝ ապա և ժառանգք Աստուծոյ և ժառանգակիցք Քրիստոսի․․․․ զորս յառաջագոյն հրաւիրեաց՝ զնոսին և կոչեաց․ և զորս կոչեացն՝ զնոսին և արդարացոյց, և զորս արդարացոյցն՝ զնոսին և փառաւորս արար․․․․ քան զի գիտեմք՝ եթէ նեղուի՟ք զհամբերուի՟ գործեն, համբերուի՟՝ զհանդէս, հանդէս՝ զյոյս, յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ (հռովմ․ ը․ ե)․ 6 փոխադարձուի՟ (antanaclasis), յորում նոյն բառ կրկնի այլազան և տարբեր նշանակութ՟ իմաստից․ ոպ՟,, թո՛յլ տուր մեռելոց թաղել զմեռեալս իւրեանց․․․․ յուսով ապրեցաք, այլ յոյս տեսանելի՝ չէ յոյս . . . որք շահավաճառ համարին զաստուածպաշտութիւն, այլ շահավաճառ մեծ՝ աստուածպաշտութիւն է բաւականութբ հանդերձ . . . . 'ի խաւարային ժամու՝ զխաւարային կերպակուրս խաւարային մարմնոյս տայցուք (եղիշէ) . 7 Յոգնահոլովումն (polyptoton) . յորում նոյն բառ կրկնի պէսպիսատիպ հոլովով, թուով, ժամանակաւ կամ եղանակաւ . որպ,, ոչ եթէ այր 'ի կնոջէ է, այլ կին յառնէ . քան զի ոչ իսկ հաստատեցաւ այր վասն կնոջ . այլ կին վասն առն (ա կորնթ . ժա) . . . . յորժամ զմիմեանց բեռն բառնամք, յորժամ միմեանց գիրկս արկանեմք, յորժամ զմիմեամբք փարիցիմք . յորժամ առ միմեանս ջոլորիցիմք . . . . այլ իմաստունք լային, և լային, և լան միշտ կենդանի բանիւք իւրեանց . 8 Վերակրկնութիւն (epanodas) . յորում զոյգ մի բառից կրկնեալ լինի, բայց փոփոխութբ կարգի և տեղւոյ . որպ,, վայ այնոցիկ՝ որ ասիցեն՝ զչարն բարի, և զբարին չար . որք դնիցեն զլոյսն խաւար, և զխաւարն լոյս . որք դնիցեն զդառն՝ քաղցր, և զքաղցր՝ դառն : Ոմանք յաւելուն աստանօր և զկրկնութիւն շաղկապաց, մակբայից, նախադրութեց, ևն . այլ զի թեթև ինչ են՝ զանց առնեմք զնոքօք :

§ 267 . Բացբարձութիւն կամ զեղչումն (ellipris) նշանակէ զզանցառութի և զկրճատութի բառից և զհոլովատառից ոմանց . որոց օրինակք և եղանակք յայտնի են ամենեցուն 'ի քերականական ուսմանց . որպ այնք զի մերթ ենթակայ բային լռեալ լինի, մերթ դիմաւոր բայն, մերթ գոյականն, կամ խնդրողն, բացայայտելին, յատկանալին, նախադրութին, շաղկապք, և այլ նմանք՝ զօրութբ միան իմանալիք, զորս աւելորդ է կրկնել աստանօր:

§ 268 . Նմանաձայնութիւն եղեալ կայ 'ի հանդիպումն հնչման տառից՝ վանկից և բառից . առ որ վերածին, 1 Նոյնատառ (parechesis), յորում քանի մի բառք նոյն տառիւ սկզբնաւորեալք անմիջապէս շարադասին հետզհետէ . որպ,, առ բնութի բարի բանին բարձրելոյ բարեզարդաբար բերկրանօք բերին· 2 ածանցանուն (paregmenon), յորում հանդիտահնչիւն բառք 'ի միոյ արմատոյ ածանցեալք առ իրեարս դասակարգին· ոպ՟,, որ իմաստնոց զիմաստն տայր, զիմաստուն իմաստնանայր···· այլ դատաւորդ իմ երկնային, որով երկինք 'ւ երկիր դատին, դատաւորիս իմում անձին՝ դատել տացես զիս ըստ կարգին· զի մի յաւուր դատաստանին դատապարտիմ ընդ դատողին· 3 հանդիտահնչիւն (paronomasia), յորում քանի բառք ըստ հնչման ձայնիցն հպաւորք հուպ իրերաց տողաշարին· ոպ՟,, մաքուրք վարուք և բարիք բարուք··· եթէ բարիք իցեն՝ չին բարիք, և եթէ կարիք՝ ոչ ինչ այնպէս անհնարինք··· ծովն 'ի միջի իմ ծածանէր, քաղցրիկ օդովն ծիծաղէր··· արիական քաջութ՟ զէն 'ի վեր առեալ, առնազէն վառեալ· 4 նմանահոլով (homoeoptoton), յորում նոյնահոլով անուանք կամ նմանայանգ բայք և ընդունելութիւնք հուպ առ իրեարս դասակարգին· ոպ՟,, գումարտակ զզօրս իւրեանց առնէին ծածկաբար իբրև արանց աւելի քան զչորեքհազարաց սուսերամերկաց վահանաւորաց նիզակաւորաց վաղակաւորաց···· անպատուհաս ես մնացից յահեղ մրրկէ աստի, և յահագին ալեաց փրփրեցելոց և դիզացելոց և կուտակելոց և դիմելոց 'ի վերայ աքանալեանս դրոհի···· ստացեալ հիմնեցի կառուցի կարգեցի կուտեցի արձանացուցի· 5 նմանայանգ (homocoteleuton), յորում բազում առասութիք նոյնայանգ բառիւք եզերեալ աւարտին· ոպ՟,, 'ի լեառն՝ ուր տեսին զնա յաղօթս տարակուսանօք, անտի տեսին զնա սլացեալ ընդ ամպս լուսեղէն փառօք· 'ի տեղւոջն՝ ուր խոնարհ եդ յերկիր զաստուածային երեսն արտասուօք, անտի վերհամբարձաւ հրեշտակաց օրհնութ՟ և փառօք· 'ի պարտիզէն ուր կապեցան նախատանօք, անտի սաւառնեալ շքեղացեալ՝ ճանապարհ առնէր ընդ ամպս գարշապարօք· 'ի ձորն՝ ուստի փախեան 'ի նմանէ առաքեալք վշտօք, անդանօր ժողովեալ օրհնեցան յամենօրհնեալ աջոյն պանծանօք ([illegible])։

§ 269. Զ հակադրուէ՟ գաղափարաց և իմաստից խօսեցեալ եմք կանխաւ վերագոյն. որոց արտայայտութիւն բարբառով՝ ծնանի զձեւն հակադրուե՟ բառից և առասուե՟ց. զորոց և զօրինակս քան զի ցուցեալ է մեր անդանօր, աւելորդ համարիմք երկրորդել ։

§ 270. Արտուղութիւն (hyperbaton) նշանակէ զտեղափոխութիւն բառից 'ի սովորական կարգէ և եղանակէ խօսից. որպիսի են զենթակայն դնել զկնի բային և խնդրոց նորա. զգոյականն յետ ածականաց կամ 'ի միջի նոցա. զխնդրեալս յառաջ քան զխնդրողս. և այլ նմանք. զորոց սակաւ ինչ ուսուցեալ եմք 'ի քերականուէ՟, և զայլսն հնար է ըստ այնց յարմարել. պահելով միշտ զվայելչուի՟ և զքաղցրուի՟ լեզուին, և զօրինակս երանելի նախնեաց մերոց ։

§ 271. Բակառութիւն (syllepsis) է կամաւոր տարաձայնուի՟ երկուց առնչակից բառից՝ ըստ թուոյ, ըստ դիմաց, ըստ հոլովոյ, և ըստ հոլովատառից. որպէս յոդնակի գոյական ընդ եզակի ածականի, կամ ենթակայի ընդ բայի, յարակացուցողին ընդ յարակացելոյն, և այլ դոյնպիսիք առ քերականս ։

§ 272. Բառափոխուի՟ (enallage) է վարել զմի բառ փոխանակ այլոյ 'ի շնորհս քաղցրուէ՟ կամ հանճարոյ. ոգ՟ ; զվերացեալն դնել փոխանակ թանձրացելոյ. զընդունելուի՟ն փոխանակ աներևոյթ կամ դիմաւոր բայի. ըզմակբայս ընդ ածականի. զհոլով ինչ անուան կամ ըզ ժամանակ և զեղանակ բայի փոխանակ միւսոյ. և այլ այդպիսիք, զորս պարտ է ուսանել 'ի քերականաց ։

§ 273. Աղանչական ձեւք ճարտասանոյ.

Ճարտասանն որովհետեւ ոչ յիւր, այլ յունկնդրաց համար ճառաբանէ, ապա հարկ է բարբառոյ նորա քաջայարմար և համեմատ լինել կարեաց և ընդունակուէ՟ ամենայն կարողուե՟ց նոցա. արդ 1 միտք կամ իմացուի՟ ընկերաց պահանջէ 'ի խօսս Ճարտասանին զդիւրիմանա լի՛ն լինել և զբացայայտուի̄ · 2 յիշողուի̄ և մտադրուի̄ նոցա պահանջէ զբարեկարգուի̄ խօսից · 3 սիրտ նոցա որոնէ զդիւրզգածուի̄ · 4 կամք և բաղձանք նոցա ծարաւի ուժգնուն̄ · 5 լսելիք նոցա խնդրեն զաղուաձայնուի̄ · և 6 պատիւ նոցա պահանջէ զվայելչուի̄ ։ Վեցեակ այդ յատկուի̄ք՝ տիրապէս ՚ի ներքին բանս հիմնին · և ՚ի նոցունց բղխեն և հեղուն յարտաքին խօսս· և քան զի զներքնոյ բաւական ծանուցեալ է մեր, զարտաքնովք մարթ է համառօտիւ անցանել ։

§ 274 Բացայայտուի̄ն խօսից պահանջէ , 1 զի յիւրաքանչիւր առասուն̄ իմաստ գտցի · 2 զի լիապատար իցէ իմաստն · 3 զի մի միայն իցէ իմաստն · 4 և զի բացերեւակ և դիւրիմանալի իցէ ։

Իմաստն արդեամբք գտանի՝ եթէ իւրաքանչիւր բառք առասուն̄ն հաղորդեն ունկնդրաց զմէն մի գաղափար , և տան նոցա կազմել զմի ամբողջ դատողուի̄ յառարկայէն· եթէ բառք և կարգ և կապակցուի̄ նոցա զօրեն կերպաւորել զմի բոլոր առանց հակասուն̄ և յօդակատար ներհակուն̄ մասանց · եթէ ոչ ՚ի կիր առցին բառք՝ ունկնդրաց անծանօթք և անիմանալիք · որպիսի են իմաստասիրականք , աստուածաբանականք , դպրոցականք , և ամենայն արհեստական անուանեալքն (զորս եթէ անտնօրինելի հարկն ստիպեսցէ ՚ի կիր առնուլ՝ պէտք լինի մեկնաբանել զնշանակուի̄ նոցա)· եթէ իմաստն իցէ բացորոշ և կոպարափակ , այնպէս զի առանց գուշակելոյ և հմայելոյ մարթ իցէ ՚ի միտ առնուլ զայն · եթէ մասունք և անդամք գաղափարի իրիք՝ ՚ի բացատրուն̄ անդ ոչ ներհակեսցին միմեանց (որ յաճախ պատահէ ՚ի փոխաբերուի̄ս և յայլաբանուի̄ս , կամ յորս ոչ պահի քաջազուգուի̄ բառից, մեկնեալ ՚ի մէնջ ՚ի քերականուն̄)· եթէ բառք և նշանակք խօսից նոյնպիսի նշանակուի̄ք ՚ի գործ ածցին , որպիսիս ընծայեն նոցա ունկնդիրք և ընկալեալ սովորուի̄ն · եթէ ըստ մարթելոյ ՚ի բաց թողցին բառք վերացեալք սեռականք և հանրականք · եռանդամ և քառանդամ յարասութիւնք բազմապատոյս ըստ 'ի պատմանուածովք ոլորեալք, և երկդիմի աղօտ և տարտամ նշանակութեամբ բառք և ոճք. եթէ ձայնք և հնչմունք բառից կամ որակութիւնք նոցա համեմատեսցին հանդամանացն էակաց. այն է՝ ախորժ և անախորժ, քաղցր և դառն, թեթև և ծանրակշիռ որակութիւնք իրաց՝ բացատրեսցին նոյնորակ քաջայարմար բառիւք. եթէ թիւ և քանակութիւն բառից համաձայնեսցի քանակութեան իրաց. եթէ առնչակից բառք (որպէս գոյական և ածական, ենթակայ և բայ, խնդրող և խնդրեալ, ևն.) քաջայայտ վերաբերութիւնք կապակցեալ լիցին ընդ միմեանս առանց երկբանութեան: Օրինակ երկդիմի և տարտամ խօսից լիցի բանս„ պատմեն՝ աղէտս բազում գազանացն այնոցիկ հասուցանել մեղարացւոյն:

§ 275. Ա՛ռ լինելի և ամբողջելի իմաստից պահանջի, զի իրօք եղեալ իցեն տառք, վանկք, մասնիկք և հոլովատառք առ տեղեաւն 'ի պէտս բացայայտութեան կարևորք. զի ձևն բացբարձութեան վերադոյն յիշատակեալ՝ մի՛ յանդէպս և խոտորնակի 'ի մէջ ածցի. զի գլխաւոր գաղափարք մի՛ 'ի յոլով մանրամասունս կոտորեսցին, և մի՛ կարևոր մասունքն յապաւեսցին կամ 'ի բաց թողցին. զի անցումն 'ի միոյ մասնէ 'ի միւսն մի՛ լինիցի բացաթողութեամբ միջադրականայն. զի ամենայն ուրեք նշանակեսցի սկիզբն՝ միջոցն և աւարտն իրաց և ներգործութեանց. և մի՛ ծագէ 'ի ծագ ընդոստնուցուն բանք միջահատութեամբ կարևորաց: Միութիւն իմաստից կախի զմիութենէ ենթակային և բային 'ի միում առասութեան. զի որպ ասացեալ եմք 'ի քերականութեան՝ բազմութիւն միոյ 'ի գոյունց բազմացուցանէ զիմաստն. իսկ յոլովումն այլոց բառից, որպ ածականաց, խնդրողաց, խնդրելոց, յատկացուցանողաց, ևն., ոչ 'ի ներքս բերէ զկուտակումն իմաստից: 'Ի սոյն զընթացուէ նախադրելոցդ ծնանի այն բացերևումն իմաստից. որ զօրէն ճառագայթից արևու իւրովն լուսափայլութեամբ խտղէ զաչս ևս և զկարճատեսս. այնպէս զի ոչ միայն դիւր լինի ամենեցուն 'ի միտ առնուլ զայն, այլ և ըստ խրատու կուինտիլիանոսի՝ անհնար լինիցի չիմանալն զնոյն ։

§ **276** · Բարեկարգութե՟ն խօսից՝ որ բղխէ 'ի ներքին բարեկարգութե՟ գաղափարաց և իմաստից, հիմն 'ի կարգն և 'ի կապն թէ՛ բառից և թէ առասութե՟ց · և որովհետև այլուր բացատրեալ եմք զկինչունն կարգի և զպէսպէս ցեղս նորա, աստանօր միայն ասել՝ թէ կարգ բառից և առասութե՟ց կէս բնական է և կէս հարկադիր · ըստ բնականին՝ յառասուլս անդ դրականն յառաջ կարգի քան զածականն իւր, ենթակայն՝ քան զբայն իւր, խնդրողն քան զխնդրեալն, յատկանալին քան զյատկացուցիչն, բացայայտեալն քան զբացայայտողն, յարաբերեալն քան զյարաբերողն, ևն · նոյնպէս և 'ի յարասուլս՝ պայմանաւոր առասութի՟ն բնութե՟ նախակարգ է քան զպայմանեալն, հարցանողն քան զպատասխանողն, պատկերն քան զնախատիպն, խնդրակն քան զփաստն, ևն · սակայն զայդ ամենայն փոփոխել և ըստ առաջակայ հարկի ինչ զետեղել ստիպի երբեմն ճարտասանն ըստ վայելչութե՟ տեղեաց և ժամանակաց · իսկ թէ ո՞րք և ո՞ւր ստիպեսցէ հարկ այնպիսի՝ չէ հնարին կանոնափակ սահմանել · զի բիւրօրինակ են դէպք իրացդ · և արտաքոյ մարդկային նախատեսութե՟ · վասն որոյ յանձն լինի խոհականութե՟ ճարտասանին ։ Զկապս կամ զառնչութե՟ բառից և առասութե՟ց խօսեցեալ եմք թէ 'ի քերականութե՟ յերկրորդ մասին բովանդակ, և թէ աստանօր · որք շատ զօրեն հրահանգել զմտադիր համբակս 'ի վարժութե՟ ։

Զարտաքին բարբառն՝ կարգաւ և կապով կանոնաւորեալ՝ նախնիք կոչեցին պարբերութի՟ (periodus), իմա՛ խօսք պարբերական կամ բոլորակաձև, որ զմիով գլխաւոր կենդրոնիւ պարայածեալ պատկանման բոլորի · այն ինքն է անուանեալն 'ի վերայ շարաբանութե՟ 'ի միտս, և յարասութի 'ի լեզուի · որ վասն զի իբրև բոլոր ինչ մարմին մտածի 'ի զանազան մասանց բաղադրեալ, յայն սակս

՚ի նմա մէն մի առասութին կամ իմաստն՝ անուանի անդամ (membrum), իսկ մասունք յերկար առասուեց կոչին հատած (incisum)· այնք են համառօտ և անկատար մասունք միոյ իմաստի, զորս քերականք բթանշանաւ, և մերթ ստորակէտիւ նշանակեն և յիրերաց զատանեն ։

§ 277 · Որպէս զի բարբառ ճարտասանին սրտազդած և ուժգին լինիցի՝ հարկ է, **1** զի սիրտ նորա եղիցի այնպիսի · իբրու այն՝ զի ըստ յոլովակի ասացելոյս՝ խօսք ՚ի հոգւոյ բղխեն · և ուր հոգին ցուրտ է և վեհերոտ՝ ոչ զլեզու իւր և ոչ զսիրտ ունկնդրացն մարթի ջեռուցանել ինչ կամ շարժել · **2** զի ուրեք ՚ի կիր առցին նախայիշեալ ձևք իմաստից առ շարժութիւն հոգւոյ յանկաւորք · **3** զի ուր ճառն կենդանի ձայնիւ ատենախօսելի իցէ, դէմք՝ երես՝ ձայն և շարժուածք բեմբասացին քաջայարմար ձևասցին եռանդեան սրտին, և հրացայտ յունկնդիրս երևեսցին · **4** զի թօթափեսցին ամենայն աւելորդ և անհարկաւոր բառք՝ տառք՝ մասնիկք՝ մակբայք՝ շաղկապք՝ խնդրեալք, և այլ նոյնպիսի ոճք · **5** զի իրք և հանգամանք ծանունք՝ կարևորք մեծարգոյք և չափաւորք, համապատշաճ ձայնիւ և հզօր ոճով բացատրեսցին · **6** զի նոյն մի հանգամանք բազում էակաց՝ առանձինն և այլազան արտայայտեսցին · կամ ըստ լեզուի քերականաց՝ ուր բազում ենթակայք ունիցին զմի խնդրեալ կամ մակածական՝ զատուսցին · և իւրաքանչիւր ենթակայի՝ առանձին մակածական ընծայեսցի · որպ փոխանակ ասելոյ ,, կեանք և մահ, բարի և չար, մեծուի և աղքատուի առաջի Աստուծոյ հաւասար են (սիրաք · ժա), ազդողագոյն ևս լինի բանն՝ եթէ բազմապատկեսցին համապատշաճ մակածականք առ մէն մի ենթակայսդ յայլևայլ առասութիւնս · **7** զի ըստ ուշիմ խոհականուե աստիճանաւ ընդարձակեսցին կամ անօսրասցին հանգամանք էակին (տես § **186**)։

§ **278** · Աղուաձայնութին (euphonia) է քաղցրախորժ և զուարճալի հնչիւն բառից և առասութեանց , որ զլսելիս ունկնդրաց ըստ կարի զմայլէ և հաճոյական առնէ նոցա զճառն. առ կազմուն որոյն պահանջի, 1 զի հեռի լիցին դժուարահնչիւն տառք և վանկք 'ի վերոյ յիշատակեալք , 2 զի քաղցր բաղաձայնք և ձայնաւորք գեղեցիկ զուգախառնեսցին 'ի բառս. 3 զի մի՛ բախեսցին ծանրալուր վանկք յաւարտ նախընթաց և 'ի սկիզբն յետագայ բառից. որպէս ,, զնորա զօդըն քննէին . . . ունէին եօթն թնդանօթս. 4 զի միավանկ և երկավանկ բառք կամ մասնիկք մի՛ անընդմէջ յաճախեսցեն առ միմեամբք. որպէս ,, այս այն այր է՝ զոր մեք և ոչ իսկ բնաւ ճանաչել կամիմք . . . եթէ և ինչ մի եւս էր 'ի նմա լաւ և ողջախոհ. 5 զի նոյնայանգ վանկք և բառք մի՛ հուպ իրերաց տեղեսցին. որպէս ,, իբրեւ եւ նա եւս 'ի դերեւս ել անտի. պատահեցաւ ցաւ ցաւոց. 6 զի բառք նոյնահնչիւն կամ նմանահնչիւն վանկիւ սկզբնաւորեալք մի՛ կից իրերաց շարադասեսցին. որպէս ,, առաքեալք առանձինն առաքեցան առ ամենայն ազգս. էր մեր և ձեր երբեք երկիւղ երդելոյ զերգն զայն. 7 զի յերկարատող առասութիք բաժանեսցին 'ի քանի մի հատածս, և յարասութիք՝ յերկուս կամ յերիս անդամս, այն է՝ յառասութիս. 8 զի հատածք և անդամք ըստ մարթելոյ համաչափ իցեն ընդ իրեարս ըստ երկարութեան և ըստ կարճութեան. այլ ոչ ամենայն ճշդութեամբ և նոյնաթիւ վանկիւք, զի մի՛ յոտանաւոր փոխեսցին. 8 զի հատածք և անդամք արուեստիւ որոշեսցին յիրերաց շեշտիւ՝ կիտիւ՝ բթով՝ և այլովք նշանագծիւք առոգանութեան. 9 զի սակաւավանկ և յոգնավանկ բառք խառնեսցին ընդ միմեանս գեղեցիկ դասաւորութեամբ և փոփոխ տեղաւորութեամբ. 10 զի վերջին տառ և վանկ նախընթաց բառից՝ հատածից և անդամոց, քաղցրաձայն կապեսցի ընդ առաջին տառի և վանկի յետագայ բառին՝ հատածին և անդամոյն. Մերթ ձայնաւոր և մերթ բաղաձայն տառիւք եղերեալ և հաւեալ ըստ անուշակ հեշտութեան քաջակիրթ լսելութեան․ **11** զի յանդք հատածից և անդամոց՝ մի համօրէն նոյնահնչիւն իցեն իբրու յոտանաւոր տողս․ բայց և մի ամենայնիւ տարաձայն և այլանդակ․ այլ ըստ վայելչութեան նմանատիպ և դաշնաձայն աւարտեսցին զօրէն համակերպարան եղբարց երկուորեկաց․ **12** զի վերջին բառք հատածք և անդամք՝ միշտ հզօրեղ և մեծայարգ իցեն քան զնախընթացս․ մանաւանդ որք ըղ յարասութիւնս աւարտեալ գլխաւորեն և կնիք դնեն խորհըրդածութեան իմաստից․ **13** զի կերպարան և պատկեր ողջոյն առասութեանց նոյն և յարասութեանց՝ մի ամենայնիւ համահանգէտ նկարագրեսցին, այլ ըստ կարի նորատեսիլ և տարբերատիպ յօրինուածով խառնեսցին ՚ի միմեանս ։ Այդոքիւք ամենեքումբք և դոցուն նմանեօք յաջողեալ բոլորի հռչակեալն այն առ նախնիս՝ համարակցութիւն, կամ ճիշդ ևս՝ կոպարակցութիւն (rhythmus) արտասանութեան քանի մի հատածից և անդամոց ընդ իրեարս․ իբր զի յունականն ռիւթմո՛ս (ծագեալ ՚ի բայէս ռէ՛ւօ, հոսեմ, ձգեմ, տարածեմ) տիրապէս է՝ ձգումն գծից ընդ ծայրս կամ ընդ եզերս մակերևութի, որով վերջին կոպարք և արտաքին կերպարան նորա պարփակեալ սահմանաւորին․ իսկ առ մարդկային խօսս փոխաբերեալ՝ նշանակէ զայն եղանակ ձայնարձակութեան կամ արտասանութեան, յորում բազում հատածք և անդամք կամ հընչմունք նոցա բացորոշ ինչ չափակցութեամբ և թուակցութեամբ համեմատ և համակերպարան ձևանան ընդ միմեանս․ զորոյ զօրինակս առնուլ պարտ է ՚ի բանից եղիշէի, խորենացւոյն, օձնեցւոյն, և շնորհալւոյն, առաւել ևս՝ ՚ի շարականաց մերոց ։

§ **279**․ Պատշաճողութիւն կամ վայելչութիւն բարբառոյ հիմնի յայն՝ զի բառք և եղանակք խօսից՝ քաջայարմար իցեն հանդամանաց ազնուաճաշակ ունկնդրաց․ և մի հեռս ինչ անգամ յանձին բերցեն՝ որոց հակառակինն փափուկ կենցաղակրթութեան և պատուադիր մեծարանաց աւագախումբ ժողովոյ․ ոչ են բառք և խօսք տըմարդիք, անհեթեթք, առասպելախառնք, նախատադիրք, գեղջուկք, պղուականք, միմոսականք, վաւեշտականք, տղայականք, մարդելոյզք, փաղաքշականք, ռամկական առակք, գռեհկական պատմութիւնք, կծանողական այլախօսութիւնք (allusio), և ամենայն ինչ՝ որ ընդհարկանի 'ի պատիւ՝ 'ի համբաւ՝ և յիրաւունս ընկերաց · կամ զկարգ և իցէ դառնացուցանէ զնոսա ։

§ 280 · Զանազանութիւն և բաժանումն ոճոյ (stilus) ·

Ոճ է մասնաւոր կերպարանք բարբառոյ՝ որ ծնանի 'ի պէսպէս յուդախառնուէ նախայիշեալ հանդամանացդ խօսից՝ թէ ընդ իրեարս և թէ ընդ անհատական հանդամանս և ճաշակս իւրաքանչիւր բանախօսի · և որովհետև անհամար են եղանակք յուդընթացութեդ հանդամանաց՝ յայնմանէ բազմապատկին և ազգք կամ ցեղք ոճոյ՝ ըստ այլևայլ տեսութեանց, ըստ որոց կանալանէ զնոսա միտքն · իբր զի

1 Ըստ հեղինակաց՝ որ խորհին և խօսին, ըստ առարկայից՝ զորոց խօսին, և ըստ տեղեաց յորս 'ի կիր ածին, բաժանին ոճք (ոճ և ճառք) 'ի ճարտասանական, 'ի բանաստեղծական, յիմաստասիրական, 'ի պատմաբանական, 'ի նամակական, յեկեղեցական, 'ի քաղաքական, 'ի դատաստանական, և յայլ դոյնպիսիս բազումս յոյժ ։

2 Ըստ բուսոյ բարուց և ըստ կենցաղակրթութե զանազան ազգաց՝ գտանի ոճն 'ի հայկական, 'ի հելլենական, 'ի լատինական, 'ի գերմանական, 'ի գաղղիական, 'ի պարսկական, և յայլ նմանս · որպէս և հռչակեալն առ նախնեօք ըստ այլևայլ կողմանց երկրի՝ ոճ ասիական, հռոդոսական և լակոնական · որք յաւէտ ըստ քանակութեն տարբերին յիրերաց ։

3 Ըստ գլխաւոր նպատակաց խօսելոյ՝ ոճն բաժանի 'ի մտավարժական, 'ի սրտազգածական, 'ի կամաշարժական, և 'ի բաղադրական, որ յերկուց կամ յերից ունի ինչ · զինչութե դոցա յայտնի է ընթերցանելեաց անկարօտ նորոգ բացատրութեց ։

4 Ըստ որակութ՟ն բաժանի սովորաբար 'ի վսեմ, 'ի միջասահման, և 'ի պարզ · վսեմ՟ ածանցի առ մեզ յարմատոյդ՝ վէս, ընդ ստացական մասնկանս՝ եմ (որպէս և դժխեմ, խոհեմ, համեմ), և ցուցանէ զայն ինչ՝ որ պէսպէս առաւելութ՟ք վերաստիճանեալ և գերածայրեալ իցէ արդիւամբք քան զընկերս իւր · իսկ յոճ խօսից փոխաբերեալ նշանակէ զայնպիսին, 1 որ ճառէ զգերազանց առարկայից, զաստուածայնոց, զկրօնականաց, զգիտնականաց · 2 որ պարունակէ զպատկերս կենդանատիպս, զգաղափարս լուսածնունդս, զիմաստս յորդնադիմի կատարելութ՟ք յղփացեալս, զզգածմունս յափշտակիչս համեղաճաշակս և անուշարարս կրից կոկորդաց, և զգիւտս նորոգայարդարս հրաշացուցիչս · 3 որ պճնազարդեալն իցէ ընտրելագոյն քաղցրալուր բառիւք, մեծայարգ ձևովք իմաստից և բառից, քաջարուեստ յօրինուածովք առասութ՟ց և յարասութ՟ց · և այլովք ևս զանազան պերճանութ՟ք՝ զորս վերագոյն աւանդեցաք զիմաստից և զբարբառոյ ընդհանրապէս ։

§ 281 · Միջակ ոճն սակաւ ունի 'ի հանդամանաց վսեմին, իսկ պարզն՝ ևս առաւել պակասի 'ի նոցունց · և որովհետև յոլով են աստիճանք և չափք առաւելութ՟ կամ պակասութ՟ հանդամանացդ, յայն սակս ընդ մէջ երից հարկաւ կերպաւորին այլ ևս զանազան եղանակք · որոց վասն ոմանք հինգ, և ոմանք ութ կամ տասն ցեղս որակութ՟ որոշեն յոճս · բայց 'ի նշանակել անդ զկոպար և զյատկանիշ իւրաքանչիւրոցն՝ զօրէն արբելոց այսր անդր դանդաչեն · կամ զնոյն բան յեղյեղեն 'ի վեր և 'ի վայր անիմաստ կրկնաբանութ՟ և անբացորոշ ճշդութ՟ · քան զի ոչ դժուարին միայն, այլ դոգյես յանհնարից ինչ համարի լարաբաժին սահմանաչափութ՟ նշանակել զշրջապատ եզերս միոյ միոյ յանհամար ազգաց ոճոց · այդորիկ աղագաւ 'ի բաց թողեալ յանպարագրելիդ ձեռնարկել՝ յայն միայն յորդոր լինիմք համբակաց, զի ամենայն ուրեք զոճ բանիցն յանկեսցեն յարմարեսցեն հանգամանաց առարկայից , նպատակաց , ունկնդրաց և ժամանակաց · և ՚ի միում իսկ բանի մի՛ ծագէ ՚ի ծագ տաղտկալի միակերպուբ՟ զնոյն տարազ խօսից վարեսցեն , այլ ըստ թելադրելոյ պարագայից և հասունամիտ խոհեմուե՟ բազմերանգ և զանազանատիպ յօրինեսցեն զմասունս ճառին · զի պէսպիսուի՟ և չափակցուի՟ ոչ միայն զուարճացուցանէ զունկնդիրս , այլ և հարկաւոր և օգտակար դատի թէ ճարտասանից և թէ ունկնդրաց՝ առ ստացուի՟ նպատակի ճառից · վասն զի հրահանգուի՟ն մտաց հարկապահանջէ զոճ բանի պարզիմաց , առ սրտազգածուի՟ քաջայարմար դատի միջասահմանն · իսկ առ կամաշարժուի՟՝ վսեմաբանն · և որովհետև երրեակ այդ նպատակք գրեթէ միշտ զուգընթանան ՚ի ճառս , յայդմանէ և զուգախառնութիւն ոճոյդ կարևոր համարի յամենայնի ՚ի նոսին ։

Մարթ է ևս բաժանել զոճն ըստ կապակցուե՟ ներքին բանիցն՝ ՚ի պարբերական և ՚ի հատուածական · յորոց յառաջնումն ամենայն մասունք ծագէ ՚ի ծագ աղխաղխին ընդ իրեարս օղ ընդ օղ , և կացուցանեն զմի ճարտարահիւս շղթայ երկարաձիգ · իսկ յերկրորդումն հակառակ առաջնոյն մասունք բանից անյօդակապ և ինքնագլուխ զետեղին ըստ դիպաց , առ ՚ի չգոյէ մանաւանդ միուե՟ առարկայի և նպատակի · ոմ՟ն են ոճք գրոյն առակաց , սիրաքայ , և այլոց նմանեաց ։ Հնար էր ևս յառաջ բերել զայլ բազում ցեղս կամ կերպարանս ոճոյ · ոմ՟ն են անուանեալքն , ուղիղ և թիւր , կանոնաւոր և անկանոն , ճիշդ և տարտամ , բացայայտ և մթին , ազնիւ և անարգ , քաղցրաձայն և խժական , ուժգին և տկար , և որ այլ ևս դոյնպիսիք · բայց առ չծանրաբեռնելոյ զհամբակս ՚ի բաց թողումք · զի ՚ի կանխաւ ասացելոցդ դիւրեաւ է խելամտել զինչուե՟ և հանգամանաց դոցա ։

§ 282։ Միջոցք հաստատելոյ գործելոյ զձեռնարկս ի գործ իւր։

Գլխաւոր նպաստք կամ միջոցք իրացդ համարին ութ այսոքիկ։ 1 խորին և նուրբ մտածութիւն լիուլի ճանաչել զառարկայն և ըստ կարի զամենայն հանգամանս նորա. մտանել 'ի խորս և 'ի խորշս նիւթոյն, ծծել զամենայն հիւթ և զպարարտութիւն նորին, և իբրև զսերմանս ամբարել զնոսա յորգանդս կարողութեանց հոգւոյ իւրոյ։ 2 հանդարտ և յերկար ուռճանօք բուծանել զսերմանսդ, տածել զնոսա և փոխարկել 'ի սաղմն, պարարել զնա օր քան զօր մինչև ցբացորոշ հասակ ծնելութեան (վասն մտածութեան կարդա 'ի կուինտիլիանոս, գր. 10. գլ. 6)։ 3 վերբերել ըստ մարթելոյ զամենայն ձիրս կարևորս ճարտասանի, զորս յիշատակեալ եմք այլուր։ 4 քաջ խելամուտ լինել քերականութեան լեզուիս, մաքուր հայկաբանութեան և կանոնաց ճշգրտապատում ճարտասանութեան։ 5 անխոնջ հանապազորդութիւն և անցնդական մտադրութիւն ընթեռնուլ զոսկետող ընտիր մատեանս երանելի նախնեաց մերոց։ մանաւանդ զորս նորոգ սկսան 'ի լոյս ընծայել 'ի վենետիկ աշխատասէր հարքն մխիթարեանք։ առաւելապէս զխորենացին, զեղիշէ, զեզնիկ, զկորիւն, զմամբրէ, զփարպեցին, զօձնեցին, զյովհաննէս կաթողիկոս, զմագիստրոս, զնարեկացին, զշնորհալին, զսարգիս և զիգնատիոս մեկնիչս, զլամբրոնացին։ ևս և զաստուածաշունչ մատեանս և զշարականս։ հարկ է ևս ճարտասանից հմուտ լինել քանի մի այլազգի լեզուաց։ մանաւանդ յունականին, լատինականին և գերմանականին, առ ընթեռնլոյ զընտիր ընտիր գրուածս նոցա զհինս և զնորս։ զի մերով միայն դպրութեամբ անմարթ է յառաջադէմ զարգանալ յուսմունս։ և որ հայերէն միայն գիտէ՝ ոչ ինչ գիտէ։ 6 'ի վերծանութեան գրոց նախնեաց կամ արդեաց՝ միշտ հանդէս առնել բանից նոցա։ իմա՝ խտրել զներքին բանն յարտաքնոյն, զհոգին 'ի մարմնոյն, զիմաստաբանութիւն 'ի պերճախօսութենէ։

զանազանել զբարի բարին և զխոտանն · որոշել զգաղափարս ճշմարտուե՟՝ գեղեցկուե՟ և բարուե՟, զաստեճանս նոցին, զկարգ զկապ և զայլ հանգամանս իմաստից · լուսաբանել զմթութիւն ստէպ վերծանուբ՟ և այլովք միջոցիւք · ճանաչել զպատկեր և զյատկանիշ իւրաքանչիւր մատենագրի ըստ մտաւոր և կամաւոր վարժուե՟ց՝ որակուե՟ց՝ և այլոց հանգամանաց նոցա · ընտրել զյարգ անձանց և զվաստակոց նոցա ամենայն պարագայիւք · և որ 'ի դոսին վերածին մտաւորական զըննուի՟ք (զեղանակէ ընթեռնլոյ զգիրս այլոց տե՛ս 'ի կուինտիլեան · գր · 10 · գլ · 1 · յօրատիոս · նամակ · գր · 2 · նամակ · 1 · 'ի սենեքա, նամակ · 45 · առ կիկերոնի, և առ այլս) · 7 անդադար շարադրել և յօրինել զճառս, 'ի համառօտից և 'ի դիւրագունից յընդարձակս և 'ի դժուարինս վերոտնելով, զնիւթս և զկերպս նոցին փոփոխելով, յամենայնի զլաւագոյնն և զվսեմականն ընտրելով, և զսխալանս իւր ինքնին կամ ձեռամբ բարեկամաց ուղղագրելով (կարդա՛ վասն բանագրուե՟ 'ի կուինտիլեան · գր · 10 · գլ · 3—5 · և 'ի կիկերոն, յղ · ատենբն · ա · 33 · և՟ն) · 8 աշակերտել ուսանել և նմանել հանճարոյ և ոճոյ գերագունից հեղինակաց ազգայնոց և այլազգեաց, ոչ ծառայաբար և կուրօրէն, այլ բազում ընտրողուբ՟ և խելահաս խոհականուբ՟ (զորմէ նոյնպէս տե՛ս առ կուինտիլեան · գր · 10 · գլ · 2 · առ սենեքայ, նամակ 84) ։

§ 283 · Եղանակք հաղորդելոյ ընկերաց զճառս

Երկու միայն են, ո՟ր գրաբանուի՟ և բացախօսուի՟ · յառաջնումն կամ ձեռագիր կամ տպագիր արարեալ 'ի թղթի զբանս մեր յանդիման առնեմք աչաց ընթերցողաց 'ի վերծանուի՟ · բայց յերկոսին իսկ պահանջեմք զծայրագոյն զգուշուի՟ և զշրջահայեաց խոհականուի՟ 'ի նիւթս և 'ի կերպս գրուե՟, 'ի չափակցուե՟՝ 'ի գեղեցկուե՟ և յուղղուե՟ գրուածոյ, 'ի բաժանման գլխոց՝ յօդուածոց և այլոց մասանց բոլորին , 'ի նշանագրութ՟ շեշտից՝ կիտից և այլոց գծից առոգանութ՟ , յուղղագրութ՟ ակամայ սխալանաց և վրիպակաց , 'ի համեմատութ՟ տառից առ աչս ընթերցողաց , և այլ դոյնպիսիք , որ 'ի դիւրութ՟ և յիրաւունս վերծանողաց վերածին ։

§ 284 . Բացախօսութ՟ է՝ յորում կենդանի ձայնիւ և լսելի բարբառով առաջի առնեմք ներկայ ունկնդրաց զճառ մեր . յորում հինգ ինչ զանազանելի են և ուղղելի արհեստիւ . յիշողութ՟ , արտասանութ՟ , ձայն , դէմք մարմնոյն , և շարժուած անդամոց ։

§ 285 . Յիշողութ՟ն կամ ուշն է կարողութ՟ հոգւոյ , որ ընդունի՝ պահպանէ՝ և արտաբերէ զգաղափարս և զիմաստս մտաց , նոյն և զկարգ և զկապ նոցա , թէ 'ի մասունս և թէ 'ի բոլոր մարմնի ճառին . սա է իբր գանձատուն և շտեմարան՝ յորմէ միտք և լեզու ճարտասանին առնուն զամենայն խօսելիս և հաղորդեն ընկերաց . և բաժանի մի՝ ըստ առարկայից , և միւս ըստ ձրից իւրոց . ըստ առարկայիցն բաժանի յիրական , որ զիրս և զհանգամանս , նոյն և զգաղափարս և զիմաստս նոցա առնու և պահէ . և 'ի նշանական՝ որ զնշանս իրաց , իմա՛ զբառս , զձայնս , զտեղիս , զժամանակս , և զայլ արտաքին ցուցակս իրաց ընդունի . իսկ ըստ ձրիցն բաժանի յընդարձակ՝ որ զբազումս և զզանազանս շտեմարանէ . 'ի դիւրընկալ՝ որ առանց դժուարութ՟ և հեշտութ՟ ընդունի . 'ի հաստատուն՝ որ զընկալեալսն պահպանէ անկորուստ և յերկար ժամանակս . և 'ի հաւատարիմ որ 'ի ժամու պիտոյիցն փութով և ողջամբ արտաքս տայ և հատուցանէ ։ Ատենաբանք՝ քան զի սովորաբար առանց գրուածոյ և 'ի բերան բացախօսեն ըզճառն , պէտս ունին անջինջ սերտելոյ զայն կանխաւ յուշի իւրեանց . որոյ միջոցք կամ նպաստք համարին յետագայքդ . 1 զյիշելիսն ընդունել բազում զգայարանօք , իմա՛ աչօք , ականջօք , բերանով , ձայնիւ . 2 կապել զնոսա ընդ տեղեաց , ընդ ժամանակաց , և ընդ այլոց զգալի և նիւթական նշանակաց · 3 միաբանել և յօդաւորել զնոսա ընդ պատկերաց և նկարուց երևակայութ՟ · 4 մուծանել 'ի նոսա զպէսպէս կարգս և զկապակցութիւն, այլ և տրոհել զնոսա 'ի մասունս և 'ի հատածս · 5 ինքնին ձեռագրել զսերտելիսն · թէ ոչ ըստ իւրաքանչիւր բառից, գէթ ըստ գլխաւոր մասանց նիւթոյն, ըստ յօդուածոյ և գլխակարգութ՟ց երևելի անդամոց Ճառին · և նշանակել 'ի նոսա զհամար և զթիւ յաջորդութ՟ցն · 6 ընտրել զառանձնակեաց և զանշփոթ տեղի և զքաջադէպ ժամանակ սերտելոյ · ո՛պլի է վաղ քաջ ընդ առաւօտն, և երեկոյն յառաջ քան զընկողմանելն · ախորժանօք կրկնել զսերտուածն, ստէպ ստէպ խոկալ և խորհել զնիւթն առանց գրոյ, հեռանալ յամենայն ախտէ մտամոլորութ՟, մանաւանդ յորկորամոլութ՟է, յարբեցութ՟է և յայլոց ոգեսպառ կրից (վասն յիշողութ՟ կարդա՛, կուինտիլ · հրհնգ · ատենբն · գր · 3 · գլ · 3 · և գր · 11 · գլ · 2 · կիկերոն · յղ · ատենբն · գր · 2 · գլ · 86)։

§ 286 · Արտասանութ՟ն պահանջէ՝ զի իւրաքանչիւր տառք՝ վանկք՝ բառք և առասութ՟ք արտաբերցին ուղիղ՝ առանց թիւրութ՟ · բացորոշ՝ առանց խառնափնդորութ՟ · յստակ՝ առանց թոթովանաց և կակազելոյ · ընդհատեալ միջոցիւք և հանգստիւք՝ ըստ թելադրելոյ նիւթոյ բանին · ամբողջ՝ առանց կրճատելոյ և կլանելոյ զտառս և զհնչիւն նոցա 'ի գլխոյ 'ի միջոյ և 'ի վերջոյ բառից · բնական և սովորական խօսողին՝ արտաքոյ ծանծաղամիտ արուեստակութ՟ կամ օտարաց նմանողութ՟ · և պէսպէս ձայն՝ առանց տաղտկալի նոյնահնչիւն միակերպութ՟ ։

§ 287 · Աստիճան ձայնի (tonus) կոչեմք առ չունելոյ զայլ անուն սեպհական՝ զպէսպէս կերպարանս կամ զեղանակս բարբառոյ և արտասանութ՟ · և բաժանեմք զայն, 1 ըստ ունկնդրացն 'ի հանդիսական՝ զոր 'ի հրապարակախօսութ՟ս և 'ի ժողովի պատուաւոր անձանց 'ի կիր առնումք · և յընտանեկան՝ զոր յառ տնին խօսս և 'ի կենակցութ՟ս վարեմք · 2 ըստ գլխաւոր նպատակացն

՚ի հրահանգական՝ զոր յուսուցանելն, ՚ի զգածողական՝ զոր յամոքելն զսիրտս այլոց, և ՚ի կամաշարժական՝ զոր ՚ի համանուն դէպս սովորաբար վարեմք. և 3 ըստ պէս պէս տեսակաց կրից յուրախականս, ՚ի տրտմականս, ՚ի հրամայականս, ՚ի հարցականս, յաղերսականս, և յայլ զանազան ցեղս. որոց զինչումն և եղանակ յայտնի է ամենեցուն յորպիսութեանց կրից և ՚ի հանապազօրեայ փորձառութենէ. միայն զայս կամիմք խրատ տալ համբակաց, զի թէ և յայլևայլ մասունս Ճառին փոխեսցեն ըստ պատշաճի, սակայն ՚ի միում Ճառի՝ զմի միայն տիրապետող աստիճան ձայնի պահեսցեն, համաձայն բնութեան և գլխաւոր նպատակի նոյն Ճառին։

§ 288. Ձայնի բեմբասացին հարկ է լինել, 1 լսելի ամենայն հանդիսականաց, ևս և ՚ի յետին տեղւոջ բազմելոց. 2 իմանալի՝ զի խելամուտ լիցին ունկնդիրք նշանակութեան նորա. 3 բնական՝ այրական և սովորական, հեռի յամենայն կանացի ծեքծեքանաց և յարուեստակութեանց. 4 քաղցր՝ զի անուշեսցէ զլսելիս ունկնդրաց. 5 առոգանական՝ կից ունելով ներգործութեամբ ճշգրիտ, ըղբութ, և զայլ նշանս քերականական վերծանութեան. և 6 բազմադիմի ըստ մասանց Ճառին, ըստ առարկայից, ըստ նպատակաց, ըստ ձևոց իմաստից, ըստ կրից, և ըստ զգածմանց սրտի. զորոց զորպէսն դիւրին է ՚ի միտ առնուլ յանուանակոչութեանց նոցին։

§ 289. ՚Ի դիրս բոլոր մարմնոյն և մասանց նորա զգուշանալ պիտի, 1 Ճարտասանն զի ամենայն ինչ վայելչական լիցի վիճակի ատենաբանին՝ ունկնդրաց՝ տեղեաց և ժամանակաց. 2 նստել կամ յոտին կալ ՚ի բացախօսելն միապէս ներելի է ըստ զանազան սովորութեանց. ոչ ՚ի դատաստանութեան սովոր եմք նստել, իսկ ՚ի քարոզելն և յայլ դէպս կանգուն կալ. վասն որոյ պարտ է միտ դնել հանգամանաց խօսողին՝ լսողաց և տեղեաց. 3 մօտ կամ հեռի կալ յունկնդրաց նոյնպէս համաձայնեսցի ընկալեալ սովորութեանց տեղւոյն. 4 գլուխն մի կորաքամակ կրկնեսցի 'ի կուրծս, մի՛ ըմբոստաբար բարձրապարանոց ճօճեսցէ, և մի՛ իգաբար յաջ կամ յահեակ թեքեսցէ. 5 աչք մի՛ յինչ մի միայն անքթիթ սևեռեսցին, մի՛ յանդէպս թափառեսցին, և մի՛ հանապազ փակ կամ կողմնաձև բացատ կարկառեսցին. 6 զբազուկս՝ զձեռս զմատունս տատանել, տարածել կամ խաղալ՝ անվայել է յամենայնի. զնոյնն պարտ է իմանալ և վասն սրունից և ոտից։

§ 290. Շարժիլ և շարժել զանդամս 'ի խօսակցելն ընդ այլոց՝ յառաջ գայ կէս 'ի բնական խառնուածոյ, և կէս յաստիճանէ բորբոքման կրից այլևայլ ազգաց. ասիաբնակ ժողովուրդք և ընդ նոսա Հայք քան զի բնաւորապէս վեհանձն են՝ ծանրաշարժ դժուարագրգիռ և սիգալով 'ի պարծ շրջին, յայն սակս և 'ի խօսելն սակաւ կամ ոչ երբէք տատանեն զձեռս. իսկ եւրոպացիք և յաւէտ գաղղիացիք և իտալացիք առ բնական թեթևաշարժութ՟ և դիւրագրգիռ աշխուժից՝ առաւել հակամիտեալ են 'ի շարժել զձեռս և զգլուխ 'ի խօսելն. յայդցանէ ծագեալ է և յաճախումն թատրոնից՝ դերասանաց՝ խաղարկուաց և կատակերգուաց առ եւրոպացիս, որք յասիա սակաւ կամ ոչ երբէք տեսանին. վասն որոյ ոչ ուղիղ գործեն՝ որք զեւրոպական օրէնս և կանոնս շարժուածոց անխտրաբար ապըսպարեն մերայնոց. որոց ոչ միայն շատ՝ այլ և հարկ է պահպանել զազգային զիւրեանց ազնուականութ՟՝ զծանրաբարոյութ՟ և զնազելի վեհափառութ՟. այն՝ որ անդուստ 'ի բնուստ տարրացեալ տպաւորեալ է յարիւն և յուղեղ նոցա. և վարժապետք արհեստիս բի՛ւր անգամ զայն յեղյեղեն, թէ իւրաքանչիւր ոք բնութ՟ և բնաւորականին աշակերտեալ հետևեսցի, և մի՛ ամօթալի արուեստակութ՟ օտարին և անբնականին նմանեսցի. այդոցիկ աղագաւ պէտք են մերոց հայկազուն ատենաբանից՝ զի 'ի բացախօսելն ուրեք երբէք, 1 անփոփոխ պահեսցեն զընդաբոյս վեհազնութ՟ և զհանդարտաբարոյութ՟ իւրեանց. 2 բայց և մի՟ զօրէն մահարձանաց և անշունչ պատկերաց անայլայլակ անշարժ ունիցին զդէմս զաչս և զձեռս. 3 այլ զփոփոխումն դրից և զշարժումն դոցա խոհեմութ՟ յարմարեսցեն երից նպատակաց ճառին. Հրահանգումն՝ սրտազգածումն և կամաշարժումն. Նոյն և փոփոխումն կրից իւրեանց և զգածումց, իմ՛ ուրախումն, տրտմումն, ցաւակցումն, զղջումն, և որոց 'ի կարգի. 'ի նախատիպ օրինակ ինքեանց դնելով միշտ զբնական շարժուածս դյնօրինակ կրիւք արդեամբք վարակելոց առ ասխական աղինս. 4 և ամենայն ուրեք քաղցրումն՝ ուժգընումն՝ վայելչումն՝ պչսպխումն մասանց, և միումն բոլորին պատկառ կալով. 5 նոյն և անմռաց յուշի պահելով զհնդեակ զայս հանգամանս. Թէ ո՛վ և ո՛րպիսի ոք է ինքն ատենախօսն, ո՛յք են հանդիսականք, զո՛րոյ բացախօսէ, որո՛վ նպատակաւ, յո՛րպիսի տեղւոջ և 'ի ժամանակի. Իբր զի 'ի զգուշաւոր մտադրումն դոցին հազիւ կամ ոչ երբէք դիպի զարտուղել 'ի կարևորն ուղղուէ: Վասն ձայնի՝ դրից և շարժուածոց մարմնոյ գտցեն բազում ինչ՝ որ կամիցին՝ առ կիկերոնի, կուինտիլիանոսի, և առ այլ հին և նոր հեղինակս, զգուշանալով միայն չփոխադրել զամենայն ինչ անխտիր յօտարաց առ մեզ:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ.

Յաղագս կերպի Ճառից .

§ 291 . Զինչութիւն , ցեղք , և այլ հանգամանք կերպի ճառից (dispositio) .

Գրեցաք 'ի վերոյ՝ թէ կերպք էակաց բաժանին 'ի գոյացական՝ որ է էական հանգամանք ինչ բաղորոշող զնիւթն առ մասնաւոր տարազ գոյուն՟ , ոպ՟ի է բանական հոգի մարդոյ . և 'ի պատահական՝ որ է փոփոխելի հանգամանք ինչ յաւելեալ յէակս , ոպ՟ի են ամենայն որակութիւնք , քանակութիւնք և առնչութիւնք . ընդ որս դասին և ամենայն կերպք արհեստականք կամ մարդահնարք . որք վերստին բաժանին 'ի գաղափարական , 'ի ներգործական , և յարտադրական։ Գաղափարական կերպ համարի սկզբնատիպ իդէայն՝ զոր արհեստագործն կանխաւ նկարէ 'ի մտի իւրում . ներգործական անուանին այն ամենայն գործողութիւնք՝ որովք արհեստաւորն զսկզբնատիպն իւր մուծանէ 'ի նիւթն կերպաւորելի . իսկ արտադրական կերպ կոչի՝ ձեւն այն կամ տիպն և դրոշմն , որ 'ի ներգործութեանց արհեստաւորին ծնանի , և յանկերպ նիւթն ընկալեալ լինի . յայտնի նշմարին այդոքիկ 'ի կառուցանել հիւսնապետի զպալատ արքունի . ուր հարկաւ որոշին յիրերաց հինգ ինչ այլասեռք . 1 կերպ սկզբնատիպ՝ կամ նախագաղափար իդէայ կերպի , 2 կերպաւորիչ անցաւոր ներգործութիւնք արհեստաւորաց . 3 բազմաթիւ և բազմացեղ նիւթք կերպաւորելիք կամ պատրաստեալք առ ընդունել զկերպ բոլորական, 4 նորածին կերպ Յայական 'ի նիւթն տպաւորեալ. և 5 կերպացեալ բոլորն նորոգայարդար, այն է՝ բաղադրեալն 'ի նիւթոյ և 'ի կերպէ:

Հնգեակ այդ մասունք միշտ գտանին, և պարտին իսկ գտանիլ յամենայն ճառս յօրինելիս. յորոց առաջինն կամ սկզբնատիպն միշտ կանխել պիտի քան զայլս համօրէն. զմանէ քան զի ըստ տանելոյ արհեստիս խօսեցեալ եմք վերագոյն, չկամիմք յերկարել զքանս յայսմ վայրի յումպէտս:

§ 292. Կերպաւորիչ ներգործութիւնք ճարտասանին՝ հանրական ձայնիւ կոչին առ մեզ Բանահիւսութիւն. այն է հիւսողութիւն մասնական բանից ընդ իրեարս՝ առ 'ի կազմել զմի բոլոր մարմին, և յածին զհնգեակ հանգամանօք նիւթոյն, որք են. մասունք, որակութիւն, քանակութիւն, կարգ, և կապ նոցա:

Մասունք նիւթոյն պարտին լինել, 1 Թուով բաւական, 'ի միակ մասնն ոչ մարթի առանց ընկերի բաղադրել զայլ ինչ բոլոր. 2 ցեղիւ զանազան, որ հարկաւ պահանջի առ իսկութիւն գեղեցկութեան. և 3 արդէն յինքեանս կերպաւորեալ ըստ պատշաճի նոցա. զորս աւանդեալ եմք վերագոյն: Մասունքն բաժանին յաւագս՝ ոմն են առարկայն և հանգամանք նորա, նպատակն ըստ երից ցեղիցն, ներքին նիւթն ընդ քառեակ մասանցն (յառաջաբան, բնաբան, և այլն). և 'ի կրտսերս՝ յորոց սակի են դիտակք կամ տեսիլք զգայութեանց, գաղափարք՝ իմաստք և իդէայք մտաց, զգածմունք սրտի, գրգռութիւնք կամաց, վերաբանութիւնք, բառք, առասացութիւնք և յարասութիւնք լեզուի, այլովք հանդերձ:

Որակութիւնք և քանակութիւնք մասանցդ հանապազ պարտին լինել համեմատ և համաձայն թէ ընդ միմեանս, և թէ ընդ նպատակս ճառին, ընդ ունկնդիրս և վերծանողս, ընդ առարկայ ճառին, ընդ տեղեաց և ժամանակաց, և ընդ այլ մասնաւոր պարագայս անձանց և իրաց:

§ 293 · Կարգն է զետեղումն և դրումն միոյ մասին զկնի միւսոյն՝ նկատմամբ կա՛մ տեղւոյ նոցա, կա՛մ ժամանակի, և կամ երկոցունցդ միանգամայն · բայց միշտ վերածութեամբ առ օրէնս կամ առ հիմն ինչ · ցեղք կարգաց յոլով են, բայց գլխաւորքն համարին յետագայքդ · **1** կարգ ենթակայական՝ յորում Ճարտասանն զբանս իւր յարմարէ պիտոյից և ընդունակութեան ունկնդրաց կամ վերծանողաց իւրոց · **2** կարգ առարկայական՝ յորում մասունքն շարադասին ըստ պահանջելոյ Ճառելի առարկային · **3** կարգ վախճանական՝ յորում նպատակի իւրում միայնոյ միտ դնէ Ճառաբանն, և որով միջոյաւ դիւրըմբռնելի դատի զայն՝ նմին յարմարէ զմասունս Ճառին · **4** կարգ բաղադրական՝ որ սկսանի խօսել ըզմասանց, և ապա երթայ հասանէ 'ի բոլոր նոցա · **5** կարգ վերլուծական՝ որ ընդդէմ բաղադրականին նախ զբոլորէն Ճառէ · և ապա քրքրէ զմասունս նորա · **6** կարգ վայրաբերական՝ որ յընդհանրոյն սկսանի և յեզականս իջանէ, կամ 'ի սեռէն 'ի ցեղս, և 'ի ցեղէն յանհատս նորա · **7** կարգ վերամբարձական · յորում ներհակ նախընթացին՝ յանհատից առ ցեղն, 'ի ցեղից առ սեռն, 'ի մասնաւորաց առ ընդհանուրս լինի յառաջանալ · **8** կարգ ներգործական՝ որ կա՛մ 'ի գործողէն առ ներգործութիւնս և կիրս նորա, կա՛մ 'ի գործողութեանց և 'ի կրելութեանց առ գործող անձն յառաջ խաղայ · **9** կարգ պատՃառական, որ կա՛մ յարարչէն սկսանի և յարարածս նորա աւարտի, կա՛մ ներհակ այդմ՝ յարարածոց յարարիչն յառաջանայ · **10** կարգ դիտողական, յորում կամ միջոցքն նախադաս և նպատակն վերջադաս զետեղին, կամ այդմ հակառակ՝ նպատակն յառաջ և միջոցքն 'ի վերջէ դասին · **11** կարգ պայմանական, որ կա՛մ 'ի նախընթացէն՝ 'ի սկզբանէն և 'ի պայմանէն Ճանապարհ բացեալ՝ երթայ յանգի 'ի հետևորդս և 'ի պայմանաւորս · և կամ հակադարձ շարիւ 'ի հետևորդաց ընթանայ առ նախընթացս նոցին · **12** կարգ ժա մանականն՝ որ զհետ ընթայից և հոսման ժամանակին ընթանայ • որպ՟ 'ի ներբողելն զոք՝ ծննդեան, սնընդեան, մանկուե՟, այրուե՟, ծերուե՟, և մահուան նորա • **13** կարգ տեղական, որ զմասունս՝ զդիրս՝ զկողմունս՝ զձևս և զայլ հանգամանս տեղւոյ նկատէ • որպ՟ զեկեղեցւոյ, զպալատի, ևն՟ • **14** կարգ յարգական՝ յորում արժանիք և գինք իրաց կշռին, և պատուականք քան զանարգս նախադասս զետեղին, որպ՟ հոգին քան զմարմինն • **15** կարգ հրահանգական՝ որ զհեշտընկալս և զդիւրիմանալիս յառաջադաս առնէ քան զխրթնիմացս • **16** կարգ պատմական՝ յորում սկիզբն մէջ և աւարտ ներգործութեանց և կրելուե՟ց նշանակի՝ ըստ նմանուե՟ ուղղաձիգ գծի ժամանակի • **17** կարգ պարբերական՝ յորում թել բանիցն ման առնու զօրէն բոլորակաձև շրջանակի • 'ի նոյն կէտ՝ յորմէ սկսաւն՝ աւարտելով զվախճան բանիցն • Թողումք յիշել զայլ ևս ցեղս կարգաց ։

§ **294** • Կապն է յարակցուի՟ և մածուած երկուց մասանց ընդ միմեանս՝ առ 'ի կազմել զմի բոլոր • որ լինի մերթ հանդուցիւ մասանց՝ որպ՟ յառասանս, մերթ ճանկով աղխաղխուբ՟ մասանց՝ որպ՟ յօղս շղթայից, մերթ միջադրուբ՟ երրորդի իրիք յօդակապի՝ որպ՟ 'ի կոտորակս տախտակաց սոսնձով մածուցեալս, մերթ արտաքուստ շրջապատուբ՟ պատանաց՝ որպ՟ 'ի փունջս ծաղկանց, և մերթ այլով ինչ եղանակաւ ։ Կապակցելի մասունք ճառին նոքին են՝ զորս վերագոյն յիշատակեցաք • յորս են՝ որ բնապէս կապակից համարին • որպ՟ են, նիւթ ընդ կերպի, ենթակայ ընդ առարկայի, գոյաւորիչ ընդ գոյացելոյ, գործող ընդ կրողի, արարիչ ընդ արարածոյ, միջոց ընդ վախճանի, սկզբնատիպ ը՟ պատճէնի, պայման ը՟ պայմանաւորի, սկիզբն ը՟ սկզբնաւորի, հանրական ընդ մասնականի, սեռ ընդ ցեղից, ցեղ ընդ անհատից, բոլոր ընդ մասանց, չափող ընդ չափելոյ, նախընթաց ը՟ հետևորդի, նշանակող ընդ նշանակելոյ, պարփակող ընդ պարփակելոյ, և այլ այդպիսիք • ընդ որս և նոքին՝ որք յանձին վերբերին զնոյնութիւն կամ զնմանութիւն երկուց որակութեանց և քանակութեանց · այնք են՝ նմանք և հաւասարք · և են՝ զորս ճարտարութիւն արհեստաւորին յօդակապէ առանձին խորհրդով, ոչ դիպի ՚ի ներհականս, ՚ի հակառականս, յաննմանս, յօրինակս, ՚ի վկայս, և ՚ի դոյնպիսիս ։ Ագուցիկ յօդք՝ որք զօրէն սոսնձի պնդեն զմասունս, համարին մակբայք, շաղկապք, և նախադրութիւնք · ուրեք ուրեք և ածական բառք, միջարկութիւնք, և այլ մասնիկք բանի ։

§ 295 · Թէ ՚ի կարգադրելն և թէ ՚ի կապակցելն զմասունս՝ հարկ է ճարտասանից ամենայն արթնութեամբ պատկառ կալ, զի թէև բանիցն անխղելի ուղղագիծ ձգեսցի՝ առանց վայրապար խոտորելոյ յաջ և յահեակ, յետ և յառաջ, կամ ՚ի վեր և ՚ի վայր · զի համօրէն գիծն միապաղաղ և շարունակ անընդհատ տարածեսցի՝ առանց թողլոյ ՚ի միջավայրսն զծերպս և զծակս, զորս յետոյ ուրեմն պէտք լինիցի խրամակարկատ առնել սնոտեօք · զի ՚ի յերկայնելն գծիդ՝ վերջին կէտն կամ գլխաւոր նպատակն միշտ անխոտոր և անկորուստ պահեսցի ՚ի հայեցուածոյ աչաց · զի ամենայն ուրեք ակներև նշմարելի կայցէ մասն առաջին՝ միջին՝ և վերջին, կամ վերին՝ միջին և ստորին · զի ըստ պահանջելոյ նիւթոյն հանապազ որոշեսցի նախընթացն և հետևորդն, այլ և հոսումն նախընթացին ՚ի հետևորդն, և կախումն հետևորդին զնախընթացէն · զի առաջինն ճանապարհ հորդեսցէ երկրորդին, և երկրորդն լոյս ցոլացուսցէ ՚ի մթութիւն առաջնոյն · զի անցումն ՚ի միոյ մասնէն ՚ի միւսն՝ մի լինիցի բացաթողութեամբ միջակայից, կամ ոչ ասեն՝ ընդոստնելով և ճնճղկաբար յոստոյ յոստ թռանելով · զի օրինաւոր կապակցեալքն մի անդամակոտոր ցրուեսցին, և ոչ այլաբունք կամ տարասեռք խոլթաբար լծակցեսցին · զի ՚ի հարկաւոր տեղիս մուծցի բաժանումն բոլորի ՚ի մասունս, և վերլուծութիւն ընդհանրոց յանհատս, որք բազում նպաստեն բարեկարգութեան ·

միոյ բանիւ՝ զի բովանդակ բանահիւսութիւն նմանեսցի ոսկետող շղթայի ող ընդ ող ճարտարահիւս ճարմանդելոյ, կամ պսակաձեւ փնջոյ 'ի միւռոնահոտ ծաղկանց բոլորելոյ : Տես եւ § 62, 140, եւն :

§ 296 · 'Ի բարեկարգ ընդելուզութենէ մասանց՝ ծնանի միութիւն զանգուածոյ կամ մի զանգուած կերպաւորեալ ճառից · որոյ անհատական կերպարանք յանսահմանս զանազանին · զի զուգադրութիւն բազմաթիւ մասանցն դոգջիր նոյնպէս անսահման է · ըստ որոյ՝ քան զի անմարթ համարի կանոնս տալ վասն մասնական կերպաւորութեանց նոցա, ստիպիմք շատանալ յառաջբերութեամբ հանրական ծանօթութեանց եթ · խոհականութեան ճառաբանից ապսպարեալ ըստ հանրականաց կերպաւորել զմէն մի անհատականն՝ ըստ պատշաճի նոցունց :

§ 297 · Կերպն ճառից բաժանի հանրաբար տեսեալ 'ի ներքին՝ որ միայն զներքին նիւթն, եւ յարտաքին՝ որ զարտաքինն եթ ձեւաւորէ · եւ երկոքին դարձեալ բաժանին 'ի մասնական, 'ի բոլորական, 'ի ցեղական, եւ 'ի սեռական :

Մասնական կերպն զմանր եւ զխոշոր մասունս ճախարակէ առանձինն եւ զատ յայլոց զիւրաքանչիւրն · զորս եւ վերագոյն բացատրեալ եմք առ մէն մի 'ի նոցունց · բոլորական է՝ որ զամբողջ մարմին միոյ անհատ ճառի կերպարանէ՝ բաղադրեալ 'ի մասնականաց · որպէս զմի ատենախօսութիւն կամ զքարոզ եւլն · ցեղական կոչի կերպն՝ զոր զգենուն ամենայն անհատ ճառք 'ի միոյ ցեղէ կամ առ մի ազգ վերաբերեալք · որպէս ամենայն նամակք կամ ներբողեանք · իսկ սեռական՝ որ պատշաճի ամենայն ցեղից ընդ միով սեռիւ պարունակելոց :

Աւանդեալքն առ 'ի մէնջ 'ի սկզբանէ մինչեւ ցայսր թէպէտ եւ ըստ բաւականին հրահանգեն զուսանելիս առ կերպաւորելոյ զո՛ր եւ իցէ ճառս, սակայն ոչ շատացեալ նոքօք՝ կարեւոր համարիմք առաջի առնել աստ նոր զմանս 'ի գլխաւոր սեռից կամ 'ի ցեղից նոցա · եւ վերագլխութ՟ իմն միւսանգամ նշանակել զօրինակ ձևացութեանցն համառօտիւ ։

§ 298. Համոզաբանութ՟ի. առ 'ի չգոյէ ճշգագունի 'ի կիր առնումք զբառդ առ 'ի նշանակել զտիրապէս կամաշարժ ճառս. զոր մարթ էր կոչել և պաշտօնաբանութ՟ի ։ Արդ յայսպիսիս բուն առարկայ են բարոյական պաշտամունք միայն . բայց քաղաքականք և ոչ կրօնականք կամ եկեղեցականք . զորս ճարտասանն ապացուցէ ունկնդրաց կամ արդեամբք յանձին բերել՝ զի բարի են . կամ հեռանալ և խորշիլ՝ զի չար են և վնասակար ։ Նպատակ ճարտասանին է զչկամ ունկնդիրս փոխել 'ի գործունեայ . կամ առնել՝ զի նոքա իրօք յօժարեսցին 'ի գործել զբարին ։ 'Ի ներքին նիւթ այսպիսի ճառից հարկաւ պարտին մտանել երեք ազգք իմաստաբանութ՟ց , մտավարժք , սրտազգածք , և կամաշարժք . բայց զգուշաւոր ընտրողութ՟ . մանաւանդ 'ի մասին մտավարժ բանից . յորոց ոչ զամենայն անխտիր՝ այլ զբաւականն եթ առ տեղւոյն և առ ժամուն՝ պարտ է յառաջ բերել 'ի յագուրդ մտաց . զի յայսպիսիս ոչ խընդրի իմաստասիրական նրբութ՟ի դասատուաց կամ հեղինակաց . այլ յաւէտ խորին ծանօթութ՟ի բարուց՝ կրից՝ առաքինութ՟ց՝ մոլութ՟ց և այլոց բիւր հանգամանաց ներքին և արտաքին վիճակի ունկնդրաց . ևս և մանրամասն տեղեկութ՟ի ամենայն պարագայից և հետևանաց առնելի կամ խորշելի գործողութ՟ց . զի մի վրիպակ ինչ սպրդեսցի յընտրութ՟ի խորհրդոյն . և մեղն թափեսցի 'ի գլուխ խրատտուին ։ 'Ի կրից անտի 'ի համոզելն գըրգռել պէտք են զայս զվստահութ՟ի զհամարձակութ՟ի և զազդակիցս սոցուն . իսկ 'ի տարհամոզելն՝ զերկիւղ զսոսկումն և զնմանս , ոչ պարզապէս և պատմաբանօրէն , այլ աճեցուցանելով և սաստկացուցանելով զնոսա պարագայիցն կուտակութեամբ և բարւոյն կամ չարին մեծութ՟ . վասն զի սաստկութ՟ի յուսոյ կամ երկիւղի բնաւորապէս բորբոքէ զջանս գործելոյ կամ չգործելոյ . և սովին հնարիւք վարելով կիկերոն 'ի մանիլեան ճառս 'ի սաստկացուցանել զմեծութի պատերազմին և զհետեւորդս չարեացն, ետ ընտրել զպոմպէոս 'ի հրամանատար զօրուն. հարկ է նոյնպէս բացատրել զառաւելութի և զմեծութի բարօրութեցն և երջանկութեց կամ ըզթշուառութեց, որ ունիցի հասանել 'ի վերայ հասարակութե, քաղաքին, կամ մասնաւոր անձանց, ներքուստ կամ արտաքուստ, սակաւ կամ սաստիկ տարածութբ ըստ ժամանակի և ըստ տեղւոյ. և զայլ նման պարագայս: Զարտաքին նիւթոյ և զյառաջաբանութէ զոր ինչ աւանդեալն եմք, շատ համարին 'ի սոյնպիսի ճառս. բնաբանն՝ սովորաբար է դատողութի և իմաստ ինչ զպաշտամանց. առաջարկեալ կամ մակասութբ, ոպ,, պարտ է պատուել զծնողս. կամ բացասութբ, ոպ,, չէ արժան առն արձակել զկին իւր վասն ամենայն վնասու. և կամ խնդրողաբար, ոպ,, արժա՞ն է կնոջ հոլանի կալ յաղօթս. ևն: 'Ի կողմելն զմտավարժ վերաբանութիս ծայրագոյն խոհականութե և զգուշութե կարօտի համողաբանն, առ բացորոշելոյ ճշդիւ թէ ո՞ր 'ի նոցանէ պահանջի կամ ոչ՝ առ և այժմ, ո՞ր օգտակար կամ վնասակար իցէ նպատակի իւրում և ունկնդրաց, պէ՞տք իցեն արդեօք սահմանել զպաշտօնն, կենդանագրել զայն, բաժանել, գովել, պատմել, ապացուցանել, հերքել, ևն. զի ո՞չ կանոնս իսկ ասացաք՝ ոչ ամենայն ցեղք դոցա ամենայն ուրեք անխտրաբար 'ի ներքս մտանեն. այլ է ուրեք՝ զի յոյժ հարկաւոր են. է՝ զի օգտակար միայն. և է դարձեալ՝ ուր բնաւ աւելորդ, դուցէ և վնասաբեր. որք համօրէն հնարագէտ ճարտարութե ճառաբանին յանձն լինին. իսկ սրտազդած և կամագրգիռ վերաբանութիք ամենայն տարօք պարտին իշխել և գրաւել զընդարձակ տարածութիս սոյնօրինակ ճառից. և իբր հոգի կենդանագործել զնոսա. քան զի և բովանդակ իսկութի նոցա յայդոսիկ հիմնի, և դոքօք յաղթանակէ: Ոչ ինչ պակաս քան զայդ պարտական է համողաբանն բանալ և յոր դել աստանօր զամենայն աղբիւրս պերճախօսութեան, յարմարել զբանս առաւելապէս առ սիրտ և առ կամս հանդիսականաց, դղրդել և զրգռել զկիրս և զերևակայութիւն նոցա, և զներքին կեանս կամ զհոգի իւր միջնորդութեան խօսից փոխադրել ՚ի նոսա. որովք միայն մարթելի լինի զչկամս փոխել ՚ի յօժարական:

§ 299. Ատենաբանութիւն. որ ուղղեալ ատենին առ մեծճշդիւ և տիրաբար զժողով օրինաւոր դատաւորաց և զհանդիսական փուրշիշ նոցա նշանակէ, վասն այն ատենաբանութիւն պարտ է իմանալ զայնպիսի ճառս միայն՝ որք յատենի նոցա արտասանեալ լինին. որոց և կիրառութիւն սակաւ ուրեք է յազգի մերում, կամ բնաւ իսկ ոչ ուրեք. զի մերայինք միշտ բնակին ՚ի սահմանս միապետական տէրութեանց. առ որս չիք սովորութիւն ըստ օրինաց ատենախօսելոյ. վասն որոյ վայրապար համարիմք յերկարաբանել զմանէ. մանաւանդ զի կազմութիւն սորա կարօտի ընդարձակ հմտութեան ամենայն օրինաց՝ իրաւանց՝ սահմանադրութեանց և սովորութեանց այնր տէրութեան, յորում բացախօսեալ լինի. և չէ հնար լոկով ճարտասանական արուեստի վարժութեան յաջողակի ՚ի գլուխ հանել զայն՝ առանց լիակատար օրէնսգիտութեան և իրաւագիտութեան. ապա համառօտիւ կամեցեալ վճարել՝ ասեմք, թէ առարկայ կամ բնաբան այսպիսի ճառից՝ գրեթէ միշտ է ներգործութիւն ինչ աւարտեալ կամ սկսեալ, որ կոչի դատ (causa). որոյ ընդ քննութեան և ընդ վիճիւ անկանին հանգամանք որ և իցէ. իմա՛ զինչութիւն, զոյութիւն, որակութիւն, քանակութիւն, առնչութիւն, և այլ պարագայք. զորս հինք և նոր հնարեալք վայրապար յերկս ամփոփեցին. ՚ի խնդիր գուշակութեան՝ որպիսութեան և քանակութեան. զի արտաքոյ միան խնդիրք զինչութեան, տեղական, ժամանակական, և այլք բազումք ըստ զանազան հանգամանաց ներգործութեանն. զի զամենայնէն մարթ է խնդիրս յուզել: Նպատակք սոցա երկու միայն են. զի ատենաբանն (aduocatus) նկրտի կամ արդարացուցանել զյանիրաւի ամբաստանեալ զօրինաւոր ներգործութ̃ին , և խնդրել պսակս 'ի դատաւորէն վասն զըպարտելոյն (կամ գոնէ անպատիժ արձակել) • և կամ դատախազել և պատժապարտ ցուցանել զյանիրաւի ջատագովեալ զօրինազանց ներգործութ̃ին , որով և պատիժս խնդրել 'ի դատաւորէն վասն չարագործին ։ Ցայդցանէ յայտնի տեսանի թէ 'ի վերաբանութ̃իս սոցա մուծանել պարտ է զամենայն սրտադրած և զկամագրգիռ իմաստս • իսկ 'ի մտավարժից անտի՝ առաւել զպատմութ̃ին գործոյն ըստ կարևոր պարագայից (ատենական պատմութ̃ի անուանեալ 'ի նախնեաց) • այլ և զդոլութ̃ին կամ զպարսաւն , այլովք համդերձ ըստ խոհականութ̃ ատենաբանին հարկաւոր համարելովք ։ Իսկ վասն յառաջաբանի և վերջաբանի շատ են աւանդեալքն առ 'ի մէնջ 'ի վերոյ ։ Զօրինակս ճիշդ ատենաբանութ̃ց գտցեն ուսանողք առ կիկերոնի և առ դէմոսթէնեսի • զի առ մեզ չկայ ինչ այնպիսի • բայց եթէ գուցէ ատենախօսութ̃ին ղամբրոնացւոյն , որ եկեղեցական է, և ոչ քաղաքական ։

§ 300 • Մտաբանութ̃ի , գիտնաբանութ̃ի • իմացեալ լինին բանք այնպիսի ճառք՝ որք դէպ ուղիղ կարգին առ 'ի լուսաւորել միայն զմիտս ընկերաց , առ 'ի պայծառացուցանել զգաղափարս և զիմաստս ճանաչողական կարողութ̃ , առ 'ի տարրացուցանել 'ի նոսա զճշմարտութիւնս և 'ի վանել զմոլորութ̃իս , և առ 'ի տարածանել 'ի մէջ մարդկան զգերօգտակար ուսմունս պէսպէս գիտութ̃ց և արուեստից ։ Բնաբան սոցա է գաղափար կամ իմաստ ինչ ճանաչելի միայն • և թէպէտ առեալ լինին նա և գործադրելի իմաստք , սակայն միշտ ըստ ճանաչելի մասին • որպ̃ 'ի համողաբանութ̃իս , յատենաբանութ̃իս, և 'ի քարոզս • յորս հանապազ կանխէ մտաբանութ̃ի , որ գրեթէ նոյն է ընդ մտավարժ վերաբանութ̃ց • և խոր նոցա դնի 'ի քանակութ̃ միայն • իբր զի մտաբանութ̃ին ընդարձակութ̃ և մանրամասն ճառէ զճանաչելի ճշմարտութ̃ին , ուր այլ կամաշարժ ճառք սակաւ և պիտոյիւք չափ 'ի ներքս առնուն զմտավարժս ․ վասն այդոցիկ 'ի կազմուի̅ սոցա մտանեն մտավարժ վերաբանուի̅ք եւթ , կա՛մ ամենեքեան կա՛մ բազումք , իսկ սրտազդածք և կամադրդիւք բնաւ ոչ պիտոյանան ․ ըստ դոյանէ և ոչ կամ սակաւ ուրեք կարօտին սոքա յառաջաբանի և վերջաբանի ։ Բարբառ և լեզու սոցա պարտի լինել դիւրիմաց , պարզախօս , բարեկարգ և քաջայարմար ընդունակուե̅ ունկնդրաց ․ Հազիւ երբեք 'ի պէտս գան վսեմաբան ոճք և ձևք խօսից կամ իմաստից ․ զի նպատակ սոցա՝ ոպ̅ ասացաք՝ ուսուցանել է և լուսաւորել միայն ․ առ որ քան զամենայն ինչ առաւել պահանջի ճիշդ և ուղիղ կարգադրուի̅ կապակցուի̅ և միապաղաղուի̅ իմաստից՝ գաղափարաց և մտավարժ վերաբանուե̅ց ․ զոյգ ընդ քերականական ուղղախօսուե̅ և տրամաբանական ուղղադատութեան ։

§ 301 ․ Բաժանին մտաբանուի̅ք ըստ այլևայլ տեսուե̅ց , և նախ ըստ եղանակի հաղորդելոյն՝ 'ի գրաբանականս և 'ի լեզուախօսականս ․ գրաբանականք ըստ առարկայից զատանին 'ի գիտուի̅ս և յարուեստս , որք դարձեալ տրոհին յայլևայլ ցեղս ․ իսկ ըստ տարածուե̅յն անջատին 'ի հանրականս՝ որք մատեան , և 'ի մասնականս՝ որք ճառ կոչին ․ որոց նոյնպէս յոլով են ազգք և կոչմունք առ եւրոպական ուսումնականս ։ Լեզուախօսականք երբ մասն մասն աւանդեն այլոց զգիտուի̅ս և զարուեստս՝ անուանին , դաս կամ դասատուութիւն ․ իսկ ըստ այլոց նպատակաց և պարագայից առնուն այլ և այլ անուանս ․ զորս աւելորդ համարիմք յիշատակել ։ Գլխաւոր ճարտարուի̅ յօրինողաց մատենից և սոյնօրինակ ճառից՝ եդեալ կայ 'ի լիակատար յառաջբերուե̅ հանդամանաց առարկային , 'ի քաջահմուտ կազմութեան կարևոր մտավարժուե̅ց , 'ի բնաւորական և յուղղաշար դասակարգուե̅ և 'ի կապակցուե̅ նոցա ․ յորս բովանդակին ամենայն գերազանցուի̅ք մատենագրուե̅ց և մտաբանական ճառից ․ զորոց զօրինակս՝ առ 'ի չգոյէ 'ի լեզուի մերում՝ գտցեն ուսանողք առ հին և նոր օտարազգիս · ոմն են 'ի յունաց քսենեփոնտ, պլուտարք, արիստոտէլ, և լոնգինոս · 'ի լատինաց կիկերոն, կուինտիլիանոս, և մանաւանդ սենեքայ · 'ի գաղղիացւոց ֆենելոն, մոնդէսքէ, քոնտիյլաք, ռուսսօ, և մարմոնտէլ · յանգղիացւոց լոք, հիւմ, ճոնսոն · և 'ի գերմանացւոց մէնտէլզոն, քամբէ, եաքոպի, բլադնէր, և այլք 'ի նորոց ։

Վասն ստուերագրութ̃, կենդանագրութ̃, պատմութ̃, ներբողի, և այլոց նմանեաց, որք երբեմ̃ իբր ինքնագլուխ ճառ վարին, շատ են զորս ուսուցաք թէ յառանձին բացատրութ̃ դոցա, և թէ ընդհանրապէս վասն ամենայն ցեղից ճառից ։

§ 302 · Համախօսութի̃ · սա է ցեղ ինչ ճառաբանութ̃, յորում երկու ճշմարիտ կամ կեղծ անձինք խօսակցին ընդ միմեանս զկարևորաց, և յայտնեն զդատողութի̃ և զիմաստ իւրեանց զօգտակար առարկայէ իմեքէ · մին հարցանելով և միւսն պատասխանելով · որպիսիք կան առ հինս մեր և այլոց ազգաց ։ Առարկայ սորա մարթի լինել որ և իցէ ցեղ իմաստից, աստուածաբանական, տեսական, գործական, կրօնական, գիտնական, արուեստական, պատմական, և այլք ամ̃ · ը̄ որոց յարմարին և վերաբանութի̃ք նոցա · իսկ յառաջաբան և վերջաբան գրեթէ սակաւ ուրեք 'ի ներքս մտանեն · բարբառ պահանջի պարզ կենցաղական և յստակախօս · համաձայն առարկայի և նպատակի նորա · որ է կամ մտավարժութիւն, կամ սրտազգածութի̃, կամ շարժութի̃ կամաց, և դոքա կամ առանձինն, կամ խառն ընդ իրեարս ։ Պատկառկացցէ յօրինողն՝ իւրաքանչիւր անձին 'ի խօսողաց վերագրել զբացորոշ յատկանիշ դատողութեան՝ զգածման՝ բաղձանաց և խօսից · և անփոփոխ պահեսցէ զայն ցվախճան բանիցն · յարմարելով զամենայն ինչ օրըստօրական խօսակցութ̃ պատուելի անձանց յայլևայլ կարծիս անջատելոց զմի և նոյն առարկայն, որք հուսկ ապա համաձայնին 'ի մի ինչ ։ Յայլս ամենայն պարտ է վարել կանոնօք՝ զորս ցայս վայր աւանդեցաք ընդհանրապէս 'ի սկէտս ճառաբանութե՟ : Զգեղեցիկ օրինակս համախօսութե՟ց ընծայեն 'ի յունաց քսենեփոնտ, էսքինոս, պղատոն, լուկիանոս. 'ի լատինաց կիկերոն, երազմոս. 'ի գաղղիացւոց՝ ֆենելոն, ֆոնդենէլ, եւ այլք :

§ 303. Նամակագրութի՟. է հաղորդութի՟ եւ փոխագրութի՟ իմաստից՝ զգածմանց եւ բաղձանաց 'ի միոյ անձնէ առ այլ հեռաբնակ անձն՝ միջնորդութ՟բ գրաբանութե՟. եւ ըստ օրինակի համառօտ ճառից զատանի ըստ հանգամանաց իւրոց յայլեւայլ ցեղս. եւ 1 ըստ նպատակին՝ բաժանի 'ի մտավարժականս, որք են նամակք ուսուցողականք, ծանօթարարք, ազդարարք, վիճաբանականք, իմաստասիրականք, եւ դոյին նմանք. 'ի զգածողականս, որք, ներբողականք, շնորհաւորականք, գոհացողականք, ընծայաբերականք, եւն. եւ 'ի կամաշարժականս, յորոց սակի են համոզականք, տարհամոզականք, աղերսագիրք, յանձնարարութի՟ք, մխիթարականք, հրամայականք, եւ այլ այդպիսիք. 2 ըստ քանակութե՟ առարկային բաժանի 'ի պարզ՝ որ զմիոյ, եւ 'ի բարդ՝ որ զբազում առարկայից խօսի. 3 ըստ որակութե՟ առարկայիցն որոշի յանհամար ցեղս ըստ յոգնադիմի պէսպիսութե՟ գիտութե՟ց՝ արուեստից՝ պաշտամանց եւ վիճակաց կենաց 'ի դերդաստանի, 'ի քաղաքի, յեկեղեցւոջ, եւ 'ի նմանս. 4 ըստ հեղինակացն տարորոշի յարքունականս, 'ի պաշտօնէականս, 'ի դեսպանականս, 'ի զինուորականս, 'ի դատաւորականս, 'ի վաճառականս, 'ի հայրապետականս, 'ի բարեկամականս, եւ 'ի դոյնպիսիս. նոյնպէս եւ զանազանին նամակք 'ի վեհագունէ առ ստորինս, 'ի հաւասարէ առ հաւասար. 'ի ստորագունէ առ մեծաւորս. եւս 'ի խորհրդականս՝ որք 'ի ծածուկ մնան 'ի մէջ գրողաց. 'ի սովորականս՝ յորս չպարունակի ծանր ինչ եւ վտանգաւոր. 'ի հրապարակելիս՝ որք կարգին առ տպագրութ՟բ հրապարակութի՟ 'ի ժողովրդեան. 'ի հարցաբանական՝ որ նախ սկսանի եւ յոլովակի հարցանէ զընդունողն. 'ի պատասխանականն՝ որ նախընթացին տայ զպատասխանի. ևն̅. ըստ այդոցիկ պէսպէս հանգամանաց և պարագայից նամակաց և նամակաձև գրուածոց կերպայեալ են այլևայլ ցեղքն, որք կոչին, կոնդակ, հրովարտակ, տոմսակ, գիր, թուղթ, յետկար, քարտէզ, մուրհակ, պիտակ, արձանագրուի̅, դիւանագրուի̅, դաշնագրուի̅, պայմանագրուի̅, ձեռագիր, պարտագիր, վճարագիր, շնորհագիր, հրամանագիր, վճռագիր, կտակագիր, և այլ բազում հին և նոր անուանք ըստ առարկայից, ըստ նպատակաց, ըստ տեղեաց և ըստ ժամանակաց. որոց իւրաքանչիւրք կապեալ են ընդ բացորոշ ինչ եղանակի կազմուե̅ ըստ սովորուե̅ երկրին. վասն որոյ անմարթ է սահմանել կանոնս վասն ամենեցուն. այլ միտ դնել պարտ է հանրական կանոնաց ճառաբանուե̅. որոշելով 'ի միտս թէ զինչ արժան իցէ գրել 'ի սկզբանն, 'ի միջոցին, և 'ի վախճանի. ո՛ իցէ ընդունողն, ո՛վ գրողն, ո՛ր իցէ առիթն՝ նպատակն՝ և նիւթն գրելոյ, ո՞ր մականունն՝ հայրանունն՝ պատուանունն, և այլ հանգամանք նամակաւուին. այլովք բազմօք հանդերձ.

§ 304. Յիշատակին առ նախնիս և այլ զանազան ցեղք համառօտ ճառից. ոպ̅ են անուանեալքն, պէտք (chria), ներբող, պարսաւ, դրուի̅, սահման, բաղդատուի̅, արտասանուի̅, հասարակ տեղիք, եղծումն̅, և այլ նմանք. զորոց զեղանակս կազմուե̅ ուսուցանէ մովսէս քերթող 'ի գիրս պիտոյից (տպեալ 'ի վենետիկ), բայց դոքա իրօք ոչ այլ ինչ են, եթէ ոչ վերաբանութիւնք մեր. ոպ̅ յայտնի է թէ յանուանցն և թէ յառարկայէ և 'ի նիւթոյ նոյին. զի յառաջ բերեն զպէսպէս հանգամանս էակաց. ոպ̅ են, գովուի̅, մեկնութի̅, նմանուի̅, օրինակ, վկայուի̅, ներհականք, օգտակարուի̅, իրաւացուի̅, հարկաւորուի̅, կարելուի̅, և դոյին նմանք. որք առհասարակ են հանգամանք և պարագայք. և յառաջբերուի̅ք նոցա են զուտ վերաբանուի̅ք. վասն որոյ աւելորդ համարիմք յերկար դեգերիլ մեզ 'ի բացատրել զդոսա· միայն վասն խրխայի կամ պիտոյից ծանուցանեմք, թէ բաղկանայր նա յութ ցեղից վերաբանուե̅ց· որք են, յետ դնելոյ զբնաբան կամ զխմաստ ինչ, 1 պատշաճաւոր բանիւք գովել զհեղինակ նորին· 2 մեկնել կամ պարզաբանել զխմաստն· 3 պատճառաբանել և փաստաբանել, այն է՝ ցուցանել զհամաձայնուե̅ կամ զհակառակուե̅ մակածականին ընդ ենթակային· 4 հակադրել և հուպ առ նա բերել զընդդիմակն կամ զներհականն· 5 նմանեցուցանել· 6 ածել զհամապատշաճ օրինակ· 7 'ի մէջ մատուցանել զվկայութի̅ս նախնեաց վասն բնաբանին· և հուսկ ապա վերջաբանել։ Բայց զվերաբանութի̅դ դպրոսիկ մարթ է ևս յապաւել, յաւելուլ, կամ փոփոխել, և ազգի ազգի կերպաւորել· զի 'ի խոհեմուե̅ ճարտասանին յանձն լինին՝ ոչ ասացուք՝ ցեղք՝ որակք և քանակութիւնք վերաբանութեանց։

§ 305· Քարոզաբանութիւն կամ քարոզն է հոգևոր ճառ, բերանախօսեալ առ հաւատացեալ ժողովուրդս յեկեղեցւոջ, դիտմամբ առնելոյ զնոսա ճշմարտիւ աստուածապաշտս ըստ վարդապետուե̅ Յիսուսի Քրիստոսի։ Առ այս սրբազան պաշտօն մահու չափ մեզ պարտաւորին ամենայն եկեղեցականք և ամենայն առաջնորդք՝ որք յանձն առեալ են զխնամ և զվերատեսչուե̅ հոգւոց ուղղափառ ժողովրդեան մերոյ։ Զկազմուե̅ սորին չեն մեզ կամք յերկարել զբանս· իբր զի զաւարկայս քարոզուե̅ ցուցեալ եմք 'ի կրօնադիտուե̅, իսկ զարուեստն յօրինելոյ զհամոզական բանս՝ յայսմ մատենի, ըստ բաւականին· որոց սատարուե̅ մարթին հոգևոր ուսուցիչք հիւսել զոր և իցէ քարոզաբանութի̅· վասն որոյ կնիք դնեմք աստանօր փոքու աշխատասիրուե̅ մերում, 'ի փառս Աստուածուե̅, և յօգուտ սուրբ եկեղեցւոյ, և ուղղափառ ազգի մերում։

ՎԱԽՃԱՆ·

ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ·

յեր·

Ագահութիւն . . . 67.
ազդուաբանութիւն . 260.
ախորժել . . . . 105.
ածանցանուն . . . 306.
ակնկալութիւն . . . 143.
աղագ . . . . 47. 230.
աղերսանք . . . . 287.
աղուաձայնութիւն . . 311.
աղուէսագիրք . . . 209.
աճեցուցանել . . . 203.
ամանակ . . . . 79.
ամբաստանել . . . 197.
ամբողջութիւն . . . 58.
ամրապնդել . . . 262.
այլաբանութիւն . . 219.
այլութիւն . . . . 71.
անարգութիւն . . . 63.
անգամ . . . . . 78.
անգթութիւն . . . 144.
անգոյութիւն . . . 42.
անդամ . . . . . 311.
անեծք . . . . . 288.
անիրաւութիւն . . 67.
անկանոնութիւն . . 64.
անկատարութիւն . . 58.
անկարգութիւն . . 65.

յեր·

անկարելութիւն . . 69.
անձուկ . . . . . 143.
աննմանութիւն . . . 72.
անուն . . . . . 41.
անուանաստեղծութիւն. 300.
անպարտութիւն . . 68.
անվաւերութիւն . . 54.
անցագրութիւն . . . 193.
անցուածք . . . . 288.
անօրէնութիւն . . . 64.
անօսրել . . . . . 203.
աշխարհագրութիւն . 192.
ապաշխարութիւն . . 144.
ապացոյց . . . . 230.
ապացուցութիւն . . 229.
ապսպարել . . . . 197.
առած . . . . . 122.
առածաբանել . . . 122.
առանձնականութիւն . 82.
առաջարկութիւն . . 157.
առատութիւն . . 35. 296.
առասպել . . . . 209.
առարկայ . . . 22. 40.
առարկութիւն . . . 248.
առիթ . . . . . 45.
առնելութիւն . . . 44.

յէր.
առնչութիւն . . 73. 82.
աստիճան . . . . 78.
ատաղձ . . . . . 38.
ատելութիւն . . . 141.
ատենաբանութիւն . . 332.
արարած . . . . . 45.
արարածութիւն . . 48.
արարչութիւն . . . 44.
արգասիք . . . . 64.
արդարութիւն . . . . 67.
արդիւնք . . . . 64.
արդիւնագրութիւն . 188.
արժանիք . արժէք . . 63.
արձակաբանութիւն . 12.
արձանագրութիւն . . 192.
արձանական . . . . 196.
արուեստ . . . . 9.
արուեստաբանութիւն. 147.
արտասանութիւն . . 320.
արտուղութիւն . 289. 307.
աւանդութիւն . . . 228.
Բազմաբանութիւն . 303.
Բազմանունութիւն. . 302.
Բազմապատկութիւն. . 303.
Բաժանել. . . . . 184.
Բացառութիւն . . . 307.
Բաղադրութիւն . . . 163.
Բաղդատութիւն . . 221.
Բաղհիւսութիւն . . 304.
Բաղձանք . . . . 136.
Բան. Բանականութիւն. 121.
Բանահիւսութիւն . . 325.
Բառափոխութիւն . . 307.

յէր.
Բարառնութիւն. . . 208.
Բարացուցութիւն . . 175.
Բարբառ. . . . . 294.
Բարկութիւն . . . 142.
Բարոյականութիւն. Բարութիւն . . . . 55.
Բացագանչութիւն . . 289.
Բացադարձութիւն. 210. 289.
Բացախօսութիւն . . 20.
Բացասութիւն . . 42. 72.
Բացբարձութիւն . . 305.
Բացորոշութիւն . . 26.
Բերկրարարութիւն . . 61.
Բնաբան . . . . . 152.
Բնապատմութիւն . . 192.
Բնութիւն . . . 33. 38.
Բոլորութիւն . . . 74.
Գաղափար . . . . 98.
Գաղափարական. . . 123.
Գաղափարումն . . . 29.
Գամ . . . . . . 78.
Գեղ, Գեղեցկութիւն . 59.
Գեղագիտութիւն . . 60.
Գեղագրութիւն . . . 173.
Գերագաղափար . . . 122.
Գժդմնութիւն . . . 145.
Գին . . . . . . 63.
Գիտել . . . . . 106.
Գիտնաբանութիւն . . 333.
Գիտութիւն . . . . 297.
Գիւտ . . . 160. 278.
Գոհութիւն . . . 290.
Գոյացուցումն . . . 44.

յեր.
Գոյութիւն . . . . 42.
Գովաբանութիւն . . 193.
Գործ . . . . . 45. 48.
Գործարարութիւն . . 44.
Գործիք . . . . . 46.
Գործողութիւն . . . 43.
Գրաբանութիւն. 10. 102. 297.
Գրագիտութիւն . 102. 298.
Գրգռութիւն . . . 136.
Դամբանական . . . 196.
Դառնարարութիւն . . 61.
Դասաւորութիւն . 11. 334.
Դատ . . . . . . 312.
Դատել . . . . . 104.
Դատողութիւն . . . 35.
Դժուարութիւն . . 70.
Դիմագրութիւն . . . 174.
Դիմառութիւն . 208. 290.
Դիպուածաբանութիւն . 193.
Դիտողութիւն . . . 96.
Դիւրութիւն . . . 70.
Դրութիւն . . 42. 154.
Եղառած . . . . 253.
Եղանակ . . . . . 73.
Եղանութիւն . . . 43.
Ենթադրական . . . 39.
Ենթադրութիւն . . 154.
Ենթակայ . . . 39. 108.
Երբ . . . . . . 79.
Երեւակայութիւն . . 97.
Երկբայութիւն . . . 248.
Երկիւղ . . . . . 144.
Զանազանութիւն . 177.

յեր.
Զանցառութիւն . . . 290.
Զարդաբանութիւն . . 301.
Զգածումն . . . . 131.
Զգայութիւն, զգացումն. 96.
Զեղչումն . . . . 305.
Զինչութիւն . . . 38.
Զուգապատկութիւն . 304.
Զրկողութիւն . . . 67.
Էակ . . . . . . 23.
Էակ մտաց . . . . 35.
Էութիւն . . . . 38.
Ըմբռնել . . . . 103.
Ըմբռնողութիւն . . 96.
Ընդարձակել . . . . 203.
Ընդհանրութիւն . 32. 77.
Ընտրականութիւն . . 299.
Ընտրողութիւն . . 29. 96.
Թեթեւութիւն . . . 76.
Թերութիւն . . . . 58.
Թիւ . . . . . . 77.
Թիւրութիւն . . . 55.
Թշնամութիւն . . . 141.
Թոշակ . . . . . 64.
Թուական . . . . . 80.
Ժամանակ . . . . 79.
Ժամանակագրութիւն . 175.
Իդեայ . . . . . 122.
Իմաստ . . . . 35. 103.
Իմաստաբանութիւն . 147.
Ինքնաճանաչութիւն . 96.
Իսկութիւն . . . . 54.
Իրականութիւն . . . 42.
Իրաւունք . . . . 67.

Եր.
Լինելութիւն . . . 43.
լուր . . . . . . 228.
լուցկիք . . . . 37. 47.
լաւութիւն . . . . 290.
լրութիւն . . . . . 58.
Խափանել . . . . 197.
խելք . . . . . . 97.
խթան . . . . . 37. 47.
խժաբանութիւն . . 300.
խնդիր . . . . . 159.
խնդութիւն . . . 143.
խնդրակ . . . . . 230.
խոժոռութիւն . . . 145.
խորթութիւն . . . 54.
խորհել . . . . . 103.
խորհրդակցութիւն . 291.
խումբ . . . . . . 77.
խտիր . . . . . . 41.
խրամատութիւն . . 291.
ծանրութիւն . . . 70.
ծնելութիւն . . . . 48.
Կամաշարժութիւն . . 268.
կամեցողութիւն. կամք. 137.
կանոնաւորութիւն . . 64.
կապ . . . . 327.
կատարելութիւն . . 58.
կարգ . . . . . 65. 326.
կարելութիւն . . . 69.
կարծել . . . . . . 106.
կարօտ . . . . . . 143.
կեղծել . . . . . . 207.
կենդանագրութիւն . 173.
կենցաղագրութիւն . . 192.

Եր.
կերպ . . 32. 40. 324.
կիրք . . . . . 51. 138.
կշռադատութիւն . . 221.
կշիռ . . . . . . 76.
կոչում . . . . . . 41.
կոպարակցութիւն . . 313.
կորովաբանել . . . 260.
կրելութիւն . . . . 51.
կրիցագրութիւն . . . 175.
կրկնաբանել . . . . 285.
կրկնութիւն . 291. 303.
Հակադրութիւն . . 223.
Հակասութիւն . . . 72.
Հակափոխութիւն . . 292.
Հակորակութիւն . . 72.
Հաղ . . . . 78.
Հաճիլ . . . . . . 105.
Համաբարդութիւն . . 254.
Համագոյութիւն . . 80.
Համախօսութիւն. 20. 213. 335.
Համայնագրութիւն . 198.
Համար . . . . . . 77.
Համարակցութիւն . . 313.
Համարել . . . . . 104.
Համբաւ . . . . . . 228.
Համեմատութիւն . . 217.
Համեստաբանութիւն . 202.
Համոզաբանութիւն . 13. 330.
Համոզել . . . . . 106.
Համորակութիւն . . 72.
Հայկաբանութիւն . . 300.
Հանգամանք . . 24. 26.
Հանգիտաբանութիւն . 255.

Եր.
Հանգիտահնչիւն . . 306.
Հանդէս . . . . . 154.
Հանդիսաբանութիւն . 20.
Հատած . . . . . 311.
Հարկ . . . . . 67.
Հարցում . . . . 292.
Հաւանիլ . . . . 105.
Հաւաստաբանութիւն. 229.
Հաւատալ . . . . 106.
Հաւատք . . . . 228.
Հաւաքաբանութիւն . 253.
Հաւաքում . . . . 77.
Հեգնութիւն . . . 292.
Հեղինակութիւն . 86. 228.
Հեշտածնութիւն . . 61.
Հետապնդութիւն . . 136.
Հետեւաբանել . . . 251.
Հետեւորդ . . . . 84.
Հերքում . . . . 242.
Հնարաւորութիւն . . 69.
Հնարել . . . . . 207.
Հոմանագրութիւն . . 171.
Հրահանգ . . 9. 11. 19.
Ձեւացուցում . . . 214.
Ձեւք բառից . . . 301.
Ձեւք իմաստից . . . 286.
Ճառ . . . . . . 17.
Ճառաբանութիւն . . 9.
Ճառողութիւն . . . 160.
Ճարտասան . . . . 295.
Ճարտասանութիւն . 9. 294.
Ճգանք . . . . . 93.
Ճշդաբանութիւն. . 300.

Եր.
Ճշմարտաբանութիւն . 229.
Ճշմարտութիւն. . . 54.
Մախանք . . . . 145.
Մակաբերել . . . . 251.
Մակագանչութիւն . . 289.
Մակադրական . . . 39.
Մակածական . . 39. 109.
Մակածութիւն . 27. 254.
Մահագրութիւն . . 192.
Մաոն. Մաոնութիւն . 74.
Մանաթուութիւն . 184.
Մարդաբանութիւն . 208.
Մեծացուցանել . . . 203.
Մեծութիւն . . . 61.
Մեկնաբանութիւն . . 176.
Միջոց . . . . . . 45.
Միտք . . . . . . 97.
Մոլութիւն . . 55. 138.
Մտաբանութիւն . . 333.
Յանկել . . . . . 258.
յանկաւորել . . . . 285.
յաջորդութիւն . . . 80.
յառաջաբան . . . 281.
յառաջնութիւն . . 80.
յատկանիշ . . . 28. 41.
յատկութիւն . . 31. 41.
յարասութիւն . 124. 296.
յարացոյց . . . . 87.
յարգ . . . . . . 63.
յարմարութիւն . . . 217.
յաւելում . . . . 302.
յեղանակ . . . 33. 286.
յեղյեղում. . . . 291.

Եր.

յետադարձութիւն 136.
յիշողութիւն 97. 319.
յոգնահոլովութիւն 305.
յոյս 143.
Նախագաղափար 122.
նախագրութիւն 20.
նախադասութիւն 296.
նախազեկուցմունք 20.
նախանձ 145.
նախապաշարումն 292.
նախընթաց 84.
նամակագրութիւն 336.
ներբողեան 194.
ներգործութիւն 43.
ներհակութիւն 72.
նզովք 288.
նիւթ 32. 38.
նիշ. նշան 27.
նկարագրութիւն 173.
նմանաբերութիւն 97.
նմանահոլով 306.
նմանաձայնութիւն 305.
նմանայանգ 306.
նմանութիւն 72. 214.
նշանակող. նշանակեալ 85.
նոյնատառ 305.
նոյնութիւն 71.
նորապատում 192.
նուագ 78.
նպատակ 45. 49.
նպատակադիմութիւն 48.
նրբաբանութիւն 293.
Շարաբանութիւն 121.

Եր.

շարագիր 12.
շարժառիթ 47.
շնորհումն 292.
շրջաբանութիւն 303.
Ոճ 314.
որակութիւն 53.
որոշողութիւն 293.
որչափութիւն 74.
որպիսութիւն 53.
ուղղութիւն 55. 293.
ուշ 97.
ուր 81.
ուրախութիւն 143.
Չարակնութիւն 145.
չարութիւն 55.
չափազանցութիւն 206.
չէզոք 43.
չքնաղութիւն 60.
չքութիւն 42.
Պակասութիւն 58. 73.
պայման 45.
պայմանաբանել 122.
պայմանաբանութիւն 256.
պաշտամունք 25. 156.
պաշտօնաբանութիւն 330.
պատահումն 33.
պատկերագրութիւն 173.
պատճառ 45.
պատճառաբանել 122.
պատճառաբանութիւն 187.
պատճառողութիւն 45.
պատմութիւն 189.
պարագայք 51.

Եր.
պարագրութիւն . . 189.
պարապ . . . . . 80.
պարբերութիւն 124. 296. 340.
պարսաւ . . . . 193.
պարտք . . . . . 68.
պերճախօսութիւն. 147. 294.
պէտք . . . . . 338.
Ջատագովել . . . 197.
Սահման . . . . 169.
սայրաբանութիւն . . 256.
սեռ . . . . . . 31.
սեռութիւն . . . 77.
սէր . . . . . . 140.
սկիզբն . . . . 42. 46.
սկզբնատւած . . . 122.
սկզբնատիպ . . . 123.
ստեղծաբանութիւն . 207.
ստորագրութիւն . . 171.
ստորոգելիք . . . 27.
ստուերագրութիւն . 171.
ստութիւն . . . . 54.
սրտազգածել . . . 263.
սրտազգածութիւն . 132.
սրտմտութեւն . . . 142.
Վախճան . . . 42. 45.
վախճանաբանել . . 122.
վախճանաբանութիւն . 188.
վախճանութիւն . . 48.
վայր . . . . . . 81.
վարձք . . . . . 64.
վաւերութիւն . . . 54.
վերաբան . . . . 160.
վերաբերութիւն . . 303.

Եր.
վերադարձութիւն . . 304.
վերակրկնութիւն . . 305.
վերլուծութիւն . . 29. 166.
վերջաբան . . . . 284.
վերտառութիւն . . 192.
վիճաբանութիւն . . 20.
վիճակ . . . . . 43.
վիճակագրութիւն . . 192.
վիպասանել . . . . 189.
վկայութիւն . . 86. 227.
Տարբերութիւն . . 62.
վսեմ . . . . . 315.
վսեմութիւն . . . 61.
վստահութիւն . . 143.
վրէժխնդրութիւն . 142.
Տաղտկութիւն . . 141.
տապանագրութիւն . 192.
տարազ . . . . . 73.
տարակուսութիւն . 293.
տարբերութիւն . 31. 41.
տարեգրութիւն . . 192.
տարր . . . . . 38.
տգեղութիւն . . . 59.
տեղի . . . . . 81.
տեղիք . . 37. 160. 278.
տեսակ . . . . . 31.
տեսիլ . . . . . 122.
տրիտուր . . . . 64.
տրոհաբանութիւն. . 256.
տրտմութիւն . . . 144.
տւողութիւն . . . 80.
Ցասումն . . . . 142.
ցաւ. ցաւակցութիւն. 144.

Եր.
ցեղ . . . . 31.
ցեղաւորութիւն . . 185.
ցեղութիւն . . . . 77.
Փառք . . 37. 47. 230.
փառաբանել . . . 103.
փառաբանութիւն . 229.
փափագ . . . . . 143.
փոխաբերութիւն . . 219.
փոխադարձութիւն . . 304.
փոխադրութիւն . . 198.
փոխազդեցութիւն . . 83.

Եր.
փոքրութիւն . . . 61.
Քաղահանութիւն . 275.
քանակութիւն . . . 74.
քանիութիւն . . . 77.
քարոզաբանութիւն . 13. 338.
քերականութիւն . . 298.
Օգտաբերութիւն . 62.
օրինակ . . . . . 87.
օրինակութիւն . . 225.
օրինաւորութիւն . . 64.

Զսխալանս տառից և բառից ինչ՝ յանձն առնեմք բարեսէր ընթերցողաց ինքնին ուղղագրել. Գլխաւորք ՚ի նոսա՝ են. 52, 6, ժամակական, որ պիտի լինել, ժամանակական. 125, 17, լեզուց = լեզուաց. 288, 23, վարդապետաց = վարդապետաց. և այլ այսպիսիք. զորս պարտ է ուղղել ըստ իմաստից բանին: